Шарля – Аида N и сам 20-летний Шарль. За свободу Франции свою жизнь отдали Луиза (Лас) и Арпиар Асланяны, Арбен Давидян и др. Более 300 армян сложили головы в партизанской войне в Греции. Среди них были Андраник и Ерванд Гукасяны, Ваграм Саканян, Силвестро Галеян и многие другие. В честь армянских участников Сопротивления в Греции, в районе Никеи (Афины) бывшая улица Амфисас, прилегающая к армянской церкви, переименована в «Улицу армянских участников Сопротивления». По всей Болгарии прогремело имя юной партизанки Сашки (Эрмине Разградлян), которую фашисты захватили и подвергли мученической смерти.

Фашисты в Варне расстреляли активистов Отечественного фронта Болгарии Карапета Хачатряна, Арутюна Погосяна, Акопа Пароняна и многих других. В составе 3-го Украинского фронта действовали две болгарские армии, в рядах которых сражались более 1000 болгарских армян. В Югославии в партизанской борьбе своим мужеством отличились Вардуи Сукиасич (Сукиасян), Гегам Агабабян, в Италии – Мхитар Григорян, Мисак Калашян (участвовавшие в пленении и казни Муссолини), Сержио Давидян, в Чехословакии – Артем Петросян, Акоп Иликчян и другие.

Более 50000 воинов-армян воевали в рядах армий союзников СССР в антифашистской борьбе. Только в армии США сражались около 20000 армян, в их числе летчики Тигран Малхасян, Чарльз Тертерян, Сэм Парсамян, Керк Киркорян (ныне Национальный герой Армении), моряк Джерард Левон Гафесчян и др. Ерванд Дервишян был награжден высшей военной наградой США – медалью Почета, которой в годы войны были награждены всего 87 человек, 52 армянина были награждены медалью «Серебряная Звезда», среди них – летчик, майор Тигран Саркисян, в воздушных боях сбивший шесть бомбардировщиков противника, 44 летчика-армянина получили «Медаль Почета военно-воздушных сил США».

Генералами армии США стали Гайк Шекерджян и Джордж Мартикян, сирийской армии – Арам Караманукян, болгарской армии – Габриел Габриелов. Более 30.000 армян сражались в армиях Великобритании и Франции, своими подвигали прославились летчики – братья Ноел, Джек и Левон Агазаряны, из них первый погиб в Англии, а второй – во Франции. Их сестра Моника в годы войны служила на военном аэродроме в Англии (Арутюнян 2019, 623–630).

Вклад тружеников тыла

Существенный вклад в победу над фашизмом внесли труженики тыла Советской Армении. Руководствуясь девизом – «Все для фронта, все для победы», трудящиеся республики превратили Армению в настоящий арсенал Красной Армии, откуда каждый день железнодорожными эшелонами отправлялись на фронт оружие, боеприпасы, обмундирование, продукты питания, людское пополнение и т.д. Благодаря ежедневному героическому труду рабочих, колхозников и интеллигенции Армении в годы войны воины-армяне, на каком бы фронте они ни сражались, чувствовали поддержку тружеников тыла.

Еще в первый период войны армянский народ обратился с патриотическим письмом-наказом к фронтовикам-армянам. Под ним подписались 335316 человек, в их числе и известные ученые, художники, писатели, рабочие, колхозники, артисты, врачи, учителя, партийные и советские работники и многие другие. Письмо было издано отдельной брошюрой и отправлено на фронт осенью 1942 года. Оно было опубликовано в центральных газетах «Правда», «Известия», «Комсомольская правда», «Красная Звезда» и других, распространено на всех фронтах. Письмо свидетельствовало о патриотизме армянского народа, его преданности Родине. Для воинов-армян оно также служило напоминанием воинам-армянам о горьком прошлом армянского народа – геноциде армян Западной Армении, осуществленном турецкими варварами в 1915 году, вдохновителем и соучастником которых была кайзеровская Германия. «Помните мудрый завет нашего народа: неосознанная смерть – это смерть, а смерть осознанная – это бессмертие», – упоминалось в письме.

Промышленность республики продолжала строить новые предприятия и расширять существующие. Особое внимание уделялось развитию металлообрабатывающей промышленности, которой республика до войны почти не имела. В 1941–1945 гг. были сданы в эксплуатацию 30 новых промышленных предприятий.

За время войны было освоено производство около 300 видов военной продукции, среди которых 10 видов боеприпасов, два вида вооружений, шесть видов средств связи и т.д. За время войны были изготовлены корпуса 82-мм осколочных мин – 233000 штук, корпуса авиабомб – 203000 штук, корпуса противотанковых мин – 150000 штук, корпуса противопехотных мин – 130000 штук, бутылки с зажигательной смесью – 90000 штук и т.д.

С октября 1942 г. Ереванский завод № 447 освоил ремонт поврежденных самолетов. Позднее завод начал выпускать крылья и шасси для истребителей ЯК-3, которые поступали на Тбилисский авиационный завод, где проводилась их завершающая сборка. На заводе также было налажено производство легких самолетов УТ-2М, которые, на месте пройдя испытание, отправлялись на фронт. На Ереванском станкостроительном заводе имени Дзержинского освоили выпуск 50-миллиметрового миномета с ротным ЗИП.

В годы войны резко увеличилось производство меди и других цветных металлов, необходимых для производства оружия. За год в Армении вырабатывалось до 450000 тонн медной руды и производилось 8000 тонн меди. Для нужд промышленности использовались местные ресурсы топлива.

Героическими усилиями рабочих промышленность Советской Армении за год дала 100000 тонн цемента, до 90000 тонн карбида, до 5000 тонн каучука, до 15000 тонн комплектов автопокрышек и автокамер, до 6000 тонн серной кислоты, до 3500 тонн медного купороса, до 20 миллионов банок консервов, до 25 миллионов метров ткани, до 10 миллионов пар чулочно-носочных изделий, до 3 миллионов кусков трикотажных изделий, до 800000 пар обуви, до 40000 де-

калитров коньяка, до 600000 декалитров вина, до 3000 тонн табака, до 7500 тонн мяса и колбасных изделий и т.д.

В промышленности Армении численность рабочих в годы войны достигала 30000-35000 человек, а в артелях Армпромсовета работало свыше 8000 человек. Велика была роль женщин в развитии народного хозяйства Армении. В 1944 г. во всем народном хозяйстве республики (без сельского хозяйства) работало свыше 65000 женщин.

Победе над фашизмом содействовали труженики сельского хозяйства Советской Армении. Основная часть сельских работников находилась в рядах действующей армии, и тяжесть сельских работ легла на плечи женщин, стариков и детей, которые героически трудились в тылу.

По данным на 1942 год, в колхозах республики работали 173267 колхозников, более половины которых составляли женщины. Сменив ушедших на фронт мужчин, они осваивали такие сугубо мужские специальности, как тракторист, комбайнер, шофер и т.д., становясь мастерами своего дела. Из городского населения (студенты, школьники и другие) в сельских работах участвовало более 20000 человек.

За годы войны посевные площади в Армении не только не уменьшились, но и увеличились на 27000 гектаров: в 1940 г. они составляли 443007 тысяч гектаров, а в 1945 г. – 460007 тысяч гектаров. Колхозы республики проделали большую работу, особенно по расширению площади под технические культуры, табак и сахарную свеклу. За годы войны урожайность зерновых культур с 1 гектара возросла в среднем на 1.7 центнера, картофеля – на 25 центнеров. По сравнению с 1940 годом площади виноградников увеличились на 3000 гектаров, плодовых садов – на 5000 гектаров.

В годы Великой Отечественной войны в республике продолжало развиваться животноводство. За период с 1 января 1941 г. по 1 января 1945 г. поголовье крупного рогатого скота увеличилось на 11200 голов (более 360000 голов), до 45000 голов увеличилось поголовье свиней. Все это позволило труженикам села Советской Армении выполнить план мясного фонда Красной Армии, который составил за год 20000 центнеров.

Советская Армения считалась той республикой, которая до войны хлеб получала в основном из других районов страны. В годы войны привоз хлеба достиг минимального объема, а нужду в хлебе удовлетворяли за счет собственного производства.

После выполнения государственных обязательств всех видов только в 1943 г. сверх того было выделено в фонд обороны страны 130000 пудов зерна, много мяса, сельскохозяйственных продуктов. Трудящиеся Армении в годы войны собрали для фонда обороны 45206000 рублей, а для фонда Красной Армии – 85841000 рублей, отправили на фронт 1136000 единиц теплой одежды, 206323 штук индивидуальных посылок, 45 вагонов продуктов.

Откликнувшись на патриотический призыв колхозников и колхозниц Украины, труженики села Армении в 1944 г. выделили сверх плана в фонд Красной Армии 200000 пудов зерна. Крупные средства были выделены ими в фонд восстановления Ленинграда, Сталинграда, Одессы и других освобожденных районов страны. Колхозники Армении из своих личных сбережений на постройку танковой колонны «Колхозник Армении» внесли 46 млн. рублей, на постройку авиаэскадрильи «Советская Армения» – 21 млн.

За счет пожертвований трудящихся Советской Армении, кроме вышеуказанных, были построены танковые колонны «Горняк Зангезура», «Физкультурник Армении», «Комсомол Армении», «Пионерия Армении», «Советская Армения», авиаэскадрильи «Ахтанак» (Победа), «Молодая Гвардия», «Советский артист», бронепоезд «Советская Армения» и т.д. На пожертвования представителей армянской диаспоры, которую организовала Армянская Апостольская церковь, были построены танковые колонны «Давид Сасунский» (в первой колонне был 21, во второй – 22 танка «Т-34»), а на средства, пожертвованные армянами, проживавшими в Иране и Эфиопии – танковая колонна «Генерал Баграмян» (Мурадян и др. 1975, 53–326).

В победу над фашизмом достойную лепту внесла и интеллигенция Советской Армении. Для отправки на фронт записывались в добровольцы сотрудники научных учреждений Еревана, преподаватели и студенты вузов, учителя, артисты, художники, писатели, врачи и многие другие. Многие выпускники вузов и студенты старших курсов были откомандированы для учебы в военные училища.

В соответствии с требованиями войны перестроили свои работы научно-исследовательские институты и вузы, усилия которых были направлены на выполнение требуемых фронтом задач.

В целях объединения руководства научно-исследовательскими учреждениями республики в едином руководящем научном центре и в интересах дальнейшего развития науки на базе Армянского филиала Академии наук СССР 29 ноября 1943 г., несмотря на тяжелые условия войны, в Ереване открылась Академия наук Армянской ССР. В состав АН Армении вошли 25 различных учреждений, которые до этого находились в составе Армянского филиала АН СССР, Ереванского государственного университета или в других научных организациях.

Первым президентом Академии наук Армянской ССР был избран видный советский историк, ученый-востоковед, академик АН СССР Иосиф Абгарович Орбели, который до этого руководил Армянским филиалом АН СССР, являлся директором ленинградского Эрмитажа. Вице-президентами были избраны Виктор Амазаспович Амбарцумян и Вардан Оганесович Гулканян. Создание АН Армянской ССР сыграло значительную роль в развитии науки республики. Начатая в первые годы войны научно-исследовательская работа ученых Армении приняла более глубокий, более плодотворный характер. Их открытия способствовали дальнейшему усилению оборонной мощи страны, лучшему обеспечению нужд фронта.

Много сделали труженики здравоохранения для победы. Действующие в республике 94 больницы и около 50 госпиталей в годы войны делали все возможное для выздоровления более 120000 раненых солдат и офицеров. Велика заслуга врачей в том, что в годы войны населению республики удалось избежать эпидемий, которые в условиях войны становятся настоящей катастрофой. Созданные академиком Арменаком Мнджояном болеутоляющие средства нашли широкое применение в полевой хирургии (Арутюнян 2001, 5–16).

В победу над фашизмом достойную лепту внесли и сотрудники отраслей народного образования, литературы и искусства. Несмотря на тяжелые военные условия, в Армении не только не была закрыта ни одна школа, но и были сданы в эксплуатацию 12 новых школьных зданий. В первый военный учебный год в школах республики была введена общая военная подготовка.

Большинство старшеклассников и учителей активно участвовали в сельскохозяйственных работах. В годы войны в республике придавали особое значение подготовке военных специалистов в системе народного образования. В Ереване в 17-й артиллерийской школе училось 630, а в средней школе военно-воздушных сил – 600 курсантов.

В годы войны продолжали работать вузы республики. Вместо действующих в 1941 г. в Армении девяти вузов в конце 1945 г. функционировало уже 12. Были открыты Русский педагогический институт, Художественно-театральный институт и Институт физической культуры. В вузах Армении в годы войны было подготовлено 3800 врачей, инженеров, агрономов, ветеринаров и других специалистов. В этот же период техникумы и другие средние специальные учебные заведения окончили около 8400 специалистов, которые успешно работали в промышленности и сельском хозяйстве, культурно-просветительских учреждениях.

Война выдвинула новые задачи перед писателями. Надо было обратиться к патриотической тематике, изобразить в художественных произведениях героев, сражающихся за свободу и независимость Родины, отразить героическое прошлое армянского народа. Эту задачу армянские писатели успешно выполнили. Можно назвать патриотические стихотворения и публицистику Аветика Исаакяна, исторический роман Степана Зорьяна «Царь Пап», трагедию Наири Заряна «Ара Прекрасный и Шамирам», его поэму «Голос Родины», поэмы в прозе и рассказы Мовсеса Арази, лирику Гегама Сарьяна, Азата Вштуни, Ованеса Шираза, Сильвы Капутикян.

Произведения на военную тематику были созданы писателями-фронтовиками Грачья Кочаром, Серо Ханзадяном (в дальнейшем Герой Социалистического Труда), Вахтангом Ананяном, Амаяком Сирасом, Арутюном Мкртчяном, Степаном Куртикяном, Гарегином Бесом, Бабкеном Шаумяном, Мкртичем Саркисяном, поэтом Рачья Ованесяном, Аршалуйсом Сарояном, Гевондом Комуни, Гургеном Боряном, Геворгом Эмином, Татулом Гуряном, Амо Сагияном и др.

В годы войны, несмотря на тяжелые экономические условия, не только не перестали действовать существовавшие очаги культуры, но и появились новые.

В 1942 г. в Ереване был открыт Театр музыкальной комедии, который позднее стал театром имени Акопа Пароняна.

При содействии правительства республики в 1944 г. в Армении прошли 4-й Всесоюзный фестиваль и научная конференция, посвященная 380-летию Шекспира, которые стали крупными событиями в культурной жизни страны. В годы войны своим мастерством блистали прославленные артисты Вагарш Вагаршян, Рачья Нерсисян, Авет Аветисян, Ваграм Папазян, Гурген Джанибекян, Амбарцум Хачанян, Давид Малян, актрисы Асмик (Тагуи Акопян), Рузанна Варданян, Сюзанна Гарагаш, Арус Восканян, Арус Асрян, режиссеры Аршак Бурджалян, Вардан Аджемян, Цолак Американ и другие.

В 1943–1944 гг. на киностудии «Арменфильма» был снят художественный фильм режиссера Амо Бек-Назаряна – «Давид-Бек». Исполнитель роли Давид-Бека – народный артист республики Рачья Нерсисян был награжден орденом Ленина.

Блестящими успехами ознаменовалась деятельность Ереванского оперного театра им. Александра Спендиаряна под руководством известного дирижера Микаэла Тавризяна. В годы войны был создан балет «Гаянэ» Арама Хачатуряна, поставлены оперы «Аршак Второй» Тиграна Чухаджяна, «Намус» Левона Ходжа-Эйнатяна, «Анаит» Анушавана Тер-Гевондяна. На историко-героическую тематику композитор Аро Степанян написал оперу «Нуне», Каро Закарян – «Агаси», В. Араратян – «Царь Гагик», Армен Тигранян – «Давид-Бек».

Исполнительским талантом отличились народная артистка СССР Айкануш Даниелян, артист Шара Талян, оперная певица Татевик Сазандарян и другие. Популярными были песни «Песня солдата» Ашота Сатяна, «Родина» Арама Мерангуляна, «Генерал Баграмян» Артемия Айвазяна, «Родина зовет» Эдуарда Мирзояна и другие. 12 августа 1944 г. впервые прозвучал Государственный гимн Армянской ССР (музыка Арама Хачатуряна, слова Сармена). В годы войны с успехом действовал джаз-оркестр Артемия Айвазяна, ансамбль песни и пляски Татула Алтуняна, систематически выступавшие с гастролями на различных фронтах.

В годы войны значительных творческих успехов добились художники Мартирос Сарьян, Дмитрий Налбандян, Габриел Гюрджян, Акоп Коджоян, Мариам Асламазян, Ерануи Асламазян, Мгер Абегян, Эдуард Исабекян и многие другие. Военная тематика нашла своеобразное решение в произведениях скульпторов Никогайоса Никогосяна, Ара Саркисяна, Сурена Степаняна, Айцемик Урарту и др.

Существенный вклад в победу над фашизмом внесли и армянские советские государственные деятели, ученые, конструкторы, которые работали в высших партийных и государственных органах СССР, в военной промышленности и разных отраслях народного хозяйства. Достойно упомянуть лишь имена и занимаемые должности некоторых из них: Анастас Иванович Микоян – член Государственного комитета обороны, Иван Федорович Тевосян – нарком черной металлургии СССР, Артем Иванович Микоян – главный конструктор КБ, в котором создавались истребители «МИГ», Амо Сергеевич Елян – директор артиллерийского завода № 92, Степан Акопович Акопов – нарком среднего машиностроения, Баграт

Николаевич Арутюнян – первый заместитель наркома путей сообщения СССР, Сурен Иванович Агаджанов – директор авиационного завода № 21, Паруйр Апетнакович Матевосян – директор Сталинградского металлургического завода «Красный Октябрь», Андраник Гевондович Иосифян – директор Всесоюзного научно-исследовательского института электромеханики, Иван (Ованес) Арзуманович Сарикян (Сариков) – директор сталелитейного завода на Урале, Левон Абгарович Орбели – академик, генерал-полковник медицинской службы, вице-президент АН СССР, начальник Военно-медицинской академии им. С.М. Кирова и многие другие.

За выдающиеся трудовые достижения в годы войны восьмерым армянам было присвоено звание Героя Социалистического Труда – Амо Сергеевичу Еляну (в 1942 г.), Анастасу Ивановичу Микояну, Ивану Федоровичу Тевосяну, Баграту Николаевичу Арутюняну, Николаю Артемьевичу Нариняну, Борису Константиновичу Саламбекяну (Саламбеков), Андранику Мисаковичу Хачатряну (в 1943 г.) и Левону Абгаровичу Орбели (в 1945 г.).

В послевоенный период высокого звания Героя Социалистического Труда из армян – участников Великой Отечественной войны удостоились академик Кирилл Иванович Щелкин (Киракос Ованесович Метаксян – трижды: 1949, 1951, 1958 гг.), один из создателей атомной и водородной бомбы; генерал-полковник инженерно-технической службы, главный конструктор КБ, который создал истребители «МиГ», Артем Иванович Микоян (дважды: 1956, 1957 гг.), главный конструктор КБ-11, доктор технических наук, создатель ядерных боеголовок для межконтинентальных баллистических ракет Самвел Григорьевич Кочарянц (дважды: 1962, 1984 гг.) и академик АН СССР, президент АН Армении Виктор Амазаспович Амбарцумян (дважды: 1968, 1978 гг.), а в 1994 г. ему было присвоено звание Национального Героя Республики Армения.

Заключение

Таким образом, можно констатировать, что армянский народ вместе с другими народами СССР, во главе с русским народом, принимал самое активное участие в разгроме немецко-фашистских захватчиков и внес свой достойный вклад в историческую победу в Великой Отечественной войне 1941–1945 гг. В общем в войне участвовало более 600000 воинов-армян, из них – 300000 из Советской Армении, около 200000 – из других республик Советского Союза, 100000 – из зарубежных стран. Более чем 200000 погибли в боях, спасая мир от фашизма. Активное участие армянского народа в войне проявилось не только призывом в армию более 600000 человек, но и героизмом на полях сражений в составе различных родов войск на разных фронтах. В годы войны 66802 армянина были награждены орденами и медалями, а 99 были удостоены звания Героя Советского Союза. В целом, из армян звание Героя Советского Союза присвоено 106 лицам, из них 4-в Советско-Финляндской войне (30 ноября 1939 г. – 13 марта 1940 г.), 99 – в Великой Отечественной войне, 3 – за подвиги, совер-

шенные в послевоенные мирные годы. И.Х. Баграмян и Н.Г. Степанян этого звания удостоились дважды. 26 воинов-армян стали полными кавалерами ордена Славы трех степеней, а 8 – стали Героями Социалистического труда. Из армян участников войны 151 чел. получили генеральское, а 9 – адмиральское звание. В их числе И.С. Исакову было присвоено звание Адмирала Флота Советского Союза, И.Х. Баграмяну-Маршала Советского Союза, А.Х. Бабаджаняну – Главного маршала бронетанковых войск, С.А. Худякову – А.А. Ханферянцу – маршала авиации, а С.Х. Агасову – маршала инженерных войск. В годы войны генерал армии И.Х. Баграмян был командующим фронтом, 3 – командующими армиями, 8 – командирами корпусов, 28-командирами дивизий, 100 – командирами бригад и полков и т.д. Адмирал флота И.С. Исаков был 1-м заместителем маршала Военно-морского флота СССР – начальником главного штаба ВМФ, а маршал авиации С.А. Худяков – А.А. Ханферянц – начальником главного штаба Военно-воздушных сил Красной Армии.

В победу над фашизмом достойный вклад внесли армяне в рядах партизанского и антифашистского движения.

Существенный вклад в победу внесли и труженики Советской Армении. Руководствуясь девизом – «Все для фронта, все для победы!», они превратили республику в настоящий арсенал Красной Армии (Арутюнян 2002, 636-644).

Благодарность

Автор статьи выражает искреннюю благодарность за ценные советы в процессе подготовки материала к публикации академику НАН РА, директору Института истории НАН РА Ашоту Мелконяну, доктору исторических наук, зав. кафедрой истории Армении исторического факультета ЕГУ Эдику Минасяну.

Գրականություն/References/Литература

1. Казахецян В.Н. (ред.), 1985, Книга о Героях 1985, Ереван, изд. АН Армянской ССР.
   Ghazakhetyan W. N. (ed.), 1985, Book about Heroes, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).
2. Арутюнян К.А. 2018, Армянский народ в Великой Отечественной войне 1941–1945, Ереван, «Зангак».
   Harutyunyan K.A. 2018, The Armenian People in the Great Patriotic War 1941–1945, Yerevan, Zangak (in Russian).
3. Арутюнян К.А. 2007, Маршал Советского Союза, дважды герой И.Х. Баграмян, Ереван, «Зангак».
   Harutyunyan K.A. 2007, Marshal of the Soviet Union, Twice Hero I.Kh. Baghramyan, Yerevan, Zangak (in Russian).
4. Арутюнян К.А. 2020, Адмирал флота Советского Союза, Герой Советского Союза Иван Степанович Исаков, Ереван, «Гитутюн».

Harutyunyan K.A. 2020, Admiral of the Fleet of the Soviet Union, Hero of the Soviet Union Ivan Stepanovich Isakov, Yerevan, Gitutyun (in Russian).

5. Арутюнян К.А. 2008, Маршал авиации С.А. Худяков – А.А. Ханферянц, Ереван, «Зангак».
Harutyunyan K.A. 2008, Marshal of Aviation S.A. Khudyakov – A.A. Khanferyants, Yerevan, Zangak (in Russian).
6. Арутюнян К.А. 2009, Главный маршал бронетанковых войск А.Х. Бабаджанян, Ереван, «Гитутюн».
Harutyunyan K.A. 2009, Chief Marshal of the Armored Forces A.Kh. Babajanyan, Yerevan, Gitutyun (in Russian).
7. Арутюнян К.А. 2012, Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов, Ереван, изд. Института истории НАН РА.
Harutyunyan K.A. 2012, Marshal of the Engineering Troops Sergei Khristoforovich Aganov, Yerevan, Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia (in Russian).
8. Арутюнян К.А. 2015, Участие сынов армянского народа в битве за Москву, Ереван, «Зангак».
Harutyunyan K.A. 2015, Participation of the Sons of the Armenian People in the Battle of Moscow, Yerevan, Zangak (in Russian).
9. Арутюнян К.А. 2019, Воины-армяне в боях за Белоруссию в Великой Отечественной войне, Ереван, «Зангак».
Harutyunyan K.A. 2019, Armenian Soldiers in the Battles for Belarus in the Great Patriotic War, Yerevan, Zangak (in Russian).
10. Арутюнян К.А. 2002, Армянские национальные формирования в 1918–1945 гг., Ереван, «Зангак».
Harutyunyan K.A. 2002, Armenian National Formations in 1918–1945, Yerevan, Zangak (in Russian).
11. Арутюнян К.А., Саакян М.Г. 2001, Участие сотрудников Национальной Академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941–1945), Ереван, «Гитутюн».
Arutyunyan K.A., Saakyan M.G. 2001, Participation of the employees of the National Academy of Sciences of the Republic of Armenia in the Great Patriotic War (1941–1945), Yerevan, Gitutyun (in Russian).
12. Газета «Правда» 1943, 1 декабря.
Newspaper "Pravda" 1943, December 1 (in Russian).
13. Газета «Нью-Йорк Таймс» 1946, 24 ноября.
Newspaper "New York Times" 1946, November 24 (in Russian).
14. Центральный архив Министерства обороны Российской федерации (ЦАМО РФ), ф. 33.
Central Archives of the Ministry of Defense of the Russian Federation (TsAMO RF), f. 33. (in Russian).
15. Мурадян В. А. и др. (сост.) 1975, Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945): сборник документов и материалов, Ереван, изд. АН Армянской ССР.
Muradyan V. A. et al. (comp.) 1975, Soviet Armenia during the Great Patriotic War (1941–1945): Collection of documents and materials, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

ՖՐԱՆՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ (1919 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1920 Թ. ՀՈՒՆԻՍ)

FRANCO-TURKISH POLITICAL RELATIONS CONCERNING CILICIA AND THE REPUBLIC OF ARMENIA (IN DECEMBER 1919 – JUNE 1920)

ФРАНКО-ТУРЕЦКИЕ ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ПРИМЕНИТЕЛЬНО К КИЛИКИИ И РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (В ДЕКАБРЕ 1919 – ИЮНЕ 1920 Г.)

Գայանե Մախմուրյան
Gayane Makhmourian
Гаянэ Махмурян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

gayane.makhmourian@academhistory.am

Ներկայացվել է՝ 25.10.2024; գրախոսվել է՝ 01.11.2024; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 25.10.2024; Revised: 01.11.2024; Accepted: 18.04.2025
Представлено: 25.10.2024; рецензировано: 01.11.2024; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-32

Ամփոփում – Անտանտի երկրների պետական գործիչները չէին բարձրաձայնում Կիլիկիայի պատկանելության և միացյալ Հայաստանի Հանրապետության ձևավորվելիք սահմանների միջև առկա փոխկապակցվածության մասին, իսկ Երևանում գործող կառավարությունն ի սկզբանե ընդունեց, որ ի վիճակի չէ զբաղվելու Միջերկրական տարածաշրջանով: 1919 թ. դեկտեմբերի 22–23-ին ու 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը գումարված Լոնդոնի երկու կոնֆերանսներում, այնուհետև ապրիլի 18-ից 26-ը Սան Ռեմոյում մշակվեց և մայիսի 11-ին հրապարակվեց Սևրի պայմանագրի տեքստը, որով Կիլիկիայի հիմնական մասը թողնվում էր Օսմանյան Թուրքիայի կազմում: Արձագանքելով Ֆրանսիայի այդ անհաջողությանը՝ նրա կառավարությունը փոխեց իր վարվելակերպը: 1919 թ. դեկտեմբերի 5-ից 7-ը նրա ներկայացուցիչը բանակցություններ սկսեց քեմալականների ոչ պաշտոնական իշխանությունների հետ: Վերջինները հավանություն տվեցին Ֆրանսիայի զիջողականությանը Կիլիկիայի նկատմամբ ու 1920 թ. մայիսի 30-ից այնտեղ զինադադար հաստատելու առաջարկին: Ֆրանսիան նախաձեռնում էր տարածքից իր զորքերի արագ դուրսբերումը և շոշափում հաշտության անջատ պայմանագիր կնքելու հնարավորությունը: Թուրքիայով մեկ ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորության դիմաց Ֆրանսիան պատրաստ էր հետամուտ լինելու Սևրի պայմանագրի մեղմացմանը: Սա վերաբերում էր Սեբաստիայի, Երզնկայի, Էրզրում քաղաքի, Տրապիզոնի հետագա պատկանելությանը և

մինչև Բաթում երկաթուղու կառուցմանը: Այդ զիջումները դիտարկվում էին ոչ որպես միայն Կ. Պոլսում տեղակայված Բ. Դռան, այլև քեմալականների կողմից պայմանագրի կնքմանն ու կատարմանը նպաստող կարևոր խթաններ: Իրականացվող մարտավարությունն արտացոլում էր ֆրանսիական քաղաքականության առաջնահերթությունների հետևյալ համակարգը՝ Սիրիան, Կիլիկիան, Հայաստանի Հանրապետությունը, Սևրի պայմանագիրը, դրա կատարումը՝ զիջումների գնով (այդ աշխատանքը մասամբ ներկայացվել է 2022 թ. հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» թեմայով գումարված միջազգային գիտաժողովում, որի մի շարք դրույթներ տեղ են գտել «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.», Միջազգային գիտաժողով (4 հոկտեմբերի 2022 թ.), նյութերի ժողովածուում , Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ 2024, 132–153:

Abstract – The statesmen of the Entente powers did not announce the interrelationship between the belonging of Cilicia and the borders to be formed for the united Republic of Armenia, while the Government in Yerevan initially accepted its inability to deal with the Mediterranean region. Participants of the two London Conferences, held on December 22–23, 1919 and February 12 – April 10, 1920, then politicians at San Remo on April 18–26 of the same year had composed the Treaty of Sevres and published it on May 11. The bulk of Cilicia was left by its text within the Ottoman Turkey. Being highly disappointed, the French Government responsed by its new line of conduct. On December 5–7, 1919 its representative began to negotiate with the not-official Kemalist authorities. The latter approved of France's concessions regarding Cilicia and its proposal to establish a ceasefire in this region on May 30, 1920. France initiated the rapid withdrawal of its troops from this territory and touched upon the possibility to conclude a separate peace treaty. France was ready to compromise on the Treaty of Sevres in exchange for the opportunity to make business all around Turkey. This concerned the future sovereign possession of Sebastia, Erznka, the city of Erzerum, Trapezund and the construction of the railway to Batum. These cessions were evaluated as ponderable stimuli not only for the Subleme Porte in Constantinople, but also for the Kemalists, contributing to conclusion and implementation of the agreement. This tactics, implemented by the official Paris, revealed the following system of priorities in the French politics: they were Syria, Cilicia, the Republic of Armenia, the Treaty of Sevres, and its implementation at the cost of cessions.

Аннотация – Политики стран Антанты молчали о взаимосвязи между принадлежностью Киликии и границами, разрабатывавшимися для будущей объединенной Республики Армения, а действовавшее в Ереване правительство с самого начала признавало свою неспособность заниматься Средиземноморским регионом. На двух Лондонских конференциях 22–23 декабря 1919 и 12 февраля – 10 апреля 1920 г., а затем 18–26 апреля в Сан-Ремо был разработан и 11 мая опубликован текст Севрского договора, по которому основную часть Киликии оставляли в составе Османской Турции. Откликаясь на эту неудачу Франции, ее правительство изменило свой образ действий. 5–7 декабря 1919 г. ее представитель начал переговоры с неофициальными властями кемалистов. Последние одобрили уступки Франции относительно Киликии и ее предложение установить там с 30 мая 1920 г. перемирие. Франция обязывалась быстро вывести оттуда свои войска и затрагивала вопрос о заключении сепаратного мирного договора. Взамен на возможность заниматься предпринимательской деятельностью по всей Турции Франция бралась добиваться смягчения Севрского договора. Это относилось к будущей принадлежности Себастии, Ерзнки, города

Эрзерума, Трапезунда и к строительству железной дороги на Батум. Эти уступки рассматривались как кажные стимулы для подписания и выполнения договора не только с Высокой Портой в Константинополе, но и кемалистами. Вышеуказанная тактика отражала следующую систему приоритетов французской политики: ими были Сирия, Киликия, Республика Армения, Севрский договор, его выполнение ценой уступок.

Հիմնաբառեր – Կիլիկիա, Ֆրանսիա, Հայաստան, զինադադար, Սևրի պայմանագիր:
Keywords – Cilicia, France, Armenia, armistice, Treaty of Sevres.
Ключевые слова – Киликия, Франция, Армения, перемирие, Севрский договор.

Ներածություն

1919 թ. դեկտեմբերից Ֆրանսիայի վարչապետներ Ժ. Կլեմանսոն, այնուհետև 1920 թ. հունվարի 20-ից Ա. Միլլերանը ստիպված էին համակերպվել Անգլիայի ճնշման ու Կիլիկիայի կորստի հետ: Անգլո-ֆրանսիական բանակցությունների համատեքստում նրանք պաշտոնական ներկայացուցիչ են ուղարկում Սվազ Մ. Քեմալի մոտ՝ խոստանալով մոտակա մերձեցում Թուրքիայի հետ: 1920 թ. փետրվար-ապրիլին գումարված Լոնդոնի II կոնֆերանսում ու հատկապես ապրիլի 18-ից 26-ը Սան Ռեմոյում անցկացրած բանակցություններից հետո Ֆրանսիան աշխատում էր որքան հնարավոր է օգուտ ստանալ իր դիվանագիտական պարտությունից: Նա նկատելիորեն փոխեց իր քաղաքականությունը՝ անջատ և ինքնուրույն հարաբերություններ ստեղծելով քեմալականների հետ:

Քանի որ այդ երկրի համար առաջնահերթությունը Սիրիայում զորքեր պահելն էր և հսկողություն սահմանելը, ուստի պաշտոնական Փարիզը Կիլիկիան դիտարկում էր որպես Սիրիայի մաս: Սևրի պայմանագիրը կարևորվում էր ոչ միայն ստորագրվելու, այլև այն կատարելու տեսակետից, և դրան հասնելու ճանապարհին ընդունելի էին տարածքային զգալի զիջումներ ապագա միացյալ Արևմտյան Հայաստանի մի հատվածն ընդգրկող ՀՀ-ի հաշվին: Չկարողանալով ամրագրել Կիլիկիայում հայերին պաշտպանելու իրավունքը սուլթանի ինքնիշխանության պայմաններում՝ Ֆրանսիայի ԱԳՆ-ն ձգտում էր Թուրքիային թողնել Էրզրում քաղաքը: Միաժամանակ, Կլեմանսոն ու Միլլերանը հաստատեցին, որ չեն կարողանա 20, թեկուզ 5-10-հազարանոց զորք տրամադրել միացյալ Հայաստանի Հանրապետությունը ձևավորելու համար: Սան Ռեմոյում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից թուրքական սահմանները հաստատվելուց և պայմանագրի նախագիծը մայիսի 11-ին Դաշնակիցների որոշմամբ հրապարակվելուց հետո Փարիզն անցել էր կորցրած Կիլիկիայի և Սևրի շուրջ գործունյա և պաշտոնական սակարկումների՝ նոր պաշտոնյաներ ուղարկելով Քեմալի մոտ:

Կ. Պոլսում Ֆրանսիայի գերագույն հանձնակատար Ժ.-Ա. Դեֆրանսի և վարչապետ, արտաքին գործոց նախարար Միլլերանի նամակագրությունը ուշագրավ դրվագ է բացահայտում միջազգային հարաբերություններում Կիլիկիայի ազդեցիկ գործոն լինելու վերաբերյալ: Այն, որ այստեղ պահպանվում էր օսմանյան ինքնիշխանությունը առանց ֆրանսիական հսկողության կամ պաշտպանության իրավունքի, հղի էր բնակչության ոչնչացման վտանգով և պահանջում էր երկրամասում կուտակված 275 հազ. քրիստոնյաների, ճնշող մեծամասնությամբ

Կիլիկիայի և այլ նահանգների հայերի, ինքնապաշտպանություն կամ տարհանում: Սակայն Արևելքում բրիտանացիներին պարտված ֆրանսիացի քաղաքական գործիչներն ու տարածաշրջանային հրամանատարությունն իրենց զորքի արագացված դուրսբերումը ընդամենը փոխանակեցին թուրքերի հետ անջատ պայմանագիր կնքելու հնարավորության հետ: Նրանք խոստացան մեղմացնել Սևրի դրույթներն ու միաժամանակ հստակեցնում էին Հայաստանի Հանրապետության ռազմական ներուժի հնարավորությունները՝ իրենց տեսանկյունից քեմալականների՝ Երևանի դեմ կազմակերպվող անխուսափելի և լայնածավալ հարձակման նախաշեմին: Իր հերթին, Հայոց ազգային II համագումարը և ազգային մամուլը ճիշտ էին գնահատում իրավիճակը՝ զրկված լինելով այն փոփոխելու միջոցներից:

Ֆրանսիայի մոտեցումը Կիլիկիայի, միացյալ Հայաստանի Հանրապետության և Սևրի պայմանագրի հարցերին

Ընդունելով ԱՄՆ-ի ինքնաբացարկը Արևելյան քաղաքականությունից՝ Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական գործիչներն անցան Թուրքիայի հետ պայմանագրի առարկայական մշակման: 1919 թ. դեկտեմբերի 11–13-ին Կլեմանսոն ու ԱԳՆ-ի քաղաքական բաժանմունքի պետ, քաղաքական և առևտրային գործերի գծով գլխավոր քարտուղար Ֆ. Բերթելոն այցելեցին Լոնդոն, որտեղ բանակցեցին Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի և Ֆորին օֆիսի ղեկավար Ջ. Քերզոնի հետ: Ամսին 12-ին Բերթելոն խոսեց Կիլիկիայում սուլթանի անվանական գերիշխանության ու թուրքական մշակութային ինքնավարության մասին: Նա միացյալ Հայաստանում ընդգրկեց Զանգեզուրը, Արցախը, Բորչալուն, Վանի լճի ավազանը, Մուշի և Բիթլիսի հովիտները: Բայց Էրզրումի նահանգի արևելյան մասը ՀՀ-ին հանձնում էր առանց վարչական կենտրոնի: Այսպիսով, Կլեմանսոն ընդունեց Կիլիկիայի կորուստն ու հայտարարեց իր զորքերը ՀՀ չուղարկելու մասին:

Դեկտեմբերի 22-23-ին Լոնդոնի I կոնֆերանսում Բերթելոն համաձայնեց հայերին հանձնել Էրզրում քաղաքն ու առաջարկեց հայկական օջախ ստեղծել Կիլիկիայում՝ Ֆրանսիայի պաշտպանության իրավունքով: Միաժամանակ, նա Դիարբեքիր էր հասցնում իր երկրի տնտեսական շահերի գոտին: Դաշնային սկզբունքով ձևավորված Թուրքիան կարող էր դրվել անգլո-ֆրանսիական հսկողության ներքո: Սակայն բրիտանական կողմը չեզոքացրեց նրա երկրի դիրքերը Կիլիկիայում:

Այնպես որ, 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը կայացած Լոնդոնի II կոնֆերանսում, որին մասնակցել էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետներն ու արտգործնախարարները, արդեն պարզ էր դարձել, որ Ֆրանսիան պարտվել է իր արևելյան քաղաքականություն ասպարեզում: Փետրվարի 16-ին միացյալ Հայաստանը ներկայացվում էր առանց Էրզրումի և Տրապիզոնի (Documents on British VII 1958, 83–85), և ամսի 17-ին ձևավորվեց Հայկական սահմանների հանձնաժողովը: 10 օր հետո հանձնաժողովը հայտնեց Անտանտի մտադրությունը թուրքերին հանձնելու սևծովյան նավահանգիստն ու

Երզնկան: Ֆրանսիայի և Բրիտանիայի զորքերը հայերին չտալու պնդումներին զուգահեռ՝ ԱՄՆ-ի Սենատը նախագահ Վիլսոնին արգելեց մարտի 19-ին օսմանյան, այսինքն՝ հայկական մանդատի ստանձնումը: Մեկ շաբաթ հետո՝ ամսի 25-ին, ֆրանսիական ձգտումներին հակառակ, կոնֆերանսը որոշեց հայերին հանձնել Վանը, Բիթլիսը, Էրզրումն ու Տրապիզոնը:

Այդ նույն ժամանակ Քեմալը, որ մերձենում էր բոլշևիկներին, համաձայնագիր կնքեց Ադրբեջանի հետ, ուժեղացրեց հարձակումները Կիլիկիայում ու փետրվարի 11-ին սկսեց Մարաշի կոտորածը: Ելնելով դրանից և հարկադրված լինելով լքել Կիլիկիան՝ Ֆրանսիայի ղեկավար ուժերը, նոր վարչապետ Միլլերանից սկսած, փոխեցին իրենց երկրի քաղաքականությունը: Դեռ Կլեմանսոյի օրոք՝ դեկտեմբերի 5–7-ին, Ֆրանսիայի հավատարմատար Ֆ. Ժորժ-Պիկոն այցելեց Սվազ, որտեղ բանակցություններ վարեց Մ. Քեմալի հետ: Ֆրանսիացին վստահ էր Կլեմանսոյի շուտափույթ տապալման մեջ և նկարագրում էր երկու կողմերի մերձեցման ու համագործակցության պատկերը: Իվ Տերնոնը նշում է, թե Լոնդոնի կոնֆերանսում Ֆրանսիայի կառավարությունը արդեն ցույց էր տվել իր պատրաստակամությունը՝ լքելու Կիլիկիան, դավաճանելով տուն դարձած հայերին, որպեսզի պահպանի իր հսկողությունը Սիրիայի և Լիբանանի նկատմամբ: Միլլերանը կարգադրում է ընդհանուր լեզու գտնել Քեմալի հետ՝ նաև արաբների անկախությունը ճնշելու նպատակով (Bloxham 2005, 162; 100 ans après 2021, 57, 69–70, 73, 75):

1920 թ. ապրիլի 18–26-ի Սան Ռեմոյի կոնֆերանսը՝ որպես ֆրանսիական քաղաքականության շարունակվող փոփոխության խթան

Ինչպես նշում էր Ահարոնյանը, Միլլերանի և Բերթելոյի ղեկավարած ֆրանսիական պատվիրակությունը կոնֆերանսին եկել էր «թուրքերի պաշտպանության բուռն եռանդով»: Նրա գործիչներն աշխատում էին «որչափ կարելի է սակաւ զրկանքով ազատել Թուրքիան ...եւ նրան ապահովել հետագայում կարեւոր հողամասեր եւ քաղաքական այնպիսի վիճակ, որպէսզի բաժան-բաժան լինելուց ազատուի» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 69–70, 73, 75, հմմտ. Ավ. Ահարոնյանի 1920 թ. նամակները 2009, 111-115): Պատճառն այն էր, որ այդ տերությունը կարողացել է գրավել, բայց ի վիճակի չէր հսկել ու կայուն վարչություն ստեղծել Կիլիկիայում: Թուրքիային հովանավորելը դրսևորվում էր նաև Կ. Պոլիսը չգրավելու, Երզնկան ու Տրապիզոնը կամ սևծովյան որևէ այլ նավահանգիստ Հայաստանին չտրամադրելու, Սեբաստիան ֆրանսիական ազդեցության գոտուց դուրս բերելու հարցերում: Բացի դրանից, մարշալ Ֆ. Ֆոշի ղեկավարած զինվորական հանձնաժողովը պնդում էր Էրզրում քաղաքը՝ «Հայաստանի բազուկը կազմող այս ամրութիւնը», ստեղծվելիք միացյալ պետությանը չտրամադրելու: Այդ հանգամանքը «վերին աստիճանի ծանր անակնկալ եղաւ» հայկական պատվիրակության համար (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 118–120):

Հետևաբար, երբ ապրիլի 22-ին ու 23-ին Պողոս Նուբարն ու Ավ. Ահարոնյանը հրավիրվել են նիստերի՝ հայերի պահանջները ներկայացնելու, վերջինս ձախողում որակեց նրանց ելույթները: Անգլո-ֆրանսիական, այնուհետև իտալացի-

ների և Ֆոշի ղեկավարած զինվորների հետ վեճերին ընդունելի լուծում ապահովելու համար կոնֆերանսը որոշեց դիմել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ գերագույն «իրավարար հանդիսանալ ու վճռել բոլոր սահմանների կնճիռը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 124–125):

Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա ինչպես նշում էր Երևանի եպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանը ապրիլի 30-ին կաթողիկոս Գևորգ Ե-ին հղած իր նամակում, այնտեղ «դրութիւնը սոսկալի է և ջարդերը շարունակւում են: ...Այս բոլորը Ֆրանսիայի շնորհքն է, որը իր զանազան հաշիւներով թիւրքասիրական քաղաքականութիւն ունի և հայերին ամէն բանում հակառակ» է (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 223, թ. 3–4, հմմտ. Բեհբուդյան 1996, 88):

Ռ. դը Կեի և Մ. Քեմալի միջև գաղտնի զինադադարի կնքումը 1920 թ. մայիսի 23-ին Անգորայում. պատճառներն ու գործելակերպը

1920 թ. մայիսի 30-ի (ըստ Ա. Միլլերանի՝ Ժ.-Ա. Դեֆրանսին 9.06.1920-ին ուղղած հեռագրի՝ Documents diplomatiques français 1999, t. II, 113) ֆրանս-քեմալական զինադադարի՝ Սևրի պայմանագրին առնչվելու մասին տվյալները չեն արտացոլվել Ռ.Գ. Սահակյանի աշխատություններում կամ Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետություն» բազմահատորյակում: Գ.Ա. Գալոյանը այդ փաստաթուղթ իրավացիորեն որակեց որպես Անտանտի տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի հետ «Թուրքիայի մերձենալու առաջին քայլ» (Գալոյան 1999, 141): Հիմք ընդունելով Պիեռ Ռեդանի 1921 թ. և Պոլ դյու Վեուի 1954 թ. հրատարակած գրքերը՝ Ռ.Գ. Սահակյանը հրապարակեց այդ գաղտնի՝ 20-օրյա զինադադարի բովանդակությունը՝ առանց նշելու թուրքական հետագա առաջարկի և Կիլիկիայում ֆրանսիական զորքի նահանջի՝ Սևրի պայմանագրի հետ կապ ունենալու մասին: Ռ. Հովհաննիսյանը տեղեկացնում է զինադադարի հիմնադրույթների մասին, պատմում 1920 թ. մայիսի 5-ից հուլիսի 13-ը Փարիզում գումարված Հայ ազգային II համագումարում այդ իրողության՝ հունիսի 11-12-ին կայացած քննարկումների վերաբերյալ (Hovannisian 1996, 376–378): Նրա վերլուծությունից հետևում է, թե պատգամավորներ Ա. Չոպանյանն ու օսմանյան նախկին արտգործնախարար Գ. Նորատունկյանը չեն տեսել գաղտնի վավերագիրը, բայց, դատելով ֆրանսիական բանակի տեղաշարժից՝ ճիշտ հասկացան թղթի բովանդակությունը: Հեշտացնելով նրանց խնդիրը՝ հունիսի 24-ին փարիզյան «Լը թամ» թերթը հրապարակեց զինադադարի բնագիրը:

Ազգային համագումարում Չոպանյանը հարց էր տալիս. ո՞ւմ էր պետք լրացուցիչ, երկկողմանի գործարքը Մուդրոսի առկայության պայմաններում: Թեև նոր վավերագրի կնքումը նշանակում էր, որ Կիլիկիայում չէին կատարվում Մուդրոսում թելադրված պահանջները: Երկրորդ. Նորատունկյանը ճիշտ հասկացավ՝ եթե ֆրանսիական զինվորը քաղաքներից հետ քաշվեց դեպի Կիլիկիայի երկաթուղին, ինչը տեղանքը լքելու առաջին նախապատրաստական քայլ էր լինում, ապա մայիսյան զինադադարը ընդհատեց կռիվները՝ բանակը անվնաս դուրս բերելու համար: Նշանակում է՝ խոսքը Ֆրանսիայի անձնատրության մասին է:

Ցանկացած գաղտնի համաձայնագիր գործողության մեջ դրվելու պահից

երևում է նրա բովանդակությունը, թեև սովորաբար դժվար է ըմբռնել նման վավերագրերի այն պայմանները, որոնք կատարվում են տարիներ հետո: Հայ համագումարը մայիսի 30-ի զինադադարը չէր կապում Սևրի պայմանագրի հետ, քանի որ նման առնչությունը ի հայտ չէր գալիս անմիջական ու նկատելի գործողություններով: Ուստի գաղտնի համաձայնագրի հիմնական վտանգը հանդիսանում է նրա ձևավորման փուլը, քանի որ մյուս կողմը կարող է դիմադրել միայն այդ գործարքի պայմանները կատարելու պահից ի վեր: Հետևաբար, նման փաստաթղթերը՝ իրենց գաղտնազերծման գնով, սկսում են լրջորեն փոխել իրավիճակը:

Օրինակ, Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյի՝ 1919 թ. նոյեմբերի 10-ի դիմումը սիրիացիներին տեղեկացնում էր «Սիրիայի և Կիլիկիայի» գերագույն հանձնակատար նշանակելու մասին: Վեճեր հարուցող՝ 1920 թ. հունվարի 6-ի գաղտնի ժամանակավոր համաձայնագիրը Կլեմանսոյի և Հիջազի էմիր Ֆեյսալի միջև արդեն չէր հիշատակում առանձին Կիլիկիայի պետություն կամ մանդատ: Դրա փոխարեն ամբողջ տարածաշրջանը՝ Պաղեստինով ու Լիբանանով հանդերձ, ընդգրկել էին ֆրանսիացիների կողմից ճանաչված և անկախ «մեծ Սիրիայի» մեջ (D'Andurain 2018, 111–112): Արդյունքում, ողջ հայկական երկրամասը հունվարի վերջից հայտնվեց լայնածավալ ու ազգայնականների հրամանատարությամբ հմտորեն ղեկավարվող պատերազմում (Kévonian 2004, 58–59):

Այնուհետև, 1920 թ. մայիսի 11-ին օսմանյան պատվիրակությունը Վերսալում ստացավ հաշտության մեծ պայմանագիրը՝ այն առանց առարկության ստորագրելու Դաշնակիցների պահանջով: Սա թեժացրեց քաղաքական լարվածությունը Կ. Պոլսում և կռիվները Կիլիկիայում: Արդեն մայիսի 25-ին Դեֆրանսը Միլլերանին տեղեկացրեց Սիրիայում ու Կիլիկիայում գերագույն հանձնակատարի գլխավոր քարտուղար Ռոբեր դը Կեի (հմմտ. Robert de Caix (1869–1970): un émissaire français au Levant dans l'entre-deux-geurres 2015, «Les Cahiers de l'Orient», N 3, 68–69)՝ մայիսի 21–23-ին, ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ, Անկարա կատարած ուղևորությունից վերադառնալու մասին: Տեղի Ազգային ժողովի նախագահ Մ. Քեմալի հետ ամսի 22–23-ին (հմմտ. Captain Mazen, Les négociations d'Angora (21–23 mai 1920), Service historique de la défence, Ministère des Armées, Vincennes, serie H (outre-mer), carton 4 H 58, dossier 2a Brémond 1929, 53) նրա համառ բանակցությունների շնորհիվ Ռ. դը Կեն ձեռք բերեց ամսի 29-ի լույս 30-ի կեսգիշերին Սիրիայի և Կիլիկիայի վրա հարձակումների 20-օրյա դադար: Քանի որ Սևրը պահպանում էր օսմանյան գերիշխանությունը Կիլիկիայի մեծ մասում (Redan 1921, IX), Միլլերանը իրավացի էր, երբ ասում էր, թե Քեմալը քննարկեց դը Կեի հետ նրանց համատեղ լուծման այն հետևանքները, որոնք սպասվում էին ֆրանսիացիներին: Դեֆրանսը Փարիզ էր ուղարկել զինադադարի նախագիծն ու նշել, թե հունիսի 2-ին Քիլիսի կայմակամ Մաժար Մյուֆիտ Կանսուն Կիլիկիայում գերագույն հանձնակատար, տարածաշրջանում ֆրանսիական զինուժի հրամանատար գեներալ Ա. Գուրոյին հաղորդել է քեմալականների ցանկությունը՝ նրա պետության հետ համապարփակ ու երկարատև պայմանագիր կնքել (Documents diplomatiques 1999, 100, նաև Güçlü 2001, 1090):

Խոսքը անջատ, երկկողմանի, Սևրի տեքստից դուրս ձևավորվելիք պայմանագրի մասին էր: Քանի որ Դեֆրանսն ու դը Կեն ձգտում էին խափանել մարտերն ու վստահ էին բրիտանացիների անհաղորդ մնալու մեջ, քանի որ նրանք ու Գուրոն անպտուղ էին համարում ֆրանս-թուրքական շփումը առանց Սևրի պայմանագրի զգալի մեղմացման, ու քանի որ Սևրը վնասաբեր էր Ֆրանսիայի համար Կիլիկիայի մասով, գերագույն հանձնակատարը զեկուցեց Փարիզին, թե Կ. Պոլսում հնարավոր էր կազմել չափավոր քեմալականների և նրանց հակառակորդների միավորյալ կառավարությունը (դահլիճը)՝ Ահմեդ Իզեթ փաշայի գլխավորությամբ: Նման դաշինքը կարող էր խոչընդոտել Քեմալի իշխանական ձգտումը, սակայն նրա ծրագիրը խափանելու համար պետք էր Օսմանյան կայսրությանը ներկայացնել Հաշտության մեղմ պայմանագիրը: Այնինչ 1920 թ. հունիսի 5-ին Դեֆրանսը բողոքում էր, թե մայիսի 11-ից հետո, երբ թուրքերից պահանջեցին ստորագրել եվրոպացիների համաձայնեցված տեքստը, մայրաքաղաքի բոլոր չափավոր քաղաքական անձինք անցան Սևրը մերժող քեմալականների ճամբար: Բացի դրանից, Կիլիկիայում Դաշնակիցների գլխավոր ղեկավար Էդուար Բրեմոնը նկատեց, որ, ի տարբերություն Սիրիայի, Կիլիկիայում չէր հաստատվել ֆրանսիական ուղիղ վարչություն, իսկ մայիս-հունիս ամիսներին այնտեղ ոստիկանությունը դասալքեցին 1200 թուրք և 1000 այլ մահմեդականներ՝ միայնակ թողելով 500 քրիստոնյա ժանդարմներին (Brémond 1976–1977, 351–352):

Մեջբերենք Դեֆրանսի հեռագիրը. «Պ-ն դը Կէի այստեղ մնալու ժամանակ պարզեցինք, որ միանգամայն համամիտ ենք այն առավելությունների առումով, որոնք պարունակում է ազգայնականների հետ համաձայնությունը, և ես արդեն վաղուց առաջարկել էի կազմել չափավոր ազգայնականների և հակաազգայնականների դաշինքը, որին հասնելու համար անհրաժեշտ էր ընդունելի պայմանագիր, սակայն Դեպարտամենտից հղած № 290–294 հեռագրերն ինձ տեղեկացրին, թե այն չափազանց հեռու հեռանկար էր: Այսօր թուրքերին պարտադրեցին շատ ավելի խիստ պայմանագիր, քան հնարավոր էր ենթադրել, ու, որպես Քիլիսի կայմակամի նշած հետևանք, բոլոր թուրքերը դարձան ազգայնական, իսկ մենք պ-ն դը Կեի հետ համակարծիք ենք, որ բանակցությունները բոլորովին անհնար են, եթե պայմանագիրը չկրի կարևոր փոփոխություններ» (Documents diplomatiques 1999, 100): Բացի դրանից, հույները սպառնացին ամբողջ պայմանագիրը կատարել այն ստորագրելուց էլ առաջ: Ի դեպ, նրանք ճիշտ էին: Միայն հույների ռազմական գործողությունների շնորհիվ է, որ Բ. Դռան պատվիրակությունը ստորագրեց միջազգային փաստաթղթի տակ:

Ինչ վերաբերում է զինադադարին, ապա մայիսի 28-ին դրա տեքստը հաստատեց Լևանտում տեղակայված 35-հազարանոց ֆրանսիական զորքի հրամանատար, անջատ հաշտության և քեմալականների հետ երկկողմանի դաշինքի կողմնակից գեներալ Անրի Գուրոն: 1919 թ. նոյեմբերի 29-ից ի վեր նա հորդորում էր լրջորեն վերաբերվել Քեմալին, իսկ 1920 թ. մայիսին զեկուցում էր Սևրը տապալելուն ուղղված, ողջ Արևմտյան Հայաստանով ծավալված պատերազմի մասին: Ու թեև մայիսի 23-ին մշակված զինադադարը տեխնիկական բնույթ ուներ, ծանոթանանք դրա բովանդակությանը.

«Ֆրանսիացիների հետ անցկացրած բանակցությունների շնորհիվ մեր զինվորական ուժերի և գեներալ Գուրոյի զորքերի միջև կնքվեց 20-օրյա զինադադար՝ հետևյալ հիմունքներով.

1. Առաջին տասը օրվա ընթացքում ֆրանսիական և մահմեդական բանտարկյալների, ռազմական թե քաղաքացիական, փոխանակում:

2. Ֆրանսիական զորքերի նահանջը մինչև Մերսին–Ադանա–Իսլահիե երկաթգիծը: Սսի, Պոզանթիի (ստորագրման պահին հայտնի էր, որ Սիսն ու Պոզանթին արդեն դատարկվեցին), Այնթապի, ինչպես նաև երկաթգծից հյուսիս ընկած գյուղերի դատարկում:

3. Հրամայում եմ թշնամական բոլոր գործողությունների դադարեցում մայիսի 30-ի կեսգիշերից սկսած: Սույն հրամանը կատարել անշեղորեն» (թուրքական հրամանատարությունը այս տեքստը փոխանցեց Բաղդադում, Արաբ-Փունարում և այլ վայրերում տեղակայված ֆրանսիական ջոկատների հրամանատարներին: Մանրամասն շարադրանքը տե՛ս Redan 1921, 101, ճշգրիտ ձևակերպումը՝ du Véou 1954, 219, զինադադարի տեքստը հայերեն՝ Սահակյան 1970, 86: Հմմտ. Moumdjian 1998, 131–132; Moumdjian 2008, 28: Զինադադարի մասին տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, հունիսի 4, 6, 1920, «Արմէնիա» շաբաթաթերթ, հունիսի 9, 23, 1920:

1920 թ. մայիսի 23-ի ֆրանս-քեմալական զինադադարի վերաճումը հաշտության անջատ պայմանագրի վերաբերյալ բանակցությունների

Ի պատասխան Դեֆրանսի մայիսյան հեռագրի՝ 1920 թ. հունիսի 9-ին Միլյերանն իր անվերապահ համաձայնությունն հայտնեց Գուրոյին և ռազմական նախարար Ա. Լեֆևրին ու կարգադրեց շարունակել բանակցությունները: Սա թույլ կտար «ազատել Կիլիկիայում գտնվող մեր զորքերը մշտական հարձակումներից» (Documents diplomatiques 1999, 113):

Այդ նույն օրերին, հունիսի 3-ին, վարչապետն ու Բերթելոն այցելեցին Սենատի արտաքին գործերի հանձնաժողով: Կառավարության ղեկավարը պատմեց, թե փետրվարի 10-ից ի վեր նա Գուրոյին կարգադրել է դիվանագիտական շփում սկսել Քեմալի հետ: Այնուհետև, մարտի 20-ի իր հուշագրով թույլ տվեց անընդհատ աճող ֆրանսիական զորքերը դուրս բերել Կիլիկիայից: Միլյերանը հստակ նշեց, որ Գուրոն իրականացնում էր նրա ու ռազմական նախարարի հաստատած քաղաքականությունը: Կիլիկիայում տեղակայված զորքը ստիպված կլիներ կռվել ու պաշտպանել հայերին: Այնինչ Սիրիայում կենտրոնացած բանակով հնարավոր էր պարզապես վախեցնել թշնամուն, առանց ուժի կիրառման: Այո՛, զինադադարն ապահովեց գումարտակների անվնաս դուրսբերումը և ուրիշ ոչինչ: Ֆրանսիան ինքնակամ ու խոստացած ժամանակից շատ ավելի շուտ լքել էր Կիլիկիան՝ Թուրքիայում տնտեսական լավ միջավայր ստանալու նպատակով: Այժմ ազգայնականների հետ մերձեցումն ընկալվում էր որպես ցանկալի հեռանկար (Sénate de la France 3.06.1920, 22, 25–28, 31–34, 39: Այդ լսումների և Միլյերանի՝ Սևրի դաշնագիրը մեղմացնելու ճիգերի մասին հմմտ. Туманян 2012, 402):

Նկատի ունենալով նաև Քեմալի հետաքրքրությունը շփումը շարունակելու

առումով՝ կառավարությունը որոշեց նոր դիվանագետ ուղարկել Անգորա՝ պատշաճ հրահանգներով: Այդ նոր անձը Կ. Պոլսից Գուրոյի մոտ մեկնած հետախուզության սպա, մայոր Ռոժե Անրի Լաբոնն էր: Նա Ֆրանսիայի համաձայնությունն էր տանում Անգորա «Կիլիկիայում օսմանյան գերիշխանությունը պահպանելու» հարցում (Documents diplomatiques 1999, 114): Ըստ Միլյերանի, նրա կառավարությունը մտադիր չէր միայնակ կրել միջազգային մեծ պայմանագրի կատարման ու թուրքական դժգոհության ամբողջ բեռը: Առավել ևս այն պարագայում, որ Բրիտանիան ամեն կերպ աջակցում էր արաբների անկախությանը՝ աշխատելով նվազեցնել Ֆրանսիական մանդատի ժամկետն ու լիազորությունները:

Իրականում, 1920 թ. փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածում 20-ից 35 հազարի հասցրած Գուրոյի զինուժը Կիլիկիայից Սիրիա տեղափոխելուց բացի, Լաբոնը Քեմալին տալիք չուներ: Մայորը պետք է ցույց տար, որ ֆրանսիացիները ձգտում են առնչվել ոչ թե Բ. Դռան, այլ Անգորայի հետ, և արժանանար քեմալականների համանման ցանկությանը: Նրանից պահանջվում էր ժամանակ շահել ու հարկ եղած դեպքում մեկնել Փարիզ, ինչպես նաև հասկանալ՝ Անգորան սատար կկանգնի՞ Իզեթ փաշային, եթե նրան մեծ վեզիր դարձնեն: Բացի այդ, մայորը պետք է սպաներին անհապաղ ուղարկեր Արևմտյան Հայաստան՝ այնտեղի իրավիճակը գնահատելու համար: Որպես լրացում՝ Միլյերանը հարցումներ հղեց Թիֆլիս՝ Կովկասի գերագույն հանձնակատար Դ. դը Մարտելին և նրա ռազմական առաքելության պետ, փոխգնդապետ Է.–Օ. Կորբեյին: Վարչապետն ուզում էր իմանալ՝ որքանո՞վ էր Հայաստանը մարտունակ՝ Սևրի խիստ պայմանները պահպանելու համար: Կոմս դը Մարտելը արձագանքեց հունիսի 13-ին Կ. Պոլիս հղած հեռագրով, որն ամսի 23-ին ուղարկվեց Փարիզ: Դրանից առաջ Դեֆրանսը մակագրեց, որ Հաշտության առկա միջազգային պայմանագիրն անընդունելի է ինչպես Բ. Դռան, այնպես էր Անգորայի համար (Documents diplomatiques 1999, 170): 1920 թ. հունիսի 17-ին դը Մարտելը լրացրեց իր հաշվետվությունը Փարիզի՝ ԱԳՆ-ի համար կազմված հեռագրում: Նա իրազեկեց իր գերատեսչությանն Մոսկվայի խորհրդային կառավարության Հայաստանի Հանրապետության հետ կապերը խզելու և Քեմալի կողմն անցնելու ցանկության մասին: Հետևաբար, Երևանում «չէին թաքցնում իրավիճակի բարդությունն ու զգուշանում էին վատթարից»: Ֆրանսիացին վարչապետ Ա. Օհանջանյանից պահանջում էր երկու ճակատով կռիվ մղել, հատկապես Սևրի նախօրյակին: Այլապես «Դաշնակիցները կարող են բոլորովին կորցնել հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ» (երկու մեջբերումները՝ Documents diplomatiques 1999, 153):

Իր ղեկավարի նման Կորբեյը ևս կարծում էր, որ Վրաստանն ու Հայաստանը պատրաստ են մարտի և կենսունակ՝ Ֆրանսիայի սատարելու դեպքում: Այդ գնահատականը ռազմական նախարար Լեֆևրը ներկայացրեց երկրի նախագահ Պ. Դեշանելին, Միլյերանին, Գերագույն ռազմական խորհրդի նախագահ, մարշալ Ֆ. Ֆոշին, գնդապետ Պոլ Լակոմբ դը լա Տուրին:

Հունիսի 23-ին Դեֆրանսը Միլյերանին գրեց տեղական իշխանությունների՝ քեմալականների հետ մերձեցման մասին: Դիվանագետը վստահեցնում էր, թե վերջինների ձևակերպած ուղղումները լիովին ընդունելի են, որ Ռեշիդ բեյը (ան-

վանը առավել համապատասխանում է 1918–1919 և 1920 թթ. օսմանյան արտգործնախարար Մեհմեդ Ռեշիդ փաշան) վայելում է Անգորայի վստահությունը և առաջարկում է միավորվել Անգլիայի դեմ: Բեյի ասելով՝ եթե Դաշնակիցներն ընդունեն ուղղումները, որոնք օսմանյան պատվիրակությունը կներկայացնի ամսի 25-ին, ապա Սևրը ստորագրելու են անմիջապես: Դեֆրանսը եռանդով պաշտպանում էր ֆրանս-թուրքական մերձեցումը՝ խոստանալով Դամադ Ֆերիդի փոխարեն Ահմեդ Թևֆիկ փաշային մեծ վեզիր կարգել: Նրա հովանավորյալ Ռեշիդ բեյը «պաշտոնապես վստահեցրեց, թե քեմալականների հետ համաձայնության գալու համար ինքը պայման դրեց անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները, առաջին հերթին՝ մեր դեմ ուղղված՝ Կիլիկիայում և ամենուր, իսկ հետո ամբողջությամբ վերցրած՝ Դաշնակիցների դեմ» (Documents diplomatiques 1999, 172):

Դեֆրանսը զգուշացնում էր, որ հակառակ դեպքում՝ 1) պայմանագիրը չի ստորագրվի ամբողջ երկրի անունից, և այն պետք է ուժով թելադրվի քեմալականներին, 2) ֆրանսիական բանակի և նավատորմի մի շարք հրամանատարներ գերադասում են համաձայնության հասնել Անգորայի և ոչ թե Բ. Դռան հետ, բայց չեն կարող անտեսել պաշտոնական կառավարությանն ու սուլթանին: Ուրեմն, ավելի լավ է սկզբից համերաշխել ազգայնականների հետ, հետո գնալ օսմանների մոտ: 3) Եթե պայմանագիրը չեն փոխի ու դրա պատճառով չեն ստորագրի, Թուրքիայի դեմ առաջ կգա նոր պատերազմ: 4) «Գուցե մեզ հաջողվի Կիլիկիայում կանգնեցնել ազգայնականների հարձակումները, թեկուզ մինչ այն օրը, երբ պարզ կդառնա՝ մեզ խաղաղությո՞ւն է սպասում, թե՞ պատերազմ:

«Թեև ավարտելով պետք է նկատեմ, – նշում է հեղինակը, – որ զինադադարը կատարելիս ու հրամանատար Լաբոնին ընդունելու ժամանակ Մուստաֆա Քեմալի դրսևորված անհաշտությունը, անբարեխղճությունն ու գոռոզությունը …որոշակի կասկածներ են հարուցում Ռեշիդ բեյի փորձերի հաջողության նկատմամբ» (Documents diplomatiques 1999, 172): 1920 թ. հունիսի 15-ին Դեֆրանսն արդեն բողոքում էր գեներալ Գուրոյի՝ քեմալականների բանակցություններում ստեղծված ծանր իրավիճակի առթիվ ու պնդում, որ պետք է Սևրի պայմանագիրը վերանայել: Այդ վերանայումը Քեմալի գլխավոր պահանջներից էր Գուրոյի պատասխանատվության գոտում՝ Կիլիկիայում և Սիրիայում հաստատվելիք խաղաղության և Թուրքիայով մեկ տնտեսական գործունեություն ունենալու դիմաց:

Կիլիկիայի բնակչությանն ու գաղթականներին սպառնացող վտանգի գնահատականը Հայ ազգային II համագումարում ու հայկական մամուլում

Մեր թեմային առնչվող կարևոր տվյալներ են պարունակում այդ նույն փուլում Փարիզում գումարված Հայ ազգային II համագումարի արձանագրությունները: Այստեղ մայիսյան զինադադարը քննարկվեց 1920 թ. հունիսի 12-ին՝ «Լը թամ»-ում տպագրվելուց առաջ, քանի որ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին իրազեկ էին պահում Ֆրանսիայի Սենատի արտաքին գործոց հանձնաժողովի անդամ Վիկտոր Բերարն ու Պատգամավորների պալատի նախագահ Ռաուլ Պերեն: Մայիսի 26-ին իսկ Գ. Նորատունկյանը նշեց, որ Հաշտու-

թյունը Թուրքիային է թողել Կիլիկիայի մեծ մասը: Հունիսի 3-ին Իտալիայի ներկայացուցիչ Ն. Տեր-Ստեփանյանը կիլիկյան աղետ է անվանել ստեղծված իրավիճակը, քանի որ այդ երկրամասի ժողովուրդը «բնաջնջման սպառնալիքի մը ենթարկված է» (Վիրաբյան և այլք 2004, 580: Համագումարի մասին՝ « Հայաստան » շաբաթաթերթ, մայիսի 8, 1920, 269–270: Նրա կարծիքով, այլևս անհնար էր հույս դնել Դաշնակիցների վրա. դրա մասին հարկավոր է հաղորդել Ադանայի ազգային խորհրդի նախագահ, Հայ միացյալ պատվիրակության լիազոր Մ. Տամատյանին (նրա մասին՝ Տեփոյան 1956, 210, 219–221, 255, Hovannisian, Payaslian 2008, 483, Սարգսյան 2020, 87: Դիմումը հայ ժողովրդին «Կիլիկիայի՝ թուրքական պետությունից անկախանալու և Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավարություն շնորհելու մասին» ամբողջությամբ հմմտ. Pattie 2018, 226–227): Գուցե նրա համար հնարավոր կլիներ թուրքերի հետ որոշ համաձայնության գալ:

Հունիսի 8-ին պատգամավորներ Ա. Չոպանյանն ու պրոֆ. Կ. Թումայանը հիշեցրին 1919 թ. ապրիլ-մայիսյան զարգացումների մասին, երբ Կլեմանսոն առաջին անգամ Կիլիկիան զիջեց ԱՄՆ-ին՝ այդ երկրի հայկական մանդատը ստանձնելու դիմաց: Չոպանյանը ճշտեց, որ ԱՄՆ-ի պետքարտուղար Ռ. Լանսինգին 1919 թ. ապրիլի 11-ին ուղղված հուշագրում Ազգային պատվիրակությունը պահանջեց Կիլիկիայի հայությանը ազատել «թուրք տիրապետութենէն և Ազգերու Ընկերակցության անունով դնել պետության մը մանդատի տակ, ինքնավար ռեժիմով մը» (Վիրաբյան և այլք 2004, 612, Махмурян 2012, 80, 119, նաև Zeidner 1991, 254, 279): Այսպես, Դաշնակիցների 1919 թ. մարտի 20-ին հայտարարած Կիլիկիայի անկախությունից (ու հատկապես 1919 թ. մայիսի 21-ից) անցան ինքնավարության՝ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կամ Անգլիայի ղեկավարությամբ: Իսկ 1920 թ. մայիսի 11-ից սկսած, ապա հունիսին, խոսքը արդեն օսմանյան գերիշխանության մասին էր: Չոպանյանը հիշեցրեց, որ 1920 թ. փետրվարի 10-ի Մարաշի կոտորածից հետո Անտանտի գերագույն խորհուրդը երկու նիստ անցկացրեց Կիլիկիայի հարցով ու որոշեց թուրքերին պատժել՝ գրավելով բոլորովին այլ ծայրում գտնվող Կ. Պոլիսը: Թեև Ազգային պատվիրակությունը երբևիցե չէր առաջարկել ռազմագրավել Նեղուցներն ու «պահանջած էր պարզապես խիստ միջոցներ ձեռք առնել՝ Կիլիկիո մեջ հայոց կյանքը ապահովելու համար» (Վիրաբյան և այլք 2004, 613):

Հունիսի 11-ին Եգիպտոսի պատգամավոր Վ. Թեքեյանը կրկնեց այդ թեզը՝ մտավախություն հայտնելով, թե Կիլիկիան ավելի խիստ հաշտության պայմանագրի առիթ կտա, սակայն դրա բոլոր պատիժներն սպասարկելու են միայն մեծ տերությունների շահերը, իսկ հայերի վիճակը չի թեթևանա: Ու թեև այդ երկիրը Միջերկրականի ծովին է գտնվում, սակայն անգլիական, ֆրանսիական կամ ամերիկյան նավերը չեն եկել այն պաշտպանելու, այլ գնացել են գրավելու Բոսֆորը: Հունիսի 11-ին պատգամավորները մռայլ էին, որովհետև փարիզյան թերթերը տպել էին Միլլերանի հայտարարությունը, թե Ֆրանսիայի բանակը դատարկելու է Կիլիկիան, մինչև Սևրի պայմանագրի կնքումը և անգամ կատարումը զորքը պահպանելու մասին նրա բոլոր խոստումներին հակառակ: Վարչապետը կարող էր դժգոհել Մեծ Բրիտանիայից, չէ՞ որ Սևրը չէր նախատեսում Ֆրան-

սիայի մանդատային որևէ արտոնություն Կիլիկիայում: Բացի դրանից, Ֆրանսիայի ղեկավարությունը սկսեց իրականացնել հաշտության դրույթները տակավին դրա կնքումից առաջ, ինչը հայերին զրկեց գործելու համար անհրաժեշտ ժամանակից: Վաղաժամ կատարումը միակ գործոնն էր, որ նա առաջարկեց քեմալականներին՝ զինադադարի դիմաց: Հետո զինադադարն ինքը խթան դարձավ անջատ, երկկողմ պայմանագրի՝ մեղմացրած Սևրի դիմաց: Անգլիայից ընտրված Գ. Ֆնտքյանը, Ա. Չոպանյանն ու Վ. Թեքեյանը միաբան էին իրենց ընկալումներով, թե «ֆրանսիական կառավարության այս որոշումը կը ստեղծէ նոր կացություն մը, չափազանց վրդովիչ ու վտանգավոր» (Վիրաբյան և այլք 2004, 618: 10. և 16.06 1920-ին՝ Պատգամավորների պալատի արտաքին գործերի և ռազմական գործերի հանձնաժողովներում, պետական գործիչներ Ա. Տարդիեն, Ա. Բրիանը, ռազմական նախարար Ա. Լեֆևրը և Ա. Միլլերանը դժգոհում էին քաղաքական այդ իրավիճակից, որի մեղքը Միլլերանն ու Լեֆևրը ձգտում էին բարդել նախկին վարչապետ Ժ. Կլեմանսոյի վրա: Հմմտ. Ֆրանսայի քաղաքականութիւնը Արեւելքի մէջ, «Արմէնիա», հունիսի 16, 1920, 2–3, հունիսի 30, 1920, 3):

Այժմ, – ասում էր Թեքեյանը, – հարկ կլինի սոսկ մեր ուժերի վրա հիմնվենք, իսկ Կիլիկիայում ուժեր կան: Պետք է միայն հայթայթել զենքը, ռազմամթերքն ու դրամը՝ դրանք գնելու համար: Երբ Կիլիկիայի պատգամավոր, Ադանայում հայտնի փաստաբան Զ. Պզտիկյանը հարց տվեց տեղական ինքնավարության հնարավորության մասին, Չոպանյանը կրկնեց, որ զորքերի արագ ու վաղաժամ քաշվելը ստեղծում էր «կացություն մը, որ կրնա աղետաբեր դառնա»: Այդ գնահատականներին գումարվեց Անգլիայի պատգամավոր Տիրան Տեովլեթյանի առաջարկը՝ հայտնել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին, «թե *Ֆրանսիան գաղտնի դաշնագրություն կը կնքէ թուրքերու հետ*»: Ն. Տեր-Ստեփանյանը ավարտեց այդ միտքը՝ պահանջելով «Ֆրանսիայի ղեկավար շրջանակներուն մեջ տիրող ուղղությունը բուն իսկ աղբյուրներից իմանալ» (երեք մեջբերումները՝ Վիրաբյան և այլք 2004, 620): Չոպանյանը արձագանքեց, թե Պողոս Նուբարը խնդրեց Ռ. Պերեին այցելել Միլլերանին ու անմիջաբար պարզել դրությունը: Այնուհետև Պողոս Նուբարն ընթերցեց Զ. Եսայանի (4.03. – 10.06.1920 թ. Կիլիկիայում Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչն էր, Հայկական լեգեոնի երեսնապետ (սերժանտ) Ռուբեն Հերյանը նրա տեղակալն էր, Զատիկ Խանզատյանը՝ Ազգային պատվիրակության տեխնիկական խորհրդական: Պողոս Նուբարին հղած զեկուցագրում Եսայանը հիշատակեց զինադադարի ու հայերի՝ դրանից ստացած ծանր տպավորության մասին: Ավելացնենք, որ մինչև 1920 թ. դեկտեմբերը Հերյանը հավաքում ու Եգիպտոս էր փոխադրում որբերին, այնուհետև ինքը մեկնեց Մարսել – Փարիզ – ԱՄՆ: Հմմտ. Զապել Եսայան 1985, 231, «Արմէնիա», հունիսի 30, 1920, 3, դեկտեմբերի 8, 1920, 3) հեռագիրը՝ հունիսի 10-ին հեղինակի, Ռ. Հերյանի և Զ. Խանզատյանի՝ Կիլիկիայից Կ. Պոլիս մեկնելու մասին: Եռանդամ մասնավոր պատվիրակությունն ուզում էր քննարկել այնտեղ երկրամասի հարցը: Դոկտ. Ա. Բարսեղյանը ճշգրտել էր, որ առկա «Քոմիսերնէրեն կարելի չէ բան մը հուսալ, ...[իսկ] Պոլսո այժմու թուրք կառավարությունը որևէ ազդեցություն չունի Կիլիկիո վրա» (Վիրաբյան և այլք 2004, 621): Այստեղ ամեն

բան քեմալականներն են որոշում: Պողոս Նուբարը ամփոփելով նկատեց. «Կիլիկիո կացութիւնը հուսահատական է: Ո՛չ մեկ լուր կա Հաճընէն» (Վիրաբյան և այլք 2004, 622), թուրքերը Այնթապի մեջ կացության տերն են, ֆրանսիացիք «պարպում են»: Ազգային պատվիրակության ղեկավարը հույս չեր կապում անգլիացիների հետ, իսկ «Փրանսա ու Իտալիա թուրքերուն կողմ են, *կը բանակցին քեմալիստներու հետ*» (Վիրաբյան և այլք 2004, 623):

Համագումարը շարունակեց քննարկումը՝ ելնելով ֆրանսիայի Պատգամավորների պալատի Արտաքին գործոց հանձնաժողովի մտադրություններին վերաբերող նոր տվյալներից: Հունիսի 12-ի նիստում Գ. Նորատունկյանը հաղորդեց. «Իմացվեցավ, որ 20 օրվան զինադադար մը կնքվեր է թուրքերուն հետ, իբր հետևանք այն բանակցությանց, զորս ֆրանսիացիք կատարած էին Մուստաֆա Քեմալ փաշայի հետ: Այս և նմանօրինակ լուրերը անշուշտ տարածված են նաև Կիլիկիա, և մեծ վրդովման մատնած են տեղվույն թէ՛ հայ և թէ՛ առհասարակ բոլոր քրիստոնյա ժողովուրդները»: Այնուհետև ընթերցվեց Ադանայից առաքված հեռագիրը՝ քրիստոնյա բոլոր համայնքների՝ 1920 թ. մայիսի 15-ին ընդունած որոշումով հանդերձ: Բոլոր համայնքների համալիր ժողովը հիշեցնում էր Դաշնակիցներին, թե մարտի 31-ին նրանք արտահայտվել են Կիլիկիայում թուրքական գերիշխանությունը պահպանելու օգտին: Նշելով 1895, 1909 թթ. ջարդերը, տեղահանությունները և անլուր վայրագությունները, որոնք իրագործվեցին աշխարհամարտի ընթացքում, և «մասնավորաբար արդի դժվարին կացությունը, որուն մեջ քեմալիստ ավազակները տեղական և կեդրոնական թուրք իշխանությանց բացահայտ մեղսակցությամբ... 20 հազ. քրիստոնյաներին ջարդեցին Մարաշի և շրջականերուն մեջ, և կշարունակեն հուրի և սուրի մատնել ամբողջ երկիրը» (1920 թ. մայիսի 15-ի հուշագիրը հմմտ. Վիրաբյան և այլք 2004, 628–689, երկու մեջբերումները՝ էջ 628: Հմմտ. նաև Pattie 2018, 162–164, 169–180, 230: Հուշագրի մասին՝ «Հայրենիք» օրաթերթ, մայիսի 22, 1920, 2), համաքրիստոնեական ժողովը գրեց, որ թուրք իշխանության աղետալի պահպանումը կոտորած կբերի երկրամասի 275 հազ. քրիստոնյաներին:

Ուստի Ադանայի ժողովը բողոքում էր Դաշնակից ու միացյալ տերություններին և Հռոմի պապին, ողջ աշխարհի քաղաքակիրթ հանրությանը՝ պահանջելով ռազմական միջամտություն՝ թուրքերի բարբարոսությունը, քաղաքների պաշարումը վերացնելու և քրիստոնյա արյան հեղումը դադարեցնելու համար: Ժողովը պահանջում էր նաև «ջնջել թուրքական վարչության և գերիշխանության ամեն հետք Կիլիկիո մեջ և քրիստոնյա վարչություն հաստատել ...մեծ պետության մը հոգատարության տակ»: Առավել ցանկալի էր Ֆրանսիայի մանդատը, նրա՝ քրիստոնյաների պաշտպանությունը ապահովելու ամուր երաշխիքով: Այլապես տեղի բնակչությունը կնախընտրի խմբովին հեռանալ Կիլիկիայից, «քան ենթարկվել ռեժիմի մը, որուն տակ մեր կյանքը, ինչքը և պատիվը մշտապես ենթակա պիտի մնան թուրքերու քմահաճույքին, ինչ որ ըլլան հաստատված քոնթրոլը ու թուղթի վրա դրված ապահովությունները» (երկու մեջբերումները՝ Վիրաբյան և այլք 2004, 629): Պաշտպանության բացակայության դեպքում ժողովը խնդրեց անվտանգ վայր տեղափոխել 275-հազարանոց բնակչությանը: Հե-

ռագիրը ստորագրեցին Ադանայի հայոց առաջնորդ Գևորգ վարդապետ Ասլանյանը, Ամբողջ Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչ Մ. Տամատյանը, բոլոր հոգևոր համայնքների ղեկավարները, դրա հավաստիությունը հաստատեցին Մերձավոր Արևելքում Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) հիմնադրամի վարիչ Վիլյամ Ա. Քենեդին (համագումարի արձանագրություններում, Armenian Girls Tell of Massacres, "New York Times", New York, հունիսի 1, 1919 նոթերում և Jinks 2018, 99 հոդվածում հիշատակվում է բրիտանացի բժիշկ ու քարոզիչ Վիլյամ Ա. Քենեդին: Նա Ադանա էր ժամանել 1920 թ. փետրվարին և ծառայում էր Լորդ քաղաքագլխի հիմնադրամում: Մի շարք հեղինակներ սխալմամբ նրան անվանում են Էդվարդ Քենեդի՝ Gatrell, Laycock 2004, 188, White 2017, 85: Հիմնադրամի մասին՝ Ադամյան 2018, 315–324) և նրա օգնական, Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույցի Ադանայի մասնաճյուղի տնօրեն Վիլյամ Ս. Դոդդը (9.04.1920-ին Վ. Դոդդը հեռագրեց Կ. Պոլիս՝ ԱՄՆ-ի գերագույն հանձնակատար, փոխծովակալ Մ.Լ. Բրիստոլին. «Հայ պատմության այն գլուխը, որ այժմ իրագործվում է Կիլիկիայում, մեծ տեղահանության չափ ողբերգական է ու թշվառ: …Նրանք հայտնաբերեցին, որ իրենց դաշնակիցները իրենց դավաճանեցին, իրենց զավթիչներ-թշնամիները իրենց կոտորում են ու մինչև վերջին ծեղն են թալանել՝ 1915 թվականից ավելի վատ: Թուրքերը պատերազմ են մղում ֆրանսիացիների դեմ և այն օգտագործում որպես հայերի ոչնչացման արդարացում: Ֆրանսիացիք առևտուր են անում թուրքերի հետ… և զոհաբերում հայերին»: Հմմտ. Morris, Ze'evi 2019, 316):

Անդրադառնալով այդ գրությանը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն հայտնեց, թե ինքը ֆրանսիական կառավարությանը խոստացավ հավաքագրել կռվելու պատրաստ 8–10 հազ. հայ կամավորների: Ուստի Փարիզին չգրգռելու համար նա այլևս չէր դիմում անգլիացիներին: Այդ միջոցին Գ. Նորատունկյանը մտահոգ էր, որ հայերին հայտնի էր ֆրանս-թուրքական համաձայնագիրը կնքելու փաստը միայն, բայց նրանք բոլորովին անտեղյակ էին դրա բովանդակությանը: Չոպանյանն արձագանքեց, թե նոր է խոսել Ֆրանսիայի ԱԳՆ-ի Ասիական վարչության բաժնի տեղակալ Պոլ Բերժետոնի հետ: Վերջինս ամեն կերպ ժխտում էր բանակի տարատեղումը և անցքը որակում որպես սահմանափակ, զուտ ռազմական զինադադար: Այնուամենայնիվ, օսմանյան նախկին նախարարը վարանում էր: Քանի որ Միլյերանը «Ռոբեր դը Կեի միջոցով Մուսթաֆա Քեմալի հետ համաձայնություն կը կնքէ» (Վիրաբյան և այլք 2004, 632), գուցե հայերն էլ շփման եզրեր գտնեն ազգայնականների հետ: Հակառակ դեպքում, եթե ֆրանսիացիները փախչեն, հայերի արագ ու զանգվածային տեղափոխումը մեծ կորուստներ կբերի:

1920 թ. մայիսի 11-ից հետո, լրացրեց Չոպանյանը, երբ խորհուրդ տվեցին անմիջապես Ֆրանսիայի հետ լեզու գտնել, Դաշնակիցներից ինքնավար Կիլիկիա պահանջեցինք՝ ֆրանսիական բանակի պաշտպանության ներքո և թուրք տիրապետությունից ազատ: Նաև իմաց ենք տվել Ադանային. «Շատ հզոր պատճառներ կան, որ մեզի վախենալ կուտան, թե թուրք վեհապետությունը և նույնիսկ թուրք վարչությունը պիտի պահպանվեն Կիլիկիո» վրա (Վիրաբյան և այլք

2004, 633–634): Ֆրանսիական խորհրդարանում ոմանք առաջարկում են հրաժարվել մեր երկրից ու Սիրիայից՝ հատուցում պահանջելով նրանց դիմաց: Ուստի Խորհրդարանում լռում են հայկական ինքնավարության մասին, իսկ ԱԳՆ-ում խոսվում է միայն բոլոր ազգերի իրավահավասարության մասին: Նշանակում է՝ պետք է մինչև վերջ պահանջենք ազատություն թուրքերից ու թեկուզ Ազգերի լիգայի հոգատարությունը: Ամփոփելով, համագումարը որոշեց շարունակ դիմել հաղթած տերություններին և անպաշտոն շփումներ հաստատել քեմալականների հետ:

Ընդ որում, հունիսի 11–12-ից հետո էլ պատգամավորները չեն արել երկու կարևոր եզրահանգումներ՝ Սևրի միջոցով Անգլիան դուրս է մղել և իրավազրկել Ֆրանսիային Կիլիկիայում: Ավելին, Բրիտանիան ամեն կերպ կրճատում էր սիրիական մանդատի ժամկետը՝ արագացնելով ֆրանսիական բանակի դուրսբերումը այնտեղից: Ազգային II համագումարն ընկալում էր, որ Կիլիկիայի կորուստը փակում էր եվրոպամետ Արևմտյան Հայաստանի ծրագիրը, քանի որ նրա երեք նահանգները միացնում էին Հայաստանի Հանրապետությանը: Սա նշանակում էր, որ Արևմուտքը լքել է Հայկական հարցը՝ հայերին թողնելով Թուրքիայի ու Ռուսաստանի ազդեցության ներքո: Իսկ համագումարը չկարողացավ մշակել իրադրությանը հակազդող ու գործնական պատասխան: Նա չորոշեց՝ արդյոք հարկավո՞ր էր կիլիկիահայությանը տեղափոխել հյուսիս կամ հարավ, թեև գիտակցում էր, որ քեմալականները ձգտելու են նրան տարանջատել աշխարհագրորեն իրարից հեռու փոքրաթիվ զանգվածների և ինչպիսի բռնությամբ են իրագործելու այդ (հմմտ. բժիշկ Ա. Բարսեղյանի ելույթը 12.06.1920-ին՝ Վիրաբյան և այլք 2004, 637–638): Համագումարը այդպես էլ չճշտեց՝ արդյոք Ազգային պատվիրակության՝ Սևրի դաշնագիրը ստորագրելու փաստը չի՞ վկայի Միջերկրականից, Արևմուտքի հետ համագործակցելուց և Արևմտահայ հարցից՝ որպես դիվանագիտության ուրույն խնդրից նրա հրաժարվելու մասին: Համագումարի անդամները շարունակեցին իրենց նախկին պահվածքը, թեև քաջ գիտակցում էին, որ այն հեռանկար չուներ:

Ավելացնենք, որ տեղական մամուլը՝ ի դեմս «Արմէնիա» շաբաթաթերթի, իրավիճակը մեղմացնելով հանդերձ, խոստովանեց՝ ֆրանսիական զորքերը Ադանայի տաճկական թաղերից տեղափոխվել էին «հայ գաղթականներու քէմբերուն (ճամբարների) մէջ որոնք քաղաքին եզերք են: Կըսուի թե տաճկական թաղերը ռմբակոծելու և կրակի տալու պատրաստութիւններ են ատոնք եթէ Տաճիկներու կողմէն շարժումներ պատահին:

Հաճընէն լուր չկայ: Սիսէն լուր չկայ: Պօզանթիէն լուր չկայ: Նոյնպէս Մարաշէն և Այնթապէն: Սակայն գիտենք որ Հաճընն, Սիս, Պօզանթի, Այնթապ կը դիմադրեն:

Ուրֆայի ֆրանսական զօրքը, առանց ուտելիքի մնացած լինելով, համաձայնած էր Թիւրքերուն հետ որ ազատ կերպով քաղաքէն ելնէ: Քաղաքէն 4.5 հազարամէդր հեռուն, դաւադրաբար կը շրջապատուի խաբեբայ թիւրքերէն և մէկ մասը կը ջարդուի, մէկ մասն ալ իբրև գերի կը տարուի քաղաք ուր ֆրանսացի 9 սպայ ԿԸ ԿԱԽԵՆ» («Արմէնիա», հունիսի 9, 1920, 2): Հունիսի 23-ին էլ «Արմէ-

նիան» հրատարակեց ամսի 1-ին Ադանայից ստացած նամակը. – «Ներկայ տագնապալի կացութիւնը որբերուն Կիլիկիա մնալու կամ ապահով տեղ մը փոխադրուելու հարցը դրած է: Արդէն Հաճընն գտնուող 600 որբերը հոն մնացած են պաշարուած քաղաքին մէջ որմէ լուր չկայ երկու ամիսէ ի վեր: Հարունիէի նախկին գերմանական որբանոցը որ Ամերիկեան Մերձաւոր Արևելքի Գօմիթէի հոգածութեան յանձնուած էր, ասկէ մէկ ամիս առաջ պարպուեցաւ կռիւի միջոցին իսկ և որբերը բերուեցան Ատանա ուր են այժմ: Ատանայի որբանոցի 1000 որբերէն 750ը փոխադրուեցան Մէրսինի որպէս զի հարկ եղած պարագային դիւրութեամբ նաւ դրուին:

Տիկին Զապէլ Եսայեան Պէյրութէն վերադարձաւ ուր գացած էր որբերու ապահով փոխադրութեան միջոցները գործնականապէս պատրաստել: Լօրտ Մայոր'ս ֆօնտի ներկայացուցիչ Տօք. Քէննէտի որբերը Կիպրոս փոխադրելու առաջարկ ըրած է, բայց այդ մասին ֆրանսական և անգլիական կառավարութիւններու միջև համաձայնութիւն մը կայացած չերևար: Առ աժմ, եթէ անմիջական կերպով հարկ ըլլայ, որբերը պիտի փոխադրուին Սիրիա: Կը յուսացուի սակայն որ ոչ այստեղ, ոչ այնտեղ փոխադրելու պէտք պիտի ըլլայ, այլ կարելի պիտի ըլլայ զանոնք պահել Կիլիկիաի մէջ» («Արմէնիա», հունիսի 23, 1920, 1: Հմմտ. «Հայաստան», մայիսի 8, 1920, 275):

Ֆրանսիական քաղաքականությունը Սևրի պայմանագրի առնչությամբ

Դը Մարտելից ու Միլլերանից սկսած՝ Ֆրանսիայում պարզ հասկանում էին, որ Սևրը հղի էր պատերազմով: Ուստի, ի դեմս ԱԳՆ-ի և Դեֆրանսի, նրանք սկսեցին բանակցել այն մեղմացնելու համար՝ նախօրոք հանձնելով տարածաշրջանը քեմալականներին: Միաժամանակ, վարչապետն աշխատում էր գնահատել նրանց հարձակման առավել հավանական ուղղությունը, հարձակման, որ պետք է նախաձեռնեին շփման ամենից թույլ վայրում: Հետևաբար, նա կարգադրեց գործակալներ ուղարկել ՀՀ-ին միացվող նահանգներ և զեկուցել Երևանի մարտունակության մասին: 1920 թ. ապրիլից ի վեր Կովկասում նրա գերագույն հանձնակատար դը Մարտելը շտապ խնդրում էր ուղարկել ֆրանսիական զենք ու հրահանգիչ սպաներ Հայաստանի Հանրապետության համար, այնտեղ «թուրքերին դիմակայելու ունակ ռազմական ստորաբաժանումներ կազմակերպելու, եթե նրանք աշխատեն խույս տալ թուրքական Հայաստանի տարածքին վերաբերող պայմանագրի կատարումից» (Documents diplomatiques 1997, 514. Ռազմական փորձագետը նշեց, որ արկղեր կարելի էր հանձնել անհատույց, իսկ զենքն ու հանդերձանքը հարկավոր էր ապահովել ապրանքափոխանակությամբ): Մայիսի 11-ին Միլլերանը հայտնեց իր կառավարության համաձայնությունը՝ «օգնել [Երևանին ու Վրաստանին] պաշտպանվելու թուրքերի և բոլշևիկների հարձակումից» (Documents diplomatiques 1997, 626):

1920 թ. հուլիսի 2-ին ԱԳՆ-ն տեղյակ պահեց դը Մարտելին, որ Ֆրանսիան Հայաստանին զենք կտա՝ նրան հետաքրքրող ապրանքափոխանակությամբ և դրա արժեքը անմիջապես վճարելու դեպքում: Ուստի Կորբեյին ուղարկեցին տեղում աշխատող ֆրանսիական ձեռնարկությունների ներկայացուցիչների մի

ամբողջ ցուցակ (Documents diplomatiques 1999, 217–218): Միլլերանն էլ ռազմածովային նախարար Ա. Լանդրիին հրահանգեց կասեցնել անգլիացիների արատավոր վարմունքն ու հրաման արձակել Միջերկրականում ֆրանսիական նավատորմի ղեկավար, փոխծովակալ Ֆ. դը Բոնին, որպեսզի նա իսկույն ևեթ ընդհատի Սև ծովի վրայով իրականացվող քեմալա-բոլշևիկյան առևտուրը (Documents diplomatiques 1999, 219. Արդեն 1920 թ. մարտի վերջից դը Մարտելը ահազանգում էր քեմալականների տագնապալի քաղաքական խարդավանքների մասին Կովկասում, Documents diplomatiques 1997, 435):

Եզրակացություններ

1919 թ. դեկտեմբերից, երբ հայտարարվեց Ֆրանսիային Կիլիկիայի մանդատից զրկվելու մասին, վարչապետներ Ժ. Կլեմանսոն ու Ա. Միլլերանը արմատապես փոխեցին իրենց հարաբերությունները Անգորայի իշխանության հետ: Լոնդոնի՝ դեկտեմբերի 22–23-ին ու 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը գումարված կոնֆերանսներում ու Սան Ռեմոյի բանակցություններում պաշտոնական Փարիզը նվազեցնում էր միացյալ Հայաստանի տարածքը՝ Սևրի պայմանագիրը Թուրքիայի համար ընդունելի դարձնելու և քեմալականների կողմից այն կատարելու նպատակով: Հետևելով վարչապետների վարքագծին՝ մարշալ Ֆ. Ֆոշը, ԱԳՆ-ի աշխատակիցներ Ֆ. Բերթելոն ու Ա. Կամմերերը ձգտում էին Օսմանյան կայսրության լիիրավ ինքնիշխանությանը հանձնել Երզնկան, Սեբաստիան, Էրզրում քաղաքը, սևծովյան բոլոր նավահանգիստները՝ Տրապիզոնով հանդերձ, թույլ չտալ Հայաստանը կապել Բաթումի հետ՝ ՀՀ-ին պատկանող երկաթուղով:

Կատարելով Փարիզի կարգադրությունը՝ Սիրիայում և Կիլիկիայում հաստատված Ֆրանսիայի բարձրագույն հանձնակատարի գլխավոր քարտուղար Ռ. դը Կեն 1920 թ. մայիսի 22–23-ին Անգորայում բանակցություններ վարեց Ազգային ժողովի նախագահ Մ. Քեմալի հետ: Դրանց արդյունքում ամսի 23-ին ստորագրվեց 20-օրյա զինադադար, որն ուժի մեջ մտավ մայիսի 30-ի լույս գիշերը: Այն կնքվեց ֆրանսիական նախաձեռնությամբ՝ որպես առաջին անջատ գործարք, որը Ֆրանսիային առանձնացրեց այլ հաղթող տերություններից: Ավելին, զինադադարը կնքվեց ոչ թե Կ. Պոլսում առկա պաշտոնական կառավարության, այլ ազգայնականների հետ: Այդ փաստաթուղթը կոպտորեն խախտեց քաղաքական աշխատակարգը, քանի որ 35-հազարանոց ֆրանսիական բանակը հետ էր քաշվում Կիլիկիայից միջազգային հաշտության պայմանագիր ստորագրելուց առաջ: Զինադադար, որ արդեն մայիսի 22-ից լուսաբանվեց սփյուռքի մամուլում, 1920 թ. հունիսի 11–12-ին քննարկվեց Փարիզում գումարված Հայ ազգային II համագումարում և ամսի 24-ին ամբողջությամբ հրատարակվեց փարիզյան «Լը թամ» թերթում, ճանապարհ հարթեց քեմալականների առաջարկին՝ կայացնելու երկկողմ և անջատ գործարքն ու կազմել ֆրանս-թուրքական դաշինքը՝ Սևրի միջազգային պայմանագիրը մեղմացնելու գնով:

Քանի որ Սևրի հիմնական հեղինակ անգլիացիները Կիլիկիայի մեծ մասը հանձնեցին Թուրքիային՝ առանց նշելու որևէ իրավունք, մանդատ կամ հայկական ինքնավարություն ֆրանսիական հսկողության ներքո, քանի որ Մեծ Բրի-

տանիան ամեն կերպ խրախուսում էր Սիրիայի անկախությունը՝ ֆրանսիական զինվորների լիակատար հեռացումը արագացնելու միտումով, ակնհայտ էր, որ Լոնդոնը գերազանցեց Փարիզին Մերձավոր Արևելքում: Այդ պատճառով Ֆրանսիան սկսեց բանակցել Քեմալի հետ՝ առանց հոգալու կիլիկիահայերի անվտանգության կամ մարտունակության մասին: Կիլիկիայի համար Սևրը նշանակում էր Արևմտահայ հարցի և մեր ազգի Արևմտյան քաղաքական կողմնորոշման ոչնչացում: Դաշնագիրը նշանակում էր, որ եվրոպական տերությունները և ԱՄՆ-ն թողնում են հայ ժողովրդին Թուրքիային և Ռուսաստանին՝ հաշվի առնելով, որ արևմտահայ երեք նահանգների տարածքները միացվում էին Հայաստանի Հանրապետությանը: Նշանակում է՝ նրանք այլևս պետք է ընդունեին քաղաքական ու հասարակական-տնտեսական հյուսիսային կողմնորոշում:

1920 թ. ապրիլից ու հատկապես հունիսի 5-ից Ֆրանսիայի քաղաքական այրերը գիտակցում էին, որ Սևրը հանգեցնելու է քեմալականների հարձակողական պատերազմին, ուստի հուլիսի 2-ին վարչապետ Ա. Միլլերանը հրամայեց զենք տրամադրել Հայաստանի Հանրապետությանը և ընդհատել Սև ծովում ընթացող քեմալա-բոլշևիկյան բեռնահոսքերը: Սևրի պայմանագրի և ֆրանսիական անձնատրության հետևանքով ողբերգականորեն վերջ տրվեց հայկական Կիլիկիային, որը վերապրեց 1909 թ. կոտորածը Ադանայում, 1915–1918 թթ. Մեծ եղեռնը, 1920–1921 թթ. նրա Մարաշ, Ուրֆա, Սիս, Զեյթուն, Ադանա, Հաճընն, Այնթապ քաղաքների երկարատև պաշարումն ու կործանումը, ինչպես նաև 275 հազար գաղթականների զանգվածային վտարումն իրենց բազմադարյան Հայրենիքից:

Ֆրանսիայի քաղաքականությունը աստիճանաբար ձևափոխվեց Կիլիկիայի անկախությունը հետապնդելուց (1919 թ. մարտի 20) դեպի ինքնավարություն՝ արտաքին մանդատով (1919 թ. մայիսի 19), դրան հետևեցին քեմալականների հետ սկզբունքային մերձեցումը (1919 թ. դեկտեմբերի 5–7) (Ֆրանսիայի լիազոր դեսպանորդ, Սիրիայում և Հայաստանում նախկին գերագույն հանձնակատար Ֆ. Ժորժ-Պիկոն 1919 թ. դեկտեմբերի 5–7-ին Սեբաստիայում գաղտնի բանակցություններ ունեցավ Մ. Քեմալի հետ՝ Zeidner 1991, 284, Moumdjian 1998, 128), թուրքական գերիշխանության վերականգնումը (1920 թ. ապրիլի 18-26 և մայիսի 11–23) ու ռազմաքաղաքական լիակատար արձակումը, երբ Կիլիկիայի վաղաժամ լքումը փոխարինվեց Թուրքիայում տնտեսական արտոնությունների և Սիրիայում անվտանգ կառավարման հետ (1920 թ. հունիսի 23-ից մինչ Անկարայի պայմանագրի կնքումը 1921 թ. հոկտեմբերի 20-ին):

Շնորհակալական

Այս հոդվածը գրելիս շնորհակալությամբ եմ հիշատակում 1919–1921 թթ. ֆրանս-հայկական քաղաքական հարաբերությունների և այդ համատեքստում Կիլիկիայի դերակատարության առաջին հետազոտող Ռ.Գ. Սահակյանին: Իվ Տեռնոնը մեծապես օգնեց ինձ՝ 2018 թ. միջազգային գիտաժողովին իր մատուցած զեկուցումով, ներկայացված զարգացումների ընդհանուր պատկերն ըմբռնելու և ամբողջական հայեցակարգը ձևավորելու գործում: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանի խորհուրդները, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանի

դիտողություններն ու պ.գ.թ. Լ. Հովհաննիսյանի առաջարկներն էապես հստակեցրել ու խորություն են հաղորդել տվյալ ուսումնասիրությանը: Հոդվածը պատրաստվել է պետական բյուջեից ֆինանսավորվող պլանային թեմայիս կատարման շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Ադամյան Ն. 2018, ԿՀԲԸ-ի և Armenian Refugees (Lord Mayor's) Fund-ի համագործակցության պատմությունից (1915–1916 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 315–324:
   Adamyan N. 2018, From the History of Cooperation of the Benevolent Society of the Caucasus Armenians with the Armenian Refugees (Lord Mayor's) Fund (in 1915–1916), Herald of Social Sciences, N 1, 315–324 (in Armenian).
2. Մախմուրյան Գ.Գ. 2009, Ավետիս Ահարոնյանի 1920 թ. մարտի 19-ի և 23-ի նամակները Լոնդոնից, Բանբեր Հայաստանի արխիվների, N 2, 109–122:
   Makhmourian G.G. 2009, The Letters by Avetis Aharonian of 19 and 23 March 1920, from London, Bulletin of Armenian Archives, N 2, 109–122 (in Armenian).
3. «Արմէնիա» շաբաթաթերթ 1920, Մարսել, հունիսի 9, 16, 23, 30, դեկտեմբերի 8.
   Newspaper "Armenia" 1920, Marseille, June 9, 16, 23, 30, December 8 (in Armenian).
4. Գալոյան Գ.Ա. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, «Գիտություն»:
   Galoyan G.A. 1999, Armenia and the Great Powers in 1917–1923, Yerevan, Gitutyun (in Armenian).
5. Ավետիսյան Ա. 1985, Զապել Եսայանը Կիլիկիայի հայության դրության մասին (1920 թ.), Պատմա-բանասիրական հանդես, N 2, 226–233:
   Avetissian A. 1985, Zabel Yessayan on the Conditions of the Armenians in Cilicia (1920), Historical-Philological Journal, N 2, 226–233 (in Armenian).
6. Վիրաբյան Ա., Ավագյան Գ., Գրիգորյան Ռ., Կիրիմյան Ա. (խմբ. և կազմ.) 2004, Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, Հայաստանի ազգային արխիվի հրատ.:
   Virabyan A., Avagyan G., Grigoryan R., Kirimyan A. (eds. and comp.) 2004, Pan-Armenian Consultations (1912–1920), Collection of Documents and Materials, Yerevan, National Archives of Armenia Press (in Armenian).
7. «Հայաստան» շաբաթաթերթ 1920, Փարիզ, մայիսի 8.
   Newspaper "Hayastan" 1920, Paris, May 8 (in Armenian).
8. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանի 57, ց. 5, գ. 223; Արտաքին գործերի մինիստրության ֆոնդ 200, ց. 1, գ. 290:
   National Archives of Armenia (NAA), fund The divan of the Catholicos of all Armenians 57, reg. 5, file 223; fund Ministry of Foreign Affairs 200, reg. 1, file 290 (in Armenian).
9. «Հայրենիք» օրաթերթ 1920, Բոստոն, մայիսի 22, հունիսի 4, հունիսի 6.
   Newspaper "Hayrenik" 1920, Boston, May 22, June 4, June 6 (in Armenian).

10. Սահակյան Ռ. 1970, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Sahakyan R. 1970, Turkish-French Relations and Cilicia in 1919–1921, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

11. Սարգսյան Ս. 2020, Միհրան Տամատյանը և 1920 թ. օգոստոսի 4-ի ինքնավարության հռչակումը, Տարածաշրջան և աշխարհ, N 6, 82–88:
Sargsyan S. 2020, Mihran Tamatyan and the Proclamation of Autonomy on August 4, 1920, Region and the World, N 6, 82–88 (in Armenian).

12. Բեհբուդյան Ս. (կազմ.) 1996, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գք. Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901–1938 թթ.), Երևան, ՀՀ արխիվային գործի վարչության հրատ.:
Behboodyan S. (comp.) 1996, Papers on the History of the Armenian Church, Book II, Catholicos of All Armenians Khoren I Muradbekian (Spiritual Activity 1901–1938), Yerevan, Department of the Archival Affairs of the RA Press (in Armenian).

13. Տեփոյան Պ. 1956, Միհրան Տամատյան (1863–1945), Գահիրե, «Արեւ»ի թերթօնը:
Tepoyan P. 1956, Mihran Tamatyan (1863–1945), Cairo, Publ. in Parts in "Arev" (in Armenian).

14. Махмурян Г.Г. (сост.) 2012, Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., Ереван, изд. Института истории НАН РА.
Makhmourian G.G. (comp.) 2012, Armenia in Documents of the U.S. Department of State 1917–1920, Yerevan, Institute of History NAS RA Press (in Russian).

15. Ованнисян Р. 2007, Международные отношения Республики Армения 1918–1920 гг., Ереван, «Тигран Мец»
Hovannisian R. 2007, Foreign Relations of the Republic of Armenia 1918–1920, Yerevan, Tigran Metz (in Russian).

16. Туманян М. 2012, Дипломатическая история Республики Армения 1918–1920 гг., Ереван, изд. Национального архива Армении.
Tumanyan M. 2012, Diplomatic History of the Republic of Armenia 1918–1920, Yerevan, National Archives of Armenia Press (in Russian).

17. 100 ans après le front de l'Est, L'Arménie entre guerres et paix 2021, Colloque International, Lyon, Éditions Thaddée.

18. Hovannisian R.G., Payaslian S. (eds.) 2008, Armenian Cilicia, Costa Meza CA, Mazda Press.

19. Armenian Girls Tell of Massacres 1919, "New York Times", New York, June 1.

20. Bloxham D. 2005, Great Game of Genocide. Imperialism, Nationalism and the Destruction of the Ottoman Armenians, New York, Oxford University Press.

21. Brémond E. 1929, La Cilicie en 1919–1920, Paris, Imprimerie Nationale.

22. Brémond E. 1976–1977, The Brémond Mission: Cilicia in 1919–1920, The Armenian Review, N 4, 339–372, N 1, 34–72.

23. Captain Mazen, les négociations d'Angora (21–23 mai 1920), Service historique de la défence, Ministère des Armées, Vincennes, serie H (outre-mer), carton 4 H 58, dossier 2a.

24. D'Andurain J. 2018, Un Proconsulat en Trompe-L'Oeil, Le Général Henry Gouraud en Syrie (1919–1923), Revue Historique, N 1, 99–122.

25. Documents diplomatiques français 1920–1932, 1920, t. I (10 Janvier – 18 Mai) 1997, Paris, Imprimerie Nationale.

26. Documents diplomatiques français 1920–1932, 1920, t. II (19 Mai – 23 Septembre) 1999, Paris, Imprimerie Nationale.

27. Documents on British Foreign Policy 1919–1939, vol. 7, The First Conference of London 1920, 1958, London, HMSO.

28. du Véou P. 1954, La passion de la Cilicie 1919–1922, Paris, Paul Geuthner.

29. Gatrell P., Laycock J. 2004, Armenia: The "Nationalisation", Internationalisation and Representation of the Refugee Crisis, Baron N., Gatrell P. (eds.), Homelands. War, Population and Statehood in Eastern Europe and Russia, 1918–1924, London, Anthem, 179–200.

30. Güçlü Y. 2001, Turco-French Struggle for Mastery in Cilicia and the Ankara Agreement of 1921, Belleten, N 224, 1079–1114.

31. Hovannisian R. 1996, The Republic of Armenia, vol. 3, From London to Sèvres, February–August, 1920, Berkeley & Los Angeles, University of California Press.

32. Jinks R. 2018, "Marks Hard to Erase:" the Troubled Reclamation of "Absorbed" Armenian Women, The American Historical Review, N 1, 86–123.

33. Kévonian D. 2004, Réfugiés et diplomatie humanitaire: les acteurs européens et la scène proche-orientale pendant l'entre-deux-guerres, Paris, Sorbonne.

34. Morris B., Ze'evi D. 2019, The Thirty-Year Genocide, Turkey's Destruction of its Christian Minorities, 1894–1924, Cambridge MA, Harvard University Press.

35. Moumdjian G. 2008, Cilicia under French Administration: Armenian Aspirations, Turkish Resistance, and French Stratagems, Hovannisian R.G., Payaslian S. (eds.), Armenian Cilicia, Costa Meza CA, Mazda Press.

36. Moumdjian G. 1998, Cilicia under French Mandate (1919–1921), Armenian Aspirations vs. Turkish Intrigue, Bazmavep, N 1–4, 117–169.

37. Pattie S. 2018, The Armenian Legionnaires, Sacrifice and Betrayal in the World War I, London-New York, I.B. Taurus Press.

38. Redan P. 1921, La Cilicie et le problème ottoman, Paris, Gauthier-Villars.

39. Robert de Caix (1869–1970): un émissaire français au Levant dans l'entre-deux-geurres 2015, Les cahiers de l'Orient, N 3, 68–69.

40. Sénat de la France 3.06.1920, Commission des affaires étrangères, Séance, procès-verbaux.

41. White E. 2017, Relief, Reconstruction and the Rights of the Child: the Case of Russian Displaced Children in Constantinople, 1920–1922, Dislpaced Children in Russia and Eastern Europe, 1915–1923, Leiden, Brill Press, 70–96.

42. Zeidner R. 1991, The Tricolor over the Taurus: The French in Cilicia and Vicinity, 1918–1922, Salt Lake City, University of Utah Press.

«КАВКАЗСКАЯ СТОЛОВАЯ»: ПЕРВЫЙ АРМЯНСКИЙ РЕСТОРАН В МИНСКЕ (1906–1919 ГГ.)

"THE CAUCASIAN DINING ROOM": THE FIRST ARMENIAN RESTAURANT IN MINSK, 1906–1919

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱՇԱՐԱՆ». ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՍՏՈՐԱՆԸ ՄԻՆՍԿՈՒՄ (1906–1919 ԹԹ.)

Денис Лисейчиков
Dzianis Liseichykau
Դենիս Լիսեյչիկով

Фонд развития и поддержки арменоведческих исследований «АНИВ»
Foundation for Development and Support of Armenian Studies "ANIV"
Հայագիտական ուսումնասիրությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամ

dzianis.liseichykau@ehu.lt

Ներկայացվել է՝ 25.01.2024; գրախոսվել է՝ 30.01.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 25.01.2024; Revised: 30.01.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 25.01.2024; рецензировано: 30.01.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-54

Аннотация – Статья посвящена деятельности в г. Минске в 1906–1919 гг. первого учреждения общественного питания армянской и кавказской кухни – ресторана «Кавказская столовая». Основателем и бессменным владельцем заведения был уроженец г. Шуши армянин Николай Григорьевич Тер-Ованесов. Он прибыл в Минск в конце XIX в. в качестве управляющего сети т.н. «турецких» и «константинопольских» пекарен турецкого подданного Абдула-Рахмана Эффенди Хаджи-Гусейна Офли-оглы. Деятельность ресторана «Кавказская столовая» представлена на фоне внешнеполитических факторов, которые напрямую влияли на экономическую ситуацию в г. Минске: Балканская война 1912 г., Первая мировая война и немецкая оккупация 1914–1918 гг., установление советской власти и польская оккупация 1919 г. Отдельное внимание уделено истории основания и многочисленных перестроек каменного здания на углу улиц Подгорной и переулка Захарьевского в г. Минске, где находился ресторан и проживала семья его владельца.

Ամփոփում – Հոդվածը 1906–1919 թթ. Մինսկում գործող հայկական և կովկասյան խոհանոցի հասարակական առաջին սննդի հիմնարկի՝ «Կովկասյան ճաշարանի» մասին է: Հաստատության հիմնադիրը և անփոփոխ սեփականատերը բնիկ հայ շուշեցի Նիկոլայ Գրիգորևիչ Տեր-Ավանեսովն էր: Նա Մինսկ է ժամանել XIX դ. վերջին՝ որպես թրքահպատակ Աբդուլ-Ռահման էֆենդի Հաջի-Հուսեյն Օֆլի-օղլու «թուրքական» և «կոստանդնու-

պոլսյան» հացի փռերի ցանցի կառավարիչ: «Կովկասյան ճաշարան» ռեստորանի գործունեությունը ներկայացված է արտաքաղաքական գործոնների հենքի վրա, որոնք ուղղակիորեն ազդում էին Մինսկի տնտեսական իրավիճակի վրա, ինչպես՝ 1912 թ. բալկանյան պատերազմը, 1914–1918 թթ. գերմանական օկուպացիան, խորհրդային իշխանության հաստատումը և 1919 թ. լեհական օկուպացիան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Մինսկի Պոդգոռնայա փողոցի և Զախարևսկի նրբանցքի անկյունում կառուցված քարե շենքի հիմնադրման պատմությանը և դրա բազմաթիվ վերակառուցումներին. այնտեղ էր գտնվում ռեստորանը, և բնակվում էր սեփականատիրոջ ընտանիքը:

Abstract – The article deals with the "Caucasian Dining Room" Restaurant, the first food service establishment in the area of Armenian and Caucasian cuisines that operated in Minsk in 1906–1919. It was founded and, during all the period of existence, operated by Nikolay GrigorievichTer-Ovanesov, an Armenian from the city of Shushi. He arrived in Minsk in the late nineteenth century as a manager of the network of the so-called "Turkish" or "Constantinopolitan" bakeries founded by the Turkish citizen Abdullah-Rahman Effendi Haci-Huseyn Oflioğlu. In the article, the work of the "Caucasian Dining Room" Restaurant is put within the context of the foreign policy factors that directly influenced the economic situation in Minsk: the 1912 Balkan War, World War First and the German occupation, the establishment of Soviet power, and the Polish occupation in 1919. The special focus is on the history of founding and constant reconstructing of the stone building at the corner of Podgornaya street and Zakharievskiy lane in Minsk, where the restaurant was situated and the owner's family lived.

Հիմնաբառեր – Մինսկ, Շուշի, միկրոպատմություն, հայկական խոհանոց, ուրբանիստիկա:
Keywords – Minsk, Shushi, microhistory, Armenian cuisine, urban studies.
Ключевые слова – Минск, Шуши, микроистория, армянская кухня, урбанистика.

Вступление

Конец XIX в. был периодом наиболее значительного расцвета Минска на этапе его вхождения в состав Российской империи. Расцвет был связан с личностью городского головы Кароля Гуттен-Чапского. Именно в годы его правления – 1891–1901 – в Минске появилось электрическое освещение, телефон, конка, были переоборудованы водопровод и канализация, основан ряд общественных и благотворительных организаций. Благодаря иностранным инвестициям, а вместе с ними и современным технологиям, создавались новые бизнесы. В 1892 г. была открыта новаторская пекарня, не имевшая аналогов в городе. Владельцем этой пекарни был турецкий подданный Абдул-Рахман Эффенди Хаджи-Гусейн Офли-оглы (НГАБ, ф. 333, воп. 1, спр. 3806, 1905 г., 699), поэтому среди жителей города она была известна под названием «турецкой». Управляющим пекарней был уроженец Шуши армянин Николай Григорьевич Тер-Ованесов. В 1906 г. он открыл в городе собственный ресторан «Кавказская столовая». На примере деятельности этого необычного для Минска заведения общественного питания можно проследить основные этапы развития малого бизнеса в регионе, изучить адап-

тационные стратегии армянских предпринимателей, их интеграцию в локальную деловую среду и взаимодействие с белорусским и еврейским населением города.

Деятельность пекарни Абдула-Рахмана Эффенди Хаджи-Гусейна Офли-оглы

Открытие новой «турецкой» пекарни в Минске в 1892 г. совпало с тревожными вестями о приближении эпидемии холеры. Неизвестный корреспондент варшавской газеты «Słowo» так описывал события в городе в августе 1892 г.: «*Наибольшей сегодня «nouvelle du jour» [«новостью дня»], которой жители Минска интересуются не меньше, чем холерой, является открытие турецкой пекарни. Толпы людей не только громоздятся возле прилавка, почти вырывая друг у друга из рук турецкие булки и баранки, но еще сотни любопытных почти полностью обступают витрины магазина, восхищаясь удивительно элегантным и очень чисто убранным интерьером помещения. Восхищение это однако чрезмерно большое и продержится похоже что недолго. Доказательством тому является Вильно, где «турки» тоже поначалу имели бешеный успех и слышали отовсюду дифирамбы. После пары месяцев положение вещей полностью изменилось, и нынче те же самые «турки» были даже привлечены к судебной ответственности за продажу булок, которые не имели заявленного веса, хоть прежде, в самом начале существования предприятия, превышали даже необходимые размеры*» (Słowo 1892, 2). Интересным в этом описании предстает новаторская для Минска организация процесса выпечки и продажи изделий, которая была характерна для «турецких» пекарен. Можно заметить, что корреспондент специально берет определение «турки» в кавычки. Очевидно, все понимали, что на предприятии работают не только турки, но и представители прочих народностей из числа подданных Османской империи. Интересно, что в официальных документах начала XX в. эти пекарни и булочные назывались не «турецкими», а «константинопольскими» (НГАБ, ф. 295, воп. 1, спр. 7388, 1904 г., 3). «Константинопольской» же (с соответствующей вывеской) называл свою булочную и сам владелец А. Офли (НГАБ, ф. 299, воп. 2, спр. 13004, 1904 г., 4). В 1912 г. произошел любопытный инцидент. После очередной жалобы от минчан в пекарню пришла полиция и велела засыпать землей ледник. Хозяин возмутился: «*На мой вопрос, по какому праву они так поступают, я получил от пристава ответ, что здесь, мол, не Константинополь, и полиция делает, что хочет*» (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 1237, 1912–1913 гг., 28). Напомним, что в это самое время начиналась Первая балканская война – коалиция христианских государств (Болга



Илл. 1. Проект постройки каменного дома и сараев на углу Игуменского переулка, Подгорной улицы и Захарьевского переулка в г. Минске на участке, принадлежащем Евелю Боруховичу Директору. 1887 г. (НГАБ, ф. 1, воп. 1, спр. 1677, 1887 г., 5)



Илл. 2. Проект каменной пристройки к дому на углу Подгорной улицы и Захарьевского переулка в г. Минске, принадлежащему Евелю Боруховичу Директору, 1888 г. (НГАБ, ф. 1, воп. 1, спр. 1794, 1888 г., 4)



Илл. 3. Проект постройки каменного флигеля на углу Подгорной улицы и Захарьевского переулка в г. Минске на участке, принадлежащем Евелю Боруховичу Директору. 1888 г. (НГАБ, ф. 1, воп. 1, спр. 1791, 1888 г., 4)



Илл. 4. Собственноручное прошение Н.Г. Тер-Ованесова о снятии с него чрезвычайного революционного налога. 01.03.1919 (НАРБ, ф. 522, воп. 1, спр. 52, 1919 г., 79)

рия, Греция, Сербия и Черногория) решила отвоевать у Османской империи все европейские территории, в том числе часть Константинополя.

Делопроизводство канцелярии Минского губернатора свидетельствует, что на протяжении десяти лет, с момента своего основания до 1902 г., служащими пекарни А. Офли были преимущественно местные жители, а в 1902 г. они были заменены «*исключительно на турецких подданных*» (НГАБ, ф. 295, воп. 1, спр. 7388, 1904 г., 10). На самом деле, это не совсем так – в списках служащих даже за 1904 г. встречаются чисто славянские имена и фамилии – Владимир Белякович, Петр Бурый, Михаил Малов, Михаил Савицкий, Владимир Чайковский и пр. (НГАБ, ф. 295, воп. 1, спр. 7388, 1904 г., 12-12 адв.). На тот момент на предприятии помимо владельца насчитывалось 40 работников. Примерный годовой доход пекарен А. Офли в Минске к 1905 г. начал составлять 20 000 рублей.

Как и предполагал корреспондент газеты «Słowo», восхищение минчан новой пекарней вскоре сменилось раздражением. Минская газета «Северо-Западный край» в июне 1903 г. писала: «*Ежедневно, с 6 часов вечера проходящая по Губернаторской и Захарьевской улице публика задыхается от едкого, удушливого дыма, исходящего из трубы турецкой булочной господина Офли. Дым этот распространяется по обеим улицам <…> Нельзя ли было бы предложить господину Офли быть более внимательным к публике? Ведь существуют так называемые дымосжигательные приборы, устраиваемые в дымоходах*» (Северо-западный край 1903, 4). Впервые за несоблюдение санитарных норм на А. Офли подали в суд в 1901 г. (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г.), в 1902 г. таких повесток было уже 4, в 1903 – 10, за первое полугодие 1904 г. – 6 (НГАБ, ф. 295, воп. 1, спр. 7388, 1904 г., 14-15 адв.). Жалобы в полицию на минских «турок» стали будничным делом. Формулировка этих претензий часто напоминала провокации недобросовестных конкурентов (упомянутых в газетной заметке еврейских и немецких булочников). В 1901 г. минский мещанин Исаак Онефатер жаловался приставу 1-й части города: «*Только что принесли мне сайку от турок с какой-то гадостью внутри – кошки или другого домашнего животного*» (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г., 3). Объемное делопроизводство по этим жалобам дало нам возможность подробнее узнать о персонале пекарен и булочных, и о его происхождении.

Управляющий пекарней Николай Григорьевич Тер-Ованесов

В августе 1904 г. в докладе на имя губернатора пристав 1-й части г. Минска А. Кулаков после личного выезда на место по следам очередной жалобы так описывал персонал пекарни: «*Крайне дерзкое обращение всего*

состава служащих в заведении Офли-оглы турецких подданных, как с посторонней публикой, так и с чинами подведомственной мне полиции при предъявлении последними к ним законных требований, которые ими совершенно игнорируются» (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г., 4–4 адв.). Из документов о проверке пекарни становятся известными имена и некоторых служащих высшего звена. Так, когда в июле 1904 г. от жителя Самохваловичкой волости Минского уезда Григория Бурого поступила жалоба на запеченную в булке муху, протокол осмотра производства в пекарне от имени А. Офли подписал «*управляющий <…> мещанин города Шуши Елисаветпольской губернии Николай Григорьев Ованесов, проживающий по Богадельной улице в доме Миньковскаго*» (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г., 9 адв.). Н. Ованесов выступал в качестве переводчика и свидетеля при своем начальнике А. Офли и 26 июня 1904 г. (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г., 3). Из дальнейших расспросов выяснилось, что бухгалтерские книги на предприятии ведутся на турецком языке, сам хозяин русского языка не знает, а переводит ему с русского на турецкий и обратно тот самый уроженец Шуши Николай Ованесов (в некоторых документах – *Оганесов*) (НГАБ, ф. 226, воп. 1, спр. 166, 1901 г., 10 адв. – 11). Именно с личностью Николая Ованесова связан интересный эпизод в жизни дореволюционного Минска – основание и функционирование первого в городе ресторана кавказской кухни.

Армянин-шушинец Николай Ованесов с легкой руки минских краеведов конца XX – начала XXI в. сделался «единственным русским» на предприятиях А. Офли, где работали, как утверждалось, исключительно турки. Можно допустить, что под «русским» имелось в виду подданство Российской империи, поскольку Шуши находился на территории Елисаветпольской губернии. Однако и это не так – в протоколе от 1 октября 1904 г. Н. Ованесов подписался как «*турецкий подданный <…>, проживающий по [улице] Богадельной в доме Миньковскаго*» (НГАБ, ф. 299, воп. 2, спр. 13004, 1904 г., 7 адв.). Не вызывает сомнений, что Н. Ованесов не был этническим русским, впрочем как и вышеперечисленные служащие-белорусы Белякович, Бурый и Савицкий (названные в краеведческих статьях конца XX в. носителями «польских» фамилий).

В 1904 г. параллельно с полицейским расследованием А. Офли подал встречную жалобу минскому губернатору на действия пристава. В составлении и написании жалобы ему опять помогал тот самый Н. Ованесов, который подписался также в качестве свидетеля полицейских бесчинств (НГАБ, ф. 299, воп. 2, спр. 13004, 1904 г., 4 адв.). Помимо описания криков и нецензурной брани со стороны пристава, в жалобе, написанной рукой Н. Ованесова, от имени А. Офли говорилось: «*Каждый раз помимо сего сопровождал по моему адресу «Турецкая морда! Привыкла есть все с гадостью* (рассматри-

валась жалоба на найденных в выпечке насекомых – Д.Л.), *я тебе покажу!» На мое замечание, что я хотя турецкая морда, но хозяин, имею имя и фамилию, и живя в России около 30 лет, занимаясь своим ремеслом, заслужил Высочайшую благодарность. На что пристав 1 части громко со злостью закричал: «Заслужил благодарность, а у меня заслужишь волчий билет!»* (НГАБ, ф. 299, воп. 2, спр. 13004, 1904 г., 4–4 адв.).

4. Виватенко С.В., Сиволап Т.Е. 2022, «Чилийское экономическое чудо» и «чикагские мальчики»: из истории попытки экономической реформы Аугусто Пиночета, Петербургский экономический журнал, N 1–2, 227 с.
Vivatenko S.V., Sivolap T.E. 2022, "Chile Economic Miracles" and "Chicago Boys": from the History of the Economic Reform Attempt of Augusto Pinochet, St. Petersburg Economic Journal, N 1–2, 227 p. (in Russian).

5. Мусский И.А. 2004, 100 великих диктаторов, Москва, Вече.
Mussky I.A. 2004, 100 Great Dictators, Moscow, Veche (in Russian).

6. Лисандро Отеро Гонсалес 2024, Генерал Пиночет и его оловянные солдаты, Москвam Родина.
Lisandro Otero Gonzalez 2024, General Pinochet and His Tin Soldiers, Moscow, Rodina (in Russian).

7. Платошкин Н.Н. 2011, Чили 1970–1973 гг. Прерванная модернизация, Москва, Ун-т Дмитрия Пожарского.
Platoshkin N.N. 2011, Chile 1970–1973. Interrupted Modernization, Moscow, Dmitry Pozharsky University (in Russian).

8. Sergey Biryukov 2022, https://politconservatism.ru/arhiv-publications/alfredo-stressner-pravo-radikalnyj-simulyakr-konservatizma (retrieved 06.01.2025).

9. Mikhail Alekseev 2006, https://www.kommersant.ru/doc/731005 (retrieved 04.01.2025).

10. Ekaterina Kosevich 2023, https://daily.hse.ru/post/pinochet-u-vlasti-kak-polveka-nazad-v-chili-pobedila-diktatura (retrieved 07.01.2025).

11. Mariano Castillo 2012, https://edition.cnn.com/2012/09/11/world/americas/chile-allende-suicide /index.html (retrieved 02.01.2025).

12. Alice Broome 2020, https://britishonlinearchives.com/posts/category/articles/378/miracle-of-chile-the-legacy-of-the-chicago-boys (retrieved 05.01.2025).

13. Steve Kangas 2006, https://scepsis.net/library/id_557.html#a1 (retrieved 02.01.2025).

14. Consejo de Ministros (Council of Ministers): https://elpais.com/espana/2023-09-11/el-gobierno-retirara-la-gran-cruz-al-merito-militar-concedida-a-pinochet-en-1975.html (retrieved 03.01.2025) (in Spanish).

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

THE POLICY OF THE OTTOMAN EMPIRE IN EASTERN CAUCASUS IN THE SECOND HALF OF THE 18TH AND THE BEGINNING OF THE 19TH CENTRIES

ПОЛИТИКА ОСМАНСКОЙ ИМПЕРИИ НА ВОСТОЧНОМ КАВКАЗЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVIII – НАЧАЛЕ XIX ВВ.

Անահիտ Թովմասյան
Anahit Tovmasyan
Анаит Товмасян

Մատենադարան, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստան
The Matenadaran, the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, Armenia
Матенадаран, научно-исследовательский институт древних рукописей имени М. Маштоца, Армения

anahittovmasyan@matenadaran.am

Ներկայացվել է՝ 30.04.2024; գրախոսվել է՝ 04.02.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 30.04.2024; Revised: 04.02.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 30.04.2024; рецензировано: 04.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-80

Ամփոփում – Աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ Արևելյան Կովկասը մշտապես եղել է տարածաշրջանի խոշոր տերությունների ռազմավարական շահերի բախման գոտի, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր ազդեցությունը տարածել այնտեղ: Դարեր շարունակ Կովկասն ընդհանրապես և Արևելյան Կովկասը, մասնավորապես, եղել են Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից: Օգտվելով Իրանական տերության թուլացումից և մասնատումից՝ XVIII դարի 50-ական թթ. սկզբին Օսմանյան կայսրությունն ակտիվացնում է իր քաղաքականությունն Արևելյան Կովկասում: Չհաշտվելով Կովկասում ռուսական դիրքերի ամրապնդման հետ՝ մի շարք պատերազմներում պարտված և թուլացած Օսմանյան կայսրությունը մտադիր չէր հրաժարվել նրա նկատմամբ իր դարավոր հավակնություններից: Նման իրավիճակում Օսմանյան կայսրությունը վարում էր դիվանագիտական պայքար՝ իրականացնելով այսպես կոչված փափուկ ուժի քաղաքականությունը: XVIII դարի երկրորդ կեսին – XIX դարի սկզբին մեծաքանակ գործակալներ սուլթանական հրովարտակներով և թանկարժեք նվերներով ուղարկվում էին այսրկովկասյան խաների ու դաղստանյան տիրակալների մոտ: Վերջիններիս գործունեությունը հատկապես ակտիվանում էր ռուս-թուրքական պատերազմների նախօրեին և պատերազմների ընթացքում: Թուրք գործակալները փորձում էին գումարով, առատաձեռն պարգևներով սիրաշահել տեղական կառավարիչներին, այդպիսով իրականացնել հակառուսական քարոզչություն և, օգտագոր-

ծելով կրոնական լծակները, հրահրել նրանց ընդդեմ Ռուսաստանի: Օսմանյան կայսրության վարած կովկասյան քաղաքականության հիմնական միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ առատ տեղեկություններ են հաղորդում տարբեր արխիվային հավաքածուներում զետեղված տարաբնույթ և բազմալեզու փաստաթղթերը, որոնց համեմատական ուսումնասիրությունը նոր մանրամասներով է հարստացնում Արևելյան Կովկասի XVIII դարի երկրորդ կեսի – XIX դարի սկզբի պատմությունը:

Abstract – Thanks to its advantageous geographical location, the Eastern Caucasus has always been a zone of conflict for the strategic interests of major powers in the region. For centuries, the Caucasus, especially the Eastern Caucasus, were important directions of Ottoman foreign policy. Seizing the opportunity presented by the weakening and fragmentation of the Iranian state in the early 1750s, the Ottoman Empire intensified its policies in the Eastern Caucasus. Unwilling to accept the growing Russian influence in the Caucasus, the Ottoman Empire, which had suffered defeats in a series of wars and was weakened, embarked on a diplomatic struggle. In the second half of the 18th century and the early 19th century, a significant number of agents were dispatched to the Transcaucasian khans and Dagestani rulers, bearing Sultan's proclamations and valuable gifts. These emissaries attempted to influence the local rulers through financial incentives and generous gifts, as well as by using religious leverage to turn them against Russia. A wealth of information on the main trends and peculiarities of the Ottoman Empire's Caucasian policy is provided by various multilingual documents kept in archival collections, the comparative study of which enriches the history of the Eastern Caucasus in the second half of the 18th – the beginning of the 19th century with new details.

Аннотация – Благодаря своему выгодному географическому положению Восточный Кавказ всегда являлся зоной конфликта стратегических интересов крупнейших держав региона. На протяжении столетий Кавказ в целом и Восточный Кавказ в частности были важными направлениями внешней политики Османской империи. Воспользовавшись ослаблением и раздробленностью иранской державы, в начале 50-х годов XVIII века Османская империя активизировала свою политику на Восточном Кавказе. Не смирившись с усилением российских позиций на Кавказе, Османская империя, потерпевшая поражение и ослабленная в ряде войн, не собиралась отказываться от своих многовековых притязаний на него. В такой ситуации Османская империя вела дипломатическую борьбу, реализуя так называемую политику мягкой силы. Во второй половине XVIII и начале XIX веков к закавказским ханам и дагестанским правителям направилось огромное число агентов с султанскими прокламациями и дорогими дарами. Деятельность последнего особенно активизировалась накануне и во время русско-турецких войн. Турецкие агенты пытались заслужить расположение местных правителей, ведя таким образом антироссийскую пропаганду и, используя религиозные рычаги, настраивая их против России. Обширную информацию об основных направлениях и особенностях кавказской политики Османской империи дают разнообразные и многоязычные документы, хранящиеся в различных архивных фондах, сравнительное изучение которых обогащает историю Восточного Кавказа второй половины XVIII – начала XIX в. новыми подробностями.

Հիմնաբառեր – Արևելյան Կովկաս, Դաղստան, կայսրություն, փաստաթղթեր, դիվանագիտություն:
Keywords – Eastern Caucasus, Dagestan, Empire, documents, Diplomacy.
Ключевые слова – Восточный Кавказ, Дагестан, империя, документы, дипломатия.

Ներածություն

Արևելյան Կովկասի պատմությունը լի է ռազմաքաղաքական վայրիվերումներով ու բախումներով, որոնց անաչառ ուսումնասիրությունը և նորահայտ փաստերը գիտական շրջանառության մեջ դնելը հայ պատմագիտության արդի խնդիրներից է: Գտնվելով Արևմուտքը Արևելքին կապող ռազմաքաղաքական և առևտրատնտեսական ճանապարհների խաչմերուկում՝ Արևելյան Կովկասը մշտապես եղել է քաղաքական զարգացումների կիզակետում: XVIII–XIX դդ. ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս տարածքում ազդեցության հասնելու համար բախվում էին տարածաշրջանի երեք խոշոր տերությունների՝ Ռուսաստանի, Օսմանյան կայսրության և Իրանի շահերը, որոնցից յուրաքանչյուրը հավակնում էր իր վերահսկողությունը սահմանել տեղի կառավարիչների և ժողովուրդների վրա:

Սույն ուսումնասիրությամբ նպատակ է հետապնդվում առանձնացնել և քննության առնել XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին Արևելյան Կովկասում Օսմանյան կայսրության վարած քաղաքականությանը վերաբերող և պատմական կարևորություն ներկայացնող փաստաթղթերն ու նյութերը: Հոդվածի շրջանակում արխիվային տարաբնույթ և տարալեզու փաստաթղթերի՝ սուլթանական հրովարտակների, օսմանյան պաշտոնական փաստաթղթերի և պատմագիրների վկայությունների, ռուսական ռազմական հրամանատարների, դիվանագետների հաղորդումների, նամակների և այլ կարևոր աղբյուրների ընձեռած տվյալների քննության միջոցով կփորձենք լուսաբանել և նոր փաստերով հարստացնել դիտարկվող ժամանակահատվածում օսմանյան քաղաքականության այդ ուղղության հիմնական միտումներն ու առանձնահատկությունները:

Օսմանյան կայսրության 1750–1760-ական թթ. կովկասյան քաղաքականության առանձնահատկությունները

XVIII դարի կեսերին իրավիճակը Արևելյան Այսրկովկասում բավականին բարդ էր: 1747 թ. Նադիր շահի սպանությունից հետո իրանական պետությունը մեծ արագությամբ սկսել էր քայքայվել: XVIII դարի 50-ական թթ. սկզբին Իրանը տրոհվել էր միմյանց դեմ անընդհատ պայքարող ինքնիշխան վարչաքաղաքական միավորների: Նախկին պարսկական կուսակալությունների տարածքում ձևավորվել էին տասնյակից ավելի մանր ու միջին խանություններ (Մխիթարյան 2018, 19):

Օգտվելով իրանական տերության թուլացումից և մասնատումից՝ XVIII դարի կեսերին պայքար էր ընթանում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև Արևելյան Կովկասում գերիշխանության հասնելու համար, որը շարունակվում էր նաև XIX դարի ընթացքում: XVIII դարում Ռուսաստանը զենքի ուժով և տեղական ֆեոդալների աջակցության շնորհիվ ամրապնդել էր իր դիրքերը Կովկասում. դրա հետ ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել սուլթանական Թուրքիան: Վերջինս, Ռուսաստանին պարտված լինելով մի շարք պատերազմներում, վարում էր դիվանագիտական պայքար՝ իրականացնելով այսպես կոչված փափուկ ուժի քաղաքականությունը:

Դիտարկվող տարածաշրջանում Օսմանյան կայսրությունը իր քաղաքական պայքարն իրականացնում էր երկու ուղղությամբ՝ հակառուսական քարոզչություն և կրոնական գործոնի շահարկում: Իր ազդեցությունը տարածելու և տեղական կառավարիչներին իր կողմը գրավելու նպատակով Օսմանյան կայսրությունը սկսում է մեծաքանակ գործակալներ ուղարկել Արևելյան Կովկաս, որոնք գումարով, թանկարժեք նվերներով փորձում էին սիրաշահել տեղական կառավարիչներին և, օգտագործելով կրոնական լծակները, հրահրել նրանց ընդդեմ Ռուսաստանի: Թուրք գործակալներն իրենց հետ բերում էին նաև սուլթանական ֆերմաններ, որոնցում ամփոփված էր սուլթանի կոչը մահմեդական խաներին՝ միավորվել Օսմանյան կայսրության շուրջ:

Շեյխերի (մահմեդական բարձր հոգևորական՝ իրավագետ և աստվածաբան), սաիդների (հավատացյալ, որ իր հավատքի և բարի գործերի շնորհիվ ապագայում կհասնի երջանկության), մոլլաների (կոչում, որը տրվում է հայտնի կրոնագետների կամ որոշ իսլամական հասարակություններում որոշակի մակարդակի կրթություն ստացած մարդկանց) և դերվիշների (մահմեդականների թափառական կրոնավոր) անվան տակ գործող գործակալները ակտիվ հակառուսական քարոզչություն էին իրականացնում՝ կոչ անելով «իսկական հավատացյալներին» դուրս գալ ի պաշտպանություն իսլամի՝ ընդդեմ անհավատների ոտնձգությունների: Օսմանյան կայսրությունը նպատակ էր հետապնդում, միավորելով տարածաշրջանի մահմեդականներին, ոգեշնչել նրանց պայքարել «անհավատների» (այսինքն՝ ռուսների) դեմ: Այդ իսկ պատճառով թուրք գործակալները գաղափարներ էին տարածում այն մասին, որ Ռուսաստանի առաջխաղացման դեպքում մահմեդական բնակչությունը հավատափոխ կլինի, իսկ կովկասյան ֆեոդալները կարտաքսվեն: Դերբենդի Ֆաթի Ալի խանին, օրինակ, ասում էին, որ ռուսների օրոք նա «խոզապահ է լինելու» (РГАДА, разряд XXIII, оп. 1–4, д. 13, ч. 4, л. 342–343): Միաժամանակ առատաձեռն նվերներ էին ուղարկվում կովկասյան տիրակալներին՝ նրանց սիրաշահելու համար: Իսկ թուրքական ծառայության անցած լեռնաբնակներին խոստանում էին վճարել մեծ գումարներ: Ախալցխայի փաշայի միջոցով միայն Ավարայի Օմար (Ումմա) խանին էր տրվել 500 քիսե կամ քսակ փող (Бутков 1869, 178. յուրաքանչյուր քիսեն պարունակում էր 500 ղուրուշ):

Ինչպես նշում է օսմանյան արքունի պաշտոնական տարեգիր Ջևդեթ փաշան, Թուրքիան գործադրում էր «ամեն հնարավոր ջանք՝ Կովկասի ցեղերին իր կողմը գրավելու և այս տարրերից ռուսների դեմ ուժ պատրաստելու համար»: Այնուհետև պատմագիրը հավելում է, որ կովկասյան ցեղերն «Օսմանյան կառավարության հովանավորությունը իրենց համար փրկություն պիտի համարեն և դրա համար երախտագետ լինեն» (Սաֆրաստյան 1961, 231):

XVIII դարի 60-ական թթ. վերջին նկատվում է թուրք գործակալների գործունեության ակտիվացում: 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում սուլթանական ֆերմաններով և թանկարժեք նվերներով գործակալներ էին ուղարկվել կովկասյան գրեթե բոլոր տիրակալների մոտ: Օսմանյան կայս-

րությունը ձգտում էր, Արևելյան Կովկասի ազդեցիկ խաների նույնակրոնության փաստը օգտագործելով, նրանց աջակցությունը ստանալ ընթացիկ պատերազմում:

Վրաստանում Ռուսաստանի գործերի հավատարմատար կնյազ Ա. Մոուրավովը 1769 թ. հոկտեմբերի 7-ին հայտնում է Վրաստանում ռուսական ջոկատի պետ, գեներալ-մայոր կոմս Գ.Գ. Տոտլեբենին, որ թուրքերից ներկայացուցիչներ ուղարկվեցին Դերբենդի Ղուբա Խանի մոտ՝ համոզելու լեզգիներին զինվել Ռուսաստանի դեմ՝ հօգուտ Թուրքիայի: Զեկուցվում է նաև, որ թուրքական քաղաքներում զորքի կուտակումներ չկան, իսկ այդ քաղաքներում ապրող հայերից ու վրացիներից խլել են հրացաններն ու թրերը (Гаджиев 1988, 132): Օսմանյան Թուրքիայի ջանքերը, սակայն, հաջողությամբ չպսակվեցին: 1769 թ. հուլիսին Ֆաթհ Ալի խանը մերժեց օսմանցիների առաջարկները և հրաժարվեց ընդունել իրեն հանձնված նվերները. «Ինձ դա պետք չէ: Ես կբավարարվեմ իմ կապիտալով», – պատասխանել է նա սուլթանի գործակալներին (Гаджиев 1988, 314–315):

Ռուս-թուրքական նոր պատերազմի նախապատրաստությունը 1774–1787 թթ.

1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի պարտությունից հետո սուլթանական Թուրքիան չէր հրաժարվում Կովկասին տիրելու մտքից և սկսում է նոր պատերազմին նախապատրաստվելու աշխատանքները: Նախքան նոր պատերազմը Օսմանյան կայսրությունը ցանկանում էր ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում և մեծացնել ազդեցությունը տեղական տիրակալների շրջանում:

Օսմանյան կայսրության հեռահար նպատակների մասին է վկայում Սուլթան Աբդուլհամիդ I-ի (1773–1789) ժամանակաշրջանի 2 փաստաթուղթ:

1779 թ. հունիսի 26-ին Չըլդրի (Ախալցխայի) վալի (վիլայեթի կառավարիչ, կուսակալ, նահանգապետ) Սուլեյման փաշան դիմում է սուլթանին՝ առաջարկելով կայսերական հրամանագիր տալ՝ կանխելու Շիրվանի և Դաղստանի խաների հարձակումը Ղարաբաղի վրա:

Փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ Շիրվանի Հուսեյն խանը պայմանավորվել է Ղուբայի Ֆաթհ Ալի խանի հետ, և, հնազանդվելով Դաղստանի կառավարիչներ Կայտագի խանի և Ակուշայի խանի ցանկությանը, որոշել են հարձակվել Ղարաբաղի խանի վրա: Չնայած այն հանգամանքին, որ այս գործողությամբ Բարձր կառավարությունը (այսինքն՝ Թուրքիան) որևէ վնաս չի կրի, այնուամենայնիվ, Դաղստանի մահմեդական բնակչության գործերին Իրանի միջամտությունը և ղզլբաշների (այսինքն՝ պարսիկների) օգնությունը բացառելու նպատակով Չըլդրի վալի Սուլեյման փաշան առաջարկում է Ղարաբաղի վրա հարձակումը կանխելու ֆերման արձակել (Binark 1992, 69):

Արդեն 1779 թ. հուլիսին բարձրագույն դիվանը, Չըլդրի վալի Սուլեյման փաշայի առաջարկության հիման վրա, հրամանագիր է արձակում Ղարաբաղի վրա հարձակումը կանխելու մասին, իսկ Աբդուլհամիդ I-ի հրովարտակի պատճենները ուղարկվում են Դաղստանի էմիրներ Կայտագի Ուսումի խանին և Ակուշիի քադիին (Binark 1992, 69–70):

Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմին ընդառաջ՝ 1779–80 թթ., Օսմանյան կայսրությունը ակտիվորեն զենք էր մատակարարում Դաղստանի լեռնականներին (РГАДА, разряд XXIII, оп. 1–3, д. 9, ч. 2, л. 133):

1783 թվականին Գեորգիևյան պայմանագրի (Бутков 1869, 122) կնքումից և Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Օսմանյան կայսրությունը արագացրեց պատերազմին պատրաստվելու աշխատանքները:

Պատերազմին նախապատրաստվելու պայմաններում Արևելյան Կովկասում ակտիվացել էին սուլթանի գործակալները, որոնց նպատակն էր դաշինք կազմել այսրկովկասյան և դաղստանյան տիրակալների հետ և պատերազմ հրահրել տեղի մահմեդականներին ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև Վրաստանի դեմ:

Այս նպատակով ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել սահմանային փաշաները: Սեդարեթի (բարձր պաշտոնյա Օսմանյան կայսրությունում. համարվում էր սուլթանի բացարձակ տեղակալը) կողմից գրություններ և հրամաններ ուղարկվեցին Էրզրումի, Բայազետի, Ախալցխայի և Կարսի փաշաներին: Հատուկ նամակներ ուղարկվեցին նաև այսրկովկասյան խաներին և Դաղստանի մի շարք տիրակալների՝ հայտնելով, որ զորք հավաքեն և Ռուսաստանի հնարավոր հարձակման դեպքում քաջաբար դիմադրություն ցույց տան (Սաֆրաստյան 1961, 247):

Էրզրումի վալի Բաթթալ փաշան և Չըլդրի վալի Սուլեյման փաշան խնդրագիր են ուղարկում սուլթանին՝ Հերակլ խանի խաղաղության կոչերին հավատ չընծայելու և լեզգի զինվորներին և Իրանի խաներին Օսմանյան կայսրության կողմը գրավելու անհրաժեշտության մասին կայսերական հրաման արձակելու մասին (Binark 1993, 75–76): Չըլդրի վալիին հրաման տրվեց «Դաղստանի ժողովուրդներին սիրաշահելու համար այդ ժողովրդի պարագլուխներին Երջանիկ Ասիթանեից (սուլթանական պալատից) ուղարկված փադիշահական (արքայական) նվերներ ու կայսերական շնորհներ հանձնել»: Հրամայվում էր հիշյալ ժողովրդին պատերազմի և ջիհադի կոչ անելու և հրավիրելու մասին տրված բարձր հրամանները հասցնել և հիշյալ ժողովրդի կողմից դեպի Չըլդր եկած ղազիներին և մյուջահիդներին (հանուն իսլամական կրոնի մղվող պատերազմում կռվող մարտիկներ) նվերներով պարգևատրել (Սաֆրաստյան 1961, 264):

1783 թ. աշնանը հակառուսական և հակավրացական դաշինք կնքելու նպատակով թուրք գործակալները Խալիլ էֆենդու գլխավորությամբ ժամանում են Արևելյան Կովկաս: Թուրք բանագնացները լինում են Շիրվանում, Ղարաբաղում, Դաղստանում, այնուհետև ուղևորվում Երևան (Маркова 1966, 203): Սակայն հայտնի չէ, թե Խալիլ էֆենդու գլխավորած պատվիրակությունը Երևանի որ խանի հետ է հանդիպել, և բանակցությունները ինչ ընթացք են ստացել (Հակոբյան 2021, 136):

Նշված ժամանակահատվածում հատկապես ակտիվ էր Ախալցխայի Սուլեյման փաշան: 1784 թ. հունվարին վերջինս ժամանում է Ղարաբաղի խանություն՝ Իբրահիմ խանի մոտ: Հավաքատեղի է հայտարարվում Շուշին: Այստեղ, նվերներով և փողերով գայթակղված, իրենց ջոկատները բերեցին Խունզախի խանի և Թարքիի շամխալի (կառավարիչ) որդիները, Կայտագի ուցմիի զարմիկը,

Ջենգուտայի Ալի-Սուլթանը և չեչեն որոշ մեծամեծեր: Իմանալով այս մասին՝ Կովկասում ռուսական զորքերի ղեկավար գեներալ-լեյտենանտ Պոտյոմկինը նամակներ ուղարկեց դաղստանյան տիրակալներին՝ պահանջելով հետ կանչել իրենց ազգականներին Իբրահիմ խանի մոտից (Маркова 1966, 204): Դրան հետևում են դաղստանյան տիրակալների նամակները հավատարմության խոստումներով (Гаджиев 1988, 184):

1784 թ. փետրվարին Ախալցխայի Սուլեյման փաշան նամակ է ուղարկում Կայտագիի Ամիր Համզային՝ խնդրելով ուղարկել 300 մարդ: Խոստանում է նրանց վճարել 60 ռուբլի աշխատավարձ, խալաթներ և «այն ամենը, ինչ կհափշտակվի Վրաստանից»: Նմանատիպ բովանդակությամբ 24 նամակ է ուղարկվում նաև դաղստանյան մյուս տիրակալներին (Маркова 1966, 204):

Իբրահիմ խանը, որը նախկինում ավելի շատ էր զգուշանում ռուսներից, XVIII դարի վերջին սկսում է ակտիվ համագործակցել օսմանցիների հետ: Ռուս պատմաբան, գաղտնի խորհրդական Բուտկովը այս առիթով ասում է. «Տեսնելով Օսմանյան կայսրության ուշադրությունը, որը վերջինս դարձնում էր տարածաշրջանին՝ Ղարաբաղի Իբրահիմ խանը քաջապնդվեց, սկսեց ավելի քիչ վախենալ Ռուսաստանից և սաստկացրեց ճնշումը իր հայերի նկատմամբ, որոնք Ռուսաստանի հետ գաղտնի հարաբերությունների մեջ էին (Бутков 1869, 145)»:

Հայտնի է, որ միայն 1784 թվականին տարածաշրջան է ժամանել 60 բանագնաց՝ սուլթանական ֆերմաններով և տեղական տիրակալների համար առատաձեռն նվերներով (Гаджиев 1988, 12):

1784 թ. դեկտեմբերին գնդապետ Բուռնաշևը Թբիլիսիից հաղորդում է, որ տարածաշրջան է ժամանել թուրք գործակալ Իբրահիմ բեկը: Վերջինս եկել է գումարով և պահանջում է այսրկովկասյան խաներից հնարավոր պատերազմի դեպքում միավորվել Ռուսաստանի դեմ: Բուռնաշևը հաղորդում է նաև, որ թուրք գործակալները սկսել են Վրաստանի մահմեդական բնակչության հետ աշխատանքները, որպեսզի նրանք չընդունեն Հերակլ թագավորի իշխանությունը և պայքարի դուրս գան (РГАДА, разряд XXIII. оп. 1–4, д. 13, ч. 10, л. 36):

Նշված Իբրահիմ բեկի գործունեության մասին հիշատակությունների ենք հանդիպում Հնագույն ակտերի ռուսական պետական արխիվի այլ գործերում ևս: 1785 թ. հունվարի 11-ին Դերբենդի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանը հայտնում է գեներալ-լեյտենանտ Պոտյոմկինին, որ թուրքական սուլթանի կողմից Ղարաբաղի Իբրահիմ խանի մոտ էր ժամանել գործակալ Իբրահիմ բեկը: Նա իր հետ բերել էր սուլթանական նամակ՝ ուղղված այսրկովկասյան խաներին և դաղստանյան կառավարիչներին, ինչպես նաև մեծարժեք նվերներ՝ թանկարժեք քարերով զարդարված խալաթներ, ժամացույցներ և ոսկյա մետաղադրամներ կաշառքի համար (РГАДА, разряд XXIII, оп. 1–5, д. 13, ч. 14, л. 85): Ինչպես նաև սպասում էր Պոտյոմկինի հրահանգին՝ ինչպես վարվել Իբրահիմ բեկի հետ, թույլատրե՞լ արդյոք վերջինիս մուտքը դաղստանյան տիրույթներ, որոնք տատանվում էին Ռուսաստանի կամ Թուրքիայի հետ հավատարմության մեջ: Հաղորդվում էր նաև Ղարաբաղի Իբրահիմ խանի անհավատարմության մասին, որը գաղտնի բանակցություններ է վարում Թուրքիայի հետ (РГАДА, разряд XXIII, оп. 1–5, д. 13,

ч. 14, л. 87): 1786 թ. ռուսական հրամանատարությանը զեկուցվում է, որ ուխտագնացների անվան տակ Ղարաբաղի Իբրահիմ խանի մոտ էին գնացել թուրք փաշաներ «վեհաշուք գանձերով» (РГАДА, разряд XXIII, оп. 1–5, д. 13, ч. 17, л. 419):

Թուրք գործակալների գործունեությունը 1787–1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և դրան հաջորդող տարիներին

Ռուս-թուրքական նոր պատերազմի նախօրեին Արևելյան Կովկաս ուղարկված թուրք գործակալների թիվը կտրուկ ավելացավ: 1787 թ. սկզբին Թուրքիան Դաղստան և այսրկովկասյան մյուս տիրակալների մոտ է ուղարկել Կափըջը-Բաշին (սուլթանական ասպանդակի կամ Դռան գլխավոր դռնապանը): Նրա հետ ուղարկվել է 80 հազար ոսկի և 30 խալաթ՝ որպես նվեր տարբեր խաներին ու ազդեցիկ մարդկանց (Бутков 1869, 197): Պատերազմից անմիջապես առաջ Ֆաթհ Ալի խանին Կափըջը-Բաշին տանում է 4000 ոսկի, սամույրի մուշտակ և ադամանդներով զարդարված դաշույն՝ վերջինիս կոչ անելով հարձակվել Վրաստանի վրա: Սակայն ինչպես նշում է ռուսական հետախուզությունը, Ֆաթհ Ալի խանը հրաժարվել է նվերներից (Гаджиев 1988, 209):

1787 թ. օգոստոսին Թուրքիան պատերազմ սանձազերծեց Ռուսաստանի դեմ: Ռազմական գործողությունների վերսկսումը նշանակում էր սուլթանական Թուրքիայի հակառուսական քարոզչության ակտիվացում:

Պատերազմի հայտարարությունից անմիջապես հետո Չըլդրի վալի Սուլեյման փաշային բարձր հրաման ուղարկվեց և նրան հանձնարարվեց, միանալով Դաղստանի և այսրկովկասյան խաներին, ներխուժել ռուսական կալվածքներ: Կառավարիչներին Թուրքիայի կողմը գրավելու համար «նրանց ուղարկվեցին իրադրությունը բացատրող առանձին կայսերական հրահանգներ, և միևնույն ժամանակ փադիշահական ընդունելություն կազմակերպվեց: Արքունի զինակիցներից Մուհամմեդ Սալիհ-Աղան արտակարգ լիազորություններով ուղարկվեց Դաղստան» (Սաֆրաստյան 1961, 273):

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ողջ ընթացքում թուրքերը շարունակեցին սերտ հարաբերությունները լեռնային ժողովուրդների հետ: 1789-ին սուլթան Սելիմ III-ն ուղարկեց հերթական ֆերմանը՝ հասցեագրված կաբարդացիներին, չեչեններին, դաղստանցիներին, որտեղ նա կոչ էր անում ռազմական գործողություններ սկսել Ռուսաստանի դեմ և նշում, որ շուտով Կովկասում կլինի հաղթական Հուսեյին Բաթալ փաշան իր 6000-անոց զորքով և բազմաթիվ թնդանոթներով՝ լեռնականներին Ռուսաստանից ազատելու համար: «Նա իր հետ կբերի նաև մեծ գանձարան՝ աչքի ընկածներին պարգևատրելու համար (Смирнов 1958, 156)»:

Բաթալ փաշան կարծում էր, որ իր առաջին հաջողությունը Կովկասյան ճակատում պետք է լինի Ռուսաստանի դեմ բորբոքել ոչ միայն բոլոր կովկասցիներին, այլ նաև «ռուսական գավազանին ենթակա բոլոր մահմեդականներին»: Դեռևս 1788 թվականից հսկողություն էր սահմանվել բոլոր մահմեդականների վրա (Бутков 1869, 224):

Թուրքիայի ջանքերը ցանկալի արդյունք չէին տալիս: 1790 թ. սեպտեմբերին Բաթալ փաշայի զորքերը պարտություն կրեցին: Չկորցնելով լեռնականներին Ռուսաստանի դեմ օգտագործելու հնարավորության հույսը՝ 1791 թ. մարտին Սուլթան Սելիմ III-ը (1789–1807) Արևելյան Կովկաս ուղարկված ֆերմաններից մեկում հրամայում է Ռուսաստանի հետ ունեցած իրական պատերազմի կապակցությամբ մահմեդական դավանանքի բոլոր ժողովուրդներին օր ու գիշեր զինվել ռուսների դեմ և սպառնում չհնազանդվողներին բաժանել իրենց կանանցից (Бутков 1869, 230):

Այս շրջանի փաստաթղթերի ուսումնասիրությունից կարող ենք ենթադրել, որ թուրքերը դժգոհ էին լեռնականների գործողություններից: Բաթալ փաշայի պարտությունից հետո Էրզրումի և Տրապիզոնի նահանգապետ նշանակված Աբդուլլահ փաշայի մեծ վեզիրին ուղղված 1791 թ. սկզբի զեկուցագրում ասվում է. «Ո՛չ չերքեզներով, ո՛չ էլ մյուս ցեղերով չպետք է հպարտանալ: Սրանք մարդիկ են, որոնք մտածում են միայն իրենց շահի մասին: Նրանք ընդունակ են ցրվել՝ թալանելով ամեն ինչ, եթե տեսնում են, որ օսմանյան ուժերը կարող են պարտություն կրել (Беннигсен 1994, 78–79)»:

1787-1791 թթ. ռազմական գործողություններում ևս Օսմանյան կայսրությունը պարտվեց: Չհաշտվելով պարտության հետ՝ սուլթանական Թուրքիայի իշխող շրջանակները դեռևս ակնկալում էին հաշվեհարդար տեսնել և հասնել ուժերի վերադասավորվածության: 1793 թվականին թուրքերը փորձեցին վրեժխնդիր լինել և Սելիմ III-ի ֆերմանով Կաբարդա ուղարկեցին թուրք դերվիշ Ֆրիզ օղլուին: Ֆերմանում կաբարդացիներին և դաղստանցիներին կոչ էր արվում պատրաստ լինել Ռուսաստանի հետ նոր պատերազմի: Սուլթանը հավաստիացնում էր նաև, որ իր զորքը ռազմական գործին վարժվում է ռուսների օրինակով (Бутков 1869, 266):

1798 թ. փետրվարի սկզբին սուլթանը հարուստ նվերներով Արևելյան Կովկաս է ուղարկում Կարսի փաշային: Վերջինս տեղի տիրակալներին է փոխանցում, որ շուտով Օսմանյան կայսրությունը պատերազմելու է ռուսների հետ և կոչ է անում նույնակրոն եղբայրներին ռուսական զորքերի՝ Դաղստանի տարածքով տեղաշարժվելու դեպքում ոչ միայն միահամուռ ուժերով խոչընդոտել զորքի տեղաշարժը, այլև տիրանալ սահմանային կետերին, որոնք ռուսները խլել են իրենց նախնիներից: Սուլթանը խոստանում էր իր հերթին օգնել լեռնականներին: Նշվում է, որ դաղստանյան կառավարիչները տվել են իրենց գրավոր համաձայնությունը (Гаджиев 1988, 244):

Այդուհանդերձ, սուլթանական Թուրքիայի ջանքերը ապարդյուն էին: XVIII դարի վերջերին ուժերի դասավորվածությունը լիովին որոշված էր: Օսմանյան կայսրության և Իրանի հետ պատերազմների հետևանքով Ռուսաստանը ամրապնդել էր իր դիրքերը տարածաշրջանում:

Օսմանյան Թուրքիայի քաղաքական պայքարը XIX դարի առաջին քառորդին

XIX դարում Օսմանյան կայսրությունը շարունակում է իր Կովկասյան քաղաքականությունը, այն է՝ հակառուսական քարոզներ, լեռնականներին զենքի

մատակարարում, տեղական կառավարիչներին գումարով և նվերներով սիրաշահում, ինչպես նաև սրբազան պատերազմի կրոնական կոչեր: Ռուս-թուրքական նոր պատերազմին ընդառաջ սուլթանի գործակալների գործունեությունը նորից ակտիվանում է: Թուրքական կառավարությունը մեծ ջանքեր է գործադրում առաջիկա պատերազմում Կովկասի ժողովուրդներին իր կողմը գրավելու և դրանով՝ ռուսներին հակազդելու նպատակով անհրաժեշտ ուժեր հայթայթելու համար: «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» հավաքածուի մեջ տպագրված մի շարք օսմաներեն հրովարտակների հաղորդած տվյալների քննությունն առավել ակնհայտ է դարձնում Օսմանյան կայսրության վարած քաղաքականությունն Արևելյան Կովկասում: Անմիջապես պատերազմից առաջ անատոլիական զորքերի հրամանատար Յուսուֆ Զիյա փաշայի արձակած ուղերձում մասնավորապես նշվում էր, որ «ռուս գյավուրները նպատակ են հետապնդում քանդել իսլամը և մահմեդականներին միմյանց դեմ հանել»: Կոչ էր արվում սրբազան պատերազմի դուրս գալ ունեցվածքով և կյանքով՝ խոստանալով մեծ պարգևատրում (Берже 1869, 527):

1806 թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, որը, սակայն, անհաջող ավարտ ունեցավ Օսմանյան կայսրության համար: Այս պատերազմի ողջ ընթացքում ևս լեռներ թափանցած հետախույզները կոչ էին անում բոլոր մահմեդականներին սրբազան պատերազմի դուրս գալ: Զգալով մոտալուտ պարտությունը՝ սուլթան Մահմուդը II-ը (1808–1839) 1812 թ. ֆերման է ուղարկում Դերբենդի, Շիրվանի, Դաղստանի տիրակալներին՝ նշելով, որ «Օսմանյան կայսրության, ազգի և կրոնի թշնամիներ մոսկովյան գյավուրների դեմ սրբազան պատերազմը բոլոր մահմեդական ժողովուրդների համար այլևս անհրաժեշտություն է դարձել»: Կոչ էր անում կրոնին հավատարիմ խաներին և էմիրներին հավաքել իրենց ենթակա ցեղերին և ժողովուրդներին ու միահամուռ ուժերով հարձակվել այդ գյավուրների վրա, ավերել նրանց բնակավայրերը, կողոպտել, իսկ ընտանիքները գերի վերցնել՝ խոստանալով առավել հերոսացածներին մեծ պարգևատրում տալ և դրախտ գտնել հաջորդ կյանքում (Берже 1873, 605–606):

Չնայած այս ամենին՝ 1812 թ. մայիսի 5-ին Ռուսաստանը Բուխարեստի պայմանագրով ձևակերպեց իր հաղթանակը Թուրքիայի նկատմամբ, իսկ մեկ տարի անց՝ 1813 թ. նոյեմբերի 24-ին ստորագրվեց Գյուլիստանի պայմանագիրը, ըստ որի՝ շահական Իրանը հրաժարվում էր Վրաստանի, Դաղստանի նկատմամբ ունեցած պահանջներից և ճանաչում Ռուսաստանի տիրապետությունը դրանց նկատմամբ:

Օսմանյան կայսրության և Իրանի հետ խաղաղության պայմանագրերը օրինականորեն ամրագրեցին Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև այսրկովկասյան խանությունների մեծ մասը՝ Բաքվի, Ղարաբաղի, Շիրվանի, Դերբենդի ու Թալիշի և Հյուսիսային Կովկասի լեռնային համայնքները:

Չնայած նրան, որ Դաղստանը մտել էր Ռուսաստանի կազմի մեջ, այնուամենայնիվ, Օսմանյան կայսրությունը շարունակում էր այն համարել իրենը:

Օսմանյան արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կովկասցիների կապը Թուրքիայի հետ շարունակվում էր: Այդ մասին է վկայում արքունիքի գլխավոր հաշվապահությունում առկա 1813 թվականով թվագրվող մի փաստաթուղթ առ այն, որ հրամայվում էր Դաղստանից ժամանած դեսպաններին 2182 քուրուշի չափով գումար տրամադրել՝ նրանց ծախսերը փոխհատուցելու նպատակով (Binark 1992, 47):

Արխիվային նույն հավաքածուում հանդիպում ենք նմանատիպ մեկ այլ վավերագրի, ըստ որի, Շուշիի և Շիրվանի խանությունից ժամանած դեսպաններին սուլթանի հրամանով դեֆթերդարը պարտավորվում էր 500-ական քուրուշ տրամադրել հաշվապահությունից (Binark 1992, 46):

Եզրակացություններ

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ դարեր շարունակ Կովկասն ընդհանրապես և Արևելյան Կովկասը, մասնավորապես, եղել են Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական շահերի գոտի: Չնայած մի շարք պայմանագրերին՝ Թուրքիան մտադիր չէր հրաժարվել նրա նկատմամբ իր դարավոր հավակնություններից: Արխիվային տարբեր հավաքածուներում զետեղված փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ օսմանյան քաղաքականության ձևերն ու մեթոդները Արևելյան Կովկասում XVIII դարի երկրորդ կեսին – XIX դարի սկզբին շարունակում էին մնալ նույնը: Տարբեր տեսակի դերվիշների, մոլլաների քողի տակ այստեղ էին ուղարկվում բազմաթիվ գործակալներ, որոնք թուրքական քաղաքականության իրականացնողներն էին տեղում: Վերջիններս, որտեղ խոստումներով, որտեղ կաշառքով, որտեղ կրոնական քարոզչությամբ, փորձում էին բնակչությանը «սրբազան պատերազմի մղել անհավատների դեմ»: Սակայն թուրքերի ակնկալիքները, կապված լեռնականների հետ, այդպես էլ չիրականացան: Ռուսաստանի հետ պատերազմի նախապատրաստվելիս և պատերազմի ողջ ընթացքում Օսմանյան կայսրությունն արեց ամեն ինչ Արևելյան Կովկասում հակառուսական ցույցեր կազմակերպելու և լեռնականներից զորք ստեղծելու համար: Օսմանցիների գրավոր կոչերը տարածաշրջանում աջակցություն չէին ստանում: Օսմանյան կայսրությանն այդպես էլ չհաջողվեց Կովկասի մահմեդականներին պայքարի հրահրել: Պետք է նշել, որ ո՛չ թուրք սուլթանի առատաձեռն նվերները, ո՛չ էլ այսրկովկասյան խաներին տված խոստումները մեծ հաջողություն չեն ունեցել, թեև նրանց մեծ մասը թուրքամետ էր: Այսրկովկասյան խաներն ու դաղստանյան տիրակալներն էլ իրենց իշխանությունը պահպանելու համար վարում էին այսպես կոչված խուսանավելու քաղաքականություն և լիարժեք ցույց չէին տալիս իրենց կողմնորոշումը: Նրանք թուրքերից ընդունում էին գումարը, զենքն ու սուլթանական թանկարժեք նվերները, սակայն հարկ եղած դեպքում հավատարմության խոստում տալիս ռուսներին: Հաճախ կովկասյան կառավարիչներն հենց իրենք էին սուլթանական հրովարտակների բնօրինակները հանձնում ռուսական հրամանատարությանը:

Շնորհակալական

Սույն ուսումնասիրության ընթացքում կարևոր խորհուրդների և օժանդակ գրականություն տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Արևելագիտության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ք. Կոստիկյանին:

Գրականություն/References/Литература

1. Հակոբյան Վ. 2021, Երևանի խանության ԺԸ դարի երկրորդ կեսի պատմության հարցերն ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի, Երևան, Մատենադարան:
   Hakobyan V. 2021, The Issues of History of Yerevan Khanate in the Second Half of the XVIII Century According to the Persian Documentaries of Matenadaran Yerevan, Matenadaran (in Armenian).
2. Մխիթարյան Գ. 2018, Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին, Երևան, «Գիտություն»:
   Mkhitaryan G. 2018, The Administrative and Political Formations in Transcaucasia in the Second Half of the 18th Century, Yerevan, Gitutyun (in Armenian).
3. Սաֆրաստյան Ա. 1961, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Safrastyan A. 1961, Turkish Sources about Armenia, Armenians and Other Peoples of Transcaucasia A, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
4. Беннигсен А. 1994, Народное движение на Кавказе в XVIII в. («Священная война» Шейха Мансура 1785–1791 гг. Малоизвестный период и соперничество в русско-турецких отношениях), Махачкала, Типография Дагестанского научного центра РАН.

   Bennigsen A. 1994, The Popular Movement in the Caucasus in the 18th Century ("The Holy War" of Sheikh Mansur 1785–1791. A Little-known Period and Rivalry in Russian-Turkish relations), Makhachkala, Printing House of the Dagestan Scientific Center of the Russian Academy of Sciences (in Russian).
5. Берже А. 1869, Акты, собранные Кавказской археографической комиссией III, Тифлис, Типография Главного Управления Наместника Кавказского.
   Berge A. 1869, Acts Collected by the Caucasian Archaeographic Commission III, Tbilisi, Printing House of the Main Administration of the Viceroy of the Caucasus (in Russian).
6. Берже А. 1873, Акты, собранные Кавказской археографической комиссией V, Тифлис, Типография Главного Управления Наместника Кавказского.
   Berge A. 1873, Acts Collected by the Caucasian Archaeographic Commission V, Tbilisi, Printing House of the Main Administration of the Viceroy of the Caucasus (in Russian).
7. Бутков П. 1869, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., II, Санкт-Петербург, Типография Императорской Академии наук.
   Butkov P. 1869, Materials for the New History of the Caucasus from 1722 to 1803, II, St. Petersburg, Printing House of the Imperial Academy of Sciences (in Russian).

8. Гаджиев В. 1988, Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в., сборник документов, Москва, «Наука».
Gadzhiev V. 1988, Russian-Dagestan Relations in the 18th – Early 19th Centuries, Collection of documents, Moscow, Nauka (in Russian).

9. Маркова О. 1966, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, «Наука».
Markova O. 1966, Russia, Transcaucasia and International Relations in the 18th Century, Moscow, Nauka (in Russian).

10. РГАДА, разряд XXIII. Кавказские дела, оп. 1–3, д. 9, ч. 2.
RSAAA, category XXIII. Caucasian affairs, inv. 1–3, d. 9, part 2 (in Russian).

11. РГАДА, разряд XXIII. Кавказские дела, оп. 1–4, д. 13, ч. 4, 10.
RSAAA, category XXIII. Caucasian affairs, inv. 1–4, d. 13, part 4, 10 (in Russian).

12. РГАДА, разряд XXIII. Кавказские дела, оп. 1–5, д. 13, ч. 14, 17.
RSAAA, category XXIII. Caucasian affairs, inv. 1–5, d. 13, part 14, 17 (in Russian).

13. Смирнов Н. 1958, Политика России на Кавказе в XVI–XIX в., Москва, изд. социально-экономической литературы.
Smirnov N. 1958, Russia's Policy in the Caucasus in the 16th–19th Centuries, Moscow, Publishing House of Social and Economic Literature (in Russian).

14. Binark İ. 1992, Osmanli Devleti ile Kafkasya,Türkistan, ve Kirim hanliklari arasindaki münasebetlere dair arşiv belgeleri (1687–1908 yillari arasi) I, Ankara, "Başbakanlik Devlet Arşivleri".
Binark I. 1992, Archive Documents on Relations Between the Ottoman Empire and the Caucasus, Turkestan, and Crimean Khanates (between the years 1687–1908) I, Ankara, Prime Ministry State Archives (In Turkish).

15. Binark İ. 1993, Osmanli Devleti ile Azerbaycan türk hanliklari arasindaki münasebetlere dair arşiv belgeleri (1575–1918) II, Ankara, "Başbakanlik Devlet Arşivleri".
Binark I. 1993, Archive Documents on Relations Between the Ottoman Empire and the Azerbaijani Turkish Khanates (1575–1918) II, Ankara, Prime Ministry State Archives (In Turkish).

ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ
THE TRADE ROUTES OF THE TRANSCAUCASUS IN THE 10–14TH CENTURIES
ТОРГОВЫЕ ПУТИ ЗАКАВКАЗЬЯ В X–XIV ВЕКАХ

Էլինա Ղազարյան
Elina Ghazaryan
Элина Казарян

Մատենադարան, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստան
The Matenadaran, the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, Armenia
Матенадаран, научно-исследовательский институт древних рукописей имени М. Маштоца, Армения

elinaghazaryan@matenadaran.am

Ներկայացվել է՝ 28.06.2024, գրախոսվել է՝ 28.02.2025, ընդունվել է՝ 18.04.2025
Received: 28.06.2024; Revised: 28.02.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 28.06.2024; рецензировано:28.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-93

Ամփոփում – Ասիական երկրները Եվրոպային կապող տարանցիկ ուղիների համար Այսրկովկասը հանդիսանում է գլխավոր հանգուցակետ: Այդտեղ հատվող առևտրական ճանապարհների նշանակությունը հաճախ փոփոխվում էր՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ պատմական և քաղաքական տարբեր գործոններով: Բագրատունյաց ժամանակաշրջանում արտաքին հարաբերական կայուն դրությունը մեծապես խթանեց Հայաստանի տնտեսական աճը: Իբրև տարանցիկ առևտրի կարևորագույն կենտրոն՝ Բագրատունյաց Հայաստանն առևտրական բանուկ ճանապարհներով կապվում էր Այսրկովկասի, արաբական և բյուզանդական երկրների հետ: Հայաստանի տարածքով անցնում էին միջազգային տարանցիկ առևտրի հիմնական ուղեգծերը, որոնք իրենց ճյուղավորումներով միմյանց էին միանում տարբեր կետերում: Բագրատունյաց ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակություն ունեցող առևտրական ճանապարհների դերը, ինչպես նաև դրանց ուղղություններն էականորեն փոփոխվեցին հաջորդող դարաշրջաններում՝ միջազգային առևտրի զարգացման բնականոն ընթացքը խոչընդոտող նոր իրողությունների ի հայտ գալու հանգամանքով պայմանավորված: Սելջուկյան տիրապետության հաստատման սկզբնական շրջանում զգալիորեն խաթարված միջազգային առևտրի բնականոն հունը վերստին վերականգնվում է հաջորդող՝ մոնղոլական ժամանակաշրջանում: Եվ, չնայած, պատմական տվյալ ժամանակաշրջանում առևտրի զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմաններին, տեղի է ունենում առևտրական տարանցիկ ճանապարհների տեղափոխություն հյուսիսից հարավ: X-XIV դարերում Այսրկովկասում խաչաձևվող առևտրական ուղիների, դրանց ճյուղավորումների, ինչպես նաև այդ ճանապարհների տարանցիկ կենտրոնների համապարփակ հետազոտման

տեսանկյունից օտար աղբյուրների շարքում բարձր արժեք ունեն պարսկերեն աղբյուրները: Պարսկերեն պատմաաշխարհագրական երկերի և ուղեգրությունների քննությամբ բացահայտվում են արծարծվող թեմային առնչվող հետաքրքրական մանրամասներ նշված պատմական ժամանակահատվածն ընդգրկող շրջանում:

Abstract – The Transcaucasus has served as a significant crossroads for trade routes, connecting Asian countries to Europe. The strategic importance of this region's trade routes has fluctuated over time due to various historical and political factors prevalent during specific eras. During the Bagratid period, characterized by relative external environmental stability, Armenia experienced economic growth. As an important center of transit trade, Bagratid Armenia was connected by busy trade routes with Transcaucasia, Arab, and Byzantine countries. However, as new geopolitical dynamics emerged, the role and direction of these trade routes underwent significant transformations, impeding the smooth progression of international trade. The disruption of international trade during the initial period of Seljuk rule was significant, but was subsequently restored during the Mongol period. Despite the favourable conditions that were created for the normal development of trade during this period, there was a shift in trade transit routes from north to south. From the perspective of a comprehensive study of the trade routes that crossed Transcaucasia in the 10th–14th centuries, including the branches and the transit centres of these routes, Persian sources are of great value among the foreign sources. The examination of Persian historical-geographical works and travelogues reveals interesting details related to the topic under discussion, covering the mentioned historical period.

Аннотация – Регион Закавказья является основным узлом транзитных дорог, соединяющих страны Азии с Европой. Значение торговых путей, пересекающих этот регион, а также их направления претерпевали изменения в силу исторических и политических факторов, характерных для данного периода. Относительно стабильная внешняя ситуация в период правления Багратидов в значительной степени способствовала экономическому росту Армении. Являясь важным центром транзитной торговли, Армения при Багратидах была связана с Закавказьем, арабскими и византийскими странами благодаря оживленным торговым путям. Через территорию Армении проходили основные пути международной транзитной торговли, которые разветвлялись и соединялись между собой в различных пунктах. Роль этих путей, имевших первостепенное значение в период Багратидов, а также их направления существенно менялись в последующие эпохи из-за возникновения новых реалий, препятствовавших нормальному ходу развития международной торговли. Нормальный ход международной торговли, существенно нарушенный в начальный период установления правления Сельджуков, был восстановлен в последующий монгольский период. Несмотря на благоприятные условия, создавшиеся для нормального развития торговли в этот период, происходит смещение торговых транзитных путей с севера на юг. В контексте исследования торговых путей, проходивших через Закавказье в X–XIV веках, их ответвлений и транзитных пунктов особую ценность представляют персидские источники. Изучение персидских историко-географических трудов и книг путешествий выявляет интересные подробности, связанные с обсуждаемой темой.

Հիմնաբառեր – Այսրկովկաս, առևտրաուղի, ուղեգրություն, Իլխանություն, Ղազվինի:

Keywords – Transcaucasia, Trade Route, Travelogue, Ilkhanate, Qazwīn.
Ключевые слова – Закавказье, торговый путь, книга путешествий, Ильханат, Казвини.

Ներածություն

Այսրկովկասը հնուց ի վեր եղել է առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետ: Այստեղ խաչաձևվում էին ասիական երկրները Ռուսաստանին և Եվրոպային կապող միջազգային տարանցիկ ուղիները, որոնց նշանակությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում փոփոխվում էր՝ պայմանավորված տարածաշրջանում իրենց տիրապետությունը հաստատած պետական տարբեր կազմավորումների վարած քաղաքական, ռազմական, տնտեսական գործունեությամբ:

Այսրկովկասում հատվող առևտրական ուղիների, տարանցիկ հանգրվանների, դրանց միջև ընկած հեռավորությունների վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել X–XIV դարերի պարսկերեն աղբյուրներում, որոնք հայագիտության մեջ մինչ օրս բավարար չափով լուսաբանված չեն: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում այլ տեսանկյունից դիտարկելու առևտրական ուղիների դերը միջազգային առևտրում: Սույն հոդվածի շրջանակում X–XIV դարերի պարսկերեն պատմաաշխարհագրական աշխատությունների, ուղեգրությունների, ինչպես նաև ժամանակակից այլ աղբյուրների տվյալների համալիր քննության միջոցով փորձ է արվել ուսումնասիրելու նշված ժամանակաշրջանում Այսրկովկասով անցնող առևտրական ուղիները, ինչպես նաև դիտարկելու դրանց ուղղությունների փոփոխությունները:

Դվին-Պարտավ, Պարտավ-Թիֆլիս առևտրաուղիների նշանակությունը Բագրատունյաց ժամանակաշրջանում

Արաբական խալիֆայության աստիճանական թուլացման հետևանքով տարածաշրջանում հաստատված քաղաքական հարաբերական կայուն դրությունը զգալիորեն խթանեց միջազգային տարանցիկ առևտրի զարգացումը: Արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող շրջադարձային փոփոխությունները ձեռնտու էին հատկապես Բագրատունյաց Հայաստանի համար, որը փաստացի վերածվել էր միմյանց հետ պատերազմող Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև տարանցիկ առևտրի կարևոր կենտրոնի (Մանանդյան 1977, 174): Բագրատունյաց ժամանակաշրջանում Հայաստանի և նրա քաղաքների առևտրական կապերը հարևան երկրների հետ բավական ամուր էին և աշխույժ: Հայաստանն Այսրկովկասի, արաբական և բյուզանդական երկրների հետ կապող մի քանի ճանապարհներ կային: Հայաստանի միջով անցնում էին միջազգային տարանցիկ առևտրի երկու գլխավոր ուղեգծերը՝ հյուսիսային և հարավային: Այդ ճանապարհներն իրենց հերթին ունեին ճյուղավորումներ և մի շարք ճանապարհներով իրար էին միանում տարբեր կետերում (Առաքելյան 1964, 32):

X դարում առևտրական առաջնակարգ նշանակություն ուներ Բագրատունյաց Հայաստանն Այսրկովկասի արևելյան հատվածին միացնող Դվին-Պարտավ

ճանապարհը, որով առևտրական քարավանները Դերբենդի վրայով ուղևորվում էին դեպի Վոլգայի ափերը, իսկ Պարտավից դեպի հարավ-արևելք՝ Արդաբիլի վրայով ճանապարհը տանում էր Իրան, Միջին Ասիա և Չինաստան (Առաքելյան 1964, 32): Թե՛ Դվինը, թե՛ Պարտավը, իբրև առևտրական ճանապարհների խոշոր հանգուցակետեր, առևտրատնտեսական կարևոր նշանակություն ունեին գլխավորապես արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Այս հանգամանքով պայմանավորված՝ Դվին-Պարտավ ճանապարհը հիշատակված է միայն Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում (Մանանդյան 1984, 192): Դվին-Պարտավ ճանապարհի համակողմանի քննության համար բարձր արժեք ունեն հատկապես արաբ աշխարհագրագետների հիշատակությունները, որոնք ընդհանուր առմամբ համընկնում են ինչպես տարանցիկ կայանների, այնպես էլ դրանց միջանկյալ հեռավորությունների կապակցությամբ հաղորդվող թվական տվյալների առումով (Մանանդյան 1984, 192–193; Տեր-Ղևոնդյան 2005, 577, 638):

Դվին-Պարտավ մայրուղու երկու հիմնական ուղղություն է հայտնի (Հարությունյան 1968, 212–220; Ժամկոչյան 2005, 39–46): Դվինից Սևանի ավազանով դեպի Պարտավ ձգվող ճանապարհի հանգամանալից քննություն է կատարել Հակոբ Մանանդյանը, որը, հենվելով հայկական և արաբական աղբյուրների վրա, ներկայացրել է տվյալ ճանապարհի հիմնական ուղղությունները՝ հստակեցնելով տարանցիկ հանգրվանների անուններն ու դրանց տեղադրությունը (Մանանդյան 1936, 175–204; Մանանդյան 1984, 192–213; Ժամկոչյան 2005, 39; Եղիազարյան 2010, 107–113): Հիմք ընդունելով Հ. Մանանդյանի ուսումնասիրությունը Դվին-Պարտավ ճանապարհի առնչությամբ՝ կարող ենք արձանագրել, որ հիշյալ առևտրաուղին, որի համար Դվինը հանդիսանում էր ելակետ, Սիսականով ձգվում էր դեպի Գեղարքունիք, ապա Սևանա լճի ավազանով շարունակվում մինչև Սոդք: Այնուհետև ճանապարհը, ձգվելով Թարթառ գետի երկայնքով, միանում էր Հաթերքում մյուս ուղղությամբ հասնող ճանապարհին, ապա շարունակվում էր մինչև Կաղանկատույք, իսկ այնտեղից էլ՝ Պարտավ:

Դվին-Պարտավ ճանապարհը, ըստ էության, առևտրատնտեսական կարևոր նշանակություն ունեցող երկու քաղաքները միմյանց կապող օղակ էր: X դարում վերոնշյալ քաղաքները հայտնի էին սեփական արտադրանքով, որոնց վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել նաև օտար աղբյուրներում: X դարի անանուն հեղինակի «Հոդուդ ալ-ալամ» (Աշխարհի սահմանները) պարսկերեն աշխարհագրական երկում Դվինը հիշատակվում է որպես խոշոր և հարուստ քաղաք, որը հայտնի էր որդան կարմիր ներկի և գոտիների (շալվարբանդ) արտադրությամբ (حدود و العالم،۱۳۴۰،۱۵۹): Նույն աշխատության մեջ նմանօրինակ բնութագրի ենք հանդիպում նաև Պարտավի վերաբերյալ (حدود و العالم ۱۳۴۰،۱۶۱): Վերջինս բնութագրվում է իբրև մեծ և բարեբեր քաղաք՝ հայտնի իր մեծաքանակ մետաքսի, ընտիր ջորիների և ներկարարական բույսերի արտադրությամբ (حدود و العالم ۱۳۴۰،۱۶۱):

Դվին և Պարտավ քաղաքների կապակցությամբ հիշյալ պարսկերեն աշխարհագրական երկից մեջբերված տեղեկությունները հետաքրքիր է զուգադրել նույն ժամանակաշրջանի արաբական աշխարհագրական երկերի հաղորդումների հետ: Այս համատեքստում հիշարժան են արաբ հեղինակների վկայությունները Պարտավ քաղաքի հայտնի կիրակնօրյա տոնավաճառների վերաբերյալ, որտեղ մեծ պահանջարկ ունեցող ապրանքատեսակների ցանկում հիշատակվում են նաև հայկական արտադրության որդան կարմիրը, Վանա տառեխ ձկնատեսակը, ինչպես նաև հայկական այլ արտադրանքներ (Նալբանդյան 1965, 35): Այս տեղեկություններն արժեքավոր են այն տեսակետից, որ վկայում են դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանի և Այսրկովկասի արևելյան շրջանի միջև կատարվող աշխույժ առևտրի մասին (Манандян 1954, 218)՝ ընդգծելով դրանում նաև Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի դերակատարումը:

Պարտավ քաղաքն իր հերթին ելման կետ էր տարածաշրջանով անցնող Պարտավ-Տփղիս (Թիֆլիս), Պարտավ-Բաբ-ալ-Աբվաբ (Դարբանդ) առևտրական ուղիների համար, որոնք իրենց նշանակությունը մասամբ պահպանեցին նաև հետագա դարերում: Ստորև կանդրադառնանք Պարտավից հյուսիս-արևմուտք՝ դեպի Թիֆլիս ձգվող ճանապարհին (տվյալ ճանապարհի մասին տես մանրամասն՝ Եղիազարյան 2010, 96–101), որն անցնում էր Գանձակ քաղաքով: Առևտրական այս ուղու հնագույն նկարագրություններից մեկը պահպանվել է «Հոդուդ ալ-ալամ» երկում (حدود و العالم ١٣٤٠، ١٦٢- ١٦١): Նշված աշխատության մեջ Պարտավ-Թիֆլիս ճանապարհի նկարագրությունն ուղեչափական բնույթ չունի: Այդտեղ նշվում են միայն Պարտավից Թիֆլիս ձգվող ճանապարհի գլխավոր տարանցիկ հանգրվանները՝ իրենց ընդհանուր բնութագրով (حدود و العالم ١٣٤٠، ١٦٢- ١٦١): «Հոդուդ-ալ-ալամ»-ում որպես Պարտավ-Թիֆլիս ճանապարհի միջանկյալ կայաններ են հիշատակվում Գանձակը և Շամքորը՝ երկուսն էլ բնորոշվելով որպես շեն և բարեբեր քաղաքներ, Խունանը (Հունարակերտ)՝ որպես Կուր գետի ափին տեղակայված շրջան, և Կալան՝ իբրև Հայաստանի և Առանի սահմանին գտնվող ամրոց (حدود و العالم ١٣٤٠، ١٦٢- ١٦١; Եղիազարյան 2005, 154): Պարտավ-Թիֆլիս ճանապարհի վերոմեջբերյալ նկարագրությունը, ըստ էության, համապատասխանում է նույն ժամանակաշրջանի արաբական աղբյուրներում հանդիպող նկարագրություններին: Ըստ X դարի արաբ աշխարհագրագետ Իբն Հաուկալի՝ «Պարտավից մի ճանապարհ գնում է Տփղիս, և այդ ճանապարհի վրա են Գանձակը (Ջանզա), Շամխորը, Խունանը և ալ-Կալաան» (Տեր-Ղևոնդյան 2005, 622): Մեջբերված հարանման նկարագրությունները հիմք ընդունելով՝ կարելի է եզրակացնել, որ Պարտավ-Թիֆլիս ճանապարհն ուներ հետևյալ հիմնական ուղեգիծը՝ ճանապարհը սկիզբ էր առնում Պարտավ քաղաքից, անցնում էր Գանձակ և Շամքոր քաղաքներով, ձգվում էր մինչև Խունան: Այդտեղից շարունակվում էր մինչև Կալա (արաբական աղբյուրներում հիշատակվում է «Կալա իբն Քանդաման» ձևով, թարգմանաբար՝ Քանդամանի որդու ամրոց (Եղիազարյան 2010, 100)): Ճանապարհի վերջնակետն էր Թիֆլիսը:

X դարում Պարտավ-Թիֆլիս ճանապարհի կարևորության վերաբերյալ որոշ դատողություններ կարելի է անել դրա տարանցիկ կայանների տնտեսական զարգացածության հիման վրա: Անհերքելի փաստ է, որ բոլոր ժամանակներում զարգացման ավելի մեծ հեռանկար ունեին գերազանցապես այն քաղաքները, որոնք առևտրական բանուկ ճանապարհների վրա էին (Առաքելյան 1958, 127–128): Այս համատեքստում հետաքրքիր է դիտարկել Գանձակ քաղաքի օրինակը, որը Պարտավ-Թիֆլիս ճանապարհի հիմնական հանգրվաններից էր: Հայտնի է, որ Գանձակը բավական կարճ ժամանակաընթացքում դարձել է տարածաշրջանի ամենաբազմամարդ և վաճառաշահ քաղաքներից մեկը՝ գերազանցելով անգամ Պարտավին (Առաքելյան 1958, 116; Կարապետյան 2004, 19): Վաղ միջնադարյան օտարալեզու աղբյուրներում Գանձակը հիշատակվում է որպես Պարտավ-Թիֆլիս ճանապարհին ընկած բարեբեր և բարգավաճ քաղաք, որը միջազգային տարանցիկ առևտրին մասնակցում էր սեփական արտադրանքով, որոնցից հիմնականում մատնանշվում է բրդե գործվածքների արտադրությունը (حدود و العالم ۱۳۴۰،۱۶۱; Бартольд 1965, 405): Կարելի է եզրակացնել ուրեմն, որ Գանձակի աճին ու զարգացմանը նպաստել են նախևառաջ նրա աշխարհագրական դիրքը և առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետ լինելու հանգամանքը:

Ամփոփում – Հայ եկեղեցու ծիսական կարևոր արարողակարգերից մեկն է Կաթողիկոսական ձեռնադրությունը և օծումը: Այն դարերի ընթացքում անցել է զարգացման տարբեր շրջափուլեր: Սույն ծիսակարգի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան «Մաշտոց» ծիսամատյաններում: Այս ծիսամատյանը բովանդակող ձեռագրերի քննության շնորհիվ հոդվածում լուսաբանվել են առանցքային ու կարևոր որոշ հարցերի պատասխաններ, այդ թվում՝ կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգի փոփոխություններն ու բարեփոխումները: «Մաշտոց» ծիսարանների ուսումնասիրությամբ քննվել են նաև կաթողիկոսական օծման ծիսակարգն ու ծիսամատյաններ օծման մուտք գործելու հնարավոր ժամանակը, բացահայտվել այն հեղինակները, որոնք խմբագրել և բարեփոխել են կաթողիկոսական ձեռնադրության ու օծման ծեսը: Մատենագրական երկերում հայրապետական ձեռնադրության ծիսակարգի վերաբերյալ առկա հիշատակությունները մինչև XII/XIII դար սակավ են և ծիսական մանրամասն նկարագրություններից զուրկ, այդ պատճառով առանձնահատուկ քննության և լուսաբանման են արժանացել հատկապես ձեռագիր «Մաշտոց» ծիսարանները: Կարևոր է արձանագրել, որ մանրամասն քննության են ենթարկվել մինչ այժմ չուսումնասիրված որոշ ձեռագիր «Մաշտոց» ծիսամատյաններ, որոնք արժեքավոր են խնդրո առարկա նյութի արդունավետ հետազոտության համար: Խնդրո առարկա նյութի հետազոտության արդյունքները կարևոր

նշանակություն ունեն կաթողիկոսական արդի ծեսի հիմքերը վեր հանելու տեսանկյունից: Ձեռագրերի և դրանցում առկա հիշատակարանների քննության արդյունքների հիման վրա կարևոր է մատնանշել, որ Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը զգալիորեն բարեփոխվել և խմբագրվել է Ղազար Ա. Ջահկեցու (1737–1751 թթ.) ջանքերով, և արդի ծիսակարգը հիմնված է վերջինիս կողմից բարեփոխած ձեռագրի վրա:

Abstract – Catholicos ordination and consecration is one of the supreme ceremonial procedures of the Armenian Church. It has gone through various stages of development over centuries. The remarkable information concerning the mentioned ritual exists in the "Mashtots" Ritual Books. As a result of the manuscript examination it becomes obvious that the ritual book gives answers to some key points and covers important questions, including the changes and reforms of the Catholicos ordination ritual. With the help of the "Mashtots" rites, issues on the rite of the Catholicos consecration and the possible time of entry of the consecration into the rites as well as the authors, who edited and reformed the rites of the Catholicosal ordination and consecration, were also examined. In the bibliographic works, the existing references to the rite of the Catholicos ordination until the 12th–13th centuries are few and deprived of detailed ritual descriptions. Therefore, the handwritten "Mashtots" rites deserve special examination and explanation. It is important to note that several previously unstudied manuscript "Mashtots" ritual books have been thoroughly examined, which are valuable for the effective investigation of the subject matter. The findings of the present study hold significant importance for uncovering the foundations of the contemporary Catholicosal rite. Based on the examination of the manuscripts and the commemorative notes contained therein, it is essential to highlight that the ordination rite of the Catholicos underwent substantial revision and editing through the efforts of Catholicos Lazar A Jahketsi (1737–1751), and the modern rite is based on the manuscript reformed by him.

Аннотация – Рукоположение (хиротония) и помазание католикоса является одним из наиважейших церемониальных процедур Армянской церкви. Интересные сведения об этом ритуале находим в книге ритуалов и обрядов «Маштоц». Изучение рукописей, вошедших в эту книгу, дает ответы на ряд ключевых вопросов, в том числе и на вопросы, касающиеся изменений и реформ самого ритуала рукоположения католикоса. Книга содержит сведения о процедуре помазания католикоса, о том, когда хиротония стала обрядом; в ней упомянуты авторы, редактировавшие и реформировавшие обряды хиротонии и помазания католикоса. Поскольку имеющиеся в библиографических трудах упоминания об обряде рукоположения католикоса до XII–XIII вв. весьма скудны, то заслуживают особого рассмотрения и освещения именно рукописные ритуальные книги «Маштоц». Важно отметить, что были подвергнуты детальному изучению некоторые ранее не исследованные ритуальные книги, которые представляют ценность для продуктивного анализа рассматриваемого материала. Полученные результаты имеют важное значение с точки зрения выявления основ современного обряда рукоположения католикоса. На основе анализа рукописей и содержащихся в них помет следует указать, что ритуал рукоположения католикоса был существенно реформирован и отредактирован Лазарем А. Джахкеци (1737–1751 гг.), и современное чинопоследование основано на рукописи, реформированной им.

Հիմնաբառեր – ծիսամատյան, ձեռնադրություն, օծում, Ջահկեցի, ձեռագիր:

Keywords – Ritual Book, Ordination, Consecration, Jahketsi, manuscript.
Ключевые слова – ритуальная книга, рукоположение, помазание, Джахкеци, рукопись.

Ներածություն

Կաթողիկոսական ձեռնադրության ծեսի ընթացակարգի մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել XIV դարից սկսած, քանի որ ամենահին Կաթողիկոսական ձեռնադրության կանոններն արձանագրված են XIV դարի ձեռագիր «Մաշտոց» ծիսարաններում, իսկ մինչև XIV դար եղած մատենագրական երկերում առկա հիշատակությունները կցկտուր են և զուրկ ծիսական ընթացակարգի նկարագրություններից: Մատենագիրներն ամենևին նպատակ չեն հետապնդել նշելու ձեռնադրության ընթացքը, այդ պատճառով «Մաշտոց» ծիսարանները համարվում են բացառիկ սկզբնաղբյուրներ Կաթողիկոսական ձեռնադրության կանոնի քննության համար: XIV դարից մինչև XIX դարի սկիզբ «Մաշտոց» ձեռագրերում արձանագրված է Կաթողիկոսական ձեռնադրության կանոնը: Սույն ծիսակարգի ուսումնասիրության համար քննության են ենթարկվել ինչպես Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (ՄՄ) պահվող ձեռագրեր, այնպես էլ Անթիլիասում, Վենետիկում և այլ վայրերում պահվող ձեռագիր «Մաշտոց» ծիսարաններ: Որպես հիմք է ներկայացվում ամենահին՝ Անթիլիասի Հ՝ 9, այն է՝ Սսի «Մայր Մաշտոցում» (տե՛ս ԱՄ ձեռ. Հ՝ 9, «Սսոյ Մայր Մաշտոց», 1311, 40ա-141ա) առկա ձեռնադրության կանոնը: Պետք է նշել, որ հընթացս մեր ուսումնասիրության, 1311-ից առաջ թվագրվող այս ձեռագիր «Մաշտոցից» հետո ժամանակագրական առումով նկատի ենք ունեցել հաջորդաբար գրված հին ձեռագրեր՝ Վենետիկում պահվող՝ 1345 թ. Հ՝ 1173 (տե՛ս ՎՄ ձեռ. Հ՝ 1173, 1345, 389բ-400բ) և 1364 թ.-ի Հ՝ 960 (տե՛ս ՎՄ ձեռ. Հ՝ 960, 1364, 31բ-47բ) «Մաշտոցները»: Այս ձեռագրերն իրենց հնությամբ դարձյալ կարևոր տեղ են զբաղեցնում խնդրո առարկա նյութի շրջանակում, սակայն կաթողիկոսական ձեռնադրության ծիսակատարման և բովանդակային առումով դրանք կրկնությունն են ամենահին ձեռագրի՝ Սսի Մայր Մաշտոցի: Բացի վերոհիշյալ ձեռագրերից, ծիսաաստվածաբանական տեսանկյունից քննության ենք առել Երևանի Մատենադարանում պահվող, 1461 թ. Էջմիածնում գրված ձեռ. Հ՝ 4997 «Հայրապետական Մաշտոցը» (տե՛ս ՄՄ ձեռ. Հ՝ 4997, 1461, 50բ-74բ) և 1738 թ. Ղազար Ա. Ջահկեցու (1737–1751 թթ.) պատվերով Էջմիածնում գրված, բովանդակային առումով նախորդ ձեռագրերից բավականին տարբերվող, խմբագրված և բարեփոխված Հ՝ 1221 և Հ՝ 1226 «Մաշտոց» ձեռագրերը (տե՛ս ՄՄ ձեռ. Հ՝ 1221, 1738, 7ա-21ա, ՄՄ ձեռ. Հ՝ 1226, 1738, 4ա-18ա: Այս երկու «Ձեռնադրության Մաշտոցները», ըստ Հ՝ 1226 ձեռագրի հիշատակարանի հաղորդած տվյալների, բացառապես նույնն են, տե՛ս ձեռ. Հ՝ 1226, 81բ: Պատվիրատուն Ղազար Ա. Ջահկեցի կաթողիկոսն է (1737–1751), իսկ գրիչը՝ Հովհաննես սարկավագը: Հմմտ. Քյոշկերեան, Սուքիասեան, Քէօսէեան 2004, 769–772, 781–784): Հ՝ 1221 և Հ՝ 1226 ձեռագիր «Մաշտոցները» եկեղեցական մատենագրության և ծիսական աստվածաբանության տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուրներ են, որոնց լուսաբանումը կփորձենք ներկայացնել

ստորև: Կարևոր սկզբնաղբյուրներից են նաև 1779 թ. Էջմիածնում Սիմեոն Ա. Երևանցու (1763–1780 թթ.) պատվերով գրված Հմր 2891 և Հմր 2892 ձեռագրերը (տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 2891, 1779, 3ա-18բ, ՄՄ ձեռ. Հմր 2892, 1779, 5ա-19բ): XIV դարից մինչև 1738 թ. ընկած ժամանակահատվածում ձեռագրերում առկա Կաթողիկոսական ձեռնադրության ծեսը, համեմատած Սսի Հմր 9 և Էջմիածնի Հմր 4997 «Մաշտոցների», նույնաբովանդակ է, օրինակ, հմմտ.՝ ձեռագրեր Հմր 1173 (հմմտ. ՎՄ ձեռ. Հմր 1173, 1345, 389բ-400բ), Հմր 960 (հմմտ. ՎՄ ձեռ. Հմր 960, 1364, 31բ-47բ), Հմր 5702 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 5702, 1471, 150-212), Հմր 1084 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 1084, 1498, 43բ-63ա), Հմր 998 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 998, 1546, 239ա-249ա), Հմր 1043 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 1043, ԺԶ. դար, 53ա-77ա), Հմր 1088 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 1088, 1616, 8ա-38ա), Հմր 953 (հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 953, 1651-1656, 446ա-458ա) և այլն:

Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգն ամենահին ձեռագիր «Մաշտոցում»

Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը տարբեր ձեռագրերում զանազան անվանումներով է հիշատակվում: Օրինակ, ամենահին՝ Հմր 9 «Մաշտոց» ձեռագրում կանոնը կոչվում է «Կանովն կաթողիկոս ձեռնադրելոյ» (տե՛ս ԱՄ ձեռ. Հմր 9, 140 ա), ձեռ. Հմր 4997 «Մաշտոցում»՝ «Կանովն Յորժամ Կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն Հայոց» (տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 4997, 1461, 51ա), Հմր 1221 «Մաշտոցում»՝ «Կանոն Կաթողիկոս Ձեռնադրելոյ» (տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 1221, 1738, 7ա): 1876 թ. տպագիր «Մաշտոցում» կանոնը կոչվում է «Կանոն ձեռնադրութեան եւ օծման Կաթուղիկոսի եւ Հայրապետի Ամենայն Հայոց» (տե՛ս Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթուղիկոսի 1876, 3):

Կաթողիկոսական ձեռնադրության կանոնը բաղկացած է ծիսական ցուցումներից, քարոզներից, աղոթքներից և շարականներից: Անթիլիասում պահվող 1311 թ. գրված Հմր 9 ձեռագրի քննության հիման վրա կատարվել են ծիսակարգի կառուցվածքային բաժանումներ, ըստ այդմ՝ կառուցվածքը հետևյալ տեսքն ունի.

«Կանովն կաթողիկոս ձեռնադրելոյ»

(ծիսակարգի միավորները)

- Կանոնի սկիզբ, Ընտրության կարգ – «*Յորժամ հանդերձեալ լինին... Նախ ընտրել պարտ է...*» (ԱՄ, ձեռ. Հմր 9, 1311, 140 ա):
- Հսկման կարգ – «*Իսկ յետ այսորիկ հսկումն լինիցի...*» (ԱՄ, ձեռ. Հմր 9, 1311, 140 ա):
- Ընծայման կամ հարցատվության կարգ (ինչպես եպիսկոպոսական ձեռնադրության մեջ է՝ ատյանում, պատարագի սկզբում) – «*...խնդրեն յընտրելոյն հարցաքննութեամբ վարուց եւ գործոց նորա...*» (ԱՄ, ձեռ. Հմր 9, 1311, 140բ-141ա):
- Սաղմոս ՁԸ. (բարձրանում են խորան) – «*Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան*» (ԱՄ, ձեռ. Հմր 9, 1311, 141ա):
- Քարոզ – «*Աղաչեցուք զմարդասէրն Աստուած*» (ԱՄ ձեռ. Հմր 9, 1311, 141ա):
- Աղոթք (բանաձև) – «*Աստուածային եւ երկնաւոր շնորհք*» (ԱՄ ձեռ. Հմր 9, 1311, 141բ-142ա):

- Ձեռնադրութեան աղոթք (բանաձև) – *«Ես դնեմ ձեռս ի վերայ…»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 142ա):
- Աղոթք – *«Գոհանամք զքէն Աստուած»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 142 բ):
- Աստվածաշնչյան ընթերցումներ, Սաղմոս, Ավետարան *(Սաղմոս Ճլա (131). «Յիշեա՛, Տէ՛ր, զԴաւիթ.», Ընթերցումներ՝ Յելից ԻԸ. 1–29, Ա Թագ. Բ. 18–21, Բ Թագ. Բ. 3–10, Եզեկիել ԽԴ. 17–21, Եսայի ԿԱ. 6-11, Ա. Պետրոս Բ 1–9, Սաղմ. ՃԺԷ (117). «Խոսփովան եղերուք Տեառն. Զի բարի է», Մատթ. ԺՋ. 13–20)* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 150ա–162բ):
- Քարոզ – *«Աստուած մեծ եւ սքանչելագործ», ըստ ցուցումի, այս քարոզը պետք է երգեն մեկ կամ երկու եպիսկոպոսներ* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 162բ):
- Աղոթք – *«Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 165ա):
- Զգեստավորման կարգ – *«Եւ ապա զգեցուցանեն զգեստ սպիտակ բոլորասփորոտ ի ներքոյ, եւ յաջ, եւ յահեակ կողման ագանելեացն ծիրանի կամ սեաւ…»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 176ա–176բ):
- Գահակալության արարողություն, շարականներ (ձեռնադրության ավարտ) - *«Եւ ապա նստուցանեն յաթոռ եւ առհասարակ ամենեքեան քահանայքն եւ ժողովուրդն համբուրեն զաջն», շարական՝ «Այսաւր ուրախացեալ», «Եւ որք արժանաւորեցայք»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 176բ–177ա):
- Պատարագի սկիզբ – *«Եւ յորժամ սկիզբն առնէ հայրապետն պատարագին»* (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 177ա–177բ):
- Աստվածաշնչյան ընթերցումներ – (Սաղմոս ԻԲ, Ա. Պետրոս, Ե. 1–10, Հովհաննեսի ավետարան ԻԱ. 15-19) (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 178ա–181ա):
- Կանոնի ավարտ, շարական «Այսաւր ուրախացեալ ցնծան», ձեռագրի գրման ժամանակաշրջանի հիշատակարան (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 181ա):

Այսպիսով, Անթիլիասում պահվող Հ^{մր} 9 ամենահին ձեռագրում Կաթողիկոսական ձեռնադրության կանոնը վերոհիշյալ կառուցվածքն ու ծիսական միավորներն է պարունակում:

Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը՝ համեմատությամբ Հ^{մր} 9, Հ^{մր} 4997, Հ^{մր} 1221 «Մաշտոց» ձեռագրերի և 1876 թ. տպագիր «Մաշտոցի»

Ստորև պատկերվող աղյուսակում ներկայացվում է առանցքային նշանակություն ունեցող երեք ձեռագրերում և 1876 թ. տպված «Մաշտոցում» առկա կաթողիկոսական ձեռնադրության կանոնը՝ զուգադիր համեմատական և ծիսաաստվածաբանական քննությամբ: Սույն աղյուսակով ավելի պարզ և ակներև են դառնում ձեռնադրության կարգի նմանություններն ու տարբերությունները, ծիսակարգի զարգացումը և փոփոխությունները:

Աղյուսակ 1

Կաթողիկոսական ձեռնադրության կանոնի միավորները՝ համեմատությամբ 3 հիմք ձեռագրերի (ձեռագիր՝ Հմր 9, Հմր 4997 և Հմր 1221) և 1 տպագիր արդի ծիսակարգի (1876 թ. տպագիր «Մաշտոց»)

Ձեռագիր Հմր 9, Սիս, 1311 թ. առաջ	**Ձեռագիր Հմր 4997, Էջմիածին, 1461 թ.**	**Ձեռագիր Հմր 1221, Էջմիածին, 1738 թ.**	**1876 թ.-ի տպագիր «Մաշտոց», Էջմիածին**
«Կանովն կաթողիկոս ձեռնադրելոյ»	«Կանովն Յորժամ Կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն Հայոց»	«Կանոն Կաթողիկոս ձեռնադրելոյ»	«Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթուղիկոսի եւ հայրապետի ամենայն հայոց»
1. Կանոնի սկիզբ, Ընտրության կարգ (140ա)	1. Կանոնի սկիզբ, Ընտրության կարգ (51ա)	1. Կանոնի սկիզբ, Ընտրության կարգ (7ա)	1. Կանոնի սկիզբ, Ընտրության կարգ (էջ 3)
2. Հսկման կարգ(140ա)	2. Հսկման կարգ (51բ)	2. Հսկման կարգ (7բ)	2. Հսկման կարգ (էջ 3)
3. -	3. -	3. **Ա.** Զգեստավորման կարգ (7բ)	3. **Ա.** Զգեստավորման կարգ (Ա.) (էջ 3)
4. Ընծայման կամ հարցատվության կարգ (սկիզբն պատարագին) (140բ-140ա)	4. Ընծայման կամ հարցատվության կարգ (սկիզբն պատարագին) (51բ)	4. Ընծայման կամ հարցատվության կարգ (սկիզբն պատարագին) (7բ)	4. -
5. -	5. -	5. Ս. Պատարագի արարողություն մինչև «Զի ողորմած» (7բ)	5. Ս. Պատարագի արարողություն մինչև «Զի ողորմած» (էջ 3)
6. Սաղմոս ՁԸ (բարձրանում են խորան) (141 ա)	6. Սաղմոս ՁԸ (բարձրանում են խորան) (52ա)	6. Սաղմոս ՁԸ (8ա)	6. Ուխտագիր «(Այս անուն) ծառայ Քրիստոսի...» (էջ 4)
7. Քարոզ (141ա)	7. Քարոզ (52ա)	7. Քարոզ (8ա)	7. Սաղմոս ՁԸ, Քարոզ (էջ 4)
8. Աղոթք (բանաձև) *«Աստուածային»* (141բ -142ա)	8. Աղոթք (բանաձև) *«Աստուածային»* (52ա)	8. Աղոթք (բանաձև) *«Աստուածային»* (8ա)	8. Աղոթք (բանաձև) *«Աստուածային»* (էջ 4)
9. Ձեռնադրության աղոթք, ձեռք դնել (բանաձև) - *«Ես դնեմ ձեռս ի վերայ...»*(142ա)	9. Ձեռնադրության աղոթք, ձեռք դնել (բանաձև) - *«Ես դնեմ ձեռս ի վերայ...»* (52ա)	9. Ձեռնադրության աղոթք, ձեռք դնել (բանաձև) – *«Մեք դնեմք ձեռս ի վերայ սորա...»* (8բ)	9. Ձեռնադրության աղոթք, ձեռք դնել (բանաձև) - *«Մեք դնեմք ձեռս ի վերայ սորա...»* (էջ 4)
10. Աղոթք (142 բ)	10. Աղոթք (52ա)	10. Աղոթք (8բ)	10. Աղոթք (էջ 4)
11. Աստվածաշնչյան ընթերցումներ, Սաղմոս, Ավետարան (150ա)	11. Աստվածաշնչյան ընթերցումներ, Սաղմոս, Ավետարան (57ա)	11. Աստվածաշնչյան ընթերցումներ, Սաղմոս, Ավետարան (բացակայում է Ա Թագ. գրքի համապատասխան ընթերցումը) (11ա)	11. Աստվածաշնչյան ընթերցումներ, Սաղմոս, Ավետարան (բացակայում է Ա Թագ. գրքի համապատասխան ընթերցումը) (էջ 7)
12. -	12. -	12. «Եւ ասի Հաւատամքն», Պատարագի շարունակություն մինչև «Ողջույն» (15 ա)	12. «Եւ ասի Հաւատամքն», Պատարագի շարունակություն մինչև «Ողջույն» (էջ 10)
13. Քարոզ (162բ), Աղոթք (165ա)	13. Քարոզ (64 ա), Աղոթք (66ա)	13. Քարոզ (15 ա), Աղոթք (16 ա)	13. Քարոզ (էջ 11), Աղոթք (էջ 15)
14. Զգեստավորման կարգ, Հայրապետական քողի և զգեստների տվչություն (176ա)	14. Զգեստավորման կարգ, Հայրապետական քողի և զգեստների տվչություն (71բ)	14. -	14. -

15. -	15. -	15. Կաթողիկոսական օծման կարգ – «Եւ առեալ երկոտասանքն զՇիշ իւղոյն…» (19 բ)	15. Կաթողիկոսական օծման կարգ - «Եւ առեալ երիցագոյն Արհիեպիսկոպոսին ի սրբոյ սեղանոյն զոսկեզօծ աղաւնի…» (էջ 19)
16. -	16. -	16. **Բ.** Զգեստավորման կարգ, Հայրապետական քողի և զգեստների տվչություն - «Եւ արկանեն ոսկեթել քողս ի վերայ գլխոյ Հայրապետին» (20ա)	16. **Բ.** Զգեստավորման կարգ, Հայրապետական քողի և զգեստների տվչություն – «Եւ ապա արկանեն զսպիտակ Հայրապետական Քօղն ոսկեթել ի գլուխ Նորա» (էջ 19)
17. Գահակալության արարողություն, Շարականներ («Այսաւր ուրախացեալ ցնծան») (Ձեռնադրության ավարտ) (176բ)	17. Գահակալության արարողություն, Շարականներ («Այսաւր ուրախացեալ ցնծան») (Ձեռնադրության ավարտ) (72ա)	17. -	17. -
18. Պատարագի սկիզբ – *«Եւ յորժամ սկիզբն առնէ հայրապետն պատարագին»* (177ա)	18. Պատարագի սկիզբ – *«Եւ յորժամ սկիզբն առնէ հայրապետն պատարագին»* (72ա)	18. -	18. -
19. «Առ խրատ Նորակերտ հայրապետին» և հավարտ պատարագի Աստվածաշնչյան ընթերցումներ (178 ա)	19. «Առ խրատ Նորակերտ հայրապետին և հավարտ պատարագի Աստվածաշնչյան ընթերցումներ (73 ա)	19. Շարական («Այսաւր ուրախացեալ ցնծան») Աստվածաշնչյան ընթերցումներ (20ա)	19. Շարական («Այսաւր ուրախացեալ ցնծան») Աստվածաշնչյան ընթերցումներ (էջ 19):
20. Կանոնի ավարտ, Շարական «Այսաւր ուրախացեալ ցնծան», ձեռագրի գրման ժամանակաշրջանի հիշատակարան (178 ա)	20. Կանոնի ավարտ (74 բ)	20. Քարոզ՝ Սուրբ Խաչիւս, Աղոթք՝ Պահպանեա: «Եւ համբուրեն զգագաթ սուրբ Հայրապետին և տան *զողջոյնն*»: Ձեռնադրության ավարտ,Կանոնի ավարտ: «Ողջույնից» շարունակվում է Պատարագը (21 բ)	20. «Եւ ապա համբուրեն զգագաթն Հայրապետին և տան զողջոյնն»: Ձեռնադրության ավարտ, «Ողջույնից» շարունակվում է Պատարագը:
21. -	21. -	21. -	21. Պատարագի ավարտից հետո՝ Շարական՝«Հրաշափառ Աստուած», թափոր: Վեհարանում՝ *Գահակալության արարողություն:* Քարոզ՝ Սուրբ Խաչիւս, Աղոթք՝ Պահպանեա: Կանոնի ավարտ (էջ 21):

Կաթողիկոսական օծման ծիսակարգն ըստ «Մաշտոց» ծիսարանների

Բովանդակային, ծիսաաստվածաբանական և ծիսականոնական տեսանկյունից հետաքրքիր զարգացում է ապրել նաև կաթողիկոսական օծումը: Առաջին «Մաշտոցը», որտեղ բուն ծիսակարգում զետեղված է հայրապետական օծման կարգը, Ղազար Ա. Ջահկեցու պատվիրած 1738 թ. Ճ՝ 1221 և 1226 ձեռագրերն են: Այս «Մաշտոցները», համաձայն հիշատակագրի հաղորդած տվյալների, գրվել

են երկու օրինակով և բովանդակությամբ ընդհանրապես չեն տարբերվում (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^{մր} 1221, 1738, հիշատակարան գրչության ժամանակի, 82ա-83ա): Սսի և հետագա դարաշրջանների ձեռագրերում, մինչև XVIII դարը բացակայում է օծման դրվագը: 1738 և 1779 թթ. ձեռագրերում և 1876 թ. տպագիր «Մաշտոցում» այսպես է ներկայացված կաթողիկոսական օծման ծիսակարգը (աղ. 2).

Աղյուսակ 2

Կաթողիկոսական օծման ծիսակարգ

Ձեռ. Հ^{մր} 1221, Հ^{մր} 1226, Էջմիածին, 1738 թ., Ձեռ. Հ^{մր} 2891, Հ^{մր} 2892, Էջմիածին, 1779 թ.	**1876 թ. տպագիր «Մաշտոց», Էջմիածին**
Եւ առեալ երկոտոսանքն զՇիշ իւղոյն սրբութեան և հեղցեն ի գագաթ նուիրելոյն: Եվ ասեն առաքելոյ աղաւնոյ (ՄՄ Հ^{մր} 2891 և Հ^{մր} 2892 ձեռագրերում այսպես է նշված. «Եւ ասեն Շարական ԴՋ, Առաքելոյ աղաւնոյ իջա..», 16ա, 18ա): Եվ ապա բութիւ իւրեանց նկարեսցեն ի գագաթն խաչանման ասելով. **«Օրհնեսցի օծցի և սրբեսցի զգագաթ *այս անուն*՝ կաթողիկոսիս: Այս նշանաւ սուրբ խաչիւս և սուրբ Աւետարանաւս և սուրբ մեռոնաւս և յաւուրս շնորհիւ անուամբ Հօր և Որդւոյ և այլն»:**	Եւ առեալ երիցագոյն Արհիեպիսկոպոսին ի սրբոյ սեղանոյն զոսկեզօծ աղաւնի սրբալոյս միւռոնի ի ձեռս իւր՝ և բարձրացուցեալ՝ հեղու զմիւռոնն ի գագաթն Նուիրելոյն ասելով Շարական ԴՋ. Առաքելոյ աղաւնոյ և այլն: Դպիրքն.- Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա: Եւ երկոտասան Արքեպիսկոպոսունք ի միասին բոյթ մատամբ իւրեանց նկարելով իմն սրբալոյս Միւռոնաւ ի գագաթանէն և ի վայր՝ կատարեն զօծումն, որպէս զի առնուլ իւղոյն զտարազ ճառագայթածև խաչի: Եւ յօծանելն ասէն., **«Օրհնեսցի օծցի եւ սրբեսցի գագաթն Տէր (այս անուն) Կաթուղիկոսիս, այս նշանաւ սուրբ խաչիս եւ սուրբ Աւետարանաւս, եւ սուրբ Միւռոնաւս, եւ աւուրս շնորհիւ՝ անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»:**

Անթիլիասում պահվող Սսի ձեռ. Հ^{մր} 9-ում Կաթողիկոսական ձեռնադրության կանոնից հետո զետեղված է հայրապետական օծման վերաբերյալ չափածո հիշատակություն: Այդ «Չափածո ծիսակարգը», համաձայն Արտավազդ արք. Սյուրմեյանի (տե՛ս Դանիելեան 1984, 97) և Անուշավան վրդ. Դանիելյանի (տե՛ս Սիւրմէեան 1936, 22) կազմած ձեռագրացուցակների, հետագայի կամ վերջին ժամանակների նոտրգրով գրված հավելում է: «Չափածո ծիսակարգից» մեջբերենք մի հատված, որը զետեղված է կաթողիկոսական ձեռնադրության կանոնից հետո և թագավորական օծման ծիսակարգից առաջ. «Համառօտապես ծանուցանի աստ այսու ոտանաւորաւս, զորպիսութիւն օծման կաթողիկոսին (կարմիրով).

Հնոց սրբոց այս է օրէն, զոր տեսանէք այժմիկ աստէն,
զի երկնային ի լոյս հօրէն, ուսեալք ետուն մեզ համօրէն:
զԿարգ աղօթիցն երբ կատարեն, եպիսկոպոսք որք կանգնեալ են,
զսուրբ միւռոնն առեալ բերեն, եւ զհայրապետն օծանեն:
Նախ զգագաթն արհիական, քարշեն նկար խաչանման,
ի ծոծրակէն մինչեւ ի յունչն, զսահմանեալ զօծումն տան:
Ապա յաջոյ ունկան տակէ, ձախոյն ի տակ գայ հասանէ,
նիշ գեղեցիկ մեզ ցուցանէ, մատն Հոգին Սուրբ որ օծող է:
Այլ եւ զճակատն բոլորեն, իւղով սրբով տպավորեն,

ի յականջէն ի վեր տանեն, եւ ծոծրակէն այնպես հանեն:
Դարձեալ ի ձախ տակէ ունկան, բերեն մինչև յունչին վերան,
յետոյ ասեն զաղօթից բան, որ կայ եպիսկոպոս յօծման:
Կաթողիկոս վերաձայնեն, նաև բութն օծանեն,
ըստ պատշաճին զաղոթն ասեն, զոր ունկնդիրքն քաջ լսեն» (ԱՄ ձեռ. Հ^{մր} 9, 1311, 181բ, հմմտ. Սիւրմէեան 1936, 24–25, Դանիելեան 1984, 97):

Այս ծիսակարգը, ամենայն հավանականությամբ, Սսի «Մաշտոց» է մուծվել հետագայում, երբ անհրաժեշտություն կար ինչ-որ կերպ «Մաշտոցներում» արձանագրել հայրապետական օծման դրվագը: Քանի որ բուն ծեսի մեջ հնարավոր չէր զետեղել, այդ պատճառով, իբրև հավելված, ավելացվել է սույն ձեռագրում: Ցավոք, հայտնի չէ ո՛չ չափածոյի հեղինակի անունը, ո՛չ էլ շարադրման ճշգրիտ թվականը. հիմնվելով Սյուրմեյանի և Դանիելյանի ձեռագրացուցակի տվյալների վրա՝ կարելի է նշել, որ այն ուշ շրջանի հավելում է և, վստահաբար, XIV դարում չի գրվել: Այնուամենայնիվ, հընթացս ուսումնասիրության պարզվել է, որ «Չափածո ծիսակարգի» հեղինակը, ամենայն հավանականությամբ, կարող է լինել Ղազար Ջահկեցու աշակերտ Հովհաննես վարդապետ Ամասիացին, սակայն չի բացառվում, որ հեղինակը նաև Ղազար Ջահկեցին լինի, կամ վերջինիս պատվերով այլ գրիչ կամ ընդհանրապես այլ հեղինակ է, որը քաջածանոթ է եղել «Մաշտոց» ծիսամատյաններին ու կանոններին: Գրելու ժամանակը, կարծում ենք, XVIII դարն է, քանի որ վերոհիշյալ ծիսակարգի մեջբերումը գրված է նոտրգրով, իսկ այն ավելի շատ շրջանառվել է հատկապես այս դարաշրջանում: Սույն գրչության տեսակի վերաբերյալ Հրաչյա Աճառյանը գրում է. «Նոտրագրի մասին, որ նվազ կարևոր և ավելի քիչ ուսումնասիրված է, չենք կարող ավելի հաստատ խոսել: Առհասարակ համարվում է ծագած XIII-XIV դարերում» (Աճառյան 1984, 620): Ծագած լինելով XIII դարում՝ այն սկսել է լայնորեն տարածվել XV դարից հետո, իսկ XIX դարում աստիճանաբար փոխարինվում է շղագրով (տե՛ս Պետրոսյան 1987, 347: Նոտրգիրը սերում է բոլորգրից, մշակվել ու հարմարեցվել է արագագրության համար, հաշվի է առնված նաև տեղի խնայողությունը: Ըստ այդմ էլ՝ տառերը ձեռք են բերել համապատասխան գծագրումներ, կառուցվածքային ու դիրքային հատկանիշներ: Անվանումը սերում է հունական «դպիր, գրագիր» բառից, մանրամասն տե՛ս Պետրոսյան 1987, 347): Հետևաբար նոտրգիրն առավելապես օգտագործվել է XV–XVIII դդ., և չի բացառվում, որ վերոհիշյալ ծիսակարգն այս շրջանում է ավելացվել Սսի թվակիր «Մաշտոցում»: Բացի այդ, գրիչների աչքից դժվար թե վրիպած լիներ կաթողիկոսական օծման կարևոր դրվագը, այլապես ամենահին ձեռագրից արտագրած կլինեին, և մյուս դարերի ձեռագրերում էլ կարտացոլվեր Սսի ձեռագրի մեջ ավելացված օծման կարգը:

Կաթողիկոսական ձեռնադրության կանոնի մեջ, ինչպես նշվեց, մինչև XVIII դար բացակայում է օծման ծեսը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ջահկեցու պատվիրած Հ^{մր} 1221 և Հ^{մր} 1226 ձեռագրերը: Նրա ժամանակ գոյություն ունեցող հայրապետական ձեռնադրության «Մաշտոցները», ինչպես հիշատակագիրն է նշում (ՄՄ ձեռ. Հ^{մր} 1221, 1738, 82ա–83ա), դժվար կիրառելի էին

և միգուցե չէին համապատասխանում իր ժամանակի ծիսակատարման ընթացակարգին: Այդ պատճառով Ջահկեցին, «բառնալով զաւելորդսն եւ լցուցանելով զթերիսն», կարգավորում է «Հայրապետական Մաշտոցները», հատկապես եպիսկոպոսական ձեռնադրության ծեսը: Մյուս բոլոր ձեռագիր «Մաշտոցներում» ակնհայտորեն տարբերվում է նաև կաթողիկոսական ձեռնադրության ծիսական ընթացքը՝ համեմատած Ղազար Ջահկեցու խմբագրած ձեռագրերի հետ: Անկախ այն բանից, թե իրենից առաջ կաթողիկոսներն օծվում էին, թե ոչ, կարող ենք արձանագրել, որ կաթողիկոսական ձեռնադրությունը բարեփոխվել է Ղազար Ջահկեցու աշխատասիրությամբ, ի թիվս այլ փոփոխությունների՝ հայրապետական օծման կարգի հավելումով: Հնարավոր է նաև, որ նրա օրոք է Սսի ձեռ. Հ^{մր} 9 «Մաշտոցում» ավելացվել կաթողիկոսական օծման վերաբերյալ «Չափածո ծիսակարգը»: Այսպիսով, Ջահկեցու խմբագրած վերոհիշյալ ձեռագրերը ծիսական աստվածաբանության տեսանկյունից շատ արժեքավոր են և արդի ծիսակարգի հիմքն են կազմում:

Եզրակացություններ

- Կաթողիկոսական ձեռնադրության կանոնը բովանդակային և ծիսականոնական առումով տարբեր դարաշրջաններում կրել է տարաբնույթ փոփոխություններ, որոնք առավել պատկերավոր երևում են աղյուսակների միջոցով:
- Մեր քննած և համապարփակ կերպով լուսաբանած ամենավաղ Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը հանդիպում է 1311 թ. գրված ձեռ. Հ^{մր} 9 Մաշտոցում:
- Խնդրո առարկա նյութի քննությամբ լուսաբանվեցին նաև կաթողիկոսական օծման վերաբերյալ ձեռագրերում հանդիպող տեղեկություններն ու ծիսակարգի բովանդակությունը:
- 1311 թ. Սսի «Մաշտոցում» ավելացված կաթողիկոսական օծման վերաբերյալ «Չափածո ծիսակարգը» գրված է նոտրգրով, իսկ գրի այդ տեսակի գործածությունը սկսված է XIII–XIV դդ., բայց առավելաբար կիրառվել է հատկապես XV–XVIII դդ.: Հիմնվելով այս և մեր ներկայացրած այլ փաստերի վրա, կարծում ենք՝ այն ավելացվել է XVIII դ. սկզբին:
- Մեր կատարած քննության արդյունքում պարզվել է, որ «Չափածո ծիսակարգի» հավանական հեղինակներ կամ համահեղինակներ կարող են լինել Հովհաննես Ամասիացին և Ղազար Ջահկեցին:
- Կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը զգալիորեն բարեփոխվել և խմբագրվել է Ղազար Ա. Ջահկեցու ջանքերով: Արդի ծիսակարգը հիմնված է Ջահկեցու բարեփոխած ձեռագրի վրա: Հավանաբար, «Մաշտոց» ծիսամատյաններում նրա օրոք է մուտք գործել «Կաթողիկոսական օծման կանոնը»:

Շնորհակալական

Խնդրո առարկա նյութի հետազոտության նպատակով մեզ հնարավորություն է ընձեռվել օգտվել ձեռագրերից, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Երևանի ՄՄ տնօրինությանը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկո-

սության Անթիլիասի Մատենադարանին (ԱՄ), Վենետիկի Մատենադարանին (ՎՄ), Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչությանը: Շնորհակալություն ենք հայտնում նաև մեր գիտական ղեկավար փիլ. գիտ. դոկտ. տիար Հակոբ Քյոսեյանին, ինչպես նաև նրանց, ովքեր այս և այլ կերպ օժանդակել են ձեռագրերի ձեռքբերման, հոդվածում քննարկվող թեմայի ուսումնասիրության հարցերում:

Գրականություն/References/Литература

1. Աճառյան Հ. 1984, Հայոց գրերը, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Acharian H. 1984, *Armenian Letters*. Yerevan, Yerevan University Press (in Armenian).
2. ԱՄ (Անթիլիասի Մատենադարան) ձեռ. Հ^{մր} 9, «Սսոյ Մայր Մաշտոց», 1311:
   AM (Antelias Manuscript Repository), Manuscript no. 9, Mother Mashtots of Sis, 1311 (in Armenian).
3. Դանիելեան Ա. վրդ. 1984, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:
   Archim. Danielian A. 1984, Main Catalog of Armenian Manuscripts of the Catholicosate of the Great House of Cilicia, Antelias, Printing House of the Catholicosate of the Great House of Cilicia (in Armenian).
4. Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթուղիկոսի 1876 – Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթուղիկոսի եւ հայրապետի ամենայն հայոց, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:
   Canon of Ordination and Consecration of the Catholicos 1876, Vagharshapat, Printing House of the Holy Catholicosate of Etchmiadzin (in Armenian).
5. ՄՄ ձեռ. Հ^{մր} 4997, 1461:
   MM (Matenadaran Manuscript Repositiry), Manuscript no. 4997, 1461 (in Armenian).
6. ՄՄ ձեռ. Հ^{մր} 1221, 1738:
   MM Manuscript no. 1221, 1738 (in Armenian).
7. ՄՄ ձեռ. Հ^{մր} 1226, 1738:
   MM Manuscript no. 1226, 1738 (in Armenian).
8. ՄՄ ձեռ. Հ^{մր} 2891, 1779:
   MM Manuscript no. 2891, 1779 (in Armenian).
9. ՄՄ ձեռ. Հ^{մր} 2892, 1779:
   MM Manuscript no. 2892, 1779 (in Armenian).
10. ՄՄ ձեռ. Հ^{մր} 5702, 1471:
    MM Manuscript no. 5702, 1471 (in Armenian).
11. ՄՄ ձեռ. Հ^{մր} 1084, 1498:
    MM Manuscript no. 1084, 1498 (in Armenian).
12. ՄՄ ձեռ. Հ^{մր} 998, 1546:
    MM Manuscript no. 998, 1546 (in Armenian).
13. ՄՄ ձեռ. Հ^{մր} 1043, ԺՋ դար:

MM Manuscript no. 1043, 16TH Century (in Armenian).

14. ՄՄ ձեռ. Հ՝ 1088, 1616:
MM Manuscript no. 1088, 1616 (in Armenian).

15. ՄՄ ձեռ. Հ՝ 953, 1651-1656:
MM Manuscript no. 953, 1651-1656 (in Armenian).

16. Պետրոսյան Հ.Զ. 1987, Հայերենագիտական բառարան, Երևան:
Petrosyan H.Z. 1987, *Armenological Dictionary*, Yerevan (in Armenian).

17. Սիւրմէեան Ա. արք. 1936, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ մասնաւորաց Անթիլիասի ու մասնաւորաց, հ. Բ, Հալէպ, տպ., Ա. Տէր-Սահակեան:
Abp. Surmeian A. 1936, *Main Catalog of Armenian Manuscripts of Aleppo and Private Collections of Antelias*, vol. 2, Aleppo, A. Ter-Sahakyan Publishing House (in Armenian).

18. ՎՄ (Վենետիկի Մատենադարան) ձեռ. Հ՝ 1173, 1345:
VM (Venice Manuscript Repository), Manuscript no. 1173, 1345 (in Armenian).

19. ՎՄ ձեռ. Հ՝ 960, 1364:
VM Manuscript no. 960, 1364 (in Armenian).

20. Քյոշկերեան Ա., Սուքիասեան Կ., Քէօսէեան Յ. 2004, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մաշտոցի անուան Մատենադարան, հ. Դ, Երևան:
Kyoshkeryan A., Sukiasyan K., Keoseyan H. 2004, *Main Catalog of Armenian Manuscripts*, Mesrop Mashtots Matenadaran, vol. 4, Yerevan (in Armenian).

ԱՐՑԱԽԻ (ՂԱՐԱԲԱՂԻ) ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

THE DIALECT AND FOLKLORE OF ARTSAKH (KARABAKH) IN 19TH CENTURY SOURCES AND STUDIES

АРЦАХСКИЙ (КАРАБАХСКИЙ) ДИАЛЕКТ И ФОЛЬКЛОР В ПЕРВОИСТОЧНИКАХ И ИССЛЕДОВАНИЯХ XIX ВЕКА

Արմեն Սարգսյան[1], Շողեր Մինասյան[2]
Armen Sargsyan[1], Shogher Minasyan[2]
Армен Саргсян[1], Шогер Минасян[2]

[1] Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, Institute of Language, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Институт языка, Национальная академия наук, Армения

[2] Լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Language, National Academy of Sciences, Armenia
Институт языка, Национальная академия наук, Армения

* Գրագրություն վարող հեղինակ՝ armen.sargsyan@iae.am
Author for correspondence: armen.sargsyan@iae.am
Автор, ведущий корреспонденцию: armen.sargsyan@iae.am

Հեղինակների ներդրումը. ԱՍ – գաղափար, նախնական տեքստ; ՇՄ – խմբագրում
Author contrubutions: AS – conceptualization, writing original draft; ShM – editing Вклад авторов: АС – концептуализация, написание текста; ШМ – редактирование

Ներկայացվել է՝ 30.04.2024; գրախոսվել է՝ 23.02.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 30.04.2024; Revised: 23.02.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 30.04.2024; рецензировано: 23.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-128

Ամփոփում – Արցախի (Ղարաբաղի) բարբառն ու բանահյուսությունը բազում դարերի պատմություն ունեն, սակայն լուրջ գրառումներ և ուսումնասիրություններ կատարվել են XIX դ. երկրորդ կեսից սկսած: Արցախի ոչ նյութական մշակույթի այդ կարևոր բնագավառներում իրենց ներդրումն են ունեցել ժամանակի նշանավոր լեզվաբաններ, բանահավաքներ, մանկավարժներ Առաքել, Ալեքսանդր, Գրիգոր և Ավետիք Բահաթրյանները, Քերովբե Պատկանյանը, Ղազարոս Աղայանը, Գալուստ Շերմազանյանը, Մակար Բարխուդարյանը, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը, Երվանդ Լալայանը, Խաչիկ և Արամ Դադյանները, Միքայել Տեր-Հովհաննիսյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառ-

յանը, որոնց գրառումների և ուսումնասիրությունների մի մասը 1860-90-ական թթ. և հետագայում հրատարակվել է առանձին գրքերով, տարբեր հանդեսներում ու համահավաք ժողովածուներում, իսկ մի մասը դեռևս անտիպ է և պահվում է որոշ արխիվներում ու թանգարաններում: Բացի դրանից, ռուսերենով գրառված բանահյուսական որոշ նյութեր են ընդգրկված Կովկասյան ուսումնական օկրուգի՝ Թիֆլիսում հիմնադրած «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) հանդեսի տարբեր համարներում, որոնց հեղինակները Արցախի տարբեր բնակավայրերի դպրոցների ուսուցիչներն ու տեսուչներն էին: Այդ բոլոր գրառումները, ժողովածուները, ուսումնասիրությունները լուրջ սկզբնաղբյուրներ են Արցախի բարբառի ու բանահյուսության ուսումնասիրության բնագավառում և կարևոր դեր են ունեցել բարբառագիտական, բանահավաքչական, բանագիտական հետագա աշխատանքների համար:

Abstract – The dialect and folklore of Artsakh (Karabakh) have a history spanning many centuries, but significant documentation and studies began in the second half of the 19th century. Prominent linguists, folklorists, and pedagogues of the time, such as Arakel, Alexander, Grigor, and Avetik Bahatryans, Kerope Patkanian, Hrachya Acharian, Manuk Abeghyan, Ghazaros Aghayan, Galust Shermazanian, Makar Barkhudaryan, Konstantin Melik-Shahnazaryan, Yervand Lalayan, Khachik and Aram Dadyans, Mikael Ter-Hovhannisyan, made contributions to these important fields of the intangible culture of Artsakh. Some of their recordings and studies were published in individual books, various journals, and collected volumes in the 1860-90s and later, while some remain unpublished and are kept in certain archives and museums. Some folklore materials recorded in Russian are also included in various issues of the "Collection of Materials for the Description of the Localities and Tribes of the Caucasus" journal, founded by the Caucasian Educational Okrug in Tiflis. The authors of these materials were teachers and inspectors of schools in various settlements of Artsakh during that period. All these recordings, collections, and studies are serious primary sources for the study of the Artsakh dialect and folklore and played an important role in subsequent dialectological, folkloristic, and philological research.

Резюме – Диалект и фольклор Арцаха (Карабаха) имеют многовековую историю, но со второй половины XIX века стали проводиться серьезные исследования в этой сфере. В эти важные сферы нематериальной культуры Арцаха внесли свой вклад выдающиеся лингвисты, фольклористы, педагоги того времени Аракел, Александр, Григор и Аветик Багатряны, Керовбе Патканян, Грачья Ачарян, Манук Абегян, Газарос Агаян, Галуст Шермазанян, Макар Бархударян, Константин Мелик-Шахназарян, Ерванд Лалаян, Хачик и Арам Дадяны, Микаэл Тер-Ованнисян. Собранные ими материалы и исследования, проведенные в 1860-1890 гг., в дальнейшем были опубликованы отдельными книгами, в различных журналах и сборниках, а часть этих ценных материалов остается неопубликованной по сей день и хранится в ряде архивов и музеев. Фольклорные материалы, записанные на русском языке, также включены в различные номера журнала Кавказского образовательного округа *«Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК)*, основанного в Тбилиси. Их авторами являлись учителя и инспекторы школ в разных населенных пунктах Арцаха на тот период. Все эти записи, сборники, исследования, являясь важными источниками по изучению Арцахского диалекта и фольклора, сыграли ключевую роль в создании диалектологических, фольклорных, филологических работ.

Հիմնաբառեր – Արցախի բարբառ, բանահյուսություն, ձեռագիր, ժողովածու, ուսումնասիրություն:

Keywords – Artsakh dialect, folklore, manuscript, collection, study.
Ключевые слова – арцахский диалект, фольклор, рукопись, сборник, исследование.

Ներածություն

Հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն Արցախի (Ղարաբաղի) բարբառն ու բանահյուսությունը, որոնց արմատները թաքնված են խոր հնադարում: Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ դրանք մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա հոգեկերտվածքը, նիստ ու կացը, հոգեկան ապրումներն ու երևակայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմագիտության և այլ գիտությունների համար անլուծելի են: Դժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ ժառանգության միայն մի մասն է մեզ հասել ժամանակին գրի չառնվելու պատճառով: XIX դ. երկրորդ կեսին Արցախի բարբառին և բանահյուսությանը անդրադարձել են մի շարք մտավորականներ, որոնց գրառումներն ու հրատարակությունները լուրջ սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ են Արցախի ոչ նյութական մշակույթի բնագավառում:

Արցախի բարբառը XIX դ. սկզբնաղբյուրներում և ուսումնասիրություններում

Արցախի բարբառը հայերենի կենդանի տարածական տարբերակներից ամենակենսունակն է, որով հաղորդակցվում են հարյուր հազարավոր հայեր: Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համաձայն՝ այն ընդգրկվում է *-ում* ճյուղի (Աճառեան 1911, 54), ըստ հնչյունական դասակարգման՝ առաջին տեղաշարժի ենթարկված (Ղարիբյան 1947, 30), իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ (Ջահուկյան 1972, 136): Ե՞րբ և հատկապես ո՞ր շրջանում է ստեղծվել Արցախի բարբառը, դժվար է ասել: Խոսելով այդ մասին և հիմք ընդունելով, որ բարբառում գրաբարյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղների խլացումն ընդգրկում է բնիկ հայերեն բառերն ու ասորերենից, պարսկերենից, հունարենից, արաբերենից կատարված հին փոխառությունները, սակայն չի տարածվում թուրքական փոխառությունների վրա, և նկատի ունենալով, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչև XII դարը՝ *«թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ»* ու դադարել է գործել դրանից հետո, Հրաչյա Աճառյանը Արցախի բարբառի ծագումը վերագրում է XII դարին (Աճառյան 1940, 380): Հակադրվելով դրան՝ Գևորգ Ջահուկյանը առաջ է քաշում իր տեսակետը, ըստ որի՝ հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում (Ջահուկյան 1959, 311), և բաղաձայնների խլացման երևույթը պայմանավորված է այլ հանգամանքներով (Ջահուկյան 1991, 58):

Բարբառի մասին առաջին վկայությունը թողել է VIII դ. քերական Ստեփանոս Սյունեցին՝ հայերենի տարածական մի քանի տարբերակների շարքում նշելով նաև *զԱրցախայինն. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզե-*

րականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՀորդորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն. այլ մի միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տարաչափութեան. այլ եւ աւգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն» (Адонц 1915, 187): Նույնը կրկնել է XIV դ. բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացին (Патканов 1869, 9):

Սակայն Արցախի բարբառի բուն ուսումնասիրությունը սկիզբ է առնում XIX դ. երկրորդ կեսից: 1862–1863 թթ. հրատարակած «*Ասրի բէգ եւ Գիքի*» դրամայի (Շերմազանեան 1862, Շերմազանեան 1863) առաջին մասի ներածականում՝ *«Պատմական վիպասանութիւն. Ծանուցումն»* (Շերմազանեան 1862, 896–900), հեղինակ Գալուստ Շերմազանյանը, հավաստելով, որ դրամայի դեպքերն առնված են իրական կյանքից, նշում է, որ այն գրառել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հայկաբանության ուսուցիչ ղարաբաղցի Պողոս վարդապետի առաջարկով, որի կողմից դրաման սրբագրվել ու լրացվել է: Ըստ հեղինակի՝ գործող անձանցից մի քանիսը Արցախից են, մի քանիսը՝ Նախիջևանից և Ագուլիսից, ահա թե ինչու ինքը ձգտել է *«...յուրաքանչիւր գաւառի լեզուովն նոցա խօսացնել»* (Շերմազանեան 1862, 899): Ընդ որում, հիմնականում ուշադրություն է դարձրել Արցախի բարբառին, քանի որ *«Նախիջեւանցւոց եւ Ագուլեցւոց խոսակցութիւնն թէ արտաբերութեամբ, թէ ելևէջով շատ նման են Երևանցւոց լեզուին..., բայց Արձախեցւոց արտաբերութիւնն դժուար է համեմատացնել ուրիշ մեր գաւառական լեզուներին...»* (Շերմազանեան 1862, 899): Այնուհետև ներկայացվում են բարբառի որոշ առանձնահատկություններ (ուր-*հօր*, ով-*հով*, ինչ-*հինչ*, գնում ենք *քընում ընք*, ասել եմ- *ասալ ըմ*, էդպես-*ըտի*, քեզ-*քե*, երեխայք-*խոխեք*, ա տղայ-*ատա* ևն), իսկ դրամայում գործածված դժվարհասկանալի բազմաթիվ (հիմնականում բարբառային և փոխառյալ) բառեր համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով: Հեղինակը Արցախի բարբառը կոչում է *ղարաբաղցվոց լեզու*՝ միաժամանակ նշելով. *«Մտադիր չեմ Ղարաբաղցվոց լեզուի վերայ քերականութիւն գրելոյ, միայն էսքան եմ ասում, որ որքան նոցա խոսելն առաջին անգամ լսելիս ականջներուս խորթ, կոպիտ եւ սոպռ է թուում, էնքան փոքր ինչ ընտելանալուց յետն քաղցր ու ախորժ լսելոյ, ըստ որում քաջ տղամարդի եւ պատերազմական լեզու է. մի միայն նոցա խօսակցութիւնն մեծ նշան է նոցա քաջութեանը»* (Շերմազանեան 1862, 899): Հարկ է նշել, որ իրականում և՛ գրվածքի լեզուն, և՛ բացատրությունները *«կիսագրական են, եղած բարբառայինն էլ՝ ավելի շուտ Ջուղայի բարբառով»* (Դավթյան 1966, 8): Իր 1869 թ. հրատարակած աշխատության մեջ Քերովբե Պատկանյանը հայ բարբառների դասակարգմանը և որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց ներկայացնում է Արցախի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը (Патканов 1869, 55–73): Սկզբում տեղադրելով բարբառով գրառված որոշ նյութեր՝ հեղինակն այնուհետև քննում է բարբառի հնչյունական *(որոշ ձայնավորների ու բաղաձայնների քմային արտասանություն, հնչյունափոխություն, ձայնավորով սկսվող միավանկ բառերի սկզբից* h-*ի ավելացում)*, բառապաշարային *(գրաբարում չվկայված, ինչպես նաև գրաբարյան իմաստներից տարբեր իմաստ ունեցող բառերի առկայություն)*, քերականական *(անվանական և դերանվանական հոլովում, խոնարհում)* մի շարք առանձնահատ-

կություններ: Միաժամանակ, խոսելով Խոյի բարբառի մասին, նա հավաստում է, որ այդ բարբառով խոսում են Խոյում, Սալմաստում, ինչպես նաև Արցախի մի քանի տեղերում՝ Շուշվա շրջակայքում՝ Ավետարանոցում և այլուր, և որ այն թեև շատ կողմերով նման է Արցախի բարբառին, սակայն ունի մի շարք տարբերություններ, ինչպես՝ *ի*-ն *է* դարձնելու հակում, բայական ներգոյականի *ա*-ով կազմություն *ում, ըմ, ման*-ի փոխարեն, *ու*-ի փոխարեն *ական*-ով ապառնի դերբայի կազմություն: Ինչ խոսք, որ Պատկանյանը, լինելով ժամանակի նշանավոր լեզվաբաններից մեկը, փորձել է հնարավորինս խորությամբ ներկայացնել բարբառի օրինաչափությունները, սակայն իրականում, չտիրապետելով բարբառին, նա *«հիմնվել է երկու զաքաթալեցու տված 7–8 էջ գրավոր նմուշների վրա, որոնք, գրված լինելով կիսաղարաբաղյան բարբառով, հնչյունաբանական ու ձևաբանական որոշ սխալ ընդհանրացումների պատճառ են հանդիսացել»* (Դավթյան 1966, 7):

Արցախի բարբառի որոշ օրինաչափություններ, հատկապես հոլովման ու խոնարհման հարացույցներն են ներկայացված Մակար Բարխուդարյանի՝ Արցախի նշանավոր զվարճախոս Պըլլը-Պուղու հետ կապված զվարճալի պատմությունները (գրառված գրական հայերենով ու Արցախի բարբառով, տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ) ընդգրկող ժողովածուի առաջաբանում (Բարխուդարեանց 1883, Գ-ԻԳ), իսկ վերջում կցված է բարբառին հատուկ բառերի բացատրական բառարան (Բարխուդարեանց 1883, 171–190): Նույն հեղինակի բանահյուսական մեկ այլ ժողովածուի (Բարխուդարեանց 1898) *«Այլաբանական իմաստներ»* բաժինը իրականում Արցախի բարբառի դարձվածների հավաքածու է:

«Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը արեւելեան ճիւղի բարբառների մէջ» հոդվածում (Աբեղյան 1890) Մանուկ Աբեղյանը հայերենի արևելյան խմբակցության որոշ՝ Արարատյան, Ագուլեցոց, Գուգարաց, Թիֆլիսի բարբառներին զուգընթաց ներկայացնում է Արցախի բարբառի շեշտադրության առանձնահատկություններն ու շեշտից կախված հնչյունափոխության որոշ դեպքեր՝ հավաստելով, որ հայերենի արևելյան խմբակցության բարբառներից առանձին քերականական շեշտադրություն ունեն միայն Արարատյան բարբառը՝ իր բոլոր երկրորդական բարբառներով, Արցախի և Սյունյաց (Ղարաբաղի), Ագուլեցոց (զոկերի), Գուգարաց ու Թիֆլիսի բարբառները, իսկ մյուս երկրորդական գավառաբարբառները, որոնք այս գլխավոր բարբառների մեջ են, հարկավ, ենթարկվում են առոգանության միևնույն օրենքին, որ ունեն մայր բարբառները:

Այս շրջանում բարբառի որոշ առանձնահատկությունների նվիրված երկու հոդվածներով է հանդես եկել Ղազարոս Աղայանը, որոնցից առաջինում (Աղայեանց 1898) անդրադարձ է կատարվում *բ, գ, դ, ձ, ջ* (ըստ հեղինակի՝ *մեղաղաձայն հնչյուններ*) և *պ, կ, տ, ծ, ճ* (ըստ նրա՝ *նուրբ կարծրատիպ հնչյուններ*) բաղաձայնների հնչյունափոխությանն ու գործածության որոշ դեպքերի, այնուհետև ներկայացվում են *ո* տառի *ւէ, ւը, ւա* ձևերով գործածության դեպքերն ու բերվում համապատասխան օրինակներ, իսկ երկրորդում (Աղայեանց 1899) մեկնաբանվում են բարբառում գործածվող *տէր* (Աստված), *տար* (որևէ բանի տեր) և *դէր* (քահանա) բառերը, առանձնակի ուշադրություն է դարձվում *դէր* բառի քննութ-

յանը: Վերջինիս ծագումը կապվում է *Տիր* աստծո անվան հետ, որն, ըստ հեղինակի, օտար բառ է և պետք է լինի *Դիր*:

Դեռևս անտիպ է Աղայանի կազմած *«Ղարաբաղի բառարանը»* (ԳԱԹ, Ղ. Աղայանի, ֆոնդ, N 48, 49), որի առաջին մասում քննվում են բարբառի հնչյունական մի շարք իրողություններ, իսկ երկրորդում տրվում է (հեղինակի մշակած տառադարձությամբ) բարբառում գործածվող շուրջ 2000 բառ՝ համապատասխան բացատրություններով:

Արցախի բարբառի ուսումնասիրության մեջ առանձնահատուկ դեր ունի Հրաչյա Աճառյանը: Դեռևս Փարիզում ուսանելու ժամանակ նա փորձառական հնչյունաբանության հիմնադիր Ռուսլոյի լաբորատորիայում փորձառական մեթոդով մի քանի բարբառախոսների և իր անձնական մասնակցությամբ ուսումնասիրության էր ենթարկել համապատասխան բարբառների, այդ թվում նաև Արցախի բարբառի Շուշիի խոսվածքի հնչյունաբանությունը: 1899-1901 թթ. *«Արարատ»* ամսագրում տպագրվում է նրա *«Քննութիւն Ղարաբաղի բարբառին»* ուսումնասիրությունը (Աճառեան 1899–1901), որը 1901 թ. հրատարակվում է առանձին գրքով (Աճառեան 1901): Աշխատության առաջաբանում թվարկվում են բարբառով գրված տպագիր նյութերը և այն աշխատանքները, որոնցում հեղինակներն անդրադարձել են բարբառի որոշ իրողությունների: Բուն ուսումնասիրությունը, որը գրված է ժամանակի տառադարձությամբ, կազմված է չորս գլխից: Առաջին գլուխը վերնագրված է *«Ձայնախօսութիւն»*, որտեղ ներկայացվում են բարբառում գործածական բոլոր հնչյունները՝ ձայնավորներ՝ *ա, ո (*քմային *ա), է, ը, ըէ, ի, օ, ու, էօ, իւ*, երկբարբառներ՝ *էյ, օյ, ուա*, բաղաձայններ՝ *բ, գ, գյ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, կյ, հ, հյ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, քյ*, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է առանձին՝ ուշադրություն դարձնելով հնչյունախոսությանը և գործածության դիրքերին, անհրաժեշտության դեպքում բերվում են բառերի օրինակներ: Առավել ծավալուն է երկրորդ՝ «*Ձայնաբանութիւն»* գլուխը: Այստեղ Աճառյանը հանգամանորեն նկարագրում է բոլոր ձայնավորների, երկբարբառների ու բաղաձայնների հնչյունափոխության դեպքերը՝ նշելով նաև շեշտի վերջընթեր դիրքն ու շեշտանախորդ դիրքում գտնվող ձայնավորի սղվելու կամ *ը*-ի վերածվելու օրինաչափությունը: Երրորդ՝ *«Քերականութիւն»* գլխում նկարագրվում են բարբառի անվանական հոլովումը, որոշյալ հոդը, ածականի համեմատության աստիճանները, թվականների (հեղինակը կոչել է *թուական ածականներ*) տեսակները, դերանունների հոլովումը, ստացական հոդերը, բայի խոնարհումը, անփոփոխելի բառերը (նախադրություններ, մակբայներ, շաղկապներ, ձայնարկություններ), շեշտադրության ծագումը և բարդ բառերը: Չորրորդ գլխում ներկայացվում է *«Թիւնին պըէլին»* հեքիաթը՝ գրառված Էջմիածնի վանքի միաբան Եսայի սարկավագ մահտեսի Բաբայանից (ծննդով Վարանդայի Գիշի գյուղից), որը նաև աջակցել է Աճառյանին՝ նրա ուսումնասիրության համար կազմելով բարբառի բառացանկը: Աշխատության մեջ Աճառյանը ընդհանուր առմամբ համեմատության ելակետ է ընդունել գրաբարը՝ այս կամ այն լեզվական օրինաչափությունը ներկայացնելիս հաճախ համեմատության եզրեր գտնելով այլ բարբառներում առկա համապատասխան երևույթների

հետ, մի հանգամանք, որ հատուկ է նրա բարբառագիտական բոլոր աշխատություններին: Քիչ չեն նաև ընդհանուր բնույթի դիտարկումները: Այսպես, խոսելով բարբառի շեշտադրության մասին, նա հանգում է այն եզրակացության, որ արևելյան մի շարք բարբառների վերջընթեր շեշտը *«զուտ հետևողութիւն եւ շարունակութիւն է իրենց կորսնցուցած նախկին բնիկ լեզուին շեշտադրութեան* (Աճառեան 1901, 116): Ուշագրավ է նաև այն, որ նշանավոր լեզվաբանը մենագրության մեջ որոշ դեպքերում նշել է խոսվածքային տարբերություններ, հատկապես Գորիսի և Հադրութի շրջանի Թաղոտ գյուղի համար: Ուսումնասիրության արդյունքները Աճառյանը ամփոփել է իր «*Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*» աշխատության մեջ (Աճառեան 1911)՝ բարբառին անդրադառնալով նաև իր հետագա որոշ աշխատանքներում (Աճառեան 1902, Աճառեան 1913, Աճառյան 1940):

Հարցի ուսումնասիրության տեսակետից կարևոր է նաև XIX դ. շուշեցի հայտնի մանկավարժ Ավետիք Բահաթրյանի *«Ղարաբաղու գաւառական բառգիրք»* բառարանը, որն ընդգրկում էր բարբառին հատուկ շուրջ 6000 բառ (տվյալ ժամանակաշրջանի բարբառային տառադարձությամբ): Ըստ Հր. Աճառյանի տեղեկությունների (Աճառյան 1967, 269–271), Ա. Բահաթրյանը, գրաբարի բառարաններից քաղված՝ ժողովրդին հասկանալի բառերին ավելացնելով Արցախի բարբառին հատուկ բարբառային բառերը (դրանց փոքր-ինչ գրական ձև տալով) և ժողովրդի մեջ գործածվող թուրքական փոխառությունները, կազմել էր ընդարձակ բառարան՝ նոր գրական լեզու ստեղծելու նպատակ ունենալով: Հեղինակին համոզելով, որ նրա նախաձեռնությունն անիմաստ է, Աճառյանը Բահաթրյանի համաձայնությամբ և նրա հետ այդ աշխատությունից (որը հետագայում վառվել է) առանձնացրել է Ղարաբաղի բարբառի բառերը և կազմել սույն բառարանը, որի բառապաշարն ընդգրկել է իր *«Գաւառական բառարանում»* (Աճառեան 1913):

Արցախի բանահյուսությունը XIX դ. սկզբնաղբյուրներում և ուսումնասիրություններում

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մանկավարժներ Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, որոնք 1860 թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում տեղի և հարևան գյուղերի բանասացներից գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Դրանց մեջ առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթրյանները որևէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է *«Հաքյաթին ընտրությունը»* խորհրդածությունը, որտեղ ասվում է. *«Հաքյաթին ընտրությունը էն ա, որ մին հաքյաթի մեջի փուրուստ պան ինի: Հաքյաթեն ամենը սոփ պանէր ա, ուրուր քցած, էրկանացրած: Աննա կյիրիլիս վախտը հինչ ինի, պեփում ա կյիրենքյ: Բայց մունք մեր խելքին ըկորա պեփում ա փոնըցընենք,*

տեսնանք, որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոտի, որըն ա լափ ճշմարիտ» (ՀԺՀ 1973, 706): Իրենց թերություններով և հատկապես բարբառային տառադարձության բացակայությամբ հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության և պատմելաձևի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը և մակարդակը: Դեռևս XIX դ. 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով գրառելու հայ բանահյուսական ստեղծագործություններ, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը հրապարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու և հրատարակելու ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերը: Արձագանքելով այդ կոչին՝ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881–1882 թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրում է Տ. Նավասարդյանը (Նավասարդեանց 1894, 36–62, Նավասարդեանց 1902, 78–95, Նավասարդեանց 1903, 36–44), իսկ ամբողջությամբ՝ ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը 1973 թ. (ՀԺՀ 1973, 19–90, 147–174, 245-248, 256–263, 266–269, 271–275, 724–726, 617–659, 690–691, 698–702, 707–717, 722–724, 743–746, 747–748):

Ընդհանուր առմամբ, Նավասարդյանի կոչը լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Վարանդայի Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը գրի է առնում (հիմնականում գրական հայերենի տառադարձությամբ) մի շարք հեքիաթներ, հանելուկներ, երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ և այլ ժանրերի նմուշներ՝ ուղարկելով Տ. Նավասարդյանին, որոնց մի մասը ժամանակի ընթացքում ընդգրկվում է տարբեր համահավաք ժողովածուներում (Նավասարդեանց 1890, 32–33, Ղանալանյան 1960, Հարությունյան 1965, Գրիգորյան 1970, 125, 131, 298, ՀԺՀ 1973, 175-176, 717): Ուշագրավ է այն փաստը, որ բանահավաքն իր նյութերին կցել է նաև ազգագրական բովանդակությամբ բարբառային բառերի բառացանկ:

Բահաթրյանների, Մ. Տեր-Հովհաննիսյանի ձեռագրերը, ինչպես նաև Հարություն Թավրիզյանի՝ Շուշու խոսվածքով Մոսկվայում գրառած հեքիաթներն ու այլ բանահավաքների որոշ գրառումներ պահվում են ՀՀ ազգային արխիվի՝ Տ. Նավասարդյանի ֆոնդում (ՀԱԱ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, N 484, g. 1):

Այս շրջանում լայն տարածում է ստանում երգիծական ժանրի ստեղծագործությունների հավաքումը: Գալուստ Շերմազանյանը առաջին անգամ հավաքում և հրատարակում է Արցախի նշանավոր զվարճախոս Պըլը-Պուղու, ինչպես նաև Արցախում ապրած ու գործած որոշ պատմական դեմքերին ու դեպքերին առնչվող զրույցներ (Շերմազանեանց 1878), որոնք հեղինակի կողմից ենթարկվել են որոշակի մշակման և չունեն գրառման հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ու բարբառային տառադարձություն:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում նշանակալից է Մակար Բարխուդարյանի դերը: Քաջատեղյակ լինելով մայրենի բարբառին և շրջելով պատմական Արցախում՝ նա գրառել է տարբեր ժանրերի նմուշներ, հատկապես առած-ասացվածքներ, հանելուկներ՝ դրանք ամփոփելով *«Բարոյական առածներ»* ժողովածուում (Բարխուդարեանց 1898): 1883 թ. հրատա-

րակվում է նրա *«Պըլը Պուղի»* ժողովածուն (Բարխուդարեանց 1883), որն ընդգրկում է զվարճախոսի մասին ստեղծված բանահյուսությունը: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ ներկայացվում է Պըլը-Պուղու կենսագրությունը, ինչպես նաև Արցախի բարբառի մասին քերականական ծանոթագրություններ և բառարան: Նշանավոր է Մ. Բարխուդարյանի *«Արցախ»* պատմագիտական աշխատությունը (Բարխուտարեանց 1895), որը ներառում է բանահյուսական որոշ նմուշներ, հատկապես Արցախի որոշ գյուղերի, սրբավայրերի, եկեղեցիների, աղբյուրների մասին ավանդություններ:

Արցախյան բառուբանով հարուստ ֆելիետոններով ասպարեզ եկավ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը: 1907 և 1908 թթ. Վաղարշապատում հրատարակվում են նրա *«Զուռնա-Տմբլա»* ժողովածուի գրքերը (Մելիք-Շահնազարեանց 1907-1908), որտեղ ամփոփված են հեղինակի՝ 1879–1907 թթ. *«Նոր Դար»* և այլ թերթերում տպագրած ֆելիետոնները, որոնք, քաղված լինելով Շուշու ընտանեկան ու հասարակական կյանքից, որոշակի աշխուժություն են առաջացնում հայ պատմաազգագրական շրջանակներում և խթանում բանահավաքչական աշխատանքները: *«Բ»* գրքի վերջում հեղինակը տվել է քերականական ծանոթագրություններ և դժվարիմաց բառերի բացատրություններ: Լինելով բնիկ շուշեցի, ուսանելով Շուշիի թեմական դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և ապա բարձրագույն կրթություն ստանալով Ֆրանսիայում՝ մասնագիտությամբ գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանը իր ողջ կյանքում գրառում է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր, կազմում բարբառային բառերի բառացանկեր, որոնց մի մասը հրատարակվում է (Մելիք-Շահնազարեանց 1882, Մելիք-Շահնազարեանց 1887, Մելիք-Շահնազարեանց 1928, Մելիք-Շահնազարեանց 1930ա, Մելիք-Շահնազարեանց 1930բ), մի մասն ընդգրկվում համահավաք ժողովածուներում (Ղանալանյան 1960, Հարությունյան 1965, ՀԺՀ 1973, 91–94, 613–616, 712, 743), իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում (ՀԱԻԱ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, FFII 2904-3090) և Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ Գ., N 70, 89, 90, 96): Հարկ է նշել, որ Կ. Մելիք-Շահնազարյանը նույնպես հստակորեն չի հետևել բարբառի տառադարձությանը, և նույնիսկ *«Զուռնա-Տմբլա»* ժողովածուի լեզուն, որ ավելի հստակ է, իր իսկ խոստովանությամբ՝ *«ոչ թե Ղարաբաղի այս կամ այն գաւառի, օրինակ՝ Վարանդու, Խաչենի, Տիզակի կամ Սիսիանի լեզուն է, այլ այդ գաւառաբարբառների յղկուածն ու կոկուածը, որ 70-80-ական թուականներին գործադրում էր Շուշի և նոյն քաղաքացիական դիրքն ունէր բռնած, ինչ որ բռնած ունի այժմ կովկասեան գաւառաբարբառների մէջ մեր արդի աշխարհիկ գրական լեզուն»* (Մելիք-Շահնազարեանց 1907–1908, 3):

XIX դ. երկրորդ կեսին Շուշին դարձել էր գիտամշակութային, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման խոշոր կենտրոն, որտեղ ապրում ու գործում էին բազմաթիվ նշանավոր մտավորականներ: Եվ պատահական չէ, որ հենց այստեղ հայ ազգագրության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը 1895 թ. հիմնադրեց *«Ազգագրական հանդեսը»,* որտեղ ազգագրական ու

տեղագրական նյութերը ներկայացվում էին բանահյուսականի հետ միասին՝ ընդգրկելով հատկապես ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երգեր և այլ նմուշներ: Հանդեսի հրատարակչությունը Թիֆլիս տեղափոխվելուց հետո էլ այնտեղ շարունակվում է ժողովրդագիտական նյութերի հրապարակումը: Այստեղ է տպագրվում նաև Ե. Լալայանի նշանավոր *«Վարանդա»* աշխատությունը (Լալայեան 1897, Լալայեան 1898), որը հագեցած է բանահյուսական նյութերով, հատկապես ավանդություններով:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին առանձին ուշադրություն է դարձվում Արցախի քնարական բանահյուսությանը: 1895 թ. Խաչիկ վարդապետ Դադյանը՝ Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղից, լույս է ընծայում (ժամանակի գիտական տառադարձությամբ) *«Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից»* խորագրով մի շարք՝ արժեքավոր ծանոթագրություններով (Դադեան 1895), իսկ 1908–1910 թթ. *«Ազգագրական հանդեսի»* տարբեր գրքերում նրա եղբայր Արամ Դադյանը հրատարակում է (հնարավորինս գիտական տառադարձությամբ) 1885–1903 թթ. Վարանդայի տարբեր գյուղերում իր և Խ. Դադյանի գրառած խաղիկները (Դադեան 1908, Դադեան 1910): Վերջինիս առաջին մասի ներածականում տեղեկություններ են տրվում նյութերի գրառման հանգամանքների մասին, դիտարկումներ արվում Արցախի բարբառի (հեղինակն անվանում է *ղարաբաղերեն*) որոշ օրինաչափությունների և բարբառային տառադարձության վերաբերյալ, իսկ ժողովածուում գործածված դժվարհասկանալի (հիմնականում բարբառային ու փոխառյալ) գրեթե բոլոր բառերը համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով:

Արցախի բանահյուսական տարբեր ժանրերի նյութեր են ընդգրկված նաև Կովկասյան ուսումնական օկրուգի՝ Թիֆլիսում հիմնադրած *«Сборник материалов для описания местностей и племен Кавказа»* հանդեսի 1881 թ. տարբեր համարներում (Давидбеков 1888, Погосов 1889, Калашев 1894, Мелик-Шахназаров 1894, Осипов 1898): Դրանցից առանձնապես ուշագրավ է Ա. Կալաշևի նյութը, որտեղ նկարագրվում է, թե ինչպես են Գետաշեն գյուղում տոնում Վարդավառը, որին հետևում է հեղինակի գրառած՝ այդ տոնի ժամանակ երգվող 122 ջանգյուլում՝ հայերենով (որոշները՝ թաթարերենով՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ):

Եզրակացություններ

Չնայած Արցախի բարբառը և բանահյուսությունը բազում դարերի պատմություն ունեն, սակայն դրանց գրառմամբ և ուսումնասիրությամբ լրջորեն զբաղվել են XIX դ. երկրորդ կեսից սկսած: Արցախի բարբառի ուսումնասիրության մեջ առավել մեծ ներդրում են ունեցել Քերովբե Պատկանյանը, Ղազարոս Աղայանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Ավետիք Բահաթրյանը, որոնք քննության են առել բարբառի տարբեր օրինաչափություններ:

Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր, հատկապես հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, զվարճախոսություններ, ջրօրհնյաց ու վիճակի երգեր, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ և հանելուկներ են գրառել Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, Գալուստ Շերմազան-

յանը, Մակար Բարխուդարյանը, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը, Երվանդ Լալայանը, Խաչիկ և Արամ Դադյանները, Միքայել Տեր-Հովհաննիսյանը, Արցախի տարբեր բնակավայրերի դպրոցների որոշ ուսուցիչներ ու տեսուչներ:

Հայերենով գրառված նյութերում և ուսումնասիրություններում հեղինակները փորձել են հնարավորինս հարազատ մնալ Արցախի բարբառի արտասանությանը, չնայած այդ շրջանում դեռևս մշակված չէր բարբառային գիտական տառադարձությունը: Այդ բոլոր աշխատանքները լուրջ սկզբնաղբյուրներ են ու կարևոր դեր են ունեցել բարբառագիտական, բանահավաքչական, բանագիտական հետագա գրառումների և ուսումնասիրությունների համար:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում մեզ տված օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում բարբառագետներ Վ. Կատվալյանին, Լ. Հովհաննիսյանին, Լ. Մարգարյանին, բանագետներ Տ. Դալալյանին, Ն. Վարդանյանին, Հ. Գալստյանին: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 24SSAH-6B016 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Աբեղեան Մ. 1890, Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը արևելեան ճիւղի բարբառների մէջ, Նոր Դար N 141, 1–2; N 142, 1–2; N 143; 1–2, N 144, 1–2; N 145, 1–2:
   Abeghean M. 1890, The Accentuation of the Folk Language in the Dialects of the Eastern Range, Nor Dar, 141, 1–2; 142, 1–2; 143, 1–2; 144, 1–2; 145, 1–2 (in Armenian).
2. Աղայեանց Ղ. 1898, Ո տառի հնչիւնը Ղարաբաղի բարբառում, Տարազ, N 48, 1090:
   Aghayeants G. 1898, The Pronunciation of the Letter "Vo" in the Karabakh Dialect, Taraz, N 48, 1090 (in Armenian).
3. Աղայեանց Ղ. 1899, Տէր, տար և դէր բառերը Ղարաբաղի բարբառում, Տարազ, N 6, 152:
   Aghayeants G. 1899, The Words "ter", "tar", and "der" in the Karabakh Dialect, Taraz, N 6, 152 (in Armenian).
4. Աճառեան Հր. 1899–1901, Քննութիւն Ղարաբաղի բարբառին, Արարատ, 1899, N 9, 394–399; N 10–11, 453–459; 1900, N 1, 26–28; N 2, 73–76; N 4, 190–193; N 8–9, 411–415; N 11, 529–533; N 12, 612–616; 1901, N 4, 236–239; N 5–6, 310–312; N 7–8, 368–375:
   Acharean Hr. 1899–1901, Study of the Karabakh Dialect, Ararat, 1899, N 9, 394–399; N 10–11, 453–459; 1900, N 1, 26–28; N 2, 73–76; N 4, 190–193; N 8–9, 411–415; N 11, 529–533; N 12, 612–616; 1901, N 4, 236–239; N 5–6, 310–312; N 7–8, 368–375 (in Armenian).
5. Աճառեան Հր. 1901, Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան. Քննութիւն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:
   Acharean Hr. 1901, Studies in Armenian Dialectology: A Study of the Karabakh Dialect. Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin (in Armenian).
6. Աճառեան Հր. 1902, Թուրքերենի ազդեցութիւնը հայերէնի վրայ և թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարա-

բաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.:
Acharean Hr. 1902, The Influence of the Turkish Language on Armenian and Turkish Loanwords in the Popular Armenian Speech of Constantinople, Compared with the Dialects of Van, Karabakh, and Nor Nakhichevan, Eminian Ethnographic Collection, vol. 3, Moscow–Vagharshapat, Lazarev Institute of Oriental Languages Press (in Armenian).

7. Աճառեան Հր. 1911, Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր Նախիջևան, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.:
Acharean Hr. 1911, Armenian Dialectology: Classification and Arrangement of Armenian Dialects (with a Dialectological Card Index), Eminian Ethnographic Collection, vol. 8, Moscow–Nor Nakhichevan, Lazarev Institute of Oriental Languages Press (in Armenian).
8. Աճառեան Հր. 1913, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, Ն. Աղանյանցի տպ.:
Acharean Hr. 1913, Armenian Rural Dictionary, Eminian Ethnographic Collection, vol. 19, Tbilisi, Printing House of N. Aghanyants (in Armenian).
9. Աճառյան Հր. 1940, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ.:
Acharyan Hr. 1940, History of the Armenian Language, vol. 1, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
10. Աճառյան Հր. 1967, Կյանքիս հուշերից, Երևան, «Միտք»:
Acharyan Hr. 1967, From the Memories of My Life, Yerevan, Mitk (in Armenian).
11. Բարխուդարեանց Մ. 1883, Պըլը-Պուղի, Թիֆլիս, Մ. Վարդանեանի և ընկ. տպ.:
Barkhudareants M. 1883, P'ly-Pughi, Tbilisi, Printing House of M. Vardanean and Friends (in Armenian)
12. Բարխուդարեանց Մ. 1898, Բարոյական առածներ, Թիֆլիս, Մ. Շարաձեի տպ.:
Barkhudareants M. 1898, Moral Tales, Tbilisi, Printing House of M. Sharadze (in Armenian).
13. Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, Բագու, «Արօր»:
Barkhutareants M. 1895, Artsakh, Bagu, Aror (in Armenian).
14. ԳԱԹ (Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), Ղ. Աղայանի ֆոնդ, N 48, 49:
LAM (Eghishe Charents Literature and Art Museum), G. Aghayan Fund, items N 48, 49 (in Armenian).
15. ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, N 70, 89, 90, 96:
LAM, K. Melik-Shahnazaryan Fund, docs. N 70, 89, 90, 96 (in Armenian).
16. Գրիգորյան Ռ. 1970, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Grigoryan R. 1970, Armenian Folk Lullabies and Children's Songs, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
17. Դադեան Ա. 1908, Վարանդայի բանաւոր գրականութիւնից, Ազգագրական հանդես գք. XVII (1), 37–48, գք. XVIII (2), 25–32:
Dadean A. 1908, From the Oral Literature of Varanda. Ethnographic Journal, vol. XVII (1), 37–48, vol. XVIII (2), 25–32 (in Armenian).

18. Դադեան Ա. 1910, Վարանդայի բանաւոր գրականութիւնից, Ազգագրական հանդես, գք. XIX (1), 85–89:
Dadean A. 1910, From the Oral Literature of Varanda. Ethnographic Journal, vol. XIX (1), 85–89 (in Armenian).

19. Դադեան Խ. 1895, Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից, Արարատ, N 12, 469–471:
Dadean Kh. 1895, From the Popular Water-Blessing Songs of Karabakh, Ararat, N 12, 469–471 (in Armenian).

20. Դավթյան Կ. 1966, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Davtyan K. 1966, The Dialect Map of Mountainous Karabakh, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

21. Լալայեան Ե. 1897, Վարանդա: Նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ազգագրական հանդես, գք. Բ, 5–244:
Lalayean E. 1897, Varanda. Materials for Future Research, Ethnographic Journal, vol. 2, 5–244 (in Armenian).

22. Լալայեան Ե. 1898, Վարանդա: Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, գք. Գ, 338–349:
Lalayean E. 1898, Varanda. Notable Words. Ethnographic Journal, vol. 3, 338–349 (in Armenian).

23. ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), Տ. Նավասարդյանի ֆոնդ:
NAA (National Archive of the Republic of Armenia), T. Navasardyan Fund (in Armenian).

24. ՀԱԻԱ (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ), Մելիք-Շահնազարյանի ֆոնդ:
AIAE (Archive of the Institute of Archaeology and Ethnography), K. Melik-Shahnazaryan Fund (in Armenian).

25. ՀԺՀ. 1973, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ.:
AFFT. 1973, Armenian Folk Fairy Tales, vol. 6, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

26. Հարությունյան Ս. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Harutyunyan S. 1965, Armenian Riddles, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

27. Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Ghanalanyan A. 1960, Proverbs, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

28. Ղարիբյան Ա. 1947, Հայ բարբառագիտություն, Երևան, Հայաստանի մանկավարժական ինստիտուտի հրատ.:
Gharibyan A. 1947, Armenian Dialectology, Yerevan, Armenian Pedagogical Institute Press (in Armenian).

29. Մելիք-Շահնազարեանց Կ. 1882, Ղըլըցէ կնանոց պընը-փեշակը, Թիֆլիս, Տիգրան Նազարեանի գրասենյակի հրատ.:
Melik-Shahnazareants K. 1882, Ghlutse Knanots Pen'-Peshak, Tbilisi, Tigran Nazarean's Office Press (in Armenian).

30. Մելիք-Շահնազարեանց Կ. 1887, Շոշվա ղալին խերն ու շառը, Թիֆլիս, Մովսես Վարդանեանի տպ.:
Melik-Shahnazareants K. 1887, Shoshva's Ghalin: Its Sound and Intonation, Tbilisi, Printing House of Movses Vardanean (in Armenian).

31. Մելիք-Շահնազարեանց Կ. 1907–1908, Զուռնա-Տմբլա, գք. Ա–Բ, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս. Էջմիածնի:

Melik-Shahnazareants K. 1907–1908, Zurna-Tmbla, vol. 1–2, Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin (in Armenian).

32. Մելիք-Շահնազարեանց Կ. 1928, Ղարաբաղի բարքերեն, Հանդէս ամսօրեայ, N 11–12, 552–559:
Melik-Shahnazareants K. 1928, On the Vocabulary of Karabakh, Handes Amsorya, N 11–12, 552–559 (in Armenian).

33. Մելիք-Շահնազարեանց Կ. 1930ա, Առակներ Ղարաբաղի բարբառով, Հանդէս ամսօրեայ, N 5–6, 357–362:
Melik-Shahnazareants K. 1930a, Fables in the Karabakh Dialect, Handes Amsorya, N 5–6, 357–362 (in Armenian).

34. Մելիք-Շահնազարեանց Կ. 1930բ, Հանելուկներ Ղարաբաղի լեզուով, Հանդէս ամսօրեայ, N 9–10, 596–601:
Melik-Shahnazareants K. 1930b, Riddles in the Karabakh Language, Handes Amsorya, N 9–10, 596–601 (in Armenian).

35. Նավասարդեանց Տ. 1890, Հայ ժողովրդական հէքիաթներ, գք. 6, Թիֆլիս, տպ. Մ. Ռօտինեանցի:
Navasardeants T. 1890, Armenian Folk Fairy Tales, vol. 6, Tbilisi, Printing House of M. Rotineants (in Armenian).

36. Նավասարդեանց Տ. 1894, Հայ ժողովրդական հէքիաթներ, գք. 8, Թիֆլիս, տպ. Մովսես Վարդանեանի:
Navasardeants T. 1894, Armenian Folk Fairy Tales, vol. 8, Tbilisi, Printing House of M. Vardanean (in Armenian).

37. Նավասարդեանց Տ. 1902, Հայ ժողովրդական հէքիաթներ, գք. 9, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի:
Navasardeants T. 1902, Armenian Folk Fairy Tales, vol. 9, Tbilisi, Printing House of K. Martiroseants (in Armenian).

38. Նավասարդեանց Տ. 1903, Հայ ժողովրդական հէքիաթներ, գք. 10, Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի:
Navasardeants T. 1903, Armenian Folk Fairy Tales, vol. 10, Tbilisi, Printing House of M. Vardanean (in Armenian).

39. Շերմազանեան Գ. 1862, Ասրի բէգ և Գիքի, Կռունկ Հայոց աշխարհին, ԺԲ, 896–930:
Shermazanean G. 1862, Asri Beg and Gik, In the Armenian World, vol. 12, 896–930 (in Armenian).

40. Շերմազանեան Գ. 1863, Ասրի բէգ և Գիքի, Կռունկ Հայոց աշխարհին, Բ, 113–137:
Shermazanean G. 1863, Asri Beg and Gik, In the Armenian World, vol. 2, 113–137 (in Armenian).

41. Շերմազանեանց Գ. 1878, Անեկդօտներ, զուարճալի զրոյցներ, համառօտ դէպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, Թիֆլիս, տպ. Յովհաննու Մարտիրոսեանց:
Shermazanean G. 1878, Anecdotes, Amusing Sketches, Brief Episodes, and Fables, Mostly Drawn from National Tradition, Tbilisi, Printing House of Yovhannu Martiroseants (in Armenian).

42. Ջահուկյան Գ. 1959, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, Պատմա-բանասիրական հանդես, N 2–3, 282–319:
Jahukyan G. 1959, Armenian Dialectology and the Question of the Origin of Armenian Dialects, Historical – Philological Journal, N 2–3, 282–319 (in Armenian).

43. Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Jahukyan G. 1972, Introduction to Armenian Dialectology, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

44. Ջահուկյան Գ. 1991, Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, 52–58:
Jahukyan G. 1991, On the Formation of the Artsakh Armenian (Karabakh) Dialect, Herald of Social Sciences, N 5, 52–58 (in Armenian).

45. Адонц Н. 1915, Дионисий Фракийский и армянские толкователи, Санкт-Петербург, тип. Императорской академии наук.
Adonts N. 1915, Dionysius of Thrace and Armenian Commentators, St. Petersburg, Printing House of the Imperial Academy of Sciences (in Russian).

46. Давидбеков И. 1888, Село Гадрут Елисаветпольской губернии, Джебраильского уезда, СМОМПК, вып. 6, Тифлис, тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 153–192.
Davidbekov I. 1888, The Village of Hadrut, in the Elizavetpol Governorate, Jebrayil Uezd, SMOMPK, Iss. 6, Tbilisi, Printing House of the Chancellery of the Chief Administration of the Civil Department in the Caucasus, 153–192 (in Russian).

47. Калашев А. 1894, Вардавар. Село Чайкенд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 18, Тифлис, тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 1–36.
Kalashev A. 1894, Vardavar. The Village of Chaykend, in the Elizavetpol Governorate, SMOMPK, iss. 18, Tbilisi, Printing House of the Chancellery of the Chief Administration of the Civil Department in the Caucasus, 1–36 (in Russian).

48. Мелик-Шахназаров Е. 1894, Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинского уезда), СМОМПК, вып. 19, Тифлис, тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 78–83.
Melik-Shakhnazarov E. 1894, From the Antiquities of the Settlement of Chenakhchi (Elizavetpol Governorate, Shushinsky Uyezd), SMOMPK, iss. 19, Tbilisi, Printing House of the Chancellery of the Chief Administration of the Civil Department in the Caucasus, 78–83 (in Russian).

49. Осипов Г. 1898, Селение Даш-Алты Шушинского уезда, Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 25, Тифлис, тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 101–136.
Osipov G. 1898, The Settlement of Dash-Alty, Shushinsky Uyezd, Elisavetpol Governorate, SMOMPK, iss. 25, Tbilisi, Printing House of the Chancellery of the Chief Administration of the Civil Department in the Caucasus, 101–136 (in Russian).

50. Патканов К. 1869, Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, тип. Императорской академии наук.
Patkanov K. 1869, A Study on the Dialects of the Armenian Language, St. Petersburg, Printing House of the Imperial Academy of Sciences (in Russian).

51. Погосов М. 1889, Тамерлан по рассказам джеванширских армян, СМОМПК, вып. 7, Тифлис, тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, 86–89.
Pogosov M. 1889, Tamerlane According to the Accounts of the Javanshir Armenians, SMOMPK, Iss. 7, Tbilisi, Printing House of the Chancellery of the Chief Administration of the Civil Department in the Caucasus, 86–89 (in Russian).

ՊԱՄԻՐՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ. ՃՇԳՐՏՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ARMENIAN NAMES OF THE PAMIRI LANGUAGES: ISSUES OF CLARIFICATION AND STANDARDIZATION

АРМЯНСКИЕ НАЗВАНИЯ ПАМИРСКИХ ЯЗЫКОВ: ВОПРОСЫ УТОЧНЕНИЯ И НОРМИРОВАНИЯ

Դավիթ Գյուրջինյան
Davit Gyurjinyan
Давид Гюрджинян

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան
V. Bryusov State University, Armenia
Государственный университет им. В.Я. Брюсова, Армения

rector@bryusov.am

Ներկայացվել է 05.02.2022, գրախոսվել է 12.02.2024, ընդունվել է 18.04.2025
Received: 05.02.2022; Revised: 12.02.2024; Accepted: 18.04.2025
Представлено: 05.02.2022; рецензировано: 12.02.2024; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-143

Ամփոփում – Հայերեն գիտական խոսքում պամիրյան լեզուների և բարբառների անունների առաջին հիշատակումները վերաբերում են XX դարի կեսին: Սկզբնապես գործածվում էին ֆրանսերենից և անգլերենից արված փոխառությունները (հնարավոր է իրանական լեզուների իրողությունների հաշվառմամբ): XX դարի կեսից սկսվում է դրանց հայերենացման գործընթացը «լեզու» նշանակող –երեն վերջածանցի միջոցով: Ժամանակակից հայերենագիտության մեջ գերիշխող դիրք են գրավում հայերեն կազմությունները, թեպետ իրանագիտական աշխատանքներում հանդիպում են նաև փոխառյալ տարբերակները: Պամիրյան լեզուները և բարբառներն անվանելու համար կազմվել և գիտական խոսքում գործածվել են հայերեն հետևյալ լեզվանունները՝ բարթանգերեն/բարտանգերեն, բուրունգսոլերեն, թաշկուրգաներեն, իշկաշիմերեն/իշքաշիմերեն, խուֆերեն, մունջաներեն, յազգուլամերեն, յիդգայերեն/յիդղայերեն, շուգնաներեն/շուղնաներեն, ռուշաներեն, օրոշորերեն, սանգլիչերեն, սարըքոլերեն/սարըկոլերեն, վախաներեն: Պամիրյան լեզուներում հայերեն անուններն ունեն տարատեսակ տարբերակներ՝ ա) ինչյունական-ուղղագրական, բ) բառակազմական և գ) բառային: Ուսումնասիրության նպատակն է տալ պամիրյան լեզուների անունների գործածության ընթացքը հայերենում, տառադարձման և բառակազմական առանձնահատկությունների ու բառարանագրման ամբողջական պատկերը: Հայերեն լեզվանունների գիտական անվանացանկում հարկավոր է նվազագույնի հասցնել տարբերակայնությունը, որը հնարավորություն կընձեռի հաստատելու գրության միասնականություն և նպաստելու գիտական խոսքի ճշտությանը: Հայերենի լեզվաբանական և

հանրագիտական բառարաններում գլխաբառ են դարձել պամիրյան լեզուների ինչպես հայերեն անվանումներ, այնպես էլ փոխառյալ մի շարք լեզվանուններ: Բառարաններում արձանագրված չեն մունջաներեն, յազգուլամերեն, յիդգայերեն, սանգլիչերեն, սարըկոլերեն/սարըքոլերեն, վախաներեն հայերեն լեզվանունները:

Abstract – The first mentions of the names of the Pamir languages and dialects in the Armenian scientific speech date back to the middle of the 20th century. Initially, borrowings from French and English were used (possibly taking into account the characteristics of the Iranian languages). From the second half of the 20th century, their Armenianization began using the suffix -երեն (-eren), meaning "language". During this period, the influence of the Russian language is noticeable. In modern Armenian studies, the dominant place is occupied by Armenian linguonyms, while in works on Iranian studies, there are also borrowed variants. To designate the Pamiri languages and dialects, the following Armenian linguonyms were formed and used in scientific speech: բարթանգերեն/բարտանգերեն (Bartang), բուրունգսոլերեն (Burunsol), թաշկուրգաներեն (Tashkurgan) են (Munjanese), յազգուլամերեն (Yazgulam/Yazgulem), յիդգայերեն/յիդղայերեն (Yidga), շուգնաներեն/շուղնաներեն (Shughni) սարըկոլերեն/սարըքոլերեն (Sarykol), վախաներեն (Vakhan). The Armenian names of the Pamir languages have different variants: a) phonetic-orthographic, b) word-formative, c) lexical. It is necessary to minimize the variability of Armenian linguonyms in the scientific name index, which will create a certain commonality of writing and predetermine the accuracy of scientific speech. In linguistic and encyclopedic dictionaries of the Armenian language, both Armenian suffixal linguonyms and several borrowed names of the Pamiri languages became headwords. The lexicography does not reflect the Armenian linguonyms մունջաներեն (Munjan), յազգուլամերեն (Yazgulam), յիդգայերեն (Yidga), սանգլիչերեն (Sanglic), սարըկոլերեն/սարըքոլերեն (Sarykol), վախաներեն (Wakhan).

Аннотация – Первые упоминания названий памирских языков и диалектов в армянской научной речи относятся к середине XX в. Первоначально использовались заимствования из французского и английского (возможно, с учетом особенностей иранских языков). Со второй половины XX века начинается их арменизация с помощью суффикса –երեն (-ерен), означающего «язык». В этот период наблюдается влияние русского языка. В современном арменоведении доминируют армянские производные слова, в то время как в работах по ирановедению встречаются также заимствованные варианты. Для обозначения памирских языков и диалектов были составлены и использованы в научной речи следующие армянские лингвонимы: բարթանգերեն/բարտանգերեն (бартангский), բուրունգսոլերեն (бурунгсольский), թաշկուրգաներեն (ташкурганский), իշկաշիմերեն/իշքաշիմերեն (ишкашимский), խուֆերեն (хуфский), մունջաներեն (мунджанский), յազգուլամերեն (язгуламский/язгулемский), յիդգայերեն/յիդղայերեն (йидга), շուգնաներեն/շուղնաներեն (шугнанский), ռուշաներեն (рушанский), օրոշորերեն (орошорский), սանգլիչերեն (сангличский), սարըքոլերեն/սարըկոլերեն (сарыкольский), վախաներեն (ваханский). Армянские названия памирских языков имеют различные варианты: а) фонетико-орфографические, б) словообразовательные, в) лексические. Необходимо довести до минимума вариативность армянских лингвонимов в научном именном указателе, что позволит создать определенную общность написания и предопределить точность научной речи. В лингвистических и энциклопедических словарях армянского языка заглавными словами стали как армянские суффиксальные лингвонимы, так и ряд заимствованных названий памирских языков. В лекси-

кографии не отражены армянские лингвонимы մունջաներեն (мунджанский), յազգուլամերեն (язгуламский), յիդգայերեն (йидга), սանգլիչերեն (санглический), սարըկոլերեն/սարըքոլերեն (сарыкольский), վախաներեն (ваханский).

Հիմնաբառեր – պամիրյան լեզուներ, լեզվանուն, տարբերակայնություն, կանոնարկում:
Keywords – Pamiri languages, linguonym, variation, standardization.
Ключевые слова – памирские языки, лингвоним, вариативность, нормирование.

Ներածություն

Իրանական լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին: Ըստ տարածքի և քերականական հատկանիշների՝ իրանական լեզուները բաժանվում են երկու մասի՝ արևմտյան (պարսկերեն, տաջիկերեն, քրդերեն, բելուջերեն, թալիշերեն, թաթերեն, գիլաներեն) և արևելյան (աֆղաներեն, շուգնաներեն, օսերեն, յաղնոբերեն, սողդերեն, խորեզմերեն, սակերեն) (Աղայան 1967, 573. պամիրյան լեզուներն այստեղ չեն առանձնացվել, այնինչ Ա. Ռեֆորմատսկու դասագրքում դրանք տրված են առանձին խմբով՝ Памирские языки (шугнанский, рушанский, бартангский, сарыкольский, язгулемский, ишкашимский, ваханский) (Реформатский 1967, 409. գրքում воханский է, որը թերևս վրիպակ է, ռուսերենում ամենուրեք a-ով գրությունն է): Իրանական լեզուների հայերեն անվանումները առանձին ուսումնասիրության նյութ են դարձել (Գյուրջինյան, 2024, 64-121):

Արևելյան իրանական լեզուների մեջ առանձին ենթախումբ են կազմում պամիրյան լեզուները (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105. «Պամիրյան լեզուներ» բառահոդվածը, հեղինակ՝ Հ. Ասմանգուլյան): Պամիրյան լեզուները իրանական լեզուների մեջ ծագումնաբանական առանձին խումբ չեն. «պամիրյան լեզուներ» անվանումը պարզապես մատնանշում է այդ լեզուների գործածության տարածքը՝ աշխարհագրական ընդգրկումը: Թերևս այս պատճառով «պամիրյան խումբ» անվանմանը լեզվաբանական մի աշխատության մեջ նախորդում է «այսպես կոչված» միջանկյալ արտահայտությունը. «Արևելաիրանական լեզուներից են նաև **յաղնոբերենը**, **վախաներենը**, **յազգուլամերենը**: Վերջիններս այլ բարբառների հետ կազմում են, այսպես կոչված, պամիրյան խումբը» (Հովհաննիսյան 1990, 62): Ի դեպ, յաղնոբերենը սովորաբար պամիրյան լեզուների մեջ չի ընդգրկվում:

Պամիրյան լեզուները փոքրաթիվ ազգությունների լեզուներ են: Այդ լեզուները գործածվում են Պամիրի և Արևելյան Հինդուկուշի բարձրլեռնային հովիտներում, գլխավորապես Տաջիկստանում, այստեղ էլ՝ հիմնականում Լեռնային Բադախշանի ինքնավար մարզում, ինչպես նաև Տաջիկստանի և Աֆղանստանի, Պակիստանի ու Չինաստանի սահմանամերձ տարածքներում, մասնակիորեն նաև հյուսիսարևմտյան Հնդկաստանի մի հատվածում (Пахалина 1975, 222): Խոսողների թիվը ստույգ չէ. վերջին տարիների հաշվումներով՝ 270 հազար մարդ (Большая российская энциклопедия, https://old.bigenc.ru/linguistics/text/2701306):

Իրանագիտության մեջ «պամիրյան լեզուներ» անվան տակ միավորում են «լեռնային (մերձպամիրյան) տաջիկների»՝ Արևմտյան Պամիրի տեղաբնիկ ազգությունների անգիր լեզուները (Оранский 1960, 333, նաև Оранский 1963, 158–160):

Պամիրյան լեզուները գերազանցապես անգիր են, XX դարի տարբեր տասնամյակներում գրեր ստեղծելու փորձեր արվել են, բայց դրանք հիմնականում հաջողությամբ չեն պսակվել: Պամիրյան լեզուների կրողները կրթություն են ստանում հիմնականում տաջիկերեն, մասամբ նաև ույղուրերեն, ուրդուերեն: Այսօր Պամիր-Հինդուկուշյան տարածաշրջանի ազգային լեզուները պահպանելու, դրանք անհետացումից փրկելու ջանքեր են գործադրվում (Додыхудоева 2014, 430–437): Պամիրի փոքրաթիվ ազգությունների լեզուները 2017 թ. ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վերացման վտանգի տակ գտնվող լեզուների ատլասում» (https://pamirdaily.com):

Պամիրյան ազգությունների ձուլմանը խոչընդոտել է ոչ միայն աշխարհագրական, այլև կրոնական մեկուսացումը (պամիրցիները պատկանում են իսմայիլական աղանդին) (Широков 1985, 160):

Պամիրյան լեզուները հայերենի հետ անմիջական շփում չեն ունեցել, սակայն այդ լեզուների անունները, թեպետ սահմանափակ, գործածվել են լեզվաբանության հայերեն դասագրքերում, գիտական աշխատություններում (հոդված, ատենախոսություն, մենագրություն), հայկական հանրագիտարանում, որպես գլխաբառ զետեղվել են լեզվաբանական և հանրագիտական բառարանների բառացանկերում: Պամիրյան լեզուների և հայերենի առնչությունների ուսումնասիրությունը կարևորվել է մի քանի առումներով. մատնացույց են արվել հնդարիական բազմաթիվ իզոգլոսներ (զուգաբանություններ) հայերենում և պամիրյան լեզուներում, որոնք չեն պահպանվել հին, միջին և նոր պարսկերենում, բացահայտվում են ընդհանուր քերականական, բառակազմական միջոցներ և այլն (Մկրտչյան 2015, 3-4. տիտղոսաթերթի դարձերեսին նշված է 2016):

Պամիրյան լեզուների հայերեն անունների ամբողջական պատկերը դեռևս չունենք, նկատվում է լեզվանունների տառադարձման, գործածության և բառարանագրման անմիօրինակություն, լեզվանունների կանոնարկման որոշակի խնդիրներ կան, ինչպես նաև լեզվանուն և բարբառանուն գիտաբառերի հարաբերակցության ճշգրտման անհրաժեշտություն:

Հետազոտության հիմնական նպատակներից են պամիրյան լեզուների հայերեն անունների գիտական ամբողջական ցանկի ստեղծումը և ճշգրտումը, լեզվանունների բազմատարբերայնության նվազեցումը և կանոնարկումն առհասարակ (հմմտ. Գյուրջինյան 2023ա, 125–147): Դրանք կնպաստեն բառարանագրական աշխատանքներին և որոնողական տարբեր համակարգերում ծագող դժվարությունների և տարատեսակ խոչընդոտների վերացմանը:

Հայերենագիտության անդրադարձները պամիրյան լեզուներին

Հայերենագիտության մեջ Պամիրում գործածվող լեզուների մասին ժամանակագրական առումով առաջին անդրադարձը տեսնում ենք Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (ապակետիպ եղանակով լույս է տեսել

1926-1935 թվականներին), որտեղ ավանդական ուղղագրությամբ հիշատակվում են պամիրյան լեզուների (բարբառների) անուններ, ինչպես՝ **եազգուլամի**, **սարիղոլի**, **յիդգա**, **շիղնի**, **ռոշանի** (Աճառյան 1971, 63, 65, 66):

Հր. Աճառյանն ավելի ընդարձակ մոտեցում է ցուցաբերել «Լիակատար քերականության» մեջ: Իրանական լեզուների մեջ լեզվաբանն առանձնացնում է «Պամիրի բարբառներ, որոնք կազմում են իրանյան լեզուների հյուսիս-արևելյան ճյուղը և սահմանակից են մի կողմից թյուրքերենի և մյուս կողմից հնդկերենի» (Աճառյան 1955, 477):

Առաջինն աչքի է զարնում «Պամիրի բարբառներ» անվանման առաջին բաղադրիչի՝ հատուկ անվան սեռականի հոլովաձևը, որը միանգամայն ընդունելի է: Ռուսերենի памирские языки անվանման ազդեցությամբ հայերենագիտության մեջ հետագայում որդեգրվեց «պամիրյան լեզուներ» անվանումը՝ հատուկ անունից առաջացած ածական բաղադրիչով: Հիշյալ աշխատության մեջ Հր. Աճառյանը, ամենայն հավանականությամբ, ֆրանսերեն, անգլերեն, ինչպես նաև իրանյան համապատասխան անվանումների ազդեցությամբ, թվարկում է Պամիրի բարբառները՝ **սարիքուլի (ու**-ի փոխարեն **ո** պիտի լիներ, թերևս վրիպակ է. Աճառյանն Արմատական բառարանում և այլուր գործածել է **սարիղոլի** տարբերակը (տե՛ս, օրինակ, Աճառյան 1971, 66), **շիղնի**, **վախի**, **իշկաշմի**, **զեբակի**, **մինջանի**, **յիդղահ**, **խովար**, **բաշգալի**, **ռոշանի**, **սանգլիչի** (Աճառյան 1955, 477): Ինչպես տեսնում ենք, բոլոր լեզվանուն/բարբառանունները փոխառություններ են, մի քանիսը նկատելիորեն տարբեր են այսօր ընդունված անվանումներից:

Պամիրյան լեզուներին հաջորդ՝ ինչ-որ չափով ընդլայնված անդրադարձը եղել է «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 253): Այստեղ գործածվել են արդեն հայկազմ լեզվանուններ՝ ի տարբերություն Հր. Աճառյանի «Լիակատար քերականության» մեջ տրված փոխառյալ լեզվանունների: Ի դեպ, բառարանում «Պամիրյան բարբառներ»-ից հղում է արվում «Պամիրյան լեզուներ»-ին, այսինքն՝ Պամիրում բնակվող փոքրաթիվ ազգությունների հաղորդակցության հիմնական միջոցներն արդեն ընկալվում էին որպես լեզուներ և ո՛չ բարբառներ:

«Պամիրյան լեզվանունների» հայերենացման գործընթացում կարևոր դեր է ունեցել «Հայկական սովետական հանրագիտարանը» (Հայկական սովետական հանրագիտարան 1980, 471. «Հնդեվրոպական լեզուներ» բառահոդվածը), Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105. «Պամիրյան լեզուներ» բառահոդվածը): Այստեղ ներառված լեզվանունները շուտով օրինակելի են դառնում հայերեն գիտական խոսքում:

Գ. Ջահուկյանն իր հիմնարար աշխատության մեջ առանց բացառության գործածել է **–երեն** ածանցով կազմված «պամիրյան լեզվանուններ» (Ջահուկյան 1987, 668–669): Հարկ է նշել, որ լեզվանունների հայերենացման ընթացքը դաղստանյան լեզուների անունների պարագայում գրեթե նույն կերպ է եղել (Գյուրջինյան 2023բ, 1, 65–98):

Պամիրյան լեզուներին հանգամանալից անդրադարձ եղել է Ն. Մկրտչյանի «Պամիրյան լեզուները և հայերենը: Սկյութերեն բառապաշարը» մենագրության

մեջ: Պամիրյան լեզուների և բարբառների անունների ամենամեծ ընդգրկումը տեսնում ենք այստեղ:

Հայերենագիտական և իրանագիտական աշխատություններում պամիրյան լեզուների (և բարբառների) անվանումների գործածության, ինչպես և հայերենացման ընթացքը կներկայացնենք ստորև՝ առանձին-առանձին անդրադառնալով յուրաքանչյուր լեզվին կամ բարբառին, խոսվածքին և դրա անվանը:

Շուգնաներեն: Շուգնաներենը Տաջիկստանի Լեռնային Բադախշանի մարզի Շուգնան պատմական մարզում, ինչպես նաև Աֆղանստանի Բադախշանում ապրող շուգնանների առօրյա հաղորդակցության լեզուն է, խոսողների թիվը՝ մոտավորապես 100 հազար: 1930-ական թվականներին ստեղծված գրի հիմքում ընկել է լատինական այբուբենը, 1980-ականներին՝ ռուսականը: Դասավանդվում է դպրոցներում, սակայն շուգնանների գրական լեզուն տաջիկերենն է: Շուգնանների լեզուն անվանելու համար Հր. Աճառյանի «Լիակատար քերականության» մեջ քանիցս գործածվել է **շիղնի** բարբառանուն/լեզվանունը (հմմտ. ֆրանս. šuɡni). «Այսպես է նաև իրանական **շիղնի** բարբառը», «Սեռի պահպանության հետաքրքրական օրինակ է տալիս Պամիրի իրանյան **շիղնի** բարբառը» (Աճառյան 1957, 270, 272) և այլն: Լեզվաբանության բուհական դասագրքերում հետագայում սկսեցին գործածել **շուգնաներեն** հայերեն կազմությունը (Աղայան 1967, 573, նաև Աղայան 1987, 674, Խաչատրյան 2008, 262) (հմմտ. шугнанский язык): Բազմահատորյա հանրագիտարանում էլ է հայկականացված լեզվանունը գործածվել (Հայկական սովետական հանրագիտարան 1980, 471): Փոխառյալ **շիղնի**-ն գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում», որտեղ նրանից հողում է արվում **շուգնաներեն**-ին. **շիղնի**-ն իբրև տարբերակ տրված է այդ բառահոդվածում (Պետրոսյան և այլք 1975, 243, 246): Հայերեն **շուգնաներեն** լեզվանունը կազմվել է **շուգնան** ժողովրդանունից և **-երեն** ածանցից: Նույն կերպ են կազմվել **արաբերեն**, **մոնղոլերեն**, **թուրքերեն** և հայերեն ուրիշ լեզվանուններ: **Շուգնաներեն** հայկականացված լեզվանվան ինչյունական-ուղղագրական տարբերակն էլ կա՝ **շուղնաներեն,** որը գործածել է Գ. Ջահուկյանը (Ջահուկյան 1987, 669): Ինչպես տեսանք, **ղ** կա **շիղնի** փոխառյալ տարբերակում նույնպես: Այսպիսի տառադարձությունն իրանյան ազդեցության հետևանք է: **Շուղնաներեն** տարբերակը երկու առումով նախընտրելի է. ա) հայկականացված է, բ) հնչյունական տեսանկյունից հարազատ է փոխատու իրանական լեզվին: Սակայն պիտի արձանագրենք այն ակնհայտ իրողությունը, որ հայերեն գիտական խոսքում այժմ առավելաբար **գ**-ով՝ **շուգնաներեն** լեզվանունն է գործածվում: Օրինակ՝ «Նա անտեղյակ է պամիրյանների զուգահեռներից. **շուգնաներենում**՝ pir-pirt «փոշտալ»» (Մկրտչյան 2015, 48): Հանրագիտական բառարանում, որը վերջերս է հրատարակվել, որպես գլխաբառ գրանցվել է հենց **շուգնաներեն**-ը (Հանրագիտական բառարան 2018, 556):

Սարիքոլերեն: Այս լեզվով (դիտվում է նաև որպես շուգնաներենի բարբառ) խոսում են Չինաստանի տաջիկները Սինցզյանի հարավ-արևմուտքում՝ Պամիրի բարձրլեռնային տարածքներում, Սարիքոլ գետի հովտում: Որոշ լեզվակիրներ ապրում են չին-պակիստանյան սահմանից ոչ հեռու՝ պակիստանյան Քաշմիրի շրջանում: Խոսողների թիվը հայտնի չէ (անցած դարավերջին շուրջ 20 հազար էր):

Լեզվանունը բավական խայտաբղետ տարբերակներով է հանդիպում հայերենի բառարաններում, գիտական և գիտատեղեկատվական հրապարակումներում: Հր. Աճառյանը գործածել է **սարիքոլի** բարբառանուն/լեզվանունը: Այսպես, օրինակ՝ «**Սարիքոլի** բարբառը պրս. xeyli «շատ» բառից ստեղծել է -xel մասնիկը» (Աճառյան 1957, 384): Ավելի վաղ Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» գործածել է **սարիղոլի** տարբերակը՝ **ղ**-ով (Աճառյան 1971, 66): Այս գործածությունների հիման վրա «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **սարիղոլի** փոխառյալ լեզվանունը, որից հղում է արվում **սարիքոլի** հիմնական բառահոդվածին (հմմտ. ռուս. сарикoли, ֆրանս. sarikoli) (Պետրոսյան և այլք 1975, 271): Տարբերությունը **ղ**/**ք** հնչյուններն են: Տարբերակայնությամբ է հանդես գալիս **–երեն** ածանցով կազմված լեզվանունը նույնպես:

Գ. Ջահուկյանն իր մի հիմնարար գրքում գործածել է **սարըկոլերեն** հայակազմ տարբերակը (Ջահուկյան 1987, 669): Այստեղ, ինչպես տեսնում ենք, **ղ**/**ք**-ի փոխարեն ունենք **կ**, իսկ **ի**-ի փոխարեն՝ **ը**: Բառամիջի **ը**-ն գոյացել է հավանաբար ռուսերենի сарыкольский язык լեզվանվան մեջ գործածված ы-ի տառադարձման հետևանքով (սա էլ իր հերթին իրանյան ազդեցությամբ է կատարվել):

Լեզվաբանական մեկ այլ գրքում էլ բազմիցս գործածվել է նշված հայակազմ լեզվանվան **սարըքոլերեն** տարբերակը (**սարըկոլերեն**-ի **կ**-ի փոխարեն կիրառվել է **սարիքոլի**-ի **ք**-ն): Օրինակներ՝ «**Սարըքոլերենում**՝ monik «խնձորիկ», mon «խնձոր»-ից», «Այս ածանցի զուգահեռը գտնում ենք պամիրյաններում, ինչպես օր. **սարըքոլերենում**» և այլն (տե՛ս Մկրտչյան 2015, 87, 92, այլև 32, 75, 90, 109 և այլն): Մեր կարծիքով, լեզվանունը **սարիքոլերեն** ձևը պիտի ունենա, եթե ы-ն **ի** տառադարձենք:

Բուրունգսոլերեն և թաշկուրգաներեն: Պամիրյան լեզուների շարքում բուրունգսոլերենը և թաշկուրգաներենը չեն հիշատակվում, քանի որ սարիքոլերենի բարբառներ են (հմմտ. ռուս. бурунгсольский диалект, ташкурганский диалект (Эдельман 2022, 26)): Այսինքն՝ **բուրունգսոլերեն**-ը և **թաշկուրգաներեն**-ը լեզվանվան մասնավոր դրսևորումներ են, բարբառանուններ: Հիշյալ բարբառները գործածվում են Չինաստանում՝ Թաշկուրգան-Տաջիկական ինքնավար գավառում: **Թաշկուրգան**-ը Սարիքոլ գետի մյուս անունն է. **Բուրունգսոլ**-ը նույնպես գետանուն է:

Խոսելով **ռուշտ** արմատի մասին՝ արևելագետ Ն. Մկրտչյանը գրում է, որ Աճառյանին հայտնի չէ «այս բառի զուգահեռների առկայությունը պամիրյաններում, որոնք և տալիս են ծագման բանալին». շուգնաներենում և յազգուլամերենում rust «կարմիր», **բուրունգսոլերենում**՝ ruist, **թաշկուրգաներենում**՝ rbist (Մկրտչյան 2015, 120): Թերևս եզակի գործածություն է, ուստի բնական է, որ բարբառանունները հայերենի բառարաններում չեն արձանագրվել:

Ռուշաներեն: Պամիրում՝ Տաջիկստանի Լեռնային Բադախշանի ինքնավար մարզում և Աֆղանստանում բնակվող ռուշանների լեզուն է, շուգնաներենի մերձավոր ցեղակիցը: Խոսողների թիվը՝ մոտ 18 հազար:

Հայերենագիտության մեջ սկզբնապես գործածվել է **ռոշանի** (ավանդական ուղղագրությամբ՝ **ռօշանի**) ձևով (Աճառյան 1955, 477, Աճառյան 1971, 65): Հետագայում, երբ սկսվեց ոչ հայտնի լեզուների անունների հայերենացումը, կազմ-

վեց **ռուշաներեն** լեզվանունը: Կազմությունն ակնհայտ է՝ **ռուշան+երեն**, որը «ժողովրդանուն+երեն» կառույցի իրացումն է: Այս լեզվանվան պարագայում նկատելի է մի իրողություն, որ այլ դեպքերում էլ է պատահում: Մասնագիտական և գիտատեղեկատվական գրականության մեջ, թեպետև սահմանափակ գործածությամբ, ամրակայված է հայակազմ լեզվանունը (Պետրոսյան և այլք 1975, 253, Հայկական սովետական հանրագիտարան 1980, 471): Սակայն համացանցի թարգմանական հրապարակումներում հայտնվում է փոխառյալ **ռուշանի** տարբերակը: **Ռուշաներեն**-ը գլխաբառ է դարձել միայն «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 266):

Խուֆերեն: Խուֆերենը շուգնանառուշանական ճյուղի պամիրյան լեզու է: Խոսվում է Տաջիկստանի Լեռնային Բադախշանի ինքնավար մարզի Խուֆ և Պաստխուֆ գյուղերում, խոսողների թիվը՝ շուրջ 2000: Անհետացող լեզու է:

Խուֆերեն լեզվանունը կազմվել է **խուֆցի** ցեղանվան **ցի**-ի կրճատմամբ և հիմքին **-երեն** ածանցի հավելմամբ:

Հանդիպում է փոխառյալ **խուֆի** տարբերակը, հատկապես **Խուֆի բարբառ** բաղադրյալ անվան մեջ (Խաչատրյան 2019, 10): Պամիրյան լեզուները, բարբառներն ու խոսվածքները հաճախ հիշատակվում են ըստ տեղանվան: Օրինակ՝ «Մի լեզվական միություն է, որը կազմված է հետևյալ խոսվածքներից՝ Շուգնանի, Ռուշանի, Խուֆի, Բարտանգի, Օրոշորի և Սարիքոլի» (Նալբանդյան 1960, 61): **Ի**-ով այս ձևերն ընկալվում են ինչպես տեղանվան սեռական հոլովաձևեր, այլև առանձնաբար՝ որպես լեզվանուն/բարբառանուններ: **Խուֆերեն**-ը գլխաբառ է դարձել միայն «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 143):

Բարթանգերեն: Այս լեզուն տարածված է Բարթանգ գետի երկայնքի բնակավայրերում՝ Տաջիկստանում: Խոսողների թիվը՝ շուրջ 5,5 հազար: Մտնում է ռուշանա-շուգնանական (կամ պարզապես շուգնանական) ճյուղի մեջ. ոմանք բարբառ են համարում: Հայերենում գործածվել են լեզվանվան ինչյունական-ուղղագրական երկու տարբերակներ՝ **բարտանգերեն** և **բարթանգերեն**՝ **տ**/**թ** հակադրությամբ:

Բարտանգերեն-ը գործածվել է հայկական բազմահատորյա հանրագիտարանում՝ արևելաիրանական նոր լեզուների, մասնավորապես պամիրյանների թվարկման մեջ (Հայկական սովետական հանրագիտարան 1980, 471) (հմմտ. ռուս. бартангский язык), իսկ **բարթանգերեն**-ը՝ պամիրյան լեզուների և հայերենի առնչություններին նվիրված մենագրության. «Պամիրյան մի շարք լեզուներում՝ յազգուլամերենում, **բարթանգերենում**, ռուշաներենում ande նշանակում է «այնտեղ»» (Մկրտչյան 2015, 125): Համացանցում հանդիպում է նաև երրորդ՝ փոխառյալ տարբերակը՝ **բարթանգի** (Մկրտչյան 2015, 125) (հմմտ. անգլ. Bartangi language):

«Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **բարտանգերեն** տարբերակը (Պետրոսյան և այլք 1975, 62):

Օրոշորերեն: Շուգնանական ճյուղի լեզու է կամ բարբառ (Պետրոսյան և այլք 1975, 253), շատ մոտ՝ բարթանգերենին: Բարթանգցիների էթնիկական մի խմբի՝ օրոշորցիների կամ ռոշորվցիների առօրյա հաղորդակցության միջոցն է: Խոսվում է Տաջիկստանի Լեռնային Բադախշանի մարզում՝ Բարթանգ գետի վերին հոսանքներում՝ Ռուշանի շրջանի Ռոշորվ (հին գրությամբ՝ Օրոշոր) բնակա-

վայրում: Խոսողների թիվը՝ մոտ 2000: Սկզբում հայերեն գիտական խոսքում գործածվել է **օրոշորի** փոխառյալ լեզվանունը: Հայերեն **օրոշորերեն** լեզվանունը կազմվել է ցեղանվան հիմքով և **-երեն** ածանցով: Խիստ հազվադեպ է անգամ լեզվաբանական գրականության մեջ: Գլխաբառ է դարձել միայն «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 314):

Յազգուլամերեն: Տաջիկստանում՝ Արևմտյան Պամիրի Յազգուլամ գետի հովտում ապրող յազգուլամցիների լեզուն է: Ունի երկու բարբառ՝ վերին և ներքին, որոնք իրարից շատ չեն տարբերվում: Խոսողների թիվը մեծ չէ. շուրջ 3500: Հայերեն գիտական խոսքում սկզբնապես գործածվել է **յազգուլամի** փոխառյալ լեզվանունը, ավանդական ուղղագրությամբ՝ **եազգուլամի** (Աճառյան 1971, 63. Արմատական բառարանն առաջին անգամ հրատարակվել է 1925-1937 թվականներին): Բնագրային օրինակ՝ «**Յազգուլամի** լեզվի գոյության մասին հայտնի դարձավ 1908 թվականին» (Նալբանդյան 1960, 61): Փոխառյալ ձևը գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 221), թեպետ նույն բառարանի «Պամիրյան լեզուներ» բառահոդվածում գործածվել է **յազգուլամերեն** հայակազմ տարբերակը (Պետրոսյան և այլք 1975, 253): Այս իրողությունը հուշում է, որ լեզվանվան հայերենացումը հենց այդ շրջանում ընթացքի մեջ էր: Լեզվանունների հայերենացման ընթացքին կարող ենք հետևել նաև հնդկական լեզուների անունների օրինակով (տե՛ս Գյուրջինյան 2021, 17-37):

Հայկական բազմահատորյա հեղինակավոր հանրագիտարանը պամիրյան լեզուներին վերաբերող հոդվածում երեք անգամ հիշատակում է յազգուլամերենը (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105)՝ որոշակիորեն ամրակայելով դրա տեղը իրանական լեզուների գիտական անվանակարգում: Այնուհետև միայն **յազգուլամերեն** տարբերակն է գործածվում հայերենագիտական և իրանագիտական աշխատություններում (Ջահուկյան 1987, 669, Մկրտչյան 2015, 32, 62 և այլն):

Յազգուլամերեն լեզվանունը կազմվել է հայերենում ընդունված եղանակով. **յազգուլամցի** բառից անջատվել է «որևէ տեղացի, ազգի ներկայացուցիչ» բառակազմական իմաստը հաղորդող **–ցի** վերջածանցը, ավելացել է «լեզու» նշանակող **–երեն**-ը: Նշենք, որ **յազգուլամի-ն** ունի **յազղուլամի** հնչյունական-ուղղագրական տարբերակը (**գ**-ի փոխարեն **ղ** է) (Հակոբյան 2022, 4): Թեև **ղ**-ն հարազատ է իրանական լեզուներին, և թերևս **յազղուլամերեն** տարբերակն ավելի ճիշտ կլիներ, սակայն հանրագիտարանային ամրակայումից հետո գուցե նպատակահարմար չէ ևս մեկ տարբերակի շրջանառումը: Լեզվանվան մեջ **գ**-ի «դիրքի ամրացմանը նպաստում են» ռուսերենը և եվրոպական լեզուները. հմմտ. ռուս. язгулямский язык, անգլ. Yazghulami language և այլն: Շուգնանառուշանական խումբը և յազգուլամերենը կազմում են հյուսիսպամիրյան լեզվախումբը:

Իշկաշիմերեն: Տաջիկստանի Լեռնային Բադախշանի ինքնավար մարզի Իշքաշիմի շրջանի մի քանի գյուղերի բնակիչների լեզուն է: Ըստ որոշ գնահատումների՝ խոսողների թիվը չի հասնում երկու հազարի: Սահմանափակ գործածություն ունեցող լեզվանունը հայերենում ունի չորս տարբերակ: Երկուսը փոխառյալ են, որոնք իրարից տարբերվում է **կ**/**ք** լծորդ հնչյուններով՝ **իշկաշիմի** (Աճառյան 1955, 477. այստեղ **իշկաշմի** ձևով է տրված) և **իշքաշիմի** (Նալբանդյան 1960, 61)

(հմմտ. պարսկերեն EŠKĀŠ(E)MĪ («Իրանիկա» էլեկտրոնային հանրագիտարան. https://iranicaonline.org/articles/asb-pre-islamic-iran): Սրանց հետագայում փոխարինեցին **-երեն** ածանցով հայակազմ լեզվանունները՝ **իշկաշիմերեն** և **իշքաշիմերեն**:

Հայերեն կազմություններում ևս դրսևորվում է հնչյունական/տառային միևնույն տարբերակայնությունը: Այսպես. «Լեզվաբանական բառարանի» «Պամիրյան լեզուներ» բառահոդվածում գործածվել է **իշկաշիմերեն**, «Սանգլիչի բարբառ» բառահոդվածում՝ **իշքաշիմերեն** լեզվանունը: Զուգաձևություն միևնույն աշխատության շրջանակում: Հայկական հանրագիտարանում գործածվել է **իշկաշիմերեն** տարբերակը. «Պամիրյան լեզուների մեջ են մտնում շուգնա-ռուշանական լեզվախումբը, յազգուլամերենը, **իշկաշիմերենը** և վախաներենը» (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105): Ի դեպ, **կ**-ով տարբերակն է նախընտրել Գ. Ջահուկյանը (Ջահուկյան 1987, 668): «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **կ**-ով տարբերակը՝ **իշկաշիմերեն**-ը (Պետրոսյան և այլք 1975, 253, 270, 120):

Սանգլիչերեն: Սանգլիչ գետի հովտում՝ Տաջիկստանում և Աֆղանստանում, տարածված լեզու: Խոսողների թիվը՝ մոտավորապես 1500 մարդ: Համարվել է իշկաշիմերենի բարբառ՝ **Սանգլիչի բարբառ** (սա գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 270)): Այժմ դիտվում է որպես պամիրյան լեզուներից մեկը: Սանգլիչների լեզուն անվանելու համար հայերենում գործածվում են փոխառյալ բառը՝ **սանգլիչի**, և հայակազմ լեզվանունը՝ **սանգլիչերեն** (հմմտ. ռուս. санглийский язык): Այսպես, օրինակ. «Մ.պ., պթև. gōš, սողդ. γwš-, քրդ. gu(h), gwē, զազա gōš, սարիքոլի γɛwl, իշքաշոմի (պարսկերեն՝ **էշքաշմի** կամ **էշքյաշմի** (اشکاشمی، https://vajehyab.com/ dehkhoda/) – պարզաբանումը մերն է՝ Դ.Գ.), γūl, **սանգլիչի** γōl և այլն» (Կիրակոսյան 2017, 18) և «1876 թ. Կալկաթայում Ռ. Շոուն հրապարակեց ոչ միայն վախաներենի քերականության ակնարկը և կապակցված տեքստեր, այլև մի քանի տասնյակ մունջաներեն բառերի համեմատությունը վախաներենի, սարըքոլերենի, շուգնաներենի և **սանգլիչերենի** հետ» (Մկրտչյան 2015, 109): **Սանգլիչերեն**-ը բառարանային գրանցում չունի:

Վախաներեն: Վախանների լեզուն կենցաղային հաղորդակցության միջոց է Լեռնային Բադախշանում (Տաջիկստան), Տաջիկստանի և Աֆղանստանի սահմանին Փանջ գետի վերին հոսանքի երկայնքով, պատմական Վախան նահանգի տարածքում, Պակիստանի հյուսիսային շրջաններում, Արևելյան Պամիրի չինական մասում: Խոսողների հստակ թիվ չկա, ենթադրվում է 50-ից մինչև 75 հազար մարդ: Վախանների լեզուն անվանելու համար հայերենում գործածվել է երեք բառ: Նախ գործածվել են փոխառյալ **վախի** և **վախանի** տարբերակները: Օրինակներ՝ «Լեզուները սկսեցին հնարել նոր հոգնակերտ մասնիկներ. այսպես, պարսկերեն -an և -ha, **վախի**՝ -išt, բելուջերեն՝ -ān» (Աճառյան 1957, 384), «Ժամանակակից իրանական լեզուների մեջ կան այնպիսիները (օսերեն, քրդերեն, բելուջերեն, պամիրյան լեզուներից՝ **Վախանին**), որոնք քիչ փոփոխությունների են ենթարկվել» (Նալբանդյան 1960, 62): Ի դեպ, հայերենում լեզվանվան տարբերակայնությունը ձևավորվել է օտար լեզուների ազդեցությամբ. հմմտ. անգլ. Wakhi Language, Wakhani Language, ֆրանս. Wakhi:

XX դարի երկրորդ կեսին սկսվեց քիչ գործածական փոխառյալ լեզվանունների հայերենացումը, կազմվեց **վախաներեն** բառը (հմմտ. ռուս. ваханский язык): Այդ ընթացքը մեծ մասամբ պայմանավորված էր նաև հայերեն բազմահատորյա հանրագիտարանի հրատարակությամբ: Պատահական չէ, որ **վախաներեն**-ի մեզ հայտնի առաջին գործածությունը հենց նշված հանրագիտարանում է. «Շուգնանառուշանական խմբի լեզուներով խոսում է մոտ 40 հզ., **վախաներենով**՝ մոտ 20 հզ. մարդ» (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105): «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել միայն **վախի**-ն, որի բառահոդվածում որպես տարբերակ տրված է **վախանի**-ն (Պետրոսյան և այլք 1975, 282): **Վախաներեն**-ը, սակայն, գլխաբառ չի դարձել վերջին տարիներին լույս տեսած հանրագիտական երկհատոր բառարանում:

Մունջաներեն: Մունջանները ապրում են հիմնականում Աֆղանստանի Բադախշան գավառում՝ Մունջան գետի հովտում, նաև Պակիստանի սահմանակից տարածքներում: Որոշ լեզվաբաններ պամիրյան լեզուների մեջ մունջաներենն ընդգրկում են վերապահությամբ (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105), և հարցը տակավին վիճելի է (Лингвистический энциклопедический словарь 1990, 363):

Իշկաշիմերենը, վախաներենը և մունջաներենը կազմում են հարավպամիրյան լեզվախումբը: Այս լեզուն անվանելու համար սկզբնապես գործածվել է **մունջանի** փոխառյալ բառը, որը գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան և այլք 1975, 221): Պետք է նկատել, սակայն, որ այն նույն բառարանում առանձնաբար չի գործածվել, այլ **լեզու** բառի հարադրությամբ: Այսպես. «Այս խմբի մեջ են մտցնում նաև **մունջանի լեզուն**՝ յիդղահ բարբառով» (Պետրոսյան և այլք 1975, 253):

Խորհրդային շրջանում հայկական բազմահատորյա բառարանը որդեգրել է **մունջաներեն** տարբերակը (Հայկական սովետական հանրագիտարան 1983, 105)՝ **մունջանի** բառի վերջի **ի**-ի փոխարեն դնելով հայերեն **–երեն** ածանցը: Ակնհայտ է, որ **մունջանի լեզու** բառակապակցության փոխարեն նպատակահարմար է **մունջաներեն** բառի գործածությունը, որտեղ ածանցը լիովին փոխարինում է **լեզու** բառին: **Մունջաներեն** լեզվանունն ավելի կարճ է, լիովին ընկալելի: Այժմ գիտական գրականության մեջ և բարձրագույն կրթության համակարգում ընդունված է հայակազմ տարբերակի կիրառությունը: Բնագրային օրինակներ՝ «կատու-փիսո. **մունջաներենում** pešók», «Չպետք է անտեսել **մունջաներենում** առկա ....բացասական, ժխտական մասնիկի գոյությունը» (Մկրտչյան 2015, 51, 69, տե՛ս նաև Խաչատրյան 2017, 473, https://www.ysu.am/media/5035): Սակայն քիչ թե շատ ընդունված **մունջաներեն** լեզվանունից շեղվելու դեպքեր լինում են: Այսպես, օրինակ, հանրագիտական բառարանը պամիրյան լեզուները թվարկելիս **իշկաշիմերեն** լեզվանվան կողքին փակագծերում գրել է **մունջանի** (Հանրագիտական բառարան 2018, 599), որն ամենևին արդարացված չէ: Հարկ է նշել նաև, որ գիտական աշխատություններում և հատկապես համացանցային թարգմանական տեղեկատու նյութերում օտար ազդեցությամբ պատահում է նաև **մունջի** փոխառյալ լեզվանունը: Օրինակ՝ «1880 թ. ավելի մանրամասն տեղե-

կություններ է լույս ընծայում **մունջի** և յիդգի (գրքում այս ձևով է տրված. - Դ.Գ.) լեզուների մասին» (Մկրտչյան 2015, 109): **Մունջաներեն**-ը որևէ բառարանում գլխաբառ չի դարձել:

Յիդղայերեն: Յիդղաները մունջանցիների էթնիկական մի խումբ են, ապրում են Պակիստանի հյուսիսում՝ Լուտկուխ գետի հովտում: Խոսում են մայրենի լեզվով. խոսողների թիվը 6000-ից ավելի է: Յիդղաների լեզուն դիտվել է որպես մունջաներենի բարբառ: «Լեզվաբանական բառարանում», օրինակ, գրված է. «Այս խմբի մեջ են մտցնում նաև մունջանի լեզուն՝ **յիդղահ բարբառով**» (Պետրոսյան և այլք 1975, 253): Նույն բառարանում, սակայն, գլխաբառ է դարձել **յիդղա** ձևով (**յիդղահ**-ը փակագծերում է), և բառահոդվածում այսպիսի բացատրություն կա. «Հնդեվրոպական լեզու. պատկանում է հնդ-իրանական ճյուղի իրանական ենթաճյուղի պամիրյան լեզուների խմբին» (Պետրոսյան և այլք 1975, 222):

Հազվադեպ է **յիդգա** տարբերակը՝ **ղ** /**գ** հնչյունների փոխարինմամբ: Առաջինը թերևս Հր. Աճառյանն է գործածել այսպես՝ **յիդգա** (yidgha) (Աճառյան 1971, 65), թեպետ հետագայում որդեգրել է **յիդղահ** տարբերակը (Աճառյան 1955, 477): Հանդիպում է նաև մեր օրերում. «....**յիդգա** լեզուն պատկանում է այն ամենահին բարբառների թվին, որոնցով խոսում են Իրանում» (Մկրտչյան 2015, 109): Փոխառյալ տարբերակներից բացի, կա լեզվանվան նաև հայակազմ տարբերակը: **Յիդգա** տարբերակից **–երեն** ածանցով կազմվել է **յիդգայերեն** լեզվանունը: Այսպես. «Մի շարք իրանական լեզուներում (փուշտու, պամիրյաններից՝ մունջաներենում, **յիդգայերենում**, բելուջերենում, օրմուրերենում, պարաչիերենում, որոնք ձևավորվել են հնդարիականների տարածքում)....» (Մկրտչյան 2015, 28): Լեզվանվան հայերենացումը ընդհանուր գործընթացի մի դրսևորումն է, սակայն ընդունված **ղ**-ի փոխարեն **գ**-ի ներմուծումն արդարացված չէ (հմմտ. ռուս. йидга, язык йидга): Մեր կարծիքով, ճիշտ կլինի **-երեն** ածանցն ավելացնել գիտական խոսքում ամրակայված **յիդղա** տարբերակին, և կունենանք **յիդղայերեն** ընդունելի լեզվանունը:

Այսպիսով, XX դարի կեսերից առ այսօր հայերեն գիտական խոսքում գործածվել, բառարաններում գրանցվել են պամիրյան լեզուների և բարբառների հետևյալ անունները՝ այսպիսի տարբերակայնությամբ (կամ առանց դրա՝ **բուրունգսոլերեն** և **թաշկուրգաներեն**).

ԲԱՐՏԱՆԳԵՐԵՆ / ԲԱՐԹԱՆԳԵՐԵՆ
ԻՇԿԱՇԻՄԵՐԵՆ – իշկաշիմի, իշքաշիմի
ԽՈՒՖԵՐԵՆ – խուֆի
ՄՈՒՆՋԱՆԵՐԵՆ – մունջանի, մունջի
ՅԱԶԳՈՒԼԱՄԵՐԵՆ – յազգուլամի
ՅԻԴՂԱՅԵՐԵՆ / ՅԻԴԳԱՅԵՐԵՆ – յիդղա, յիդղահ, յիդգա
ՇՈՒՂՆԱՆԵՐԵՆ / ՇՈՒԳՆԱՆԵՐԵՆ – շիղնի
ՌՈՒՇԱՆԵՐԵՆ – ռուշանի, ռոշանի
ՍԱՆԳԼԻՉԵՐԵՆ – սանգլիչի
ՍԱՐԸԿՈԼԵՐԵՆ / ՍԱՐԸՔՈԼԵՐԵՆ – սարիքոլի, սարիղոլի
ՎԱԽԱՆԵՐԵՆ – վախի, վախանի
ՕՐՈՇՈՐԵՐԵՆ – օրոշորի

Այժմ գիտական խոսքում գործածվող պամիրյան լեզուների անունները հիմնականում հայակազմ են (հնչյունական որոշ տարբերակայնությամբ): Ահա բնագրային ցայտուն մի օրինակ. «Այսպիսի հնարավորություն մեզ ընձեռում են իրանականները և հատկապես պամիրյանները, որոնցում գտնում ենք pisen - **շուգնաներենում**, pasan – **յազգուլամերենում**, pizun – **վախաներենում**, pisin – **ռուշաներենում** և **բարտանգերենում**» (Մկրտչյան 2015, 124): Հատկապես իրանագիտական աշխատանքներում տակավին պատահում են նաև փոխառյալ տարբերակները:

Եզրակացություններ

1. Պամիրյան լեզուների անուններն անվանում են լեզուներ և բարբառներ, խոսվածքներ (դրանց սահմանները երբեմն հստակ չեն): Լեզվանուն բառն այդ պարագայում իմաստային ավելի մեծ ընդգրկում ունի. այն նշանակում է նաև «բարբառանուն»:

2. Հայերենագիտության մեջ պամիրյան լեզուների անունների առաջին գործածությունները վերաբերում են XX դարի կեսին, սկզբնապես փոխառությամբ (ֆրանսերենից, անգլերենից և իրանական լեզուներից), նույն դարի երկրորդ կեսից սկսվում է դրանց հայերենացումը «լեզու» նշանակող –**երեն** ածանցի միջոցով (ռուսերենի ազդեցությամբ):

3. Հայերեն գիտական խոսքում այժմ իշխում են հայերեն կազմությունները, թեպետ հանդիպում են նաև փոխառյալ տարբերակները (հատկապես իրանագիտական աշխատանքներում):

4. Պամիրյան լեզուներն անվանելու համար –**երեն** ածանցով կազմվել և գիտական խոսքում գործածվել են հետևյալ լեզվանունները (ներառյալ բարբառանունները)՝ **բարթանգերեն/բարտանգերեն**, **բուրունգսոլերեն**, **թաշկուրգաներեն**, **իշկաշիմերեն/իշքաշիմերեն**, **խուֆերեն**, **մունջաներեն**, **յազգուլամերեն**, **յիդգայերեն/յիդղայերեն**, **շուգնաներեն/շուղնաներեն**, **ռուշաներեն**, **օրոշորերեն**, **սանգլիչերեն**, **սարըքոլերեն/սարըկոլերեն**, **վախաներեն**:

5. Պամիրյան լեզուների հայերեն անուններն ունեն տարատեսակ տարբերակներ՝ ա) հնչյունական-ուղղագրական, բ) բառակազմական, գ) բառային: Հայերեն լեզվանունների գիտական անվանացանկում հարկավոր է նվազագույնի հասցնել տարբերակայնությունը:

6. Հայերենի լեզվաբանական (տերմինաբանական) և հանրագիտական բառարաններում գլխաբառ են դարձել **բարտանգերեն**, **իշկաշիմերեն**, **խուֆերեն**, **շուգնաներեն**, **ռուշաներեն**, **օրոշորերեն** հայակազմ լեզվանունները (և բարբառանունները), ինչպես նաև **մունջանի**, **յազգուլամի**, **յիդղա/յիդղահ**, **սարիքոլի**, **վախի**, **սանգլիչի** (բարբառ) փոխառյալ միավորները: Բացատրական բառարաններում սրանցից ոչ մեկն ընդգրկված չէ:

7. Չեն բառարանագրվել հայակազմ **մունջաներեն**, **յազգուլամերեն**, **յիդգայերեն**, **սանգլիչերեն**, **սարըկոլերեն/սարըքոլերեն**, **վախաներեն** լեզվանունները և **բուրունգսոլերեն**, **թաշկուրգաներեն** բարբառանունները:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում իրանագետ Զ. Խաչատրյանին:

Գրականություն/References/Литература

1. Աղայան Է. Բ. 1967, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք»:
   Aghayan E.B. 1967, Introduction to Linguistics, Yerevan, Mitk (in Armenian).
2. Աղայան Է. Բ. 1987, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Aghayan E.B. 1987, Fundamentials of Linguistics, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
3. Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների: Ներածություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Atcharyan H. 1955, Complete Grammar of the Armenian Language in Comparison with 562 Langauges: Introduction, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
4. Աճառյան Հ. 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Atcharyan H. 1957, Complete Grammar of the Armenian Language in Comparison with 562 Languages, vol. 3, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
5. Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Atcharyan H. 1971, Armenian Etymological Dictionary, vol. 1, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
6. Գյուրջինյան Դ. 2021, Հնդկական լեզուների անունները հայերենում. գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր, Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Քոփի փրինթ», 17–37:
   Gyurjinyan D. 2021, The Names of the Indian Languages in the Armenian Language: Issues of Usage, Standardization, and Lexicographical Processing. Contemporary Problems and Prospects of the Armenian Lexicography: Materials from the International Conference, Yerevan, Copy Print, 17–37 (in Armenian).
7. Գյուրջինյան Դ. 2023ա, Ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) լեզուների հայերեն անվանումները. գործածության և կանոնարկման հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 125–147:
   Gyurjinyan D. 2023a, The Armenian Names of the Austronesian (Malaya-Polynesian) Languages: Issues of Usage and Regulation, Herald of Social Sciences, N 1, 125–147 (in Armenian).
8. Գյուրջինյան Դ. 2023բ, Դաղստանյան լեզուների հայերեն անունները. գործածությունը և բառարանային մշակումը, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, N 1, 65–98:
   Gyurjinyan D. 2023b, The Armenian Names of the Daghestan Languages: Usage and the Lexicographical Processing, Herald of Brusov State University, Linguistics and Philology, N 1, 65–98 (in Armenian).
9. Գյուրջինյան Դ. 2024, Իրանական լեզուների հայերեն անունները. ժամանակագրությունը, գործածությունը, բառարանային մշակումը և կանոնարկման խնդիրները, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, N 1, 64-121:

Gyurjinyan D. 2024, Armenian Names of Iranian Languages: Chronology, Usage, Lexicographical Processing and Normative Issues, Herald of Brusov State University, Linguistics and Philology, N 1, 64-121 (in Armenian).

10. Խաչատրյան Զ. 2017, Ձիանունները Խաղանի Շիրվանիի պոեզիայում, Արևելագիտության հարցեր, N 13, 464–474:
Khachatryan Z. 2017, The Names of Horses in the Poetry of Khaghani Shirvani, Oriental Studies, N 13, 464–474 (in Armenian).
11. Խաչատրյան Զ.Հ. 2019, Ձիանունները պարսկերենում և հայերենում. համեմատական ուսումնասիրություն, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան:
Khachatyan Z.H. 2019, The Names of Horses in Persian and Armenian Languages: A Comparative Study, a summary of the thesis for the degree of Candidate of Philological Sciences, Yerevan (in Armenian).
12. Խաչատրյան Լ. Մ. 2008, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ»:
Khachatryan L.M. 2008, Introduction to Linguistics, Yerevan, Zangak (in Armenian).
13. Կիրակոսյան Հ.Ց. 2017, Մարդու մարմնի մաս նշանակող բառանվանումներով կազմված տեղանունները իրանական լեզուներում, Լեզու և լեզվաբանություն, N 2, 15–26:
Kirakosyan H.C. 2017, Toponyms Formed with Words Denoting Parts of the Human Body in Iranian Languages, Language and Linguistics, N 2, 15–26 (in Armenian).
14. Հակոբյան Գ.Գ. 2022, Հարավկասպյան-ատրպատականյան իրանական լեզվամիությունը, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան:
Hakobyan G.G. 2022, The South Caspian-Atropatene Iranian Language Union, a summary of the thesis for the degree of Candidate of Philological Sciences, Yerevan (in Armenian).
15. Հայկական սովետական հանրագիտարան 1980, հ. 6, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:
Armenian Soviet Encyclopedia 1980, vol. 6, Yerevan, Chief Editorial Board of the Armenian Soviet Encyclopedia (in Armenian).
16. Հայկական սովետական հանրագիտարան 1983, հ. 9, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:
Armenian Soviet Encyclopedia 1983, vol. 9, Chief Editorial Board of the Armenian Soviet Encyclopedia (in Armenian).
17. Հանրագիտական բառարան 2018, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ.:
Encyclopedic dictionary 2018, vol. 2, Yerevan, Armenian Encyclopedia (in Armenian).
18. Հովհաննիսյան Լ.Շ. 1990, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
Hovhannisyan L.Sh. 1990, Iranian Loanwords in Armenian, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
19. Մկրտչյան Ն. 2015, Պամիրյան լեզուները և հայերենը: Սկյութերեն բառապաշարը, Երևան, «Լուսակն»:
Mkrtchyan N. 2015, The Pamirian Languages and Armenian: Scythian Vocabulary, Yerevan, Lusakn (in Armenian).
20. Նալբանդյան Գ. Մ. 1960, Իրանական լեզուներն ու բարբառները, Երևան, ԵՊՀ հրատ.:

Nalbandyan G.M. 1960, Iranian Languages and Dialects, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).

21. Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարագյուլյան Թ.Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Petrosyan H.Z., Galstyan S.A., Gharagulyan T.A. 1975, Linguistic Dictionary, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

22. Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Jahukyan G.B. 1987, History of the Armenian Language: Pre-Writing Period, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

23. Додыхудоева Л.Р. 2014, Памирские языки в условиях языкового сдвига, Языковая политика и языковые конфликты в современном мире, Москва, изд. Института языкознания РАН, 430–437.
Dodykhudoeva L.R. 2014, Pamirian Languages in the Conditions of Language Shift, Language Policy and Language Conflicts in the Modern World, Moscow, Institute of Linguistics RAS Press, 430–437 (in Russian).

24. Лингвистический энциклопедический словарь 1990, Москва, «Советская энциклопедия».
Linguistic Encyclopedic Dictionary 1990, Moscow, Soviet Encyclopedia (in Russian).

25. Оранский И.М. 1960, Введение в иранскую филологию, Москва, «Восточная литература».
Oransky I.M. 1960, Introduction to the Iranian Philology, Moscow, Vostochnaya Literatura (in Russian).

26. Оранский И.М. 1963, Иранские языки, Москва, «Восточная литература».
Oransky I.M. 1963, Iranian Languages, Moscow, Vostochnaya Literatura (in Russian).

27. Пахалина Т.Н. 1975, Сравнительный обзор памирских языков, Страны и народы Востока, вып. XVI, Памир, Москва, «Наука», 222–250.
Pakhalina T.N. 1975, A Comparative Overview of Pamirian Languages, Countries and Peoples of the East, vol. XVI, Pamir, Moscow, Nauka, 222–250 (in Russian).

28. Реформатский А.А. 1967, Введение в языкознание, Москва, «Просвещение».
Reformatsky A.A. 1967, Introduction to Linguistics, Moscow, Prosveshcheniye (in Russian).

29. Широков О.С. 1985, Введение в языкознание, Москва, изд. Московского университета.
Shirokov O.S. 1985, Introduction to Linguistics, Moscow, Moscow University Press (in Russian).

30. Эдельман Д.И. 2022, В копилку этимологий иранских языков, Армянский гуманитарный вестник, N 8, 16–32.
Edelman D.I. 2022, In the Etymological Collection of the Iranian Languages, Armenian Humanities Bulletin, N 8, 16–32 (in Russian).

31. «Իրանիկա» էլեկտրոնային հանրագիտարան, https://iranicaonline.org/articles/asb-pre-isl amic-iran (retrieved on 05.01.2024):
"Iranika" Electronic Encyclopedia https://iranicaonline.org/articles/asb-pre-islamic-iran (retrieved 05.01.2024) (in Armenian).

32. Большая российская энциклопедия, https://old.bigenc.ru/linguistics/text/2701306 (retrieved on 10.11.2023).

33. The Great Russian Encyclopedia, https://old.bigenc.ru/linguistics/text/2701306 (retrieved on 10.11.2023) (in Russian).

1970–80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԱՐՁԱԿԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

THEMATIC ORIENTATION OF ARMENIAN PROSE IN THE 1970S–1980S

ТЕМАТИЧЕСКАЯ НАПРАВЛЕННОСТЬ АРМЯНСКОЙ ПРОЗЫ 1970–1980-Х ГОДОВ

Հովիաննես Հովակիմյան
Hovhannes Hovakimyan
Ованнес Овакимян

Երևանի պետական համալսարան, Հայաստան
Yerevan State University, Armenia
Ереванский государственный университет, Армения

hovhannes.hovakimyan@ysu.am

Ներկայացվել է՝ 28.06.2024, գրախոսվել է՝ 28.02.2025, ընդունվել է՝ 18.04.2025
Received: 28.06.2024; Revised: 28.02.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 28.06.2024; рецензировано: 28.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-159

Ամփոփում – Հոդվածում անդրադարձ է կատարվում 1970–80-ականների հայ արձակի զարգացման միտումներին՝ ելնելով քննադատական մտածողության և թեմատիկ-գաղափարական բազմազանության դիտանկյունից: Սոցիալիստական ռեալիզմի շրջանակից դուրս գործող գրողները, չբավարարվելով առկա գրական կաղապարներով, ձգտել են նոր մոտեցումներ դրսևորել՝ մարդկային անհատականության, բարոյահոգեբանական վիճակների և հասարակական հարաբերությունների պատկերման մեջ: Վերլուծության նյութ են դարձել այդ շրջանի հեղինակների տարբեր ժանրային փորձերը՝ պատմվածքից և վեպից մինչև էսսե ու հրապարակախոսություն, մասնավորապես Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունները՝ որպես ժամանակի տիպական երևույթ: Ուսումնասիրության շնորհիվ պարզ է դառնում, որ նշված տասնամյակում հայ արձակը էականորեն ձևափոխվում է՝ երևան բերելով բոլորովին այլ գրական սերունդ: Այդ փոփոխությունների դիտարկումը կարևոր է ոչ միայն գրականության ներսում եղած ներքին զարգացումների, այլև այդ տարիների սոցիալ-քաղաքական մթնոլորտի արտացոլման տեսանկյունից:

Abstract – The present article examines the developmental trends in Armenian prose of the 1970s and 1980s, with particular emphasis on the strengthening of critical thinking and the thematic-ideological diversity of the period. The focus is on authors operating beyond the boundaries of socialist realism who, dissatisfied with the literary conventions of the time,

sought new approaches to portraying human individuality, moral-psychological conditions, and social relations. The analysis considers various genre experiments by the era's writers – from short stories and novels to essays and journalistic writings – intermittently paying attention to the works of Vano Siradeghyan as both a representative and an original figure of the period. The study reveals that during this decade, Armenian prose underwent significant transformation, giving rise to a distinctly new literary generation. Observing these shifts is important not only for understanding the internal developments within literature but also for reflecting the socio-political atmosphere of the time.

Аннотация – В статье рассматриваются тенденции развития армянской прозы 1970–1980-х годов, в частности, рост критического мышления и её тематико-идеологическое разнообразие. В центре внимания оказались писатели, творчество которых выходило за рамки социалистического реализма и характеризовалось новым подходом к вопросу изображения человеческой индивидуальности, её морально-психологических состояний, общественных отношений, и тем самым отвергало литературные шаблоны своего времени. Предметом анализа являются жанровые эксперименты авторов того времени – начиная с рассказов и романов и кончая эссе и публицистикой – с отдельным акцентом на творчество Вано Сирадегяна как типичного, но то же время самобытного писателя. Исследование показывает, что в указанный период армянская проза претерпела существенные изменения, в частности, сформировалось новое литературное поколение. Рассмотрение сказанного важно как с точки зрения происходивших в литературе внутренних процессов, так и в контексте отражения социально-политической атмосферы эпохи.

Հիմնաբառեր – Վ. Սիրադեղյան, հայ գրականություն, գրաքննադատություն, արձակ, ժանր:
Keywords – V. Siradeghyan, Armenian literature, literary criticism, prose, genre.
Ключевые слова – В. Сирадегян, армянская литература, критика, проза, жанр.

Ներածություն

1970–80-ականների հայ արձակը, մի կողմից, շարունակում էր քաղաքային կյանքի, խորհրդային բարքերի թեմաները, մյուս կողմից, երևան հանում նոր խնդիրներ՝ դրանք ներկայացնելով քննադատական դիտանկյունից: Այս բազմազանության վկայությունն են 1966 թ. լույս տեսած Գուրգեն Մահարու «Այրվող այգեստանները» վիպասքը, Զորայր Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» վեպը և Վիգեն Խեչումյանի «Գիրք լինելության» պատմավեպը: Նույն ժամանակահատվածում իր գրական մուտքն էր ունեցել Հրանտ Մաթևոսյանը («Օգոստոս»), իսկ Վարդգես Պետրոսյանը չէր հրաժարվում քաղաքային թեմաներից: Միևնույն ժամանակ, Պերճ Զեյթունցյանը անդրադառնում էր ամերիկյան իրականությանը: Այս բազմազան գրական դաշտում էլ իր տեղն ու ձեռագիրը փորձում էր հաստատել Վանո Սիրադեղյանը:

1970–80-ական թվականների հայ արձակի թեմատիկ ուղղվածությունը

1970–80-ականներին հայ արձակը առավել սուր և համարձակ կերպով էր անդրադառնում հասարակական ու պատմական իրադարձությունների հետևանքներին՝ խորհրդային արձակից տարբերվելով թե՛ շեշտադրումով, թե՛ դիտարկման անկյունով: Եթե 1960–ականներին որոշ խնդիրներ բարձրացվում

էին զգուշորեն, ապա այս շրջանում դրանք ներկայացվում էին առավել քննադատական հայացքով: Այսպես, գրականագետ Կիմ Աղաբեկյանի դիտարկմամբ՝ պատերազմական ու հետպատերազմյան տարիների գրականությունն առաջնորդվում էր վերնախավից թելադրված գեղարվեստական մեխանիզմներով (Աղաբեկյան 1992, 56): Իսկ Սուրեն Աղաբաբյանը հայ արձակի նորարարական ընթացքի սկիզբը տեսնում է հենց պատերազմի թեմայում (Աղաբաբյան 1993, 257):

Բաղիշ Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան» վեպը (1962) նոր ուղի բացեց հայ արձակում՝ մերժելով խորհրդային իրականության վարդագույն պատկերը (Հովսեփյան 1988, 27): Նրա վեպով սկսված վերաիմաստավորումը շարունակվեց Մկրտիչ Սարգսյանի «Կյանքը կրակի տակ» (1963) և մյուս վեպերում: Զորայր Խալափյանը խորացրեց պատճառահետևանքային կապերի վերլուծությունը՝ «Երիցուկի թերթիկները», «Ջերմանց մխիթարություն» և հատկապես «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» գործերում: Սերգեյ Սարինյանը նշում է, որ Խալափյանը պատկերել է 1920–ականների կյանքն ու հասարակության բարդ անցումները՝ մարդու հոգեբանության ու սերունդների շարժումների միջոցով (Սարինյան 1973, 175):

Այս սերնդի գրողներն իրենց տեսածն ու ապրածը ընթերցողին են փոխանցում՝ փոխելով պատերազմական գրականության բովանդակությունը: Կիմ Աղաբեկյանը նշում է, որ նոր սերունդը մաքրում է հերոսների կերպարների աղավաղումները և կեղծ «հերոսական» վարքագիծը դնում բնական հունի մեջ (Աղաբեկյան 1992, 118): Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ, Սերգեյ Սարինյանի ձևակերպմամբ, այս շրջանում «մեր գրողները նկատելիորեն ընդլայնել էին հայոց պատմության գեղարվեստական յուրացման սահմանները, այսպես ասած, կարդացել են հայոց պատմության նոր էջերը» (Սարինյան 1973, 125): Ս. Սարինյանը նշում է, որ Ստեփան Զորյանի «Վարազդատ», Վիգեն Խեչումյանի «Գիրք լինելության», Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց», Հովհաննես Ղուկասյանի «Դեռ սպասում են», Հայկ Խաչատրյանի «Տիգրան Մեծ» գրքերը ապահովել են թեմատիկ բազմազանություն, բայց դեռ դժվարությամբ են կտրվում ռոմանտիկ պատմավեպի ձևերից: 1970–ականներին սկսվեց այդ կապանքներից ազատվելու և ժանրի նորացման գործընթացը: Սերո Խանզադյանի «Թագուհին հայոց»-ը փորձ է հայոց պատմության նոր էջերի գեղարվեստականացման՝ անդրադառնալով Հայասա պետությանը և հայ ցեղերի միավորման հարցին: Պատմական փաստերի հեղինակային սրբագրումներ և անհավատարմություններ հատկապես նկատելի են Պերճ Զեյթունցյանի 1977 թ. «Արշակ Երկրորդ» պատմավեպում: Զեյթունցյանը ցանկանում էր փոխել պատմավիպասանության ավանդական ձևերը, ինչն արտացոլված է թեմայի ընտրության մեջ: Վեպը քննադատվեց, սակայն քննադատները զանց առան այն հանգամանքը, որ այն գրվել է ժամանակակից կյանքի տրամաբանությամբ՝ ընդգծելով ժողովուրդ-հայրենիք-պետություն եռամիասնությունը. «Վեպը գրված է այսօրվա կյանքի ներքին տրամաբանությամբ՝ ժողովուրդ-հայրենիք-պետություն եռամիասնության ընկալման դիրքերից» (Աղաբեկյան 1992, 144): Վեպում Արշակ արքայի չկայացած կամ չհաջողված քաղաքականությունը ազգային ծրագիր էր, որ կյանքի էր կոչվում հենց օրերի պահանջով. «Ի՞նչ կարևոր է, թե ինչ ես արել,

ինչ օգուտ ես տվել երկրիդ, կարևորն այն է, որ աչքի առաջ լինես միշտ, ամեն տեղ երևաս, խոսես ու խոսես, փայլփլուն և գույնզգույն ճառեր ասես, կենաց խմես ու կենաց լսես քո մասին…» (Զեյթունցյան 2019, 43):

Վարդան Գրիգորյանի պատմավեպերը՝ «Հավերժական վերադարձ», «Դար կորստյան» և «Մանյա այրք», արտացոլում են կարևոր ժամանակաշրջաններ: Գրիգորյանն ընդգծում է քրիստոնեության ինքնազոհության և ինքնահաստատման դերը, դիտարկում պատմությունը՝ որպես այսօրվա կյանքի շարունակություն: Մյուս կարևոր թեման ինքնաքննադատությունն է, ինչը հատկապես արտահայտվում է «Մանյա այրք»-ում՝ Տրդատի և Գրիգոր Լուսավորչի բախման միջոցով, հավատքի և ազատության հարաբերության վերաբերյալ (Գրիգորյան 1988, 110):

XX դարասկզբի կարևոր իրադարձություններին հայ արձակում առանձին տեղ է հատկացվել: Սկզբում գերակշռում էին պատմահեղափոխական թեմաները (Միքայել Շաթիրյանի, Վլադիմիր Հարությունյանի, Ռաֆայել Աթայանի գործերը), իսկ 1960–ականների վերջից ավելի մեծ տարածում ստացան հայոց ցեղասպանությանը նվիրված վեպերը՝ Գուրգեն Մահարու, Ստեփան Ալաջաջյանի, Բոգդան Վերդյանի և այլոց ստեղծագործությունները:

Առանձնահատուկ նշանակություն ունի Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը», քանի որ այն սահմանեց թեմայի պատկերման, գեղարվեստականացման նոր չափանիշներ և գաղափարական խնդիրներ, որոնք ազդեցին հետագա ստեղծագործությունների, հատկապես Ռոլանդ Շառոյանի «Հարյուր կռունկ» և «Էրգրի աստվածները» վեպերի վրա: Շառոյանի «Հարյուր կռունկը» դաշտենցյան ասքային ոճով յուրօրինակ տոհմագրություն է, որն, ըստ Ս. Սարինյանի, գրողի ինքնահայտնության կարևոր օրինակ է (Սարինյան 1982, 64):

1970–80-ականների արձակում նշանակալի թեմատիկ ուղղություն դարձավ քաղաքային միջավայրը: Վարդգես Պետրոսյանը կարևորում էր այս թեման՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդն անցել է քաղաքների կորստից դեպի դրանց վերածնունդը՝ դժվար ճանապարհով դառնալով «քաղաքների երկիր» (Պետրոսյան 1977, 351): Հերոսների բազմազանությամբ է հատկանշվում Վ. Պետրոսյանի գրականությունը, որի «Անավարտ դիմանկարներ» պատմվածաշարը, «Դեղատուն Անի» և «Մամա, ես արդեն մեծացել եմ» վիպակները բերում էին առավելապես երիտասարդ մարդկանց թեման: Հատկանշական է նաև «Վերջին ուսուցիչը» վիպակը, որտեղ փորձ է արվում ստեղծել նաև սերնդի կերպար, որը փոխհարաբերվում է այլ սերնդի հետ՝ հաստատելու իր ճշմարտությունը:

Քաղաքային թեման Նորայր Ադալյանի «Խաղաղ զորանոցներ» վեպում զարգանում է ազգային, սոցիալական հարցերի և կյանքի հեռանկարների տեսանկյունից: Սակայն այդ ժամանակների արձակում հաճախ կային խնդիրներ՝ հերոսների հոգեբանական խորության պակաս և թեմայի սահմանափակ ընդգրկում: Շատ գործեր էին ստեղծվում հին բակերի ու թաղերի պատկերներով, որտեղ հերոսները զավեշտալի կերպարներ էին՝ ոչ թե ակտիվ մասնակցողներ, այլ միայն դիտողներ (Ջրբաշյան 1986, 83-84):

Հատկապես 1970-ական թթ. սկզբին հայ արձակում սկսեց արծարծվել նոր սերնդի կողմից սեփական կենսական արմատները գտնելու, նախորդ սերունդ-

ների հետ իրենց հոգևոր կապերը վերահիմաստավորելու ձգտումը: Պետրոս Դեմիրճյանն այդ մասին գրում է. «Դա ոչ թե գրողների սուբյեկտիվ ցանկությունն էր, այլ նոր սերնդի կերպարի առավել խորացման անհրաժեշտության հետևանքը» (Դեմիրճյան 1986, 48):

Քաղաքային թեմային մեծ տեղ տալուն զուգահեռ, հայ արձակում իր կայուն տեղն ուներ գյուղաշխարհի կյանքը: Կիմ Աղաբեկյանը նկատում է մի պարադոքսալ իրողություն. «Խեղճության ու անծայր աղքատության մեջ հոգեվարք ապրող գյուղը, սակայն, շռայլորեն ծաղկում էր գրականության մեջ» (Աղաբեկյան 1992, 119): Սուրեն Աղաբաբյանը 1960-ականների վերջից ձևավորված գրական շարժումներն արձակում դիտարկում է երկու հակադիր սկզբունքների տարբերակման տեսանկյունից, որտեղ ընդգծվում է հատկապես, այսպես կոչված, քաղաքագիրների և գյուղագիրների բախումը (Աղաբաբյան 1993, 258):

Գյուղագրական արձակը նոր սկզբունքներով շարունակեց զարգանալ հիմնականում Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններում, սակայն գյուղի խորքային խնդիրները նկարագրվում էին նաև Խաչիկ Հրաչյանի «Ուրցի Մարան», Մուշեղ Գալշոյանի «Բովտուն» և Արտաշես Ղահրիյանի գործերում:

1970-80-ականների ինքնատիպ հատույթներից մեկն էր վավերագրական արձակը՝ ակնարկներ, հրապարակախոսություններ, հուշագրություններ, որոնցում առանձնանում էին Գրիգոր Ջանիկյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Մարգո Ղուկասյանը և Զորի Բալայանը, հատկապես վերջինիս «Օջախ» ճանապարհորդական-հրապարակախոսական գիրքը (1981): Այս ժամանակահատվածը հիմնականում վեպերի շրջան էր, սակայն պատմվածքը՝ հայ արձակի ամենահայտնի ժանրը, նույնպես զարգանում էր: Վանո Սիրադեղյանը կարևոր ներդրում ունեցավ պատմվածքի նորացման գործում՝ շարունակելով Հրանտ Մաթևոսյանի գրական բազմազանության ուղին:

1970-80-ական թվականների հայ արձակը

Երիտասարդ արձակագիրներն ունեին գրական տարբեր նախասիրություններ, որ ապահովում էին ստեղծագործական բազմազանություն, բայց նաև գոյություն ունեին ներքին նմանություններ՝ հատկապես կերպարների ընտրության և հոգեվիճակների մեջ: Այս շրջանի արձակը, ինչպես նկատում է գրականագետ Կիմ Աղաբեկյանը, բնորոշվում է իրականության և մարդու հոգեբանության փոփոխությունների նկատմամբ անմիջական վերաբերմունքով: Ընդհանուր հատկանիշ է այն սևեռուն ուշադրությունը, որը գրողներն են դարձնում մարդու ճակատագրին (Աղաբեկյան 1992, 41): Այս հատկանիշը հատկապես երևակվում է Վանո Սիրադեղյանի ստեղծագործություններում, բայց տեսանելի է նաև Արտաշես Ղահրիյանի, Վրեժ Իսրայելյանի, Վազգեն Սարգսյանի, Ռոլանդ Շառոյանի, Ռաֆայել Նահապետյանի, Պատվական Ղուկասյանի և այլոց արձակում: Այլ հարց է, որ նրանցից յուրաքանչյուրն այդ հատկանիշը ծառայեցնում է իր գրական նպատակադրումներին: Այս իմաստով կան Վանո Սիրադեղյանին որոշ առումներով «ձայնակից» երիտասարդ արձակագիրներ, և կան արձա-

կագիրներ, որոնք նույն երևույթը գեղարվեստականացնում էին միանգամայն այլ դիրքերից:

Վանո Սիրադեղյանի արձակում ակնառու է նրա հարազատությունը սերընդակից Արտաշես Ղահրիյանի և Վրեժ Իսրայելյանի հետ, որոնց պատմվածքները կենտրոնացած են մարդու կյանքի որոշակի դրվագների վրա: Նրանք «սկսում են» իրենց պատմվածքները հենց այն իրավիճակից, որը «ծառայելու է» հերոսների ճակատագրի վերլուծությանը: Օրինակ, Սիրադեղյանի «Տղամարդիկ» պատմվածքը սկսվում է այսպես՝ «Բանակից գալով՝ Հարութի առաջին գործը հոր շիրմին քար քաշելը եղավ: Հետո ամուսնացավ: Թե՞ ամուսնացավ, հետո քար քաշեց...» (Սիրադեղյան 2021, 181): Այստեղ բանակից վերադառնալը հոգեբանական փոփոխությունների մեկնակետ է, որ դառնում է ճակատագրի նոր ընթացքի սկիզբը: Արտաշես Ղահրիյանի «Աստվածատուր» պատմվածքն էլ ամրագրում է նմանատիպ մեկնակետը. «Ետպատերազմյան ապրուստը պակաս տարին Ռուբենն իր արհեստին էր Իշխանաձորի սղոցարանում» (Ղահրիյան 1975, 16): Նույն հնարքը տեսնում ենք նրա մեկ այլ՝ «Արծվատափ հունձը» պատմվածքում. «Արծվատափի մեծ արտի հնձին Ասքանազն արդեն բաժանված էր օղակավար Հեղուշից և կնության առած Աբելենց այրի Շողակաթին, որի հանդապահ մարդը՝ Սարիբեկը, երկու ձմեռ առաջ էր մեռել» (Ղահրիյան 1982, 54):

Նման պատմվածքներում սկիզբն ունի ևս մի թաքնված սկիզբը, որը տարրորոշվում է նախքան պատմվածքի սկսվելը տեղի ունեցած դեպքերով:

Վրեժ Իսրայելյանի պարագայում այդ մեկնակետը երբեմն կարող է արտահայտվել հենց վերնագրում: Բնորոշ օրինակ է «Ես գնացի...» պատմվածքը, որի իրավիճակային մեկնակետը առերևույթ չափազանց կենցաղային է. «Արամը երկար փնտրելուց հետո գտավ խոզանակը: Խնամքով մաքրեց վերարկուն և նորից գցեց կախիչին» (Իսրայելյան 1972, 60): Այստեղ նույնպես սյուժետային զարգացումը տանում է մարդու ճակատագրի վայրիվերումների գրողական վերլուծության: «Ճոճք» պատմվածքը Իսրայելյանը, սերնդակիցների նման, սկսում է կոնկրետ իրավիճակից. «Ամեն առավոտ չարաճճի երեխաները քարեր էին շարում ճամփի վրա: Ամեն առավոտ Մուքոն դուրս էր գալիս փողոց, նկատում էր քարերը, աչքերը տարօրինակ չռում և ծանր-ծանր մոտենում» (Իսրայելյան 1982, 69): Այս մեկնակետային վիճակից զարգանում է պատմվածքը:

Նույն սկզբունքով է կառուցված նաև Ռոլանդ Շառոյանի «Մառախուղ» վիպակը, որն սկսվում է որպես վերջաբանի հղում. «Ըստ Քարուտի էլ երկրորդ համաշխարհային պատերազմը ավարտվել էր 1945 թ. մայիսի 9-ին» (Շառոյան 2012, 40): Սակայն այստեղ սկիզբը ոչ թե սյուժեի սկիզբն է, այլ ավարտի ամրագրման միակ պատկերը, որից հետո պատմությունը հետահայաց ձևով է ներկայացվում:

Թեմատիկ նմանություններ կան Վանո Սիրադեղյանի և Վազգեն Սարգսյանի պատմվածքներում՝ գյուղ, մանրամասներ, խոր հարցադրումներ, բայց նրանց գեղագիտական մոտեցումներն ու կերպարների պահվածքը տարբեր են:

Վազգեն Սարգսյանի «Դրախտ ես դու, դրախտ, Փառանձեմ» պատմվածքում ծեր հանդապահի հոգեխռովքը առարկայանում է հեղինակային միջամտությունների շնորհիվ. «Հանդապահին բերում-գցում են քո գիրկը, անաստվածի

աղջիկ, նռների գինով հարբեցնում, ծոցիկիդ բույրով գժվացնում ու խեղդում են խեղճին վարսերիդ ծովում: Հանդապահի շունչը կտրվում է, արյունը ասես շատացել, տեղը քչություն է անում: Դու էդ փոքրիկ բաժակով հանդապահին ի՞նչ տվիր, անաստվածի աղջիկ» (Սարգսյան 2023, 74):

Սերնդի այդ արձակագիրները՝ Վանո Սիրադեղյանը, Արտաշես Ղահրիյանը, Վրեժ Իսրայելյանը, Ռոլանդ Շառոյանը, Վազգեն Սարգսյանը և մյուսները, նախընտրում են բաց ավարտներ, որոնք ամփոփում են մարդու ճակատագրի խոր վերլուծությունը, բայց շարունակության տրամաբանություն են բացում դասական փակ վերջաբանների փոխարեն: Օրինակ, Վազգեն Սարգսյանի «Բեդնի Լիպոն» ավարտվում է հերոսի երազանքի մեկնարկի պատկերով՝ ընդգծելով բաց ու շարունակական ընթացք (Սարգսյան 2023, 50):

Վրեժ Իսրայելյանի «Քառասուներորդ գիշերը» (Իսրայելյան 1982, 104) և Վանո Սիրադեղյանի «Հերն անիծած կյանքը» պատմվածքների ավարտները նույն տրամաբանությամբ են՝ բարձրացնում են բաց թողնված հարցեր, որոնք ընդգծում են մարդու ճակատագրի բարդությունը: Այս նմանություններն ու տարբերությունները կազմում են գրական սերնդի առանցքը: Սակայն Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը այս հիմնական գծերից անցնում է դեպի ավելի համակարգված գրողական ոճ և դավանանք:

Սիրադեղյանի ստեղծագործություններում ծննդավայրի՝ գյուղի ներկայացումը գերազանցում է ուղղակի ֆիզիկական կամ տեսողական նկարագրության սահմանները: Գյուղը նրա արձակում դառնում է կյանքի ու ճակատագրի խորհրդանիշ՝ հույսերի ու հիասթափությունների, սիրո ու կարոտի խտացված տարածք, որի միջոցով քննվում են մարդու հոգեբանական և սոցիալական խորքային հարցեր: Նա ստեղծում է իսկապես գյուղական բարդ աշխարհ, որտեղ հերոսների զգացականությունն անբաժան է բնության շարժումներից: Սա տարբերություն է սերնդակից գրողներից, որոնք հաճախ սահմանափակվում են տարածքի մակերեսային պատկերմամբ, իսկ Սիրադեղյանը գյուղը դարձնում է ամբողջական համակարգ, որը որոշում է ստեղծագործության գեղարվեստական կառուցվածքը և խորությունն ու բովանդակությունը: Գյուղական տարածությունն իր ներքին տրամաբանությամբ ու կանոններով Սիրադեղյանի արձակում վերածվում է հերոսների հոգեբանության բացահայտման միջոցի: Այդ տարածությունն ուղղված է մարդկային անկեղծության ու միամտության, որոնք դառնում են պատումի առանցք: Հերոսների ներաշխարհի միջոցով Սիրադեղյանը վերհանում է առօրեական, բայց կենսական հարցադրումներ՝ այդպիսով ներկայացնելով ժամանակի ամբողջական պատկերը: Նրա հերոսների և բարոյականության կապը անքակտելի է՝ հավատարմություն մարդուն, կյանքին ու բնությանը՝ որպես համընդհանուր ըմբռնման և հոսքի:

Եթե Մաթևոսյանի գյուղը համակողմանի համակարգ է, որտեղ ամեն հերոս մի մեխանիզմի մասնիկ է, ապա Սիրադեղյանի գյուղը անհատի տարածություն է: Մաթևոսյանը կառուցում է ժամանակը համակարգից, Սիրադեղյանը՝ անհատից: Այս՝ կարծես հակադիր ուղղությունները միավորվում են գրական նպատակով՝ ժամանակի փիլիսոփայության ամբողջական ընկալմամբ:

1970–80-ականներին համաշխարհային արձակը ստեղծում է իր դիտանկյունը՝ վերանայելով ժանրերն ու պոետիկական կառուցվածքները: Գեղարվեստական խնդրին համահունչ՝ ներգրավվում են նաև բանահյուսական տարրեր: Հայ արձակն այս զարգացումներից անմասն չի մնում. սեռերի ու ժանրերի փոխհարաբերությունը հայ գրականության մեջ հանգեցնում է հետաքրքիր տեղաշարժերի: Պատմողական տարրերը ներթափանցում են պոեզիա, իսկ արձակում նկատվում են հրապարակախոսական շերտեր:

Խորհրդահայ գրականության մեջ սկսվում է արտադրական վեպի փուլը, որտեղ կենտրոնում կրկին մարդն է՝ այս անգամ աշխատանքի և կոլեկտիվի համատեքստում: Սերո Խանզադյանի, Անահիտ Սեկոյանի, Մուշեղ Գալշոյանի և այլոց վեպերում քննվում են անհատի և հասարակության հարաբերությունները՝ արժևորելով անհատական փորձառության և ընդհանուրի բախումը՝ որպես գեղարվեստական խնդրի առանցք:

Թեև արտադրական վեպերը առաջին հայացքից թվում էին գաղափարախոսական դրսևորումներ՝ արտացոլելով խորհրդային տարածության լայն օրակարգը, սակայն հայ հեղինակների մոտ դրանք հանգեցին տեղայնացման և տեղային կոնֆլիկտայնության: Այս վեպերն ունեն «ուրախ ավարտի» ռոմանտիկական հակումներ, ինչը մասամբ բխում է հերոսների քանակի գերարժևորման թելադրանքից՝ մասշտաբայնության փոխարեն:

Զուգահեռաբար, շարունակվում է պատմավեպի զարգացումը՝ Սերո Խանզադյանի, Վիգեն Խեչումյանի, Խաժակ Գյուլնազարյանի ստեղծագործությունների միջոցով: Ի տարբերություն ժամանակակից վեպի, որն աստիճանաբար սահում է դեպի կենցաղագրության և սենտիմենտալիզմի դաշտ, պատմավեպը կարողանում է պահպանել իր էպիկականությունը՝ պայմանավորված ոչ միայն հեղինակների կարողություններով, այլև ժանրի ներքին պահանջով՝ մեծ պատմական բախման ներկայացմամբ:

Այս զարգացումների համատեքստում է հասունանում գյուղ-քաղաք հակադրության թեման, որը դառնում է լայն բանավեճի առարկա: Սակայն այստեղ խնդիրը տարածքային չէ. այն վերաբերում է հերոսի ընտրությանը և նրա ներաշխարհի բացահայտմանը: Խնդիրը ոչ թե հակադրությունն է, այլ ժամանակակից կյանքի ճշգրիտ արձանագրումը և դրա հիմքում ընկած կենսափիլիսոփայությունը:

Այս շրջանի արձակում հերոսները հաճախ ներկայացվում են արդեն իսկ ձևավորված վիճակում՝ առանց ներքին կերպավորման ընթացքի: Դինամիկայի հիմքում դրվում են գործողությունները, այլ ոչ թե կերպարի զարգացումը, ինչը նվազեցնում է գրականության հոգեբանական խորությունը: Դա տվյալ շրջանի գեղարվեստական զգալի բացթողումներից է:

Ի տարբերություն «քաղաքային» արձակի՝ «գյուղագրականն» ավելի արդյունավետ է լուծում իր խնդիրները: Այն անցնում է տարածական սահմաններից՝ շոշափելով կենսափիլիսոփայական հարցեր և առաջարկելով ժամանակի ընկալման իր տարբերակը: Նշված առումով բնութագրական է Հրանտ Մաթևոսյանի արձակը՝ իր արժեքային համակարգով և գեղարվեստական ամբողջականությամբ:

Եզրակացություններ

1970-80-ականներին պատմվածքի ժանրը գրականության մեջ էական վերափոխում է ապրում՝ հատկապես թեմատիկ հարթությունում: Եթե նախկինում այն սպասարկում էր «մեծ խնդիրների» վերլուծությանը, ապա այս շրջանում սկսում է կենտրոնանալ փոքր հարցերի վրա՝ ընդլայնելով իր արտահայտչական շրջանակը: Սա, թեև դրական տեղաշարժ էր, այդուհանդերձ, հանգեցրեց գրամոլական գործերի ավելացման:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության, շոշափվող առանցքային հարցերի շուրջ կարևոր խորհուրդների և դիտարկումների համար շնորհակալություն ենք հայտնում մեր գիտական ղեկավար, բ.գ.թ. Ս.Զ. Գրիգորյանին և բ.գ.դ. Ա.Ա. Մակարյանին:

Գրականություն/References/Литература

1. Աղաբաբյան Ս. 1993, Արդի հայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ.:
   Aghababyan S. 1993, The History of the Contemporary Armenian Literature, v. 2, Yerevan, The National Academy of Sciences of the Republic of Armenia Press (in Armenian).
2. Աղաբեկյան Կ. 1992, Արդի հայ արձակի զարգացման միտումները (1960–80-ական թվականներ), Երևան, ԵՊՀ հրատ.:
   Aghabekyan K. 1992, Trends in the Development of Contemporary Armenian Prose (1960s–1980s), Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
3. Գրիգորյան Վ. 1988, Մանյա այրք, Երևան, «Խորհրդային գրող» հրատ.:
   Grigoryan V. 1988, Manya Ayrq, Yerevan, Sovetakan grogh (in Armenian).
4. Դեմիրճյան Պ. 1986, Ժամանակը և գրականության զարգացումը, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
   Demirchyan P. 1986, Time and the Development of Literature, Yerevan, Sovetakan grogh (in Armenian).
5. Զեյթունցյան Պ. 2019, Արշակ Երկրորդ, Երևան, «Անտարես» հրատ.:
   Zeytuntsyan P. 2019, Arshak the Second, Yerevan, Antares (in Armenian).
6. Իսրայելյան Վ. 1972, Ես գնացի..., Գարուն, N 10, 60-63:
   Israyelyan V. 1972, I Went..., Garun N 10, 60-63 (in Armenian).
7. Իսրայելյան Վ. 1982, Մեկին գումարած մեկ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
   Israyelyan V. 1982, One Plus One, Yerevan, Sovetakan grogh (in Armenian).
8. Հովսեփյան Բ. 1988, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, Սովետական գրող հրատ.:
   Hovsepyan B. 1988, Selected Works in Two Volumes, V. 2, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
9. Ղահրիյան Ա. 1975, Աստվածատուր, Գարուն, N 7, 16-23:
   Ghahriyan A. 1975, God-given, Garun, N 7, 16-23 (in Armenian).
10. Ղահրիյան Ա. 1982, Արծվատափ հունձը, Գարուն, N 3, 54-59:

Ghahriyan A. 1982, The Eagle-Feathered Harvest, Garun N 3, 54-59 (in Armenian).

11. Շառոյան Ռ. 2012, Հովն ընկավ, Երևան, Նաիրի հրատ.:
Sharoyan R. 2012, The Breeze Fell, Yerevan, Nairi (in Armenian).

12. Պետրոսյան Վ. 1977, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
Petrosyan V. 1977, An Equation with Many Unknowns, Yerevan, Sovetakan grogh (in Armenian).

13. Ջրբաշյան Է. 1986, Ժամանակակից գրականության զարգացման տեսական պրոբլեմները, Սովետական գրականություն, N 8, 78-93:
Jrbashyan E. 1986, Theoretical Problems of the Development of Contemporary Literature, Sovetakan grakanutyun, N 8, 78-93 (in Armenian).

14. Սարգսյան Վ. 2023, Հացի փորձություն, Երևան, Վերնատուն հրատ.:
Sargsyan V. 2023, The Trial of Bread, Yerevan, Vernatun (in Armenian).

15. Սարինյան Ս. 1973, Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը, Երևան, «Հայաստան» հրատ.:
Sarinyan S. 1973, Criticism and Fiction Development, Yerevan, Hayastan Press (in Armenian).

16. Սարինյան Ս. 1982, Գրական նոր սերնդի դիմագիծը, Գարուն, N 4, 61-69:
Sarinyan S. 1982, The Portrait of the New Literary Generation, Garun N 4, 61-69 (in Armenian).

17. Սիրադեղյան Վ. 2021, Դուռը, Երևան, Վանո Սիրադեղյան հիմնադրամ:
Siradeghyan V. 2021, The Door, Yerevan, Vano Siradegyan foundation (in Armenian).

ԴԱՎԻԹ ԷՎԵՐԵԿԼՅԱՆ (1927–2016). ՆԱԽԱՄՈՆՐԵԱԼՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
DAVID EVEREKLEAN (1927–2016): PRE-MONTREALIAN ACTIVITY
ДАВИД ЭВЕРЕКЛЯН (1927–2016): ПРЕДМОНРЕАЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

Անահիտ Բեքարյան
Anahit Bekaryan
Анаит Бекарян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

anahit.bekaryan@arts.sci.am

Ներկայացվել է՝ 10.03.2025; գրախոսվել է՝ 13.03.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 10.03.2025; Revised: 13.03.2025; Accepted: 18.04.025
Представлено: 10.03.2025; рецензировано: 13.03.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-169

Ամփոփում – Լիբանանահայ դերասան, բեմադրիչ, թատերգությունների հեղինակ, Դավիթ Էվերեկլյանը առաջին անգամ բեմ է բարձրացել Լիբանանում 1943-ին: Թատրոնի խոնարհ նվիրյալը հիմնել է «Պետրոս Ադամյան», «Պեյրութահայ քուլիսականներու», «Գերմանիկ» «Լիբանանահայ» թատերախմբերը, որոնք մեծ դեր են խաղացել սփյուռքում հայկական թատերարվեստի պահպանման և ազգային ինքնության ամրապնդման գործում: Էվերեկլյանը մասնակցել է նաև պատմաբան, իրավագետ «Հայ Գիր» ամսագրի տնօրեն-խմբագիր Գևորգ Պաղջյանի (Վազգեն Այգունի 1913–1999) հիմնած «Ռուբեն Մամուլեան» թատերախմբի աշխատանքներին: Մասնակցել է իր հիմնած թատերախմբերի ներկայացումներին՝ որպես դերասան ու բեմադրիչ: Կերպարանավորել է բազմաթիվ դերեր՝ արժանանալով թատերասերների և իր խաղընկերների հիացմունքին ու բարձր գնահատականին: Հանդես է եկել թատերախոսականներով և բազմաթիվ հոդվածներով որոնք հետագայում տեղ են գտել իր «Թատերայուշեր և նիւթեր Լիբանանահայ թատրոնի պատմութեան», «Թատերական կեանքիս ճամբուն վրայ» «Միշտ… թատերական կեանքիս ճամբուն վրայ» գրքերում՝ որպես սփյուռքահայ թատրոնի պատմության սկզբնաղբյուրներ և ժամանակաշրջանի վկայություններ: Դավիթ Էվերեկլյանը հեղինակել է մի շարք թատերական գործեր, այդ թվում՝ «Ծաղկավաճառուհին» (1946), «Ոճիր-ոճիրներ» (1945), «Իսուբը» (1947), և «Մռայլ կյանքեր» (1950): Թատերական արվեստի սիրով են համակվել նաև Դավիթ Էվերեկլյանի ընտանիքի անդամները: Կինը՝ Բերկրուհի Էվերեկլյանը, որդին՝ Հակոբ Էվերեկլյանը, դուստրը՝ Ռոզալիա Վասիլյան-Էվերեկլյանը ունեցել են իրենց ներդրումը սփյուռքահայ մշակութային կյանքում: Սփյուռքահայ թատրոնի զար-

գացման հիմնական դերակատարներից մեկը՝ Դավիթ Էվերեկլյանը՝ որպես դերասան, դրամատուրգ, թատերախմբի ղեկավար, թատերագետ, իր բազմակողմանի թատերական գործունեությամբ էական ներդրում է ունեցել սփյուռքում հայկական թատրոնի զարգացման, մշակութային ժառանգության պահպանման և սերունդների միջև հայկական թատերարվեստի ավանդույթների փոխանցման գործում:

Abstract – David Evereklian, a Lebanese-Armenian actor, director, and playwright, first took to the stage in Lebanon in 1943. An ardent theatre devotee, he founded several theatre companies,all of which had a significant role in preserving Armenian theatre arts in the diaspora and shaping national identity. Evereklian was also involved in the work of the "Rouben Mamoulian" theatre company, founded by historian and editor-in-chief of *Hay Gir* magazine, Gevorg Paghjian. He participated in the productions of the companies he had founded, both as an actor and a director earning admiration and high praise from audiences and fellow actors alike. He also contributed theatrical reviews and articles, which were later published in his books. His love for theatre also extended to his family members: his wife Berkruhi Evereklian, his son Hakob Evereklian, and his daughter Rosalia Vasilian-Evereklian all contributed to the cultural life of the Armenian diaspora. As one of the key figures in the development of diaspora Armenian theatre, David Evereklian's versatile theatrical activity – as an actor, playwright, troupe leader, and theatre scholar – made a substantial contribution to the growth of Armenian theatre in the diaspora, the preservation of cultural heritage, and the transmission of theatrical traditions across generations.

Аннотация – Ливанско-армянский актёр, режиссёр и драматург Давид Эвереклян впервые вышел на сцену в Ливане в 1943 году. Скромный служитель театра, он основал театральные труппы, которые сыграли важную роль в сохранении армянского театрального искусства в диаспоре и укреплении национальной идентичности. Д. Эвереклян также участвовал в работе театральной труппы «Рубен Мамулян», основанной историком, юристом, главным редактором журнала «Ай Гир» Геворком Пахджяном. Он играл в спектаклях как актёр и выступал в роли режиссёра в труппах, которые были им же основаны. Сыграв множество ролей, он заслужил восхищение и высокую оценку зрителей и своих партнёров по сцене. Д. Эвереклян выступал с театральными рецензиями и многочисленными статьями, которые впоследствии были включены в его книги, являющиеся первоисточниками по истории театра армянской диаспоры и свидетельствами своего времени. Давид Эвереклян является автором ряда пьес, в том числе: «Цветочница» (1946), «Преступление – преступления» (1945), «Исуб» (1947) и «Мрачные жизни» (1950). Любовь к театру передалась и членам его семьи: жена – Беркрухи Эвереклян, сын – Акоп Эвереклян и дочь – Розалия Васильян-Эвереклян также внесли свой вклад в культурную жизнь армянской диаспоры. Многосторонняя театральная деятельность Давида Эверекляна как актёра, драматурга, руководителя труппы и театроведа сыграла важнейшую роль в развитии армянского театра диаспоры, в сохранении культурного наследия и передаче театральных традиций из поколения в поколение.

Հիմնաբառեր – Էվերեկլյան, Լիբանան, Սփյուռք, հայ թատերախմբեր, դրամատուրգներ:
Keywords – Evereklian, Lebanon, Diaspora, Armenian theatre companies, playwrights.
Ключевые слова – Эвереклян, Ливан, диаспора, армянские театральные труппы, драматурги.

Ներածություն

«Հայ թատերագիրն ու դերասանը՝ 2000 տարուայ հայ թատերական արուեստը պահպանելու վսեմ առաքելութիւն ունին: Հոս պետք է շեշտել, թէ իսկապէս հերոսական գործ է սփիւռքի մէջ թատրոն պահել: Դ. Էվերեկլեան բոլոր զոհողութեանց բովէն անցած, հայ թատրոնի յաւերժահուր ափրուշանին հաւատարիմ սպասարկու անձնուէր արուեստագէտ մըն է, որ 40 տարիներ՝ յարանուանական, գաղափարական կաշկանդումի, անխտրական ոգիով, անսակարգ եւ սիրայօժար մասնակցութիւն բերած է Հայ Բեմին, պարզապէս իբր վարձատրութիւն ունենալով թատերական արուեստին եւ մասնաւորաբար 2000–ամեայ Հայ Բեմին ծառայած ըլլալու գոհունակութիւնը» (Էվերեկլեան 1985, 11):

Հայ թատրոնի նվիրյալ, սփյուռքահայ թատրոնի պատմաբան Դավիթ Էվերեկլյանը (1927–2016), որը տարիների բեմական գործունեությամբ և փորձառությամբ սփյուռքահայ դերասանների մեջ գրավում է առաջնակարգ տեղերից մեկը, թատերական աշխարհ է մուտք գործել Լիբանանում 1943-ին: Քառասուն երկար տարիներ անաղմուկ և անսահման նվիրումով սատարել է հայ թատրոնին՝ դերասանական խաղով, բեմադրություններով, թատերախմբեր հիմնելով, լրատվություններով ու թղթակցություններով, թատերախոսականներ գրելով, մասնակցելով ինչպես տեղի, այնպես էլ հյուրախաղերի եկած թատերախմբերի ներկայացումներին: Դավիթ Էվերեկլյանը մասնակցել է Գևորգ Պաղջյանի (1913–1999, Վազգեն Այգունի) հիմնած «Ռուբեն Մամուլյան» թատերախմբի (1940–1944) աշխատանքներին. «Լիբանանահայ» (1946–1954) «Պետրոս Ադամյան» (1950–1966), «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբ» (1961–1966) թատերախմբերի հիմնադիրներից և նվիրյալ գործիչներից է, ինչպես նաև բազմաթիվ թատերախմբերի, դերասանների բեղմնավոր և եռանդուն գործունեության ճշմարտախոս վկան ու ժամանակագիրը: Դավիթ Էվերեկլյանն ունի հրատարակած և անտիպ թատերախաղեր, ինչպես՝ «Ծաղկավաճառուհին» (1946), «Ոճիր-ոճիրներ» (1945), «Իսուբ» (1947), «Մեր հայելին» (1948) «Մռայլ կյանքեր» (1950), «Հրաշալի հաղթանակ» (1954), «Մումիայի վաճառականը» (1958) և այլն: Հրատարակել է «Թատերայուշեր և նյութեր լիբանանահայ թատրոնի պատմութեան» (1971), «Թատերական կեանքիս ճամբուն վրայ» (Լոս Անջելես, 1989) և «Միշտ… թատերական կեանքիս ճամբուն վրայ» (Լոս Անջելես, 1999) գործերը, որտեղ ճշմարտացիորեն ուրվագծել է լիբանանահայ արդեն իսկ կայացած ու զարգացած գաղթօջախի և կանադահայ նորակազմ գաղութի թատրոնների պատմության առանձին դրվագներ, ներկայացրել սփյուռքահայ ինչպես անվանի, այնպես էլ սիրող դերասանների ազգանպաստ գործունեությունը:

Դավիթ Էվերեկլյանը թատերական արվեստի նկատմամբ իր սիրով վարակել է նաև իր ընտանիքի անդամներին՝ տիկնոջը՝ Բերկրուհի Էվերեկլյանին, որդուն՝ Հակոբ Էվերեկլյանին, և դստերը՝ Ռոզալիա Վասիլյանին: 1975-ին հաստատվել է Մոնրեալում՝ շարունակելով թատերական գործունեությունը տեղի թատերախմբերի հետ:

Լիբանանահայ բեմի սիրված դերասանը

Լիբանանահայ արվեստագետ Դավիթ Էվերեկլյանը ծնվել է Բեյրութում, ցեղասպանությունը վերապրածների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Ս. Եղիա ժողովրդապետության վարժարանում: 1942-ին ավարտել է Պուրճ Համուտի Հայ կաթողիկե Մեսրոպյան վարժարանը: Առաջին անգամ բեմ է բարձրացել 1943-ին՝ «Երեք քաջեր»-ի մեջ կատարելով Հրանտ իշխանի դերը: Նույն տարում, վարժարանի Սանուց միության «Միհր» թատերախմբի գլխավոր հիմնադիրներից մեկը լինելով, ներկայացնում է իր հեղինակած թատերգությունները: 1945-ին իր «Պատճառը ես եղա» թատերգությունը իր խաղարկությամբ բեմադրում է «Արարատյան» սրահում: 1945-ից սկսած՝ մասնակցում է Հայ կաթողիկե երիտասարդաց միություն (ՀԿԵՄ) (1940–1966) բոլոր բեմադրություններին: Դեռևս 1940-ական թվականներին, հիմնադրման առաջին իսկ օրերից ՀԿԵՄ-ը, իր շարքերում ունենալով թատերասեր ուժեր, հանրությանը տվել է ներկայացումներ: 1940-ին «Արարատյան» թատերասրահում թատերասերները բեմադրում են Հայոց պատմությունից քաղված մի դրվագ, 1941-ին կրկին նույն սրահում՝ «Աշխարհի դատաստանը»: 1945-ին Մեսրոպյան վարժարանի բակում բեմադրվում է Նուբար Գարապաշյանի «Հայրենիքի սիրտը» գործը, որտեղ նկարագրվում են Աթենք գերի բերված հայաստանցի զինվորների վիճակը և հունահայ գաղութին պատուհասած 1941-ի արհավիրքը: 1945-ին Ս. Եղիայի թատերասերները ներկայացրել են Ն. Պեշիկթաշլյանի «Հիվանդտես»-ը, 1947-ին՝ «Քայքայված ընտանիքը», իսկ 1949-ին՝ «Թիվ 5 խելագարը»: 1950-ից թատերախումբը կրում է «Պետրոս Ադամյան» անունը և, այդ թվականից սկսած, հանդես է գալիս բազմաթիվ ներկայացումներով, ինչպես՝ «Պատվի համար», «Չարշըլը Արթին աղա», «Իսուբը», «Մռայլ կյանքեր»: 1956-ից Դավիթ Էվերեկլյանին են վստահում «Գերմանիկ» թատերախմբի կազմակերպումը, որը նա ղեկավարում է մինչև 1959 թ.՝ տալով տասնյոթ ներկայացում: 1945-ից սկսած՝ բոլոր բեմադրություններին իր մասնակցությունը բերելով հանդերձ, Օննիկ Քեքլիկյանի և Հ. Շիրինյանի հետ հիմնում է «Լիբանանահայ» թատերախումբը, որը գոյատևում է մինչև 1953 թ.՝ կազմակերպելով տասնութ ներկայացում: 1953-ին ծանոթանում է «Քուլիս» ամսագրի խմբագիր Հակոբ Այվազի հետ (1911–2006, հայ դերասան, դրամատուրգ, բեմադրիչ «Քուլիս» ամսագրի հիմնադիր, խմբագիր) և ստանձնում ամսագրի՝ Լիբանանի թղթակցի պարտականությունները: Բեյրութում քաղաքացիական պատերազմի արհավիրքները տեղահան արեցին բազմաթիվ հայ մտավորականների: Շատերի հետ Դավիթ Էվերեկլյանը թողեց Բեյրութը և 1975-ին հաստատվեց Մոնրեալում՝ այնտեղ շարունակելով իր գործը:

ՀԿԵՄ-ի թատերախումբը

1920–40-ական թվականներին Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած բազմահազար հայեր ապաստանեցին Լիբանանում: Այդ տարիներին իրենց վրանաքաղաքում հիմնեցին դպրոցներ, եկեղեցիներ կազմեցին միություններ: Թիթեղաձածկ դպրոցների սրահները սկսեցին գործել և դարձան մշակութային կենտ-

րոններ, որտեղ կյանքի կոչվեցին թատերական նախնական ձեռնարկներ: «Կը նայիմ շուրջս, – գրում է Երվանդ Չափրաստը, – թիթեղաձածկ թատերասրահ մը, թիթեղաշեն տուներ կը շրջապատեն, և կը մտածեմ... ի՞նչ անլուծելի հանելուկ է հայ ժողովուրդը: Թիթեղե տուներ կը շինե պատսպարելու համար և չի մոռանար թատերասրահ շինելու թեկուզ թիթեղե իր դպրոցի և եկեղեցին քով: Կարելի՞ է արդեօք գտնել ժողովուրդ մը, որ արեան ու արհաւիրքի ճամփան կտրելէ ետքը մնացորդացով, հազիւ գլուխը դնելու տեղ մը գտած, մտածէ դպրոց, եկեղեցի ու թատրոն լինելու համար: Ու, այո՛, կայ այդ զարմանահրաշ ժողովուրդը, հայը, որ կրնայ գործել այդ հրաշքը: ...Ո՛չ, այսպիսի ձիրքերով օժտուած ժողովուրդ մը չի կըրնար մեռնիլ: ...Մենք կանք ու պիտի մնանք, որովհետև, մենք այն ցեղն ենք, որ լոյսին կը ձգտի: Վկայ՝ թիթեղաշեն թատրոնը, իր խեղճ վիճակին մէջն իսկ թատրոններու ամենանուիրականը» (Չափրաստ 1965):

Հայ կաթողիկե երիտասարդաց միության թատերական գործունեությունը սկիզբ է առել Միության հիմնադրման թվականից: 1940-ից մինչև 1966 թթ. գործող Միության, իսկ հետագայում Պետրոս Ադամյանի անունը կրող թատերախմբում իրենց մասնակցությունն են բերել Պողոս Մենտիլյանը, Կայծակ Գնդունին և Դավիթ Էվերեկլյանը: Առաջին ներկայացումը՝ «Աշխարհի դատաստանը», որ բեմադրվել է 1941-ին «Արարատյան» սրահում Մենդիլյան ամուսինների և Կայծակ Գնդունու մասնակցությամբ, հայրենասիրական խոշոր հանրահավաքի ձև է ստացել. 1945-ին Մեսրոպյան վարժարանի բակում հազարավոր հանդիսականների առջև բացօթյա բեմադրել է «Հայրենիքի սիրտը», հեղինակ՝ Նուպար Գարապաշյան: 1947-ին Սինեմա Արաքսում ներկայացվել է «Քայքայված ընտանիքը», որը խանդավառել է շրջանի հայությանը: 1950-ին որոշել են թատերախումբն անվանել հայ հանճարեղ դերասան Պետրոս Ադամյանի անունով: Թատերախումբը, սկսած այդ թվականից, անընդհատ իրար հաջորդող ելույթներ է ունեցել բազմաթիվ սրահներում՝ բեմադրելով 28 ներկայացում: 1950-ին ՀԿԵՄ-ի Բուրջ Համուդ մասնաճյուղի «Պետրոս Ադամյան» թատերախումբը «Արարատյան» սրահում հանդես է գալիս իր անդրանիկ ներկայացմամբ՝ նաև դերասանական նոր կազմով ներկայացնելով Շիրվանզադեի «Պատվի համար» թատերգությունը: «Պատվի համարը» Բեյրութում խաղացել են դեռևս 1924-ին Հայ երիտասարդաց միության թատերասերները՝ հասույթը հատկացնելով Հայ ազգային վարժարանին: «Հայ բեմի վրայ, կարելի է ըսել որ ամէնէն աւելի սիրուած և խաղցուած է այս գործը», – գրում է Փյունիկը (Լութեր 1924): «Պատվի համարում» Սրահին աթոռները ամբողջ գրավուած էին հանդիսականներէ», – գրում է «Մասիսը» (Վաչէ 1950): Դավիթ Էվերեկլյանը հանդես է եկել Էլիզբարյանի դերով: «Դաւիթ էվերեկլեան ապրեցաւ իր ներկայացրած անձին հոգեկան տագնապն ու անողոք տառապանքը: Կարծես խղճի խայթը շարունակ կը կրծէր զինքը: Նախանձը իր մէջ ատելութեան փոխուած, տարակոյս և անվստահութիւն մը արթնցուցած էր իր մէջ, իր ընտանիքի անդամներու սիրոյն նկատմամբ» – գրում է «Մասիսը» (Վաչէ 1950):

Հոդվածագիրը նշում է, որ «Գնահատելի էր դերասաններու ջանքը: Անոնք կրնան յառաջդիմել, եթէ յարատեւին, սիրեն, աշխատին՝ զարգացնելու համար իրենց ձիրքերը, զգացումները և հոգեբանությունը թատրոնի միջոցով» (Վաչէ 1950): Ըստ հեղինակի, բոլոր դերասանները գրեթե անթերի էին իրենց վստահված դերերի մեջ և արժանի գովասանքի ու քաջալերանքի:

1952 թ. մայիսի 18-ին թատերախումբը «Արարատյան» սրահում ներկայացնում է Դավիթ Էվերեկլյանի պիեսը՝ նրա բեմադրությամբ. ժամանակակից եգիպտահայերի մասին գրված «Մռայլ կյանքեր»-ում «...հարուստ հայ ընտանիքի մը ներքին ապրելակերպը կը պատկերացվի իր բովանդակ մերկութեամբ» (Ներկայ մը 1952): «Մռայլ կեանքեր»-ին անդրադարձել է նաև «Ազդարարը»: «Բազմաթիւ վարդապետներ և ընտրանի հասարակութիւն մը գրաւած էին իրենց աթոռները», – գրում է հոդվածագիրը: Թատերգության սյուժեն հետևյալն է՝ Սիմոն Շարաբեկյանը իր տիկնոջ՝ Հայկանուշի ձեռքը խամաճիկ է դարձել և ենթարկվում է նրա քմահաճույքներին: Սիմոն Շարաբեկյանի դերով հանդես է եկել Դավիթ Էվերեկլյանը, և «...ի պատիւ իրեն պետք է ըսել, որ իր հոգեկան խռովքը անկումին յուզումները, տիկնոջ խամաճիկ ըլլալը կրցավ արտահայտիլ» (Թղթակից 1952):

1953-ին ներկայացվել են «Վարդանանք», «Շողոքորթը», 1954-ի հունվարի 2-ին ՀԿԵՄ-ի կազմակերպած Ամանորի երեկոյին՝ «Երեք քաջերը»: «Կատակերգութիւնը շատ յաջող անցաւ եւ անհատնում քրքիջներ խլեց հանդիսականներէն» (Ներկայ մը 1954): Այս վերջինի մասին գրում է նաև «Մասիսը»: 1955-ին բեմադրվել են «Հրաշալի հաղթանակը», «Արհավիրք Տեր Զորի» և 1959-ին՝ «Ագահը» և այլն: «Պետրոս Ադամյան» թատերախումբը, որն արդեն ավելի քան տասը տարի իր մասնակցությունն էր բերում Բեյրութի թատերական կյանքին, 1963-ին բեմադրում է Էժեն Լաբիշի «Դիմակը» կատակերգությունը, «ոչ զորաւոր անցքերով, սակայն մարդկային տկարութիւնները, ցուցամոլութիւնը լաւագոյն կերպով պախարակող եւ իր այժմէականութիւնը միշտ պահող կտոր մը: Մայիսի 15-ին բեմադրուած «Դիմակը» իր 15 դերակատարներով եկավ փաստելու, որ ինքը կ՝ուզէ նորութիւններ մտցնել թատերական կեանքին ներս: Փորձառու դերասանների կողքին հանդես եկան նորերը, որոնք, անշուշտ, պիտի ունենային անխուսափելի սայթաքումներ» (Շահանդուխտ 1963): ՀԿԵՄ-ի «Պետրոս Ադամեան» թատերախումբը հանդես է եկել տասնյակ ներկայացումներով և լիբանանահայ նախնական թատերական շարժման գլխավոր խմբերից էր: «Հոս է, որ առաջին անգամ կը հանդիպինք օտար հեղինակներէ թարգմանութիւններու, – գրում է լիբանանահայ դերասան Հարութ Գնդունին, – որոնց բեմադրուիթիւնը որոշ ճաշակ մը կ՛աւելցնէ եւ գաղափար մը կու տայ թատերական զանազանութեան մասին: Այսպէս, թատերախաղերը դուրս գալով զավեշտի մակարդակէն՝ կը ստանան երանգ ու մարմին» (Գնդունի 2018, 27 մարտի): Ինչպես մյուս թատերախմբերում, այնպես էլ այստեղ գոյություն են ունեցել դժվարություններ, սակայն լայնախոհության շնորհիվ թատերախումբը կարողացավ իրագործել իր նպատակները և անշահախնդիր ծառայել հայ բեմին:

«Հայ թատրոնի առաքելութեան մասին մեր կարծիքը գուցե քիչ մը տարբերի այլ պաշտոնակիցներու ըմբռնումեն», – գրում Դավիթ Էվերեկլյանը: «Ըստ մեզի՝ սուրբ է հայ բեմը, որուն վրայ ցուցադրուած ամէն գործ պարտի ըլլալ մանրամասնօրեն ուսումնասիրուած, զտուած և շինիչ: Եկեղեցւոյ նման, ան պետք է ըլլայ պատկառազդու, վսեմ: Սոսկ բարոյաշունչ եւ դաստիարակիչ» (էվերեկլեան 1962):

«Ռուբեն Մամուլյան» թատերախումբը

Մի խումբ խանդավառ երիտասարդներ «Հայ գիր» ամսագրի խմբագիր Վազգեն Այգունու ղեկավարությամբ հիմնադրում են «Ռուբեն Մամուլյան» թատերախումբը, որն սկսել է գործել 1940-ից և շարունակել իր ազգօգուտ գործունեությունը թատերական, կրթական, մշակութային բնագավառներում՝ կազմակերպելով մշակութային, գրական երեկոներ՝ նվիրված հայ գրողներին, ապրիլյան նահատակներին: 1940–1944 թթ. ընթացքում նրանք բեմադրում են Պետրոս Դուրյանի «Սև հողերը», Վազգեն Այգունու «Թաղականը», Շիրվանզադեի «Նամուսը», Ալեքսանդր Աբելյանի «Պըլը Պուղին» և այլն:

Դավիթ Էվերեկլյանը նույնպես իր մասնակցությունն է ունեցել այդ թատերախմբում:

1940-ի դեկտեմբերի 1-ին Բեյրութի Արարատյան սրահում «Ռուբեն Մամուլյան» թատերախմբի նախաձեռնությամբ բեմադրվել է Վազգեն Այգունու «Թաղականը» թատերգությունը, որի մասին դրվատանքի խոսքեր է ասել տեղական մամուլը՝ քաջալերելով թատերախմբին: 1941-ի մայիսին 4-ին բեմադրվել է Մոլիերի «Ակամա բժիշկը»՝ թատերասերների հաջող խաղարկությամբ: Սգանարելի դերով հանդես է եկել Փանոս Կրտանյանը, որը «Ներկաներուն ուշադրութիւնը իր վրայ լարուած պահեց ամբողջ ներկայացման տեւողութեանը՝ իր ճարպիկ շարժուձեւերով, համարձակ ընթացքով և յաջող խաղարկութեամբ ու մարզուած եփուն արուստագետի տպաւորութիւն թողուց հանդիսասրահին վրայ: Շեշտ, հասակ… շուտով համակրելի դարձուցին զինքը բարձրաստիճան հանդիսականներուն (Այգունի 1941): 1943-ի ապրիլի 23-ին «Ռուբեն Մամուլյանը» «Քրիստալ» սրահում Պողոս Մենտիլյանի ղեկավարությամբ բեմադրել է հայ դրամատուրգ, թատերական գործիչ Ալեքսանդր Աբելյանի (1858–1940) «Պըլը պուղի» օպերետը, որն ունեցել է մեծ հաջողություն: «Նիւթին ընտրութիւնը, ինչպես շեշտեց թատերախումբին հիմնադիր-վարիչը, ձգտումնաւոր էր: Խամսայի մելիքութիւններու ալեկոծուած կեանքը, կագ ու կռիւով, եղբայրասպան վեճերով թունաւորուած հեղձուցիչ մթնոլորտը ճարտարորեն պատկերացնող այս ողբերգութիւնը կը պատասխանէր օրուան պետքին, իրաւ ալ այսօր ավելի քան հրամայական դարձած չէ համերաշխութեան, միութեան հարցը մեր ժողովուրդին բոլոր խավերուն համար անխտիրե (Այգունի 1943): Այս թատերախաղը, սակայն, դարձել է թատերախմբի կարապի երգը: Ալ. Աբելյանի «Պըլը Պուղի» օպերետը Պողոս Մենտիլյանի մասնակցությամբ «Արդարև շատ յաջող կերպով բեմադրուեցաւ», – նշում է «Հայ գիր» ամսագիրը (Այգունի 1943): Թատերախոսը Մենտիլյանի երկարատև աշխատանքին է վերագրում այդ հաջողությունը: Իսկ դերակատարները հիացմունք են առաջացրել բոլոր ներկաների մոտ:

«Լիբանանահայ թատերախումբ» (1946–1954)

1946-ից Դավիթ Էվերեկլյանը Օ. Քեքլիկյանի և Հ. Շիրինյանի հետ հիմնում է Լիբանանահայ թատերախումբը, որը գոյատևում է մինչև 1954 թ.՝ հանդիսատեսի դատին հանձնելով 18 ներկայացում. թատերացանկում տեղ են գտնում «Իսուբը» օպերետը, «Սև հողերը», «Արցունքի հովիտը», «Անիծյալը» և այլն: 1948-ի հունվարի 10-ին «Սինեմա Արաքսում» ներկայացնում են «Եվգինե» թատերախաղը:

Ալեքսանդր Շիրվանզադեն «Եվգինե» երեք գործողությամբ դրաման (գրել է 1901-ի հուլիս-օգոստոս ամիսներին) նվիրել է իր մորաքրոջ որդուն՝ հայ անվանի դերասան Հովհաննես Աբելյանին՝ գրողի ստեղծած կերպարների անզուգական մարմնավորողին: «Եվգինեն» առաջին անգամ բեմականացվել է նույն թվականի հոկտեմբերի 29-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության նորաբաց թատրոնի լեփ-լեցուն դահլիճում՝ Գևորգ Պետրոսյանի բեմադրությամբ: Ներկայացմանը, որին մասնակցել են ժամանակի հայ դերասանական առաջնակարգ ուժերը, ունեցել է մեծ հաջողություն ներկա է եղել նաև հեղինակը: Թատերախոս Գ. Վանցյանի վկայությամբ՝ հանդիսատեսն այն ընդունել է ջերմորեն և ըստ արժանվույն՝ «տեսնելով մեր առաջին վիպասանի մեջ եւ առաջնակարգ թատրերգակի շնորհքը», թատրոնից հեռանալով «այն հաճելի գիտակցութեամբ որ Սունդուկյանի տեղը թափուր չի մնալու այսուհետեւ» (Վանցեան 1902): Դրվատական հոդվածներ են տպագրվել ինչպես հայկական, այնպես էլ Կովկասի ռուսական մամուլում: Շիրվանզադեին՝ որպես դրամատուրգի, բարձր գնահատական է տվել հայ մեծատաղանդ բանաստեղծ Վահան Տերյանը: 1914-ի ապրիլի 30-ին Թիֆլիսի Երաժշտական ընկերության դահլիճում «Հայ գրականության գալիք օրը» թեմայով իր հրապարակային դասախոսության ժամանակ բանաստեղծն ընդգծում է. «Դրամայի մեջ որքան էլ ինքնատիպ, խոշոր և հետաքրքրական լինի Սունդուկյանը – նա առանձին երևույթ է, նա դարձյալ ունիկում է իր «Պեպո»-ով, իսկ ուղի հարթողը Շիրվանզադեն է: Չպետք է մոռանալ, որ կենցաղագրական և հոգեբանական դրամային գրական լեզվով ամենից շատ զարկ է տվել Շիրվանզադեն, և որքան էլ թերություններ ունենան նրա գրվածները, նրա նշանակությունն այդ ասպարեզում շատ է մեծ ու նշանակալից (Տերյան 1961, 271): «Եվգինեն» առաջին անգամ տպագրվել է «Թատրոն» հանդեսում 1903-ին: Նույն թվականին այն լույս է տեսել առանձին գրքով: Հետագայում դրաման տարբեր արհեստավարժ թատերախմբեր և թատերասերներ բազմիցս բեմադրել են թե՛ Անդրկովկասում, թե՛ այլ երկրների հայաշատ վայրերում, առանձնապես XX դ. առաջին տասնամյակում:

Լիբանանահայ թատերախմբի ներկայացրած «Եվգինե» թատերախաղի մասին Զարթօնքը նշում է. «Բեմադրողները իրենց կարելին ըրած էին յաջողելու և յաջողեցան, համաձայն տուեալներուն, Եւգինէին, ամուսնոյն և քրոջ դերակատարները ունեցան իրական ապրումներ…» (Թղթակից 1948): Հոդվածագիրը գտնում է, որ կա «ձեռնարկող ոգի» և «աշխատանքի սեր», և բոլոր զոհողությունների փոխարեն կա «հաջողության վայելքը»:

«Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը» (1961–1966)

«Քուլիս» թատերական հանդեսի 15-րդ տարեդարձի առթիվ հինգ բեմընկեր քուլիսականներով Դավիթ Էվերեկլյանը հիմնում է «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը»՝ նպատակ ունենալով վառ պահել «Քուլիսի» անունը: Բացումը տեղի է ունենում 1961-ի դեկտեմբերի 17-ին Ուեսթ հոլում: Գեղարվեստական երեկոն նվիրված էր հանդեսի 15-ամյակին և նրա հիմնադիր-խմբագիր Հակոբ Այվազին: Մասնակցում են երգչուհի Արփինե Փեհլիվանյանը, դերասաններ և ասմունքողներ Արտաշես Տեր-Գևորգյանը, Էդուարդ Չափրաստը, Թորոս Սպիտանյանը, Կայծակ Գնդունին, Հակոբ Կուլոյանը և ուրիշներ: Նույն օրը բեմադրվում է նաև Հակոբ Այվազի «Շատերեն մեկը» թատերախաղը: Դավիթ Էվերեկլյանը գրում է. «1961-ի խանդավառ օրերուն երբ հիմնած էինք «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը», եւ պիտի կատարէր իր անդրանիկ ձեռնարկը՝ տոնելով Հայաշխարհի միակ թատերական թերթին՝ «Քուլիսին» 15 ամեակը՝ այդ առիթով բեմադրելով Յակոբ Այվազի «Շատերեն մեկը» թատերախաղը, որի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1949-ի մարտի 27-ին Կ. Պոլսի Պեյօղլի թաղամասի Սէս թատրոնում, Աշոտ Մադաթյանի բեմադրությամբ» (Էվերեկլեան 1983): «Քուլիսը» գրում է. «Շատերեն մեկը», որ յայտնութիւն մը դարձաւ, դրաւ մեզ այն տպաւորութեան տակ, թե հեղինակը ունի յղացումի և միզանսէնի կարողութիւն և իր այս առաջին փորձը, որ նախապես կը կրեր «Արուեստագետի մը կեանքը կամ վերջին վարագոյրը», իր վարպետին Աշոտ Մատաթեանի ձեռքին տակ ապահովաբար կրկին ձեւաւորուած, կարող էր մեր նոր խումբերուն «ռեբերթուառին» մէջ իր յատուկ տեղը գրաւել» («Քուլիս»-ի ցերեկոյթը 1949): Գլխավոր հերոսի՝ Վահեի դերը մարմնավորել է թատերախաղի հեղինակը՝ Հակոբ Այվազը: Տասներկու տարի անց՝ 1961-ի դեկտեմբերի 17-ին «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը» քաղաքի լավագույն սրահներից մեկում՝ ամերիկյան համալսարանի Ուեստ հոլում, ներկայացնում է «Շատերեն մեկը»: Է. Չափրաստը այդ մասին գրում է. «Ձիս առաւելագոյն չափով խանդավառողները եղան մասնակցող դերակատարները, որոնք ամեն ճիգ թափեցին առաւելագոյն չափով տալու համար իրենց ստանձնած դերերուն հոգեկան խռովն ու փոթորիկը: Ինծի համար հարց չէ, թե ինչ չափով յաջողեցան, այլ այն խոր նւիրումը և ընդունակութեան աստիճանաչափը, որ մեծագոյն գրաւականն է իրենց վաղուան յաջողութեան» (Չափրաստ 1961): Վահեի դերով հանդես է գալիս Դավիթ էվերեկլյանը, որն «ըրաւ իր լաւագոյնը տալով մեզ հաւատարիմ ամուսնի, թատերագրի և դերասանի կերպարը, և հաջողեցաւ», – նշում է հոդվածագիրը (Տեր-Գեորգեան 1962): «Պեյրութահայ Քուլիսականներու թատերախումբը հանդես է գալիս ոչ միայն Բեյրութում, այլև Հալեպում, Դամասկոսում, Լաթաքիայում, Զահլեում և այլ տեղերում, քանի որ «Խումբ մը բեմի սրբազան խենթեր» արհամարհելով իրենց հանգիստը, անձնական մտահոգութիւնները, նիւթական և բարոյական զոհողութիւնների գնով կը ծաղկեցնեն «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը», – գրում է թատերախոսը (Էվերեկլեան 1963): «Պեյրութահայ քուլիսա-

կաններու» խաղացանկում տեղ են գտել սփյուռքահայ երգիծաբան, դերասան Գրեմ Սիմոնի «Հարս ու կեսուր», բելգիական ծագումով ֆրանսիացի դրամատուրգ Մորիս Հենիքենի «Մանկիկս», Գևորգ Չուբարի «Սանդուխտ կույսը», Շիրվազադեի «Արտիստը», որն առաջին անգամ էր ներկայացվում լիբանանահայ գաղթօջախում, ինչպես նաև Դավիթ Էվերեկլյանի «Հրաշալի հաղթանակը» և բազմաթիվ այլ հաջող բեմադրություններ: 1964-ին Կ. Պոլսում բազմիցս ներկայացված «Հարս ու կեսուր»-ը «Պեյրութահայ քուլիսականների» կողմից անմոռանալի հուշեր թողեց թատերասերների մոտ: Սյուժեն պարզ է: Հարս ու կեսուրի անվերջանալի վեճերը, անհամաձայնությունը և վերջում զավակի ծնունդը, որը բերում է հաշտության և համերաշխության: Գլխավոր դերով հանդես եկող Դավիթ Էվերեկլյանը, որ «Թատերախումբին անձնազոհ հիմնադիրներէն է միանգամայն, անվիճելի տաղանդով և բնական ապրումով կրցավ փայլիլ Սեփոն աղայի դժուար դերին մէջ: Առաջին անգամ չէ արդէն, որ Դաւիթ այսքան հոգի եւ արուեստ, ճաշակ ու խիղճ կը յաջողի դնել իրեն վիճակուած դերերուն մէջ» (Այգունի 1964): Սկեսուրի դերում հանդես է եկել Բերկրուհի Էվերեկլյանը: Վերջինս իր անթերի, բնական խաղով փայլ է տվել թատերախաղին: «Խեղաթիւրող, զրպարտող, քանդող, կռուող կեսուրի տիպար մը ծափահարեցինք բեմին վրայ յանձին Տիկ. Էվերեկլեանի», – գրում է Վ. Այգունին (Այգունի 1964): 1965-ի մարտի 20-ին և ապրիլի 30-ին «Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը» հանդես է եկել Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը» պիեսի բեմադրությամբ (Ներկայ մը 1965): Առաջին ներկայացումը հովանավորել է լիբանանցի հայասեր, բանաստեղծ Սայիդ Աքլը: Դերասանները հանդես են եկել հաջող խաղով՝ հանդիսատեսին տեղափոխելով զուլումի օրեր: Առանձնապես գնահատանքի են արժանացել Դավիթ և Բերկրուհի Էվերեկլյանները: Ինչպես նշում է Ազդակը, «Թատերասեր հասարակութիւն մը ծայրե ծայր լեցուցած էր սրահը… Դերուսոյց Պր. Դաւիթ Էւերեկլեան ոչ մէկ ջանք չէր խնայած, որպեսզի դերակատարները յաջողէին տալ իրենցմէ ակնկալուած խաղարկութիւնը» (Հրազդան 1965): Վերոհիշյալ բեմադրության մասին «Յուզիչ ներկայացում» վերնագրի տակ անդրադարձ կա նաև «Մասիսի» 1965 թ. ապրիլի 4-ի համարում: «Քուլիսի» 15-ամյակի առթիվ հանդես եկող թատերախումբը բոլորովին տարբերվում էր մյուսներից իր կազմակերպչական ձևով և կառուցվածքով: Այն կաշկանդված չէր որևէ մեկի գաղափարախոսությամբ, կուսակցականությամբ, սիրով և բարեկամության զգացումով էր համակված բոլորի հանդեպ, իր շարքերում ընդունում էր բոլորին, որոնք կցանկանային անդամակցել այս համերաշխ թատերախմբին:

«Գերմանիկ» թատերախումբը (1956–1959)

Բուրջ Համուդի կենտրոնում՝ Նոր Մարաշում է գտնվում «Գերմանիկ» թատերասրահը: Այդտեղ էլ հիմնվել է համանուն թատերախումբը (1957 թ. մարտի 4-ին): Ներկայացվել է «Աշկերտ Կիկոն» ծիծաղաշարժ թատերախաղը (Էվերեկլեան 1957. «Գերմանիկ» թատերասրահին բացումը): Նույն թվականին բեմա-

կանացվել է Շիլլերի «Ավազակները»-ից քաղված մի հատված՝«Անիծյալը» ողբերգությունը: Փառասիրության և ընչաքաղցության պատճառած ավերների մասին է այս գործը, որն ունեցել է նշանակալից հաջողություն, թեպետ փորձառու դերասանների կողքին հանդես են եկել նաև սկսնակներ: Էռնանիի դերը կատարել է Դավիթ Էվերեկլյանը: «Գերմանիկ» թատերախմբի գոյությունը անհրաժեշտություն էր Բուրջ Համուդի համար: «Գուրգուրանքով կը հետեւինք այս շարժմանը, մանավանդ երբ կիմանանք թե վարիչները ծրագրած են ապագային մնայուն եւ տեւական բանող հայ թատրոն մը հիմնել», – կարդում ենք «Քուլիսում» (Էվերեկլեան 1957. Անիծյալը «Գերմանիկ» թատերախումբին կողմէ): 1957-ի ապրիլի 24-ին «Գերմանիկը» հանդես է եկել Հովհաննես Մոմճյանի «Արհավիրքը Դեր Զորի» պիեսով դարձյալ «Գերմանիկ» թատերասրահում: «Դերակատարները արտաբերեցին իրենցմէ ամէն ընկալուածէն աւելին», – գրում է «Քուլիսը», սակայն նաև ավելացնում, որ «Պիտի փափաքէինք որ ան հայ բեմին մոտենար աւելի երկիւղածօրեն, դերասանական կազմը զօրացնէր և բծախնդրութեամբ հրամցնէր իր գործերը» (Էվերեկլեան 1957. Յայտնի և արժեքաւոր արտասանող Խաչիկ Արարատեանի երեկոն): 1957-ի դեկտեմբերի 21-ին Դավիթ Էվերեկլյանը բեմադրել է Մորիս Հենըքենի ֆրանսիացիների կյանքը պատկերող «Մանկիկս» կատակերգությունը: «Դերասանական կազմը ընդհանուր առմամբ ներկայանալի էր, – գրում է «Զարթոնքը», – իր բեմընկերներուն մէջ ուշագրաւ Միքոյի դերով պր. Դավիթ Էվերեկլեանը, որ իր բեմական ճկունութեամբ, փորձառութեամբ ու շնորհներով հարազատորեն պատկերացուց միամիտ, դիրւահաւան երկչոտ նկարագիր մը» (ՅՇՏ 1957): Էվերեկլյանը հարմարեցրել է թատերախաղը հայկական միջավայրին և անուններին: Գլխավոր՝ Միքոյի դերով հանդես է եկել ինքը Դավիթ Էվերեկլյանը, որը «...խաղին առանցքը կը կազմէր, խելացի արտահայտութեամբ ապուշ նկատելու աստիճան միամիտ, յստակ որոշում չունեցող և միշտ շարժուն այս դերով Պր Դավիթ Էվերեկլեանը ամբողջ 3 արարներուն տիրապետեց բեմին: Պետք է ըսել որ Պր Դավիթ բեմը սիրող, ավելի շինող, կառուցանող մըն է ինքնատիպ գործունեութեամբ, կազմակերպող, տարիներու դանդաղ յառաջացումով շինած է վարկ մը. իր շուրջը հաւաքուած, նոյնքան զոհուող երիտասարդութիւնը և ժողովուրդը, պարտին զինք քաջալերել և ժողովրդականացնել, ավելի մեծ ձեռնարկներու պահանջումով», – գրում է թատերախոսը (Տելլալեան 1958. «Գերմանիկ» թատերախումբի «Մանկիկս»-ը):

1958-ի փետրվարի 13-ին Վարդանանց փառատոնի առթիվ Բուրջ Համուդի «Գերմանիկ» սրահում ներկայացվել է Դ. Էվերեկլյանի «Հրաշալի հաղթանակ» թատերախաղը: Մոգպետի դերով հանդես է եկել հեղինակը: «Մոգպետի դերին մէջ սքանչելի խաղարկութիւն մը ցոյց տուաւ Դավիթ Էվերեկլեանը իրական քրմապետի մը տիպարը կը ներկայացնէր ան», – գրում է «Մասիսը» (Թեքէեան 1958): Հայ հոգևորականությանը կրոնափոխ դարձնելու պարտականութունը ստանձնած Մոգպետը գործադրում է ամեն հնար ու ջանք: Հայ հոգևորականությունը Ղևոնդ Երեցի գլխավորությամբ միշտ լռեցնում է Մոգպետին: «Մենք անմահներ ենք: Մենք կը յաղթենք և պիտի յաղթենք միշտ, կը պոռար Մոգպե-

տի երեսին, որ իր երկայն հասակով, իր երկար թեւերով ու ջղագրգիռ մատներով, կ՝ընդդիմանար եւ զինք լռեցնելու կը ճգնէր» (Թեքէեան 1958): Վերջին արարում մոգպետը ցանկացել է իմանալ, թե ինչպես են դիմանում հոգևորական կալանավորները քաղցի, ծարավի անքնության և մերժում են ծնկի գալ: Ինչպես նշում է հոդվածագիրը, ներկայացման այս հուզիչ պատկերը գրեթե առանձին խաղաց Դավիթ Էվերեկլյանը: Մոգպետը, որ ցանկանում էր ծնկի բերել հայ կալանավոր հոգևորականներին, ինքն է ծնկի գալիս նրանց առջև: Հաղթանակը տարել էին հայ եկեղեցականները. «Ան սկսաւ պաղատիլ իր կալանաւորներուն, որ զինք ալ քրիստոնեայ մկրտեն... Ես ալ կուզեմ սուրբ ըլլալ ձեզի պէս, ես ալ քրիստոնեայ ըլլալ կ՝ուզեմ, կը պաղատէ Քրմապետը՝ արդէն ինքզինքը քրիստոնեայ զգալով, տեսաւ իր առջեւ երկնքին բացուիլը, ուրկէ իր աչքին երեւցաւ Աւարայրի նահատակ հերոսներուն անմահական փաղանգը: Հոս ալ ծունկի եկաւ, գոչելով. Քիչ վերջ ես ալ նահատակութեան պսակ ստացած պիտի միանամ ձեզի» (Թեքէեան 1958): «Գերմանիկ» թատերախումբը հաջողությամբ ներկայացրել է նաև Վ. Ուզունյանի «Մահ հին աստվածներու» պիեսը, որի հաջողությանը նպաստեց Դ. Էվերեկլյանը՝ քաջալերելով առաջին անգամ բեմ բարձրացողներին: Ղեկավարի և սիրող դերասանների անխոնջ աշխատանքի շնորհիվ «Գերմանիկ» թատերախումբը ունեցավ մնայուն դերասաններ՝ գործակցելով նաև տարիների վաստակ ունեցող դերասանների հետ: «Պրն. Դ. Էվէրէկլեան ոչ միայն ամաթէօրներ կը հասցնէ հայ բեմին, այլեւ կը գործակցէ, տարիների վաստակ ունեցող սիրող դերասաններու հետ և համերաշխորէն կը ղեկաւարէ խումբը», – գրում է «Քուլիսը» (Տելլալեան 1958. Ս.Վ. Ուզունյանի «Մահ հին աստվածներու»): Թատերախումբը դատապարտել է արվեստի և նորարարության քողի տակ հայ բեմ սողոսկող օտար և հոռի բարքերը, միշտ ընտրել է ստեղծագործություններ, որոնք մոտ են հայ միջավայրին: Սփյուռքի անբարենպաստ պայմաններում ուրախալի է տեսնել արվեստի հմայքով համակված, ստվարացող թատերասերներին, իսկ նրանց նվիրվածությունը այս ասպարեզին գնահատելի է՝ արժանի քաջալերանքի:

Եզրակացություններ

Լիբանանահայ թատերական շարժման առաջին երախտավորներն իրենց խանդավառ, ոգևորիչ ելույթներով անմոռանալի տպավորություն են թողել թատերասերների վրա: Լուռ ու անտրտունջ, տասնյակ տարիների զոհաբերության հասնող նվիրվածությամբ կարողացել են իրենց ուսերի վրա պահել բեյրութահայ բեմը՝ նպաստելով ազգապահպանության վսեմ գործին: Մշակներ, որոնք նյութական դաժան պայմաններում բարձր են պահել հայ թատրոնի ջահը: Նրանց մեջ իր ուրույն տեղն ունի լիբանանահայ թատրոնի գործիչ, տաղանդավոր դերասան, դերուսույց, բեմադրիչ, թատրոնի պատմաբան, Դ. Էվերեկլյանը, որն իր կարևոր մասնակցությունն է ունեցել թատերական դժվարին գործի մեջ: Բազմաշնորհ արտիստի թատերական արգասավոր գործունեությունն իր նպաստը բերեց հայ ժողովրդին ու հայ թատրոնին՝ արժանանալով ջերմ գնահատանքի ու

երախտիքի: «Եվ այս օրվան պեյրութահայութիւնը իր ազգային արժանապատվութիւնը, իր հասարակական կեանքը կը պարտի վրանաքաղաքներու տարապայման բախտը ապրած երեկի դալկացած այն սերնդին, որ կիսամերկ ու ոտաբոբիկ քալեց, ապա ծլարձակեցավ և ամրակուռ արմատացավ ի գին մեծ զրկանքներու» (Գնդունի 1962):

Դավիթ Էվերեկլյանի արդյունավետ, բեղուն աշխատանքներն ընդհատվեցին Լիբանանում ստեղծված քաղաքական անկայուն և անբարենպաստ պայմանների հետևանքով, և նա ընտանիքով հեռացավ երկրից՝ հաստատվելով Մոնրեալում:

Շնորհակալական

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Դավիթ Էվերեկլյանի դուստր Ռոզալիա Վասիլյան-Էվերեկլյանին՝ հոդվածի համար արժեքավոր նյութեր տրամադրելու և հետազոտական գործընթացում ոգեշնչման աղբյուր լինելու համար: Նրա աջակցությունը էական դեր է ունեցել աշխատանքի ձևավորման մեջ:

Իմ երախտիքի խոսքն եմ հայտնում տիկին Աննա Ասատրյանին՝ ոչ միայն Սփյուռքի և գիտության փոխառնչության կարևորությունը բարձրաձայնելու, այլև ինձ մշտապես ոգեշնչելու և քաջալերելու համար: Նրա տեսլականը նոր շնչով է լցնում մշակութային դաշտը:

Հատուկ շնորհակալություն «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրական կազմին՝ այս կարևոր թեմաների լուսաբանման և հանրայնացմանն ուղղված հետևողական աշխատանքի համար:

Գրականություն/References/Литература

1. Այգունի Վ. 1941, Արձագանք, Հայ գիր, N 3, 69–70:
   Ayguni V. 1941, Echo, Hay Gir, N 3, 69–70 (in Armenian).
2. Այգունի Վ. 1943, Ռուբեն Մամուլեան թատերախումբ. Պըլ-Պուղի, Հայ գիր, N 5, 118:
   Ayguni V. 1943, Rouben Mamoulian Theatre Group, Pel-Pughi, Hay Gir, N 5, 118 (in Armenian).
3. Այգունի Վ. 1964, Պեյրութահայ քուլիսականներու «Հարս ու կեսուր»-ը, Սփյուռք, N 14, 11 ապրիլի, 4:
   Ayguni V. 1964, "Mother in Law and Daughter in Law" by Beirut Armenian Backstage Performers, Spyurk, N 14, April 11, 4 (in Armenian).
4. Գնդունի Յ. 2018, Թատերական շարժումը Լիբանանի մէջ 1940–1970 թուականներուն, թատրոնի միջազգային օրուան առիթով, Ազդակ, 27 մարտի, 4:
   Gnduni H. 2018, The Threatrical Movememt in Lebanon during 1940–1970 (on the occasion of International Theatre Day), Azdak, March 27, 4 (in Armenian).
5. Գնդունի Կայծակ 1962, Նիւթեր լիբանանահայ թատրոնի պատմութեան համար, Սփյուռք, 17 մայիսի:
   Gnduni K. 1962, Materials for the History of Lebanese-Armenian Theatre, Spyurk, May 17 (in Armenian).

6. Էվերեկլեան Դ. 1957, «Գերմանիկ» թատերասրահին բացումը և առաջին ներկայացումը, Քուլիս, N 247, 11:
Evereklean D 1957, The Opening of "Germanik" Theatre Hall and First Performance, Kulis, N 247, 11 (in Armenian).

7. Էվերեկլեան Դ. 1957, Անիծեալը «Գերմանիկ» թատերախումբին կողմէ, Քուլիս, N 248, 20:
Evereklean D. 1957, "The Cursed One" by the "Germanik" Theatre Group, Kulis, N 248, 20 (in Armenian).

8. Էվերեկլեան Դ. 1957, Յայտնի և արժեքաւոր արտասանող Խաչիկ Արարատեանի երեկոն և Յովի Մոմճեանի «Արհավիքը», Քուլիս, N 250, 17:
Evereklean D. 1957, The Evening of Famous and Valuable Reciter Khachik Araratian and Hov. Momjian՝s "Catastrophe", Kulis, N 250, 17 (in Armenian).

9. Էվերեկլեան Դ. 1962, Թատերական շարժումը Հ.Կ.Ե.Մ.-են ներս, Սփյուռք, 21 հունիսի, 12:
Evereklean D. 1962, The Theatrical Movement within H.K.E.M., Spyurk, June 21, 12 (in Armenian)

10. Էվերեկլեան Դ. 1963, Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբը ոգեւորութեամբ բոլորեց իր թատերաշրջանը, Քուլիս, N 397, 4:
Evereklean D. 1963 Beirut Armenian Backstage Performers՝ Theatre Group Enthusiastically Completed its Theatre Season, Kulis, N 397, 4 (in Armenian).

11. Էվերեկլեան Դ. 1983, Երբ կը տօնէինք «Քուլիսի» 15 ամեակը 1961-ին Պեյրութում, Քուլիս, N 865, 10:
Evereklean D. 1983, When We Celagrated "Kulis"s 15th Anniversary in Beirut in 1961, Kulis, N 865, 10 (in Armenian).

12. Էվերեկլեան Դ. 1985 «Թատերայուշեր բեմական կեանքիս յիշատակութեան առթիւ», Մոնրեալի Արմենեան թատերախումբի կողմէ, Քուլիս, 15 օգոստոսի, 11:
Evereklean D. 1985, "Theatre Memories on the Occasion of Remembering my Stage Life", by Montreal՝s Armenian Theatre Group, Kulis, August 15, 11 (in Armenian).

13. Թեքէեան Ա. 1958, Հրաշալի հաղթանակը, Մասիս, N 20, 8:
Tekeyan A. 1958, Wonderful Victory, Masis, N 20, 8 (in Armenian).

14. Թղթակից 1948, «Եվգինե» բարոյաշունչ և դաստիարակիչ տրամա, Զարթօնք, 21 հունվարի:
Correspondent 1948, "Yevgineh", a Moral and Educational Drama, Zartonq, January 21 (in Armenian).

15. Թղթակից 1952, «Մռայլ կեանքեր», Ազդարար, 25 մայիսի:
Correspondent 1952, "Gloomy Lives", Azdarar, May 25 (in Armenian).

16. Լութեր 1924, «Պատուի համար», Փյունիկ, N 16:
Luther 1924, "For Honour", Pyunik, N 16 (in Armenian).

17. Հրազդան 1965, «Արցունքի հովիտը», Ազդակ, 23 մարտի:
Hrazdan 1965, "The Valley of Tears", Azdak, March 23 (in Armenian).

18. Յ.Շ.Տ. 1957, «Մանկիկս», Զարթօնք, 27 դեկտեմբերի, 3:
H.Sh.T. 1957, "My Baby", Zartonk, December 27, 3 (in Armenian).

19. Ներկայ մը 1952, «Մռայլ կեանքեր», Ազդակ, 25 մայիսի:
An Attendee 1952, "Gloomy Lives", Azdak, May 25 (in Armenian).

20. Ներկայ մը 1954, ՀԿՕՄ-ի եւ ՀԿԵՄ-ի երեկոյթը, Մասիս, 13 հունվարի, 8:
An Attendee 1954, H.K.O.M. and H.K.E.M. Evening Event, Masis, January 13, 8 (in Armenian).

21. Ներկայ մը 1965, Արցունքի հովիտը, Սփյուռք, N 20, 10:
An Attendee 1965, The Valley of Tears, Spurk, N 20, 10 (in Armenian).

22. Շահանդուխտ 1963, «Դիմակը», բեմադրութիւն Պետրոս Ադամեան թատերախումբի, Այգ, 21 մայիսի:
Shahandukht 1963, "The Mask", Performance by Petros Adamian Theatre Group, Ayg, May 21 (in Armenian).

23. Չափրաստ Է. 1961, Ներկայացման մը առթիւ, Սփյուռք, 31 դեկտեմբերի, 36:
Chaprast E. 1961, On the Occasion of a Performance, Spyurk, December 31, 36 (in Armenian).

24. Չափրաստ Է. 1965, Թիթեղածածկ թատրոնը, Այգ, 13 հունիսի:
Chaprast E. 1965, The Tin-Covered Theatre, Ayg, June 13 (in Armenian).

25. Վաչէ 1950, «Պատուի համար», Մասիս, 6 հունիսի:
Vache 1950, "For Honour", Masis, June 6 (in Armenian).

26. Տելլալեան Յ. 1958, Ս.Վ. Ուզունյանի «Մահ հին Աստուածներու», Քուլիս, N 275, 18:
Tellalean H. 1958, "Death of Old Gods" by S.V. Uzunian, Kulis, N 275, 18 (in Armenian).

27. Տելլալեան Յ. 1958, Մ.Հ.Մ «Գերմանիկ» թատերախումբի «Մանկիկս»-ը, Քուլիս, N 268, 8:
Tellalean H. 1958, M.H.M. "Germanik" Theatre Group՝s "My Baby", Kulis, N 268, 8 (in Armenian).

28. Տեր-Գեորգեան Ա. 1962, Պեյրութահայ քուլիսականներու թատերախումբի անդրանիկ ձեռնարկը, Քուլիս, N 363, 13:
Der-Gevorgean A. 1962, The Inaugural Event of Beirut Armenian Backstage Performers՝ Theatre Group, Kulis, N 363, 13 (in Armenian).

29. Տերյան Վ. 1961, Հայ գրականության գալիք օրը, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 2, Երևան, «Հայպետհրատ»:
Teryan V. 1961, The Coming Day of Armenian Literature, Collected Works in Three Volumes, vol. 2, Yerevan, Haypethrat (in Armenian).

30. Քուլիսի ցերեկոյթը 1949, Սպասուած յաջողութենէն աւելին գտաւ, Ժամանակ, N 15000, 4:
Kulis՝s Afternoon Event 1949, Found More Than Expected Success, Zhamanak, N 15000, 4 (in Armenian).

ԸՆՁԱՌՅՈՒԾԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
LEOPARD IN THE CULTURAL CONTEXT OF ANCIENT ARMENIA
ЛЕОПАРД В КУЛЬТУРНОМ КОНТЕКСТЕ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Արսեն Բոբոխյան[1*], Անի Պետրոսյան[1]
Arsen Bobokhyan[1*], Ani Petrosyan[1]
Арсен Бобохян[1*], Ани Петросян[1]

[1]Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук Армении

* Գրագրություն վարող հեղինակ՝ arsen.bobokhyan@sci.am
Author for correspondence: arsen.bobokhyan@sci.am
Автор, ведущий корреспонденцию: arsen.bobokhyan@sci.am

Հեղինակների ներդրումը. ԱԲ – գաղափար, նախնական տեքստ; ԱՊ – խմբագրում
Author contrubutios: AB – conceptualization, writing original draft; AP – editing
Вклад авторов: АБ – концептуализация, написание текста; АП – редактирование

Ներկայացվել է՝ 11.07.2024; գրախոսվել է՝ 9.02.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 11.07.2024; Revised: 9.02.2025; Accepted: 18.03.025
Представлено: 11.07.2024; рецензировано: 9.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակներ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Authors, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Авторы, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2024.2-184

Ամփոփում – Հնագիտական և պատմական տվյալները վկայում են, որ Հին Արևելքում և Էգեյան աշխարհում ընձառյուծը, որպես իշխանության խորհրդանիշ, մարդկանց պահապան ու պտղաբերության երաշխավոր, եղել է խորհրդանշական բարձր մակարդակով օժտված կենդանի: Ընձառյուծի խորհուրդը հայտնի է եղել նաև հին Կովկասում և Հայկական լեռնաշխարհում, որտեղ նրա կերպարի մասին պատկերացումներն էական առնչություններ են ցուցաբերում փոքրասիական մշակութային աշխարհի հետ: Այս աշխատանքում փորձ է արվում ներկայացնել ընձառյուծի վերաբերյալ Հայաստանից հայտնի հնագիտական և պատմական տվյալները՝ սկսած նոր քարի դարից մինչ միջնադար՝ կենտրոնանալով հատկապես մ.թ.ա. II հազ. և փոքրասիական առնչությունների վրա: Իրականացված հետազոտությունը բացահայտում է, որ ընձառյուծի մասին ընկալումները կարող են լինել արխետիպային՝ բնորոշ լինելով տարբեր մշակութային աշխարհներին իրարից անկախ: Սակայն հավանական է, որ Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի հնագույն բնակչության համար գոյություն է ունեցել մեկ ընդհանուր ենթաշերտ կամ աղբյուր, որից սնվել են համապատասխան մշակույթները՝ սկսած նոր քարի դարից: Այդ առնչությունները կարող են բացատրվել նաև լեռնաշխարհի և կենտ-

րոնական Փոքր Ասիայի միջև առկա ակտիվ առևտրատնտեսական հարաբերություններով, որի ընթացքում տեղի է ունեցել առարկաների ու գաղափարների աշխույժ փոխանակություն: Ակնհայտ է, որ փոքրասիական և կովկասյան մշակութային աշխարհների միջև գոյություն են ունեցել սերտ կապեր, որոնք, սկիզբ առնելով վաղ երկրագործական հասարակությունների ընդերքում, շարունակվել են նաև հետագա ժամանակաշրջաններում:

Abstract – Archaeological and historical data show that in the Ancient Near East and the Aegean world the leopard, as a symbol of power, protector of people and provider of fertility, was an animal endowed with a high level of symbolism. The symbolism of leopard was also known in the ancient Caucasus and the Armenian Highland, where its image reveals particularly significant connections to the cultures of Asia Minor. This contribution attempts to present the archaeological material known from Armenia towards the leopard from the earliest periods to the Middle Ages, focusing on the 2nd millennium BC, and demonstrating possible connections with the peoples of Asia Minor. The research conducted indicates that the perceptions towards the leopard may be archetypal, characteristic of different cultural worlds independently of each other. However, it is very likely that there was a common substrate or source for populations of the Armenian Highland and Asia Minor, from which the respective cultures were nourished starting from the Neolithic period. The corresponding connections can also be explained by the active trade and economic relations between the Highland and central Asia Minor, during which an exchange of objects and ideas took place. It is obvious that there were deep connections between the cultural worlds of Asia Minor and the Caucasus, which began in the depths of early agricultural societies and continued until the Middle Ages.

Аннотация – Археологические и исторические данные показывают, что на Древнем Востоке и в Эгейском мире леопард был наделен высоким уровнем символизма как олицотворение власти, хранитель людей и гарант плодородия. Образ леопарда был известен также на древнем Кавказе и Армянском нагорье, где в осмыслении этого животного обнаруживаются значительные связи с малоазийским культурным миром. В данной работе предпринята попытка представить археологический материал, известный из Армении от самых ранних периодов до средневековья, уделяя особое внимание II тыс. до н.э. и выявляя возможные связи с народами Малой Азии. Исследования показывают, что представления о леопарде могут быть архетипными, т.е. характерными для разных культурных миров независимо друг от друга. Но весьма вероятно, что существовал один общий для Армянского нагорья и Малой Азии субстрат или источник, из которого питались культуры этих регионов, начиная с эпохи неолита. Соответствующие отношения между Армянским нагорьем и Центральной Малой Азией также можно объяснить активными торгово-экономическими связями, в ходе которых происходил обмен предметами и идеями. Очевидно, что между малоазийским и кавказским культурными мирами существовали глубокие культурные связи, которые начались еще в период ранних земледельческих общин и продолжались до эпохи средневековья.

Հիմնաբառեր – Հայաստան, Փոքր Ասիա, միջին բրոնզի դար, կատվազգիներ, ընձառյուծ:
Keywords – Armenia, Asia Minor, Middle Bronze Age, Felines, Leopard.
Ключевые слова – Армения, Малая Азия, средний бронзовый век, кошачьи, леопард.

Ներածություն

Ընձառյուծը կամ հովազը, ինձը, հովազառյուծը (Panthera pardus L.) այն գիշատիչ կենդանիներից է, որին վերապահված է եղել լուրջ խորհրդանշական դեր խաղալ Հին աշխարհում: Նրա երկարությունը 107–160 սմ է (երբեմն հասնում է 180-ի), պոչը՝ 75–110, բարձրությունը՝ 50–75, քաշը՝ 32–40 կգ և ավելի: Մարմինը համաչափ է, գեղակազմ, թաթերը լայն, ականջները կարճ ու կլոր: Գունային հենքը դեղնակարմրավուն է, որի վրա ցրված են վարդանախշաձև սև բծեր: Ապրում է մինչ 21 տարի: Ընձառյուծի կենսատարածքն է ենթասահարյան Աֆրիկան, Արևմտյան և Կենտրոնական Ասիայի սակավ հատվածները, եվրոպական Ռուսաստանի որոշ հատվածները, Հնդկաստանն ու Արևելյան Ասիան: Հայաստանում տարածված է ընձառյուծի անդրկովկասյան ենթատեսակը (Panthera pardus ciscaucasica), որը հանդիպում է հիմնականում երկրի հարավային շրջաններում (Մեղրիից մինչև Արարատի մարզ, տարածման հյուսիսային սահմանն անցնում է Գեղամա լեռների արևմտյան լանջերով, հմմտ. Гаспарян, Агаджанян 1974; Մարտիրոսյան, Պապանյան 1983, 90–96; Հակոբյան, Հակոբյան 2015, 146. Panthera pardus ciscaucasica = saxicolor, transcaucasica եզրը վերջերս կիրառվում է ողջ Կովկասի, հյուսիսային Իրանի և Թուրքմենստանի համար՝ ելնելով այդ տարածքներում ապրող ընձառյուծների ազգակցության հանգամանքից՝ Khorozyan et al. 2006):

Դեռևս Հին Արևելքում կատվազգիների սահմանումը դժվարություններ էր առաջացնում՝ վերջիններիս նմանության պատճառով, ինչն ակնհայտ է և՛ տեքստերում, և՛ պատկերներում (Heimpel et al. 1980–1983, 599–600): Պատկերագրության մեջ ընձառյուծի ամենաճանաչելի հատկանիշը երկարավուն մարմինն է և պուտիկները մաշկի վրա: Նշանակության տեսանկյունից ևս կատվազգիների գործառույթները համընկել են. այսպես, առյուծն ու ընձառյուծը հաճախ նույն գործառույթն ունեին, օրինակ, արքայական համազոր խորհրդանիշներ էին (Ардзинба 1982, 105-106): Նույնը կարելի է ասել լեզվական տեսանկյունից. օրինակ՝ հայերենի *ինձ* բառը, ի սկզբանե նշանակել է առյուծ, ինչը մասնագետները բացատրում են հնագույն Հայաստանում ընձառյուծի անվան հնարավոր տաբուացման հանգամանքով (Гамкрелидзе, Иванов 1984, 506):

Չնայած կատվազգիներին տարբերակելու հետ կապված բարդություններին, Հին Արևելքում և Էգեյան աշխարհում հաջողվել է ընդհանուր առմամբ առանձնացնել ընձառյուծի 175 պատկերագրական միավոր (կենդանին և նրա մորթին), որոնք թվագրվում են նոր քարի դարից մինչև երկաթի դար: Դրանք ամենահաճախը հանդիպում են Միջագետքում և Լևանտում (60 միավոր), ապա Եգիպտոսում (50 միավոր), Էգեյան աշխարհում (35 միավոր) և Փոքր Ասիայում (28 միավոր): Ընձառյուծի պատկերագրությունը ավելի քիչ է հանդիպում Իրանում և Կովկասում: Համապատասխան տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընձառյուծն ունեցել է հետևյալ գործառույթները, որոնք, հաճախ ներթափանցել են իրար մեջ՝ 1. իշխանության և ստատուսի խորհրդանիշ,

2. մարդկանց պահապան և օժանդակող, 3. պտղաբերության և կենսական շրջափուլի ապահովող (Nys, Bretschneider 2008, 4):

Ընձառյուծը հիշյալ վաղ հասարակություններում արժևորվել է երկու մակարդակներում՝ որպես կենդանի և որպես մորթի: Ընձառյուծի մորթին օգտագործվել է Էգեյան աշխարհում, Եգիպտոսում և Զագրոսում՝ որպես բարձր հասարակական դիրքի նշան, մինչդեռ Միջագետքում՝ որպես զինվորականության ցուցիչ: Եգիպտոսում հաճախ ընձառյուծի մորթին հիշվում է փարավոնին տրվող հարկային միավորների մեջ, օգտագործվում է որպես քրմերի և մահացածների հագուստ, ինչպես նաև ֆետիշ թաղման ծեսի ընթացքում (Nys, Bretschneider 2008, 3, 8): Ընձառյուծի մորթին հաճախ հերոսի խորհրդանիշ է. այն կրում են, օրինակ, հունական Հերակլեսը, Մենելաոսը, «աստվածակերպ» Ալեքսանդրոսը, տրոյական Պարիսը, իրանական «Շահնամեի» Ռուստամը, վրացական «Ընձենավորի» Տարիելը ևն (հմմտ. Орбели 1963, 345; Гамкрелидзе, Иванов 1984, 501, 507; Պետրոսյան 2017, 103; Тараян 2012, 75, 76):

Ընձառյուծի կերպարը հայտնի է հին Կովկասում՝ որպես վերնախավի, քաջության և ազնվականության խորհրդանիշ, ինչն իր արմատներով հասնում է հնագույն ժամանակներ: Այստեղ նույնպես ընձառյուծը որսորդ-տիրակալի կամ ասպետի ուղեկիցն է, իսկ նրա մորթին՝ հերոսի հագուստի կարևոր մասը, նրա խորհրդանիշը (Орбели 1963, 345–346; հմմտ. նաև Тараян 2012, 75–76): Ընձառյուծի վաղագույն պատկերը կովկասյան տարածաշրջանում հանդիպում է Մայկոպի մեծ դամբարանաթմբի (մ.թ.ա. IV հազ.) արծաթե անոթներից մեկի (Кореневский 2004, рис. 4), իսկ հերոս-ընձառյուծ առնչության վաղագույն օրինակը՝ Քարաշամբի արծաթե գավաթի (մ.թ.ա. XXII–XX դդ.) վրա, որտեղ վարազ սպանող հերոսին, որպես գերբնական ուժ/ նախնիներ, օժանդակում են առյուծներն ու ընձառյուծները (Оганесян 1988, 156):

Պատահական չէ, որ հետագա դարերի Հայաստանում ընձառյուծը հանդես է գալիս «իբրև արտադրող ուժի խորհրդանիշ, որին առընթեր, իբրև մեծ պաշտամունքի առարկա ներկայացնող աստվածություն, այս երկրում մի առանձին պաշտամունք էր նվիրված» (Խաչատրյան 1933, 446; հմմտ. Մկրտչյան 1980, 144): Այս աշխատանքը մասնավորապես ներկայացնում է Հայաստանից հայտնի համապատասխան հնագիտական և պատմական նյութերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ցուլ-ընձառյուծ-վիշապ սեմանտիկ բույլին:

Ընձառյուծի մասին վկայությունները հին Հայաստանում

Կատվազգիների (մասնավորապես ընձառյուծի/առյուծի) մնացորդներ, այդ թվում՝ ատամներ են հայտնի Հայրավանքի հոլոցենյան նստվածքներում (Межлумян 1988, 27): Ընձառյուծը՝ որպես որսորդ, որսի մասնակից, տոտեմ, պահապան, կանացի սկզբի խորհրդանիշ, հանդիպում է արդեն Հայաստանի ժայռապատկերներում, որոնք թվագրվում են նոր քարի դարից մինչ երկաթի դար (մ.թ.ա. VII–I հազ.) (Межлумян 1988, 148–152; հմմտ. Մարտիրոսյան 1978, 59, 64, նկ. 68; Մարտիրոսյան 1981, 43–44; Тараян 2012, 77; Knoll et al. 2013,

217–219): Վաղ բրոնզի դարում (մ.թ.ա. XXXV–XXIV դդ.) տվյալներ գրեթե չկան. հիշենք միայն, որ Շենգավիթ բնակավայրի կավե արձանիկներից մեկը մեկնաբանվել է որպես կատվազգի (Байбуртян 2011, 54, рис. 16):

Միջին բրոնզի դարից սկսած տվյալներն ավելանում են: Այստեղ առաջին հերթին կցանկանայինք հիշատակել Իրինդի վիշապաքարը (Իրինդի հուշարձանախմբի մասին տե՛ս Դանիելյան, Բոբոխյան 2018): Այն յուրահատուկ ձև ունի՝ նմանվում է «եգիպատական սարկոֆագի» և կրում է նախադեպը չունեցող պատկերագրություն. երկգլխանի վիշապաքարը վերնամասում ունի ցլի գլուխ, որի տակ ընձառյուծի գլուխ է և նրա վար իջնող մորթին: Արդեն վիշապաքարերի առաջին հետազոտողները XX դ. սկզբներին ուշադրություն են դարձրել վիշապ-կատվազգի սեմանտիկ կապի վրա (Марр 1930; 1931): Գեղամա լեռների Մաղալներ 1 վիշապաքարը Յ. Սմիռնովի արխիվային մի գծագրում ներկայացված է առյուծի գլխով (Смирнов 1910, 55; Смирнов 1912, 11): Նույն Գեղամա լեռներին վերաբերող Ատրպետի գծանկարներից մեկում առյուծագլուխ վիշապաքար է պատկերված (Ատրպետ 1912, 17): Վերջինս առյուծի պատկերով վիշապաքար է հիշում նաև Թորթումի լեռների Զիարեթ լճակի շրջանում (Ատրպետ 1929, 170; հմմտ. Պետրոսյան 2015, 18):

Ընձառյուծների վերաբերյալ տվյալներն հիմնականում արտահայտված են միջին բրոնզի դարի վաղ փուլերին վերաբերող վաղ դամբարանաթմբերի/մարտկոպի-բեդենյան (մ.թ.ա. XXIV–XXII դդ.) և թռեղք-վանաձորյան մշակույթի վաղ փուլերի (մ.թ.ա. XXII"XX դդ.) դամբարանային համալիրներում և պատկերագրության մեջ, ինչպես նաև՝ ուշ փուլերին վերաբերող թռեղք-վանաձորյան, կարմիրբերդյան, սևան-արցախյան մշակույթների (մ.թ.ա. XX–XVI դդ.) ու միջին բրոնզից ուշ բրոնզ անցումային փուլի (մ.թ.ա. XVI–XV դդ.) դամբարանային համալիրներում:

Այսպես, Ջողազի N 1 բեդենյան դամբարանաբլուրում ցլի և ձկան ոսկորների հետ մեկտեղ հատակին հայտնաբերվել են գիշատիչ կատվազգիի մագիլներ, որոնք ենթադրում են փռված մորթու մասին (Սիմոնյան 2009, 220): Ներքին Նավերի թանկարժեք գտածոներով հարուստ իշխանական N 1 դամբարանում (միջին բրոնզի դարի սկիզբ), ի թիվս այլ կենդանիների, գտնվել են ընձառյուծի և առյուծի ֆալանգներ, որ մնացել էին մորթու մեջ (Simonyan, Manaseryan 2013, 176, 184; Симонян 2014, 274; Սիմոնյան 2022, 23, 25, 47, 49. դամբարանում առկա են եղել նաև խոշոր/մանր եղջերավորների, արագիլի և ձկների ոսկրեր՝ Սիմոնյան 2022, 49–51): Խոշոր կատվազգի գազանի ատամներ և ոսկրի բեկորներ են հայտնաբերվել Վերին Նավերի N 34 և 40 դամբարանաբլուրներից (վաղ դամբարանաթմբերի/վաղ թռեղքյան մշակույթ): Ի դեպ, N 34-ում ի հայտ է եկել նաև վիշապաքար հիշեցնող գետաքարե փոքրիկ արձանիկ/մանրակերտ: Այստեղ, զոհարանի քարերին կից, գտնվել են միջին բրոնզի դարին բնորոշ դարչնագույն կավանոթների բեկորներ, վանակատե միջուկ և ցլեպից պատրաստված շեղբ, ոսկրի մի բեկոր: Կառույցի կենտրոնական մասում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բեկոտված ոսկորներ էին, կենդանիների ատամներ (մեկը խոշոր կատվազգի գազանի), կարմիր և սև կավանոթների

բեկորներ, վանակատի ցլեպներ, մեծ քանակությամբ ածուխ: Լիցքի քարերի մեջ, վիշապաքարի հարևանությամբ, բացվեց բոլորաձև փոսիկով տուֆից սանդաքար (Սիմոնյան 2006, 32; Santrot 1996, 59. հմմտ. հեղինակի հոդվածը՝ Բոբոխյան և այլք 2019, 561–563):

Կատվազգիների և մասնավորապես ընձառյուծների ոսկորներ են հայտնաբերվել նաև Վերին Նավերի միջին բրոնզի դարի ուշ փուլերի (թռեղք-վանաձորյան, կարմիր-բերդյան, սևան-արցախյան մշակույթներ) N 12 (Симонян 1990, 190, 208; Սիմոնյան 2006, 88, 136), N 31 (Սիմոնյան 1997, 6–7; 2006, 89–94) և N 33 (Սիմոնյան 1987ա, 15) (ատլանտ և ոսկրի այլ մասեր), ինչպես նաև միջին և ուշ բրոնզի սահմանի N 15 (ատամ) դամբարանաբլուրներից (Սիմոնյան 1987բ, 56; 2006, 108, 137): Սրանք վերնախավային դամբարաններ են՝ հարուստ հնագիտական նյութով և կենդանական զոհաբերություններով. իսկ N 15 դամբարանում ի հայտ է եկել անոթ՝ վիշապի և նրա դեմ գոտեմարտի պատկերագրությամբ (Սիմոնյան 1995): Քարաշամբում ևս հայտնաբերվել են կատվազգիի ոսկրաբանական մնացորդներ (տեղեկությունը հստակ չէ՝ Ն. Մանասերյան, բանավոր հաղորդում, 25.03.2021):

Թռեղք-վանաձորյան մշակույթի վաղ փուլին վերաբերող Քարաշամբի մեծ դամբարանաբլուրից հայտնաբերված արծաթե անոթի առաջին, չորրորդ և վեցերորդ զարդագոտիներում պատկերված են 14 ընձառյուծներ, որոնք «շատ ռեալիստորեն» են պատկերված (Nys, Bretschneider 2008, 14; Հմայակյան 2023, 49–52): Չորրորդ զարդագոտում տեսնում ենք նաև առյուծ, որը հարձակվում է ցլի վրա, իսկ միջագետքյան խառնէակ Անզուդն ունի առյուծի գլուխ (Оганесян 1988; Boehmer, Kossack 2000), մինչդեռ դիմային հատվածում ձուկ է (Արմեն Պետրոսյան, բանավոր հաղորդում, 17.12.2019): Գավաթի առաջին զարդագոտու կենտրոնում պատկերված է երկար կախված պոչով կենդանի, որով նա տարբերվում է կարճ պոչերով առյուծներից և ընձառյուծներից: Նա աղեղնավոր հերոսի հետ հորիզոնական առանցք է կազմում, որից աջ ու ձախ պատկերված են հինգական կարճ, վեր բարձրացած պոչով կենդանիներ: Երկար պոչով կենդանին հիշեցնում է այդ դարաշրջանին բնորոշ «հիբրիդ» առյուծ-վիշապ: Նրա անմիջապես ներքևում պատկերված է բարձր սեղան, որի կենտրոնի «ժապավենը», ամենայն հավանականությամբ, վիշապի պոչն է, ձախ կետավոր նախշով ոտքն ընձառյուծի է, իսկ աջ ոտքը՝ առյուծի (Զոհրաբյան 2022, 208):

Չորսական ընձառյուծների և առյուծների (ու դրանց ընթացքը խախտող թերևս էգ առյուծի) հերթագայություն է պատկերված արծաթե մի անոթի վրա, որ պահվում է Էբնյոթերի հավաքածուում (Գերմանիա) և թվագրվում է մ.թ.ա. III հազ. վերջերով: Անկասկած, այս անոթը պատկանում է նույն մշակութային աշխարհին, ինչ Քարաշամբի գավաթն է. չի բացառվում, որ դրանք նույնիսկ նույն արհեստանոցում պատրաստված լինեն (Boehmer 2002, 203–205, Abb. 13): Այս գավաթների կատվազգիների պատկերագրությունը զուգահեռներ է գտնում թռեղք-վանաձորյան մշակույթի այլ հուշարձաններում (Bobokhyan 2008, Abb. 18/2, 25/2, 44/1, 52/3. դրանցից վաղագույնը Ցնորիի առյուծի ոսկե արձանիկն է, որի

պատկերը էական նույնություններ է ցուցաբերում Իրինդ 1-ինի հետ՝ Дедабришвили 1979, 25; Giemsch, Hansen 2018, 248–255, 234–237): Քննարկվող համատեքստում հատկապես ուշագրավ է ընձառյուծների և առյուծների դիմահայաց/զույգ պատկերագրությունը: Կենաց ծառի շուրջ իրար նայող թռչունների, այծի, ցուլի, ընձառյուծի բինար պատկերագրությունը տարածված է եղել հատկապես Փոքր Ասիայում (հմմտ. Չաթալ հույուկի դիմահայաց ընձառյուծներին) և Հայաստանում, կապված է աշխարհի մոդելավորման և բնության վերածնում խորհրդանշող Թամուզ-Ադոնիս-Արա ոճի աստվածությունների հետ: Խեթա-ուրարտական շրջանում այս պատկերագրությունը ստանում է ավելի ընդգծված և կանոնիկ ոճ (Демирханян 1982, 161–162; 1985; Абрамян, Демирханян 1985, 78; Տիգրանյան 2009): Առյուծի միջինբրոնզեդարյան պատկերագրությունը զուգահեռներ է գտնում նաև Ռիգվեդայի մշակութային աշխարհում (Гнуни 2003, 83–84):

Ուշ բրոնզի (մ.թ.ա. XVI–XIII դդ.) և վաղ երկաթի (մ.թ.ա. XII–VII դդ.) դարերում ևս առկա են հիմնականում առյուծի, բայց նաև ընձառյուծի պատկերներ: Այսպես, միջին բրոնզի դարի ամենավերջի և ուշ բրոնզի դարի դամբարաններում (Շիրակավան, Լճաշեն, Դվին, Օշական, Վանաձոր, Մեղրաձոր, Ալազանի, Կարաջամիրլի) հայտնվում են առյուծի պատկերով բրոնզե արձանադրոշներ և ոսկյա զարդեր (Ավետյան 2000, աղ. 1/1; Թորոսյան և այլք 2002, աղ. 14/1; Сурхаев 2005, илл. 1; Գրիգորյան և այլք 2016, նկ. 46, 57, 74; Погребова 2011, таб. 8/2; Պետրոսյան 2018, 136): Դրանցից միայն մեկի՝ Լոռի բերդի ուշբրոնզեդարյան արձանադրոշի արու եղջերվի ետևում երևում են երկու կատվազգիներ, որոնք հավանաբար ընձառյուծներ են (Դեվեջյան 1982, 140, 145–147; 2022, 81):

Զինված հերոսների միջավայրում ընձառյուծներ են պատկերված Հաքարիի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան արձանիկներից երկուսի վրա. դրանցից մեկում ընձառյուծը հերոսի գլխի աջ կողմում է, իսկ մյուսում, արձանի ստորին հատվածում, տեսանելի է ընձառյուծ, որի պոչը բռնել է մահակ կրող մի մարդ (Sevin 2005, 32, 44, 85, 87, 104): Մեծամորի N 9 և 12 վաղերկաթեդարյան դամբարաններից հայտնի են արծաթե գոտու վերադիր՝ ոսկե երկու վազող առասպելական կատվազգու տեսքով, ինչպես նաև կավի շաղախից պատրաստված, ջնարակապատ կատվազգու արձանիկ, որի կլոր աչքերը ընդելուզված են լաջվարդատիպ մածուկով (Քալանթարյան 2007, աղ. LXIX; Փիլիպոսյան և այլք 2013, 8, 18): Դիլիջանից հայտնի վաղ երկաթի դարով թվագրվող ծիսական որսի տեսարանով անոթի վրա պատկերված է ձիերով լծած երկանիվ կառք, որը մի մարդ է վարում, ինչպես նաև՝ վեց կենդանիների շարք, որոնց առջևում երկարականջ կատվազգի է, ապա՝ այծեր և մի ուլիկ. ընդ որում, բոլորի մեջ կետեր են լցված (Գրիգորյան և այլք 2016, նկ. 77):

Ընձառյուծներ ի հայտ են գալիս երկաթեդարյան բրոնզե գոտիների վրա, որոնք հայտնաբերվել են Աստղի բլուրում (որսի տեսարան՝ ձիու վրա նստած մարդիկ որսում են եղնիկներ և թռչուններ, որոնց տակ 8 շներ են, իսկ միջակայքում՝ 4 ընձառյուծներ), Բջնիում (4 ընձառյուծներ), Թաքիայում (եղնիկի հետևից վազող ընձառյուծ), Կարմիր բերդում (երկու մարդ կենաց ծառի մոտ և

երեք շարքով 6 կատվազգիներ), Սամտավրոյում (նետով կանգնած մարդը որսում է եղնիկ, որի հետևում ընձառյուծ է, իսկ վերջինիցս վերև՝ օձ) (Esayan 1984, Abb. 15/51, 19/56; Castelluccia 2017, 61–62, nos. 275, 316, 327. Սամտավրոյի համար հմմտ. Гамкрелидзе, Иванов 1984, 507):

Նույն մշակութային գոտուն պատկանող հյուսիսարևմտյան Իրանի ուշ բրոնզ-երկաթեդարյան բրոնզե մի թիթեղի վրա արված պատկերում աստվածուհին նստած է մարտակառքին, որը քաշում են երկու ընձառյուծ, որոնցից մեկի բերանից ջրի շիթեր են հոսում. առջևում յոթ գլխանի վիշապ է (Amiet 2006; Nys, Bretschneider 2008, 41–42, Fig. 73): Այս դրվագը զուգահեռ է գտնում Հասանլուի հայտնի ոսկե գավաթի համաժամանակյա պատկերագրության մեջ, որտեղ աստվածային մարտակառքը քաշում է ցուլը, որի բերանից նույն ջրի շիթերն են հոսում, իսկ հաջորդ աստվածության եռագլուխ վիշապներով գահը դրված է առյուծի վրա (Winter 1989): Խուռիական վիշապ Ուլիկումիի առասպելը հիշեցնող այս դրվագը ուղղակիորեն կապվում է վիշապաքարերի հետ (Բոբոխյան և այլք 2019, 448–459):

Հավելենք նաև, որ միջին ասորեստանյան արքայական տեքստերը, Հայկական լեռնաշխարհի կենտրոնականան և հարավային շրջաններում գտնվող Նաիրի երկրներ իրականացված արքայական որսի ժամանակ, հիշատակում են, ի թիվս այլոց, ընձառյուծներ (Дьяконов 1951, 281):

Ուրարտական շրջանում ընձառյուծի մասին տվյալները սակավ են (հմմտ. Gökce 2020, 39–42, 48, 50–53): Ուրարտական տեքստերում ընձառյուծ փաստորեն չի հիշատակվում, ծիսական պատկերագրության մեջ ընձառյուծը նույնպես բացակայում է: Սակայն վազող ընձառյուծ պատկերված է վայրի ցլի, հորթի և կենաց ծառի միջավայրում՝ Էրեբունիի որմնանկարների արքայական մարտակառքով որսի մի տեսարանում (Հովհաննիսյան 1973, 20–22, նկ. 30–31; Ходжаш и др. 1979, 64, 79, рис. 52): Ուշագրավ է Կարմիր բլուրից հայտնի կատվի ականջներով կանացի արձանիկը (Есаян 1980, 35): Այսուհանդերձ, ուրարտական պատկերագրության մեջ և կրոնում բավականին տարածված է ցուլ-առյուծ համադրությունը (Petrosyan 2015, 72): Ընձառյուծի/գեպարդի ոսկրի (ծնոտի) միակ գտածոն հայտնի է Արգիշտիխինիլիի մետաղագործի արհեստանոցից, որը կարող էր օգտագործվել բժշկության մեջ (Мартиросян 1974, 143–144; Մարտիրոսյան 1981, 44. ընձառյուծի, մասնավորապես նրա ջղերի՝ խեթական բժշկության մեջ կիրառվելու մասին տե՛ս Heimpel et al. 1980–1983, 605): Հավելենք, որ կատվազգիների (մասնավորապես ընձառյուծի/առյուծի) մնացորդներ են հայտնի Լոռի Բերդի 56–2 դամբարանում (մ.թ.ա. VII–VI դդ. սահման) (Ռ. Դավթյան, բանավոր հաղորդում, 23.03.2021):

Ընձառյուծի կերպարը հայտնի է նաև անտիկ շրջանի Հայաստանում՝ քիչ հնագիտորեն և առավելապես ըստ գրավոր աղբյուրների: Ենթադրվում է, որ հեթանոսական Հայաստանում եղել է ընձառյուծի վրա կանգնած Մայր աստվածուհու պատկերագրություն (Лисициан 1958, 48, таб. XXXIV/2, XXXV/1, 2, XXXVII/1, XXXVIII): Սիսիանի իշխանական դամբարանի արծաթե ոսկեջրած մեդալիոնի

վրա (մ.թ.ա. I դ. երկրորդ կես) պատկերված է արծվի հաղթանակը ընձառյուծի նկատմամբ, ինչը կապվում է Դիոնիսոսի հետ (Manaseryan 2009): Այս տեսանկյունից ուշագրավ է Փիլոստրատոսի այն տեղեկությունը, ըստ որի, հայոց Արշակունի մի արքա Դիոնիսոսին ընձառյուծ է նվիրաբերել (հմմտ. Лисициан 1958, 48; Սիմոնյան 2017, 202): Երկու ընձառյուծների կողմից քաշվող Դիոնիսոսի մարտակառքի մոտիվն ունի փոքրասիական արմատներ (Haas 1981, 111): Դիոնիսոսը այս համատեքստում առնչվում է նաև վիշապին. Կադմոսի ցուլ-առյուծ-վիշապային կերպարը (նա կրում է առյուծի մորթի, որը պաշտպանում է նրան վիշապից) վերարտդրված է նաև նրա թոռան՝ Դիոնիսոսի մեջ, որի հիմնական կերպարներից են ցուլը, առյուծը, ընձառյուծը և վիշապը (Грейвс 1992, 39, 77):

Մովսես Խորենացին (I, ԻՉ) բերում է հայոց արքա Տիգրանի (մ.թ.ա. VI դ.) մասին մի զրույց, ըստ որի, նրա հակառակորդ Աժդահակի/Վիշապի երազում հայոց երկրում երևում է բարձր մի լեռ (Մասիսը), որից հետո հայտնվում է մի կին ու ծնում երեք դյուցազուն. մեկն՝ առյուծ հեծած, երկրորդն՝ ընձառյուծ, իսկ երրորդը, վիթխարի վիշապ սանձած, արշավում էր Մարաստանի վրա: Ոդիսականում հանդիպող աստված-ծերուկի կերպափոխումը տարբեր կենդանիների՝ առյուծի, վիշապի, ընձառյուծի, վարազի և ի վերջո ջրային հորձանքի ու ծառի, մասնագետները համեմատում են Խորենացու հիշյալ առասպելի հետ, որտեղ նկատվում է առյուծ-վիշապ-ընձառյուծ սեմանտիկ առնչությունը, որն առկա է նաև կելտական ու գերմանական պատկերացումներում (Гамкрелидзе, Иванов 1984, 501–503; Иванов 1978, 157; Иванов 1992, 48): Ընձառյուծի հետ կապված՝ Խորենացուն վերագրվող ևս մի հիշատակություն կա. նա համարվում է Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկի թարգմանիչը, որտեղ նկարագրվում է Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում գտնվող սրբազան պուրակը՝ Արեգակի (արական) և Լուսնի (իգական) պատգամախոս ծառերով, որոնց վրա առյուծի ու ինձի մորթիներ էին կախում՝ համապատասխանաբար որձ և էգ կենդանիների: Ենթադրվում է, որ հիշյալ նկարագրությունը կարող է առնչվել հայ իրականության հետ (հմմտ. Բոբոխյան և այլք 2019, 476): «Սասնա ծռեր»-ում ևս բացահայտվում է կատվազգու կապը վիշապի հետ. նախ, ընձառյուծը հիշվում է Դավթի քշած կենդանիների ցանկում, ապա Մհերը հաղթում է ճամփաներ փակող առյուծին: Սանասարի դեպքում առյուծի փոխարեն վիշապն է, որ առանց մարդազոհի թույլ չի տալիս ջուր խմել: Առաջին տարբերակում վիշապի փոխարեն առյուծի հանդես գալը ապացուցում է, որ վիշապը այստեղ կերպափոխվում է առյուծի (Орбели 1968, 183–184; Ավդալբեգյան 1969, 43–44): Առյուծ-վիշապ-(ցուլ) (հմմտ. Բոբոխյան և այլք 2019, 39, 42, 76, 81–6, 91, 93, 94, 95, 113–116, 144, 145, 192, 194, 198, 261–263, 265, 269, 335, 339, 372, 381, 385, 388, 402, 406, 417, 420, 421, 423, 476) և ընձառյուծ-վիշապ-(ցուլ) (հմմտ. Բոբոխյան և այլք 2019, 78, 86, 95, 221, 268–269, 416, 420, 421) սեմանտիկ կապն արտահայտված է հայկական մշակույթի բազմաթիվ մակարդակներում, ընդհուպ գեղարվեստական գրականություն (հմմտ. Բոբոխյան և այլք 2019, 269): Հայկական դիցաբանության մեջ հիշվում

են նույնիսկ «վիշապառյուծ» և «վիշապառյուծ քաջ» խառնէակները: «Վիշապաքաղ» բառի մեկնության համատեքստում Ղ. Ալիշանը գրում է, որ քաղն իր անհանգիստ բնավորության պատճառով զուգավորվում է տարբեր էակների հետ, այդ թվում՝ վիշապի, եղջերվաքաղի, վիշապառյուծի: Վերջինս բաղադրված է երեք տեսակից. գլուխը քաղի է, մարմինը և ճիրանները՝ առյուծի, պոչը՝ վիշապի, նման հունական քիմեռին (Ալիշան 2002, 92–94. հմմտ. Աւգերեան, Ճէլալեան 1865, 764; Տաղավարեան 1909, 58; Մնացականյան 1980, 408–409; Սրվանձտյանց 1978, 122; Աբեղյան 1975, 82; Հարությունյան 2001, 13): Ուշագրավ է, որ նախաքրիստոնեական Հայաստանում գոյություն են ունեցել առյուծին առնչվող բարձրլեռնային սրբավայրեր, որոնց թվում նշանավոր էր Անահիտի սրբավայրը (Աթոռ Անահտայ) Եկեղյաց գավառի Առյուծ լեռան վրա (Փավստոս Բուզանդ V, XXV; հմմտ. Էփրիկյան 1902, 240):

Միջնադարում ևս ընձառյուծի կերպարը շարունակում է ապրել: Ուշագրավ է ցուլ-ընձառյուծ-վիշապ սեմանտիկ կապի հարատևությունը հայկական (Степанян, Чакмакчян 1971, рис. 92, 124–125; Thierry 2005, 120, ph. 62) և վրացական (Առաքելյան 1949, նկ. 74, 75) պատկերաքանդակում: Այդ զույգը (նաև ցուլ +առյուծ) տեղ է գտնում հայկական իշխանական տների՝ Արշակունիների, Խաղբակյանների, Օրբելյանների զինանշանային համակարգում (Тараян 2012, 78. հմմտ. նաև Անիի զինանշանը՝ Орбели 1963, 345–346): Ընձառյուծ/հովազը առկա է Աղթամարի եկեղեցու արևմտյան, արևելյան, հարավային (գլուխը՝ դուրս ընկած ականջներով ու կլոր աչքերով) և հյուսիսային (ամբողջովին, քայլող դիրքում) պատերին (Орбели 1968, 127, 131, 149, 190, 192, таб. XXIV, XLVII): Վիշապի կողմից Հովնանին կուլ տալու դրվագը ի հայտ է գալիս Աղթամարի և Խախուի տաճարների պատկերագրության մեջ. այստեղ ծավահրեշը ոչ թե ամբողջովին ձուկ է, այլ՝ սենմուրվ, որի գլուխը ավելի նման է կատվազգու, և հիմնականում ձկան պոչն է հուշում նրա ձկնային բնույթը (Միքայելյան 2018; Акопян 2019, 353): Երկու եկեղեցիների պատկերագրության մեջ էլ առկա է ցուլ-առյուծ պայքարող զույգը: Վիշապաքաղ Ս. Սարգիսը միջնադարյան պատկերագրության մեջ նիզակահարում է վիշապին կամ այլ գազանների, որոնց թվում՝ ընձառյուծին և առյուծին (Հարությունյան, Քալանթարյան 2002, 81, 95; Հարությունյան 2006, 437; Բոբոխյան և այլք 2019, 416): Հիշարժան է նաև Անիի քարանձավային դամբարաններից գտնված կտորի՝ ոսկեթելով արված ընձառյուծի և վագրի/առյուծի պատկերը (Քալանթարյան 2007, աղ. CXXVIII; հմմտ. Пескарева, Баликян 1982, 84):

Կատվազգիների մասին պատկերացումներ են եղել նաև նոր շրջանի Հայաստանում: Ըստ այդմ, կատուն անձեռնմխելի կենդանի է, որին սպանելը մեղք է՝ ավելի, քան մարդուն: Անձրև գալու վերաբերյալ գուշակություններ էին անում նաև կատվի վարմունքից: Կատուն կապվում էր պտղաբերության պաշտամունքին առնչվող շվոտի հետ (Լալայան 1901, 115; 1988, 171–172, 427; Սամուելյան 1931, 192–193; Ղանալանյան 1969, 71, 123; Բդոյան 1972, 487; Харатян 1989, 46,

49. վիշապի համար որպես կատվի հմմտ. Աճառյան 1979, 341; վիշապի՝ որպես կատվի բեղեր ունեցողի համար հմմտ. Հարությունյան 2006, № 134, 114):

Ամփոփելով վերն ասվածը՝ նշենք հետևյալը: Բուն ընձառյուծը Հայկական լեռնաշխարհի մշակութային միջավայրում ի հայտ է գալիս սկսած հիմնականում միջին բրոնզի դարից: Ջողազի N 1, Ներքին Նավերի N 1, Վերին Նավերի N 12, 15, 31, 33, 34, 40 դամբարանների հնագիտական գտածոները (ընձառյուծի մորթի, ոսկոր/ատամ, վիշապաքարի մանրակերտ, անոթ համաշխարհային վիշապի և նրա դեմ գոտեմարտի թեմայով), ինչպես նաև Քարաշամբի և Էբնյոթերի հավաքածուի արծաթե անոթների պատկերագրության տվյալները (ընձառյուծների երթ, վիշապի պոչ, ընձառյուծի և ցլի ոտք, առյուծ-ցուլ հակամարտություն, Անզուդ՝ առյուծ-ձուկ-վիշապ-լեռ-կենաց ծառ-փոթորիկ խորհրդանիշներով) հստակ սեմանտիկ կապ են բացահայտում ընձառյուծ-ցուլ-վիշապ համատեքստում՝ մասնավորապես առնչվելով Իրինդի վիշապաքարի պատկերագրական բովանդակությանը: Այս առնչությունը հստակորեն արտահայտվում է նաև քննարկվող երևույթների համաժամանակության մեջ, քանի որ բոլորն էլ վերաբերում են միջին բրոնզի դարին:

Թեև միջին բրոնզի դարից հետո ընձառյուծի վերաբերյալ տեղեկությունները քչանում են, սակայն, այնուամենայնիվ, նրա կերպարն առկա է նյութական մշակույթում և գրավոր աղբյուրներում: Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում ընձառյուծը հայտնվում է բրոնզե արձանադրոշի, ջնարակապատ արձանիկի, արծաթե գոտու վերադիրի, աստվածուհու՝ մարտակառքին լծված պատկերի ձևով (Լոռի բերդ, Մեծամոր, հյուսիսարևմտյան Իրան), բրոնզե գոտիների վրա (Աստղի բլուր, Բջնի, Թակիա, Կարմիր բերդ, Սամտավրո): Ուշագրավ է նրա կապը հերոսի (Հաքարի), մարտակառքի (Դիլիջան, հյուսիսարևմտյան Իրան), վիշապի (հյուսիսարևմտյան Իրան) հետ, ինչն ընձառյուծին բնորոշ հատկանիշ է նաև հարակից մշակութային գոտիներում:

Ուրարտուի գոյության շրջանում ընձառյուծն հազվադեպ է պատահում (Էրեբունիի որմնանկարներ՝ կրկին մարտակառքի համատեքստում, Արգիշտիխինիլիի և Լոռի բերդի ընձառյուծի ծնոտի գտածոն և հնարավոր կապը բժշկության հետ):

Ընձառյուծը նորից հայտնվում է անտիկ՝ նախաքրիստոնեական շրջանին վերաբերող հնագիտական տվյալներում (Սիսիանի դամբարան), գրավոր աղբյուրներում և այդ շրջանին առնչվող առասպելական տեքստերում (Փիլոստրատոս, Մովսես Խորենացի, «Սասնա ծռեր»), որոնք հստակորեն ցույց են տալիս ընձառյուծի կապը մեռնող-հարություն առնող աստվածության, որսի, վիշապի, ջրի աղբյուրի հետ:

Ուշագրավ է, որ միջնադարում ընձառյուծի կերպարն է՛լ ավելի հաճախ է հայտնվում, այդ թվում՝ պատկերաքանդակում (իշխանական զինանշաններ, եկեղեցական քանդակ), որտեղ հստակորեն նկատվում է ընձառյուծ-ցուլ-ձուկ-վիշապ արխաիկ սեմանտիկ բույլը (Աղթամար, Խախուլ, Անի):

Ընձառյուծի ընկալման և պատկերման զուգահեռները

Ընձառյուծի վերաբերյալ Հայկական լեռնաշխարհում հայտնի պատկերացումները զուգահեռներ են գտնում Հին Արևելքում և Էգեյան աշխարհում, սակայն դրանք առավել մոտ են կանգնած փոքրասիական ընկալումներին և հաճախ նույնիսկ նույնանում են դրանց հետ: Ինչպես վերն արդեն նշեցինք, թեև փոքրասիական պատկերագրական միավորները քանակական առումով զիջում են Միջագետքին, Լևանտին, Եգիպտոսին և Էգեյան աշխարհին, սակայն դրանք ամենավաղն են և, կարելի է ասել, ամենաարմատականը, որոնք հստակորեն ցույց են տալիս ավանդույթի գոյությունը տարածաշրջանում՝ սկսած վաղ երկրագործական հասարակությունների գոյության շրջանից:

Խեթական ընձառյուծի (parsana-) պաշտամունքի ակունքները հասնում են նորքարեդարյան Փոքր Ասիա: Ընձառյուծի ոսկրի մնացորդներ և պատկերներ համապատասխան արձանների վրա հանդիպում են արդեն նախախեցեգործական Գյոբեկլի թեփեում (մ.թ.ա. X–VIII հազ.). այդ արձանների վրա առկա են նաև մերձընձառյուծային կենդանիների՝ ցլի և վարազի պատկերներ: Իսկ նույն շրջանին և մշակույթին պատկանող Նեվալի չորիում ի հայտ է գալիս ընձառյուծի մորթով մարդու արձանիկ (Peters, Schmidt 2004, 183–185, 210–211; Lichter 2007, 84, 197, 268, 293): Խեցեգործական նոր քարի դարում ընձառյուծի կերպարն ավելի է տարածվում, ինչի մասին են վկայում Չաթալ հույուկի տվյալները (մ.թ.ա. VII–VI հազ.): Այստեղ ընձառյուծը հանդիպում է որմնանկարներում («Ընձառյուծների սրբավայր») և արձանիկների ձևով (աստվածուհիներ, որոնք կրում են ընձառյուծի մորթուց գլխարկ, նստած են ընձառյուծի վրա, հագել են ընձառյուծի մորթի, պարում են ընձառյուծի մորթի հագած, իսկ Հաջիլարի արձանիկներից մեկը պատկերում է ընձառյուծին սնող աստվածուհու) (Mellaart 1965, 108; Haas 1981, 105–106; Hodder 2006; Meece 2006. խեթական *ընձառյուծ նշանակող* բառի նախախեթական հիմքերի մասին տե՛ս Иванов 1978; 1980, 135): Այստեղ բացահայտվում է նաև ընձառյուծի ու ցլի առնչությունը. ցուլը մարմնավորում է Ամպրոպի արական, մինչդեռ ընձառյուծը՝ Մայր աստվածությանը, որը կրում է ընձառյուծի մորթի, նստում ընձառյուծով եզերված գահին, ձեռքին ունենում ձագ ընձառյուծներ, մի հատկանիշ, որ հետագայում առկա է խեթական միջավայրում: Վերջիններիս կրոնական համակարգն արտահայտում է, բացի բուն խեթականից, նաև տեղաբնիկների, հատկապես խաթերի հնագույն աշխարհայացքը: Այդ վաղագույն պատկերացումները որոշակի զուգահեռներ են գտնում նաև Հայաստանում: Օրինակ՝ Չաթալ հույուկի ընձառյուծների պատկերները համեմատվում են Գեղամա լեռների ժայռապատկերների հետ (Մարտիրոսյան, Իսրայելյան 1971, 24): Չաթալ հույուկի մի որմնանկարում ընձառյուծի մորթի հագած որսորդների՝ եղնիկի և վարազի վրա հարձակման դրվագը համեմատվում է Քարաշամբի արծաթե անոթի առաջին զարդագոտու պատկերների հետ (Оганесян 1988, 156):

Իսկ, ի՞նչ դեր է խաղում ընձառյուծը խեթական կրոնական համակարգում, և ի՞նչ առնչություններ են նկատվում Հայաստանից հայտնի տվյալների հետ:

1. Խեթերի մոտ ընձառյուծը արքայական կենդանի է, արքայի կենդանական թափորի կարևոր անդամը: Ընձառյուծը նաև զոհաբերման առարկա է (Haas 1982, 15–18, 38–40, 80, 82, 174, 218–219; հմմտ. Ардзинба 1982, 106; Тараян 2012, 73–78. ընձառյուծի և առյուծի ատամների ծոնման ծիսական գործողության մասին տե՛ս Иванов 1978, 156): Ընձառյուծն առկա է տաճարական կենդանիների ցուցակում և մասնակցում է ծեսերին: Այսպես, երբ խեթական արքա Փիթհանան մ.թ.ա. XVIII դ. գրավեց Կանիս քաղաքը և այն դարձրեց իր նստավայրը, կառուցեց/վերանորոգեց նաև տաճար Տարհու, Սիուս և Հանվասուիտ աստվածությունների համար, որին կից հիմնեց գազանանոց՝ հետևյալ կենդանիներով՝ առյուծներ, վարազներ, եղնիկներ, քարայծեր, ընձառյուծներ: Գրեթե նույն կենդանիներն են ի հայտ գալիս Կիլամ կոչված տոնի կենդանիների շքերթի հատվածում: Այս տոնի հաջորդ մասում պարզ է դառնում ընձառյուծի և վարազի կապը Ինարա աստվածուհու հետ. նա նախախեթական աստվածություն էր, որի պաշտամունքը հասնում էր մինչև Մալաթիա, որտեղ նա Շունարա լեռան տիրուհին էր (Haas 1981, 106–107): Ուշագրավ է, որ Գուդեա արքայի գլաններից մեկում հիշվում է առյուծների և ընձառյուծների տեղադրումը տաճարի մուտքի մոտ. և, իրոք, համապատասխան արձաններ և ոսկորներ են գտնվել որոշ տաճարների մուտքերին կից. մասնավորապես, կատվազգիների ոսկորներ են հայտնաբերվել Խաթուսասի, Տրոյայի և ծոփքյան Նորշունթեփեի մոնումենտալ կառույցների միջավայրերում (Nys, Bretschneider 2008, 1, 3):

2. Ընձառյուծի կերպարը և նրա հետ առնչվող պարագաները խեթական ծեսի բաղկացուցիչ են: Այսպես, Կիլամ տոնին վերաբերող մի տեքստում հիշվում են ընձառյուծի մորթին և գլուխը, որոնք կապվում են այդ տոնին կատարվող ընձառյուծի պարի հետ: Պարը վարում էր «ընձառյուծի մարդը», որը կրում էր ընձառյուծի դիմակ, մորթի և գլուխ, ինչպես Չաթալ հույուկի ընձառյուծ-պարողների դեպքում (Haas 1981, 108–109; Heimpel et al. 1980–1983, 604–605. այս տոնի ընձառյուծային կոդի մասին, հայկական նյութի համատեքստում, տե՛ս Петросян 2018, 192; Հմայակյան 2023, 51–52):

3. Խեթական պատկերացումներում ընձառյուծը կապվում է իգական աստվածության հետ և մասնավորապես՝ արդեն հիշված Ինարային, վերջինիս առնչվող Տետեշաբիին և Արևի աստվածուհուն (Haas 1981, 107–108): Վաղ խեթական մի տեքստում, որ կոչվում է «Կայծքարի հմայախոսք» ասվում է. «Ընձառյուծները պահպանում են Արևի աստծո աղբյուրը: Նրա ջուրը հոսում է մի ավազանից: Թող կայծքարերը պահպանեն նրան՝ Լաբարնային, արքային և թող նա լինի ամուր ինչպես Արևի աստծո երկաթը» (Haas 1982, 174): Ընձառյուծին առնչվող խեթական աստվածուհիները, որոնք կապվում են լեռների և աղբյուրների հետ, իրենց զուգահեռն են գտնում Միջագետքում հանձին Իշտար-Ինանա-Նինխուրսագ-Կուբաբա-Լիլուրի ասվածուհիների (Haas 1982, 83–104): Ինանան ընկալվում է որպես լեռների ընձառյուծ (Nys, Bretschneider 2008, 2): Իշտարը ապրում է լեռների գագաթին. նրա օգնական հոգիներն են աղավնին, ծիծեռնակը, բազեն, որոնք (դրանցից երկուսը) հաճախ պատկերվում են

դիմահայաց. նրա հետ է կապվում կատուն-ընձառյուծը (Haas 1982, 83–85, 202. հմմտ. նրա պատկերը Հասանլուի ոսկե գավաթի վրա՝ որպես մերկ աստվածուհի երկու այծերի վրա՝ Winter 1989): Իշտարի կառքը լծում են ընձառյուծներով (Heimpel et al. 1980–1983, 601, 603):

4. Խեթական պատկերացումներում ընձառյուծը, բացի իգական աստվածությունների հետ առնչվելուց, կապվում է նաև արականների հետ՝ մարմնավորելով ընձառյուծ-ցուլ սեմանտիկ բույլը: Այսպես, խեթական տեքստերում և Յազիլիկայայի բարձրաքանդակներում Հեբաթ և Շառումա աստվածությունները պատկերված են ընձառյուծների վրա կանգնած: Լեռների աստվածություն Շառուման ցլի մարմնավորում է, որն ընձառյուծի վրա կանգնած վիճակում է պատկերված նաև Մալաթիայի բարձրաքանդակում (Haas 1981, 109): Այս աստվածությունները պատասխանատու են կյանքի շրջափուլի, մահվան ու վերածննդի համար, իսկ ծագումով կապվում են խուռիական աշխարհի հետ (Nys, Bretschneider 2008, 3, 32. պատահական չէ, որ ծնվելուց հետո Հեբաթ-Կիբելեին, Ատիսի նման, խնամում է ընձառյուծը՝ Адонц 2008, 209): Ճիշտ է՝ (ընձ)առյուծցուլ պատկերագրական առնչությունը հայտնի է նաև Միջագետքում՝ սկսած Ք.ա. VI–IV հազ. և հատկապես վաղ դինաստիական ու աքքադական շրջանում (Hartner 1965; Nys, Bretschneider 2008, 11, 23, 26–29, 40; հմմտ. Тараян 2012, 74–76; Нариманишвили и др. 2015, 184; Тараян 2012, 74), սակայն Փոքր Ասիան է այդ մոտիվի առանցքային շրջանը:

5. Խեթական տեքստերում, մասնավորապես Կիլամ տոնի ընթացքում, հիշվում են ընձառյուծի արձաններ. շքերթի ընթացքում հանդիսավոր կերպով տանում են ընձառյուծի արծաթե արձանը (Heimpel et al. 1980–1983, 605; Ардзинба 1982, 29, 30 33): Առյուծը և ընձառյուծը խեթական ավանդության մեջ ջրի պահապաններ են, և ջրի ակունքների մոտ թերևս դրվել են ընձառյուծի արձաններ (Ардзинба 1982, 106): Խեթական մի տեքստի համաձայն՝ Իշտարի արձանը դրվում է լեռան գագաթին, աղբյուրի ակունքի մոտ (Haas 1982, 109–110):

Խեթական պատկերացումների հիշյալ բոլոր տարրերը զուգահեռներ են գտնում միջինբրոնզեդարյան Հայաստանում:

Այսպես, ընձառյուծը որպես արքայական կենդանի, արքայի կենդանական թափորի կարևոր անդամ արտացոլված է Քարաշամբի և Էբնյոթերի արծաթե անոթների վրա, իսկ որպես զոհաբերության առարկա՝ Ջողազի, Ներքին և Վերին Նավերի իշխանական դամբարանաբլուրներում, որտեղ ի հայտ են գալիս տվյալներ ընձառյուծի մորթու և ատամների տեղադրման մասին (համապատասխանելով խեթական տեքստերի տվյալներին): Խեթական տաճարական կենդանիների ցուցակում առկա կենդանական միավորները (առյուծներ, վարազներ, եղնիկներ, քարայծեր, ընձառյուծներ), որոնք մասնակցում են նաև արքայական շքերթին, նույնությամբ պատկերված են Քարաշամբի անոթի վրա: Ավելին, ընձառյուծն ու վարազը, որոնք կապվում են լեռնային Ինարա աստվածուհուն, Քարաշամբի պատկերագրության ինիցիալներն են: Ուշագրավ է, որ վարազը, եղնիկն ու քարայծը ընձառյուծի հիմնական զոհերն են Հայաստանում

(Гаспарян, Агаджанян 1974, 86) և դրանք պատկերված են նաև Քարաշամբի գավաթի վրա: Վերջինիս համաժամանակյա միջինասիական Օքսուս մշակույթի (մ.թ.ա. III–II հազ. սահման) բրոնզե կացինների վրա ևս հաճախ պատկերված են ընձառյուծն ու վարազը պայքարի ընթացքում (Lamberg-Karlowsky 1996, 210): Կարևոր է այն հանգամանքը, որ հենց միջին բրոնզի դարում է, որ Հայաստանում առաջին անգամ ի հայտ է գալիս վերնախավը. չէ՞ որ ընձառյուծը իշխանության և հասարակական դիրքի խորհրդանիշ էր:

Ընձառյուծի կերպարը և նրան առնչվող պարագաները (մորթի, գլուխ, դիմակ) խեթական ծիսական պարի բաղկացուցիչ են: Ընձառյուծի մորթին արտացոլված է Քարաշամբի անոթի, իսկ գլուխն ու մորթին՝ Իրինդի վիշապաքարի վրա, որոնք նույնպես ծիսական համատեքստ են ենթադրում: Ընձառյուծի մորթի, ինչպես նշվեց, դրվել է Ջողազի, Ներքին և Վերին Նավերի դամբարաններում:

Խեթական (և զուգահեռ միջագետքյան) պատկերացումներում ընձառյուծը կապվում է իգական աստվածության հետ, որն ապրում է լեռների գագաթին, աղբյուրների մոտ (որը պահպանում է ընձառյուծը), որի օգնական հոգիներն են դիմահայաց պատկերվող թռչունները: Աստվածուհին կապվում է կայծքարի հետ: Նրա արձանը (որի բնորոշիչներից մեկն ընձառյուծն է) դրվում է լեռան գագաթին, աղբյուրի ակունքի մոտ: Ընձառյուծ-աստվածուհի-լեռ-աղբյուր-դիմահայաց պատկերվող թռչուն-կայծքար/վանակատ-արձան լեռան գագաթին/աղբյուրի մոտ սեմանտիկ բույլը լիովին համապատասխանում է վիշապաքարերի պատմահնագիտական համատեքստին, դրանց պատկերագրությանը, իսկ Իրինդի վիշապաքարը դրա փայլուն օրինակն է (ընձառյուծ-աղբյուր-վիշապ կապի մասին հմմտ. Բոբոխյան և այլք 2019, 221): Մյուս կողմից, ընձառյուծ-ցուլ-վիշապ առնչությունը, որ նկատվում է ինչպես խեթական, այնպես էլ հայկական (և այլ հնդեվրոպական) ավանդույթներում, գալիս է հիմնավորելու հիշյալ զուգադրումը:

Կյանքի շրջափուլը և վերածնունդը մարմնավորող իգական և արական Հեբաթ-Շառումա աստվածությունները կանգնած են ընձառյուծի վրա և մարմնավորում են ընձառյուծ-ցուլ սեմանտիկ կապը: Ընդ որում, ցլի մարմնավորում Շառուման լեռների աստվածություն է: Ընձառյուծ-ցուլ-լեռ առնչությունն արտացոլվում է Իրինդի վիշապաքարի և մասամբ Քարաշամբի անոթի պատկերագրության մեջ: Ուշագրավ է, որ Առաջավոր Ասիայում, բացի խեթական աշխարհից, հայտնի չեն մարդկանց պատկերներ ընձառյուծի վրա. առանձին դեպքեր կան Եգիպտոսում (Nys, Bretschneider 2008, 34): Այս իմաստով յուրահատուկ է Սյունիքում Ուղտասարի ծիսական որս պատկերող ժայռապատկերներից մեկը, որտեղ մարդը կանգնած է ընձառյուծի վրա (Կարախանյան, Սաֆյան 1970, աղ. 151/1; Պետրոսյան 2017, 112–114): Ուշագրավ է նաև այն, որ Յազիլիկայայի բարձրաքանդակի մարդկանց՝ ընձառյուծի և ցլի կերպափոխումները նկատել է արդեն պարագետ Սրբ. Լիսիցյանը, որը փորձել է քննարկել երևույթը հայկական համատեքստում: Հեղինակը նկատում է, որ այդ բարձրաքանդակները պատկերում են որոշակի ծիսաթատերական ընթացք, որի մասնակիցները կանգնած են պարային դիրքով: Այդ մասնակիցները նաև կերպափոխվում են

կատվազգիի և ցլի: Թափորը գլխավորում են իգական և արական աստվածությունները, որոնք կանգնած են իրենց խորհրդանիշ ընձառյուծի մեջքին: Արական կերպարների մեջ կան մարդիկ, որոնք ունեն կատվի և ցլի դիմակներ: Ենթադրելով, որ նման ծիսակատարություններ եղել են նաև հին Հայաստանում, Լիսիցյանը նշում է, որ խեթական հագուստի մի շարք պարագաներ (գլխարկներ, կոշիկներ, գլխազարդեր) զուգահեռներ ունեն Հայաստանում (Лисицин 1958, 48, таб. XXXII–XXXIV, CXVII): Երբ Ս. Լիսիցյանն անում էր այս ենթադրությունը, դեռևս հայտնի չէին Քարաշամբի արծաթե անոթը և Իրինդի վիշապաքարը: Այսօր այս ենթադրությունն ավելի էական հիմնավորումներ է ստանում:

Եզրակացություններ

Ինչպես ցույց են տալիս հնագիտական և պատմական տվյալները, Հին Արևելքում և Էգեյան աշխարհում ընձառյուծը, որպես իշխանության նշան, մարդկանց պահապան և պտղաբերություն ապահովող, եղել է խորհրդանշական բարձր որակի կենդանի: Ընձառյուծի խորհուրդը հայտնի է եղել նաև հին Կովկասում և Հայկական լեռնաշխարհում, որտեղ նրա կերպարը էական առնչություններ է ցուցաբերում փոքրասիական մշակութային աշխարհի հետ Այս աշխատանքում փորձ կատարվեց ներկայացնել ընձառյուծի վերաբերյալ Հայաստանից հայտնի հնագիտական նյութը՝ կենտրոնանալով այդ կենդանու կերպարի ամենալայն տարածման շրջանի՝ միջին բրոնզի դարի վրա և ցույց տալով փոքրասիական ժողովուրդների, մասնավորապես խեթերի հետ առկա հնարավոր առնչությունները: Արված հետազոտությունը մեզ հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1. Խեթական միջավայրում ընձառյուծը արքայական կենդանի է, կենդանական թափորի մասնակից, արքայի տաճարական գազանանոցի անդամ, զոհաբերման առարկա, ինչը նույն կերպ արտացոլված է Հայաստանյան նյութերում:

2. Ընձառյուծի կերպարը և նրա հետ առնչվող պարագաները (մորթի, գլուխ, դիմակ) խեթական ծիսական պարի բաղկացուցիչ են: Ընձառյուծի մորթու ծիսական օգտագործումը (հավանաբար նույնատիպ ծես-պարերում օգտագործված) արտացոլված է Հայաստանից հայտնի նյութերում:

3. Խեթական պատկերացումներում ընձառյուծը աստվածուհու խորհրդանիշ է. ընձառյուծ-աստվածուհի-լեռ-աղբյուր-դիմահայաց պատկերվող թռչուն-կայծքար/վանակատ-արձան լեռան գագաթին/աղբյուրի մոտ խեթական սեմանտիկ բույլը լիովին համապատասխանում է վիշապաքարերի պատմահնագիտական համատեքստին, դրանց պատկերագրությանը:

4. Խեթական իգական և արական Հեբաթ-Շառումա աստվածությունները պատկերվում են կանգնած ընձառյուծի վրա և մարմնավորում ընձառյուծ-ցուլ սեմանտիկ կապը, որն արտացոլված է Հայաստանից հայտնի նյութական մշակույթի համապատասխան միավորներում և մասնավորապես՝ Իրինդի վիշապաքարի վրա:

5. Ընձառյուծին առնչվող և խեթական զուգահեռներ ունեցող միջինբրոնզեդարյան Հայաստանից հայտնի տվյալները ժամանակագրորեն մի քանի

հարյուր տարի ավելի վաղ են, քան խեթական տեքստերը և պատկերները (այդ տվյալներից որոշները վերաբերում են միջին բրոնզի դարի վերջերին, այսինքն, համաժամանակյա են վաղ խեթական շրջանին): Սա կարող է ունենալ մի քանի բացատրություն.

ա) Ընձառյուծի մասին ընկալումներն արխետիպային են և կարող են բնորոշ լինել տարբեր մշակութային աշխարհներին իրարից անկախ (հմմտ. Юнг 2008, 269, վերջինս նկատել է (ընձ)առյուծի վիշապանման արխետիպային էակ լինելը): Այսպես, ընձառյուծը համանման գործառույթներ (սուրբ կենդանի, առնչություն արքայական իշխանությանը, ևն) ունի, օրինակ, Աֆրիկայում (Բենին, պիգմեյներ, ևն, հմմտ. Ruel 1969; հմմտ. Иванов 1978, 156; 1992, 48):

բ) Երկու տարածքների ավանդույթները սնվել են մեկ ընդհանուր ենթաշերտից, որի համակարգում տեսանելի են կենտրոնական Փոքր Ասիայի, Կովկասի ու Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթները, և որոնց ակունքները հասնում են նորքարեդարյան հեղափոխության օրրան Փոքր Ասիայի կենտրոնական և Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններ: Այնպիսի կենտրոններում, ինչպիսիք էին Գյոբեկլի թեփեն, Նեվալի չորին, Չաթալ հույուկը, Հաջիլարը արդեն առկա են այն սեմանտիկ խմբերը (ընձառյուծ/մորթի-ցուլ-վարազ-արձան), որոնք հետագայում պիտի բնորոշ լինեին մի կողմից Քարաշամբի գավաթի և Իրինդի վիշապաքարերի ստեղծողների, մյուս կողմից էլ նախախեթերի/խաթերի և խեթերի համար:

գ) Տեղի է ունեցել խեթերի նախնիների և Հայաստանի հնագույն բնակչության ուղղակի շփում խեթական հիմնական տարածքից դեպի հյուսիս ընկած շրջաններում՝ մինչ խեթերի տեղաշարժը դեպի կենտրոնական Փոքր Ասիա: Այսպես, օրինակ, ենթադրվում է, որ Քարաշամբի արծաթե անոթը ցույց է տալիս «հստակ առնչություններ ավելի ուշ խեթական ավանդույթին, և այն հավանաբար պետք է թվագրել ոչ թե միջին բրոնզի դարով, այլ ավելի վաղ, որով գավաթը կվերաբերի հնդեվրոպական խմբերի դեպի Փոքր Ասիա իրականացված գաղթի ժամանակաշրջանին» (Klengel 1999, 19. հմմտ. նաև Brentjes 1998; Brentjes 1999):

դ) Հայկական լեռնաշխարհի և կենտրոնական Փոքր Ասիայի միջև գոյություն են ունեցել առևտրատնտեսական աշխույժ հարաբերություններ միջին բրոնզի դարում, հատկապես Քանեշի առևտրական համակարգի սահմաններում, որի ընթացքում տեղի է ունեցել առարկաների և մտքերի փոխանակություն (այս տեսակետի համար հմմտ. Rubinson 2013):

Հիշյալ բոլոր բացատրություններն էլ ունեն որոշակի հիմք, սակայն մեկ բան է ակնհայտ. առկա զուգահեռները փաստում են խաթա-խեթական և հայկական-կովկասյան մշակութային աշխարհների միջև առկա սերտ և հիմնարար առնչությունների մասին, որոնք համընդհանուր աշխարհայացքի հիմք են դարձել:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում արևելագետներ

Ու. Զայդլին և Ե. Գրեկյանին, հնագետներ Հ. Սիմոնյանին, Ն. Ենգիբարյանին, Ռ. Դավթյանին, Ս. Մանուկյանին, Մ. Շախմուրադյանին, հնակենդանաբան Ն. Մանասերյանին: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG–6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Աբեղյան Մ. 1975, Երկեր, Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ. հրատ.:
   Abegyan M. 1975, Works, vol. 7, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Գրիգոր Տաթևացի»:
   Alishan G. 2002, The Ancient Faith of the Armenians or Pagan Religion, Yerevan, Grigor Tatevatsi (in Armenian).
3. Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
   Acharyan H. 1979, Armenian Root Dictionary, vol. 4, Yerevan, Yerevan University Press (in Armenian).
4. Առաքելյան Բ. 1949, Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Arakelyan B. 1949, Armenian Relief Sculptures in the IV–VII Centuries, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
5. Ավդալբեգյան Թ. 1969, Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Avdalbegyan T. 1969, Armenological Studies, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
6. Ավետյան Վ. 2000, Սևանի ավազանի բրոնզեդարյան ոսկերչության պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, N 3, 234–242:
   Avetian V. 2000, From the History of Bronze Age Jewelry in the Sevan Basin, Historical-Philological Journal, N 3, 234–242 (in Armenian).
7. Ատրպետ 1912, Վիշապամայր. պատմվածք, Ալեքսանդրոպոլ, «Շիրակ»:
   Atrpet 1912, Vishapamayr: A Tale, Alexandropol, Shirak (in Armenian).
8. Ատրպետ 1929, Ճորոխի ավազանը, Վիեննա, Մխիթարյան Միաբանության տպ.:
   Atrpet 1929, The Chorokh Basin, Vienna, Mekhitarist Congregation Press (in Armenian).
9. Աւգերեան Մ., Ճէլալեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ, Մխիթարյան Միաբանության տպ.:
   Avgerian M., Chelalean G. 1865, Handbook Dictionary of the Armenian Language, Saint Lazarus, Venice, Mekhitarist Congregation Press (in Armenian).
10. Բդոյան Վ.Հ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
    Bdoyan V.H. 1972, Agricultural Tradition in Armenia, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

11. Բոբոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.) 2019, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, «Ոսկան Երևանցի»:
Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (eds) 2019, The Vishap at the Border of Myth and Reality, Yerevan, Voskan Yerevantsi (in Armenian).

12. Գրիգորյան Ա., Մկրտչյան Ի., Հարությունյան Ս. 2016, Հայացք բրոնզի դարից. Հայաստանի պատմության թանգարանի կատալոգ-ալբոմ, Երևան, «Տիգրան Մեծ»:
Grigoryan A., Mkrtchyan I., Harutyunyan S. 2016, A Glimpse from the Bronze Age: Catalogue-Album of the History Museum of Armenia, Yerevan, Tigran Mets (in Armenian).

13. Դանիելյան Հ., Բոբոխյան Ա. 2018, Իրինդի հուշարձանախումբը, Ավետիսյան Հ. (խմբ.), Արագածի թիկունքում. հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, «Գիտություն», 127–134:
Danielyan H., Bobokhyan A. 2018, The Irind Monument Complex, in Avetisyan H. (ed.), Behind Aragats: Archaeological Studies Dedicated to Telemak Khachatryan's Memory, Yerevan, Gitutyun, 127–134 (in Armenian).

14. Դեվեջյան Ս.Հ. 1982, Եղջերվի պաշտամունքի հետքերը հին Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 140–152:
Devejyan S.H. 1982, Traces of the Worship of the Stag in Ancient Armenia, Historical-Philological Journal, N 2, 140–152 (in Armenian).

15. Դեվեջյան Ս. 2022, Լոռի Բերդ III. ուշբրոնզեդարյան դամբարաններ, Երևան, ՀԱԻ հրատ.:
Devejyan S. 2022, Lori Berd III: Late Bronze Age Tombs, Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press (in Armenian).

16. Զոհրաբյան Ա. 2022, Ֆալիկ կոթողների իմաստաբանական և սոցիալական գործառույթներն ըստ լճաշենյան օրինակի, Բադալյան Մ., Մարտիրոսյան-Օլշանսկի Ք., Բոբոխյան Ա. (խմբ.), Ծովային Հայաստան. Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, ՀԱԻ հրատ., 78–89:
Zohrabyan A. 2022, Semantic and Social Functions of Phallic Stelae According to the Lchashen Example, Badalyan M., Martirosyan-Olshanski K., Bobokhyan A. (eds), Maritime Armenia: The Archaeological Heritage of the Uduri-Etiuni Land, Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 78–89 (in Armenian).

17. Էփրիկեան Հ.Ս. 1902, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, Մխիթարյան Միաբանության տպ.:
Eprikyan H.S. 1902, Illustrated Geographic Dictionary, vol. I, Venice, Mekhitarist Congregation Press (in Armenian).

18. Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա. 2002, Հին Շիրակավան, Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 23, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ.:
Torosyan R.M., Khknikyan O.S., Petrosyan L.A. 2002, Ancient Shirakavan, Archaeological Excavations in Armenia, vol. 23, Yerevan, National Academy of Sciences of Armenia Press (in Armenian).

19. Լալայան Ե. 1901, Գանձակի գաւառ, հ. Բ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի:
Lalayan Y. 1901, Gandzak Province, vol. 2, Tbilisi, Printing House of K. Martiroseants (in Armenian).

20. Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Lalayan Y. 1988, Works, vol. 2, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

21. Խաչատրյան Ա. 1933, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ.:
Khachatryan A. 1933, A Critical History of the Cuneiform Period of Armenia, Yerevan, Melkonian Fund Press (in Armenian).

22. Կարախանյան Հ., Սաֆյան Պ. 1970, Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», h. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Karakhanyan H., Safyan P. 1970, The Petroglyphs of Syunik, Archaeological Monuments of Armenia, vol. 4, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

23. Հակոբյան Ս., Հակոբյան Ա. 2015, Հայաստանի Հանրապետություն. պատմական հանրագիտարան, Երևան, «Տիգրան Մեծ»:
Hakobyan S., Hakobyan A. 2015, Republic of Armenia: A Historical Encyclopedia, Yerevan, Tigran Mets (in Armenian).

24. Հարությունյան Ս. 2001, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի»:
Harutyunyan S. 2001, Ancient Armenian Beliefs, Religion, Worship, and Pantheon, Yerevan, Mughni (in Armenian).

25. Հարությունյան Ս. 2006, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
Harutyunyan S. 2006, Armenian Incantation and Folk Prayers, Yerevan, Yerevan University Press (in Armenian).

26. Հարությունյան Ս.Բ., Քալանթարյան Ա.Ա. (խմբ.) 2002, Սուրբ Սարգիս. գիտաժողովի նյութեր, Երևան, «Մուղնի»:
Harutyunyan S.B., Kalantaryan A.A. (eds) 2002, Saint Sargis: Conference Proceedings, Yerevan, Mughni (in Armenian).

27. Հմայակյան Հ. 2023, Քարաշամբի գավաթը խաթախեթական իրողությունների համատեքստում, Գրեկյան Ե. (խմբ.), Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ, Երևան, ՀԱԻ հրատ., 47–55:
Hmayakyan H. 2023, The Karashamb Goblet in the Context of Hittite Realities, Grekyan Y. (ed.), Migration Processes in the Armenian Highlands from Ancient Times to the Early 20th Century, Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, 47–55 (in Armenian).

28. Հովհաննիսյան Կ. 1973, Էրեբունիի որմնանկարները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Hovhannisyan K. 1973, The Murals of Erebuni, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press.

29. Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ghanalanyan A. 1969, Folktales, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

30. Մարտիրոսյան Բ.Ա., Պապանյան Ս.Բ. 1983, Հայաստանի վայրի կաթնասունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Martirosyan B.A., Papanyan S.B. 1983, The Wild Mammals of Armenia, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

31. Մարտիրոսյան Հ. 1978, Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, «Սովետական գրող»:
Martirosyan H. 1978, Science Begins in Prehistory, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).

32. Մարտիրոսյան Հ.Ա. 1981, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 1/III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Martirosyan H.A. 1981, The Petroglyphs of the Geghama Mountains, Archaeological Monuments of Armenia, vol. 1/III, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

33. Մարտիրոսյան Հ.Ա., Իսրայելյան Հ.Ռ. 1971, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 6/II, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Martirosyan H.A., Israelian H.R. 1971, The Petroglyphs of the Geghama Mountains, Archaeological Monuments of Armenia, vol. 6/II, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

34. Միքայելյան Լ. 2018, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու Հովնանի պատմության տեսարանների պատկերագրական ավանդույթները, ՎԷմ, N 3, 182–199:
Mikayelyan L. 2018, Iconographic Traditions of Hovnan's Historical Scenes in the Church of the Holy Cross of Aghtamar, Vem, N 3, 182–199 (in Armenian).

35. Մկրտչյան Շ. 1980, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան»:
Mkrtchyan Sh. 1980, Historical-Architectural Monuments of Mountainous Karabakh, Yerevan, Hayastan.

36. Մնացականյան Ա.Շ. 1980, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Mnatsakanyan A.Sh. 1980, Medieval Armenian Riddles, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

37. Պետրոսյան Ա., 2015, Երեսուն տարի անց. վիշապ քարակոթողները և վիշապամարտի առասպելը, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», 13–52:
Petrosyan A. 2015, Thirty Years Later: Dragon Stones and the Legend of Dragon-Slaying, Petrosyan A., Bobokhyan A. (eds), Dragon Stones, Yerevan, Gitutyun, 13–52. (in Armenian).

38. Պետրոսյան Լ.Ա. 2018, Լճաշենի դամբարանադաշտը, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 22, Երևան, ՀԱԻ հրատ.:
Petrosyan L.A. 2018, The Lchashen Necropolis, Archaeological Monuments of Armenia, vol. 22, Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press (in Armenian).

39. Պետրոսյան Ս.Գ. 2017, Ընձառյուծը որպես արքայի խորհրդանիշ, ՎԷմ, N 2, 101–117:
Petrosyan S.G. 2017, The Leopard as a Royal Symbol, Vem, N 2, 101–117 (in Armenian).

40. Սամուելյան Խ. 1931, Հին Հայաստանի կուլտուրան 1 – Քարե դար, Երևան, Պետհրատ:
Samvelyan Kh. 1931, The Culture of Ancient Armenia 1 – The Stone Age, Yerevan, State Publishing House.

41. Սիմոնյան Հ. 1987ա, Վերին Նավեր դամբարանադաշտի պեղումների արդյունքները, Առաքելյան Բ. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 13–15:
Simonyan H. 1987a, Results of Excavations at the Verin Naver Necropolis, Arakelyan B. (ed.), Abstracts of the Scientific Session Dedicated to the Results of the 1985–1986 Field Archaeological Work in the Armenian SSR, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 13–15 (in Armenian).

42. Սիմոնյան Հ. 1987բ, Ուշ բրոնզի դարի պաշտամունքային անոթներ Վերին Նավեր դամբարանադաշտից, Մնացականյան Ս. Խ., Մնացականյան Ս. Ս. (խմբ.), Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական գիտական VI կոնֆերոնաս, Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 55–56:
Simonyan H. 1987b, Late Bronze Age Cultic Vessels from the Verin Naver Necropolis, Mnatsakanyan S.Kh., Mnatsakanyan S.S. (eds), Abstracts of the 6th Republican Scientific Conference on the Problems of Armenian Culture and Art, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 55–56. (in Armenian).

43. Սիմոնյան Հ. 1995, Վիշապամարտի՝ հնդեվրոպական հիմնական առասպելի արտացոլումը Վերին Նավերի 15-րդ դամբարանից հայտնաբերված ծիսական սափորի պատկերագրությունում, Աղասյան Ա.Վ. (խմբ.), Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, Զեկուցումների թեզեր, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 63–64:
Simonyan H. 1995, Reflection of the Proto-Indo-European Dragon-Slaying Myth in the Imagery of the Ritual Vessel Discovered in Tomb 15 of Verin Naver, Aghasyan A.V. (ed.), Abstracts of the 7th Republican Scientific Conference on Armenian Art, Yerevan, National Academy of Sciences of Armenia Press, 63–64 (in Armenian).

44. Սիմոնյան Հ. 1997, Աղեղնաձիգը, Ավարայր, N 4, 5–10:
Simonyan H. 1997, The Archer, Avarayr, N 4, 5–10 (in Armenian).

45. Սիմոնյան Լ. 2017, Ծառ-ծաղկաքաղիկ, Երևան, «ՎՄՎ-Պրինտ»:
Simonyan L. 2017, Tree-Flower Motifs, Yerevan, VMV-Print (in Armenian).

46. Սիմոնյան Հ. 2006, Վերին Նավեր, Երևան, ԵՊՀ հրատ.:
Simonyan H. 2006, Verin Naver, Yerevan, Yerevan University Press (in Armenian).

47. Սիմոնյան Հ. 2009, Ջողազ-Բերքաբեր, Քալանթարյան Ա., Սարգսյան Հ. (խմբ.), Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, «Գիտություն», 215–232.
Simonyan H. 2009, Joghaz-Berkaber, Kalantaryan A., Sargsyan H. (eds), Tavush: Material and Spiritual Heritage, Yerevan, Gitutyun, 215–232 (in Armenian).

48. Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Srvanztyants G. 1978, Works, vol. I, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

49. Տաղավարեան Ն. 1909, Հայոց հին կրօնները, Կ. Պոլիս. Տպ. Մատթէոսեան:
Taghavaryan N. 1909, Ancient Religions of the Armenians, Constantinople, Matteosian Press (in Armenian).

50. Տիգրանյան Մ. 2009, Թռչունների և կենդանիների տոտեմի դրսևորումները հայկական հարսանեկան ծիսական երգերում, Աղասյան Ա.Վ. (խմբ.), Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջան, Երևան, «Գիտություն», 160–174:
Tigranyan M. 2009, Manifestations of Bird and Animal Totems in Armenian Wedding Ritual Songs, Aghasyan A.V. (ed.), Third Scientific Session of Young Armenian Art Historians, Yerevan, Gitutyun, 160–174 (in Armenian).

51. Փիլիպոսյան Ա., Զաքյան Ա., Գևորգյան Լ., Պողոսյան Դ. 2013, Մեծամորի ոսկին. «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հատուկ զետեղարանի ուղեցույց, Երևան, «Լեգալ Պլյուս»:
Philiposyan A., Zakyan A., Gevorgyan L., Poghosyan D. 2013, The Gold of Metsamor: A Guide to the Special Exhibition Hall of the Metsamor Historical-Archaeological Museum-Reserve, Yerevan, Legal Plus (in Armenian).

52. Քալանթարյան Ա. (խմբ.) 2007, Հին Հայաստանի ոսկին. մ.թ.ա. III հազ. – մ.թ. XIV դ., Երևան, «Գիտություն»:
Kalantaryan A. (ed.) 2007, The Gold of Ancient Armenia: 3rd Millennium BC – 14th Century AD, Yerevan, Gitutyun (in Armenian).

53. Абрамян Л.А., Демирханян А.Р. 1985, Мифологема близнецов и мировое дерево (К выяснению значения одного класса наскальных изображений древней Армении), Историко-филологический журнал, N 4, 66–84.
Abramyan L.A., Demirkhanyan A.R. 1985, The Mythologeme of Twins and the World Tree (On the Meaning of a Certain Class of Rock Art in Ancient Armenia), Historical-Philological Journal, N 4, 66–84 (in Russian).

54. Адонц Н. 2008, Богиня Кибела, Вестник Матенадарана, N 18, 96–215.
Adontz N. 2008, The Goddess Cybele, Matenadaran Bulletin, N 18, 96–215 (in Russian).

55. Акопян З. 2019, Скульптурное убранство южного входа главной церкви монастыря Хаху. Символика изображений, Акопян З., Гарибян Н., Асрян А. (ред.), Исторический Тайк: история, культура, вероисповедание, С. Эчмиадзин, изд. Майр Атор, 335–365.
Akopyan Z. 2019, The Sculptural Decoration of the Southern Entrance of the Main Church of Hakh Monastery. The Symbolism of the Images, Akopyan Z., Garibyan N., Asryan A. (eds), Historical Tayk: History, Culture, Religion, St. Etchmiadzin, Mayr Ator Publishing, 335–365 (in Russian).

56. Ардзинба В.Г. 1982, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, «Наука».
Ardzinba V.G. 1982, Rituals and Myths of Ancient Anatolia, Moscow, Nauka (in Russian).

57. Афанасьева В. 1979, Гильгамеш и Энкиду: эпические образы в искусстве, Москва, «Наука».
Afanasyeva V. 1979, Gilgamesh and Enkidu: Epic Images in Art, Moscow, Nauka (in Russian).

58. Байбуртян Е. А. 2011, Последовательность развития древнейших культур Армении на основе археологического материала, Ереван, Музей истории Армении.
Baiburtian E.A. 2011, The Development Sequence of the Oldest Cultures of Armenia Based on Archaeological Material, Yerevan, Museum of Armenian History (in Russian).

59. Гамкрелидзе Т.В., Иванов Вяч. Вс. 1984, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, изд. Тбилисского университета.

Gamkrelidze T.V., Ivanov V.V. 1984, The Indo-European Language and the Indo-Europeans, Tbilisi, Tbilisi University Press (in Russian).

60. Гаспарян К.М., Агаджанян Ф.С. 1974, О барсе в Армении, Биологический журнал Армении, N 27/12, 84–87.
Gasparyan K.M., Agadzhanyan F.S. 1974, On the Leopard in Armenia, Biological Journal of Armenia, N 27/12, 84–87 (in Russian).

61. Гнуни А.В. 2003, Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении (на основе данных индийской мифологии), Вестник общественных наук, N 2, 72–90.
Gnuni A.V. 2003, An Attempt to Analyze the Funerary Inventory of Two Middle Bronze Age Burials in Armenia (Based on Data from Indian Mythology), Herald of Social Sciences N 2, 72–90 (in Russian).

62. Грейвс Р. 1992, Мифы Древней Греции, Москва, «Прогресс».
Graves R. 1992, Myths of Ancient Greece, Moscow, Progress (in Russian).

63. Демирханян А.Р. 1982, К проблеме символики трехчастных композиций древней Армении, Историко-филологический журнал, N 4, 154–164.
Demirkhanyan A.R. 1982, On the Problem of the Symbolism of Three-Part Compositions in Ancient Armenia, Historical-Philological Journal , N 4, 154–164 (in Russian).

64. Дьяконов И.М. 1951, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, N 2, 255–356.
Diakonov I.M. 1951, Assyro-Babylonian Sources on the History of Urartu, Bulletin of Ancient History, N 2, 255–356 (in Russian).

65. Есаян С.А. 1980, Скульптура древней Армении, Ереван, изд. АН АССР.
Esayan S.A. 1980, Sculpture of Ancient Armenia, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

66. Иванов Вяч. Вс. 1980, Внешняя история анатолийских языков, в кн.: Дьяконов И.М., Иванов Вяч., Вс., Древние языки Малой Азии, Москва, «Прогресс», 129–160.
Ivanov V.V. 1980, The External History of the Anatolian Languages, Diakonov I.M., Ivanov V.V., Ancient Languages of Asia Minor, Moscow, Progress, 129–160 (in Russian).

67. Иванов Вяч. Вс. 1978, Разыскания в области анатолийского языкознания: хатт. haprašš «леопард» как источник хетт. paršana и евразийских названий барса, тигра, Этимология-1976, Москва, «Наука», 153–158.
Ivanov V.V. 1978, Research in the Field of Anatolian Linguistics: Hattic ha-prašš "Leopard" as the Source of Hittite paršana and Eurasian Names for the Leopard and Tiger, Etymology-1976, Moscow, Nauka, 153–158 (in Russian).

68. Иванов Вяч. Вс. 1992, Леопард, Токарев С.А. (ред.), Мифы народов мира 2, Москва, «Советская энциклопедия», 48–49.
Ivanov V.V. 1992, The Leopard, Tokarev S.A. (ed.), Myths of the Peoples of the World 2, Moscow, Soviet Encyclopedia, 48–49 (in Russian).

69. Кореневский С.Н. 2004, Древнейшие земледельцы и скотоводы Предкавказья, Москва, «Наука».

Korenevsky S.N. 2004, The Earliest Farmers and Herders of the North Caucasus, Moscow, Nauka (in Russian).

70. Лисициан Ср. 1958, Старинные пляски и театральные представления армянского народа, вып. I, Ереван, изд. АН Арм. ССР.
Lisitsian Sr. 1958, Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People, vol. I, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

71. Марр Н.Я. 1930 (?), Вишапы и кони. Заметки к предисловию «Вишапов» и к статье «Семантическая палеонтология в языках не яфетических систем», Санкт-Петербургский филиал архива Российской Академии наук, ф. 800, оп. 1, ед. хр. 621, л. 73.
Marr N.Ya. 1930 (?), Vishaps and Horses. Notes for the Foreword to "Vishaps" and the Article "Semantic Paleontology in Non-Japhetic Language Systems", St. Petersburg Branch of the Archive of the Russian Academy of Sciences, f. 800, inv. 1, un. 621, fl. 73 (in Russian).

72. Марр Н.Я. 1931 (?), Кошка у армян и грузин: этимологические заметки, Санкт-Петербургский филиал архива Российской Академии наук, ф. 800, оп. 1, ед. хр. 2052, л. 3.
Marr N.Ya. 1931 (?), The Cat Among Armenians and Georgians: Etymological Notes, St. Petersburg Branch of the Archive of the Russian Academy of Sciences, f. 800, inv. 1, un. 2052, fl. 3 (in Russian).

73. Мартиросян А.А. 1974, Аргиштихинили, Археологические памятники Армении, вып. 8/I, Ереван, изд. АН АССР.
Martirosyan A.A. 1974, Argishtikhinili, Archaeological Monuments of Armenia, vol. 8/I, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

74. Межлумян С.К. 1988, Голоценовая фауна млекопитающих Армении, Ереван, изд. АН Арм. ССР.
Mezhlumyan S.K. 1988, Holocene Mammalian Fauna of Armenia, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

75. Нариманишвили Г., Шаншашвили Н., Нариманишвили Д. 2015, Новые данные о менгирах Южной Грузии, Петросян А., Бобохян А. (ред.), Каменные стелы вишапы, Ереван, «Гитутюн», 176–189.
Narimanishvili G., Shanshashvili N., Narimanishvili D. 2015, New Data on Menhirs in Southern Georgia, Petrosyan A., Bobokhyan A. (eds), Stone Stelae – Vishaps, Yerevan, Gitutyun, 176–189 (in Russian).

76. Оганесян В.Е. 1988, Серебряный кубок из Карашамба, Историко-филологический журнал, N 4, 145–161.
Oganesyan V.E. 1988, The Silver Goblet from Karashamb, Historical-Philological Journal N 4, 145–161 (in Russian).

77. Орбели И.А. 1963, Избранные труды, Ереван, изд. АН Арм. ССР.
Orbeli I.A. 1963, Selected Works, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

78. Орбели И.А. 1968, Избранные труды, вып. 1, Москва, «Наука».
Orbeli I.A. 1968, Selected Works, vol. 1, Moscow, Nauka (in Russian).

79. Пескарева К., Баликян О. 1982, Докладные записки Н.Я. Марра в Археологическую комиссию (1909–1915 гг.), Вестник общественных наук, N 2, 83–92.

Peskaryeva K., Balikyan O. 1982, N.Ya. Marr's Reports to the Archaeological Commission (1909–1915), Herald of Social Sciences, N 2, 83–92 (in Russian).

80. Петросян Э. 2018, Храмовый праздник в стране Биайнили/Урарту, Аветисян А. (ред.), По ту сторону Арагаца. Археологические исследования, посвященные памяти Телемака Хачатряна, Ереван, «Гитутюн», 182–198.
Petrosyan E. 2018, The Temple Festival in the Land of Biaili/Urartu, Avetisyan A. (ed.), Beyond Aragats. Archaeological Studies in Memory of Telemak Khachatryan, Yerevan, Gitutyun, 182–198 (in Russian).

81. Погребова М. 2011, История Восточного Закавказья: вторая половина II–начало I тыс. до н.э. (по археологическим данным), Москва, «Восточная литература».
Pogrebova M. 2011, History of Eastern Transcaucasia: Second Half of the 2nd Millennium – Early 1st Millennium BC (Based on Archaeological Data), Moscow, Oriental Literature (in Russian).

82. Симонян А.Е. 1990, Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения № 12 из могильника Верин Навер), Историко-филологический журнал, N 1, 188–208.
Simonyan A.E. 1990, A New Interpretation of the Sociocultural Community of the Middle Bronze Age of Armenia (Based on Burial No. 12 from the Verin Naver Cemetery), Historical-Philological Journal, N 1, 188–208 (in Russian).

83. Симонян А.Е., 2019, Неркин Навер – комплекс памятников от эпохи средней бронзы до раннего средневековья, Амирханов Х.А. (ред.), сборник к 90-летию Р.М. Мунчаева, Москва, «Наука», 273–292.
Simonyan A.E. 2019, Nerkin Naver – A Complex of Monuments from the Middle Bronze Age to the Early Middle Ages, Amirkhanov Kh.A. (ed.), Collected Papers for the 90th Anniversary of R.M. Munchaev, Moscow, Nauka, 273–292 (in Russian).

84. Смирнов Я.И. 1910, Кавказ: путевой дневник, Институт истории материальной культуры, Российская Академия наук, Рукописный отдел, ф. 11, д. 359, л. 95.
Smirnov Ya.I. 1910, Caucasus: Travel Diary, Institute for the History of Material Culture, Russian Academy of Sciences, Manuscript Department, f. 11, un. 359, fl. 95 (in Russian).

85. Смирнов Я.И. 1912, Кавказ: путевой дневник, Институт истории материальной культуры, Российская Академия наук, Рукописный отдел, ф. 11, д. 360, л. 61.
Smirnov Ya.I. 1912, Caucasus: Travel Diary, Institute for the History of Material Culture, Russian Academy of Sciences, Manuscript Department, f. 11, un. 360, fl. 61 (in Russian).

86. Степанян Н.С., Чакмакчян А.С. 1971, Декоративное искусство средневековой Армении, Ленинград, «Аврора».
Stepanyan N.S., Chakmakchyan A.S. 1971, Decorative Art of Medieval Armenia, Leningrad, Avrora (in Russian).

87. Сурхаев М.М. 2005, Предметы вооружения и конской упряжи из курганов № 1 и № 2 Гараджамирли (Азербайджан), Дандамаев М.М. (ред.), Эдубба вечна и постоянна, материалы конференции, посвященной 90-летию со дня рождения И.М. Дьяконова, С. Петербург, Гос. Эрмитаж, 234–241.
Surkhaev M.M. 2005, Weapons and Horse Harness from Kurgans N 1 and N 2 of Garadzhamirli (Azerbaijan), Dandamaev M.M. (ed.), Edubba is Eternal and Constant. Materials of

the Conference Dedicated to the 90th Anniversary of I.M. Diakonov, St. Petersburg, State Hermitage, 234–241 (in Russian).

88. Тараян З. 2012, Древнейшие отражения культа Богоматери, Ереван, «Асогик».
Tarayan Z. 2012, The Earliest Reflections of the Cult of the Virgin Mary, Yerevan, Asogik (in Russian).

89. Харатян Э.В. 1989, Культовые мотивы семейных обрядов у армян, Армянская этнография и фольклор, вып. 17, Ереван, изд. АН Арм. ССР, 7–62.
Kharatyan E.V. 1989, Ritual Motifs in Armenian Family Rites, Armenian Ethnography and Folklore, vol. 17, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 7–62 (in Russian).

90. Ходжаш С.И., Трухтанова Н.С., Оганесян К.Л. 1979, Эребуни, Москва, «Искусство».
Khodjash S.I., Trukhtanova N.S., Oganesyan K.L. 1979, Erebuni, Moscow, Iskusstvo (in Russian).

91. Юнг К.Г. 2008, Психология и алхимия, Москва, «Аст».
Jung C.G. 2008, Psychology and Alchemy, Moscow, AST (in Russian).

92. Amiet P. 2006, L'hydre et la deesse aux leopards, Butterlin P., Lebau M., Monchambert J.Y., Montero Fenollós J.L. (ed.), Les espaces Syro-Mesopotamiens. Dimensions de l'experience humaine au Proche-Orient ancien, Subartu, N 17, Brepols, 461–465.

93. Bobokhyan A. 2008, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr., British Archaeological Reports 1853, Oxford, Hedges.

94. Boehmer R. 2002, Der figürlich verzierte Becher von Karašamb: Ein Nachtrag, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, N 34, 195–207.

95. Boehmer R.M., Kossack G. 2000, Der figürlich verzierte Becher von Karašamb: Umfeld, Interpretation und Zeitstellung, Iran und der Westen, Gedenkschrift für P. Calmeyer, Dittmann R., Hrouda B., Löw U., Matthiae P., Mayer-Opificius R., Thürwächter S. (Hrsg.), Alter Orient und Altes Testament 272, 9–71.

96. Brentjes B. 1998, Tiere und Libationsbecher im Grabkult Kaukasiens und der Steppen und die Hethiter, Prosecký A. (ed.), Intellectual Life of the Ancient Near East, Rencontre Assyriologique Internationale 43 – Prague 1996, Prague, 57–66.

97. Brentjes B. 1999, Das Bestattungsritual der Hethiter – ein Erbe aus den eurasischen Steppen? Altorientalische Forschungen, N 26, 58–76.

98. Castelluccia M. 2017, Transcaucasian Bronze Belts, British Archaeological Reports International Series 2842, Oxford, BAR Publishing.

99. Esayan S.A. 1984, Gürtelbleche der älteren Eisenzeit in Armenien, Beiträge zur allgemeinen und vergleichenden Archäologie, N 6, 97–198.

100. Gökce B. 2020, Urartu Dönemi'nde Hayvan ve Hayvancilik: Çivi Yazili Belgeler, Arkeolojik Bulgular ve Betim Sanati Üzerinden Bir Değerlendirme, Phaselis, N 6, 35–57.

101. Haas V. 1981, Leopard und Biene im Kulte "hethitischer" Göttinnen, Ugarit Forschungen, N 13, 102–116.

102. Haas V. 1982, Hethitische Berggötter und hurritische Steindämonen, Mainz am Rhein, Philipp von Zabern.

103. Hartner W. 1965, The Earliest History of the Constellations in the Near East and the Motif of the Lion-Bull Combat, Journal of the Near Eastern Studies, N XXIV/1–2, 1–16.
104. Heimpel W., Williams-Forte E., Ünal A. 1980–1983, Leopard, Reallexikon der Assyriologie, N 6, 599–605.
105. Hodder I. 2006, The Leopard's Tale: Revealing the Mysteries of Çatalhöyük, New York, The Metropolitan Museum of Art.
106. Khorozyan I.G., Baryshnikov G., Abramov A.V. 2006, Taxonomic Status of the Leopard. Panthera pardus (Carnivora, Felidae) in the Caucasus and Adjacent Areas, Russian Journal of Theriology, N 5/1, 41–52.
107. Klengel H. 1999, Geschichte des Hethitischen Reiches, Handbuch der Orientalistik, N 1/34, Leuven, Brill.
108. Knoll F., Meller H., Figur B., Knoche G., Schunke T., Dresely V., Avetisyan P., Koiki T., Lipták J., Poppe A. 2013, Die Felsbilder im Hochland von Syunik, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt – Landesmuseum für Vorgeschichte, N 67, 209–234.
109. Lamberg-Karlowsky C.C. 1996, Beyond the Tigris and Euphrates Bronze Age Civilizations, Jerusalem, Ben-Gurion University of the Negev Press.
110. Manaseryan R.L. 2009, The Eagle Killing the Leopard, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N IV/1, 93–97.
111. Meece S. 2006, A Bird's Eye View – of a Leopard's Spots. The Çatalhöyük 'Map' and the Development of Cartographic Representation in Prehistory, Anatolian Studies, N 56, 1–16.
112. Mellaart J. 1965, Earliest Civilizations of the Near East, London, Thames and Hudson.
113. Nys N., Bretschneider J. 2008, Research on the Iconography of the Leopard, Ugarit Forschungen, N 39, 1–58.
114. Peters J., Schmidt K. 2004, Animals in the Symbolic World of Pre-Pottery Neolithic Göbekli Tepe, South-Eastern Turkey: A Preliminary Assessment, Anthropozoologica 39/1, 179–218.
115. Rubinson K.S. 2013, Actual Imports or Just Ideas? Investigations in Anatolia and the Caucasus, Aruz J., Graff S., Rakic Y. (eds), Cultures in Contact from Mesopotamia to the Mediterranean in the Second Millennium B.C., New York, Metropolitan Museum of Art and New Haven, Yale University Press, 12–24.
116. Ruel M. 1969, Leopards and Leaders: Constitutional Politics among a Cross River People, London, Tavistock Publications.
117. Sevin V. 2005, Hakkâri Taşlari: Çiplak Savaşçilarin Gizemi, Istanbul, Yapi Kredi Yayinlari.
118. Simonyan H., Manaseryan N. 2013, Royal Tombs with Horse Sacrifices in Nerkin Naver, Armenia (Middle Bronze Age), De Cupere B., Linseele V., Hamilton-Dyer S. (eds), Archaeozoology of the Near East X, Ancient Near Eastern Studies Supplement 44, Leuven-Paris-Walpole, MA, Peeters, 173–208.
119. Thierry J.-M. 2005, Monuments arméniens de Haute-Arménie, Paris, CNRS Editions.
120. Winter I.J. 1989, The Hasanlu Golden Bowl. Thirty Years Later, Expedition, N 31/203, 87–106.

ՋՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԵՐՈՒՄ

THE USE OF WATER IN BRONZE-IRON AGE FUNERAL RITES IN ARMENIA

ИСПОЛЬЗОВАНИЕ ВОДЫ В ПОГРЕБАЛЬНЫХ ОБРЯДАХ АРМЕНИИ ЭПОХ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА

Գարեգին Թումանյան
Garegin Tumanyan
Гарегин Туманян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

garegin.tumanyan@iae.am

Ներկայացվել է՝ 03.10.2024; գրախոսվել է՝ 19.03.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 03.10.2024; Revised: 19.03.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 03.10.2024; рецензировано: 19.03.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-212

Ամփոփում – Ջուրը, որպես տիեզերական նախասկիզբ և կյանքի աղբյուր, իր առաջնակարգ տեղն ուներ այնկողմնային աշխարհի մասին հնագույն պատկերացումներում: Քանի որ թաղման ծեսը մահը հաղթահարելուն ուղղված հանրային/համայնքային գործելաձև է, ուստի օրինաչափ է ջրի գործածումը հիշյալ ծեսի մի շարք արարողություններում: Դամբարաններում հայտնաբերված ծորակավոր անոթները, մեծ ու փոքր սափորները, հաղորդակից անոթները, գավաթները անուղղակի վկայություններ են տարբեր խմիչքների զոհաբերության վերաբերյալ: Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան թաղման ծեսերում ջուրն օգտագործվել է տարբեր ձևերով, որոնք ծառայել են մեկ ընդհանուր նպատակի՝ ապահովել ննջեցյալի ծիսական մաքրությունը և նպաստել նրա վերածննդին: Ջրի օգտագործման վերաբերյալ հնագիտական «տվյալները» քննարկվում են ըստ առանձին արարողությունների՝ նախապատրաստական փուլից մինչև ննջեցյալի հիշատակի մեծարանքը: Ջրով մաքրագործել են թաղման համալիրի տարածքը, ծիսական հեղումներ են կատարել, լվացել են ննջեցյալի մարմինը, հանգուցյալի գլխի տակ ջուրը խորհրդանշող գետաքար են տեղադրել, ննջեցյալի ձեռքերի մեջ կամ դրանց մոտ ջրով լի անոթ են դրել, դամբանախցում տեղադրել են նստուկի մոտ անցք ունեցող անոթներ և ծեսի համակարգում գործածված մեծ սափորներ և այլն: Ջուրը ոչ միայն սփոփանք էր ննջեցյալի համար, այլև մեռյալների հարությանը/վերածննդին նպաստող անհրաժեշտ միջոց: Այս ուսումնասիրության հիմքում հիմնականում ընկած են Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդար-

յան դամբանադաշտերի հնագիտական հետազոտությունների արդյունքները՝ կուրարաքսյան մշակույթից մինչև կիմերական ու սկյութական մշակույթները ներառյալ: Սակայն մեր պատկերացումների կայացման գործում էական դեր խաղացած հնագիտական համալիրներն ունեն ժամանակային և տարածական առավել լայն ընդգրկում:

Abstract – As the cosmic beginning and the source of life, water had its primary place in the ancient views of the other world. Since funerary rite was a social/community practice aimed at overcoming death, the use of water in a number of rituals of this rite was natural. Spouted vessels, large and small jugs, communicating vessels, and cups found in sepulchres are indirect evidence of the sacrifice of different liquors/drinks. In Armenia's Bronze and Iron Age funeral rites, water was used in different ways, serving a common purpose – to ensure the ritual purity of the deceased and promote his revival. Archaeological "data" about the use of water are discussed according to different ceremonies – from the preparatory stage to the honoring the memory of the deceased. The territory of the burial complex was cleaned with water, ritual libations were performed, the body of the deceased was washed, a river pebble symbolizing water was placed under the head of the deceased, a vessel with water was placed in the hands or near the hands of the deceased, vessels with holes at the bottom and large jugs used in the ritual system were installed in the burial chamber, etc. Water served not only as a consolation for the deceased, but also as an essential remedy to assist the resurrection/revival of the dead. The findings of archaeological investigations of Bronze- and Iron-Age burial grounds of the Armenian Highlands – from Kura-Arax culture to Cimmerian and Scythian cultures, served as the basis for this investigation. Nevertheless, the sepulchral complexes that played an essential role in shaping our views have wider temporal and spatial coverage.

Аннотация – Вода, как космическое начало и источник жизни, занимала первостепенное место в древних представлениях о потустороннем мире. Поскольку погребальный обряд – это общественная/общинная практика, направленная на преодоление смерти, использование воды в ряде ритуалов данного обряда является закономерным. Сосуды с носиком, большие и маленькие кувшины, сообщающиеся сосуды, кубки, найденные в погребениях, являются косвенными свидетельствами жертвоприношения различных напитков. В погребальных обрядах Армении в эпоху бронзы и железа вода использовалась по-разному, служа единой цели – обеспечить ритуальную чистоту усопшего и способствовать его возрождению. Археологические «данные» об использовании воды обсуждаются в соответствии с отдельными церемониями, от подготовительного этапа до чествования памяти покойного. Водой очищали территорию погребального комплекса, совершали ритуальные возлияния, омывали тело усопшего, под голову покойника помещали речной голыш, символизирующий воду, в руки покойного или около них помещали сосуд с водой, в погребальной камере устанавливали сосуды с отверстиями у основания, а также большие кувшины, использованные в системе ритуала и т.д. Вода являлась не только утешением для усопших, но и служила необходимым средством, способствующим воскрешению/возрождению мертвых. В основе этого исследования лежат преимущественно результаты археологических изучений погребений бронзового и железного веков Армянского нагорья от куро-араксской культуры до киммерийской и скифской культур включительно. Однако археологические комплексы, сыгравшие существенную роль в формировании наших представлений, имеют более широкий временной и пространственный охват.

Հիմնաբառեր – ջուր, թաղման ծես, դամբարան, գլաքար, խեցանոթ:
Keywords – water, funeral rites, sepulchre, boulder, vessel.
Ключевые слова – вода, погребальный обряд, погребение, булыжник, сосуд.

Ներածություն

Թաղման ծեսը մահը հաղթահարելուն ուղղված հասարակական/համայնքային գործելաձև է: Հուղարկավորման ծեսի միջոցով հասարակությունը վավերացնում է մարդու անցումը որակական մի վիճակից մեկ այլ վիճակի (Алекшин 1986, 6): Հիշյալ ծեսը կարելի է դիտել որպես հանգուցյալի նախապատրաստություն՝ այնկողմնային աշխարհում այլակեցության համար և միջոց, որի օգնությամբ պիտի կատարվեր անցումն անդրաշխարհ: Դամբարաններում հայտնաբերված ծորակավոր ու թասաձև բերանով մեծաթիվ անոթները, մեծ ու փոքր սափորները, (քառանիստ) տափաշշերը, հաղորդակից անոթները, գավաթներն ու գավերը՝ անուղղակի, բայց շատ պերճախոս վկայություններ են տարբեր խմիչքների զոհաբերության ու դրանցով կատարված հեղումների վերաբերյալ: Թաղման ծեսում գործածված հեղուկների շարքում (գինի, գարեջուր, մեղրից պատրաստված ըմպելիք, կաթ և այլն), իհարկե, մրցակցությունից դուրս էր ջուրը, որպես կենսաբեր հեղուկ:

Հնագիտական ուսումնասիրություններում թաղման ծեսը դիտարկվում է ըստ փուլերի՝ ննջեցյալի նախապատրաստումը թաղման, հուղարկավորման վայրի հատկացում, նախապատրաստում ու թաղման համալիրի կառուցում, հանգուցյալի աճյունի իջեցումը դամբարան (թաղման ծիսակարգ), ուղեկցող գույքի տեղադրումը դամբարանում և հանգուցյալի հիշատակին նվիրված ծիսակատարություններ (Никитина 1974, 58; Леонова, Смирнов 1977, 18; Vogel 2013, 29): Ճիշտ կլինի հենց այս հերթականությամբ էլ քննարկել թաղման ծեսերում ջրի օգտագործման վերաբերյալ հնագիտական «տվյալները»՝ անհրաժեշտության դեպքում ներառելով նաև ազգագրական ու բանագիտական ուսումնասիրությունների, ինչպես նաև առասպելաբանական աղբյուրների ընձեռած տեղեկությունները:

Թաղման նախապատրաստման փուլ

Այս փուլում ջրի գործածությունն առնչվում է ննջեցյալին հանդերձավորելուց առաջ նրա դիակը լողացնելու արարողությանը, քանի որ թաղման ծեսը կատարողների հիմնական մտահոգություններից էր ոչ միայն հանգուցյալի հոգու, այլև՝ մարմնի ծիսական մաքրությունն ապահովելը: Բնականաբար, մահացածին լողացնելու գործողության վերաբերյալ հնագետները կարող են միայն ենթադրություններ անել, այն էլ անուղղակի տվյալների հիման վրա: Այսպես, Նախճավանի № 3 պղնձեքարեդարյան թաղման գլխակողմում հայտնաբերվել են կիսաշրջանաձև շարված գլաքարեր: Այս հնավայրում սովորություն է եղել նաև ննջեցյալի գլխի տակ խեցանոթի բեկոր տեղադրելը (Абибуллаев 1982, 50, 51): Երկու դեպքում էլ դիտվում է հիշյալ առարկաների առնչվածությունը ջրին: Ստեփանակերտի № 125 դամբանաբլրում ննջեցյալի գլուխը դրված է եղել գետաքարի վրա

(Гуммель 1948, 20): Նման երկու փաստ է արձանագրվել Քաղսիի ուշբրոնզեդարյան դամբարաններից մեկում (Хачатрян 1975, 149): Խանլարից արևմուտք գտնվող № 36 դամբանաբլուրի I, II և III հիմնահողային դամբանախցերում համապատասխանաբար 10 և 7 տարեկան երեխաների ու չափահաս ննջեցյալի գլուխները տեղադրված են եղել գլաքարերի վրա (Гуммель 1940, 106–109, фиг. 44): Օշականի դամբարանադաշտի՝ մ.թ.ա. VIII–VII դարերով թվագրվող մի դամբարանում ննջեցյալի գլխի տակ գտնվել է գետաքար, որը, Ս.Ա. Եսայանի կարծիքով, վկայում է հանգուցյալին ջրով լողացնելու մասին (Есаян 1987, 561): Աշտարակի Խոջաբաղերի № 1 դամբարանի (մ.թ.ա. XVI դ. կես) պեղումներով, թաղման խցի նախամուտքի որմնախորշում տեղադրված լայնաբերան սափորի միջից հայտնաբերվել է կանաչ գույնի բռնցքաչափ մի գլաքար, որի նման քարեր դամբանախմբի տարածքում չկան (Թումանյան 1997, 253, 257): Կարելի է ենթադրել, որ դրա առկայությունը նույնպես կապված է ջրի և մաքրագործման գաղափարի հետ. այդ սափորի մեջ լցված ջրով լողացրել են հանգուցյալին: Արթիկի վաղերկաթեդարյան № 417 կատակոմբում ևս կոպիճը դրված է եղել խեցանոթի մեջ: S.U. Խաչատրյանի տեսակետով, գետաքարին կարող էր վերագրվել նույն գործառույթը, ինչ որ ջրին (Хачатрян 1975, 149, 150; Хачатрян 1979, 9): Առասպելաբանական տեղեկությունները գալիս են հաստատելու հնագիտական ենթադրությունները: Ըստ հոմերոսյան պոեմների՝ ննջեցյալի մարմինը լվանում էին ջրով և օծում անուշաբույր յուղերով (Гомеров 1955, VII, 425, XVIII, 344–353, XXIV, 759; Гомеров 1988, XXIV, 44–45): Հանգուցյալի դիակը լողացնելու վերաբերյալ մեզանում կան ազգագրական տեղեկություններ, որոնց համաձայն՝ ննջեցյալին լողացնում էին կամի վրա (Харатян 1989, 34, 36; Варданян, Тер-Саркисянц 2012, 353; Харатян 2014, 261): Այդ մասին վկայություն կա նաև հայ բանահյուսության անեծքի ժանրում. «Բոյըդ կաման վրա լվանամ» (Հարությունյան 1975, 200): Հայաստանում և հարակից տարածաշրջաններում հայտնաբերվել են կամի վրա կամ դրա տակ կատարված բազմաթիվ թաղումներ (նկ. 1) (de Morgan 1889, 59, 139, fig. 18; Гуммель 1949, 56, 57, рис. 13; Ramishvili 2004, 114, 115, fig. 1): Տրամաբանական կլինի մտածել, որ դրանք հենց այն կամերն են, որոնց վրա լողացրել են հանգուցյալների դիակները: Համանման ձևով կարելի է եզրակացնել, որ այն սափորները, որոնց մեջ եղած ջրով լվացել են ննջեցյալի դին, նույնպես դամբարան են իջեցվել՝ դրանց վնասաբեր ազդեցությունից խուսափելու նպատակով: Կարելի է նաև ենթադրել, որ բրոնզ-երկաթեդարյան դամբարանների պեղումներով հայտնաբերված տարողունակ սափորները, որոնք դրված են եղել ննջեցյալների ոտքերի կողմում, հենց այն անոթներն են, որոնցով բերված ջրով լողացրել են հանգուցյալի դին (նկ. 2): Հին հնդկական ավանդության մեջ տեղեկություններ կան մահացածների դիակները Գանգես գետում լողացնելու մասին (Махабхарата 1962, 159):



Նկ. 1. Ախթալայի № 47 դամբարանը (de Morgan 1889, 59, Fig. 18)



Նկ. 2. Ախթալայի № 9 դամբարանը (de Morgan 1889, 58, Fig. 17)



Նկ. 3. Էլառի № 37 դամբարանը (Խանզադյան 1979, 43, նկ. 54)

Թաղման վայրը նախապատրաստելը և դամբանային համալիրի կառուցումը

Թաղման վայրի հատկացումից և կրոմլեխի եզրը շրջագծելուց հետո, հավանաբար, եզրագծված տարածքի ներսը մաքրագործվել է ջրով ու կրակի օգնությամբ: Մաքրագործման նպատակով ջրի գործածության մասին են վկայում գետաքարերով շարված կրոմլեխները, հատկապես այն վայրերում, որտեղ գլաքարեր չկան ու դրանք բացակայում են նաև մոտակայքում: Ս.Ա. Եսայանը նշում է, որ «Օշականում կրոմլեխի քարարկղները շարված են շինությունների պատերից հանված քարերով, իսկ կրոմլեխի շրջագծերը՝ խոշոր գետաքարերով…»: Այդ հանգամանքը նա բացատրում է «ծիսական սովորույթներով», մասնավորապես՝ գետաքարերի առկայությունը կապելով «մաքրման» գաղափարի հետ (Եսայան, Կանեցյան 1986, 70): Կան դեպքեր, երբ խեցանոթները հայտնաբերվել են ուղղակի կրոմլեխի քարերի տակ (Բորսունլուի N 3 և N 5 դամբանաբլուրներ) (Джафаров 1983, 421): Սասնաշենի դամբարաններից մեկում (մ.թ.ա. XV դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես) խեցանոթը գտնվել է կրոմլեխի արևմտյան հատվածին կից (Ավետիսյան 1987, 24; Badalyan, Avetisyan 2007, 225): Եթե կրոմլեխի մոտ ի հայտ եկած խեցանոթների թվում ջրամաններ եղած լինեն, ապա կարելի է խոսել եզրագծված տարածքը ջրով մաքրագործելու մասին:

Ջրի օգտագործման անուղղակի վկայություն կարելի է համարել նաև գետաքարերի առկայությունը դամբանասրահում ու դամբանաբլուրի լիցքի մեջ: Գոլովինոյի դամբարաններից մեկում գտնվել են հինգ գետաքարեր (Մնացականյան 1959, 16): Գլաքարեր հաճախ են հանդիպում Սամթավրոյի հնագույն դամբարաններում (Чубинишвили 1952, 55): Թեև Արթիկի դամբարանադաշտի տարածքում գետաքարեր ընդհանրապես չկան, այնուամենայնիվ, դրանք առկա են կատակոմբների մեծ մասում: Տ.Ս. Խաչատրյանը գտնում է, որ թաղման համալիրներում հայտնաբերված գետաքարերը խորհրդանշում են ջուրը, որն օգտագործվել է դամբարանները մաքրագործելու և դրանք վնասաբեր ուժերի ազդեցությունից զերծ պահելու նպատակով (Хачатрян 1975, 148):

Ենթադրվում է, որ կարմիրբերդյան մշակույթին պատկանող որոշ դամբարանների ծածկասալերի միջև եղած անցքերը թողնվել են միտումնավոր կերպով (Симонян 1984, 9): Շիրակավանի դամբարանադաշտի մ.թ. II–III դարերով թվագրվող դամբարանների ծածկասալերին՝ ննջեցյալի ոտքերի կողմում անցքեր են փորված (Тер-Мартиросов 1984, 445, 446): Հնագետների շրջանում տարածված է այն կարծիքը, որ միջանցիկ փորվածքներն արվել են ծածկասալերի տեղափոխումը դյուրին դարձնելու նպատակով, թեև չի բացառվում, որ անցքերն օգտագործված լինեն «պաշտամունքային նպատակներով» (Тер-Мартиросов 1984, 446): Ծածկասալերի՝ անցքերով օժտված լինելու իրողությունը դիտարկվել է նաև ծիսական տեսանկյունով. համարվում է, որ դրանք արվել են հանգուցյալի հոգու հետ հաղորդակցության նպատակով (Симонян 1984, 9): Այս հարցին կրկին կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

Մեծ քանակությամբ ջուր էր օգտագործվում ննջեցյալներին դիակիզման եղանակով թաղելու ժամանակ: Ինչպես հայտնի է, դիակիզման խարույկի տա-

րածքը համարվում էր չար ոգիների բնակության վայրերից մեկը: Նրանց վնասազերծելու նպատակով ծիսական տարածքը նախ «մաքրագործվում էր» կրակով ու ջրով, արվում էին զոհաբերություններ, արտասանվում աղոթքներ. «Հեռացե՛ք ու սողալով ցրվեցե՛ք այստեղից // Նրա՛ համար են հայրերն այս վայրը նախապատրաստել»: Իսկ երբ գալիս էր դիակիզման խարույկը հանգցնելու ժամանակը, ապա, ըստ վեդայական թաղման հիմների՝ ընդունված էր դրա վրա այնքան ջուր լցնել, որ խարույկի տեղում ճահիճ առաջանար, ճահճում գորտեր բնակվեին ու աճեին ջրային բույսեր (Ригведа 1972, 357, X, 14, 9, X, 16, 13–14. Տե՛ս նաև Թումանյան 2005, 167):

Դամբարանի անուղղակի առնչվածությունը ջրին հնագույն պատկերացումներում արտահայտվել է այն *նավի* հետ համադրելով: Հնդեվրոպական մի շարք լեզուներում *նավը* (*nau-s) ստացել է իր երկրորդ նշանակությունը՝ «գերեզման», քանի որ անցյալում կարծում էին, թե անդրաշխարհը ողջերի աշխարհից անջատված է ջրով ու այնտեղ կարելի է հասնել միայն նավով (Jones 1903, 528; Childe 1925, 210, 256; Пропп 1963, 20; Гамкрелидзе, Иванов 1984, 825; Sturluson 1987, 11. «Կրտսեր Էդդա»-ի ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում ասվում է, որ սկզբնաղբյուրում առկա բառը նշանակում է թե՛ «դագաղ», թե՛ «տապան» (նավ). տե՛ս Младшая Эдда 1970, 227, прим. 19): Հին հայերենում ևս *տապան* բառը գործածված է երկու նշանակությամբ՝ *նավ* և *դամբան*, *գերեզման* (Աճառյան 1979, 373): Ուստի հնարավոր է, որ Արագածոտնի երկու դամբանադաշտերի «Վերին նավեր» ու «Ներքին նավեր» անվանումները կապված լինեն *նավ* բառը դամբարան նշանակությամբ օգտագործելու հետ:

Թաղման ծիսակարգը

Այս խորագրի տակ քննարկվում է հուղարկավորողների վերաբերմունքը ննջեցյալի աճյունի հանդեպ՝ այն դամբարանում ամփոփելիս: Դիադրման եղանակով թաղումներում հանգուցյալի աճյունը դամբանախցում տեղադրելու պահին մահացածի գլխի տակ հաճախ քար են դրել: Ընդունված է դրանք անվանել «գլխատակի քար» կամ «քարե բարձ»: Գլխի տակ դրված քարերի շարքում քիչ չեն գետաքարերը, որոնց նմանօրինակ կիրառությունը փաստագրվել է Քաղսիի ուշբրոնզեդարյան դամբարաններից մեկում (Хачатрян 1975, 149): Վերը հիշատակվել է մի շարք դամբարաններում ննջեցյալի գլխի տակ հայտնաբերված գետաքարերի մասին: Մահացածի գլուխը գլաքարի վրա ամփոփելու սովորությունը Հայաստանում շարունակվել է հելլենիստական դարաշրջանում ու հասել մինչև վաղ միջնադար (Tumanyan 2015, 111): Եթե «գլխատակի քարին» ընդհանրապես կարելի է վերագրել «չարխափան» նշանակություն, ապա գլաքարի դեպքում այն առնչվում է նաև «ջրով մաքրագործման» գաղափարին: Որոշ թաղումներում գետաքարեր են հայտնաբերվել կմախքին կից կամ դրա տարբեր հատվածների տակ: Թեև ննջեցյալի մարմնի տարբեր մասերի տակ դրված գլաքարերը կարող էին դիակի որոշակի դիրքն ապահովելու նպատակ հետապնդել, այնուամենայնիվ, սխալ չի լինի եզրակացնել, որ դրանց առկայությունը նույնպես

կապված է ջրի և մաքրագործման գաղափարի հետ: Հակառակ դեպքում, ասենք, կմախքի կծկված դիրքն ապահովելու համար ավելի հարմար կլիներ այլ տեսակի՝ առավել քիչ սահուն և ավելի տափակ մակերևույթ ունեցող ապարներ ընտրել: Այն դեպքում, երբ դամբարանադաշտը զբաղեցնում է տուֆի քարհանքի տարածքը, իսկ կմախքի տակ գետաքարեր են դրված (Արթիկ, Ագարակ և այլն), ապա դրանց ծիսական նշանակությունը կասկածից դուրս է:

Թաղման գույքը

Որոշ հետազոտողներ գտնում են, որ թաղման ծեսում կիրառություն գտած ջրամանները խորհրդանշել են ջրային տարերքը, որի մի փոքր մասը պարունակվել է դրանց ներսում (Мещанинов 1930, 21, 22): Հնագույն պատկերացումներով՝ մաքուր ջուրը սփոփանք էր հանգուցյալի համար (դա պարզ է դառնում Էնկիդուի հոգու հետ Գիլգամեշի զրույցից. տե՛ս Флиттнер 1958, 54; Эпос о Гильгамеше 1961, 86: Անդրաշխարհում քաղցրահամ/թարմ ջուր խմելու պատկերացման վերաբերյալ տե՛ս նաև Kramer 1963, 132): Այդ է պատճառը, որ դամբանասրահներում ու թաղման խցերում ամփոփված ննջեցյալների ձեռքերի արանքում՝ դեմքի առջև, հաճախ գավ, թաս կամ գավաթ է տեղադրված լինում, նաև ոչ ամբողջական տեսքով (հետաքրքիր է, որ սկյութական առասպելաբանության մեջ փիալան (թասը/գավաթը) համարվում է երկնքից ընկած. տե՛ս Herodotus IV, 5: Դրանով ընդգծվում է փիալայի/գավաթի ծիսական-պաշտամունքային նշանակությունը): Նման իրավիճակ է արձանագրվել Նախճավանի № 24 և № 66 պղնձեքարեդարյան թաղումներում (Абибуллаев 1982, 41, 48, 269, рис. 4), Էլառի № 37 (նկ. 3) (Խանզադյան 1979, 43, նկ. 54) և Ջրվեժի № 1 (Թումանյան 1993, 9. այստեղ գավը տեղադրված էր ննջեցյալի գլխի մոտ) վաղբրոնզեդարյան դամբարաններում, Արուճի № 7 միջինբրոնզեդարյան (Թումանյան 2009, 235) և Աշտարակի Խոջաբաղերի № 2 ուշբրոնզեդարյան դամբաններում և այլն: Աղձնիքի Քուռիկի հյոյուք հնավայրի կիմերական հատկանիշներով դամբարաններից մեկում գավաթի բեկորը դրված է եղել ննջեցյալի բերանի մոտ (Genç 2016, 172): Այս երևույթը տարբեր կերպ է մեկնաբանվել: Կարծիք է հայտնվել, որ ձեռքերում պահված «անմահական ջրով» լի անոթները կապված են ննջեցյալների վերածննդի/հարության պատկերացումների հետ (Церен 1966, 125): Այլ տեսակետով՝ «մեռելային ջուրը» պիտի նպաստեր հանգուցյալի «վերջնական մահվանը» (Проп 1986, 198): Բանահյուսության մեջ հայտնի են «մեռյալ ջուր» և «կենդանի ջուր» հասկացությունները (Дюмезиль 1976, 47): Շումերական հավատալիքներով, «կյանքի ջուրը» գտնվում էր ստորին աշխարհում՝ Էրեշկիգալ աստվածուհու խնամակալության ներքո: Դրանով ցողվելուց հետո Իննաննան վերակենդանանում է (Kramer 1981, 157–163, 298. «Կյանքի ջուրը» փորձել է նաև իմաստության աստված Էնկին. տե՛ս Kramer 1963, 154): Որոշ դեպքերում՝ գավը կամ փարչը ննջեցյալի դեմքի առջև տեղադրվել են շրջված վիճակում (Ивановский 1911, 44): Այս երևույթը Հայկական լեռնաշխարհում փաստագրված է էնեոլիթից մինչև երկաթի դարաշրջանը ներառյալ (Абибуллаев 1982, 50; Мерперт,

Мунчаев 1982, 30; Симонян 1984, 10; Թումանյան 2009, 239): Պատահական չէ, որ որոշ առարկաներ թաղման ծեսում հանդես են գալիս շուռ տված վիճակում, քանի որ իրերը շրջելու արարողությունն ընդունված է դիտարկել փոխակերպման, մի վիճակից մյուսին անցման ծիսակատարության համակարգում (Толстой 1990, 126): Կարծում ենք, որ հիշյալ սովորությունը կարող է կապված լինել «բախտ», «վիճակ» հասկացությունների յուրօրինակ ընկալման հետ, երբ վերջիններս ներկայացվում էին որպես մարդուն մատուցվող գավաթ կամ թաս (Oppenheim 1977, 204): Շուռ տված անոթը տվյալ դեպքում կարող էր նշանակել, որ հանգուցյալը «ճակատագրի իր գավաթը» դատարկել է մինչև վերջին կաթիլը:

Վերածննդի կամ հարության գաղափարների հետ կարող է կապված լինել դամբանասրահներում այն անոթների առկայությունը, որոնց իրանի ստորին մասում՝ նստուկին կից կամ հատակին, անցքեր են արված լինում: Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան դամբարաններում հաճախ են հանդիպում նման միջանցիկ նեղ փորվածքներով փոքր կարասներ կամ մեծ սափորներ: Իրանի ստորին հատվածում շաղափված անցք ունեն Վերին նավեր դամբարանադաշտի միջին-բրոնզեդարյան N 12 դամբանաբլրի փոքր կարասները և N 23 դամբանաբլրի կարմիրբերդյան անոթը (Симонян 1990, 193), Երևանի նախկին Կիրզա թաղամասի դամբարաններից մեկում (մ.թ.ա XVII–XVI դդ.) հայտնաբերված խեցանոթը, Լճաշենից (դամբ. N 6 և 38) ու Գողթից գտնված կավանոթները (Ամիրյան 1969, 268, 271, աղ. I, 1, 12): Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան վաղագույն փուլի N 5 դամբարանի թաղման սրահի հարավարևմտյան անկյունում՝ ննջեցյալի գլխակողմում, դրված էր ոչ մեծ կարաս, որի հատակի մոտ փոքրիկ անցք էր արված (Թումանյան 2005, 161): Նստուկին կից փորված անցքով են օժտված Գեղարոտի ուշբրոնզեդարյան N 2 կրոմլեխի խեցանոթներից մեկը (ՀՊԹ, հավաք. 2209/9), Սասնաշենի N 1 դամբանաբլրի (մ.թ.ա. XV դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես) պեղումներով հայտնաբերված անոթներից մեկը (Badalyan, Avetisyan 2007, 225, pl. I, 7), իսկ Անգեղակոթի երկաթեդարյան N 7 դամբարանում հայտնաբերված երկու անոթների անցքերն արված են հատակների կենտրոնում (Խնկիկյան 1978, 104): Չենք կարող չհամաձայնվել, որ հիշյալ խեցանոթների մեջ հեղուկ է լցված եղել, իսկ անցքերը ծորակների դեր են կատարել: Սակայն, հավանաբար, ճիշտ չէ դրան հաջորդող այն դիտարկումը, թե «նման կավանոթները կապված են եղել հեղուկի ամենօրյա օգտագործման հետ» (Ամիրյան 1969, 272): Օրինակ, Արուճի N 5 դամբարանի կարասն ամենօրյա գործածության ընթացքում «ծորակ» չի ունեցել, նստուկին կից անցքը շաղափվել է թրծումից հետո՝ թաղման ծեսի պահանջներից ելնելով: Հավանաբար անհրաժեշտ էր, որ անոթի մեջ լցված հեղուկը հոսեր ու տարածվեր դամբանասրահում: Այս արարողության հիմքում կարող էր ընկած լինել մկրտության գաղափարը, որը համարժեք է ծիսական մահվանը և որին հետևում է վերածնունդը: Տիեզերական մոտեցմամբ այն նույնացվում է ջրհեղեղին (Элиаде 1987, 72): Կյանքի ջրային նախասկզբի ու վերածննդի ըմբռնումները հին հավատալիքներում սերտորեն միահյուսված էին: Հին հնդկական Վարունա աստվածությանը ձոնված օրհներգերից մեկում խոս-

վում է «ցածում անցք ունեցող տակառից» թափվող ջրի մասին, որով տիեզերքի արքան «ոռոգում է հողը, ինչպես անձրևը՝ հացահատիկը» (Ригведа 1972, V, 85, 3): Մեռյալները, որոնք չէին ուզում հեռանալ դեպի «հողե տունը», գթություն ու ներում էին հայցում տիեզերքի տիրակալ Վարունայից: Նրա տակառից թափվող ջուրը, հավանաբար, պիտի օգներ ննջեցյալների հարությանը կամ վերածննդին:

Ասվածը լրացուցիչ հիմնավորում կարող է ստանալ, եթե քննարկենք Արուճի N 5 դամբարանում հայտնաբերված մեկ այլ խեցանոթի պատկերագրությունը: Հիշյալ կավանոթի ուսերը՝ ատամնավոր պտտադրոշմով արված կետազարդ բեկյալ գծերի օգնությամբ, զարդաբանվել են օձի և հավանաբար շան ոճավորված պատկերներով: Լրահարդարումները կատարվել են խեցանոթի թրծումից հետո, որի պատճառով զարդաբանվածքն անհրաժեշտ որակը չունի: Մինչդեռ, ինչ խոսք, առավել նպատակահարմար կլիներ նույնը կատարել թրծումից առաջ՝ թաց կավի վրա: Հետևաբար, այս անոթը ևս չի պատրաստվել հատկապես հուղարկավորության համար և հավանաբար գործածվել է մինչ թաղումը: Հուղարկավորությունից առաջ այն լրացուցիչ պատկերազարդվել է՝ խեցանոթը համապատասխանեցնելով թաղման ծեսի պահանջներին: Ըստ ավանդական պատկերացումների՝ օձը համարվում է անդրաշխարհի բնակիչ: Նա ստորին աշխարհի հիմնական առասպելաբանական էակն է, որն ապրում է կենաց ծառի արմատների մոտ (Гамкрелидзе, Иванов 1984, 525; Иванов, Топоров 1974, 5): Առասպելական օձի կերպարը կապված է ոչ միայն մահվան, այլև վերածննդի գաղափարի հետ (Propp 1986, 275): Հին է նաև այնկողմնային աշխարհում հոգիներին ուղեկցող շների մասին պատկերացումը: Ժողովրդական հավատալիքներում շունը/գայլը միջնորդ է ողջերի ու մեռածների աշխարհների միջև: Շունը, լինելով մահվան թագավորության պահապանը, միաժամանակ հարություն է տալիս մահացածներին (Հարությունյան 1989, 163–165): Այսպիսով, հիշյալ սափորի մակերևույթին առկա օձի ու շան ոճավորված պատկերները, խորհրդանշելով այնկողմնային աշխարհի սահմանային ջրերի ակունքն ու գետաբերանը, միգուցե մահվան և վերածննդի գաղափարների փոխկապակցվածության արտահայտություններն են: Քննարկվող անոթն իր պարունակությամբ, հավանաբար, նախանշված է եղել այնկողմնային աշխարհի տիրակալի համար:

Գավեր կամ գավաթներ են հայտնաբերվել նաև Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան բազմաթիվ դամբարաններում, որոնց պեղումների հաշվետվություններում այլևայլ պատճառներով բացակայում են այդ իրերի և ննջեցյալի կմախքի համահարաբերակցության վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, նման իրավիճակ է առաջանում թաղման դիակիզման եղանակը քննելիս: Անկախ այն հանգամանքից, թե դիակիզման եղանակով թաղման ժամանակ գավերն ու գավաթները դամբանախցի ո՞ր հատվածում են հայտնաբերվել, դրանից այդ անոթների գործառույթը չի փոխվում: Նույնը վերաբերում է միականթ սափորներին, փոքր կարասներին ու տարողունակ այլ ջրամաններին: Խեցանոթների մակերևույթների զարդաբանվածքը նույնպես կարող է հուշել, որ դրանք նախատեսված են եղել հեղուկների, այդ թվում՝ ջրի համար: Հորիզոնական և ուղղա-

ձիգ բազմաշար ալիքները, լողացող թռչունների ու ձկների պատկերները ցույց են տալիս, որ նման զարդաբանվածքը խորհրդանշում է ջրային տարերքը: Ընդհանրապես, Առաջավոր Ասիայում և մի շարք այլ տարածաշրջաններում պատրաստված անոթների զարդաբանվածքում նշանակալի տեղ էր գրավում ջուր խորհրդանշող պատկերագրությունը (Антонова 1984, 128):

Վերն արդեն խոսվել է կավամանների մասին, որոնք դրված են եղել ննջեցյալների ոտքերի կողմում և ենթադրություն է արվել, որ դրանք այն անոթներն են, որոնցով բերված ջրով լողացրել են հանգուցյալի դին: Հավելենք, որ տարողունակ սափորները, որոնց մեջ եղած ջրով «մաքրագործվել էր» թաղման համալիրների տարածքը, կարող էին զետեղվել կրոմլեխների քարերի տակ, դրանց դրսից կամ ներսից կից փոքր քարարկղներում, ինչպես նաև՝ դամբարան իջեցվել կամ տեղադրվել դամբանասրահների կցակառույցներում:

Հանգուցյալի հիշատակի մեծարանքը

Հանգուցյալի հիշատակին նվիրված ծիսական արարողությունների ժամանակ ջրի օգտագործման վերաբերյալ տվյալներ կարելի է քաղել ազգագրական ուսումնասիրություններից, որոնց համաձայն, հիշատակի ծիսակատարությունները բաժանվում են հետևյալ փուլերի՝ հոգեհաց, այգ/էգնահող, յոթ, քառասունք, տարի, սգո շրջան (Харатян 1989, 30–38; Вардanян, Тер-Саркисянц 2012, 357): Ընդունված էր գերեզմաններ այցելել նաև մեռելոցներին՝ տաղավար տոների հաջորդ օրը: Այդ բոլոր արարողությունների համար ընդհանուր էր այն սովորությունը, որ գերեզմանոցից վերադառնալուց հետո՝ տուն մտնելուց առաջ, սգո արարողության մասնակիցներից յուրաքանչյուրը պարտավոր էր լվանալ իր ձեռքերը (Вардanян, Тер-Саркисянц 2012, 355; Харатян 2014, 264): Այդ նպատակով կանայք թասերով ջուր էին լցնում հուղարկավորությունից վերադարձած մարդկանց ձեռքերին: Համարվում էր, որ գերեզմաններից վերադարձածները պետք է «մաքրվեին»՝ լվանալով ու սրբելով իրենց վրայից այն ամենը, ինչը իրենց կապում էր մահացածի և հանդերձյալ աշխարհի հետ (Вардanян, Тер-Саркисянц 2012, 355):

Վերևում խոսեցինք նաև դամբանախցերի ծածկասալերին արված անցքերի մասին: Կարծում ենք, որ դրանք կարող էին օգտագործվել ննջեցյալների հիշատակին ձոնված ծիսակատարությունների ժամանակ հեղումներ կատարելու համար: Հանգուցյալի շիրմին ջուր հեղելու սովորության արձագանքները դարեր շարունակ պահպանվել են հայոց մեջ (Харатян 1989, 36): Հին Հնդկաստանում ընդունված էր մահացածներին ընծայաբերել ջուր և եփած բրնձից պատրաստված ուտելիքներ (Махабхарата 1985, 449): Հին հույները ևս, ի թիվս այլ խմիչքների, մեռյալներին հեղումներ էին կատարում ջրով (Яйленко 1990, 20): Ենթադրություն է արվել, որ թաղման ծեսերում և մեռելոցների ժամանակ շիրմին ջուր հեղելու սովորությունը սերտ աղերսներ ուներ ննջեցյալների վերածննդի հավատալիքների հետ (Элиаде 1987, 75): Ջրի գործածությունը, սակայն, ոչ միայն հիշյալ հավատալիքների հետ էր կապվում: Բավական է հիշել հնագույն Հունաստանում մեռյալների համար նախատեսված Հադեսի մռայլ թագավորությունը:

Շումերում ևս անդրաշխարհի վերաբերյալ այլ պատկերացումներ էին գերիշխում, սակայն այնտեղ էլ ընդունված էր ննջեցյալի հոգուն նվիրաբերել տաք ու սառը ջուր, ինչպես նաև կաթ, գարեջուր, գինի և այլ խմիչքներ (Kramer 1981, 339, 340):

Հայաստանի որոշ բնակավայրերում թաղման հաջորդ օրվա առավոտյան՝ *այգը* կատարելիս, մահացածի հարազատները (հիմնականում կանայք) գնում էին գերեզմանոց, որտեղ կանանցից մեկը ջուր էր լցնում նոր սարքած գերեզմանաթմբին (Харатян 1989, 36): Բացառված չէ, որ այս արարողությունը դիակիզման հաջորդ օրվա համապատասխան ծիսակատարության ուշ արձագանքը լինի: Ասվածի անուղղակի հիմնավորում կարելի է համարել այն հանգամանքը, որ հայոց մեջ պահպանվել են դիակիզման ծիսակատարության այլ հետքեր ևս: Օրինակ, անցած դարասկզբին խոյեցիները՝ համայնքի որևէ անդամի հուղարկավորությունից անմիջապես հետո հենց գերեզմանաթմբի վրա ցախ էին դարսում ու վառում, իսկ Գանձակի Բանանց գյուղի բնակիչները նույնն անում էին երեկոյան (Լալայան 1928, 95):

Եզրակացություններ

Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի թաղման ծեսերում ջրի օգտագործման վերաբերյալ հնագիտական «տվյալների» փուլ առ փուլ քննելը զգալիորեն ընդլայնում է քննարկվող հարցի վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները: Նման մեթոդի կիրառման շնորհիվ պարզվում է, որ զգալի քանակությամբ ջուր է օգտագործվել բոլոր ծիսակարգերը կատարելիս՝ ննջեցյալին թաղման նախապատրաստելուց սկսած, մինչև նրա հիշատակին նվիրված ծիսակատարությունները: Ստացված արդյունքները չի կարելի անսպասելի համարել, քանի որ ջուրը, որպես տիեզերական նախասկիզբ և կյանքի աղբյուր, իր առաջնակարգ տեղն ուներ նաև այնկողմնային աշխարհի մասին հնագույն պատկերացումներում: Բոլոր դեպքերում ակնհայտ է դառնում տարբեր մշակույթների ու դարաշրջանների թաղման ծեսերի պահպանողականությունը: Մասնավորապես, քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում թաղման դիակիզման եղանակը չի կիրառվել, սակայն դրա հետքերը նկատելի են ավելի քան մեկ ու կես հազարամյակ հետո:

Ակնհայտ է դառնում նաև, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ կերպ կմեկնաբանվեն թաղման ծեսերի այս կամ այն ծիսակարգերը կամ արարողությունները, դրանք միջգիտակարգային ուսումնասիրության կարիք ունեն ու չեն կարող լրիվ վերականգնվել բացառապես հնագիտության շրջանակներում: Քննարկվող հարցի համակողմանի վերակազմությանը կարելի է հասնել միայն հարակից գիտակարգերում ստացված արդյունքների համադրման ու միավորման ճանապարհով:

Շնորհակալական

Հոդվածի քննարկման ընթացքում արված արժեքավոր տեղեկությունների և դիտողությունների համար շնորհակալություն ենք հայտնում մշակութային ազգա-

բան Լ. Աբրահամյանին, հնագետներ Պ. Ավետիսյանին, Ռ. Բադալյանին, Ա. Հարությունյանին, Բ. Գասպարյանին:

Գրականություն/References/Литература

1. Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Acharyan H. 1979, Etymological Root Dictionary of Armenian Language, vol. 4, Yerevan, Yerevan University Press (in Armenian).
2. Ամիրյան Ս. 1969, Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում, Պատմա-բանասիրական հանդես, N 3, 268–275:
   Amiryan S. 1969, A New Archaeological Discovery on the Territory of Yerevan, Historical-Philological Journal, N 3, 268–275 (in Armenian).
3. Ավետիսյան Պ.Ս. 1987, Դամբարանների պեղումներ Թալինի շրջանում, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ՍՍՀ ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 23–24:
   Avetisyan P.S. 1987, Excavation of Tombs in Talin District, Arakelyan B.N. (ed.), Abstracts of the Scientific Session Dedicated to the Results of the 1985–1986 Field Archaeological Work in the Armenian SSR, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 23–24 (in Armenian).
4. Եսայան Ս., Կանեցյան Ա. 1986, Օշականի անտիկ դամբարանների ձևերն ու կառուցվածքը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 66–73:
   Yesayan S., Kanetsyan A. 1986, Forms and Structure of Antique Tombs of Oshakan, Herald of Social Sciences, N 1, 66–73 (in Armenian).
5. Թումանյան Գ.Ս. 1993, Ջրվեժի վաղբրոնզեդարյան N 1 դամբանաբլուրի պեղումները, Տիրացյան Գ.Ա., Քալանթարյան Ա.Ա., Արեշյան Գ.Ե. (խմբ.), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, հ. I, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 7–14:
   Tumanyan G.S. 1993, Excavations of Early Bronze Age Barrow No. 1 in Jrvezh, in Tiratsyan G.A., Kalantaryan A.A., Areshyan G.Y. (eds), Archaeological Works in the New Constructions of Armenia, vol. I, Yerevan, Academy of Sciences of Armenia Press, 7–14 (in Armenian).
6. Թումանյան Գ.Ս. 1997, Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 249–262:
   Tumanyan G.S. 1997, The Late Bronze Age Tombs in Khojabager of Ashtarak, Historical-Philological Journal, N 2, 249–262 (in Armenian).
7. Թումանյան Գ. 2005, Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան N 5 դամբարանը (Թաղման ծեսը մեկնաբանելու փորձ), Պատմա-բանասիրական հանդես, N 3, 160–172:
   Tumanyan G. 2005, Late Bronze Age Barrow No. 5 in Aruch Cemetery (An Attempt of Funeral Rites Interpretation), Historical-Philological Journal, N 3, 160–172 (in Armenian).
8. Թումանյան Գ. 2009, Արուճի դամբարանադաշտի N 7 ու N 9 դամբանաթմբերի և թաղման ծեսին առնչվող որոշ հարցերի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 2–3, 234–248:
   Tumanyan G. 2009, On N 7 and N 9 Burial Mounds of Aruch Cemetery and Some Issues Related to Funerary Rites, Historical-Philological Journal, N 2–3, 234–248 (in Armenian).

9. Լալայան Ե. 1928, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, N 3, 82–118:
Lalayan Y. 1928, Development of Burials and Graves in Armenia, Bulletin of the Institute of Science and Art of the Armenian SSR, N 3, 82–118 (in Armenian).

10. Խանզադյան Է. 1979, Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Khanzadyan E. 1979, Elar-Darani, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

11. Խնկիկյան Օ. 1978, Պեղումներն Անգեղակոթում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, 99–107:
Khnkikyan O. 1978, Excavations in Angeghakot, Herald of Social Sciences, N 3, 99–107 (in Armenian).

12. Հարությունյան Ս. 1975, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Harutyunyan S. 1975, The Genre of Curses and Blessings in Armenian Folklore, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

13. Հոմերոս 1955, Իլիական (հին հուն. բնագրից թարգմ. Հ. Համբարձումյանը), Երևան, «Հայպետհրատ»:
Homer 1955, Iliad (Translated from the Ancient Greek Original by H. Hambartsumyan), Yerevan, Haypethrat (in Armenian).

14. Հոմերոս 1988, Ոդիսական (հին հուն. թարգմ. Հ. Համբարձումյանը), Երևան, ԵՊՀ հրատ.:
Homer 1988, Odyssey (Translated from the Ancient Greek by H. Hambartsumyan), Yerevan, Yerevan State University Press (in Armenian).

15. Մնացականյան Հ. 1959, Դամբարանի պեղումները Գոլովինո գյուղում, Ղաֆադարյան Կ. (խմբ.), Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, h. 5, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 5–62:
Mnatsakanyan H. 1959, Excavations of a Sepulchre in the Village of Golovino, Kafadaryan K. (ed.), Proceedings of the State Historical Museum of Armenia, vol. 5, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 5–62 (in Armenian).

16. Абибуллаев О.А. 1982, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, «Элм».
Abibullaev O.A. 1982, Eneolithic and Bronze Age on the Territory of the Nakhichevan ASSR, Baku, Elm (in Russian).

17. Алекшин В.А. 1986, Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ (По археологическим материалам Средней Азии и Ближнего Востока), Ленинград, «Наука».
Alekshin V.A. 1986, Social Structure and Funeral Rites of Ancient Agricultural Societies (Based on Archaeological Materials of Central Asia and the Middle East), Leningrad, Nauka (in Russian).

18. Антонова Е.В. 1984, Очерки культуры древних земледельцев Передней и Средней Азии. Опыт реконструкции мировосприятия, Москва, «Наука».
Antonova E.V. 1984, Essays on the Culture of Ancient Farmers of Western and Central Asia. An Attempt of Reconstruction of Worldview, Moscow, Nauka (in Russian).

19. Варданян Л.М., Тер-Саркисянц А.Е. 2012, Похоронно-поминальные обряды и обычаи, Варданян Л.М., Саркисян Г.Г., Тер-Саркисянц А.Е. (ред.), Армяне, Москва, «Наука», 352–363.

Vardanyan L.M., Ter-Sarkisyants A.E. 2012, Funeral and Memorial Rites and Customs, Vardanyan L.M., Sargsyan G.G., Ter-Sarkisyants A.E. (eds), Armenians, Moscow, Nauka, 352–363 (in Russian).

20. Гамкрелидзе Т.В., Иванов В.В. 1984, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, изд. Тбилисского университета.
Gamkrelidze T.V., Ivanov V.V. 1984, Indo-European and Indo-Europeans, pt. 2, Tbilisi, Tbilisi State University Press (in Russian).

21. Гуммель Я.И. 1940, Археологические очерки (сборник статей), Баку, изд. АзФАН.
Hummel Ya.I. 1940, Archaeological Essays (Collection of Articles), Baku, AzBAS Press (in Russian).

22. Гуммель Я.И. 1948, Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана, Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 20, 15–28.
Hummel Ya.I. 1948, Some Monuments of the Early Bronze Age of Azerbaijan, Brief Reports of the Institute of the History of Material Culture, vol. 20, 15–28 (in Russian).

23. Гуммель Я.И. 1949, Курган № 2 близ Ханлара (дополнительные сведения), Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 24, 55–58.
Hummel Ya.I. 1949, Kurgan N 2 Near Khanlar (Additional Information), Brief Reports of the Institute of the History of Material Culture, vol. 24, 55–58 (in Russian).

24. Джафаров Г.Ф. 1983, Исследования в бассейне Инджичая, Археологические открытия 1981 года, Москва, «Наука», 421.
Jafarov G.F. 1983, Research in the Injichai Basin, Archaeological Discoveries of 1981, Moscow, Nauka, 421 (in Russian).

25. Дюмезиль Ж. 1976, Осетинский эпос и мифология (перевод с французского А.З. Алмазовой), Москва, «Наука».
Dumezil J. 1976, Ossetian Epic and Mythology (Translated from French by A.Z. Almazova), Moscow, Nauka (in Russian).

26. Есаян С.А. 1987, Работы Ошаканской экспедиции, Археологические открытия 1985 года, Москва, «Наука», 561.
Yesayan S.A. 1987, Works of Oshakan Expedition, Archaeological Discoveries of 1985, Moscow, Nauka, 561 (in Russian).

27. Иванов В.В., Топоров В.Н. 1974, Исследования в области славянских древностей. Лексические и фразеологические вопросы реконструкции текстов, Москва, «Наука».
Ivanov V.V., Toporov V.N. 1974, Research in the Field of Slavic Antiquities. Lexical and Phraseological Issues of Reconstruction of Texts, Moscow, Nauka (in Russian).

28. Ивановский А.А. 1911, По Закавказью, Материалы по археологии Кавказа, вып. VI, Москва, «Товарищество типографии А.И. Мамонтова».
Ivanovsky A.A. 1911, On Transcaucasia, Materials on the Archaeology of the Caucasus, vol. VI, Moscow, A.I. Mamontov Printing Company (in Russian).

29. Леонова Н.Б., Смирнов Ю.А. 1977, Погребение как объект формального анализа, Краткие сообщения Института археологии, вып. 148, 16–23.
Leonova N.B., Smirnov Yu.A. 1977, Burial as an Object of Formal Analysis, Brief Reports of the Institute of Archaeology, vol. 148, 16–23 (in Russian).

30. Махабхарата 1962, Лесная (перевод, введение, примечания и толковый словарь Б.Л. Смирнова), Ашхабад, изд. АН Туркменской ССР.
Mahabharata 1962, The Forest (Translation, Introduction, Notes and Explanatory Dictionary by B.L. Smirnov), Ashgabat, Academy of Sciences of the Turkmen SSR Press (in Russian).

31. Махабхарата 1985, «Горец» (перевод, введение, примечания и толковый словарь Б.Л. Смирнова), Ашхабад, «Ылым».
Mahabharata 1985, Highlander (Translation, Introduction, Notes and Explanatory Dictionary by B.L. Smirnov), Ashgabat, Ylym (in Russian).

32. Мерперт Н.Я., Мунчаев Р.М. 1982, Погребальный обряд племен халавской культуры (Месопотамия), Гуляев В.И. (ред.), Археология Старого и Нового Света, Москва, «Наука», 28–49.
Merpert N.Ya., Munchaev R.M. 1982, Funerary Rites of Tribes of the Halaf Culture (Mesopotamia), Gulyaev V.I. (ed.), Archaeology of the Old and New World, Moscow, Nauka, 28–49 (in Russian).

33. Мещанинов И.И. 1930, Кромлехи, Известия Государственной академии истории материальной культуры, т. VI, вып. III.
Meshchaninov I.I. 1930, Cromlechs, Proceedings of the State Academy of the History of Material Culture, vol. VI, iss. III (in Russian).

34. Младшая Эдда 1970, Младшая Эдда (Издание подготовили О.А. Смирницкая и М.И. Стеблин-Каменский), Ленинград, «Наука».
The Younger Edda 1970, The Younger Edda (ed. by O.A. Smirnitskaya and M.I. Steblin-Kamensky), Leningrad, Nauka (in Russian).

35. Никитина Г.Ф. 1974, Погребальный обряд культур полей погребений Средней Европы в I тысячелетии до н.э. – первой половине I тысячелетия н.э., Седов В.В. (ред.), Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н.э. – I тысячелетии н.э., Москва, «Наука», 5–132.
Nikitina G.F. 1974, Funerary Rites of Burial Field Cultures of Central Europe in the 1st Millennium BC – First Half of the 1st Millennium AD, Sedov V.V. (ed.), Funerary Rites of Tribes of Northern and Central Europe in the 1st millennium BC – 1st millennium AD, Moscow, Nauka, 5–132 (in Russian).

36. Пропп В.Я. 1963, Русские аграрные праздники (Опыт историко-этнографического исследования), Ленинград, изд. Ленинградского университета.
Propp V.Ya. 1963, Russian Agrarian Holidays (Experience of Historical and Ethnographic Research), Leningrad, Leningrad University Press (in Russian).

37. Пропп В.Я. 1986, Исторические корни волшебной сказки, Ленинград, изд. Ленинградского университета.
Propp V.Ya. 1986, Historical Roots of Fairy Tale, Leningrad, Leningrad University Press (in Russian).

38. Ригведа 1972, Избранные гимны (перевод, комментарий и вступительная статья Т.Я. Елизаренковой), Москва, «Наука».
Rigveda 1972, Selected Hymns (Translation, Commentary and Introductory Article by T.Ya. Elizarenkova), Moscow, Nauka (in Russian).

39. Симонян А.Е. 1984, Культура эпохи средней бронзы северных районов Армянского нагорья, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ленинград.
Simonyan A.E. 1984, Middle Bronze Age Culture of Northern Regions of Armenian Highlands, Abstract of the Thesis for Candidate of Historical Sciences Degree, Leningrad (in Russian).

40. Симонян А.Е. 1990, Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения N 12 из могильника Верин Навер), Историко-филологический журнал, N 1, 188–208.
Simonyan A.E. 1990, A New Interpretation of the Sociocultural Community of the Middle Bronze Age of Armenia (According to Data of Burial No. 12 from the Verin Naver Cemetery), Historical-Philological Journal, N 1, 188–208 (in Russian).

41. Тер-Мартиросов Ф.И. 1984, Раскопки в Ширакаване, Археологические открытия 1982 года, Москва, «Наука», 445–446.
Ter-Martirosov F.I. 1984, Excavations in Shirakavan, Archaeological Discoveries of 1982, Moscow, Nauka, 445–446 (in Russian).

42. Толстой Н.И. 1990, Переворачивание предметов в славянском погребальном обряде, Иванов В.В., Невская Л.Г. (ред.), Исследования в области балто-славянской духовной культуры: погребальный обряд, Москва, «Наука», 119–128.
Tolstoy N.I. 1990, Turning Over the Objects in the Slavic Funeral Rite, Ivanov V.V., Nevskaya L.G. (eds), Research in the Field of Balto-Slavic Spiritual Culture: Funerary Rites, Moscow, Nauka, 119–128 (in Russian).

43. Флиттнер Н.Д. 1958, Культура и искусство Двуречья и соседних стран, Ленинград-Москва, «Искусство».
Flittner N.D. 1958, Culture and Art of the Mesopotamia and Neighboring Countries, Leningrad-Moscow, Iskusstvo (in Russian).

44. Харатян З.В. 1989, Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, Вардумян Д.С., Мкртумян Ю.И. (ред.), Армянская этнография и фольклор, вып. 17, Ереван, изд. АН АрмССР, 5–62.
Kharatyan Z.V. 1989, Cult Motifs of Family Customs and Rituals Among Armenians, Vardumyan D.S., Mkrtumyan Yu.I. (eds), Armenian Ethnography and Folklore, iss. 17, Yerevan, Academy of Sciences of Armenian SSR Press, 5–62 (in Russian).

45. Харатян З.В. 2014, Похоронно-поминальная обрядность [у армян Тавуша], Арутюнян и др. (ред.), Армянская народная культура, вып. XVI, Ереван, «Гитутюн», 258–266.
Kharatyan Z.V. 2014, Funeral Ceremonies [Among the Armenians of Tavush Region], Armenian Folk Culture, vol. XVI, Harutyunyan et al. (eds), Yerevan, Gitutyun, 258–266 (in Russian).

46. Хачатрян Т.С. 1975, Древняя культура Ширака, Ереван, изд. Ереванского университета.
Khachatryan T.S. 1975, Ancient Culture of Shirak, Yerevan, Yerevan State University Press (in Russian).

47. Хачатрян Т.С. 1979, Артикский некрополь: каталог, Ереван, изд. Ереванского университета.
Khachatryan T.S. 1979, Artik Necropolis: Catalog, Yerevan, Yerevan State University Press (in Russian).

48. Церен Э. 1966, Библейские холмы (перевод с немецкого Н.В. Шафранской), Москва, «Наука».
Zehren E. 1966, Bible Hills (Translated from German by N.V. Shafranskaya), Moscow, Nauka (in Russian).

49. Чубинишвили Т.Н. 1952, Древнейшие грунтовые погребения Самтаврского могильника, Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 46, 54–61.
Chubinishvili T.N. 1952, The Oldest Pitgraves of the Samtavro Burial Ground, Brief Reports of the Institute of History of Material Culture, vol. 46, 54–61 (in Russian).

50. Элиаде М. 1987, Космос и история. Избранные работы, Москва, «Прогресс».
Eliade M. 1987, Space and History. Selected Works, Moscow, Progress (in Russian).

51. Эпос о Гильгамеше 1961, «О все видавшем» (перевод с аккадского, статья и коммент. И.М. Дьяконова), Москва-Ленинград, изд. АН СССР.
The Epic of Gilgamesh 1961, "He who saw all" (Translated from Akkadian, Article and Commentary by I.M. Dyakonov), Moscow-Leningrad, USSR Academy of Sciences Press (in Russian).

52. Яйленко В.П. 1990, Архаическая Греция и Ближний Восток, Москва, «Наука».
Yaylenko V.P. 1990, Archaic Greece and the Near East, Moscow, Nauka (in Russian).

53. Badalyan R.S., Avetisyan P.S. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Oxford, Archaeopress.

54. Childe V.G. 1925, The Dawn of European Civilization, London, Routledge & Kegan Paul.

55. de Morgan J. 1889, Mission scientifique au Caucase; études archéologiques & historiques, I, Paris, Ernest Leroux.

56. Genç E. 2016, 2014 Yili Kuriki Höyük Kazisi, 37, Kazi Sonuçlari Toplantisi, 3 Cilt, Ankara, 165–182.

57. Herodotus 1890, The History of Herodotus, vol. I (Translated by G.C. Macaulay), London-New York, Macmillan and CO.

58. Jones G.H. 1903, The Dawn of European Civilization, London, Kegan Paul, Trench, Trübner & CO.

59. Kramer S.N. 1963, The Sumerians. Their History, Culture and Character, Chicago- London, Chicago University Press.

60. Kramer S.N. 1981, History Begins at Sumer. Thirty-Nine Firsts in Recorded History, Philadelphia, Pennsilvania University Press.

61. Oppenheim A.L. 1977, Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization, Chicago-London, Chicago University Press.

62. Ramishvili A. 2004, A Threshing Board of the Middle Bronze Age From Georgia, Journal of Georgian Archaeology, N 1, 114–119.

63. Sturluson S. 1987, Edda (Translated and Edited by A. Faulkes), London, Everyman.

64. Tumanyan G. 2015 [2016], The Burials Discovered During Excavations of the Trench H_{12} at Agarak Archaeological Complex, Aramazd: Armenian Journal of Near-Eastern Studies, vol. IX (2), 110–121.

65. Vogel H. 2013, Death and Burial, Crawford H. (ed.), The Sumerian World, London-New York, Routledge, 419–434.

ԱՍԼԱՆԻ ՎԻՊԵՐԳԻ ԱՆՀԱՅՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ

THE UNKNOWN VERSION OF THE BALLAD OF ASLAN

НЕИЗВЕСТНАЯ ВЕРСИЯ БАЛЛАДЫ АСЛАНА

Սամվել Ռամազյան
Samvel Ramazyan
Самвел Рамазян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

samvel.ramazyan@ysu.am

Ներկայացվել է՝ 03.12.2024; գրախոսվել է՝ 29.01.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 03.12.2024; Revised: 29.01.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 03.12.2024; рецензировано: 29.01.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-230

Ամփոփում – Ասլանի վիպերգը («Ասլան աղա» կամ «Կագուան Ասլան») հայտնի է դարձել XIX դ. վերջերից և դասվել միևնույն ժամանակահատվածում գրառված հայ միջնադարյան վիպական ստեղծագործությունների շարքում: Այն վիպական բանահյուսության չափածո երգային ստեղծագործություն է, որում ամփոփված են հնագույն առասպելաբանական ենթաշերտեր: Վիպերգը տարածված է եղել հիմնականում Մոկսում և գրառվել է ինչպես տեղաբնակ, այնպես էլ Արևելյան Հայաստանում հանգրվանած մոկացի ասացողներից: Ընդհանուր առմամբ, հայտնի է վիպերգի 5 տարբերակ: Հայտնի է նաև Մոկսի տարածքից դուրս վիպերգի մեկ այլ տարբերակի («Կական Ասլան») գրառման մասին, որը, սակայն, մեզ չի հասել: Թեմայով միակ պահպանված փաստաթուղթը բանահավաք Բենսեի (Սահակ Մովսիսյան) 1914 թ. նամակն է Երվանդ Լալայանին, որի տեքստն ամբողջությամբ ներկայացվում է առաջին անգամ: Նամակում Բենսեն պատրաստակամություն է հայտնում տպագրության համար պարբերաբար Թիֆլիս ուղարկել իր գրառած բանահյուսական նյութերից, մասնավորապես նշելով չափածո ստեղծագործություններ՝ «Կական Ասլան», «Ալեքսանոս» և «Հովհաննես Գոյանցի»: Եթե առաջին երկուսը հայտնի են այլ բանահավաքների գրառած տարբերակներով, ապա վերջինն անհայտ է: Բոլոր գրառված նյութերն անհետ կորել են 1915 թ. սկսված ցեղասպանության տարիներին: Հոդվածի գիտական նորույթն այն է, որ Ասլանի վիպերգը, փաստորեն, տարածված է եղել ոչ միայն Մոկսում, այլ նաև Մոկսից դուրս, հարևան շրջաններում: Ի թիվս այլ անվանումների՝ վիպերգը հայտնի է եղել նաև «Կական Ասլան» անվամբ: «Կական» մականունը նույնական է բանահավաք Սարգիս Հայկունու գրառած տարբե-

րակից հայտնի «Կագուանի» հետ: Երկու դեպքում էլ ընդգծվում է վիպերգի հերոսի հրեշ-տակամարտ լինելը, ինչը միանգամայն համահունչ է վիպերգի բովանդակությանը:

Abstract – The ballad of Aslan ("Aslan Agha" or "Kaguan Aslan") became known in the 19th century and is considered one of the Armenian medieval epic works recorded in the same period. It is a poetic and song work of epic folklore containing ancient mythological substrates. The ballad of Aslan was widespread mainly in Moks and was recorded by both local and Moks' narrators who settled in Eastern Armenia. In general, 5 versions of the ballad are known. Another version of the ballad ("Kakan Aslan") is known to have been recorded outside of Moks' territory, but it has not come down to us. The only preserved document on the subject is the letter of folklorist Bense (Sahak Movsisyan) to Yervand Lalayan from 1914, the text of which is presented in its entirety for the first time. In the letter, Bense expresses his willingness to periodically send his records of folklore materials to Tiflis for publication, in particular, mentioning the poetic works "Kakan Aslan", "Alexanos" and "Hovhannes Goyantsi". The first two are known from versions recorded by other folklorists, the last is unknown. All the recorded materials were lost without a trace during the genocide that began in 1915. The scientific novelty of the article is that Aslan's ballad was, in fact, widespread not only in Moks but also in neighboring regions outside of Moks. Among other names, the ballad was also known under the name "Kakan Aslan". The nickname "Kakan" is identical to the name "Kaguan", known from the version recorded by folklorist Sargis Haykuni. In both cases, the struggle of the hero of the ballad with the angel is emphasized, which is completely consistent with the content of the ballad.

Аннотация – Баллада Аслана («Аслан-ага» или «Кагуан Аслан») – стихотворно-песенное произведение эпического фольклора – стала известна в XIX веке и считается одним из армянских средневековых эпических произведений, записанных в тот же период. Данная баллада содержит древние мифологические субстраты. Баллада Аслана была распространена в основном в Моксе и записана как с уст местных, так и нашедших пристанище в Восточной Армении сказителей. В общей сложности известно 5 версий баллады. Однако помимо этих версий есть еще одна, не дошедшая до нас версия баллады («Какан Аслан»), записанная за пределами Мокса. Единственным сохранившимся документом, имеющим отношение к этой теме, является письмо фольклориста Бенсе (Саака Мовсисяна) Ерванду Лалаяну, датированное 1914 г., текст которого впервые приводится целиком. В своем письме Бенсе выражает готовность периодически отправлять сделанные им записи фольклорных материалов в Тифлис для публикации. Речь идет, в частности, о стихотворных произведениях «Какан Аслан», «Алексанос» и «Ованес Гоянци». При этом первые два известны по версиям, записанным другими фольклористами, а последнее неизвестно. Все записанные материалы были бесследно утеряны во время геноцида в 1915 г. Научная новизна статьи состоит в том, что баллада Аслана на самом деле была широко распространена не только в Моксе, но и в соседних регионах за пределами Мокса. Она была известна также под названием «Какан Аслан». Прозвище «Какан» идентично имени «Кагуан» из версии, записанной фольклористом Саргисом Айкуни. В обеих версиях подчеркивается борьба героя баллады с ангелом, что полностью соответствует содержанию баллады.

Հիմնաբառեր – «Ասլան աղա» վիպերգ, «Կական Ասլան», «Կագուան Ասլան», Մուշ, Մոկս:

Keywords – Ballad "Aslan Agha", "Kakan Aslan", "Kaguan Aslan", Mush, Moks.
Ключевые слова – баллада «Аслан-ага», «Какан Аслан», «Кагуан Аслан», Муш, Мокс.

Ներածություն

«Ասլան աղա» կամ Ասլանի վիպերգը (ballad) հայտնի է դարձել XIX դ. վերջերից՝ դասվելով միևնույն ժամանակահատվածում գրառված հայ միջնադարյան վիպական ստեղծագործությունների շարքը («Կարոս խաչ», «Մոկաց Միրզա», «Նարեկացի» ևն): Այն իրապես վիպական բանահյուսության չափածո երգային ստեղծագործություն է, որում ամփոփված են հնագույն առասպելաբանական ենթաշերտեր: Մինչ այժմ հայտնի է վիպերգի 5 տարբերակ, դրանք են՝

- Գարեգին Հովսեփյանի՝ Վաղարշապատում հանգրվանած մոկաց բանասացներից գրառված «Ասլան Աղէն» ընդհանուր վերնագրով 2 տարբերակը, որոնք հրատարակվել են 1892 թ. «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից» ժողովածուի մեջ (Յովսէփեանց 1892, 3–11),
- Սարգիս Հայկունու՝ Վաղարշապատում մոկաց բանասացից գրառած և 1906 թ. հրատարակածը՝ «Կագուան Ասլան» վերնագրով (ԷԱԺ 1906, 13–15),
- Հովսեփ Օրբելու 1911 թ. Մոկսում տեղացի բանասացից գրառած տարբերակը՝ «Ասլան աղէն», որը հրատարակվել է 1982 թ. և ավելի ուշ (հայերեն և ռուսերեն՝ Орбели 1982, 105–107; Орбели 2002, 102–104),
- Սերինեի (Ս. Ավագյան)՝ Վանի Արճակ շրջանից գրառած և 1978 թ. հրատարակված «Ասլան աղեն» (ՀԱԲ 1978, 135–136):

Առկա տեղեկատվության համաձայն՝ վիպերգի մի ամբողջական երգային տարբերակ 1920-ական թթ. ձայնագրել է երգահան Սպիրիդոն Մելիքյանը, ինչը, սակայն, չի հայտնաբերվել (Խուդաբաշյան 2001, 80): Որոշ տվյալներից դատելով՝ այն պետք է նույնական լինի Մոկսում Հ. Օրբելու գրառած տարբերակին: Վստահաբար առկա են նաև անտիպ տարբերակներ, որոնց ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

Գ. Հովսեփյանի գրառած վիպերգի առաջին տարբերակը ֆրանսերեն է թարգմանել և 1903 թ. Փարիզում «Հայ ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ հրատարակել Արշակ Չոպանյանը, Le Seigneur Aslan վերնագրով (Chants populaires arméniens 1903, 173–177): Ընդգրկված լինելով երգարվեստին նվիրված ժողովածուի մեջ՝ այն պատշաճ ուշադրության չի արժանացել եվրոպական գիտական հանրության կողմից: Միևնույն տարբերակը 1916 թ. ռուսերեն է թարգմանել և «Владыка Аслан» վերնագրով հայ բանաստեղծության ժողովածուի մեջ հրատարակել Վալերի Բրյուսովը (Брюсов 1916, 130–134): Առավելապես եվրոպական գիտական շրջանակներում հայտնի է Հայկունու գրառած տարբերակի հիման վրա Բագրատ Խալաթյանի գերմաներեն արձակ թարգմանությունը (Chalatianz 1909, 368–369), որը 1909 թ. Բեռլինում հրատարակվել է միջազգային բանահյուսական ժողովածուի հայկական բաժնում (Armenische Heiligenlegenden): Թեև Խալաթյանը համապատասխան ծանուցմամբ ճշտությամբ նշել է «Կագուան Ասլանի» և մյուս թարգմանված վիպերգերի աղբյուրը (Chalatianz

1909, 364), այնուամենայնիվ, եվրոպական և ընդհանրապես միջազգային գիտական շրջանակներում վիպերգի այս տարբերակը (Kaguan Aslan) հայտնի է դարձել հենց Խալաթյանի անվամբ, ինչը գերիշխում է մինչ այժմ (օրինակ, Վ. Ժիրմունսկին ևս սխալմամբ վիպերգի գրառող է նշում Բ. Խալաթյանցին՝ Жирмунский 1962, 163): Ըստ էության, գերմաներեն տեքստը Հայկունու տարբերակի համառոտ վերաշարադրանքն է:

Վիպերգը ժամանակին քննության են ենթարկել Մանուկ Աբեղյանը (Աբեղյան 1966, 507–513) և Սարգիս Հարությունյանը: Մ. Աբեղյանն այն դասել է «պարզոտնյա» խառն ոտանավորներով հորինված նմանօրինակ այլ վիպերգերի շարքը, «որոնք մինչև 20-րդ դարի երկրորդ տասնամյակը, գուցե և մինչև վերջերս ոչ թե ասվում էին, այլ երգվում» (Աբեղյան 1971, 309): Ս. Հարությունյանը վիպերգին անդրադարձել է առավելապես հոգեառ հրեշտակի կերպարի և հոգեառի (գրող) դեմ կռվի հավատալիքի քննության տեսակետից (Հարությունյան 2000, 410–416): Մեկ այլ աշխատության մեջ Ս. Հարությունյանն «Ասլան աղան» դասում է այն ծավալուն վիպական երգերի շարքը, որոնց մեջ հարակցվել ու միաձուլվել են կրոնասառասպելաբանական, պատմական ու կենցաղային մոտիվներ, սյուժեներ, կերպարներ (Հարությունյան 2000, 177):

Վիպերգի հայտնի չորս տարբերակներից երեքի տեքստերը վերահրատարակվել են Գրիգոր Գրիգորյանի աշխատության մեջ (Գրիգորյան 1986, 203–211), առանձին քննարկվել են Ասլանի և Մարգարիտի կերպարները (Գրիգորյան 1991, 378–380): Վիպերգի գլխավոր հերոսի և «Սասնա ծռերի» Փոքր Մհերի կերպարային ընդհանրություններին անդրադարձել է Հովսեփ Օրբելին (Орбели 1982, 48, Орбели 2002, 27–28), վիպերգի տարբերակի գրառման հետ կապված, որը, սակայն, հրատարակվել է բավական ուշ: Ընդհանրապես, 1911–1912 թթ. Մոկսում Հ. Օրբելու գրառած նյութերը, այդ թվում՝ վիպերգի տարբերակը, առաջին անգամ հրատարակվել են 1982 թ., Մոսկվայում (Орбели 1982, 105–107), երկրորդ անգամ՝ 2002 թ., Երևանում (Орбели 2002, 102–104):

Բենսեի գրառած տարբերակը

Քիչ հայտնի փաստ է, որ ժամանակին վիպերգի մեկ այլ տարբերակ գրառել է նշանավոր բանահավաք Բենսեն (Սահակ Մովսիսյան, 1867–1939 թթ.), ըստ ամենայնի, հայրենի ծննդավայր Մշո Բուլանըխ գավառի Կոփ գյուղում կամ Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից մեկում, որտեղ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ (Ալաշկերտ, Խնուս, Բիթլիս): Ամեն դեպքում որևէ տեղեկություն կամ հիմք չկա մտածելու, թե խոսքը Մոկսում կամ մոկաց բանասացից գրառված ևս մեկ տարբերակի մասին է, որն արդեն բացառիկ տեղեկություն է:

Առկա տեղեկատվության համաձայն, 1900 թ.-ից հետո Բենսեն գրառել է Մոկսի բանահյուսությունից արդեն հայտնի վիպերգեր՝ «Կարոս խաչ», «Ալեքսանոս» և «Սասնա ծռերի» պատումներ (ՀԺՀ 1967, 548): Նշվում է նաև տվյալ ժամանակահատվածում Բենսեի գրառած «Կական Ասլան» վիպերգի մասին

(ՀԺՀ 1967, 552), որն, անշուշտ, Հայկունու տարբերակի «Կագուան Ասլան» վերնագիրն է հիշեցնում: Մասնավորապես, բանահավաք Երվանդ Լալայանին ուղղված 1914 թ. հունիսի 11-ի նամակում Բենսեն հայտնում է. «Պատրաստ ունեմ... Կական Ասլան, Յովանէս Գոյիանցին, Ալեքսանոս ժողովրդական ոտանաւորները» (ԳԱԹ, Ե. Լալայան, 105, Բենսեի նամակ, 2): Այսինքն՝ միանշանակ է, որ մինչև տվյալ ժամանակահատվածը «Կական Ասլանը» չափածո տեքստով գրառված է եղել բանահավաքի կողմից: Սակայն նման նյութ Բենսեի արխիվում մինչ այժմ չի հայտնաբերվել: Բենսեի որդու՝ բանաստեղծ Սողոմոն Տարոնցու (Մովսիսյան, 1905–1971 թթ.) ծանուցմամբ, նշված գրառումն այլ նյութերի հետ միասին անհետ կորել է Թիֆլիս ուղարկելիս (ՀԺՀ 1967, 552): Տվյալ տեղեկատվության համար որպես հիմք է վկայակոչվում Ե. Լալայանին ուղղված միևնույն նամակը, որում, սակայն, խոսվում է Կ. Պոլիս ուղարկված այլ նյութերի չհրատարակվելու և հետագայում Թիֆլիս, նրա ազգականներից Հարություն Մովսիսյանին առաքելու մասին (ԳԱԹ, Ե. Լալայան, 105, Բենսեի նամակ, 1):

Առկա տեղեկությունները թույլ են տալիս համոզվելու, որ 1900–1913 թթ. ընթացքում գրառված վիպերգի բանասացն է եղել Բենսեի հայրենակից Մշո Բուլանըխ գավառի Կոփ գյուղի բնակիչ Հակոբ Հադլոյանը (Հակոբ Հադլո, ծնվ. մոտ 1868 թ., անգրագետ հողագործ, հայտնի որպես հեքիաթասաց, երգասաց և առակախոս), որը 1915 թ. ջարդերից հետո գաղթել է Արևելյան Հայաստան, հաստատվել Սևանի շրջանի Դդմաշեն գյուղում, որտեղ էլ մահացել է 1930-ական թթ. (ՀԺՀ 1967, 563–564): Հ. Հադլոյանը եղել է Բենսեի թերևս ամենահայտնի տեղեկատու-բանասացը, որից 1900–1915 թթ. ընթացքում գրառած նյութերից Բենսեն նշել է «Սասնա ծռերի» մի տարբերակ («Սանասար ու Բաղդասար»), «Ալեքսանոսը», «Հովհաննես Գոյանցին», «Կարոս խաչը» և «և մի քանի այլ վիպական երգեր» (ՀԺՀ 1967, 564, հմմտ. ՀԱԲ 1972, 166): Տրամաբանական է, որ տվյալ վիպերգների շարքում, առաջին հերթին, պետք է լիներ վերը նշված «Կական Ասլանը»:

Վստահաբար, «կականը» Հայկունու գրառած տարբերակի «կագուանի» («կագվանի») հնչյունափոխված ձևն է: Ըստ Հ. Աճառյանի, «կագ» արմատի նշանակությունն է *վեճ, կռիվ*, որից՝ *կագասէր* և *կագացող*, այսինքն՝ կռվարար, *կագիլ*՝ կռվել: Նշվում են նույն արմատով կազմված այլ բառեր ևս՝ կագիմ, կագազարթոյց (Աճառյան 1973, 477), *կագ ու կռիվ զարթնեցնող, հարուցող, կռիվ գրգռող* իմաստներով (Մալխասեանց 1944, 358), նաև՝ կագական (ԱԲՀԼ 1865, 413): Ս. Մալխասյանցն իր հերթին «կագել» բայը ստուգաբանում է նաև *աղմուկ հարուցանել, վիճել, մաքառել, ընդդիմամարտել, հակառակել* իմաստներով (Մալխասեանց 1944, 358): Նշվում է նաև հին հունարեն κακίζω բառը՝ *սաստել, հանդիմանել, նեղել, անարգել, վիրավորել* և այլ իմաստներով (Beekes 2010, 620): Համանման արմատներ Հ. Աճառյանը նշում է պարսկերենում և թուրքերենում, մասնավորապես դասական պարսկերենում gāk և gawgā նշանակում են *աղմուկ, խառնաշփոթ* (Աճառյան 1973, 477), իսկ արդի թուրքերենում kavga նշանակում է *վեճ, կռիվ, ծեծկռտուք, աղմուկ*, kavgaci՝ «կռվարար, կռվա-

զան, աղմկարար», kavgali՝ «կռված, վիճած» ևն (Баскаков 1977, 523): Միևնույն բառն այլ ձևով հայերեն արմատի հետ համեմատվում է նաև 1865 թ. Հայկազյան բառարանում՝ «գավկա», «գավկաճը» (ԱԲՀԼ 1865, 413): Այսպիսով, «կագուանը» կարելի է ստուգաբանել որպես «կռվարար, ընդդիմացող, հակառակվող»: Հաշվի առնելով Գաբրիել հրեշտակի հետ Ասլանի մենամարտի դրվագը վիպերգում՝ նման մականունը միանգամայն համահունչ է գլխավոր հերոսի կերպարին: Ըստ այդմ, բոլոր տարբերակներով էլ խոսքը պետք է հրեշտակամարտ հերոսի մասին լինի, ինչն առնչվում է ոչ միայն «Սասնա ծռեր» էպոսին, այլև աստվածաշնչյան նահապետ Իսահակի որդի Հակոբի մենամարտի պատմությանը: Դրանից հետո է ի պատասխան Հակոբի համառ խնդրանքների՝ տրվում օրհնություն և նոր անուն՝ «Իսրայել» (Ծննդոց 32:24–30), եբրայերեն՝ «այր աստվածամարտ» (ԵԷԲԵ 1913, 387, հմմտ. Noegel, Wheeler 2002, 161):

Կական Ասլանը «Սասնա ծռեր» էպոսում

Ըստ երևույթին, «Կական Ասլան» անվամբ կերպար է եղել «Սասնա ծռերի» պատումներից առնվազն մեկում: Մասնավորապես, 1916 թ. մոտ 40-ամյա գավաշցի Մարգարիտ Սարգսյանից գրառված ԻԱ պատումում բազմիցս փոխկապակցված նշվում են Մելիքի ծառաներ կամ փահլևաններ Կականը և Ասլանը: Էպոսի առաջին իսկ ժողովածուի մեջ որպես ԻԱ պատումի գրառող է նշված բանահավաք Սենեքերիմ Տեր-Հակոբյանը (1881–1938 թթ.), որի արխիվում էլ ներկայումս պահպանվում է գրառման բնագիրը: Իրականում գավաշցի բանասացից պատումը գրառել է Արտաշես Շահինյանը, 1916 թ., Էջմիածնում (Սասնա ծռեր 1999, 30): Էպոսի պատումների 1977 թ. վերահրատարակության մեջ նյութը նշված է որպես Թ պատում (Սասնա ծռեր 1977, 509): Կականը և Ասլանը որոշ դերակատարություն ունեն Մսրա երկրում մանուկ Դավթի փորձությունների դրվագներում՝ կապված Մելիքի հոլը բռնելու, կրակով և ոսկով փորձվելու, ինչպես նաև Բանդի-Մահու գետի կամրջին Դավթին սպանելու՝ Մելիքի պատվերի հետ (Սասնա ծռեր 1936, 895–898), որը պատումների մեծ մասում սովորաբար բնորոշ է այլ կերպարների: Վերջին դրվագից պարզվում է, որ Կականն ու Ասլանը Դավթի հոր՝ Առյուծ Միերի նախկին ծառաներն են, Մելիքի կողմից գերեվարված, այսինքն՝ հարազատ սասունցի հերոսներ, որոնք խոստովանում են Մելիքի մտադրությունը, անցնում ծառայության մանուկ Դավթի մոտ և նրա հետ վերադառնում Սասուն (Սասնա ծռեր 1936, 898): Ձենով Հովանի ասելով՝ հենց նրանք են եղել Մեծ Միերի օգնականները որսորդության (նեճիր) ժամանակ (Սասնա ծռեր 1936, 903): Ի վերջո, Կականն ու Ասլանն օգնում են Դավթին բոլոր գործերում, պահապան կարգվում վերաշինված Մարութա վանքին և դիմադրում վանքն ավերելու համար հարձակված Կուզբադնի զորքին: Այսինքն՝ ասացողն արդարացնում և վերականգնում է առժամանակ հանգամանքների բերումով հակառակորդի ճամբարում հայտնված սասունցի հերոսներին և նրանց վերադարձնում հարազատ միջավայր՝ քավելու հակառակորդին գործակցելու մեղքը և վերականգնելու սեփական համբավը: Հետագայում հավատալով հակառակորդի

խաբեությանը Դավթի սպանության մասին՝ նրանք տեղի են տալիս և հեռանում (Սասնա ծռեր 1936, 905):

Այլ պատումներում Մելիքի կողմից Դավթին սպանելու համար «կարգված» փահլևանները սովորաբար առավել հայտնի կերպարներ են և պատումներում բազմիցս նշվող, այն է՝ Բաթմանա Բուղա և Չարբահար Քամի (տարբեր պատումներում նշվում է այլ անվանաձևերով՝ Բաթմանա Բողա, Չարբախա կամ Ճարպախար Քամի, նաև՝ Ճարպանա Ֆերըզ կամ Վեհրըզ, երբեմն հանդիպում է մեկ այլ կերպար՝ Ֆրենկը Դիվ կամ Ֆրենկիստանա Դիվ): Տվյալ կերպարներն ունեն միևնույն դերակատարությունը, որոշ դեպքերում ևս խոստովանում են Մեծ Միերին նախկինում ծառայած լինելը, անցնում ծառայության Դավթի մոտ և ապաստանում Սասունում: Ամեն դեպքում Մսրա Մելիքի ենթակա ծառաների այս և այլ բնորոշ անուններից (Բադին, Կոզբադին, Սուդին, Չարխադին ևն) մանավանդ Ասլանը խիստ տարբերվում է:

Հակառակ նշված այլ կերպարների բազմազանությանն ու հաճախականությանը՝ հենց Կականի և Ասլանի կերպարներն են ընդգրկվել էպոսի համահավաք տարբերակում, կրկին Մսրա փահլևանների թվում և մանուկ Դավթի փորձության դրվագի առնչությամբ (Սասունցի Դավիթ 1939, 169–171, Սասունցի Դավիթ 1981, 140–142): Վերջում Մսրա երկիր տարված մանուկ Դավիթը Մելիքի գուրզով սպանում է նրանց և հինգ այլ փահլևանների (Սասունցի Դավիթ 1939, 171, Սասունցի Դավիթ 1981, 142), ընդսմին, Սասունի հետ Կականի և Ասլանի ազգակցական կապն այլևս չի դրսևորվում, և նրանք վերածվել են հակառակորդ կերպարների: Համահավաք բնագրում, ըստ էության, կատարվել է դերաբաշխման որոշակի համաձայնեցում, և Մելիքի պատվերով մանուկ Դավթի սպանության համար նշանակված փահլևանների դերում հանդես է գալիս առավել հայտնի Բաթմանա Բուղա – Չարբահար Քամի ավանդական զույգը: Ըստ ամենայնի, տվյալ դեպքում առավել առաջնային դեր է ունեցել կերպարային բազմազանության ապահովումը, որի հետևանքով էպոսին ոչ հարազատ կերպար կամ կերպարներ են ներմուծվել համահավաք տարբերակ: Հիմնվելով էպոսի համահավաք տարբերակին՝ իր «Սասնա Դավիթ» ստեղծագործության մեջ Կականի և Ասլանի կերպարներն ընդգրկել է նաև գրող Նաիրի Զարյանը, միևնույն դերակատարությամբ (Զարյան 1972, 105–106, 108):

Վերոհիշյալի հաշվառմամբ ակնհայտ է, որ արձանագրվել է Սասնա պատումներին բնորոշ շեղում-շփոթ, ընդսմին, հարազատ հայոց միջավայրից սերող Կական-Ասլանի կերպարը երկատվել է՝ վերածվելով անբաժան գործակից երկու կերպարների: Թե ու՞մ կողմից է կատարվել կերպարի երկատումը՝ բանասացի՞, գրառողի՞, թե՞ հրատարակչի, այլևս դժվար է որոշել, թեև սովորաբար նման երևույթ դիտարկվում է հենց բանասացի պարագայում: Հարկ է նշել, որ նման երկատում դիտարկվում է նաև այլ կերպարների պարագայում, և վերոհիշյալը միակ դեպքը չէ (ճիշտ այնպես, ինչպես դիտարկվում է նաև հակառակ երևույթը՝ որոշ տարբեր կերպարների միաձուլումը): Ավելին, շարադրանքից իսկ որոշ դեպքերում զգացվում է, որ խոսքը մեկ կերպարի մասին կարող է լինել: Օրինակ,

«Մելիք կ'ասսա Կական, Ասլանին», «քու Կական, Ասլան, քու խուըլամ» կամ «Դավիթ էկավ, Կական, Ասլան էլ խիտ» (Սասնա ծռեր 1936, 895, 898): Ուշագրավ է նաև, որ վասպուրականցի Մարգարիտ Սարգսյանն ունեցել է լավ բանասացի համբավ, իմացել է «Ռոստամ Զալ», «Մոկաց Միրզեն», մոտ երկու տասնյակ այլ բանահյուսական նյութեր՝ հեքիաթ, երգեր ու խաղեր (Սասնա ծռեր 1936, 889): Վստահաբար, դրանց թվում պետք է լիներ նաև Ասլանի վիպերգը Մշո տարբերակով («Կական Ասլան»), ինչով էլ կբացատրվեր կերպարի ներմուծումը «Սասնա ծռերի» տվյալ պատում:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ Մոկսից դուրս՝ հարևան Մշո դաշտում, ևս գոյություն է ունեցել վիպերգի մեկ այլ տարբերակ՝ «Կական Ասլան» համանման անվամբ:

Բենսեի նամակը Ե. Լալայանին

Վերոհիշյալի հաշվառմամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ե. Լալայանին ուղղված Բենսեի՝ խնդրո առարկա նամակը, քանի որ բացառապես դրանում է հիշատակվում վիպերգի մեկ այլ անվամբ գրառված տարբերակի մասին: Նամակը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանի արխիվում, Ե. Լալայանի ֆոնդում, թիվ 105 գործում: Այն ամբողջությամբ լավ պահպանված ձեռագիր է, 27x20,5 սմ չափի՝ բաղկացած 2 թերթից, գրված պարզ և ընթեռնելի մաքուր հայերենով: Նամակի լեզուն արևելահայերենի և արևմտահայերենի որոշակի խառնուրդ է:

Նախ, հարկ է նշել, որ Բենսեն ու «Ազգագրական հանդեսի» հիմնադիր և խմբագիր Լալայանն առնվազն 1899 թվականից ունեին որոշակի կապ և համագործակցություն: Մասնավորապես, 1899–1900 թթ. հանդեսի զույգ համարներում տպագրվել է Բենսեի «Բուլանըխ կամ Հարք գավառ» ծավալուն ազգագրական ուսումնասիրությունը, որն այնուհետև 1901 թ., որպես առանձին գրքույկ, Թիֆլիսում հրատարակվել է Լալայանի խմբագրությամբ (Բենսէ 1901, 7–108):

Նամակի հենց սկզբում Բենսեն նշում է, որ 1912–1913 թթ. ընթացքում տեսակցել է Մուշ-Բուլանըխ այցելած հայտնի գրող, լրագրող Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ, 1865–1918 թթ.) հետ, որն այդ ժամանակ օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր, և Կ. Պոլսում հրատարակելու նպատակով նրան է հանձնել «Սասնա ծռեր» էպոսից իր գրառած «Սանասար և Բաղդասար» (բնագրում՝ «Սանեսար և Բաղդասար») պատումի և «Էլեքն ու Մելեքը» ստեղծագործության ձեռագրերը: Տեքստից հետևում է, որ պայմանավորվածություն է եղել տվյալ նյութերն առանձին գրքույկներով (բնագրում՝ «տետր» կամ «տետրակ») հրատարակելու մասին, ինչն այդ ժամանակահատվածում ընդհանրապես ընդունված ձևաչափ էր: Սակայն ակնկալված հրատարակության հարցը ձախողվում է, ըստ այդմ, Բենսեի ուղղորդմամբ ձեռագրերն առաքվում են Թիֆլիս, իր ազգական Հարություն Մովսիսյանին (հավանաբար, հոգևորական), որի միջոցով էլ տպագրության համար ներկայացվում են Երվանդ Լալայանին: Առժամանակ անց լուր է ստացվում, թե Լալայանը մերժել է մասնավորապես «Սա-

նասար և Բաղդասարի» հրատարակությունը առանձին գրքույկով, քանի որ մինչ այդ հայտնի բանահավաքների կողմից տարբեր շրջաններում գրառված բազմաթիվ տարբերակներ էին հրատարակվել, այդ թվում՝ հանդեսի էջերում: Բենսեն նամակում նշում է, որ իր գրառած տարբերակում կան որոշ մանրամասներ, որոնք այլ աղբյուրներից հայտնի չեն և խնդրում է այն հրատարակել առանձին գրքույկով կամ առնվազն հանդեսի էջերում: Որոշ հատուկ անուններ (Շող-շաղիմ, Թուխ-թալիմ), իրոք, էպոսի այլ պատումներից հայտնի չեն, ըստ այդմ, Բենսեն իրավունք ուներ պնդելու իր գրառած նյութերի յուրօրինակության մասին: Մյուս կողմից, դրանք թվում են բանահյուսական կրկնությամբ ստեղծված կերպարներ (բացառված չէ՝ երկվորյակ), որոնք, ըստ ամենայնի, տեղական հորինվածք են:

Այնուհետև Բենսեն պատրաստակամություն է հայտնում տպագրության համար պարբերաբար ուղարկել իր գրառած բանահյուսական այլ նյութերից՝ մասնավորապես նշելով չափածո ստեղծագործություններ՝ «Կական Ասլան», «Ալեքսանոս» և «Հովհաննես Գոյանցի»: Եթե առաջին երկուսը հայտնի են այլ բանահավաքների (Գ. Հովսեփյան, Ս. Հայկունի) գրառած տարբերակներով, ապա վերջինն անհայտ է (*Գոյանցի* անվամբ հայտնի է եղել Արևմտյան Հայաստանի քրդական աշիրեթներից մեկը, որը 1930–ական թթ. տակավին հիշատակվել է Սղերդի շրջանում): Սողոմոն Տարոնցու համապատասխան ծանուցման համաձայն, փաստորեն, տվյալ 3 նյութերը, ինչպես նաև վերը հիշատակված «Էլեքն ու Մելեքը» (ըստ ծանուցման, «Էլիք ու Մելիք»), «Սանասար և Բաղդասարն» անհետ կորել են (ՀԺՀ 1967, 552): Համաձայն Ս. Տարոնցու, էպոսի պատումը գրառվել է հոր ուսուցչության տարիներին, կազմել մոտ 5 հազար տող (ՀԺՀ 1967, 548):

Ինչ վերաբերում է Նահապետ Քուչակի գործերին, ապա ավելի ուշ Թիֆլիսում հրատարակվող «Համբաւաբեր» հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթի 1917 թ. ապրիլի զույգ համարներում (№ 13–14) տպագրվել է Բենսեի «Վանցի-Քիւչաք» ուսումնասիրությունը, որում տեղ են գտել բանաստեղծի մասին ժողովրդի մեջ շրջող զանազան զրույցները:

Բենսեն անդրադառնում է նաև իր գրառած քրդական բանահյուսական նյութերին՝ դրանցից նշելով «Մամոն և Զինեն» և «Դըմ-դըմը» («Խան Դըմդըմ»): Երկուսն էլ հայտնի են այլ բանահավաքների գրառած տարբերակներով, նամակում Բենսեն վստահաբար ակնարկում է դեռևս 1904 թ. հանդեսում տպագրված «Մամօ եւ Զինէ» Ալաշկերտի տարբերակը (Նժդեհեան 1904, 197–240): Բենսեն ինքը 1923-1924 թթ. կատարել է դրա գրական մշակումը և գրել համանուն պիես, որը նրա անտիպ գործերից է (ՀԺՀ 1967, 552): Շատախցի բանասացից 1911 թ. գրառված «Խան Դըմդըմի» մի տարբերակ Ե. Լալայանն ինքն է հրատարակել 1913 թ. «Ազգագրական հանդէսում», ընդ որում, այն ևս հայերեն է պատմվել (Լալայեան 1913, 154–160): Հետագայում, ԽՍՀՄ-ի օրոք, արևմտահայ բանասացներից գրառվել են հայերեն և քրդերեն մի քանի տարբերակներ, ինչպես նաև համանուն պարերգերը (Ջնդի 185, 175–181): Որոշ տեղեկություններով,

Բենսեն «Խան Դըմդըմի» տարբերակը գրառել է որպես վիպերգ, 1908 թ. Կոփ գյուղում (ՀԺՀ 1967, 559): Ամեն դեպքում այն կորսվել է, ինչի մասին ավելի ուշ անձամբ տեղեկացրել է նաև քուրդ բանահավաք Հաջիե Ջնդիին (Ջնդի 1985, 175):

Այսօր արդեն որոշակիորեն ողբերգականորեն է հնչում նամակի վերջնամասը. «Ազգագրական նիւթեր հաւաքելու բուռն փափաք ունիմ, բայց գիտէք, որ մեր կեանքի պայմանները այնքան ալ նպաստաւոր չեն. ուսումնասիրութեան համար միջոցներ կը պակսին մեզի բացարձակապէս: Բացի ասկէ, այստեղ չենք քաջալերուիր...» (ԳԱԹ, Ե. Լալայան, 105, Բենսեի նամակ, 3): Բանահավաքը ընդամենը երկու նախադասությամբ ներկայացրել է այն իրադրությունն ու մթնոլորտը, որում ապրում և փորձում էր ստեղծագործել հայ մտավորականը տվյալ ժամանակահատվածում ու միջավայրում: Մոտ 1 տարի առաջ Բիթլիսի շրջանում ուսուցչություն անելիս օսմանյան ոստիկանության խարդավանքների հետևանքով Բենսեն ձերբակալվել և բանտարկվել էր 6 ամսով, ինչից հետո նրան արգելվել էր բնակվել ծննդավայրում, և նա ստիպված հաստատվել էր Արաճանիի քրդական մի գյուղում (ՀԺՀ 1967, 548): Ըստ էության, Ե. Լալայանին ուղղված նամակը մի հուսահատ փորձ էր փրկելու Երկրում տարիների ընթացքում հայթայթված և կուտակված բանահյուսական գանձերը, ինչը, սակայն, չի հաջողվել:

Նամակի գրությունից ընդամենը մեկուկես ամիս անց սկսվելու էր I համաշխարհային պատերազմը, ինչին հետևելու էր Հայոց ցեղասպանությունը: Բանահավաքին հաջողվելու էր ընտանիքով փրկվել և անցնել Արևելյան Հայաստան՝ սակայն թողնելով ոչ միայն ծննդավայրը, այլև թանկագին բանահյուսական նյութերը, որոնք, թերևս, կորսվել են անվերադարձ: Երևանում հաստատվելուց հետո Բենսեն, անշուշտ, փորձել է վերականգնել տվյալ ժառանգությունը, սակայն այլևս գոյություն չուներ այն բանահյուսական միջավայրը, որի ծնունդ էին տվյալ նյութերը, և շատ դեպքերում գրառումներ են արվել հիշողությամբ: Վերականգնված և ի մի բերված նյութերի զգալի մասը հրատարակվել է հետագայում: «Կական Ասլանը», ցավոք, դրանց թվին չի պատկանում:

Նամակը հրատարակվում է առանց լեզվաոճական փոփոխությունների, որոշ կետադրական սրբագրումներով: Պահպանվել են հատուկ անունների գրության ձևերը: Տեքստում առկա բոլոր ընդգծումները հեղինակինն են:

Կոփ, Պուլանըգ, 11 Յունիս 1914

Մեծապատիւ
պ. Երուանդ Լալայեան

Թիֆլիս

Մեծ. Պարոն,

Մեկ-երկու տարի առաջ, Օսմ. Խորհրդարանի Մուշի երեսփոխան Գեղամ էֆ. Տէր-Կարապետեան, գաւառէս անցնելու ատեն հաւաքած ժողովրդական նիւթերից «Սանեսար և Բաղդասար» և «Էլեքն ու Մելեքը» Կ. Պոլիս տպագրել տալու համար հետը տարաւ: Կ. Պոլսոյ նորածին հրատարակչութիւնը սունկի

նման բուսնելով ու չորնալով՝ այդ տետրերու հրատարակութիւնը չյաջողեցաւ: Այնուհետև իմ խնդրանաց վրայ ղրկուեցաւ Թիֆլիս ազգական Հ. Յարութիւն Մովսէսեանցին, որպէսզի տեղդ անոր հրատարակութիւնը կերպով մը յաջողցնէր:

Այժմ ինձի լուր կը տրուի, որ Դուք ևս մերժած էք առանձին տետրակի ձևով հրատարակելը՝ յայտնելով, որ այդ նիւթին բազմաթիւ վարիանտները արդէն լոյս տեսած են: Բայց ներեցէք, որ դիտել տամ Ձեզի, թէ՝ «Սանեսար-Բաղդասար» ազգային վէպս մինչև այժմ եղած վարիանտներից բաւական կը տարբերի: Հոն յիշատակուած *Պղնձէ քաղաքը, Դէղձուն Խաթունը, Քառսուն ճիւղ ծամով աղջիկը,* մանաւանդ վերջերը – ազգաբանութեան մէջ, Շող-շաղիմը, Թուխ-թալիմը ևն ևն բոլորովին նորութիւններ են և ուրիշ վարիանտներու մէջ չեն գտնուիր, որքան որ ինձի յայտնի է:

Ոչ այնքան նիւթական ակնկալութիւնից, որքան բարոյական, կը խնդրէի Ձեզմէ, որ այդ տետրերուն հրատարակութիւնը տետրակի ձևով յաջողեցնէիք: Իսկ եթէ անհնար է, գոնէ Ձեր պատուական հանդէսին մէջ զետեղէիք, չմոռնալով օրինակ մը ինձի ղրկելու շնորհը. գոնէ բարոյապէս վարձատրած կը լինէիք ինձ: Ինչպէս ըսի, իմ առանձին հրատարակուելու պարագային, Ձեզի կը թողնեմ հրատարակչի լիազօր իրաւունքը, և ինչ որ պայման կառաջարկէք, կընդունիմ: Եթէ առաջարկութիւնս ընդունելութեան պիտի արժանանայ Ձեր կողմէ երկու պարագային ալ (թէ առանձին և թէ Ձեր հանդէսին մէջ իբր յօդուած մը) կը խոստանամ հաւաքած նիւթերս պարբերաբար ղրկել հրատարակութեան համար:

Պատրաստ ունիմ Նահապետ Քուչակի (որ այստեղ Վանցի-Քուչակ կը կոչուի ժողովուրդի կողմէ) կենսագրական հաւաքածու և թրքերէն լեզուով իր չորս ոտանաւորները: *Կական Ասլան, Յովանէս Գոյիանցին, Ալեքսանոս* ժողովրդական ոտանաւորները: *Խան-դմդըմ* քրդական վէպն ալ քրդական լեզուով գրի առած եմ, բայց տակաւին չեմ թարգմանած՝ սպասելով, որ աւելի լաւ ու լիակատար վարիանտ մ'ալ ձեռք բերեմ:

Ձեր հասցէն ինձ տալու շնորհն ըրէք, որպէսզի կարողանամ ուղղակի Ձեզի գրել: Հանդէսիդ տարեկան բաժանորդագրութիւնն ալ հասցէով ինձի ղրկեցէք, գուցէ բաժանորդագրուողներ լինեն: Այժմ միայն մէկ օրինակ ունիմ ձեռքիս տակ և ախորժակով կը կարդամ «Մամօէ-Զին»-ը: Գեղեցիկ վէպ է, բայց բնագրին քաղցրութիւնը կորսնցուցած է: Քրդերէնը երբ կ'երգուի, մարդս չի կարող արցունքները զսպել:

Չմոռնամ յիշել, որ «Խան-դմդըմ»-ը դիւցազներգական վէպ մըն է, պատերազմի մը նկարագրութիւնը: Հայերէն կարճառօտ վարիանտ մ'ալ ունիմ ոտանաւորի ձևով, որու մէջ Հայ երգիչը *Խան-Դմդըմին* Հայ ծագում վերագրած է:

Ազգագրական նիւթեր հաւաքելու բուռն փափաք ունիմ, բայց գիտէք, որ մեր կեանքի պայմանները այնքան ալ նպաստաւոր չեն. ուսումնասիրութեան համար միջոցներ կը պակսին մեզի բացարձակապէս: Բացի ասկէ, այստեղ չենք քաջալերուիր...

Խոստանալով Ձեզի գրել երբեմն երբեմն՝ կը սպասիմ Ձեր խրախուսանքներուն և քաջալերութեանը:

Հաճեցէք ընդունել իմ յարգանքներս՝

Սահակ Մովսէսեանց
(Բենսէ)

Իմ հասցէս. 

(Օսմաներեն հասցեն թարգմանաբար՝ *«Էրզրումի միջոցով Բուլանըխի գավառակ, Սահակ Մովսեսյան»*)

Турция, через Караурган. – Буланик-Коп
Саак Мовсесян

Եզրակացություններ

1. Ակնհայտ է, որ գոյություն է ունեցել «Ասլան աղա» վիպերգի մեկ այլ տարբերակ՝ «Կական Ասլան», որը, սակայն, չի պահպանվել: 1900–1913 թթ. այն գրառել է բանահավաք Բենսեն (Ս. Մովսիսյան), Մշո դաշտում: «Կական Ասլանը» Մոկսից դուրս և ոչ մոկացի բանասացից արձանագրված վիպերգի չափածո տարբերակներից է:

2. «Կական» մականունը նույնական է Ս. Հայկունու գրառած տարբերակից հայտնի «Կագուանի» հետ, ընդսմին, բոլոր դեպքերում էլ ընդգծվում է վիպերգի հերոսի հրեշտակամարտ լինելը:

3. Ըստ ամենայնի, Կական Ասլանի կերպարն արձանագրված է «Սասնա ծռեր» էպոսի պատումներից մեկում, որտեղից էլ այն ընդգրկվել է էպոսի հա-համամահավաք տարբերակում:

Շնորհակալական

Հոդվածի գրության ընթացքում տրամադրված տեղեկությունների համար շնորհակալություն ենք հայտնում արևելագետ Վ. Ոսկանյանին:

Գրականություն/ References/Литература

1. Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Abeghyan M. 1966, Works, vol. 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Աբեղյան Մ. 1971, Երկեր, հ. Ե, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Abeghyan M. 1971, Works, vol. 5. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
3. Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. Բ (Ե–Կ), Երևան, ԵՊՀ հրատ.:
Acharian H. 1973, Armenian Etymological Dictionary, vol. 2, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
4. Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի (ԱԲՀԼ) 1865, Բ տպագրութիւն (կազմ.՝ հ. Մ. Աւգերեան և հ. Գ. Ճէլալեան), Վենետիկ, Ի Սուրբ Ղազար:

Manual Dictionary of Armenian Language 1865, 2nd Edition (comp. by F.M. Avgerian and F.G. Jelalian), Venice, S. Lazzaro (in Armenian).

5. Բենսէ 1901, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի:
Bense 1901, Bulanykh or Harq County, Tbilisi, Printing House of K. Martiroseants (in Armenian).

6. Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ե. Լալայանի ֆոնդ, Բենսեի նամակը, N 105, 1–3:
Museum Literature and Art, Y. Lalayan Fund, N 105, 1–3 (in Armenian).

7. Գրիգորյան Գ. 1986, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գք. 5, Բնագրեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Grigoryan G. 1986, Armenian Folk Ballads and Historical Song Folklore, vol. 5, Original Texts, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

8. Գրիգորյան Գ. 1991, Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները, Երևան, «Լույս»:
Grigoryan G. 1991, The Historical-Epic Heroes of Ancient and Medieval Armenia, Yerevan, Luys (in Armenian).

9. Զարյան Ն. 1972, Երկերի ժողովածու, հ. 5, «Սասնա Դավիթ» հայ ժողովրդական դյուցազնավեպ, Երևան, «Հայաստան»:
Zaryan N. 1972, Collection of Works, vol. 5, "David of Sassoun" Armenian Folk Heroic Epic, Yerevan, Hayastan (in Armenian).

10. Էմինեան ազգագրական ժողովածու (ԷԱԺ) 1906, հ. Զ, Ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երդում, օրհնանք, անէծք եւ այլն, Լազարեանց Ճեմարան Արևելեան լեզուաց, Մոսկուա-Վաղարշապատ:
Eminean Ethnographic Collection 1906, vol. 6, Folk Song, Proverb, Saying, Riddle, Oath, Blessing, Curse etc., Moscow-Vagharshapat, Lazarian (Lazarev) Institute of Oriental Languages Press (in Armenian).

11. Լալայեան Ե. 1913, Վասպուրականի բանահիւսութիւնից: Շատախի բարբառով, Ազգագրական հանդէս, գք. XXV (2), 109–164:
Lalayan Y. 1913, From Vaspurakan Folklore. In Shatakh Dialect. Ethnographic Journal, N XXV (2), 109–164 (in Armenian).

12. Խուդաբաշյան Կ. 2001, Հոգևոր տաղի ժանրը հայ վիպերգության մեջ, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, «Հայաստան», 79–88:
Khudabashyan K. 2001, The Genre of Spiritual Tagh in Armenian Ballad Poetry, Armenian Saints and Sanctuaries, Yerevan, Hayastan, 79–88 (in Armenian).

13. Հայ ազգագրություն և բանահյուսություն (ՀԱԲ) 1978, հ. VIII, Նյութեր և ուսումնասիրություններ, Սերինե (Ս. Ավագյան), Արճակ (Մշո Բուլանըխ) (պատ. խմբ.՝ Վարդումյան Դ., Նազինյան Ա.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Armenian Ethnography and Folklore 1978, vol. 8, Materials and Researches, Serine (S. Avagyan), Archak (Mush-Bulanykh), (ed. by D. Vardumyan and A. Nazinyan), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

14. Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ) 1967, հ. X, Տարոն (Մուշ-Բուլանըխ) (կազմ. և ծանոթագր. Ս. Տարոնցի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Armenian Folk Tales 1967, vol. X, Taron (Mush-Bulanykh), (comp. by S. Tarontsi), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

15. Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Երևան, Համազգային «Վահէ Սէթեան» տպ.
Harutyunyan S. 2000, Armenian Mythology, Yerevan, "Vahe Setian" Publishing House (in Armenian).

16. Հարությունյան Ս. 2010, Բանագիտական ակնարկներ, Երևան, «Գիտություն»:
Harutyunyan S. 2010, Folklore Essays, Yerevan, Gitutyun (in Armenian).

17. Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. Բ, Երևան, «Պետհրատ»:
Malkhaseants S. 1944, Armenian Explanatory Dictionary, vol. 2, Yerevan, Pethrat (in Armenian).

18. Յովսէփեանց Գ. 1892, Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից: Ժողովրդագրական նիւթեր, գք. Գ, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի:
Hovsepeants G. 1892, Fragments of Popular Folklore: Demographic Materials, vol. 3. Tbilisi, Printing House of M. Sharadze (in Armenian).

19. Նժդեհեան Գ. 1904, Մամօ եւ Զինէ. Քրդական ժողովրդական վէպ (Ալաշկերտի վարիանտ), Ազգագրական հանդէս, գք. XI, 197–240:
Nzhdehean G. 1904, Mamo and Zine. Kurdish Folk Epic (Alashkert Version), Ethnographic Journal, vol. XI, 197–240 (in Armenian).

20. Ջնդի Հ. 1985, Քրդական «Դըմ–դըմ» էպոսի հայերեն տարբերակները, Արևելագիտական ժողովածու, հ. XIII, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 174–182:
Jndi H. 1985, The Armenian Versions of Kurdish Epic "Dym-Dym", Oriental Collection, vol. XIII, Academy of Sciences of the Armenian SSR Press, 174–182 (in Armenian).

21. Սասնա ծռեր 1936, ժողովրդական վեպ, հ. Ա (խմբ. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, «Պետհրատ»:
Daredevils of Sassoun (Sasna Tsrer) 1936, Folk Epic, vol. 1 (ed. by M. Abeghyan, with support of K. Melik-Ohanjanyan), Yerevan, Pethrat (in Armenian).

22. Սասնա ծռեր 1977, Ժողովրդական վեպ (աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի), Երևան, «Սովետական գրող»:
Daredevils of Sassoun 1977, Folk Epic (ed. by S. Harutyunyan), Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).

23. Սասունցի Դավիթ 1939, Հայկական ժողովրդական էպոս (կազմ.՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան, խմբ.՝ Ի. Օրբելի), Երևան, «Պետհրատ»:
David of Sassoun (Sasuntsi David) 1939. Armenian Folk Epic (comp. by M. Abeghyan, G. Abov, A. Ghanalanyan, ed. by J. Orbeli), Yerevan, Pethrat (in Armenian).

24. Սասունցի Դավիթ 1981, Հայ ժողովրդական հերոսավեպ (առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Հարությունյանի), Երևան, «Լույս»:
David of Sassoun 1981, Armenian Folk Heroic Epic (Introduction, Dictionary and References by S. Harutyunyan), Yerevan, Luys (in Armenian).

25. Баскаков А.Н. и др. 1977, Турецко-русский словарь: 48 000 слов, Москва, «Русский язык».
Baskakov A. N. et al. 1977, Turkish-Russian Dictionary: 48 000 Words, Moscow, Russkiy Yazik (in Russian).

26. Брюсов В.Я. 1916, Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов, Москва, изд. Московского Армянского комитета.
Brusov V.Y. 1916, Poetry of Armenia from Ancient Times to the Present Day, Translated by Russian Poets, Moscow, Armenian Committee of Moscow Press (in Russian).

27. Еврейская Энциклопедия Брокгауза и Ефрона {ЕЭБЕ} 1913, т. XVI, Санкт-Петербург, изд. Брокгауз-Ефрон.
Jewish Encyclopedia of Brockhaus and Efron 1913, vol. XVI, St. Petersburg, Publishing House of Brockhaus-Efron (in Russian).

28. Жирмунский В.М. 1962, Огузский героический эпос и «Книга Коркута», Книга моего деда Коркута, Москва-Ленинград, изд. АН СССР, 131–258.
Zhirmunsky V.M. 1962, Oghuz Heroic Epic and the "Book of Korkut", Book of my Grandfather Korkut, Moscow-Leningrad, Academy of Sciences of USSR Press, 131–258 (in Russian).

29. Орбели И.А. 1982, Фольклор и быт Мокса (предисл. Р.Р. Орбели), Москва, «Наука».
Orbeli J.A. 1982, Folklore and Lifestyle of Moks (Foreword by R.R. Orbeli), Moscow, Nauka (in Russian).

30. Орбели И.А. 2002, Избранные труды, т. II, Ереван, «Гитутюн».
Orbeli J.A. 2002, Selected Works, vol. 2, Yerevan, Gitutyun (in Russian).

31. Beekes R.S.P. 2010, Etymological Dictionary of Greek, Brill, Leiden-Boston.

32. Noegel S., Wheeler B. 2002, Historical Dictionary of Prophets in Islam and Judaism, Maryland and London, Scarecrow Press Inc., Lanham.

33. Chalatianz B. 1909, Armenische Heiligenlegenden. Zeitschrift des Vereins für Volkskunde. Begrüdent von K. Weinhold. Im Auftrage des Vereins Herausgegeben von J. Bolte, Berlin, Behrend & Co, 361–369.

34. Chants populaires arméniens 1903, Traduction Francaise et introduction par Archag Tchobanian (Préface de P. Adam), Paris, Societte d'editions littéraires et artistiques.

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆ ԴԱՇՏՈՒՄ
NEWLY DISCOVERED EARLY BRONZE AGE TOMB IN DASHT
НОВОВЫЯВЛЕННАЯ ГРОБНИЦА РАННЕБРОНЗОВОГО ВЕКА В ДАШТЕ

Լևոն Աղիկյան[1,*], Հարություն Բադալյան[1]
Levon Aghikyan[1,*], Harutyun Badalyan[1]
Левон Агикян[1,*], Арутюн Бадалян[1]

[1] Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

* Գրագրություն վարող հեղինակ՝ levon.aghikyan@iae.am
Author for correspondence: levon.aghikyan@iae.am
Автор, ведущий корреспонденцию: levon.aghikyan@iae.am

Հեղինակների ներդրումը. ԼԱ – գաղափար, նախնական տեքստ; ՀԲ – խմբագրում
Author contrubutios: LA – conceptualization, writing original draft; HB – editing
Вклад авторов: ЛА – концептуализация, написание текста; АБ – редактирование

Ներկայացվել է՝ 30.04.2024; գրախոսվել է՝ 23.02.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 30.04.2024; Revised: 23.02.2025; Accepted: 18.04.2025
Представлено: 30.04.2024; рецензировано: 23.02.2025; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-245

Ամփոփում – Ավելի քան մեկ դար առաջ սկսված պեղումներով բացված վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան մշակույթի (մ.թ.ա. XXXV/XXXIV-XXVI/XXV դդ.) դամբարանները տարածաշրջանում բավականաչափ մեծ թիվ են կազմում, իսկ Հայաստանի տարածքում այդ թիվը մոտենում է երկու հարյուրի: Մի շարք հետազոտողներ փորձել են համախմբել վաղբրոնզեդարյան դամբարանների առկա տվյալներն ըստ տարբեր չափորոշիչների: Վերջին տարիներին նոր դամբարանների հայտնաբերումով ի հայտ եկած տեղեկությունները որոշակիորեն փոխում են դրանց համակարգումը և նոր տվյալներ երևան բերում կուր-արաքսյան մշակույթի դամբարանների և թաղման ծեսի ուսումնասիրության հարցում: Չնայած բազմաթիվ հետազոտություններին, կուրարաքսյան մշակույթի դամբարանների և թաղման ծեսի ուսումնասիրությունը դեռևս բազմաթիվ բացեր ունի, և ամբողջական պատկեր ստանալու համար կարիք կա նոր համալրումների: Թաղումների ժամանակակից ուսումնասիրությունների լաբորատոր հետազոտությունները (ԴՆԹ, իզոտոպային, ատամնաքարային, եռաչափ մոդելավորում) հնարավորություն են տալիս նորովի մոտենալ խնդիրներին և դրանց պարզաբանումներին: Սույն հոդվածում ներկայացվում է 2021 թ. Դաշտ գյուղի տարածքում հայտնաբերված դամբարանը, որի ուսումնասիրության արդ-

յունքները հրապարակվում են առաջին անգամ, և դրանց լուսաբանումը վստահաբար կարևորագույն բաց է լրացնելու Հայաստանի վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանի սակավաթիվ կուրգանների և մասնավորապես բազմամարդ թաղումներով դամբարանների քննության հարցում, իսկ ներկայացվող գտածոների և թաղման ծեսի բազմաբնույթ վերլուծությունը կարող է հնավայրի ուրույն տեղն ապահովել ողջ կուր-արաքսյան մշակույթի համակարգման պարագայում:

Abstract – The Early Bronze Age Kura-Araxes culture (approximately 35th/34th to 26th/25th centuries BCE) burial sites, discovered through excavations that began more than a century ago, now form a relatively significant group in the region. In Armenia alone, the number of these burial sites approaches two hundred. Various researchers have made attempts to consolidate the available data on early Bronze Age burials based on different criteria, considering both Armenia and the entire region. However, with the recent discovery of new burial sites, the available data has led to changes in their classification, and fresh insights are emerging in the study of Kura-Araxes culture burials and burial practices. The article presented below focuses on a tomb discovered in 2021 in the area of Dasht village, which is being discussed for the first time in this work. This find adds important new information to the study of early Bronze Age burial traditions in Armenia and the surrounding region. The analysis of this burial site is expected to fill a significant gap in understanding the rare kurgans from this period, especially those with collective burials. This tomb is particularly notable for its unique features and offers a fresh perspective on burial practices in the Kura-Araxes culture. The detailed analysis of the finds and the burial practices associated with this tomb can provide valuable information that will help contextualize the site within the broader Kura-Araxes culture. This, in turn, will help refine and expand the understanding of the Kura-Araxes burial system, providing new data that could be instrumental in the classification of other similar sites. This discovery also promises to shed light on the social and ritualistic aspects of early Bronze Age societies, offering a deeper understanding of their funerary customs and the cultural significance of burial practices in this region.

Аннотация – Куро-аракская культура раннебронзового века (приблизительно 35/34 – 26/25 вв. до н.э.) представлена довольно-таки значительным числом погребений, обнаруженных в результате раскопок, начатых более века назад. Только на территории Армении количество таких захоронений приближается к двум сотням. Исследователи предпринимали попытки объединить доступные данные о захоронениях раннего бронзового века на основе различных критериев, включая как Армению, так и весь регион. Однако в связи с тем, что недавно были обнаружены новые погребения, произошли изменения в их классификации, и появились новые идеи для изучения захоронений и погребальных практик куро-аракской культуры. Погребение, выявленное в 2021 году на территории села Дашт, рассматривается впервые. Это открытие добавляет важную информацию в изучение погребальных традиций раннебронзового века в Армении и прилегающих регионах. Подробный анализ находок и связанных с ними погребальных практик может предоставить ценную информацию, которая поможет контекстуализировать этот объект в рамках более широкой системы куро-аракской культуры. Последнее, в свою очередь, позволит уточнить и расширить понимание погребальной системы куро-аракской культуры, предоставив новые данные, которые могут сыграть важную роль в классификации других подобных объектов, а также пролить свет на социальные и ритуальные аспекты обществ

раннего бронзового века, предлагая более глубокое понимание их похоронных обычаев и культурного значения погребальных практик в этом регионе.

Հիմնաբառեր – վաղ բրոնզի դար, էլառ-արագածյան տիպ, թաղման ծես, Դաշտ:
Keywords – Early Bronze Age, Elar-Aragats type, burial ritual, Dasht.
Ключевые слова – ранний бронзовый век, элар-арагацский тип, погребальный обряд, Дашт.

Ներածություն

2021 թ. Արմավիրի մարզի Աշտարակ-Վաղարշապատ ճանապարհի 8-րդ կմ-ի վրա, Դաշտ գյուղի վարչական տարածքում (նկ. 1: A) գտնվող, Վ. Մուրադյանին պատկանող հողատարածքում հողաշինական աշխատանքներ կատարելու նպատակով արվել են նաև հնագիտական-հետախուզական աշխատանքներ (հնագետ՝ Հ. Բադալյան): Տեղազննությունն իրականացվել է մոտ 20 հա տարածքում, որի մեծ մասը խորհրդային տարիներին մելորացվել է, և խաղողի այգի է հիմնվել, տարածքում փորվել է նաև ոռոգման ջրագիծ: Ջրագծի խրամատի մոտ առկա էր մոտ 1 մ բարձրությամբ քարահողային լիցք, որի մակերեսին կային անկանոն կերպով իրար վրա լցված մի քանի սալաքարեր (նկ. 2): Քարահողային լիցքի տակ կային անկանոն լցված տձև ծածկասալեր հիշեցնող սալաքարեր: Դրանք այստեղ էին հավանաբար խոշոր տեխնիկայի միջոցով արված հողային աշխատանքների հետևանքով. խախտվել էին և չէին գտնվում իրենց տեղերում:

Արդյունքները և մեթոդները

Նշված սալաքարերի տակ բացվեց հյուսիս-արևելք – հարավ-արևմուտք ուղղվածությամբ դամբանախուցը (նկ. 3):

Խցի հողը հիմնականում կավային է՝ խառնված բնական խճի հետ: Ընդհանուր լիցքի մեջ երբեմն հանդիպում են մանր քարեր:

Դամբարանախցի վերին շերտից՝ գետնի մակերեսից 20-30 սմ խորությունից հայտնաբերվեցին մի քանի փոքր, ջարդված անոթներ և առանձին բեկորներ, ոչ մեծ քանակի մարդկային ոսկորներ:

Խցի ստորին շերտից դուրս բերվեցին ամբողջական անոթներ (նկ. 4):

Առաջին անոթը (պայմանական՝ N 1) հարավ-արևելյան անկյունում էր՝ թեքված դեպի արևմուտք: Այն սև մակերեսով, դուրս ճկված շուրթով, լայնաբերան կճուճ է: N 2 անոթը բացվեց առաջինից մոտ 10 սմ հյուսիս: Սև, անզարդ մակերեսով թասանման անոթը թեքված էր դեպի արևելյան պատը: N 3 անոթը գտնվեց խցի հարավային անկյունում՝ N 1 և N 2 անոթներից մոտ 30 սմ արևմուտք: Այն բերանի վրա շրջված փոքր միականթ գավաթ է: N 4-ը նեղ հատակով, լայն բերանով միջին չափի կճուճ է և հայտնաբերվեց հյուսիսային պատի տակ բերանքսիվայր շրջված վիճակում: N 5-ը անոթը բացվեց դամբարանի հարավային մասում, պատից մոտ 20 սմ դեպի հյուսիս հեռավորությամբ՝ շրջված վիճակում: Այն սև մակերեսով փոքր, անկանթ, նեղ վզով սափոր է:



Նկ. 1. A. Դաշտի տեղադրությունը ՀՀ քարտեզում, B. Դաշտի և շրջակա վաղբրոնզեդարյան հնավայրերի քարտեզը (քարտեզը՝ Ա. Մկրտչյանի)

N 6-ը դամբանախցի հյուսիս-արևելյան մասում էր՝ պատի անկյունից մոտ 25 սմ հեռավորությամբ՝ թեքված դեպի արևելք, 104 սմ խորության մեջ: Դա ուղիղ շուրթով, գնդաձև իրանով, նեղ հատակով և վզով, անկանթ սափոր է՝ նման N 5 անոթին: Հաջորդ վեց կավանոթները հայտնաբերվել են ստորին շերտում:

Դամբարանի ուշագրավ գտածոներից է խցի հյուսիս-արևելյան հատվածից, 114 սմ խորությունից գտնված ոսկրե իլիկի գլուխը, որի կեսն է պահպանվել: Կենտրոնական հատվածից, 113 սմ խորությունից դուրս եկավ նաև սկավառակաձև ոսկրե փոքր իր (կոճակ): Դամբանախցի ստորին շերտից, 100-130 սմ խորությունից հայտնաբերվեցին բազմաթիվ ուլունքներ:

Նկ. 2. Դամբարանի տեսքը մինչև պեղումները (լուսանկարը՝ Հ. Բադալյանի)

Նկ. 3. Դամբարանախցի ընդհանուր տեսքը (օդալուսանկարը՝ Ա. Մկրտչյանի)

Նկ. 4. Պեղման ընթացքը և հարավարևելյան անկյան անոթները
(լուսանկարը՝ Հ. Բադալյանի)

Հիմնական թաղումները կատարվել են ստորին շերտում, որտեղ 90–130 սմ խորություններում բացվեցին երկու տասնյակից ավել գանգեր և բազմաթիվ մարդկային ոսկորներ: Դրանք սփռված էին ամբողջ խցով մեկ և մի քանի շերտ դարսված իրար վրա: Ամենամեծ կուտակումը հյուսիսային հատվածում էր (նկ. 5):

Անոթները մեծ մասամբ ամբողջական են, չնչին չափով վերականգնված:

Մարդկային ոսկորները բավական վատ են պահպանված, հիմնականում անատոմիական վիճակում չեն: Դամբարանը մինչև պեղումները լուսանկարվել է: Պեղման ընթացքում յուրաքանչյուր գտածո առանձնացվել է անհատական համարակալմամբ: Խուցը բաժանվել է չորս քառակուսու (A, B, C, D), իսկ ոսկորների համարակալումը լուսանկարներում առանձնացվել տարբեր գույներով՝ քառակուսիներին համապատասխան. քանի որ ոչ անատոմիական վիճակում գտնվող մարդկային մեծաքանակ ոսկորներն հնարավոր չէր առանձնացնել ըստ անհատների, հայտնաբերված յուրաքանչյուր ոսկոր առանձին համարակալվել է և լուսանկարվել (նկ. 6): Խցի տարածքից դուրս եկած ողջ հողը մաղվել է (ուլունքների գրեթե 1/3-ը հայտնաբերվել է մաղելու ընթացքում): Դամբարանի պեղման տարբեր փուլերում DJI Phantom 2 սարքի միջոցով օդալուսանկարում է կատարվել (օդալուսանկարահումն իրականացրել է ՀԱԻ աշխատակից Արշալույս Մկրտչյանը), ապա չափագրվել (չափագրություններն իրականացրել է ՀԱԻ ճարտարապետ Արտակ Հախվերդյանը): Գտնված բոլոր իրերը մաքրվել և վերականգնվել են, լուսանկարվել, գծագրվել: Մարդաբանական գտածոները լաբորատոր ուսումնասիրության փուլում են:

Նկ. 5. Մարդկային ոսկորների կուտակումը (լուսանկարը՝ Լ. Աղիկյանի)



Նկ. 6. Մարդկային ոսկորների փաստագրման ընթացքը (լուսանկարը՝ Լ. Աղիկյանի)

Կառույցը

Չնայած դամբարանի արտաքին հատվածի բավական վնասված լինելուն, սակայն պահպանված հողաթումբը, խցի զանգվածեղությունը և անհատների քանակը հաշվի առնելով, կարծում ենք, որ անխաթար վիճակում հայտնաբերելու պարագայում այն կդասվեր կուրգանների շարքին: Վաղ բրոնզի դարին պատկանող կուրգանների թիվը Հայաստանի տարածքում չի անցնում երկու տասնյակը, որոնցից առավել հայտնի են Թալինի (Avetisyan et al. 2010; Kalantaryan 2011), Ջրվեժ/Ավանի (Թումանյան 1993; Muradyan 2018), Մայիսյանի (Арешян 1986, 427) կուր-արաքսյան կուրգանները, սակայն Դաշտի պարագայում դամբարանի արտաքին տեսքի հետ զուգահեռներ անցկացնելը խիստ խրթին է, քանի որ, ինչպես նշեցինք, պահպանվել է միայն մի փոքր հատված հողաթմբից և քարալիցքից: Խցի կառուցվածքի դեպքում համեմատությունն ավելի տեղին է և հիմնավորված, քանի որ դրանց ուսումնասիրումը բավական համակարգված է (Poulmarc'h 2014, 232): Սալարկղային խցով վաղբրոնզեդարյան կուրգաններ կարելի է տեսնել վերը նշված, ինչպես նաև Ծաղկալանջի (Avetisyan 2022, fig. 13, 14), Լճաշենի (Մնացականյան 1965) հնավայրերում, իսկ արտաքին որևէ նշան չունեցող կամ կուրգան չհամարվող սալարկղային դամբարանների պարագայում համեմատական դաշտը շատ ավելի լայն է, ինչպես, օրինակ՝ Արագած (Мартиросян 1964, 42–46), Ձորի Բերդ (Badalyan, Avetisyan 2007, 83), Սասունիկ (Yengibaryan 2022), Ապարանի Բերդ (Lindsay et al. 2022, 281–284) Շահումյան (Շահումյանի դամբարանը պեղվել է 2021 թ. ՀԱԻ արշավախմբի կողմից (ղեկ.՝ Ռ. Բադալյան), և արդյունքները դեռևս հրատարակված չեն) և այլն:

Դամբարանախուցը փորվել է կարմրավուն տուֆի բնական ժայռի մեջ: Ժայռախորշի մեջ հարթ պատեր ստանալու նպատակով շրջակա տուֆի բնական հարթ սալերն օգտագործվել են պատերը կառուցելու համար: Սալարկղային խուցը գրեթե քառակուսի է՝ 200x180 սմ չափերով: Պատերից երեքը ձևավորված են կոպիտ, հարթ սալերով: Հյուսիսային պատը բաղկացած է ուղղահայաց դրված երկու սալերից, որոնցից խոշորն ուներ 128x76x20 սմ չափեր: Այս սալաքարին արևելյան մասում թեքությամբ հպված էր 79x77x20 սմ չափերով երկրորդ քարը: Արևելյան պատը հանդիսանում էր ամբողջ ճակատով դրված 130x78x20 սմ չափերով սալաքարը: Հարավային պատը կազմված էր երկու միանման ուղղանկյունաձև սալաքարերից (չափերը՝ 100x70x17 սմ և 100x76x26 սմ): Տարբերվում է արևմտյան պատը, որտեղ բնական ժայռի խորշերը փակելու համար որոշ տեղերում տեղադրվել էին մանր քարեր: Առաջին հայացքից գուցե սա թողնում է մուտքի տպավորություն, սակայն օդալուսանկարում հստակ երևում է, որ այդ մանր քարերը շարված են հսկայական բնական սալի տակ (նկ. 3): Ամենայն հավանականությամբ, խուցը փորելիս պարզվել է, որ այդ հատվածում բնական ժայռի տակ դատարկ է, և դրա խորշերը փակել են: Բոլոր կողասալերը ամրակայելու նպատակով դրանց տակ դրվել են մանր քարեր:

Նկ. 7. Դամբարանախցի հատակը (լուսանկարը՝ Լ. Աղիկյանի)



Նկ. 8. Դամբարանի հատակագիծը (չափագրությունը՝ Ա. Հախվերդյանի)

Խցի հատակը նույնպես տուֆի բնական ժայռն է, սակայն հարթ մակերես ստանալու համար խցի հարավարևմտյան կեսը տոփանվել է կավաշաղախով (նկ. 7): Փոքր կտրվածքի միջոցով հեռացրեցինք կավային հատակի հարավարևելյան հատվածը, որի տակ խճային զանգված էր և հարավարևելյան պատի սալերի

հիմքերը, որոնք իրենց ամրակայող մանր քարերի հետ մնացել էին հատակի շաղախի տակ: Դամբանախցի առավելագույն խորությունը կողասալերի վերին կետից 130 սմ էր (նկ. 8):

Թաղման ծեսը

Արդեն նշեցինք, որ հանգուցյալների անգամ նման քանակի պարագայում որևէ կմախքի ամբողջական վիճակ չի փաստագրվել, որն ինքնին խրթին է դարձնում պատկերացում կազմելը թաղման արարողության ընթացքի մասին: Պետք է նշել, որ խմբային թաղումներին բնորոշ է ոչ ամբողջական կմախքների առկայությունը (Palumbi 2007, 21): Որոշ դեպքերում առկա է մարմնի որևէ հատվածի անատոմիական վիճակ՝ հիմնականում ողնաշարի կամ վերջույթների տեսքով (նկ. 9), իսկ ավելի հաճախ հայտնաբերվում են իրար հետ կապ չունեցող ոսկորներ, ինչպես, օրինակ, բազկոսկրը և ստորին ծնոտը միասին, իրար կպած հայտնաբերելը (նկ. 10): Նման պարագայում հարցադրումներ են առաջանում. արդյո՞ք կմախքներն ի սկզբանե ամբողջական են եղել և հետագայում, երբ արդեն զուրկ էին մկանային հյուսվածքներից, խախտվել են, մեզ հայտնի «ավանդական» կուր-արաքսյան թաղման ծեսով շարունակական դիադրումներ իրականացնելու ընթացքում (Palumbi 2016, 24, 25; Aghikyan 2021, 67), թե՞ խցի մեջ մարդկային մնացորդներ տեղադրելուց արդեն փափուկ հյուսվածքները բացակայել են: Սա էլ իր հերթին բխում է գուցե և դամբարանի կարևորագույն խնդրից, այն է՝ բոլոր թաղումներն իրականացվել են մի ակտո՞վ՝ միաժամանա՞կ, թե՞ ժամանակ առ ժամանակ խուցը բացվել է նոր հագուցյալին տեղավորելու նպատակով:

Նախկինում պեղված համաժամանակյա խմբային թաղումներով դամբարանների վերաբերյալ երբևէ հստակ տեսակետ չի արտահայտվել այս խնդրի շուրջ, ինչն ավելի է բարդացնում քննարկվող թեմայի պարզաբանումը: Օրինակ, Կարճաղբյուրի դամբարանը, որը շատ առումներով զուգահեռներ ունի Դաշտի դամբարանի հետ, ինչպես անհատների քանակով (25 անհատ), դրանք ոչ բնական դիրքերում հայտնաբերվելով և, որ հատուկ ուշադրության է արժանի՝ չափագրությունից ակնհայտ նկատվող մի իրավիճակով. ինչպես Դաշտում, այնպես էլ Կարճաղբյուրում անատոմիական վիճակում գտնվում են հիմնականում ողնաշարի ողերը (Engibaryan et al. 2013, Tafel I): Սակայն եթե Կարճաղբյուրի պարագայում խցի արևելյան կողմում առկա է մուտք, որն ինքնին խոսում է պարբերաբար դամբարան մուտք գործելու մասին, ապա Դաշտի դեպքում այն բացակայում է և բնական ժայռի մեջ փորված դամբանախցի պարագայում դժվարանում ենք պնդել բավականին զանգվածեղ ծածկասալերի հաճախակի տեղահանման և տեղադրման հանգամանքը: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել ևս մեկ հանգամանքի վրա. քսանհինգից ավել գանգերի և դրանց ոսկորների գերակշիռ մասը (քսան և ավել) կուտակված են հյուսիսային, հյուսիսարևմտյան կեսում, վերին շերտում՝ նաև արևելյան պատի երկայնքով, իսկ խցի հարավարևելյան կեսում և հատկապես հարավային անկյունում խցի ողջ խո-

րության մեջ գրեթե մարդկային ոսկորներ չկան, բացառությամբ ամենաստորին շերտի մի քանի սանտիմետրի:

Նկ. 9. Անատոմիական վիճակում պահպանված մնացորդները (լուսանկարը՝ Լ. Աղիկյանի)

Նկ. 10. Ոչ անատոմիական վիճակում հայտնաբերված մնացորդներ (լուսանկարը՝ Լ. Աղիկյանի)

Այսպիսով, կարծում ենք, ուսումնասիրության այս փուլում հնարավոր միակ տեսակետը կարող է լինել այն, որ թաղումներն իրականացվել են պարբերաբար, սակայն որպես մուտք օգտագործվել է խցի հարավարևելյան ծածկասալը, և ամեն նախորդ թաղումը տեղափոխվել է հյուսիսարևմտյան պատի տակ՝ հաջորդի համար տարածք ազատելու նպատակով: Մի ակտով բոլոր հանգուցյալներին խցում տեղավորելու տարբերակը, ենթադրում ենք, բացառվում է Դաշտի պարագայում, քանի որ՝ նախ, կմախքների ոչ անատոմիական լինելն արդեն իսկ ժխտում է այս

տեսակետը, եթե, իհարկե, ոսկորները մեկ այլ վայրից չեն տեղափոխվել դամբարանախուց արդեն իսկ քայքայված փափուկ հյուսվածքներով, ինչը խիստ խորթ է կուր-արաքսյան մշակույթի համար: Կարևոր է նաև վերը քննարկված հանգամանքը խցում մարդկային մնացորդների տարածական, անհավասար բաշխվածության մասին, ինչը ենթադրում է, որ մի ակտով թաղման պարագայում պետք է որ ամբողջ դամբարանի տարածքը լցվեր:

Գույքը

Ընդհանուր առմամբ, Դաշտի դամբարանի պեղումներով հայտնաբերվել են քսանից ավել անհատների կմախքներ, 12 կավանոթ (նկ. 11), մոտ հազար ուլունք, մեկ բրոնզե շքասեղ/բիզ, մեկ բրոնզե պարույր (հերակալ/ականջօղ), ոսկրե կոճակ (նկ. 12), իլիկի գլուխ, փոքրաթիվ կենդանաբանական նյութեր: Հնակենդանաբանական նյութի լաբորատոր ուսումնասիրությունն իրականացրել է Լիոնի համալսարանի ասպիրանտ, հնակենդանաբան Տիմ Միբորը:

Հաշվի առնելով խցում հայտնաբերված անհատների քանակը՝ կարելի է ասել, որ գույքը բավական աղքատիկ է: Այնուամենայնիվ, այս փոքրաթիվ խմբաքանակի մեջ նկատվում է անոթների տիպաբանական բազմազանություն՝ անկանոթ գնդաձև սափոր/գավաթներ, միականոթ գավաթ/կճուճներ, քրեղաններ, լայնաբերան կճուճներ (նկ. 11):

Ուլունքները մի քանի խմբի են բաժանվում ըստ նյութի, գույնի և ձևի: Դրանք հիմնականում մանրահատիկ սկավառակաձև են, ութը՝ գլանաձև, իսկ հինգ ուղանկյունիները բաժանարարներ են: Գերակշռող մասը սպիտակ մածուկից է, մի մասը սև, մոխրագույն, շագանակագույն և թափանցիկ տարբեր քարերից (նկ. 12: 1–4): Բրոնզե շքասեղ/բիզը բացառիկ գտածո է: Դրա ոսկրե մեկ զուգահեռը հաջողվեց գտնել մայկոպյան մշակույթի Ուստ Ջեգուտա հնավայրի կուրգանների գտածոների շարքում (Мунчаев 1975, 236), իսկ բրոնզե օրինակի զուգահեռն առայժմ գրականության մեջ չենք հանդիպել: Նույնը կարելի է ասել նաև ոսկրե սկավառակաձև՝ պայմանական «կոճակ» անվանված ոսկրե իրի մասին, որի համաժամանակյա զուգահեռները մեզ չհաջողվեց գտնել: Բրոնզե պարույրի պարագայում, կարծում ենք, զուգահեռներ ներկայացնելու կարիք չկա, քանի որ դրանք կուր-արաքսյան ողջ մշակույթում (Carminati 2014, 168) և դրանից հետո էլ խիստ տարածված են (Gambashidze et al. 2001, 265, fig. 74):

Թվագրությունը

Խցից հայտնաբերված ողջ նյութն անկասկած պատկանում է կուր-արաքսյան մշակույթին: Թե՛ բրոնզե իրերը, թե՛ ուլունքների տեսականին և թե՛ հատկապես խեցանոթները խիստ բնորոշ են միայն վաղ բրոնզի դարին (Badalyan 2021, 213, fig. 1): ՀՀ տարածքից հայտնաբերված նմանատիպ խեցեղեն գտածոները խորապես ուսումնասիրված են և Ռ. Բադալյանի կողմից վերագրվում են կուր-արաքսյան մշակույթի էլար-արագածյան տիպին (Badalyan 2014): Թվագրության և մշակութային ավելի նեղ պատկանելության մասին խոսելու համար կարելի է մի

քանի զուգահեռներ անցկացնել Հայաստանի տարածքից հայտնի վաղբրոնզեդարյան այլ հնավայրերի գտածոների հետ: Թերևս ամենաանմիջական և հավաստի զուգահեռը կարելի է տանել վերջին տարիներին պեղված Կառնուտի N 2 դամբարանի անոթի (Aghikyan 2021, Tab. 1), նաև Հարթագյուղի 3-րդ անոթի հետ (Badalyan, Avetisyan 2007, 113, pl. 1:3), որոնք գրեթե նույնությամբ կրկնում եմ քննարկվող դամբարանի անոթներից մեկին (նկ. 11:4):



Նկ. 11. Դամբարանից հայտնաբերված կավանոթները (լուսանկարը՝ Վ. Հակոբյանի)

Ըստ ռադիոածխածնային հետազոտության թվագրության (Aghikyan 2021, Tab. 1), Կառնուտի վերոնշյալ դամբարանը թվագրվում է մ.թ.ա. IV հազարամյակի վերջին քառորդով: Բազմաթիվ են նաև Դաշտի դամբարանից հայտնաբերված անոթների զուգահեռները համաժամանակյա այլ հնավայրերի գտածոների հետ, օրինակ, Ավանի դամբարանի (Muradyan 2018, 15–26), Դաշտի 6-րդ անոթի

(տեքստում նշված՝ Դաշտի անոթների համարակալումները համընկնում են սույն հոդվածի նկար 11-ում տրված անոթների համարակալումների հետ, իսկ զուգահեռներինը՝ համապատասխանաբար բերված նկարների/աղյուսակների համարակալումների հետ) նույնը նաև Չքնաղի դամբարանի 2-րդ անոթի (Badalyan, Avetisyan 2007, 81, pl. 1:2), Հարթագյուղի 2-րդ անոթի հետ (Badalyan, Avetisyan 2007, 113, pl. 1:2), Դաշտի 11-ը և 12-ը՝ համապատասխանաբար Լանջիկի 7-ի և 6-ի (Badalyan, Avetisyan 2007, 200, pl. 1:6, 7), 2-ը, 3-ը՝ Գյումրիի մսի կոմբինատի և թռչնաբուծարանի կավանոթների հետ (Aghikyan 2022, fig. 2:2, 3):



Նկ. 12. Ոլունքներ և մետաղե գտածոներ (լուսանկարը՝ Վ. Հակոբյանի)

Մարդկային մնացորդներ հայտնաբերվել են խցի գրեթե ողջ տարածքում, հիմնականում անկանոն/ոչ անատոմիական վիճակում, ինչը ենթադրում է, որ կմախքների կամ անհատների հստակ քանակը դժվար է որոշել, և հնարավոր է միայն հիմնվել գանգերի քանակի վրա: Սակայն այս պարագայում ևս պետք է հաշվի առնել, որ դրանց գերակշիռ մասը բեկորային է:

Վերը նշված հանգամանքներն հաշվի առնելով՝ դամբարանում հայտնաբերված անհատների թիվը ավելի քան 25 է (հնամարդաբանական նյութի նախնական ուսումնասիրությունը կատարել է ՀԱԻ գիտաշխատող Լևոն Աղիկյանը): Նման քանակի մարդկային մնացորդների կուտակումը մեկ դամբարանախցում խիստ սակավ է կուր-արաքսյան մշակույթում, և Հայաստանի տարածքում հանդիպում է միայն Շահումյանի դամբարանում, Կարճաղբյուրում (Engibaryan et al. 2013):

Եզրակացություններ

Այսպիսով, Դաշտի դամբարանը, գտնվելով Քասախի ստորին հոսանքի կուր-արաքսյան մշակույթի բավական հարուստ միջավայրում (նկ. 1: B), համընկնում է մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսին: Սա, եթե ոչ բացառիկ, ապա հազվադեպ երևույթ է ՀՀ տարածքում հայտնի կուրարաքսյան դամբարանների շարքում՝ առնվազն մի քանի պատճառներից ելնելով. *նախ*, մի խցում անհատների նման քանակություն պարունակող դամբարանների թիվը խիստ սակավ է Հայաստանում, *հետո,* ուլունքների նման քանակությունը, ինչպես նաև բրոնզե բիզը բացառիկ են կուր-արաքսյան մշակույթի ողջ համատեքստում: Մարդկային ոսկորներից արդեն նմուշներ ենք ուղարկել իզոտոպային, ռադիոածխածնային և ԴՆԹ հետազոտությունների համար: Դրանց արդյունքները վստահաբար էական նշանակություն կունենան թե՛ Հայաստանի տարածքում և թե՛ ողջ տարածաշրջանում կուրարաքսյան մշակույթի ուսումնասիրության հարցում:

Շնորհակալական

Շնորհակալություն ենք հայտնում հնագետներ Ռ. Բադալյանին և Ա. Հարությունյանին օգտակար տեղեկությունների, Շահումյանի չհրատարակված նյութերով կիսվելու, ինչպես նաև տեխնիկական աջակցության համար: Շնորհակալություն նաև Լիոնի համալսարանի ասպիրանտ S. Միքորին հնակենդանաբանական ուսումնասիրություններն իրականացնելու համար:

Գրականություն/References/Литература

1. Թումանյան Գ. 1993, Ջրվեժի վաղբրոնզեդարյան N 1 դամբանաբլուրի պեղումները, Տիրացյան Գ.Ա., Քալանթարյան Ա.Ա., Արեշյան Գ.Ե. (խմբ.), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986–1987 թթ. պեղումների արդյունքները), Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 7–14:
   Tumanyan G. 1993, Excavations of Early Bronze Age Burial Mound N 1 in Jrvezh, Tiratsyan G.A., Kalantaryan A.A., Areshyan G.E. (eds), Archaeological Works in New Constructions of Armenia (Results of 1986–1987 Excavations), Yerevan, Academy of Sciences of RA Press, 7–14 (in Armenian).

2. Մնացականյան Հ. 1965, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 95–114:
Mnatsakanyan H. 1965, The Main Stages of the Development of Lchashen Culture, Historical-Philological Journal, N 2, 95–114 (in Armenian).

3. Арешян Г. 1986, Раскопки в Маисяне, Археологические открытия 1984 года, Москва, «Наука», 427–428.
Areshyan G. 1986, Excavations in Mayisyan, Archaeological Discoveries of 1984, Moscow, Nauka, 427–428 (in Russian).

4. Мартиросян А.А. 1964, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, изд. АН Арм. ССР.
Martirosyan H.A. 1964, Armenia in the Bronze and Early Iron Ages, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

5. Мунчаев Р.М. 1975, Кавказ на заре бронзового века, Москва, «Наука».
Munchaev R.M. 1975, The Caucasus at the Down of Bronze Age, Moscow, Nauka (in Russian).

6. Aghikyan L. 2021, New Elements of Burial Practice in the Kura-Araxes Culture: The Discovery of Karnut Cemetery (Armenia), Quaternary International, N 579, 59–71.

7. Aghikyan L. 2022, The Kura-Araxes Tombs in Shirak Region, Armenia, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 16(1–2), 28–50.

8. Avetisyan P., Muradyan F., Sargsyan G. 2010, Early Bronze Age Burial Mounds at Talin, Hansen S., Hauptmann A., Motzenbäcker I., Pernicka E. (eds), Von Majkop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4. – 2. Jt. v. Chr. Bonn, Dr. Rudolf Habelt GmbH, 161–165.

9. Avetisyan P. 2022, Homo mobilis: Some Observations on the Characteristics of the Kura-Araxes Cultural Complex, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 16 (1–2), 51–89.

10. Badalyan R.S., Avetisyan P.S. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and Surrounding Region, BAR International Series 1697.

11. Badalyan R. 2014, New Data on the Periodization and Chronology of the Kura-Araxes Culture in Armenia, Chataigner C., Palumbi G. (eds), The Kura-Araxes Culture from the Caucasus to Iran, Anatolia and the Levant: Between Unity and Diversity, Paleorient, N 40 (2), 71–92.

12. Badalyan R. 2021, From Homogeneity to Heterogeneity. The Periodization and Chronology of Kura – Araxes: The View from Armenia, Giemsch L., Hansen S. (eds), The Caucasus – Bridge between the urban centres in Mesopotamia and the Pontic steppes in the 4th and 3rd millennium BC. The transfer of knowledge and technologies between East and West in the Bronze Age. Proceedings of the Caucasus Conference, Frankfurt am Main, 2018, Schriften des Archäologischen Museums Frankfurt 34, Schnell & Steiner, 211–222.

13. Carminati E. 2014, Jewellery Manufacture in the Kura-Araxes and Bedeni Cultures of the Southern Caucasus: Analogies and Distinctions for the Reconstruction of a Cultural Changeover, Golani A., Wygnańska Z. (eds), Beyond Ornamentation. Jewelry as an Aspect of Ma-

terial Culture in the Ancient Near East, Polish Archaeology in the Mediterranean, N 23 (2), 161–186.

14. Engibaryan N., Bobokhyan A., Kunze R. 2013, Ausgrabungen in Karchaghbyur. Gegharkunik Provinz, Veröffentlichungen des Landesamtesfür Denkmalpfiege und Archäologie Sachsen-Anhalt-Landesmuseum für Vorgeshichte, Meller H., Avetisyan P. (eds), Archäologie in Armenien II, Bd. 67, 109–163.
15. Gambaschidze I., Hauptmann A., Slotta R., Yalçin Ü (eds) 2001, Georgien: Schätze aus dem Land des Goldenen Vlies, Deutschen Bergbau-Museums Bochum, Bochum.
16. Kalantaryan I. 2011, The Early Bronze Age Complex of Talin Cemetery, Studii de Preistorie, N 8, 123–138.
17. Lindsay I., Greene A., Marshall M., Badalyan R., Cromartie A., Azatyan K., Aghikyan L., Khatchadourian L., Mkrtchyan A., Smith A. 2022, The Project ArAGATS Kasakh Valley Archaeological Survey, Armenia: Report of the 2014–2017 Seasons, American Journal of Archaeology, N 126(2), 261–303.
18. Muradyan F. 2018, Early Bronze Age Burial Mounds in Avan, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 12(2), 15–26.
19. Palumbi G. 2007, From Collective Burials to Symbols of Power. The Translation of Role and Meanings of the Stone-lined Cist Burial Tradition from Southern Caucasus to the Euphrates Valley, Scienze dell'Antichità, N 14, 17–44.
20. Palumbi G. 2016, The Early Bronze Age of the Southern Caucasus, Oxford Handbooks Online.
21. Poulmarc'h M., Pecqueur L., Jalilov B. 2014, An Overview of Kura-Araxes Funerary Practices in the Southern Caucasus, Paleorient, N 40 (2), 231–246.
22. Yengibaryan N. 2022, Bronze Age Tomb from the Cemetery of Sasunik. Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 16(1-2), 496–502.

ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՅԵՐԻ ԿԻԼԻԿՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՎԱՐԿԱԾԸ
THE HYPOTHESIS OF CILICIAN ORIGIN OF MUSADAG ARMENIANS
ГИПОТЕЗА КИЛИКИЙСКОГО ПРОИСХОЖДЕНИИ АРМЯН МУСАЛЕРА

Խորեն Գրիգորյան
Khoren Grigoryan
Хорен Григорян

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Institute of Archaeology and Ethnography, NAN RA
Институт археологии и этнографии НАН РА

khoren.grigoryan@iae.am

Ներկայացվել է՝ 11.11.2024; գրախոսվել է՝ 25.09.2024; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 11.11.2024; Revised: 25.09.2024; Accepted: 18.04.025
Представлено: 11.11.2024; рецензировано: 25.092024; принято: 18.04.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-262

Ամփոփում – Ընդունված է այն կարծիքը, որ ծագումնաբանական վարկածները հանրային պատմության (public history) սահմաններում ավելի իրատեսական են, և ժամանակին հետազոտողներն այդ մասին ասել են, որ այս անցյալը բացարձակ ճշմարտություն չէ, և դրա խնդիրն այն է, որ մարդկանց տա այնպիսի ինքնություն, որը նրանց համապատասխան իրավունքներ բարձրաձայնելու հնարավորություն կընձեռի: Անցյալի պատկերացումները «ծնվելու», «վերհիշելու», «ակտիվացվելու» պահին արտացոլում են, առաջին հերթին, էթնիկ խմբի (մեր դեպքում՝ ներէթնիկ խմբի) համապատասխան ժամանակաշրջանի վիճակը, նրա հայացքը շրջակա աշխարհի հանդեպ և, անշուշտ, ապագայի տեսլականը: Մինչև XIX դ., երբ խմբերի անցյալի վերաբերյալ կոլեկտիվ իմացությունները ձևավորված չէին համատարած կրթության շնորհիվ ներդրվող գիտելիքով, խմբային ինքնությունների փնտրտուքների խնդիրներն առավել հաճախ ակտիվանում էին հակամարտությունների իրավիճակներում՝ «ապացուցելու» կամ «մերժելու» այս կամ այն դրույթը, «իրավունքը» կամ հեռանկարը: 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին մուսալեռցիների ինքնապաշտպանական մարտերից հետո արդեն Եգիպտոսի Պորտ Սաիդի գաղթակայանում առաջ եկավ այն հարցադրումը, թե որտեղի՞ց են ծագում մուսալեռցիները: Այս փնտրտուքը առավել տեսանելի է ժամանակի գիտական, գեղարվեստական գրականության մեջ, որը և հետագայում տարածվել է մուսալեռցիների մեջ բանավոր պատմությունների տեսքով: Սույն հոդվածում ներկայացված է մուսալեռցիների ծագման կիլիկյան վարկածը: Փորձել ենք այս նարատիվի առաջացմանը և զարգացմանը զուգահեռ աղբյուրագիտական հետազոտություն կիրառել՝ գտնելու համար դրա առա-

ջացման նախապատմությունը: Սրանից զատ, ներառված են նաև ազգագրական հարցազրույցներից արված եզրակացություններ:

Abstract – It is generally accepted that genealogical hypotheses within the framework of public history are more realistic. Earlier researchers stated that this past is not an absolute truth; rather, its task is to provide people with an identity that allows them to assert their rights. Representations of the past at that moment of "birth", "recall," and "activation" primarily reflect the state of an ethnic group (in our case, a sub-ethnic group) at the respective time, their view of the world around them, and, of course, their vision of the future. In 1915, after the self-defense of Musa Dagh during the Armenian Genocide, the question of the origins of the Musa Dagh people arose in the refugee settlement of Port Said, Egypt. This search is most evident in the scientific and artistic literature of that time, which later spread among the Musa Dagh people in the form of oral histories. This article presents the Cilician-origin hypothesis concerning the ancestry of the Musa Dagh Armenians. A parallel source-critical analysis is applied to trace the historical background of this narrative's emergence and development. In addition, the article includes insights derived from ethnographic interviews.

Аннотация – Принято считать, что генеалогические гипотезы в рамках публичной истории более реалистичны, и ранее исследователи говорили, что это прошлое не является абсолютной истиной, а его задача – предоставить людям идентичность, позволяющую им отстаивать свои права… Представления о прошлом в момент «рождения», «воспоминания», «активизации» отражают прежде всего состояние этноса (в данном случае внутриэтнической группы) в соответствующее время, его взгляд на окружающий мир и, конечно же, видение будущего. В 1915 году, после самообороны мусалерцев во время Геноцида армян в египетском поселении Порт-Саид встал вопрос о генезисе мусалерцев, что нашло отражение в научной и художественной литературе того времени, распространившейся среди мусалерцев в виде устных рассказов. В данной статье представлена гипотеза о киликийском происхождении мусалерских армян. Параллельно проводится источниковедческий анализ с целью выявления исторического фона возникновения и развития данного нарратива. Кроме того, в исследование включены выводы, основанные на этнографических интервью.

Հիմնաբառեր – Մուսալեռ, Կիլիկիա, ցեղասպանություն, Ալեքսանդրեթ, ծագման փնտրտուք:
Keywords – Musadagh, Cilicia, Genocide, Alexandret, Search for Origin.
Ключевые слова – Мусалер, Киликия, геноцид, Александретта, поиск генезиса.

Ներածություն

Տիգրան Անդրեասյանն առաջիններից էր, որ «Այլակներ եւ խլեակներ» ժողովածում և ապա առանձին՝ «Սվեդիայի բարբառը: Քիսթինըգի լեզուն» աշխատության մեջ անդրադարձավ մուսալեռցի-սվեդիահայերի ով լինելու հարցին՝ նրանց բարբառի վերաբերյալ գրելով երկու ընդարձակ հոդվածներ, խոսելով նաև ծագումնաբանական որոշ խնդիրների մասին (Անդրեասյան 1967, Սալբի 1919, 217): Բացի բուն բարբառագիտական հետազոտությունից, հեղինակը հատուկ անդրադարձ է կատարում մուսալեռցի-սվեդիահայերի ծագումնաբանա-

կան հարցերին, և հիմք ընդունելով բարբառային որոշակի առանձնահատկություններ՝ համակարգում է մուսալեռցիների ծագման առկա վարկածները.

1. կիլիկյան ծագում,
2. փռուգիական ծագում,
3. զանգեզուր-ղարաբաղյան ծագում (Գրիգորյան 2019, 763–774),
4. Տիգրան Մեծի գերտերության ծագում (Անդրեասյան 1967, 317–348):

Մուսալեռցիների կիլիկյան ծագումը 1915 թ. ի վեր ամենատարածված վարկածն էր (առավել մանրամասն տե՛ս Մարտիրյան 1952, 35–36), որի մասին է հենց մեր սույն հետազոտությունը, և որը հիմնականում առնչվում էր Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո այս տարագրյալ խմբին՝ հայկական որևէ հավաքական խմբի մաս կազմելու փնտրտուքի հետ կապված: Այս վարկածը շարունակում է մինչև հիմա արձագանք ունենալ հուշագրություններում և մուսալեռցիների վերաբերյալ տպագրվող նորովի մեկնություններում (Շերպեթճեան 2010, 15–20):

Մուսալեռցին՝ կիլիկեցի

Կիլիկյան հայկական թագավորության գոյության ողջ ընթացքում, եթե, իհարկե, հաշվի չառնենք «Փիլարտոսի Անտիոքը» (մանրամասն տե՛ս Անանուն Եդեսիացի 1982, 22), քանի որ այն ժամանակ դեռ Կիլիկիան Հայաստանը դեյուրե գոյություն չուներ, Սելևկիա-Սվեդիա-Սամանդաղն ու Ալեքսանդրեթը՝ Ալեքսանդրեթի սանջակը, որտեղ գտնվում էր Մուսա լեռը, շատ կարճ ժամանակահատվածով են ներգրավվել հայկական թագավորության կազմում, այն էլ Լևոն Մեծի թագավորության ընթացքում (մանրամասն տե՛ս Բոզոյան, Շուքուրով, Տեր-Ղևոնդյան, Դանիելյան 2016, 30, 146): Այդ մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին իշխանին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռանք յառաջագոյն ասացելոյ առնն, որ յազգականութենէ և ի զաւակացն Գագկայ Արծրունեաց: Սոքա ընդարձակեցին զսահմանս գաւառաց և քաղաքաց աշխարհին Կիլիկեցւոց և Սուրացւոց և այլոց բազմաց. առին զանուանի քաղաքս աշխարհին՝ զՏարսոն և զՍիս և զՍելևկիա և որ շուրջ զնոքօք գաւառք և քաղաքք» (Կիրակոս Գանձակեցի 1961, 154): Իսկ Մխիթարյան հայր Միքայել Վ. Հովհաննեսյանը, անդրադառնալով Կիլիկիայի սահմաններին, հետաքրքիր ակնարկ է անում այն մասին, թե Լևոն Մեծի ժամանակ «Սելեւկիան» (ներկայիս Սամանդաղը – Խ.Գ.) և «Աղեքսանդրեակը» (մեծ հավանականությամբ՝ Ալեքսանդրեթ՝ ներկայիս Իսկենդերունը – Խ.Գ.) ինչպես են հայտնվել Կիլիկյան Հայաստանի սահմաններում. «Ուրեմն, կարելի է Կիլիկիոյ սահմանները գծել՝ Պուլղար Տաղէն մինչեւ ծովեզերք. սակայն հիներու քով ասիկա վէճի առարկայ էր. ոմանք Կիլիկիոյ սահմանները կը հասցնէին մինչեւ Կոռիկոսի եւ Սելեւկիոյ միջեւ, ուրիշներ՝ մինչեւ Անամուռի հրուանդանը, իսկ ոմանք ալ մինչեւ Կոռակեսիոն, Սելճուքներու՝ Ալայէ (ներկայի՝ Ալանեա) քաղաքը:

Կիլիկիոյ մաս կը համարէին ոմանք նաեւ Իսաւրիան եւ Լակայոնիան-Լարանտա (Քարաման) քաղաքը, զոր Մեծն Լեւոն խոստացեր էր նուաճել եւ յանձնել իրեն դաշնակից խաչակիր ասպետներուն: Այս սահմանային զանազանութիւնը անկից առաջ կու գայ՝ որ մեր պատմագիրները Կիլիկիոյ թագաւորութեան որոշ սահմաններ չեն գծեր. ինչպէս ըսինք, դարերու ընթացքին ան փոփոխական եղած է, իսկ ԺԴ. դարուն արաբ աշխարհագիր Ապուլֆէտա կը գրէ՝ թէ Հայոց Կիլիկիոյ սահմանները կը հասնէին Աղեքսանդրեակէն մինչեւ Կոռիկոս քաղաքը եւ Կալիւկադնոս գետը» (Յովհաննէսեան 1989, 3):

Չնայած դրան, ֆրանսիացիների՝ Ալեքսանդրեթ-Իսկենդերունը գրավելու կապակցութեամբ լոյս տեսավ Վ. Քյուրքճեանի «Հայկական Կիլիկիա» աշխատութիւնը՝ հետեւյալ նախաբանով. «Անցած Նոյեմբերի մեջ 15-ին, ֆրանսական նաւաբաժին մը գրաւեց Ալեքսանտրէդը: Այդ դէպքը հրճուանքով ողջունուեցաւ ամբողջ աշխարհի Հայերուն կողմէ, իբրեւ իրականացումը հնգադարեան երազի: Ալեքսանտրէդի նաւահանգիստը կը գտնուի Կիլիկիոյ հայկական թագաւորութեան սահմաններուն մէջ...» (Քիւրքճեան 1919, 9): Նոյնիսկ չկասկածելով Ալեքսանդրեթի՝ Հայկական Կիլիկիայի մաս լինելու մեջ՝ հեղինակը ուղղակի նշում է իր աշխատանքը շարադրելու նպատակը, քանի որ Կիլիկիայի հայկական լինելը «վերջերս վէճի առարկա եղած է ինչ-ինչ օտար շրջանակներու կողմէ» (Քիւրքճեան 1919, 9): Հեղինակն իր աշխատության էջերում անդրադառնալով աղբյուրագիտական նյութերին՝ փորձում է Ալեքսանդրեթի, Սվեդիայի և շրջակա տարածքների հայկականությունն ապացուցել՝ հիմնականում հղելով XI-XIII դդ. պատմագրությունը՝ ավարտելով աշխատությունը հետեւյալ եզրահանգումով. «Այսչափը բաւական է կը կարծեմ ցոյց տալու թէ՝ Ալեքսանտրէդ նաւահանգիստը անբաժանելի մասն է Հայկական Կիլիկիոյ, թէ՛ աշխարհագրօրէն եւ թէ՛ պատմականօրէն» (Քիւրքճեան 1919, 79):

Այսպիսով, Մուսա լեռ-Սվեդիան գրավոր հրատարակություններում (համենայն դեպս XX դարի մեզ հայտնի հրատարակություններում) հանդես է գալիս «Կիլիկիա» հավաքական տարածքի մեջ, նույնիսկ ծագման պատմության և պատմական ակնարկների սկիզբը համարվում է Կիլիկյան թագավորությունը: Մինչդեռ գրավոր աղբյուրները վկայում են այն մասին, որ միայն Լևոն Մեծի կառավարման ընթացքում է, որ հնարավոր է Սելևկիա-Սվեդիա-Սամանդաղը տեղադրել Կիլիկյան Հայաստանի սահմաններում: Ավելին, հստակ աղբյուրներ կան նաև այն մասին, որ Բյուզանդիայի Հովհաննես կայսրը Անավարզայի, Ադանայի հետ մեկտեղ հայկական Կիլիկիայից գրավել է նաև Ալեքսանդրեթը: Ա. Բոզոյանը գրում է. «Ավելի համառ և երկարատև էր Վահկա ամրոցի պաշտպանությունը, որը սկսվել էր Անավարզայի գրավումից անմիջապես հետո: Վահկայի պաշարման ժամանակամիջոցում կայսրը կարողացավ տիրել Թիլ Համտուն ամրոցին և վերջինիս բնակիչներին բռնի բնակեցրեց Կիպրոս կղզում, այնուհետև գրավեց Ալեքսանդրեթը և վերականգնեց նրա նավահանգիստը» (Բոզոյան 1988, 115–116): Մեկ այլ տեղ հեղինակը հստակ նշում է, որ ժամանակակից Սամանդաղը, որի շուրջն էլ հենց ձևավորվել էին Մուսա լեռան գյուղերը,

Անտիոք առանձին քաղաքական միավորման կազմում էր՝ Կիլիկյան Հայաստանից անկախ: Այսպես, «ըստ Դեաբոլյան պայմանագրի, Անտիոքի լատին իշխանությանն էր թողնվում միայն, այսպես կոչված, Ներքին Ասորիքը՝ Անտիոք կենտրոնով, որի միակ նավահանգստային քաղաքը Սուետիան էր» (Բոզոյան 1988, 74):

Վերոհիշյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ Մուսա լեռան տարածքը կարճ ժամանակ է գտնվել Կիլիկյան Հայաստանի կազմում, ապա անջատվել նրանից մինչև Կիլիկյան հայկական թագավորության կործանումը: Այնուամենայնիվ, XX դ. հրատարակություններից շատերի հեղինակները չեն բացառում կամ չեն կասկածում Մուսա լեռան՝ Կիլիկյան Հայաստանի մաս կազմելու հանգամանքը: Այս տեսանկյունից արժե անդրադառնալ Կլոդ Մութաֆյանի՝ Կիլիկիային նվիրված հսկայածավալ մենագրությանը (Մութաֆյան 2001), որտեղ հեղինակն առաջին հատվածը նվիրել է Կիլիկիայի սահմանների նկարագրությանը տարբեր դարաշրջաններում՝ աղբյուրագիտական նյութերով տեղանքի ճշգրտմանը՝ սրանով հիմնավորելով, որ Անտիոքն ընդհանրապես և Սամանդաղ-Մուսալեռը մասնավորապես երբեք Կիլիկիայի սահմաններում չեն եղել թե՛ աշխարհագրորեն, թե՛ Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում: Հետաքրքիր է, որ տարբեր հեղինակների կողմից նշվող Ամանոսյան լեռնաշղթան, որից անդին արդեն Անտիոքն է, միշտ նկարագրվել է Կիլիկիայի սահմաններում, իսկ Կ. Մութաֆյանն այն ներկայացնում է որպես Կիլիկիայի և Ասորիք-Անտիոքի միջև սահման, հատման գիծ: Այսպես, «Դրա հակառակ կողմում՝ մոտավորապես Մարաշի հարավային ուղղությամբ, անջատվում է Ամանոսը, որը միանում է Իսոս ծովածոցի արևելյան ափին: 2260 մետր բարձրության հասնող այս լեռնաշղթան Կիլիկիան բաժանում է Ասորիքից և կարծես թե համապատասխանում է արաբ աշխարհագրագետների Ջեբել Լուկամին» (Մութաֆյան 2001, 5): Իսկ անտիկ հեղինակներին անդրադարձի մեջ նշում է. «Ստրաբոնը Պամփյուլիայի և Կիլիկիայի բաժանման կետ է դիտում այժմյան Ալանիան: Ըստ հույն աշխարհագրի՝ երկու Կիլիկիաները բաժանվում են Լամոս գետի հոսանքով, իսկ Ասորիքի սկիզբը տեղադրում է ներկայիս Սամանդաղի մոտ» (Մութաֆյան 2001, 17): Ապա շարունակելով անտիկ հեղինակների՝ Կիլիկիայի տեղադրության թեման՝ նշում է, որ Ալեքսանդրեթն այդ ժամանակ արդեն առավելագույնս կարող էր դիտարկվել որպես Ասորիքի սահմանային քաղաք և ոչ երբեք Կիլիկիայի մաս (Մութաֆյան 2001, 17): Առավել ուշագրավ է այն փաստը, որ Կ. Մութաֆյանը, մեծ մասամբ օգտագործելով ֆրանսիական փաստաթղթեր և նյութեր, անդրադառնում է նաև Ալեքսանդրեթի սանջակի՝ XX դարասկզբի դեպքերին և սույն տարածքի վարչաքաղաքական բաժանմանը Թուրքիայի և Ֆրանսիայի միջև (Սայքս Պիկոյի պայմանագիր 1916 թ., Լոզանի պայմանագիր 1921 թ., 1939 թ. Ալեքսանդրեթի հանձնումը Թուրքիային) (մանրամասն տե՛ս Պողոսյան 2014, 47–56):

Ուշագրավ է, որ հղված գործերում Ալեքսանդրեթն արդեն ընկալվում է ոչ թե որպես Ասորիք, այլ՝ Կիլիկիայի մաս և վերոնշյալ պայմանագրերում էլ արդեն ներկայացվում է որպես Կիլիկիայի մաս (Մութաֆյան 2001, 23):

Անդրադառնալով արդեն դարասկզբին մուսալեռցիների ծագման արմատները փնտրող, հետազոտող կամ ստեղծագործող հեղինակներին՝ նշենք, որ նրանք հարկ էին համարում նախ և առաջ խոսել մուսալեռցիների կիլիկյան ծագման մասին՝ հաճախ նաև խորանալով աղբյուրագիտական «թոհուբոհի» մեջ: Օրինակ, Տէր-Ղազարյանը Կիլիկայի սահմանների վերաբերյալ նշում է. «Կիլիկիոյ արեւելեան սահմանը կազմող Ամանոսեան լեռները սկիզբ կ'առնեն Քեսապ-Սուէտյա-Մուսատաղեն եւ Ալեքսանդրէթեն ու կերկարին դէպի հիւսիս...» (Տէր-Ղազարեան 1966, 7): Ապա հեղինակը, հղում անելով Ն. Լամբրոնացու հիշատակություններին՝ նշում է. «Այս շրջանին մէջ կը գտնուէին բազմաթիւ վանքեր Յոյներու եւ ֆռանկներու, որոնց մասին Ներսես Լամբրոնացին իր հեղինակած Մեկնութիւն Յայտնութեան գրքին յիշատակարանին մէջ կը գրէ. «...Զմեկնութիւն նորին ի մերս բարբառ ոչ գտի: Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք եւ շրջելով յոր անդ վանօրայք Հոռոմոց եւ ֆռանկաց... ուստի եւ քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտի սրբոյն Պաւղոսի ի քաղաքն անդ, զմեկնութիւն Յայտնութեանս ի Լունպարտ բարբառ եւ ի նոյն գիր որով վարին Ֆռանկք... ոչ գտի զոք, որ յայնմ բարբառոյ ի Հայս կարէր յեղաշրջել... ապա ելեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառնն, որ ի հիւսիսոյ կողմ անդր ի մի վանորէիցն Հոռոմաց, որուն անուն էր Բեթիաս... (մանրամասն տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1988, 228): Ուրեմն, ըստ Ներսէս Լամբրոնացու, «Ամանոսեան այս սուրբ լեռներուն վրայ հայկական վանք գոյութիւն չունէր, այլ կը գտնուէին Հոռոմաց եւ Ֆռանկաց վանքեր միայն» (Տէր-Ղազարեան 1966, 66): Սա, փաստորեն, միակ աշխատությունը չէ, որ հասնելով Մուսա լեռան՝ Կիլիկիայի սահմանների մեջ լինել-չլինելուն՝ հեղինակները հարկ են համարել առանձնահատուկ բացատրություն տալ, նույնիսկ աղբյուրագիտական նյութ օգտագործել Կիլիկիայի սահմաններում այն ներառելու համար: Ինչ վերաբերում է մուսալեռցի հեղինակներին, ապա նրանք, մուսալեռցիների արմատների փնտրտուքից զատ, ավելի էին խորանում՝ հասնելով մինչև՝ «իսկ կիլիկեցի հայերը ո՞րտեղից են ծագել/եկել» մտքին:

Եզրակացություններ

Պարզ է, որ Ալեքսանդրեթի սանջակն ու Սամանդաղ-Սվեդիան ո՛չ աշխարհագրորեն և ո՛չ էլ վարչականորեն Կիլիկիայի մաս չեն կազմել: Այս տարածքի վարչական սահմանները տարբեր դարերում փոփոխվել են, բայց դրանք շարունակաբար եղել են Կիլիկիա-Ասորիքի սահման: Անհրաժեշտ է նաև նշել, որ արդեն XX դ. սկզբին Թուրքիա-Ֆրանսիա պատերազմական և քաղաքական գործընթացների ժամանակ Ասորիքը ներառվել է Կիլիկիայի կազմում և փոխադարձ կնքված պայմանագրերում հանդես եկել որպես Կիլիկիայի մաս, որն էլ թերևս առիթ է դարձել հենց այդ շրջանում այս տարածքը Կիլիկիայի կազմում ներկայացնելու կամ ներառելու համար: Համենայն դեպս, Հայոց ցեղասպանությունից հետո մեծ թվով հայ հեղինակներ Ասորիքին և մուսալեռցիներին հիմնականում անդրադարձել են որպես Կիլիկիա ու կիլիկեցի և նրանց պատ-

մությունը, անգամ ծագումը դիտարկել հենց կիլիկեցիների քննության համատեքստում: Թերևս կիլիկեցիների՝ արցախյան ծագման վարկածն էլ (մանրամասն տե՛ս Տեր-Պետրոսյան 2007, 293–295, 304, 326–340) պատճառ է դարձել, որ մուսալեռցիների ծագումնաբանությանը նվիրված ուսումնասիրություններում այն մասնավորեցվել և զարգացում է ապրել:

Շնորհակալական

Հոդվածը գրելու ընթացքում ցուցաբերած աջակցության և օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում մեր ատենախոսության գիտական ղեկավար, ազգագրագետ, պ.գ.թ. Հրանուշ Խառատյանին:

Գրականություն/References/Литература

1. Անանուն Եդեսիացի 1982, Ժամանակագրություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12 (թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Լ. Տեր-Պետրոսյանի, խմբ.՝ Պ. Խաչատրյան), Երևան, ՀՍԱՀ ԳԱ հրատ.:
Anonymous Edessian 1982, Chronology, Foreign Sources about Armenia and Armenians, vol. 12 (Translation from the original, foreword and footnotes by L. Ter-Petrosyan, ed. by P. Khachatryan), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմութիւն Հայոց (աշխատասիրութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, ՀՍԱՀ ԳԱ հրատ.:
Kirakos Gandzaketsi 1961, History of Armenia (compilation and edition by K. Melik-Ohanjanyan), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
3. Անդրեասյան Տ. 1967, Սվեդիայի բարբառը: Քիսթինըգի լեզուն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:
Andreasyan T. 1967, The Suedians Dialect: The Language of Kistinik, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
4. Բոզոյան Ա. 1988, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30–70-ական թվականներին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Bozoyan A. 1988, Eastern Policy of Byzantium and Cilician Armenia in the 30s-70s of the 12th century, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
5. Բոզոյան Ա., Շուքուրով Մ., Տեր-Ղևոնդյան Վ., Դանիելյան Գ. 2016, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմա-բանասիրական ակնարկ), Երևան, «Գիտություն»:
Bozoyan A., Shukurov M., Ter-Ghevondyan V., Danielyan G. 2016, Cilician Armenia in the Perceptions of the Bordering State Units (Historiographical Review), Yerevan, Gitutyun (in Armenian).
6. Գրիգորյան Խ. 2019 Մուսալեռցիները «Ղարաբաղցի՞». նախնիների ինքնության փնտրտուքը 1915 թ. ինքնապաշտպանական մարտերից հետո, Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ, Հայկազեան տպ., 763–774:

Grigoryan, Kh. 2019, Did the Musa Dagh Population Originate from Artsakh? Tracing An estral Identity after the 1915 Self-Defense Battles, Haigazian Armenological Review, Beirut, Haigazian Press, 763–774 (in Armenian).

7. Յովհաննէսեան (Մխիթարեան) Հայր Միքայէլ Վ. 1989, Հայկական Կիլիկիոյ Բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, Մխիթարեան տպ.:
Father Michael V. Hovhannesean (Mkhitarian) 1989, The Fortresses and Fortress Cities of Armenian Cilicia, Venice, Mkhitarean Priting House (in Armenian).

8. Մաթևոսյան Ա. 1988, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե–ԺԲ դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Matevosyan A. 1988, Colophons of Armenian Manuscripts, 5th–12th Centuries, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

9. Մարտիրյան Ի. 1952, Ջեբել Մուսայի բարբառը, Էջմիածին, Գ, 33–37:
Martiryan I. 1952, The Dialect of Jebel Musa, Etchmiadzin, N 3, 33–37 (in Armenian).

10. Մութաֆյան Կ. 2001, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում (թարգմ.՝ Ա. Շահումյանի, խմբ.՝ Ա. Բոզոյան), Երևան, «Նաիրի»:
Mutafyan K. 2001, Cilicia at the Crossroads of Empires (translated by A. Shahumyan, edited by A. Bozoyan), Yerevan, Nairi (in Armenian).

11. Շերպեթճեան Ս. 2010, Պատմութիւն Սուէտահայերու, Պեյրութ:
Sherpetchean S. 2010, History of the Suetan Armenians, Beirut (in Armenian).

12. Պողոսյան Ս. 2014, Մուսալեռցիները 1915 թ. ֆրանս-բրիտանական ծրագրերում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 47, 47–57:
Poghosyan S. 2014, The Musalerians in 1915 in Franco-British Programs, Journal of Social Sciences, N 47, 47–57 (in Armenian).

13. Սալբի Մ. 1919, Ալեակներ եւ խլեակներ: Հայ վրանաքաղաքին տարեգիրքը, Աղեքսանդրիա, տպ. Ա. Գասապեան:
Salbi M. 1919, The Dispersed and the Deaf: Chronicle of the Armenian Tent City, Alexandria, Printing House of A. Gasabean (in Armenian).

14. Տէր-Ղազարեան Յ. 1966, Հայկական Կիլիկիա տեղագրութիւն, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:
Ter-Ghazarean Y. 1966, Armenian Cilicia Topography, Antelias, Printing House of the Catholicosate of the Armenians Great House of Cilicia, (in Armenian).

15. Տեր-Պետրոսյան Լ. 2007, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն, Երևան, «Անտարես»:
Ter-Petrosyan L. 2007, The Crusaders and the Armenians, vol. 2, Historical and Political Research, Yerevan, Antares (in Armenian).

16. Քիրքճեան Վ.Մ. 1919, Հայկական Կիլիկիա: Ուսումնսիրութիւն մը Կիլիկիոյ հայկական թագաւորութեան վրայ «Պանծալին Այաս» Ալեքսանտրեդ Նիւ Եորք, Կոչնակ հրատ. ընկ.:
Kirkjean, V. M. 1919, Armenian Cilicia: A Study on the Armenian Kingdom of Cilicia "The Glorious Ayas", Alexandret, New York: Kochnak Publishing Co (in Armenian).

SOCIAL-PSYCHOLOGICAL AND COGNITIVE ASPECTS OF EMOTIONS
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ И КОГНИТИВНЫЕ АСПЕКТЫ ЭМОЦИЙ
ՀՈՒՅԶԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Irina Gorbacheva[1,*], Olga Shangina[1]
Իրինա Գորբաչովա[1,*], Օլգա Շանգինա[1]
Ирина Горбачева[1,*], Ольга Шангина[1]

[1] National Research University of Electronic Technology (MIET), Moscow, Russian Federation
Московский институт электронной техники (МИЭТ), г. Москва, РФ
Մոսկվայի էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտ (MIET), Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն

Ներկայացվել է՝ 25.01.2024; գրախոսվել է՝ 30.01.2025; ընդունվել է՝ 18.04.2025
Received: 25.01.2024; Revised: 30.01.2025; Accepted: 18.04.025
Представлено: 25.01.2024; рецензировано: 30.01.2025; принято: 18.04.2025

* Author for correspondence: dps@miee.ru
Գրագրություն վարող հեղինակ՝ dps@miee.ru
Автор, ведущий корреспонденцию: dps@miee.ru

Author contrubutios: IG – conceptualization, writing original draft; OSh. – editing
Հեղինակների ներդրումը. ԻԳ – գաղափար, նախնական տեքստ; ՕՇ – խմբագրում
Вклад авторов: ИГ – концептуализация, написание текста; ОШ – редактирование

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.1-270

Abstract – The article is devoted to the psychological study of the cognitive and socio-psychological significance of emotions. Various approaches to the classification of emotions have been analyzed. Three basic aspects of emotions have been highlighted: 1) the internal (qualitative) aspect of the experience; 2) the physiological (impressive) aspect; 3) the external (expressive) behavioral aspect. The authors proceed from the position that emotions are always both subjective and objective in nature, since they are associated with objective biochemical, vegetative and neuro-physiological processes in the body. The main approaches to the relationship between emotions and cognitive are the following: 1) an idea of the complete autonomy of the emotional and cognitive spheres as separate modules; 2) an idea of the relationship between emotions and cognitive processes in the determining and primary role of cognitive processes; 3) emotional and the cognitive sphere is unified and does not have a clear boundary; 4) the emotional and cognitive spheres simultaneously have signs of autonomy and interaction of various types. It is the latter approach that seems to be the most reasonable. It has been concluded that not only emotions affect cognitive processes but also vice versa. Negative beliefs help to focus attention on negative emotions and feelings thereby reinforcing them. The emotional co-

loring of initially neutral events and situations can occur after the fact through analysis and reflection. Since the influence of emotions on memory is the most studied to date, further development of the issue of the influence of emotions on attention, perception, understanding, thinking, decision-making and action are promising areas of research. It is important to take into account not only the valence of emotions, but also their other characteristics, such as generalization and orientation.

Ամփոփում – Հոդվածը նվիրված է հույզերի ճանաչողական և սոցիալ-հոգեբանական նշանակության հոգեբանական ուսումնասիրությանը: Վերլուծության են ենթարկվել հույզերի դասակարգման տարբեր մոտեցումներ: Առանձնացել են հույզերի երեք հիմնական հայեցակետերը՝ 1) ապրումի ներքին (որակական), 2) ֆիզիոլոգիական (տպավորության), 3) արտաքին (արտահայտչական) վարքային: Հեղինակները ելնում են այն դիրքորոշումից, որի համաձայն, զգացմունքները միշտ ունեն միաժամանակ սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթ, քանի որ դրանք օրգանիզմում կապված են օբյեկտիվ՝ կենսաքիմիական, վեգետատիվ և նեյրոֆիզիոլոգիական գործընթացների հետ: Կարևորվում են հույզերի և ճանաչողության հարաբերակցության հիմնական մոտեցումները. 1) հուզական և ճանաչողական ոլորտների ամբողջական ինքնավարության գաղափարը՝ որպես առանձին մոդուլներ, 2) հույզերի և ճանաչողական գործընթացների միջև կապի գաղափարը՝ ճանաչողական գործընթացների որոշիչ և առաջնային դերի պարագայում, 3) զգացմունքային և ճանաչողական ոլորտները միասնական են և չունեն հստակ սահման, 4) զգացմունքային և ճանաչողական ոլորտները միաժամանակ ունեն ինքնավարության և տարբեր տեսակի փոխազդեցության նշաններ: Թվում է՝ հենց վերջին մոտեցումն է առավել հիմնավորված: Այսպիսով, ոչ միայն զգացմունքներն են ազդում ճանաչողական գործընթացների վրա, այլև հակառակը: Բացասական համոզմունքները նպաստում են բացասական հույզերի և զգացմունքների վրա կենտրոնանալու՝ դրանով իսկ ամրապնդելով դրանք: Ի սկզբանե չեզոք իրադարձությունների և իրավիճակների հուզական երանգավորումը կարող է առաջանալ պոստֆակտում՝ վերլուծության և խորհրդածության միջոցով: Քանի որ հույզերի ազդեցությունը հիշողության վրա, ուստի եղել է մինչ օրս ամենաշատ ուսումնասիրվածը, հետազոտության հեռանկարային ոլորտներն են ուշադրության, ընկալման, ըմբռնման, մտածողության, որոշումների կայացման և գործողությունների վրա հույզերի ազդեցության հարցի հետագա զարգացումները: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն զգացմունքների վալենտությունը, այլև դրանց այլ բնութագրերը, ինչպիսիք են ընդհանրությունը և ուղղվածությունը:

Резюме – Статья посвящена психологическому исследованию познавательного и социально-психологического значения эмоций. Проанализированы различные подходы к классификации эмоций. Выделены три базовых аспекта эмоций: 1) внутренний (качественный) аспект переживания; 2) физиологический (импрессивный) аспект; 3) внешний (экспрессивный) поведенческий аспект. Авторы исходят из позиции, согласно которой эмоции всегда носят одновременно субъективный и объективный характер, поскольку они связаны с объективными биохимическими, вегетативными и нейрофизиологическими процессами в организме. Выделены основные подходы к соотношению эмоций и когниций: 1) представление о полной автономии эмоциональной и когнитивной сфер как отдельных модулей; 2) представление о связи эмоций и когнитивных процессов при определяющей и первичной роли когнитивных процессов; 3) эмоциональная и когнитивная сфера едины и не имеют четкой границы; 4) эмоциональная и когнитивная сфера обладают одновременно признаками автономии и взаимодействия различного типа. Именно

последний подход представляется наиболее обоснованным. Сделан вывод о том, что не только эмоции влияют на познавательные процессы, но и наоборот. Негативные убеждения способствуют сосредоточению внимания на негативных эмоциях и чувствах, тем самым усиливая их. Эмоциональная окраска изначально нейтральных событий и ситуаций может происходить постфактум, благодаря анализу и размышлению.

Keywords – emotions, feelings, communication, cognitive activity.
Հիմնաբառեր – հույզեր, զգացմունքներ, հաղորդակցություն, ճանաչողական գործունեություն:
Ключевые слова – эмоции, чувства, общение, познавательная деятельность.

Introduction

Dualism of rational and emotional spheres in the human psyche has repeatedly come into the focus of attention of researchers. Emotional phenomena are an important and integral part of human mental life, which is often opposed to rational consciousness, but at the same time forms a dialectical unity with the rational cognitive sphere. The connection between emotions and cognitive processes is a problem, the study of which can form a deeper understanding of what factors influence cognitive processes and how these processes can be improved, learning can be optimized, learning new things, and, ultimately, contribute to more effective adaptation of the individual to the environment. The modern world increasingly confronts individuals with the need to act in conditions of uncertainty, which actualizes the need to form more perfect knowledge, the development of which cannot be handled exclusively by a rational formal-logical form of information processing, without taking into account the emotional component. This leads to the intensification of scientific research in such areas as emotional intelligence, intuition, as well as the influence of emotions on cognitive processes. The problem that our research is devoted to is the connection between emotions, communication and cognitive processes. This problem is not new in scientific knowledge. In particular, various aspects of the issue of the influence of emotions on cognition are revealed in the works of Yu.I. Alexandrov (Alexandrov 2004, 14–15), A. Domasio (Domasio 1997), E.P. Krutenkova, E.A. Esipenko, M.K. Ryazanova and M.Yu. Leontiev (Leontiev 2006, 57–79), A.I. Lukashev, E.A. Bychkova, E. Kazlaukas, A.N. Krutolevich (Krutenkova, Esipenko, Ryazanova, Khodanovich 2013, 129–145), D.V. Lyusin (Lyusin 2014, 146–160), R.S. Nemov Nemov 2003, 688 p., A.P. Pakhomov and N.E. Sudina (Pakhomov, Sudina 2013, 31–52), K.H. Pribram Pribram 1975, Ya. Reikovsky Rejkovsky 1979, S.L. Rubinstein Rubinstein 2002, A.V. Savchenkov (Savchenkov 2015), O.A. Solodilova Solodilova 2014, 1348–1351, L.Yu. Fomina (Fomina 2010, 58–63), N.K. Hoan (Hoan Ngo Kong 1984), E.D. Khomskaya and N.Ya. Batova (Khomskaya, Batova 1992) and others. At the same time, the problem of the influence of the emotional factor on the socio-psychological and cognitive spheres is so deep and relevant that many of its aspects still require detailed scientific development. According to the definition of E.D. Khomskaya and N.Ya. Batova, emotions (from the Latin emoveo – "wave", "shake") are "a special

class of mental processes and states associated with instincts, needs and motives, reflecting in the form of direct experience (satisfaction, joy, fear, and so on) the significance of situations affecting an individual for the implementation of his life activities" Khomskaya, Batova 1992, 10. Emotions can also be defined as mental phenomena that reflect in the form of experiences the personal significance of various life situations.

Approaches to Emotions, Feelings and Behavior

There are various approaches to the classification of emotional phenomena. Among them are affects (the strongest and shortest-lasting emotional reactions), emotions themselves (reactions to current or remembered situations), feelings (relatively more stable phenomena), moods (the most stable emotional phenomena), and stress (states of anxiety, mental exhaustion, and resistance caused by a tense environment) Nemov 2003, 106. Emotional phenomena differ in positive and negative direction, degree of generalization, and valence. Emotions are always simultaneously subjective and objective in nature (since they are associated with objective biochemical, vegetative, and neurophysiological processes in the body). In addition, emotions are characterized by three main aspects: 1) the internal (qualitative) aspect of experience; 2) the physiological (impressive vegetative) aspect; 3) the external (expressive) behavioral aspect.

Researchers have different approaches to the issue of the relationship between these aspects of emotions. Representatives of behaviorism (in particular, K. Izard) focus on the behavioral aspect, since this aspect can be observed directly. According to S.L. Rubinstein and A.N. Leontiev, the basic aspect of emotion is experience as a "mental reflection of the current state of need" (Rubinstein 2002, 542). A.N. Leontiev also adhered to this position (Leontiev 2006, 57–79). The aspect of experience reflects the attitude of the individual to himself, as well as to the processes and phenomena of the external world. The specificity of emotional reflection is that it has a regulatory function (Ya. Reikovsky, V.A. Ganzen, etc.). The essence of this function of emotions is that with the help of emotions the psyche reacts to deviations of the state from the usual norm, as a result of which the body receives a signal to mobilize to react to these deviations.

In the history of psychological science, a wide range of concepts of emotions has developed. Physiologists of the New Age, relying on the ancient views of Hippocrates, considered emotions in connection with the humoral vegetative regulation of body functions (the theory of W. James – K. Lange). Emotional states, according to this point of view, arise as a result of a peripheral signal.

In the theory of W. Cannon – F. Bard, the emphasis is shifted from the peripheral signal to the central nervous system (in particular, the role of the thalamus and subcortical centers in the formation of emotions is emphasized).

The activation theory of D.B. Lindsay – D.O. Hebb is based on the idea that emotions are determined by the processes of disturbance and restoration of balance in certain areas of the central nervous system (Nemov 2003, 95). An electroencephalogram for certain emotions in this theory is called an activation complex. D.O. Hebb developed a theory of emotional behavior, according to which emotions are based on diffuse cellular structures, including cells of the cerebral cortex, as well as cells of the diencephalic structure. Cellular structures depend on past experiences that change the synaptic connections of nerve cells.

In the course of further research into the nature of emotions, scientists came to the understanding that in the emotional sphere, cognitive factors play no less a significant role than vegetative factors, as well as environmental factors. On this basis, theories of emotions were formed that appeal to the specificity of cognitive processes as the basis for the emergence of certain emotional states. Theories of this type include the two-factor theory of S. Schechter, which explains emotion through two elements – physiological arousal and its cognitive interpretation. The products of cognitive processes are used in the two-factor theory to interpret the meaning of physiological reactions to external events. An example illustrating the essence of this approach is the following experiment: "Four groups of students took an exam. Previously, an experiment was conducted with these students, in which two groups were examined under hostile conditions, and the other two – under friendly conditions. During the exam, one of each pair of groups received an injection of adrenaline, and the other a control injection of saline. The students reported their experiences. As expected, the first group experienced mostly negative emotions, while the second group experienced positive ones. The effect of adrenaline was unexpected. It increased both positive and negative emotions. Whatever physiological state the injection caused, its sign was determined by the setting – the students' social environment, and not by the substance injected" (Pribram 1975, 102).

According to the biological theory of emotions by P.K. Anokhin, emotions developed evolutionarily due to the need to adapt to the environment. Leading negative emotions signal a deviation of the body from the norm (for example, thirst) and the need to take measures to return to normal. When the need is satisfied, positive emotions arise. Thus, emotions mark the behavior program and motivate certain actions.

P.K. Anokhin's ideas were developed by P.V. Simonov, who studied emotions from the standpoint of behavioral effectiveness. According to P.V. Simonov, emotion is a reflected need, as well as an assessment of the probability of its satisfaction. Emotions arise in conditions of a cognitive vacuum, when the subject does not have the knowledge of how to act correctly to satisfy the need. In other words, emotions compensate for the lack of information.

L. Festinger's theory of cognitive dissonance is based on the idea that emotion is a process, the essence of which is determined by the consistency of interacting systems. Negative emotions arise when the real state of affairs and previously formed

ideas diverge, positive emotions – in the opposite situation. In essence, L. Festinger reduced the psychological nature of emotions to a signaling function.

An attempt to overcome the one-sidedness in the study of emotions through a systems approach is the unified concept of consciousness and emotions by Yu.I. Alexandrov (Alexandrov 2004, 14–15). In this concept, emotions are considered the equivalent of consciousness, which in the early stages of ontogenesis allows us to determine the minimal distinction between the states of "good" and "bad". At later stages of development, consciousness ensures the complication of differentiation of the relationship between the organism and the environment, as a result of which behavior also becomes more complex.

Based on the knowledge accumulated in the context of various theories of emotions, the following functions of emotions are distinguished:

1) the function of reflection and evaluation;
2) the function of switching and reinforcement;
3) the function of compensation;
4) the function of motivation;
5) the cognitive function;
6) the function of crisis response;
7) the function of disorganization;
8) the holistic function (the function of holistic reflection);
9) the function of mobilization;
10) the function of expression.

Emotions and Cognition: Aspects of Interaction

S.L. Rubinstein (Rubinstein 2002). pointed out the unity of the emotional and cognitive components as the unity of knowledge and attitude, intellectual and affective. As N.K. Hoan rightly notes, "in scientific research, the holistic reflective act very rarely acts as the subject of study; in psychological experiments, attention is more often focused on the reflected content, and emotional experience is considered as one of the consequences" (Hoan Ngo Kong 1984, 4).

The separation of reason and feelings in European culture has a long prehistory, based on the Western Christian medieval idea of body as a prison of the soul, about the opposition of the bodily instinctive and spiritual principles in man. The widespread definition of cognitive processes (from the Latin cognition – "knowledge", "cognition", "study") emphasizes that these are precisely the processes of rational cognition. In an even earlier period, Aristotle understood the emotional sphere as a way of understanding a situation with greater or lesser participation of reason. R. Descartes in the New Age also clearly separated the emotional and rational spheres. Cognitive processes (memory, attention, perception, understanding, thinking, decision-making, action and influence) were for a long time interpreted exclusively as rational, while the emotional-sensory sphere was understood as irrational. If R. Descartes and his con-

temporaries, under the influence of modern European mechanics, considered a person as a complex mechanism, then the authors of the term "cognitive processes" (as well as "cognitive psychotherapy", "cognitive psychology" and so on) in the 1960s were directly related to cybernetics, electronic modeling and considered a person as a biocomputer (essentially the same mechanism). Successful attempts at cybernetic modeling of mental processes began to be attributed to the cognitive sphere, and unsuccessful ones – to the sphere of emotions and affects. Despite the existence of experimental evidence that emotions and cognitive processes mutually determine each other, the public consciousness still retains the pragmatic stereotype that "emotions are not significant for cognitive phenomena" (Solodilova 2014, 1348). In modern psychological knowledge (research by V. Vilyunas, J. Reikovsky (Rejkovsky 1979), S. Schechter and others), the status of emotions as an important factor determining and regulating cognitive processes is substantiated. Emotions and intellect complementandenricheachother.

Based on a number of experiments, J. Reikovsky formulated the following provisions on the influence of emotions on cognitive processes: 1) The influence of emotions on the cognitive sphere is insignificant; 2) The role of emotions in cognitive processes lies in their selective suppression or activation; 3) The intensity of emotion, along with stable psychological characteristics of the subject, determines the degree of its influence on cognitive processes (Rejkovsky 1979, 213). A more significant role of emotions in cognitive processes is shown in the study of L.Yu. Fomina, who makes the following conclusions about the influence of emotions on cognitive processes: 1) emotions evoke associations, which is important for memorization (emotionally colored information is remembered better); 2) attention and perception under the influence of emotions acquire a one-sided character; 3) thinking and activity under the influence of negative emotions are inhibited; 4) emotions have a significant impact on motivation and needs; 5) negative emotions have a destructive effect not only on cognitive processes, but also on health in general, while positive emotions contribute to good health; 6) positive emotions of weak and medium intensity have the maximum positive effect on cognitive processes, while excessively strong positive emotions have an inhibitory and disorganizing effect on cognitive processes (Fomina 2010, 62).

D.V. Lyusin substantiates in his research that emotions have a noticeable effect on the work of attention, which is expressed in the following pattern: positive emotions expand attention, while negative emotions most often narrow it (Lyusin 2014, 154). At the same time, the researcher emphasizes that empirical data regarding the impact of negative emotions on attention are very contradictory, since most studies take into account only one characteristic of emotional experiences – their valence. The opinion of D.V. Lyusin is quite fair, since emotional experiences are multifaceted and are formed under the influence of various factors, such as individual characteristics, needs, level of intelligence, and the time factor. Although the leading

factors in this case are two, namely, the need and the possibility of satisfying it (the higher it is compared to the initial forecast, the more intense positive emotions the individual experiences). A promising area of research in modern psychology is the study of the influence of emotions on the decision-making process. In the work of A.P. Pakhomov and N.E. Sudyina (Pakhomov, Sudina 2013, 31–52), using the thermodynamic approach, the following patterns are substantiated in this issue: when the left hemisphere of the brain is activated, the indicators of positive emotions increase, and when the right is activated, the indicators of negative emotions increase, which is accompanied by a decrease in the magnitude of the emotional charge in the opposite hemisphere of the brain; the subject cannot simultaneously experience emotions of equal strength in different directions; emotions are a catalyst and inductor of energy that prompts an individual to make decisions of varying degrees of usefulness and polarity; negative emotions hinder effective decision-making because there is no source of internal energy to implement this process; negative emotions generate deviations from the rational method of decision-making, making the decision-making process more chaotic. Almost all modern researchers agree that "the effectiveness of solving mental problems depends on the sign of the emotional impact" (Krutenkova, Esipenko, Ryazanova, Khodanovich 2013, 142). The effectiveness of solving cognitive problems decreases if an individual experiences negative emotions. At the same time, an important feature of the influence of emotions on the cognitive sphere is that when performing more complex tasks, the influence of emotions is more pronounced, which is due to the fact that the complex task itself acts as a factor in the emergence of emotions (the individual may doubt his ability to solve it).

A. Domasio's study describes a case where the frontal lobe tissue was damaged after a brain tumor removal operation. The patient's motor skills, categorization, perception, and information processing remained at the same level, while his cognitive processes were preserved, but his emotional sphere suffered, as a result of which he could no longer make decisions and act rationally, give a moral assessment of social situations, and express feelings (Domasio 1997, 66). This neurobiological study is another confirmation of the significant influence of emotions on cognitive processes, in particular, on the decision-making process. It should be noted that the body as a whole and the psyche, in particular, are an integral system, the components of which are interconnected. Therefore, there is not only the influence of emotions on cognitive processes, but also the cognitive determination of the emotional sphere. According to the study of A.I. Lukashev, E.A. Bychkov, E. Kazlaukas and A.N. Krutolevich, metacognitive beliefs, such as negative beliefs about the uncontrollability of the situation, as well as the danger of anxiety and the desire to control thoughts, support the symptoms of adjustment disorder, distress and the emotional sphere (Lukashev, Bychkova, Kazlaukas, Krutolevich 2020, 155). Negative metacognitive beliefs contribute to focusing on negative emotions and feelings, supporting the symptoms of somatic diseases, and also hindering the subject's ability to solve their life problems. A.V. Savchenkov

writes that "the main aspect of an event that causes an emotional reaction is its compliance (or non-compliance) with the individual's goal" (Savchenkov 2015, 22). This means, for example, that sometimes a certain event that has occurred is perceived as ordinary in emotional terms, but if it subsequently led to significant changes in the individual's life, then "retroactively" it acquires a bright emotional coloring for him due to the action of cognitive processes.

O.A. Solodilova summarized the main approaches to the relationship between the emotional and cognitive spheres:

- The emotional and cognitive systems are in a state of complete autonomy in relation to each other as separate modules of the neurobiological mechanism, functioning according to their own laws;
- Cognitive processes and emotions are in a relationship of dependence in such a way that cognitive processes influence and model emotional states. The emotional is considered seconddary, passive and peripheral in relation to the logical – central and active principles. Emotions are post-cognitive phenomena, the essence of which lies in the subjective cognitive interpretation of states of excitement;
- Cognitive processes and emotions are in a relationship of dependence in such a way that emotions determine the course of cognitive processes, since emotions are closely related to instincts and are primary in relation to cognitive processes;
- The emotional and cognitive spheres function according to the same principles and laws, therefore they are not autonomous systems and do not have a clear boundary between them, but represent a single indivisible system;
- The emotional and cognitive spheres are two different and autonomous systems, which, however, interact at different levels, which is explained by the presence of common fundamental principles (primarily in the work of memory and attention) (Solodilova 2014, 1349–1350).

It is the position regarding autonomy, but at the same time the presence of connections between the emotional and cognitive spheres that is the most substantiated and widespread in modern psychology. According to the German researcher M. Schwarz-Friesel, emotions can be represented as "systems of knowledge and assessment established in the psyche, which are stored in memory, on the basis of which it can be assumed that the emotional components in memory correspond to certain forms of cognitive representation" (Schwarz-Friesel 2007, 54). The researcher suggests that cognitive processes contain emotional structures (both innate and acquired, both conscious and unconscious), partially represented by motor-expressive and excitatory-reactive aspects. For example, in the process of individual mental development, a person acquires knowledge of the meaning of words describing the emotion of fear, and also cognizes the manifestation of fear itself. At the same time, acquaintance with certain manifestations and coding of one's emotions occur.

In general, the issue of the relationship between emotions and cognitive processes has been resolved in different ways in the process of development of scientific

thought. The main approaches to the relationship between emotions and cognitive processes are: 1) the idea of complete autonomy of the emotional and cognitive spheres as separate modules; 2) the idea of connection between emotions and cognitive processes with the determining and primary role of cognitive processes; 3) the idea of connection between emotions and cognitive processes with the determining and primary role of cognitive processes; 4) the emotional and cognitive spheres are one and do not have a clear boundary; 5) the emotional and cognitive spheres simultaneously have features of autonomy and interaction of various types. It is the latter approach that seems to be the most justified. It has been established that the leading factors in the formation of emotions are the need and the possibility of satisfying it. The most studied issue at present is the influence of emotions on memory. Emotionally colored information is remembered better. Attention and perception under the influence of emotions acquire a one-sided character: positive emotions expand attention, and negative emotions narrow it. Thinking and activity under the influence of negative emotions are inhibited, under the influence of positive ones, they are activated. Negative emotions have a destructive effect on cognitive processes and health in general. Positive emotions contribute to good health. Positive emotions of weak and medium intensity have the maximum positive effect on cognitive processes. The subject cannot simultaneously experience emotions of the same strength in different directions. The effectiveness of solving cognitive problems is reduced if the individual experiences negative emotions.

Conclusions

Thus, emotions are mental phenomena and processes that reflect the personal significance of various life situations in the form of experiences. Emotions are both subjective and objective in nature and have three basic aspects: 1) the internal (qualitative) aspect of experience; 2) the physiological (impressive) aspect; 3) the external (expressive) behavioral aspect. The relationship between these aspects is resolved differently in different theories of emotions. If the theories of W. James – K. Lange, W. Cannon – F. Bard, and D.B. Lindsay – D.O. Hebb emphasize the physiological aspect, then K. Izard, P.K. Anokhin and P.V. Simonov emphasize the behavioral and evolutionary aspects. A.N. Leontiev and S.L. Rubinstein paid the greatest attention to the aspect of internal experience. The role of the cognitive factor in the formation of emotions is revealed in the two-factor theory of S. Schechter, in the theory of cognitive dissonance of L. Festinger, etc. At present, attempts are being made to build a holistic theory of emotions based on a systems approach (Yu.I. Aleksandrov). Not only emotions influence cognitive processes, but also vice versa. Negative beliefs contribute to focusing attention on negative emotions and feelings, thereby strengthening them. Emotional coloring of initially neutral events and situations can occur post factum due to analysis and reflection. Since the influence of emotions on memory is the most studied to date, further development of the issue of the influence of emotions on attention, perception, understanding, thinking, de-

cision-making and action are promising areas of research. It is important to take into account not only the valence of emotions, but also their other characteristics, such as generalization and orientation.

Acknowledgements

The authors would like to thank Professor V.A. Bespalov, Corresponding Member of the Russian Academy of Sciences, Doctor of Technical Sciences, as well as all colleagues from the Moscow Institute of Electronic Technology who participated in the discussion of the materials of our work.

Գրականություն/References/Литература

1. Александров Ю.И. 2004, Единая концепция сознания и эмоций: экспериментальная и теоретическая разработка, Материалы Первой российской конференции по когнитивной науке (Казань, 9-12 октября 2004 г.), Казань, изд. Казанского государственного университета, 14–15.
   Alexandrov Yu.I. 2004, Unified Concept of consciousness and Emotions: Experimental and Theoretical Development, Proceedings of the First Russian Conference on Cognitive Science (Kazan', October 9–12, 2004), Kazan, Kazan State University Press, 14–15 (in Russian).
2. Крутенкова Е.П., Есипенко Е.А., Рязанова М.К., Ходанович М.Ю. 2013, Влияние эмоциональных изображений на решение когнитивных задач, Вестник Томского государственного университета. Биология, N 1 (21), 129–145.
   Krutenkova E.P., Esipenko E.A., Ryazanova M.K., Khodanovich M.Yu. 2013, The Influence of Emotional Images on Solving Cognitive Problems, Bulletin of Tomsk State University. Biology, N 1 (21), 129–145 (in Russian).
3. Леонтьев А.Н. 2006, Потребности, мотивы, эмоции, Гиппенрейтер Ю.Б., Фаликман М.В. (ред.), Психология мотивации и эмоций. Хрестоматия, Москва, ЧеРо, Омега-Л, МПСИ, 57–79.
   Leontiev A.N. 2006, Needs, Motives, Emotions, Hippenreyter Yu. B., Falikman M. V. (eds), Psychology of Motivation and Emotions. Anthology, Chero, Omega-L, MPSI, 57–79 (in Russian).
4. Лукашев А.И., Бычкова Е.А., Казлаукас Э., Крутолевич А.Н. 2020, Когнитивная регуляция эмоций и метакогнитивные убеждения во взаимосвязи с симптоматикой расстройства адаптации, Фурманов И. А. и др. (ред.), Психосоциальная адаптация в трансформирующемся обществе: субъект-субъектная коммуникация как фактор социализации индивида: материалы V Международной научной конференции, Минск, 23–24 октября 2020 г., Минск, Белорусский государственный университет, 151–156.
   Lukashev A.I., Bychkova E.A., Kazlaukas E., Krutolevich A.N. 2020, Cognitive Regulation of Emotions and Metacognitive Beliefs in Relation to the Symptoms of Adaptation Disorder, Furmanov I. A. et al. (eds), Psychosocial Adaptation in a Transforming Society: Subject-Subject Communication as a Factor of Individual Socialization: Proceedings of the V International Scientific Conference, Minsk, October 23–24, 2020, Minsk, Belarusian State University, 151–156 (in Russian).
5. Люсин Д.В. 2014, Влияние эмоций на внимание: анализ современных исследований, Спиридонов В.Ф. (ред.), Когнитивная психология: феномены и проблемы, Москва, «Ленанд», 146–160.

Lyusin D.V. 2014, The Influence of Emotions on Attention: an Analysis of Modern Research, Spiridonov V. F. (ed.), Cognitive Psychology: Phenomena and Problems, Moscow, Lenand, 146–160 (in Russian).

6. Немов Р.С. 2003, Общие основы психологии, Психология, кн. 1, Москва, Гуманит. изд. центр ВЛАДОС.
   Nemov R.S. 2003, General Principles of Psychology, Psychology, vol. 1, Moscow, Humanitarian Publishing Center VLADOS (in Russian).
7. Пахомов А.П., Судьина Н.Е. 2013, Эмоциональные аспекты процесса принятия решений: термодинамический подход, Экспериментальная психология, N 6 (3), 31–52.
   Pakhomov A.P., Sudyina N.E. 2013, Emotional Aspects of the Decision-Making Process: a Thermodynamic Approach, Experimental Psychology, N 6 (3), 31–52 (in Russian).
8. Прибрам К.Х. 1975, Языки мозга, Москва, «Прогресс».
   Pribram K.H. 1975, Languages of the Brain, Moscow, Progress (in Russian).
9. Рейковский Я. 1979, Экспериментальная психология познания, Москва, «Прогресс».
   Reykovsky Ya. 1979, Experimental Psychology of Cognition, Moscow, Progress (in Russian).
10. Рубинштейн С.Л. 2002, Основы общей психологии, Санкт-Петербург, Питер.
    Rubinstein S.L. 2002, Fundamentals of General Psychology, St. Petersburg, Piter (in Russian).
11. Савченков А.В. 2015, Влияние познавательных способностей студентов на их эмоциональную устойчивость в учебном процессе: учебно-методическое пособие, Челябинск, изд. Челябинского государственного педагогического университета.
    Savchenkov A.V. 2015, The Influence of Students' Cognitive Abilities on Their Emotional Stability in the Educational Process: Educational and Methodological Guide, Chelyabinsk, Chelyabinsk State Pedagogical University Press (in Russian).
12. Солодилова О.А. 2014. К вопросу о соотношении понятий «эмоция» и «когниция», Вестник Башкирского университета, N 14 (4), 1348–1351.
    Solodilova O.A. 2014, On the Question of the Relationship Between the Concepts of "Emotion" and "Cognition", Bulletin of Bashkir University, N 14 (4), 1348–1351 (in Russian).
13. Фомина Л.Ю. 2010, Влияние эмоций на познавательную деятельность младшего школьника, Ученые записки. Серия: Психология, Педагогика, т. 3, N 1 (9), 58–63.
    Fomina L.Y. 2010, The Influence of Emotions on the Cognitive Activity of a Primary School Student, Scientific Notes. Series: Psychology, Pedagogy, vol. 3, N 1 (9), 58–63 (in Russian).
14. Нго Конг Хоан, О.1984, Эмоции в структуре мыслительного процесса: диссертация на соискание ученый степени кандидата психологичеких наук
    Ngo Kong Hoan, O. 1984, Emotions in the Structure of the Thought Process: Dissertation submitted in partial fulfillment of the requirements for the degree of Candidate of Psychological Sciences (in Russian).
15. Хомская Е.Д., Батова Н.Я. 1992, Мозг и эмоции (нейропсихологическое исследование), Москва, изд. Московского государственного университета.
    Khomskaya E.D., Batova N.Ya. 1992, Brain and Emotions (Neuropsychological Research), Moscow, Moscow State University Press (in Russian).
16. Domasio A. 1997, Deskartes' Irrtum. Fühlen, Denken und das menschliche Gehirn, München, List.
17. Schwarz-Friesel M. 2007, Sprache und Emotion, Tübingen-Basel, A. Francke Verlag.

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐԵՎԱՆ, «ԱՐՄԱՎ», 2024, 70 ԷՋ:

LAVRENTI HOVHANNISYAN, THE ARCHAISMS OF THE KARABAKH (ARTSAKH) DIALECT, YEREVAN, ARMAV, 2024, 70 P.

ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН, АРХАИЗМЫ КАРАБАХСКОГО (АРЦАХСКОГО) ДИАЛЕКТА, ЕРЕВАН, «АРМАВ», 2024, 70 С.



Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պատմական անցյալ ունեցող տարածքը տարբեր ժամանակաշրջաններում վերածվել է հակամարտության գոտու: Եվ չնայած այնտեղ կուտակված մշակութային հսկայածավալ ժառանգությանը, որ ուղղակիորեն պատկանում է հայ էթնոսին և կազմում է հայ ժողովրդի բազմադարյան պատմության մի մասը, այդուհանդերձ, նույնիսկ միջազգային գիտական մամուլում շարունակվում են հրապարակվել կեղծ թեզեր-հոդվածներ, որոնք փորձում են կասկածի տակ առնել հայկական բնիկ միջավայրի մշակութային արժեհամակարգի պատկանելությունը:

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հայկականության հետքերը թերևս կարողանում են վերացնել նյութական մշակութային արժեքները ոչնչացնելով, կեղծումներով և այլն, սակայն հոգևոր մշակույթի ասպարեզում դա գրեթե անհնար է: Արցախի հայկականության ազգային պատկերը նախ և առաջ ընդգրկված է բարբառային համակարգում, որ գիտական գրականության մեջ ընդունված է *Սյունիք-Արցախի կամ Ղարաբաղ-Շամախիի բարբառախումբ* եզրույթով: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Հովհաննիսյանի ուսումնասիրությունը նվիրված է Արցախի բարբառային համակարգի հնաբանական շերտին: Հեղինակը քննում և վերարժևորում է Արցախի բարբառներում տեղ գտած հնչյունական, բառային, քերականական իրողությունների դերը հայերենագիտության և հնդեվրոպաբանության համար:

Քննելով հնդեվրոպական լեզվաընտանիքի հետ ունեցած լեզվական զուգահեռները, ինչպես նաև բարբառային տարրերի պահպանման եղանակները՝ գիտնականը ներկայացնում է Ղարաբաղի բարբառի զարգացման փուլերը, տեղանվան ստուգաբանությունը՝ ուշադրությունը սևեռելով հատկապես բառային հնագույն օրինակներին, որոնք չեն հանդիպում ոչ միայն հայերենի գրավոր շրջաններում, այլև հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող շատ լեզուներում՝ հակառակ պատմական, սոցիալական ու աշխարհաքաղաքական փոփոխություններին: Ուստի՝ Լ. Հովհաննիսյանի սույն աշխատանքը կարևոր է ոչ միայն բարբառագիտության, այլև հայերենի

պատմության, հնդեվրոպական լեզվաբանության և ընդհանրապես հայագիտության տեսանկյունից:

«Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները» (այսուհետև՝ ՂԲՀ) ուսումնասիրության նյութը լեզվական տվյալներն են հայերենի ամենամեծ միջբարբառախմբի (ըստ Գ. Ջահուկյանի), որը Հ. Աճառյանը անվանել է *Ղարաբաղի բարբառ (*Աճառեան 1911, 307), և որի հիմնական մասը (գրեթե 80%-ը) կազմում են բնիկ (պատմական) արցախյան բարբառ-խոսվածքները: Նշենք, որ *Ղարաբաղի բարբառի* կամ *ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի* բարբառների մեծ մասը բնիկ տարածքից զրկվել է ավելի վաղ՝ անցած դարի սկզբից մինչև 90-ական թվականները (Հավարիկ, Գանձակ, Կոզեն, Շամախի և այլն) և իր հինգհազարամյա պատմությունն ավարտեց 2023 թ.՝ բռնի արտագաղթով: Իր բովանդակությամբ և առհասարակ տեսակով (ուսումնասիրության համար ընտրված նյութ, մեթոդաբանություն, լեզվի հարցերի քննության պատմական մոտեցում և այլն) այն հայ լեզվաբանության մեջ յուրահատուկ է, կարևոր, արդիական: Օտարազգի բազմաթիվ հեղինակների, միջազգային ինստիտուտների համար (օրինակ՝ Օսլոյի համալսարանի Պատմական բարբառագիտության ամբիոնը շարունակում է խոսակցական տարբերակների լայնածավալ հետազոտական ծրագիրը՝ առցանց գիտական շտեմարանների ստեղծումը՝ https://www.amc.lel.ed.ac.uk/about-2/instit ute-for-historical-dialectology/), արդիական են և ուսումնասիրությունների նոր փուլ են թևակոխում պատմական բարբառագիտության հարցերը, մինչդեռ հայ լեզվաբանության արդի փուլում հայերենի բարբառների պատմական հիմքերին քիչ ուշադրություն է դարձվում անգամ աշխարհաքաղաքական ամենօրյա փոփոխությունների պարագայում, երբ տեղայնացված և հնավանդ բարբառները ուղղակի կուլ են գնում պատերազմներին, գաղթերին: Հայերենի բարբառների պատմական հարցերին Հ. Աճառյանից (ինչպես՝ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, I մաս, ԵՊՀ հրատ., II մաս, «Հայպետհրատ», Երևան, 1951, Աճառյան Հ. 1898, Քննութիւն Ղարաբաղի բարբառին: Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան, Գ, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, և այլն) հետո առավելապես անդրադարձել են Գ. Ջահուկյանը (Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972), Մ. Աղաբեկյանը (Աղաբեկյան Մ. 2010, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Երևան, «Նաիրի», և այլն), Ն. Սիմոնյանը (Սիմոնյան Ն. 1989, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները (թեկնածուական ատենախոսություն), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գրադարան, Երևան; Սիմոնյան Ն., 1979, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. և այլն), համեստ ներդրմամբ նաև՝ տողերիս հեղինակը (Քումունց Մ. 2021, Տարածական հարաբերություններ արտահայտող բարբառային մի քանի հնաբանությունների շուրջ (Վիճահարույց ստուգաբանություններ, բնիկ և օտար բառային ընդհանրություններ կամ հանդիպադրումներ), Գիտական տեղեկագիր, N 1, 14–21; Քումունց Մ. 2021, Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում, Դպրատուն N 1 (11), 56–61; Քումունց Մ. 2021, Հնդեվրոպական «ուռչել» հասկացությունը Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում, Լեզու և լեզվաբանություն N 1 (24), 15–22; Kumunts M. et al.

2023, Semantic and Formal Image of Concepts Related to "Sensory Perceptions" Preserved from the Indo-European Language in the Dialect Area, Wisdom, vol. 25 (1) և այլն, Kumunts M. et al. 2024, The Historical Development of the Place Name in Armenian (Etymology of 'Harzhis' Sacred Area), Forum for Linguistic Studies, N 6(6), և այլն):

Հարկավոր է նկատի ունենալ, որ պատմական բարբառագիտությունը լեզվաբանության ճյուղ է, որն ուսումնասիրում է լեզուների և նրանց բարբառների ձևավորման, զարգացման և փոխակերպման պատմական գործընթացները: Որոշ լեզվաբաններ պատմական բարբառագիտությունը զետեղում են համեմատական լեզվաբանության մեջ՝ որպես պատմահամեմատական բարբառագիտություն (մասնավորապես նախահնդեվրոպական տարածքային բարբառների հիմնախնդիրներով զբաղվող հեղինակները), քանի որ ուսումնասիրության հիմքերը պատմական և համեմատական մեթոդներով են ձևավորվում: Առավել ընդգրկուն եզրույթներով հանդերձ՝ պատմական բարբառագիտությունը կարող է սահմանվել որպես լեզուների և դրանց տարբերակների պատմական վկայությունների տարաժամանակյա (դիախրոնիկ), դիատոպիկ (տարածական և սոցիալական հարթություններում լեզվական տատանումների, այսինքն՝ լեզվի տարբերակ և տարբերակի տատանումների) (Matthews P.H. 2014, The Concise Oxford Dictioary of Linguistics, New York, Oxford University Press, 2014) և սոցիալական տարբերակների ուսումնասիրություն (Alcorn R. et al. 2020, Historical Dialectology in the Digital Age, Edinburgh, Edinburgh University Press):

Պատմական բարբառագիտությունը ներառում է լեզվի տարբերակների այն տարատեսակները, որոնք գործածվել են պատմական որոշակի շրջանում, կրել փոփոխություններ պատմական մի շրջանից մյուսին անցման փուլերում: Լայն առումով՝ պատմական բարբառագիտությունը ուղղակի բարբառների մասին ուսումնասիրություն է, որ վերաբերում է լեզվի և այն կրող համայնքի աշխարհագրական և սոցիալական տարածության տարբերությանը (խոսակցական տարբերակին): Այս գիտաճյուղը զարգացման նոր ընթացք է ստանում ընդհանուր լեզվաբանության համակարգում, և եթե նախկինում ուսումնասիրության նյութերը սահմանափակվում էին հնչյունական, բառային զուգաբանությունների համեմատական քննությամբ, ապա մեր օրերում գիտաճյուղը ուսումնասիրության նյութ է վերցնում նաև ձևաբանության (Լ. Հովհաննիսյանի սույն աշխատանքն ընդգրկում է լեզվի երեք բաժին՝ հնչյունաբանություն, բառագիտություն և քերականություն), շարահյուսության և նույնիսկ ոճաբանության մակարդակներից (Moser A.-M. et al. 2024, Introduction: Towards a comparative historical dialectology, Journal of Historical Syntax, vol. 8 (7): Այս ամենով հանդերձ, ելնելով Լ. Հովհաննիսյանի աշխատության բովանդակությունից՝ փորձենք տալ պատմական բառբառագիտության սահմանումը. «*Պատմական բարբառագիտությունը ուսումնասիրում է բարբառների զարգացումը՝ տեղայնացված պատմաաշխարհագրական որոշակի սահմանում, և դրանց լեզվական երևույթները՝ հաշվի առնելով պատմական, մշակութային, սոցիալական և աշխարհագրական ազդեցությունները: Այն նպատակ ունի բացահայտելու լեզվական տարբերակների ծագման, զարգացման և միմյանց հետ ունեցած փոխազդեցության կանոնները, դրանց դերը ժողովրդի պատմության համատեքստում*»:

Պատմական բարբառագիտությունը խիստ փոխկապակցված է լեզվաբանության տարբեր գիտաճյուղերի և հարակից գիտությունների հետ, քանի որ բարբառների

ուսումնասիրությունը ներառում է լեզվի (այլև՝ օտար լեզուների), մշակույթի, պատմության և հասարակության միջև առկա կապերը: Ըստ այդմ՝ պատմական բարբառագիտությամբ զբաղվելը կամ բարբառային որևէ միավոր համաժամանակյա և տարաժամանակյա լեզվավիճակով ուսումնասիրելը պահանջում են համակողմանի գիտելիքներ մի քանի գիտակարգերի բնագավառներում:

Այս առումով Լ. Հովհաննիսյանի աշխատանքը ներառում է Արցախի բարբառային միավորներին բնորոշ (ընդհանրական, ոչ մասնավոր) հնչյունական, բառային և քերականական համաժամանակյա տարրերը՝ նախահայերենի կամ հին հայերենի գրավոր վկայությունների՝ տարաժամանակյա տվյալների համեմատությամբ: Հեղինակը հաստատում և ընդգծում է բարբառային տարածքի խոսակցական միավորների պատմական-հասարակական դերը ոչ միայն հայերենի, այլև հնդեվրոպական հիմք լեզվի մշակույթի առանցքում՝ բարբառը համարելով ոչ թե գրական լեզվից կամ այլ լեզվից ածանցված, այլ հնդեվրոպական հիմք լեզվից բնականորեն առաջացած, ընդհանուր հայերենի (գրական, խոսակցական տարբերակներն ամբողջությամբ) առանցքում, նրա համակցությամբ և տարածքային յուրահատկություններով զարգացում ապրած և հիմք լեզվի տարրերը պահպանած տարածքային լեզու: Այն ավելի հին է և հարուստ լեզվական ավանդույթներով, քան պետական կարգավիճակ ունեցող ժամանակակից շատ լեզուներ: Աշխարհագրորեն որոշակիորեն մեկուսացված և հիմնականում միատարր ազգաբնակչություն ունեցող, սոցիալապես բնատնտեսական վարքագծով բարբառային տարածքը ոչ մեծ տատանումներով շփումներ է ունեցել գրավոր վկայություններով և հարուստ ժառանգությամբ (ներքին գերակա) գրաբարի (անմիջական) և իրանական (արտաքին գերակա) լեզուների հետ (մասնակի): Այս պայմանները հիմք են դարձել ոչ միայն հնաբանական շերտի պահպանման, այլև տարածքային բառապաշարի հարստացման համար:

ՂԲՀ-ն ունի հետևյալ կառուցվածքը՝ «Նախաբան», մաս I («Արցախ, Ղարաբաղ տեղանունների շուրջ»), մաս II («Հնչյունական-հնչյունափոխական հնաբանություններ»), մաս III («Բառային (բառապաշարային) հնաբանություններ»), մաս IV («Բառակազմական հնաբանություններ»), մաս V (Ձևաբանություն), «Ստուգաբանություն, բառաքննություն», «Գրականություն», «Համառոտություններ», «Բովանդակություն»: Մասնավորելով ՂԲՀ-ում ընդգրկված ուսումնասիրության ոլորտները և դրանցից ածանցվող գիտաճյուղերը՝ փորձենք ներկայացնել բուն աշխատանքը՝ ըստ լեզվամշակութային բնագավառների:

Ա. *Լեզվաբանության պարագայում* գրեթե չկա մի ենթաբնագավառ, որ չվերաբերի բարբառագիտությանը, առավել ևս՝ չկա գրական լեզու, որ առաջացած չլինի բարբառից: Սակայն դրանցից մի քանիսն ուղղակի հիմնարար դեր ունեն բարբառների պատմական զարգացումն ուսումնասիրելու համար: Աշխատության բոլոր մասերում նախ և առաջ արծարծված են համեմատական լեզվաբանության հարցերը: *Համեմատական լեզվաբանության* առաջադրած մեթոդները բարբառագիտության մեջ օգտագործվում են գրական լեզվի և բարբառների (բարբառային միավորների) միջև եղած նմանությունները և տարբերությունները բացահայտելու համար. համեմատական վերլուծություններն օգնում են վերականգնելու հին բարբառների և լեզվական ձևերի նախնական վիճակը: Այս պարագայում համեմատությունը ամբողջութ-

յամբ *եռեզր* է՝ բարբառ-գրաբար (գրավոր վկայություն) – հնդեվրոպական հիմք լեզու, մասնակիորեն՝ *քառեզր* (հնդեվրոպական հիմք լեզվից առաջացած լեզուներ):

Բարբառները ներառում են լեզվի ուսումնասիրության բոլոր մակարդակները, այսպես՝ *հնչյունաբանության* մակարդակում ուսումնասիրվում են բարբառների հնչյունական տարբերությունները, փոփոխությունների օրինաչափությունները և դրանց դերը լեզվի զարգացման մեջ: Պատմաաշխարհագրական կարևոր դիրքում գտնվող մի շարք բարբառներ կարող են նաև նյութ տալ այլ լեզուների հնչյունական զարգացման հարցերը քննելիս: ՂԲՀ-ում բարբառի հնչյունական իրողություններից ընդգծվում է հնդեվրոպերենի **o (*ō)*-ի առկայությունը մի շարք բառերում՝ *շօն, փօն, թօր* և այլն, որոնք, ըստ հեղինակի, գրաբարի *ու* > *օ* հնչյունափոխությամբ չեն ձևավորվել: Եվ թեև այս հարցում հեղինակը խորամուխ չի լինում՝ բացառելու գրաբարյան ազդեցությունը կամ հինհայերենյան հնչյունափոխական երևույթի մնացուկը բարբառային տարածքում, այդուհանդերձ, կարծում ենք, բավարար չեն նաև հիմքերը՝ ժխտելու նախահայերենից եկած հնչյունական հնաբանությունները ուսումնասիրվող տարածքում: *Բառագիտության* բոլոր բաժինները ներդնելի են բարբառագիտության պատմության ուսումնասիրության մեջ: Բարբառային բառապաշարի ձևավորման ու զարգացման ճանապարհները որոշելը ուսումնասիրության կարևորագույն առարկա է ոչ միայն տվյալ բարբառի, այլ նաև մայր լեզվի և փոխշփման մեջ գտնվող այլ լեզուների համար: Հատկապես ուշադրության են արժանի տեղական առանձնահատկություններով բառերը (այսպես ասած՝ բարբառայնությունները կամ գավառաբանությունները) և փոխառությունները: ՂԲՀ-ում առավել ուշադրության են արժանացել բառարմատական, բառակազմական հնաբանությունները (14–25, 44–45), որոնց հիմնական մասը հեղինակը քննել է առանձին բառահոդվածներով, հոդվածներով (Բառային հնաբանությունները Ղարաբաղի բարբառում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, N 9 (52), 52–60, Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 1977, N 1, 144-153, Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 1 (117), 117–122, Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N 11, 65–70, Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, Պատմա-բանասիրական հանդես, 2019, N 1, 177–183), այդ պատճառով աշխատանքը չի ծանրաբեռնել ավելորդ նյութով: Մենք ևս այս մասին ունենք բավարար տվյալներ, որոնք հիմնավորում են բարբառային բառապաշարում ընդգրկված մի շարք բառերի նախահայերենյան ծագումը: *Քերականության* մակարդակում ուսումնասիրվում են բարբառների քերականական կառուցվածքները՝ թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական: Բարբառային տարածքում առկա ոճաարտահայտչական միջոցներին անդրադարձը պատմական տեսանկյունից բացակայում է: Կարծում ենք, սակայն, որ բարբառային ոճերը՝ դարձվածքներ, փոխաբերություններ, ասույթներ և այլն, կարևոր են լեզվի ուսումնասիրության համար, քանի որ դրանց լուսաբանումը կարող է օգտակար լինել գեղարվեստական խոսքի կառուցման համար:

ՂԲՀ-ն արժևորվում է նաև *հանրալեզվաբանության* տեսանկյունից: Այստեղ էական հարցեր են առաջադրված ոչ միայն լեզվաբանության, այլև պատմաքաղաքական, ազգաբանական և մշակութային գիտահամակարգերի համար: Ղարաբաղի

բարբառի ձևավորման ժամանակաշրջանը, տարածվածությունը (54), տեղանվան նշանակությունը (Արցախ, Ղարաբաղ տեղանունների շուրջ, 4–9), բարբառային տարածքում առկա հին և հնագույն լեզուներից անցած փոխառությունների գոյությունը (Փոխառություններ, 18-20) կարող են օգտակար լինել ազգային դիվանագիտության հռետորաբանությունը կառուցելիս: Այս առումով թերևս հատկանշական է *-անք* և *-ունք* ածանցների սոցիալական գործառույթը տարածքում. դրանք հիմնականում մատնանշել են գերդաստան, ազգակցական կապ. մի երևույթ, որ ծագում է նախահայերենի շրջանից, և որը մթագնել է այլ տարածքներում, իսկ Սյունիք-Արցախում ավանդույթի ուժով պահպանվում է մինչև մեր օրերը:

Աշխատանքը ներառում է նաև «լեզուն քաղաքականության մեջ» ընդգրկուն հարցը, որ ամփոփված է բառային ստուգաբանություններում: Եվ չնայած հեղինակը համեստորեն դուրս չի գալիս գիտական-ակադեմիական շրջանակից և չի ընդգծում, որ տարածաշրջանի ազգային պատկանելությունը, ըստ բարբառային հնաբանական շերտի, երկմտելի չէ, այդուհանդերձ, ՂԲՀ-ի հրապարակման նպատակը ազգային, պետական շահերին ծառայելն է: Միայն Սյունիք-Արցախ բարբառային տարածքում հանդիպող հնդեվրոպական ծագմամբ մի շարք բառերի գոյությունը (նախ՝ «Բառային (բառապաշարային) հնաբանություններ» (14–18), ապա՝ «Ստուգաբանություն, բառաքննություն» (44–54) բաժիններում), անշուշտ, թարմացնում է Հայկական լեռնաշխարհի՝ հնդեվրոպական բնաշխարհ կամ հնդեվրոպական առաջին գաղթօջախներից մեկը համարվելու դրույթը: Այո՛, մեր պարտությունը, տարածաշրջանում դիրքերի թուլությունը պայմանավորված են նաև հայագիտական աշխատությունների միջազգայնացման սակավությամբ: Գիտությունը հաճախ սոցիալականացնում ենք՝ մոռանալով դրա իրական առաքելությունը ազգային-պետական դերակատարության համար: Սյունիք-Արցախի բարբառների տարածվածությունը պատմական շրջանում, դրանց ազդեցությունը սոցիալական և ազգային տարբեր խմբերի վրա ձևավորել են բնական միջավայր, որտեղ կարելի է գտնել հայկականության ամենահին հետքերը: ՂԲՀ-ում բարբառային տարբերակների սոցիալական գործառույթները (ասենք՝ քաղաքային և գյուղական բնակավայրերի խոսույթի տարբերակումը որակական առումով, բարբառակիր սոցիալական խմբերին վերաբերող խնդիրներ և այլն), միավորների միջև լեզվական իրողությունների զուգաբանությունները և նման հարցեր քննված չեն, որովհետև աշխատանքի նպատակը ոչ թե պատմական տարածքի բարբառների հատկանիշների բացահայտումն է կամ փաստի վերահաստատումը, այլ մարդկության պատմության համար կարևոր, հնդեվրոպական մշակույթի հիմքերը բովանդակող ոչ նյութական մշակութային արեալի բացահայտումը: Այս տարածքը, կորցնելով իր բնիկ արարողին և նրա հնավանդ խոսույթը, պիտի դառնա «մշակութային եղեռնադաշտ»:

Բ. Պատմական և մշակութային տեսանկյունից լեզվաբանական այս ուսումնասիրությունը կարևոր է երկու առումով՝ 1. Ղարաբաղի բարբառի ձևավորումը և տարածումը պատմական միջավայրում հաճախ պայմանավորված են պատմական գործընթացներով (վերաբնակեցում, քաղաքական, ազգային միավորումներ, պատերազմներ): Թեև աշխատանքում առանձնացված չեն, ասենք, «եկվոր» բարբառային միավորների (Նախիջևան, Սևասար (Ղարադաղ) և այլն) կամ բարբառի զարգացման ընթացքում ենթաշերտային ազդեցությունները, այլ ընդհանրական հիմքով են քննվում լեզվական տարրերը, այդուհանդերձ, աշխատության որոշ մասերում կան

անդրադարձներ (օրինակ՝ բառային որոշ միավորների անհայտ լինելը, ինչպես՝ *փալօր*, *ծիրան* և այլ): 2. Ղարաբաղի բարբառները, անշուշտ, պահպանել են պատմական հին շերտերի լեզվական և լեզվամտածողության տարրերը: Ուշագրավ է շաբաթվա օրերի մասին ենթաբաժինը, որտեղ շաբաթվա 6 օրերի անվանումները առնչակցվում են Աստվածաշնչի իրողության հետ (42–43):

Ժամանակակից բարբառագիտությունը և նրա զարգացումը արդի շրջանում մեծապես կախված են տեխնոլոգիաներից: Թվային գործիքները, արհեստական բանականության վրա հիմնված վերլուծությունները և բարբառային կորպուսները կշարունակեն զարգացնել այս ոլորտը: Հայաստանում արդեն կարևոր են բարբառների թվայնացումը և նոր սերնդին փոխանցելու ծրագրված քայլերը: Եվ թեև ՂԲՀ-ն չի ներառում ժամանակակից մոտեցումները, պատմական բարբառագիտությանը նվիրված նորագույն հրապարակումները, այդուհանդերձ, մի կողմից, այն եզրագծում է բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Հովհաննիսյանի 50-ամյա գիտական գործունեության *արցախյան բաժինը*՝ որպես ամփոփում, մյուս կողմից, ՂԲՀ-ն կարող է լինել Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները բովանդակող նոր աշխատանքի ուղենիշ, Ղարաբաղի բարբառային կորպուսի աշխատանքային պլան, Արցախի բարբառով՝ *սրոնէ*:

Միեր Քումունց
Mher Kumunts
Мгер Кумунц

Լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Linguistics, National Academy of Sciences, Armenia
Институт языка, Национальная академия наук, Армения

inslang@sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-282

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ (ԽՄԲ.), ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ – 100. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ (10–12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2024), ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», 2024, 392 ԷՋ:

ANNA ASATRYAN (ED.), SERGEY PARAJANOV – 100: REPORTS OF THE INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE (SEPTEMBER 10–12, 2024), INSTITUTE OF ARTS OF THE NAS RA, YEREVAN, GITUTYUN, 2024, 392 P.

АННА АСАТРЯН (РЕД.), СЕРГЕЙ ПАРАДЖАНОВ – 100: ДОКЛАДЫ МЕЖДУНАРОДНОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ (10–12 СЕНТЯБРЯ 2024 Г.), ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА, ЕРЕВАН, «ГИТУТЮН», 2024, 392 С.



Վկայակոչելով «Աշուղ Ղարիբ» ֆիլմի նկարահանման ժամանակ Փարաջանովի արտահայտությունը՝ «Օ՛յ, ինչ գեղեցի՛կ է», Կարեն Քալանթարը գրում է. «Որքան հաճախ, նրա ֆիլմերը դիտելով, մենք մտովի կամ բարձրաձայն, աղոթքի նման, ասում ենք նույնը: Այդ խոսքերի մեջ է ամբողջ Փարաջանովը: Շարունակ հանդիսատեսին պահել գեղեցիկն ընկալելու վիճակում և, եթե կուզեք, նրան մղել նման բացականչությունների, թվում է, հենց այս նպատակն է հետապնդել Փարաջանովը»:

2024 թվականի սեպտեմբերի 10–12-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, հավատարիմ իր կոչմանը, կազմակերպեց գիտական կոնֆերանս Փարաջանովի 100-ամյակի առիթով: Այժմ մեր սեղանին է կոնֆերանսի զեկուցումների գիրքը, որ ամբողջական պատկերացում է տալիս այդ՝ իրավամբ նշանակալի իրադարձության մասին:

Ժողովածուն հրատարակել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Սերգեյ Փարաջանովը, որն իր կենսագրությամբ, իր անհատականությամբ, իր արվեստով մշտապես եղել է քննական-գիտական ուսումնասիրությունների կենտրոնում, այսօր էլ մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ որպես մարդ-արվեստագետ, որի ստեղծագործությունն անկրկնելի է, բազմանշանակ ու բազմաբովանդակ, մի երևույթ, որ անտարբեր չի թողնում արվեստի դուռը բաց անող ոչ մի արվեստագետի: Եվ բնավ պատահական չէ, որ հիշյալ կոնֆերանսին մասնակցելու հայտ էին ներկայացրել ոչ միայն հայ հետազոտողներ (ՀՀ ԳԱԱ Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության ինստիտուտներից, Երևանի պետական համալսարանից, Ս. Փարաջանովի թանգարանից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից), այլև գիտնականներ Ռուսաստանից, Վրաստանից, Սերբիայից, Իտալիայից, Լեհաս-

տանից, Ֆրանսիայից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, Ուկրաինայից, Պորտուգալիայից, Ղազախստանից: Եվ միայն այս ցանկն ինքնին խոսուն է, որ պայմանավորված է Փարաջանովի կերպարի, նրա թողած ժառանգության հանդեպ անսահման մեծ հետաքրքրությամբ, նրան հասկանալու, նրան գնահատելու, նրան արժևորելու մղումով:

Իր բացման խոսքում Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանն** իրավացիորեն այս կոնֆերանսը գնահատեց որպես աննախադեպ գիտական միջոցառում, որը էական ներդրում է փարաջանովագիտության ասպարեզում:

Ժողովածուն ներառում է 20 գիտական զեկուցում: Դրանք տարբեր տեսանկյունով, տարբեր մոտեցմամբ գրված հոդվածներ են, որոնք բոլորն էլ ունեն նույն նպատակը՝ բացահայտել, հասկանալ ու գնահատել Փարաջանովի հարուստ ու խորհրդավոր աշխարհը, իրենց խոսքն ասել նրա հմայող արվեստի մասին՝ դրանով իսկ ևս մի դրվագով ամբողջացնելով այդ ֆենոմենի ժառանգության պատմությունը:

Ստորև փորձենք շատ հակիրճ ներկայացնել այս ժողովածուի մեջ զետեղված կոնֆերանսի նյութերը՝ պատկերացնելու համար ուսումնասիրությունների լայն ու բազմազան «տարածքը»:

Կինեմատոգրաֆի պատմության մեջ որպես բացառիկ գործ մտած «Նռան գույնը» ֆիլմին անդրադարձել են միաժամանակ մի քանի հոդվածագիրներ. արվեստագիտության թեկնածու **Գարեգին Զաքոյանը՝** «Ինչո՞ւ է «Նռան գույնն» անհասկանալի» բավական խոսուն վերնագրով հոդվածով, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյանը**, որ անդրադառնում է ֆիլմում Տիգրան Մանսուրյանի երաժշտությանը, արվեստագիտություն թեկնածու **Արսեն Համբարձումովը՝** նշված ֆիլմի կառուցվածքում սիմվոլների և արքետիպերի նշանակության մասին խոսքով, **Աննա Բաբախանյանը** (Ռուսաստան), որ փորձել է գտնել «Նռան գույնը» ֆիլմում դերասանուհի Սոֆիկո Ճիաուրելիի ստեղծած կերպարներում խորհրդաբանական բաղադրիչ:

Ուշագրավ է արվեստագիտության դոկտոր **Ալեքսանդր Չապալովի** (Ուկրաինա) հոդվածի նյութը՝ ուկրաինական կինեմատոգրաֆի վրա Փարաջանովի ազդեցության մասին, որտեղ շեշտը դրվում է ռեժիսորի այն գործերի վրա, որոնք ճանաչում բերեցին նրան միջազգային ասպարեզում:

Փարաջանովի արվեստի բազմազանության մասին է վկայում արվեստագիտության թեկնածու **Թեո Խատիաշվիլու** (Վրաստան) հոդվածը, որը քննում է Փարաջանովի գործերը Թբիլիսիի բազմամշակութային համատեքստում, ինչպես քաղաքի ճարտարապետական ավանդույթների և պատմության ազդեցությունը Փարաջանովի ստեղծագործության վրա:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Սուսաննա Դավթյանը** իր հոդվածում նշում է. «Արվեստի գործը կարող է մնալ որպես «հնարավորություն», որպես հեղինակի «ուղեղի խաղ», եթե նրա «իրականությունը» չհաստատվի գեղագիտական ընկալման ակտով, մարդու հաղորդակցությամբ»:

Մեկ այլ դիտարկումով է հանդես գալիս բանասիրական գիտությունների դոկտոր **Աննա Յակովլևիչ-Ռադունովիչը** (Սերբիա)՝ անդրադառնալով Սերգեյ Փարա-

ջանովի սցենարներին, որոնք գրվել են ռուս դասականների՝ Ալեքսանդր Պուշկինի և Միխայիլ Լերմոնտովի պոեմների էկրանավորման համար:

Փարաջանովի «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմի մասին է արվեստագիտության թեկնածու **Եվգենի Մարգոլիտի** (Ռուսաստան) հոդվածը, որտեղ հեղինակը փորձում է հիմնավորել, որ այստեղ ռեժիսորը «վերստեղծում է ուկրաինական կինոյի յուրատեսակ պատկերային ավանդույթ»: Նույն ֆիլմին անդրադառնում է նաև **Իվոնա Գրոդզը** (Լեհաստան)՝ ֆիլմը ենթարկելով մշակութաբանական, համեմատական հետաքրքիր վերլուծության:

Ուշադրության է արժանի արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Ծովինար Մովսիսյանի** «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի լիբրետոյի ստեղծման պատմությանը նվիրված հոդվածը Էդգար Հովհաննիսյանի և Սերգեյ Փարաջանովի համագործակցության մասին:

Արվեստագիտության թեկնածու **Վերոնիկա Ժուռավլյովան** քննում է Փարաջանովի ստեղծագործությունը XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի գեղարվեստական հոսանքների համապատկերում:

Ֆիլիպպո Պերֆետտին (Իտալիա), անդրադառնալով Փարաջանովի ֆիլմերի տեսողական ընկալմանը Իտալիայում, գնահատում է արվեստագետ-ռեժիսորին որպես եզակի երևույթ, որն ունի լայն գեղագիտական ըմբռնում:

Կամիլա Գաբդրաշիտովան (Ղազախստան) փորձ է արել պարզաբանել Փարաջանովի պոետիկ լեզվի առանձնահատկությունները, ազդեցությունը Սուլթան Խոջիկովի ֆիլմերի վրա, ընդհանրություններ գտնել 1960–70-ական թվականների հայկական և ղազախական ֆիլմերի միջև:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վիտալի Պոզնինը** (Ռուսաստան) խոսում է փարաջանովյան ֆիլմերի արտասովոր տեսողական, նաև գունային լուծումների մասին՝ շեշտը հիմնականում դնելով «Նռան գույնը», «Մոռացված նախնիների ստվերները». «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» և «Աշուղ Ղարիբ» գործերի վրա:

Մարիա Ռախմանինովայի և Ստանիսլավ Յացենկոյի (Վրաստան) հոդվածում փորձ է արվել քննել ռեժիսորի գեղագիտական մոտեցումները և, ինչպես նշում են հեղինակները, «խորհրդային գաղութային խոսույթի անհամատեղելիությունը»:

Արվեստագիտության թեկնածու **Աննա Զոսիչը** (Ռուսաստան) Փարաջանովի ստեղծագործությունները դիտարկում է որպես 1960–70-ականների խորհրդային կինեմատոգրաֆի գեղանկարչական-խորհրդանշային ուղղության մաս:

Արվեստագիտության թեկնածու **Հռիփսիմե Վարդանյանը,** ռեժիսորի ֆիլմերի կադրերը համեմատելով յուրատեսակ կտավների հետ, *Փարաջանով* երևույթը համարում է «մեծ պայթյուն»: Իսկ արվեստագիտության թեկնածու **Նաիրա Սարգսյանը,** Փարաջանովի ստեղծագործությունն անվանելով աննախադեպ, անդրադառնում է կինոձայնին:

Ամփոփելով կարող ենք նշել, որ միանգամայն բնական ու հատկանշական է, որ գրքում զետեղված բացառապես բոլոր հոդվածներում խոսվում է Սերգեյ Փարաջանով անհատի, ռեժիսորի, սցենարիստի, ստեղծագործողի բացառիկ ինքնատիպության, ստեղծագործ էության, անհատական ձեռագրի մասին, նմանը չունեցող լուծումների և գեղագիտության մասին:

Այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն առաջատարն է մեր հանրապետությունում հայ արվեստի ուսումնասիրության, գնահատման, հանրահռչակման ասպարեզում: Եվ Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը խոսուն փաստ է այս ուղղությամբ: Եվ այս շեշտադրումով է «Փարաջանով – 100» միջազգային գիտական կոնֆերանսը ամփոփող՝ ինստիտուտի տնօրեն **Աննա Ասատրյանի** հոդվածը, որը եզրափակում է ժողովածուն:

Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջոցառումը, ինչպես նաև այս ժողովածուն, գալիս է ոչ միայն մասը կազմելու Փարաջանով երևույթի մասին ստեղծված գիտական-քննական բազմաթիվ ուսումնասիրությունների շղթայի, այլև լրացնելու և հարստացնելու այն:

Լիլիթ Արզումանյան
Lilit Arzumanyan
Лилит Арзуманян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

lilit.arzumanyan@arts.sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-289

АКОП МУРАДЯН (РЕД.), ОТЧЕТ О СОСТОЯНИИ КАРССКОЙ ОБЛАСТИ НАЧАЛЬНИКА КАРССКОЙ ОБЛАСТИ ГЕНЕРАЛ-ЛЕЙТЕНАНТА ИВАНА ПОПКО, 1878 Г., ЕРЕВАН, «ГИТУТЮН», 2025, 206 С. + 2 ТАБЛ.

HAKOB MURADYAN (ED.), REPORT OF THE HEAD OF THE KARS REGION LIEUTENANT GENERAL IVAN POPKO ON THE STATE OF THE KARS REGION, 1878 PUBLICATION, YEREVAN, GITUTYUN, 2025, 206 P. + 2 TAB.

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ (ԽՄԲ.), ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԻՎԱՆ ՊՈՊԿՈՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ, 1878 Թ., «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», 2025, 206 ԷՋ + 2 ԱՂ.

Հայ ընթերցողի գրասեղանին է պատմական նշանակության փաստաթղթերի և վավերագրերի ևս մեկ կարևոր հրատարակություն, որը վերաբերում է հայոց հինավուրց Կարսի նահանգին: Այդ ժողովածուն «Отчет о состоянии Карсской области начальника Карсской области генерал-лейтенанта Ивана Попко 1878 г.» վերտառությամբ լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղար Հակոբ Մուրադյանի աշխատասիրությամբ:

Պետք է նշել, որ պատմաբան Հ. Մուրադյանը վաղուց է զբաղվում Կարսի նահանգի վարչաժողովրդագրական հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Նա դեռևս 2006 թ. Երևանում «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով հրապարակել է «Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» վերնագրով աշխատությունը, որն արժանացել է մասնագետների բարձր ու դրվատալից գնահատականներին:

Վերոնշյալ աշխատությունը աղբյուրների մանրակրկիտ հետազոտությամբ ու համադրմամբ, գիտական անաչառությամբ լուսաբանում է Կարս նահանգի անցած դարերի պատմությունը, ժողովրդագրական տեղաշարժերն ու անցուդարձը, վարչական և սոցիալ-տնտեսական համակարգը, մեծ ու փոքր բնակավայրերի տեղաբաշխումը և տեղագրությունը և այլ հիմնահարցեր:

Սույն աշխատության մեջ Հ. Մուրադյանը օրգանապես շարունակում և լրացնում է Կարսի վերաբերյալ իր նախորդ ուսումնասիրությունը: Այն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից՝ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ: Գրքի գիտական խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, գրախոսները՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկազ Հովհաննիսյանը և պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Հայրապետյանը: Շուրջ 39 էջ ընդգրկող առաջաբանում Հ. Մուրադյանը մանրամասն ներկայացնում է այն

հանգամանքներն ու կարևորությունը, որոնք իրեն մղել են ձեռնարկելու սույն գրքի հրատարակությունը:

Ըստ այդմ, տեղեկանում ենք, որ Կարսի շրջանը ռուսական տիրապետությանը անցնելուց հետո ցարական իշխանությունների ուշադրության առանցքում են եղել նորաստեղծ մարզին առնչվող տեղագրական, սոցիալ-տնտեսական, ռազմական բնույթի տվյալներն ու տեղեկությունները, որոնք կարևորվում են Ռուսաստանի հետագա ռազմաքաղաքական առաջխաղացումը ապահովելու տեսանկյունից: Ռուսական կայսրությունում ընդունված կարգի համաձայն, նահանգապետները (ինչպես նաև մարզպետները) ամեն տարի պարտավոր էին ներկայացնել իրենց վստահված վարչական միավորների սահմաններում տիրող իրավիճակը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկություն իրենց մարզի կամ նահանգի տարբեր ոլորտների վերաբերյալ:

Կարսի մարզը Ռուսաստանի կազմի մեջ միավորվելուց հետո նրա առաջին նահանգապետն է դառնում գեներալ-լեյտենանտ Իվան Պոպկոն, որը զարգացած և կրթված անձնավորություն էր, տիրապետում էր ինը լեզուների (այդ թվում՝ լատիներենի և հին հունարենի): Նրա գրչին են պատկանում կազակության պատմությանը, ինչպես նաև Կովկասի ժողովուրդների կենցաղին ու բարքերին վերաբերող ուսումնասիրություններ: Ի. Պոպկոյի նշանակումը Կարսի նահանգապետի պաշտոնում պատահականություն չէր: Դեռևս Ղրիմի պատերազմի ժամանակ՝ 1855 թվականին, երբ Կարսը կարճ ժամանակով գրավվեց ռուսական զորքերի կողմից, Պոպկոյին Լորիս-Մելիքովը նշանակում է Կարսի սանջակի կառավարիչ (1855–1856 թթ.):

Հ. Մուրադյանը, որն անխոնջ կերպով ուսումնասիրել է ռուս պետական և ռազմական գործչի կենսագրությունն ու գրական ժառանգությունը, մեկ առ մեկ թվարկում է նրա բարձրարժեք գործերը («Статистическое описание чернаморского войска», «За кубанские воры. Из записок И.П.», «Черноморские казаки в их гражданском и военном быту: очерки края, общества, вооруженной силы и службы», «Терские казаки со стародавних времён», вып. 1, Гребенское войско» և այլն): Ի. Պոպկոյի հետազոտությունները զգալի հետք են թողել ժամանակակիցների և հետագա սերուդների աշխարհայեցողության վրա: Հ. Մուրադյանը Կարսի նահանգապետ Ի. Պոպկոյի «Հաշվետու զեկուցագիրը» հայտնաբերել է Մ. Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի ինստիտուտում (Մատենադարան) պահվող Լազարյանների ֆոնդում (թղթապանակ 131, գործ 113, փաստաթղթեր 11–28): Հիմնական տեքստին կցված է ներածություն: Ճշմարտացի է այն դիտարկումը, որ «Զեկուցագրի» կարևորությունը վերաբերում է ոչ միայն այդ ճակատագրական տարեթվին, այլև հասարակական այն իրավիճակի քննությանը, երբ տվյալ երկրամասը մի կռվող կողմից անցնում էր մյուսին, ուրեմն նաև խնդիր էր առաջանում այդ տարածքը առավել արդյունավետ կառավարելու:

Ռուս զինվորականի և պետական բարձրաստիճան պաշտոնյայի ներկայացրած «Զեկուցագիրը» աչքի է ընկնում բարձր պատասխանատվությամբ: Նրան այդ հարցում օգտակար են եղել ոչ միայն իր անմիջական ենթականերն ու օգնականները, այլև երկրամաս գործուղված այլ մասնագետներ, քանի որ երկրամասը Ռուսական կայսրությանը միավորելուց հետո ցարական իշխանությունները ընդգծված

հետևողականությամբ էին վերաբերվում նոր կազմավորված վարչատարածքային միավորին, նրա խնդիրներին, առօրյային և հեռանկարներին:

«Զեկուցագրում» մանրամասն ներկայացված են Կարսի նահանգի սահմանների նկարագիրը, բնակավայրերի տեղագրությունը, կլիմայի և ազգաբնակչության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, հողօտագործման և հողի տիրապետման ձևերն ու մեթոդները, ինչպես նաև տեղեկություններ անասնապահության, մեղվաբուծության, անտառային ռեսուրսների, այգեգործության և բանջաբուծության և այն ամենի վերաբերյալ, ինչի հանրագումարն է կազմում ժողովրդական տնտեսությունը (արհեստներ, առևտուր, ֆաբրիկաներ ու գործարաններ, հաղորդակցության ուղիներ, փոստ ու հեռագիր, ժողովրդական կրթություն, բնակչության կրոնական և քաղաքական աշխարհայացք և այլն):

Շուրջ տասնութ գլուխ է ընդգրկում Կարսի նահանգապետ Պոպկոյի զեկուցագիրը, որի շուրջ հիմնավոր փաստարկումներ ու եզրահանգումներ է կատարում պատմաբան Հ. Մուրադյանը: Սակայն հայ գիտնականի կարևոր դերակատարությունն այստեղ այն է, որ նա, ըստ էության, խիստ քննական մոտեցում է ցուցաբերում և՛ Պոպկոյի, և՛ տվյալ ժամանակաշրջանի ու այդ հիմնահարցի վերաբերյալ տեսակետներ ու վարկածներ առաջ քաշած հայ և օտարազգի հեղինակների նկատմամբ:

Շնորհիվ բարձր պատրաստվածության, պատմագիտական հարուստ գիտելիքների ու ամրակուռ տրամաբանության, ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղարը գիտական բանավեճում ջախջախում և ցաքուցրիվ է անում հակագիտական և հակահայկական տեսակետները: Իսկ պատմության, հատկապես հայոց պատմության կեղծարարները շատ են, տարբեր ազգությունների և հանդիպում են բոլոր ժամանակներում:

Եվ հիմնական վիճահարույց հարցն այն է, թե ովքեր են եղել Կարսի մարզի բնիկ տերերը, կամ ու՞մ համար է այն եղել հայրենիք, իսկ հետո ովքեր են տիրացել սույն երկրամասին:

Եվ ոչ միայն քոչվոր թուրքերն են վիճարկում այս հարցադրումը, այլև մեր հարևան վրացիները:

Կարսի նահանգի այն գավառակները, որոնք սահմանակից էին Վիրքին, վրաց հեղինակները ներկայացնում են որպես պատմականորեն վրացական տարածք:

Այդպես է վարվում XIX դարավերջի վրաց հայտնի պատմաբան, հնագետ և ազգագրագետ Դիմիտրի Բագրատեն, որը ռուսական կառավարության կողմից 1881 թվականին գործուղվել է Կարսի մարզ: Այսպես, նա համոզված շեշտադրում է հետևյալը. «Ներկայիս Կարսի մարզը նախորդ դարերում գտնվել է երկու առանձին թագավորությունների կազմում: Նրա այն հատվածը, որը տեղավորված է Արաքսի ավազանում, պատկանել է Հայաստանին, իսկ այն տարածքները, որոնք ընկած էին Կուրի վերին հոսանքում և Ճորոխի արևելյան վտակներում (վերջինիս ամբողջ ավազանով մեկ), հանդիսանում էին Վրաստանի սեփականությունը» (Отчёт, 14): Վրաց հեղինակները վրացական են համարում Տայք-Կղարջքը: Խիստ քննադատելով վերոնշյալ տեսակները՝ Հ. Մուրադյանը մեջբերում է փաստեր հին հունական պատմիչներ Քսենոֆոնի և Ստրաբոնի աշխատություններից,

որոնք աներկբա վկայությունն են այն բանի, որ Ճորոխի և Կուրի ավազանը դեռևս հնագույն ժամանակներից բնակեցված է եղել հայերով: Սրանից բացի, վաղ միջնադարում վերոնշյալ տարածքները գտնվել են հայոց Արշակունիների թագավորության կազմում: Ընդ որում, Ճորոխի ավազանի տարածքը «...պատկանում էր հայոց Մամիկոնյան նախարարական տոհմին, իսկ հետագայում՝ VIII դարի վերջից անցավ ոչ պակաս հայտնի հայկական նախարարական տոհմին՝ Բագրատունիներին» (16): Այսպես պատմական համոզիչ փաստերով և պատմիչների մեկնաբանություններով պարզ ու հստակ է դառնում, թե ովքեր են եղել վերոնշյալ տարածքների իրական բնիկներն ու փաստացի տերերը:

Ինչ վերաբերում է Կարսի նահանգապետ Պոպկոյի «Զեկուցագրին», ժամանակակից հայ պատմաբանը բարձր է գնահատում դրա արժեքն ու նշանակությունը: Ըստ Հ. Մուրադյանի, գեներալ-լեյտենանտ Պոպկոյի սույն աշխատանքը, անկասկած, կարելի է համարել Կարսի մարզի պատմության ուսումնասիրության ամենահավաստի սկզբնաղբյուրներից մեկը: Առանց նմանատիպ հետազոտությունների անկարելի պիտի լիներ իրական և ամբողջական պատկերացումներ կազմել վերոնշյալ երկրամասի անցյալի, առօրյա կյանքի, սոցիալ-տնտեսական, վարչաիրավական, մշակութային հարաբերությունների, էթնոժողովրդագրական և կրոնահավատալիքային տեղաշարժերի վերաբերյալ: Հենց այս ամենով ռուսաց տերության այս բարձրաստիճան պաշտոնյայի կատարած ուսումնասիրությունն անվիճարկելիորեն լավագույն աղբյուրագիտական ու պատմագիտական արժեք և նշանակություն ունեցող աշխատանք է:

Հ. Մուրադյանը «Զեկուցագիրը» հրատարակել է առանց կրճատումների և տեքստային նվազագույն միջամտությամբ:

Ամբողջությամբ պահպանվել են հեղինակային ուղղագրությունն ու կետադրությունը, ինչպես նաև հղումներն ու ծանոթագրությունները: Թեև ձեռագիրը գրված է հստակ ու գրագետ շարադրանքով, այնուամենայնիվ, հանդիպում են բառեր և արտահայտություններ, որոնք դժվարընթեռնելի են: Այդ դեպքում հեղինակային միջամտությունը նշված է առանձին նշանով: Ինքը Ի. Պոպկոն, որն այնքան հիացած էր Կարսի երկրամասի բնական, աննման դիրքով ու կլիմայով, նրա բարեբեր տարածքով ու բազում հիանալի հնարավորություններով, համոզմունք էր հայտնում, որ «կան... պատճառներ, որոնք վճռականորեն նպաստում են այն բանին, որ նոր երկրամասից հարկավոր է կազմավորել անմիջապես ինքնուրույն, հատուկ ադմինիստրատիվ վարչամիավոր» (40):

Ցավոք, պատմությունն ընթացավ բոլորովին այլ կերպ ու այլ ուղիով: Կարսն ու Կարսի երկրամասը այս բովանդակալից «Զեկուցագրից» շատ չանցած, անջատվեց ռուսական պետականության սահմաններից և հայաթափ եղավ ամբողջովին:

1920 թ. աշնանը Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա ավարտվեց Կարսի նահանգի կորստով:

Պատմության դասերն անողոք են:

Այդ դասերը վերհիշելուն մշտապես կարող է օգտակսար լինել Ի. Պոպկոյի՝ պատմական ճշմարտությամբ գրված «Զեկուցագիրը», որը հոգատարությամբ ու պատասխանատվության բարձր չափանիշներով հրատարակել է հայ փորձառու պատմաբան, Կարսի պատմության խորագիտակ հետազոտող Հակոբ Մուրադյանը:

Արմեն Կարապետյան
Armen Karapetyan
Армен Карапетян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

armen.karapetyan@academhistory.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-293

«ՊԱՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏԸ». ՊԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

"CEREMONIAL AND FOLKLORISTIC SUBTEXT OF THE DANCE": CONFERENCE IN MEMORIAM OF GAGIK GINOSYAN

«РИТУАЛЬНЫЙ И ФОЛЬКЛОРНЫЙ ПОДТЕКСТ ТАНЦА»: КОНФЕРЕНЦИЯ, ПОСВЯЩЕННАЯ ПАМЯТИ ГАГИКА ГИНОСЯНА

2024 թ. սեպտեմբերի 27-ից 29-ը տեղի ունեցավ «Պարի ծիսական և բանահյուսական ենթատեքստը» խորագրով եռօրյա գիտաժողովը, որը նվիրված էր ժողովրդական պարերի բեմադրիչ, հանրային գործիչ Գագիկ Գինոսյանի հիշատակին: Գիտաժողովի կազմակերպիչը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտն էր (ՀԱԻ)՝ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Գիտաժողովին ներկայացվեցին 38 զեկուցումներ, որոնց հեղինակները հետազոտողներ են Հայաստանից և արտերկրից, ինչպես նաև Գ. Գինոսյանի աշակերտներ, որոնք զբաղվում են պարագիտության տարբեր խնդիրներով: Շատերն իրենց խոսքում նշեցին Գ. Գինոսյանի անուրանալի ավանդը հայ ժողովրդական պարերի վերակենդանացման, վերամշակման և, իր իսկ ձևակերպմամբ, ժողովրդին վերադարձնելու գործում, ինչը նա անում էր իր հիմնադրած՝ «Կարին» ավանդական երգի և պարի համույթի միջոցով: Վերջինս, ըստ էության, ուրույն փորձարարական գիտաշխատարանի (լաբորատորիա) դեր կատարեց պարագիտության կիրառական ոլորտում:

Սեպտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցան գիտաժողովի հանդիսավոր բացումը և առաջին օրվա հինգ նիստերը: Գիտաժողովը բացելով՝ ՀԱԻ տնօրեն, պ.գ.թ. Արսեն Բոբոխյանը մասնավորաբար նշեց, որ *«Գագիկ Գինոսյանը վերջին շրջանում ամենամեծ նպաստն է ունեցել ժողովրդական պարի զարգացման գործում: Այսօր կարևոր է քննարկել պարի բանահյուսական ենթատեքստը, որովհետև պարը միայն շարժում չէ՝ տեքստ է, որ մենք կարող ենք վերծանել և հասկանալ»*: Այնուհետև իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տ.գ.դ. Յուրի Սուվարյանը նշեց. *«Պարարվեստը մեր մշակույթի կարևոր բաղադրիչն է: Այն գործողությունների շարք է, որն իր շարժումներով որոշակի խոսք է ասում աշխատանքի մասին, սիրո մասին, պատերազմի մասին...»*: Ողջույնի խոսքով ելույթ ունեցավ և Գ. Գինոսյանի ավանդն արժևորեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս, պ.գ.դ. Աշոտ Մելքոնյանը, ով կիսվեց իր վաղեմի բարեկամ Գագիկ Գինոսյանի մասին հիշողություններով՝ հատուկ ընդգծելով նաև, որ վերջինս իր գործունեությամբ որպես ժառանգություն թողել է պարարվեստի նշանակալից դպրոց: ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության գլխավոր մասնագետ, ա.գ.թ. Նաիրա Կիլիկյանն իր ողջույնի խոս-

քում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձավ նաև հայ պարագիտության արդի խնդիրներին. *«Այսօր առանձնահատուկ պետք է նշենք ազգագրագետ, պարագետ Սրբուհի Լիսիցյանի ներդրումը համաշխարհային և հայ էթնոպարագիտության, էթնոխորեոլոգիայի ասպարեզում, նրա ուղենիշներով ու դպրոցի հիման վրա նաև իր գործունեությունն էր ծավալում Գագիկ Գինոսյանը»*: Հատուկ ընդգծվեց պարագիտության բնագավառում երիտասարդ մասնագետների պատրաստման կարևորությունը:

Այնուհետև լիագումար նիստը, որում ներառված էին հնագիտական, խորհրդաբանական, պատմագիտական բնույթի զեկուցումներ, բացեց ՀԱԻ փոխտնօրեն, բանագետ-լեզվաբան, բ.գ.թ. Տորք Դալալյանը, ով համառոտ ներկայացրեց նաև գիտաժողովի հղացման գաղափարը: Նա նշեց, որ պարի գիտական հետազոտությանը նվիրված մեծամասշտաբ գիտաժողով անցկացնելու միտքը ծագել էր դեռևս Գ. Գինոսյանի ողջության օրոք: *«Պարագիտական գիտաժողով պետք է կազմակերպեինք, քանի որ պարը մեր ինքնության կարևոր բաղադրիչներից մեկն է՝ գուցե և գիտական ուսումնասիրության տեսանկյունից այսօր ինչ-որ տեղ անտեսված: Կազմակերպչական աշխատանքների ժամանակ եկավ Գագիկ Գինոսյանի մահվան գույժը, և որևէ տարակարծություն չառաջացավ կազմկոմիտեի մեջ, որ գիտաժողովը պետք է նվիրվի հենց իր հիշատակին: Գինոսյանը կարողացավ իր գործունեության շնորհիվ ժողովրդական պարը դարձնել զանգվածային երևույթ Հայաստանում»*, - ասաց Տ. Դալալյանը:

Լիագումար նիստի ընթացքում ՀԱԻ Արցախի պատմամշակութային ժառանգության գ/հ խմբի ղեկավար և ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Համլետ Պետրոսյանը ներկայացրեց **«Պարը և խնջույքն ըստ միջնադարյան դրոշմազարդ կարասների և տապանաքարային պատկերաքանդակների»** զեկույցը: Հնագետ-մշակութաբանը նախ անդրադարձավ Գ. Գինոսյանի՝ մարդ-արվեստագետ-ազատամարտիկ կերպարին, ապա անցավ բուն նյութին: Նա պատկերազարդ տվյալների ցուցադրմամբ խոսեց XII-XIII դարերի կարասների մասին, որոնց գոտիները երբեմն պարունակում են նաև խնջույքի և պարի տեսարաններ, ինչպես նաև՝ XV-XVIII դարերի տապանաքարերի մասին, որոնք պատկերում են հանգուցյալների՝ դրախտային միջավայրում: Բանագետ, բ.գ.թ. Նվարդ Վարդանյանը **«Շրջանի խորհուրդը ժողովրդական խաղերի, հարսանեկան կլոր պարերի և ծիսերգերի համատեքստում»** զեկույցում բանահյուսական և ազգագրական տվյալների հիման վրա ցույց տվեց *գյովընդ* շուրջպարի, շրջանաձև մանկական խաղերի և հարսանեկան «մոմերով պարի» իմաստաբանական կապը ժամանակի առասպելական պտտվող անիվի հետ, որ խորհրդանշում է կյանքի հավերժությունն ու ամուսնացող զույգի սերնդագործման ներուժը: Արվեստաբան, ա.գ.թ., «Կարին»-ի անդամ Անի Հակոբյանի զեկույցը, որ խորագրված էր **«Ինքնությունից պար, թե՞ պարից ինքնություն»**, հիմնականում նվիրված էր Գագիկ Գինոսյանի և «Կարին»-ի գործունեությանը: Ուշագրավ մեկ այլ նյութ՝ **«Եվրոպական պարերը և հայ իրականությունը** (18-րդ դար – 1930-ական թթ.)», ներկայացրեց պարի և բալետի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող, արվեստի պատմաբան, բ.գ.թ. Արծվի Բախչինյանը: Նա իր զեկույցը բաժանել էր չորս հատվածների, որոնցում համապատասխանաբար խոսեց եվրոպական բալետում հայկական մոտիվների և հայերի՝ բալետի

հետ ունեցած առնչության (XVII–XVIII դդ.), հնդկահայ գաղութում անգլիացիների միջոցով եվրոպական պարերի յուրացման (XVIII դ. վերջ), արևելահայ և արևմտահայ իրականության մեջ պարահանդեսի և բալետի մշակույթի տարածման (XIX դ.), հայ մամուլում և գեղարվեստական գրականության մեջ բեմական պարի և բալետի մասին գրությունների, նաև պարագիտական առաջին հոդվածների մասին (XIX–XX դդ.):

Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցան ևս երեք՝ թեմատիկ նիստեր: «Պար և ազգագրական միջավայր ու ավանդական պարի բեմականացում» միացյալ նիստում (նիստավար՝ Սուրեն Հոբոսյան) զեկուցողները ներկայացրին որոշակի ազգագրական միջավայրերում ավանդական պարի դրսևորումները, ինչպես նաև ավանդական պարի մշակութային շարունակականության հարցերը: Արվեստաբան, ա.գ.թ. Հասմիկ Հարությունյանը **«Ավանդական պարը Ալեքսանդրապոլ-Լենինականի քաղաքային մշակույթի համատեքստում»** զեկուցման մեջ մանրամասնորեն խոսեց Գյումրիում ժամանակին տարածված՝ *քոչարի*, *կլոր պար*, Էրզրումի հայկական պար, *Մշու պար*, *թամզարա* պարերի մասին, որոնց զուգահեռ՝ հայտնվում էին ինքնատիպ՝ *Կալոսի պռկեն*, *Գյումրվա փրնգի*, *ղաշանգէ*, *փոփիկ-փոփիկ* պարերն ու պարերգերը: Բանագետ, բ.գ.թ. Հասմիկ Գալստյանն իր հավաքած դաշտային ազգագրական դիտարկումների և տեսանյութերի միջոցով նկարագրեց ու վերլուծեց **«*Պարտուն* երևույթի բանահյուսական միջավայրը շիրակյան հարսանիքի համատեքստում»**: «Պարտուն» երևույթը լայն կենցաղավարում է ունեցել ներկայիս Շիրակի մարզի Ախուրյանի, Աշոցքի և Արթիկի շրջաններում ընդհուպ մինչև 1988 թ. Սպիտակի երկրաշարժը: Նիստը եզրափակեց Հայարփի Անանյանը, որն ինքնազգագրության մեթոդի և տեսական գրականության համադրմամբ ներկայացրեց **«Ավանդական պարի շարունակականության և պահպանման ժամանակակից մոտեցումները Հայաստանում»**:

Չորրորդ նիստը՝ «Գագիկ Գինոսյանը՝ պարագետ և պարակերտիչ» (նիստավար՝ Հռիփսիմե Պիկիչյան), նվիրված էր Գինոսյանի ստեղծագործական գործունեության և կյանքի առանձին դրվագների լուսաբանմանը: Զեկուցողները հիմնականում Գ. Գինոսյանի աշակերտներն էին՝ «կարինցիներ», ովքեր խոսեցին նրա գրած հոդվածների մասին կամ մանրամասնեցին նրա պարագիտական աշխատանքի սկզբունքները, ինչպես՝ **«Հայկական պարերի հոգևոր բնույթը. պարահեն ինքնություն»** (Անահիտ Մասուրյան), **«*Ազգագրության թատրոնը* որպես ժողովրդի ստեղծածի վերիմաստավորում»** (Անի Գինոսյան), **«Պարի կենսապատույտը Գագիկ Գինոսյանի գործունեության մեջ»** (Մխիթար Դարմոնց), **«Ավանդական պարը՝ գրառումից մինչև բեմ»** (Աբել Մաթևոսյան): Նույն նիստի վերջնամասում մշակութային մարդաբան, պ.գ.թ. Գոհար Ստեփանյանը վերլուծեց **«Արտասվող տղամարդկանց պարը. Գինոսյանի մահը՝ որպես սուգը հանրայնորեն ժխտող տոն»**: Զեկուցողի եզրահանգումն այն էր, որ Գ. Գինոսյանի մահվան ծիսակարգը՝ միաժամանակ թե՛ հստակ ծրագրված, թե՛ ինքնաբուխ, առանցքում ուներ իր իսկ կենդանացրած ամենաբնորոշ պարը՝ *յարխուշտան* (ծափ-պար), որն ինքնին իր բնույթով մահվան ժխտում է:

Օրվա վերջին՝ «Պարը և ծեսը հնագույն պատկերագրության մեջ» նիստի (նիստավար՝ Հասմիկ Գալստյան) զեկուցումներն անդրադառնում էին ժայռապատ-

կերներից սկսած՝ մինչև խեթական ծեսերում ու հայ ժողովրդական հավատալիքներում տեղ գտած պարի արտացոլումներին: Պատմաբաններ, պ.գ.թ. Կարեն Թոխաթյանը և պ.գ.թ. Գոհար Վարդումյանը **«Պարի արտացոլումը Հայաստանի ժայռապատկերներում»** զեկուցման մեջ ուշագրավ պատկերագրական նյութի միջոցով ժայռապատկերների «պարային տեսարանները» խմբավորեցին ըստ հետևյալ ցուցիչների՝ պարակազմ (մենապար, զուգապար կամ խմբապար), շարժման հիմնական ձև և դիրք, պարատեսակ (որսի, ռազմի, խաղի և այլն), ինչպես և՝ ըստ պարին առնչվող իմաստային ոլորտների՝ մարզարվեստ, հագուստ, պաշտամունք, նվագարան: Պատմաբան, պ.գ.թ. Հասմիկ Հմայակյանը **«Մարդ-կենդանիները խեթական ծեսերում և ծիսական պարերում»** զեկուցման մեջ խոսեց խեթական սեպագիր տեքստերում նկարագրված ծեսերի և տոնակատարությունների մասին, որոնցում կարևոր տեղ է ունեցել պարը:

Պարագիտական գիտաժողովի աշխատանքները սեպտեմբերի 28-ին և 29-ին շարունակվեցին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նիստերի դահլիճում: Երկրորդ օրվա լիագումար նիստի (նիստավար՝ Արծվի Բախչինյան) զեկուցողները մշակութային մարդաբաններ էին, որոնք դիտարկում էին պարը հենց մշակութային մարդաբանության ոսպնյակով: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.թ. Լևոն Աբրահամյանն իր զեկույցում, որ վերնագրված էր **«Միասնության շուրջպար. հայ ինքնությունը համախմբման ծեսերի համատեքստում»**, վերլուծեց 2005 թ. մայիսի 28-ին Արագածի շուրջը կազմակերպված «Միասնության շուրջպարը» և դրա վերաբերյալ ծավալված հանրային խոսույթը: Դրանք ուսումնասիրելով երեք փուլերում՝ նախապատրաստական, իրականացման և ետ-իրադարձական, հեղինակն իր զեկուցումը համեմեց հարուստ պատկերագրական նյութով: Ազգագրագետ և մշակութաբան, պ.գ.թ. Հռիփսիմե Պիկիչյանը քննարկեց **«Պարը՝ Հայաստանի քաղաքացիական և քաղաքական շարժումներում»** թեման՝ առանձնացնելով երկու խոշոր ժողովրդական ընդվզումներ՝ 2015 թ. էլեկտրաէներգիայի թանկացման դեմ տեղի ունեցած «Էլեկտրիկ Երևան» և 2018 թ. իրականացված «Թավշյա հեղափոխություն» շարժումները: Զեկուցողը դաշտային հետազոտության հիման վրա փորձեց բնութագրել, տիպաբանել և վերլուծել ցույցերի «պարային սցենարները»՝ իբրև կառավարության որոշումների դեմ ուղղված բողոքի ինչյունաշարժումային տեքստեր: Ազգագրագետ, պ.գ.դ. Էմմա Պետրոսյանը հեռավար ներկայացրեց **«Էջեր XX դ. հայ ժողովրդական պարի պատմությունից»**՝ սկսած Երևանի Անգլիական այգում անցյալ դարասկզբին փողային նվագախմբի և ժողովրդական գործիքների նվագակցությամբ կազմակերպված սիրողական թատերախմբերի ներկայացումներից և վաղխորհրդային շրջանում Վահրամ Արիստակեսյանի, Նազելի Լիսիցյանի, Հասմիկ Սիրունյանի, Աննա Դուրինյանի, Սրբուհի Լիսիցյանի գործունեությունից՝ վերջացրած 1960–ականներին իր իսկ հեղինակած հոդվածով՝ «Ու՞ր է գնում մեր պարարվեստը» (տպագրված՝ «Սովետական արվեստ» ամսագրում), և նույն ժամանակաշրջանում ծավալված՝ Հայրիկ և Մարո Մուրադյանների, Ռուդիկ Հարոյանի, Արուսյակ Սահակյանի, Ժենյա Խաչատրյանի, ինչպես և Մանկապատանեկան գեղագիտական կենտրոնի գործունեությամբ: Լիագումար նիստի հաջորդ երկու՝ արտերկրի մասնակիցների զեկուցումները վերաբերում էին համապատասխանաբար Ուկրաինայում և Թուրքիայում տեղական ժողովրդական պարերի վերակազմությանը և ազգագրա-

կան համույթների գործունեությանը: Նրանցից՝ պարագետ, պ.գ.թ. Անդրիյ Նահաչևսկին Ալբերտայի համալսարանից (Կանադա) իր նյութը ներկայացրեց հեռավար, իսկ պարագետ Արզու Օզթյուրքմենը Թուրքիայի Բոսֆորի (Բողազիչի) համալսարանից հարգելի պատճառով չկարողացավ միանալ գիտաժողովին: Ա. Նահաչևսկին **«Ուկրաինական պար և վերահամատեքստայնացում»** զեկույցում «հոպակ» պարի օրինակով խոսեց տեսական այն մոտեցման մասին, ըստ որի՝ ժողովրդական պարը դիտարկվում է որպես բարդ երևույթ, որ փոփոխվում է ժամանակի, շարժման, իմաստի և համատեքստի մեջ:

Հաջորդ նիստը վերնագրված էր «Պար և ազգային պատմույթ (նարատիվ)» (նիստավար՝ Գոհար Ստեփանյան): Պարագետ, պ.գ.թ. Նարինե Շամամյանն արխիվային որոշ նյութերի հիման վրա փորձեց ներկայացնել **«Պարային մշակույթի նոր մոդել ստեղծելու գործընթացները Խորհրդային Հայաստանի վաղ շրջափուլում»**, մասնավորապես՝ ստալինյան բռնաճնշումների ժամանակաշրջանում: Զեկուցողը, ի թիվս այլ կետերի, մանրամասնորեն խոսեց 1938 թ. Մոսկվայում կայացած՝ Գրականության և արվեստի տասնօրյակի մասին, որին Հայաստանից մասնակցում էին Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի համույթը, Սրբուհի Լիսիցյանի «Ռիթմի և պլաստիկայի» ստուդիան և Վահրամ Արիստակեսյանի ղեկավարությամբ՝ Աշնակ գյուղի սասունցիների պարի խումբը: Վերջինիս ելույթը, սակայն, անհետևանք չէր մնացել. նույն այդ տարում Վ. Արիստակեսյանը մեղադրվել էր լրտեսության մեջ և կալանավորվել: Հաջորդ զեկույցը՝ **«Պարը և բեմական տարազը Հայաստանի վաղխորհրդային շրջափուլում՝ Աշնակ գյուղի պարախմբի օրինակով»**, ներկայացրեց ԵՊՀ մագիստրոս Վահե Քոթանյանը. նա արխիվային նյութերի հիման վրա անդրադարձավ Վահրամ Արիստակեսյանի կողմից Թալինի շրջանի Աշնակ գյուղում բնակվող սասունցի գաղթականների ժառանգներից պարի խումբ ձևավորելու ընթացքում առօրյա հագուստի և թանգարանային նմուշների ձևվածքի և գեղազարդման տարրերի պահպանմամբ բեմական տարազ ստեղծելու աշխատանքին: Մշակութային մարդաբան, պ.գ.թ. Գայանե Շագոյանը, շարունակելով նախորդ երկու թեմաները, մանրամասնեց, թե **«Ինչպես են կապվում *յարխուշտան*, «Սասնա ծռեր»-ն ու հազարաշենը (ազգային պատումի ձևավորումը խորհրդային արդիականացման նախագծում՝ Աշնակ գյուղի օրինակով)»**: Զեկուցողը ժողովրդական պարարվեստի, բանահյուսության և ժողովրդական ճարտարապետության նշված երևույթների վերիմաստավորման մեջ զուգահեռներ տանելով՝ եզրահանգեց, որ խորհրդային արդիականացման նախագիծը, յուրաքանչյուր հանրապետության տիտղոսակիր ժողովրդի համար ազգային պատմույթ կերտելիս, ենթադրում էր՝ ժողովրդական-գեղջկական որևէ նմուշ արժևորել իբրև ազգային, այն հանրահռչակել՝ կիրառելով ինստիտուցիոնալ մեխանիզմներ, այնուհետև նպաստել տեղային տարբերակների համահարթեցմանը՝ դրանք դարձնելով ճանաչելի և դյուրին՝ յուրացնելու համար: Այդպես՝ սասունցիների ծափ-պարը (*յարխուշտան*), «Սասնա ծռեր» դիցավեպի հետ միասին, դարձավ հայկականության՝ հայ ինքնության կարևորագույն բաղադրիչներից մեկը: «Պար և ազգային պատմույթ (նարատիվ)» նիստի վերջին զեկուցումը՝ **«*Ղազի* խաղ-պարի դրսևորումները Արագածոտնի մարզում (Օշական)»**, ներկայացրեց երիտասարդ ազգագրագետ Վարդուհի Գրիգորյանը: Նա իր դաշտային հետազոտության հիման վրա նկարագրեց այժմ

արդեն կենցաղավարումից դուրս եկած թռչնապար-խաղերից մեկը, որը կատարել են տղամարդիկ՝ հիմնականում հարսանիքների և ուխտագնացությունների ժամանակ: Զեկույցի հեղինակին հաջողվել էր Օշականում բնակվող տեղեկատու անձանց բանավոր հաղորդումների և գրավոր աղբյուրների համադրմամբ վերականգնել և տեսաձայնագրել *ղազի*-ն, որը ժամանակակից կատարմամբ և նվագակցությամբ տեսանյութի միջոցով ներկայացվեց գիտաժողովում:

Սեպտեմբերի 28-ի երրորդ նիստը վերաբերում էր «Պար և բանահյուսություն» կապին (նիստավար՝ Թամար Հայրապետյան). զեկուցողները ներկայացրին զանազան պարերգերի ժանրային փոխակերպումներն ու դրանց անդրադարձները բանահյուսական այլ ժանրերում, ինչպես և պարերգերի բանահյուսական գրառումները: Երաժշտագետ-բանագետ, ա.գ.թ. Մարգարիտ Սարգսյանը **«Էջմիածին» պարերգի ժանրային փոխակերպումները»** զեկույցում նշեց, որ ժողովրդի երաժշտալեզվական մտածողության բնորոշ գծերն ուսումնասիրելու և երգային բանարվեստի ավանդական տարբեր ժանրերի պահպանման ու զարգացման, ինչպես և նորերի առաջացման ուղիները նշմարելու համար կարևոր պայման է երգային տարբերակների համեմատական քննությունը: Այս ծիրում հետազոտողը մանրամասնորեն խոսեց և, երգային հատվածներ կատարելով, ներկայացրեց խնդրո առարկա պարերգի տարբերակները՝ եզրահանգելով, որ սկզբնապես գրառված լինելով որպես աշուղ Խլղաթի հորինվածք, հետագայում ժողովրդի մեջ տարածվելով և ավելի քան մեկդարյա ուղի անցնելով՝ «Էջմիածին»-ը հարստացել և ի վերջո կատարյալ պարերգային տեսք է ստացել երաժշտաբանագետ Լուսինե Նազարյանի և Գագիկ Գինոսյանի մասնագիտական գործակցության շնորհիվ: Հաջորդիվ՝ բանագետ, բ.գ.թ. Լուսինե Հայրիյանը կարդաց **«Պարի տարաբնույթ դրսևորումները հայ ժողովրդական հեքիաթներում»** զեկույցը, իսկ բանագետներ, բ.գ.թ. Էսթեր Խեմչյանը և բ.գ.թ. Մարինե Խեմչյանը ներկայացրին **«Շիրակի պարերգերը՝ ըստ Ստեփան Խաչատրյանի հավաքածուի նյութերի»**, որոնք վերջինիս կողմից գրառվել են 1973 թ. Արթիկի շրջանի Լեռնակերտ, Հառիճ, Նահապետավան, Մեղրաշեն, Պեմզաշեն գյուղերում և Արթիկ շրջկենտրոնում: Նիստի ավարտին՝ բանագետ, բ.գ.թ. Հասմիկ Մատիկյանը խոսեց **«Օրորը պարերգի համատեքստում (շիրակյան նյութերի քննությամբ)»** նյութի շուրջ:

Օրվա վերջին՝ չորրորդ նիստի՝ «Պարը միջգիտակարգային տիրույթում» (նիստավար՝ Նվարդ Վարդանյան) զեկուցողները տարբեր գիտակարգերի ներկայացուցիչներ էին: Ճարտարագետ, տ.գ.թ. Հովհաննես Դաշտոյանն իր սեփական փորձառության հիման վրա ներկայացրեց **«Շարժման եռաչափ մոդելավորումը՝ որպես պարերի գրառման, արխիվացման և կենսամեխանիկական հետազոտման միջոց»**: Երիտասարդ բանագետ Անահիտ Խեչոյանը **«Պարը՝ որպես հավաքական պայքարի խորհրդանիշ. գեղարվեստական տեքստ – պարային շարժում փոխառնչություններ»** զեկույցում անդրադարձավ Գևորգ Էմինի («Սասունցիների պարը»), Ակսել Բակունցի («Ծիրանի փողը») և Խաչիկ Դաշտենցի («Ռանչպարների կանչը») գործերում արտացոլված՝ պարային ռիթմ – ստեղծագործության կառուցվածք միահյուսմանը՝ ռազմապարի օրինակով: Երիտասարդ արվեստաբան Նաիրա Սեդրակյանը մանրամասնորեն ներկայացրեց **«Սրբուհի Լիսիցյանի բեմադրական**

և հակիրճ գիտական գործունեությունը», իսկ ԵՊՀ հայցորդ Նարինե Արշակյանը՝ **«Սրբուհի Լիսիցյանի դերը պարերգերի գրառման և ուսումնասիրման գործում»**:

Գիտաժողովի վերջին՝ երրորդ օրվա նիստերը թեև երկուսն էին, բայց վերստին բավական հագեցած էին: «Պարի պատմություն» (նիստավար՝ Անի Հակոբյան) նիստի առաջին զեկուցողը՝ երաժշտագետ, ա.գ.թ. Լուսինե Սահակյանը, ներկայացրեց **«Պարը հայ կոմպոզիտորական արվեստում»** թեմային առնչվող դիտարժան դրվագներ: Բանագետ, բ.գ.դ. Արմեն Շ. Սարգսյանը **«Ազգային ավանդական պարն ու դրա խնդիրները երեկ և այսօր»** զեկույցում անդրադարձավ նշված թեմայի վերաբերյալ Պարույր Սևակի հայտնած տեսակետներին ու մտքերին: Հեղինե Հովհաննիսյանը **«Սգո-ոգեկոչման պարը ցեղասպանության համատեքստում»** վերտառությամբ իր ելույթում մասնավորաբար խոսեց *յուրի* պարի և *յավրումս* երգի մասին, որոնցից առաջինը Հայոց ցեղասպանության հետևանքով տաբուացվել է, իսկ երկրորդը՝ դարձել ընկճախտի և պատմական դաժան իրադարձությունների հաղթահարման միջոց: Բանագետ-լեզվաբան, [illegible] Գալոյանը ներկայացրեց **«Կայծակնահար մահացածի շուրջ կատարվող պարը օսական ավանդույթում. *ցոփփայ* – հայ. *ցոփ*»** զեկույցը, որում առաջ քաշեց «օսերեն *ցոփփայ* – հայերեն *ցոփ*» բառային զուգաբանության մասին տեսակետը՝ այն վերլուծելով մշակութաբանական և լեզվաբանական համատեքստում, խոսելով դրան առնչվող ծեսի բաղադրիչների մասին՝ պար, ծիսերգ, հավատալիք: Երաժշտագետ, ա.գ.թ. Մարիաննա Տիգրանյանի զեկույցը՝ **«Օձապաշտության հետքերը հայկական ավանդական պարերում»**, տեղափոխված էր առաջին օրվա «Պարը և ծեսը հնագույն պատկերագրության մեջ» նիստից:

Վերջին նիստը վերնագրված էր «Պար և թերապիա» (նիստավար՝ Նարինե Շամամյան): Առաջին զեկուցողը՝ հոգեբան Մարիամ Հերգնյանը, ներկայացրեց **«Պարաշարժողական թերապիան՝ որպես սեփական մարմնի ընկալման և հասարակության մեջ միջանձնային խնդիրների հաղթահարման հոգեթերապևտիկ միջոց»**: Պարաշարժողական թերապիան սահմանելիս՝ հետազոտողն ընդգծեց պարի՝ միմյանցից բխող հետևյալ հիմնատարրերը՝ ա) անձի ներքին հոգեբանական խնդիրների ախտորոշում և թերապիա, բ) մարդու մարմնի շարժումների և հոգեկան ներաշխարհի փոխկապ, գ) հավաքական մտածողության և միջանձնային հարաբերությունների հաստատում: Նիստի ավարտին կրկին ելույթ ունեցան «կարինցիները». ճարտարագետ Հովհաննես Դաշտոյանը կարդաց իր երկրորդ զեկույցը՝ **«Հայկական էթնիկ պարը՝ որպես թերապիայի միջոց, և դրա կիրառությունը զինված ուժերում»**, ապա մանկավարժներ Հարություն Բաղդասարյանի և Արփենիկ Ղազարյանի համատեղ զեկույցը՝ **«Ազգային պարը՝ որպես արտթերապիայի միջոց»**, ներկայացրեց Հ. Բաղդասարյանը:

Պարագիտական գիտաժողովը հագեցած էր նաև մշակութային աշխույժ ծրագրով: Սեպտեմբերի 28-ին ճաշի ընդմիջումից առաջ ՀԱԻ շենքի ետնաբակում ելույթ ունեցավ Գագիկ Գինոսյանի հիմնադրած «Կարին» երգի-պարի համույթը, իսկ սեպտեմբերի 29-ին գիտաժողովը եզրափակվեց «Մասունք» համույթի վարակիչ ելույթով, որի երաժիշտներն ու մեներգչուհին ազգային երգ-երաժշտության հնչյունների ներքո գիտաժողովի մասնակիցներին հենց նիստերի դահլիճից առաջնորդեցին դեպի բակ, որտեղ հետազոտողներից շատերը հընթացս միացան պարողների

շարքին: Մասնակիցներից շատերը ցանկություն էին հայտնում, որ նման գիտաժողովներն ունենան պարբերականություն և կազմակերպվեն գոնե 2-3 տարին մեկ անգամ, քանի որ տվյալ առարկան տեսականորեն հետազոտողների և դրանով գործնականում զբաղվողների դիտանկյունները փոխադարձաբար օգտակար են միմյանց համար, և այստեղ է, որ ցայտուն երևում է, թե ինչպես հետազոտական աշխատանքը կարող է արդյունավետորեն շաղկապվել կիրառականության հետ:

Հարկ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր օրերում ժողովրդական պարը բուռն զարգացում և տարածում է ստանում անհատների ու համույթների ջանքերով, որոնք դառնում են հեղինակություն և իրենց գիտելիքների ու կարողությունների չափով բանախոսությունների, պարուսուցումների, հրապարակումների և այլ միջոցներով գիտելիքներ են տարածում պարի մասին: Այս տեղեկությունները, սակայն, հաճախ ունենում են տարերային բնույթ և արդյունք են ոչ-խորքային ուսումնասիրության, երբեմն էլ հիմնված են լինում որոշակի զգացմունքային գնահատականների ու ընկալումների վրա: Ակադեմիական պարագիտության պասիվությունը նպաստում է այս տեսակի սիրողական, ուռճացված վերլուծությունների արագ տարածմանը: Մեր ժամանակներում վերարտադրվող, վերիմաստավորում ստացած ժողովրդական պարի վերաբերյալ գիտական աշխատանքները բավական սակավ են, եղածներն էլ արվել են տասնամյակներ առաջ և զարգացում չեն ապրել: Հայաստանում պարագիտական վերջին գիտաժողովի փորձը եղել է 2004-ին՝ մասնակիցների փոքր քանակով: Այնինչ արտերկրում պարագիտությունը մշակութաբանության զարգացող ուղղություններից է, հետևաբար շատ կարևոր է, որ մենք ևս ետ չմնանք միջազգային գիտության միտումներից ու հետազոտական-տեսական նվաճումներից՝ միաժամանակ խորացնելով նաև ժողովրդական պարի տեղական դրսևորումների ուսումնասիրությունը:

Տորք Դալալյան, Հասմիկ Գալստյան, Նվարդ Վարդանյան
Tork Dalalyan, Hasmik Galstyan, Nvard Vardanyan
Торк Далалян, Асмик Галстян, Нвард Варданян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

torq.dalalyan@iae.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-298

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

CONFERENCE IN EPIGRAPHY DEDICATED TO THE MEMORY OF SUREN SAGHUMYAN

КОНФЕРЕНЦИЯ ПО ЭПИГРАФИКЕ, ПОСВЯЩЕННАЯ ПАМЯТИ СУРЕНА САГУМЯНА

Անվանի վիմագրագետ, հուշարձանների պահպանության գործի նվիրյալ Սուրեն Տիգրանի Սաղումյանի ծննդյան 90-ամյակի (1934–2001) առիթով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) Վիմագրության բաժինը 2024 թ. նոյեմբերի 15-ին կազմակերպել էր հոբելյանական գիտաժողով:

Սուրեն Սաղումյանը ծնունդով ՀՀ Տավուշի մարզի Տավուշ (Թովուզ) գյուղից էր: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը պայմանականորեն կարելի է դիտարկել միմյանց հետ սերտորեն կապված երկու բնագավառների համապատկերում. դրանք են՝ վիմագրագիտությունն ու հուշարձանների պահպանությունը: 1959 թ. ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ Ս. Սաղումյանը մինչև իր կյանքի վերջն անմնացորդ կերպով ծառայեց հայրենի հուշարձանների ուսումնասիրության գործին՝ երբեք չանտեսելով այդ նույն հուշարձանների որմերին ամփոփված քարեղեն վավերագրերը: Նրա հետազոտությունների առանցքային դրվագներն էլ դարձան գիտաժողովին ներկայացված զեկուցումների հիմնական ատաղձը:

Գիտաժողովն ընթացավ երկու լիագումար նիստերով: Առաջին նիստը հիմնականում վերաբերում էր Սուրեն Սաղումյանի վիմագրագիտական գործունեությանը, անտիպ և տպագիր աշխատություններին, իսկ երկրորդ մասում ուսումնասիրողները զեկուցումներ ներկայացրին առավելապես իրենց դաշտային-հնագիտական և վիմագրագիտական աշխատանքների արդյունքների շրջանակում՝ ամբողջացնելով գլխավորապես միջնադարագիտությանը նվիրված սաղումյանական հետազոտությունների շարքը:

Բացման խոսքով նախ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. **Պավել Ավետիսյանը**, որը ողջունեց ինստիտուտում թեմատիկ և հոբելյանական գիտաժողովների կազմակերպման ավանդույթը և հերթական պատեհ առիթը՝ անդրադառնալու մեծանուն վիմագրագետի գիտական վաստակին, որը ցայսօր պատշաճ չի լուսաբանվել: Ողջույնի խոսք ասաց նաև ՀԱԻ տնօրեն, պ.գ.թ. **Արսեն Բոբոխյանը**, որի ելույթը ևս նշանավորվեց Սուրեն Սաղումյանի գիտական գործունեությունը վերարժևորելու տեսանկյունից, առավել ևս, որ Ս. Սաղումյանի գրչին պատկանող մի

հսկայական ժառանգություն դեռևս անտիպ է և պահվում է նույն ինստիտուտի արխիվում: Ողջույնի խոսքերի շարքն ամփոփեց ինստիտուտի Վիմագրության բաժնի վարիչ, պ.գ.թ. **Արսեն Հարությունյանը**, որն ըստ արժանվույն կարևորեց հատկապես Սուրեն Սաղումյան վիմագրագետի ուրույն տեղը հայ վիմագրագիտության ասպարեզում:

Առաջին նիստը բացեց ՀԱԻ ավագ գիտաշխատող, վիմագրագետ, պ.գ.թ. **Գագիկ Սարգսյանը՝** «Նորահայտ քարգործ վարպետների անուններ Սուրեն Սաղումյանի արխիվից» խորագրով զեկուցմամբ, որի բուն ատաղձը Ս. Սաղումյանի արխիվում առկա միջնադարյան քարգործ վարպետներին ու ճարտարապետներին նվիրված նորահայտ նյութն էր: Հետազոտողն արխիվային նյութերից առանձնացրել էր խաչքար և տապանաքար կերտող 187, ճարտարապետ-շինարար՝ 43 և 31 վիմագրիչ վարպետների անուններ՝ յուրաքանչյուրի մասին համառոտ տեղեկություններով: Այսօրինակ նյութի հրապարակումը հետագայում կդառնա մեծանուն վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» (Եր., 1963) կոթողային աշխատությանն արժանի երկրորդ հատորը:

Ս. Սաղումյանի տպագիր ժառանգության գլուխգործոցը նրա «Աշտարակ» մենագրությունն է (Եր., 1998), որին էլ նվիրված էր հնագետ, պ.գ.դ. **Գարեգին Թումանյանի** «Սուրեն Սաղումյանի «Աշտարակ»-ը» խորագրով զեկուցումը: Այն իր տեսակով յուրօրինակ գրախոսություն էր հիշեցնում, որտեղ հետազոտողը դրվատանքի է արժանացնում հեղինակի՝ Աշտարակի պատմությունն ուրույն ոճով ներկայացնելու մոտեցումն ու քաղաքի մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ արված վերլուծությունը (բնակավայրեր, կրոն, ճարտարապետություն, արվեստ և այլն): Մենագրությունն այսօր էլ համարվում է չգերազանցված ուսումնասիրություն. այստեղ առաջին անգամ ի մի են բերվել հնամենի քաղաքի պատմական սկզբնաղբյուրները, ի մասնավորի՝ վիմագրերը:

Սուրեն Սաղումյանի վիմագրագիտական վաստակի ընդհանուր նկարագրին էր վերաբերում վիմագրագետ **Արսեն Հարությունյանի** «Սուրեն Սաղումյանի վիմագրագիտական վաստակը» վերտառությամբ զեկուցումը, որտեղ առանձնապես ընդգծվեց վիմագրերի սղագրման եղանակներին՝ համառոտագրությանը, կցագրությանը, փակագրությանը, ծածկագրությանն ու դրանց վերծանության սկզբունքներին նվիրված՝ Սաղումյանի հրատարակած հոդվածաշարի կարևորությունը հայ վիմագրագիտության մեջ (հրատ.՝ 1978/4, 61–78, 1979/9, 61-77, ԼՀԳ 1980/3, 73–91, 1985/1, 65–75):

Գիտաժողովի մյուս զեկուցումներն առնչվում էին բացառապես վիմագրագիտության և հուշարձանների պահպանության խնդիրներին: Բանագետ, բ.գ.թ. **Հասմիկ Գալստյանի** զեկուցումը՝ «Ազատ (Ազատա) գյուղի տեղորոշումն ըստ վիմագրական աղբյուրների» խորագրով, նվիրված էր Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցու շինարարական և նորոգման աշխատանքներին ու նվիրատվություններին վերաբերող զույգ վիմագրերում վկայված Ազատ կամ Ազատա բնակավայրի տեղորոշմանը:

Ջրասույզ հուշարձանների պահպանման և վերականգնման խնդիրների մասին էր Շիրակի նախկին փոխմարզպետ, սուզորդ **Աննա Մարտիկյանի՝** «Ջրասույզ հուշարձանների պահպանության և վերականգնման միջազգային փորձն ու դրա

կիրառման անհրաժեշտությունը Հայաստանում» խորագրով զեկուցումը՝ գրված հետազոտողի ուսումնասիրությունների և միջազգային փորձի հիման վրա: Մշակութային ժառանգության տասնյակ ջրասույզ հուշարձաններ են պահպանվել ինչպես Վանա և Սևանա լճերում, այնպես էլ Հայաստանից դուրս, օրինակ՝ Կարիբյան ծովում 2007 թ. հայտնաբերված միջնադարյան նավը, որն Ինդիանայի համալսարանի մասնագետների գնահատմամբ՝ հայ վաճառականներին պատկանող Քեդեխ Մերչանտն է (Quedagh Merchant), որը գրավել էր Ուիլյամ Քիդը:

Հուշարձանների եռաչափ վերականգնման ժամանակակից մեթոդներին էր նվիրված ճարտարապետ **Լիլիթ Տեր-Մինասյանի՝** «Եռաչափ վերականգնումները՝ որպես հուշարձանների պահպանության վիրտուալ գործիք» խորագրով զեկուցումը, որը նորարարական է իր տեսակով: Ագարակի վաղմիջնադարյան համալիրի օրինակով զեկուցողը ցույց տվեց հուշարձանի գոյության ընթացքում կրած փոփոխությունները միջնադարի տարբեր շրջափուլերում՝ եռաչափ մոդելի օգնությամբ վերականգնելով հուշարձանի նախնական տեսքը: Միևնույն գործիքակազմը կիրառելի է նաև բազմաշերտ հուշարձանների և դամբարանների դեպքում, անգամ թանգարաններում և համացանցում՝ վիրտուալ, թվային մոդելների տեսքով:

Գանձասարի վանքի Կաթողիկե եկեղեցու շինարարական վիմագրում վկայված անձանց և նույն եկեղեցու գմբեթի պատկերաքանդակների զուգադրման ուշագրավ փորձ է արել հնագետ, պ.գ.դ., պրոֆ. **Համլետ Պետրոսյանը**, որը ներկայացրեց «Գիրը և պատկերը. Գանձասարի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կառուցման արձանագրության և գմբեթի քանդակային հորինվածքների համադիր քննության փորձ» զեկուցումը: Քանիցս հրապարակված շինարարական վիմագիրը (1216–1238) դիտարկվեց բոլորովին այլ տեսանկյունից՝ հնարավորություն տալով պարզելու, որ գմբեթի քանդակաշարը ներկայացնում է Խաչենի իշխանական տան քրիստոնեական պատկերագրությունը՝ գրեթե այնպես, ինչպես այն համառոտված է եկեղեցու շինարարական վիմագրում, որտեղ կարելի է փաստագրել Հասանին ու նրա ծնողներին՝ Վախթանգին ու Խորիշահին, ինչպես նաև կողակից Մամքանին:

Նախամաշտոցյան գրավոր մշակույթի ամենահարուստ՝ սեպագիր ժառանգության մի ինքնատիպ օրինակի վերականգնմանն էր նվիրված անկախ հետազոտող, բ.գ.թ. **Դավիթ Վարդազարյանի** զեկուցումը՝ «Դարանիի սեպագիր արձանագրության վերծանման մի քանի փորձերի համեմատական քննություն և վերականգնման հեռանկարներ» խորագրով: Զեկուցման ատաղձը Դարանիի (Էլար, ներկայիս՝ Աբովյան)՝ Արգիշտի Ա-ի անվանակիր սեպագիրն է, որն իր հայտնաբերումից ի վեր (1862 թ.) տարբեր կերպ է վերծանվել: Հետազոտողը կարևորում է այսօր ցավալիորեն կորսված արձանագրության «մասունքների» համալիր քննությունը, որին կարող են նպաստել պահպանված լուսանկարն ու գրչանկարը (հեղ.՝ Մեսրոպ արք. Սմբատյանց) և այլ արխիվային նյութեր:

Միջնադարյան Հայաստանի երբեմնի նշանավոր հոգևոր և ուսումնագիտական կենտրոն Աներմոնի կամ Հերմոնի վանքի հնագիտական պեղումների արդյունքները ներկայացրեց Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագետ **Մերի Սաֆարյանը** «Հերմոնի վանքի հետախուզական պեղումների արդյունքներն ու նորահայտ վիմագրերը» զեկուցման մեջ: Վանքը երբևէ հնագիտորեն չի ուսումնասիրվել, ուստի 2024 թ. հուլիսի պեղումները, որոնք իրականացվել

են վանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան կողմում, ճարտարապետական նոր մանրամասների, ամբողջական ու բեկորային խաչքարերի, նախկինում հրատարակված և նորահայտ արձանագրությունների առիթ են դարձել:

Վիմագրագետ **Սաթենիկ Խուրշուդյանը** Գորիսի շրջանում իր կատարած վիմագրագիտական աշխատանքների արդյունքները ի մի բերեց «Վիմագրագիտական ուսումնասիրություններ Գորիսի շրջանի Վաղատուր, Քարաշեն և Քարահունջ գյուղերում» զեկուցման մեջ: Ներկայում սահմանամերձ դարձած բնակավայրերի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունն ու հանրայնացումն առավել քան երբրևէ արդիական ու հրատապ է:

Հայ տեղագիրների գիտական վաստակի լուսաբանումը ևս հայագիտության արդի խնդիրներից է, որի շրջանակում վիմագրագետ, պ.գ.թ. **Սուսաննա Ադամյանը** ներկայացրեց «Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան (1844–1906). կյանքն ու գործունեությունը» խորագրով իր հետազոտությունը: Արիստակես սրբազանի գրավոր ժառանգության անքակտելի մասն են կազմում տպագիր և անտիպ վիմագրերը. անտիպները պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Գիտաժողովն ամփոփեց ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոս **Մարիամ Հեգնյանը** «Վանդալիզմի հոգեբանական հիմքերն ու առանձնահատկությունները» վերտառությամբ զեկուցման մեջ: Հեղինակն անդրադարձել է պատմամշակութային ժառանգության պահպանության հիմնախնդիրներին և այդ համատեքստում դիտարկել վանդալիզմի հոգեբանական դրսևորումները հասարակության տարբեր տարիքային փուլերում:

Սուրեն Սաղումյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովն իրականում արձանագրումն էր մեր հուշարձանների պահպանության անհրաժեշտության և դրանց քարեղեն «անձնագրերի», որոնց և իր ողջ կյանքն է նվիրել անխոնջ ու տքնաջան հետազոտողը:

Արսեն Հարությունյան
Arsen Harutyunyan
Арсен Арутюнян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

arsen.harutiunyan@iae.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-306

ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ (ԼԵՈ)
ARAKEL BABAKHANYAN (LEO)
АРАКЕЛ БАБАХАНЯН (ЛЕО)



Գրող, գրական քննադատ, հրապարակախոս, հայ պատմագրության և մշակույթի մեծ երախտավոր, հասարակական գործիչ Լեոն՝ Առաքել Գրիգորի Բաբախանյանը, XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ իրականության կարկառուն դեմքերից է: Նրա կյանքի ու հայագիտական վաստակաշատ գործունեության մասին գրվել են հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ: Ստորև ծննդյան 165-ամյակի առթիվ հակիրճ ներկայացնենք իրադարձություններով լեցուն նրա կենսագործունեությունը:

Ծնվել է Արցախի կենտրոն Շուշի քաղաքում 1860 թ. ապրիլի 14-ին (ապրիլի 19-ին): Բազմանդամ ընտանիքի նյութական ծանր վիճակը նրան հնարավորություն չի տվել ստանալ հիմնավոր կրթություն: Թեմական և քաղաքային դպրոցներն ավարտելուց հետո Առաքելը զբաղվում է ինքնազարգացմամբ, հետևողական ու համառ աշխատանքի շնորհիվ ձեռք բերում խոր գիտելիքներ: Այս առումով Ավետիք Իսահակյանը նկատել է. «Անսպառ եռանդի տեր և չափազանց աշխատունակ՝ նվիրվեց ինքնակրթության և իրենից շինեց-կերտեց գրական այն ուժը, որ երկար տարիներ եղավ տիրապետող դեմքերից մեկը կովկասահայ հասարակության մտավոր կյանքի մեջ» (Իսահակյան Ավ. 2020, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով: Հատոր տասնմեկերորդ: Հուշեր, հոդվածներ գրականության և արվեստի մասին, դասախոսություններ, ելույթներ, Երևան, 19):

1879 թ. Առաքելը գնում է Բաքու՝ աշխատանք գտնելու: «Այնտեղ երկար ժամանակ պարապ է մնում և վատ ապրուստի պատճառով թոքերի բորբոքում ստանում: Բաքվում անցկացրած օրերը Առաքելը նկարագրել է իր «Պանդուխտ» վերնագրով վիպակի մեջ, – գրում է կենսագիր Լ. Բաբայանը: –...«Պանդուխտ» վիպակի տակ Առաքելը առաջին անգամ ստորագրում է «Լեո» կեղծանունը: Հայտնի է, որ Առաքելն այդ կեղծանունը վերցրել է գերմանացի գրող Ֆրիդրիխ Շպիլհագենի (1829–1911) "In Reihund Glied" (1866, ռուսերեն հրատարակվել է «Один в поле не воин» վերնագրով) վեպի գլխավոր հերոս Լեոյից, որը, նպատակ ունենալով վերափոխել հասարակական կյանքն ու հասնել ազատության, արդարության և հավասարության, դրանք իրագործելու համար մտերմանում է թագավորի ու նրա արքունիքի հետ և խճճվելով սեփական ցանցում՝ ի վերջո սպանվում անհեթեթ մենամարտում՝ դառնալով պալատական խարդավանքի զոհ (տե՛ս Իսահակյան Ավ. 2020, 520), որը նրա ամբողջ գրական գործունեության ժամանակ... մնում է իբրև գլխավոր կեղծանուն»

(Բաբայեան Լ. 1908, Լէօ (Առաքել Բաբախանյան): Կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յօբելեանի առթիւ, Թիֆլիզ, էջ 9):

Բաքվում աշխատանք չգտնելով՝ Լեոն 1879 թ. վերադառնում է Շուշի և գրագրի պաշտոն վարում քաղաքային նոտարի մոտ, 1881–1893 թվականներին էլ աշխատում է նախ տեղի հեռագրատանը որպես հեռագրիչ, այնուհետև՝ Մահտեսի Հակոբյանցների տպարանում՝ որպես սրբագրիչ, ավելի ուշ գործուն մասնակցություն ունենում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշի մասնաճյուղի աշխատանքներին, մի կարճ ժամանակ լինում է դրա գրադարան-ընթերցարանի տնօրենը, ապա՝ Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձության անդամ (տե՛ս Պետոյան Ս. 2021, Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը (1877–1905), Բանբեր հայագիտություն, N 2, 111, Պետոյան Ս. 2019, Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 77, Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիս, 449–450):

1893 թ. Լեոն փոխադրվում է Բաքու, որտեղ աշխատում է «Արոր» տպարանում՝ որպես կառավարիչ: 1895 թ. նա մշտական աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթում (ի դեպ, թերթին սկսել է թղթակցել 1882 թվականից) և մինչև 1906 թ. լինում խմբագրության քարտուղարն ու առաքիչը՝ ծավալելով գրական բազմաբեղուն գործունեություն:

1906–1907 թթ. Լեոն հայոց պատմություն և գրականություն է դասավանդում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, միաժամանակ ճեմարանի ու վանքի գրադարաններում ուսումնասիրում է արխիվային հարուստ նյութեր: Ճեմարանում «անաստվածություն» մտցնելու մեղադրանքով՝ ազատվում է աշխատանքից և տեղափոխվում Թիֆլիս: Հայտնի է, որ Լեոն առողջական լուրջ խնդիրներ է ունեցել: 1906 թ. ամռանը բուժվում է Էսենտուկիում: 1908 թ. մայիսին Թիֆլիսում նշվում է նրա գրական գործունեության 25-ամյա (30-ամյա) հոբելյանը: «Իմ հիվանդությունը սաստկացել էր մինչ այն աստիճան, որ վտանգ էր սպառնում կյանքիս, – հուշերում գրում է Լեոն: – Հոբելյանական տոնակատարության միջոցով հայ հասարակությունն ինձ միջոց էր տալիս ավելի լուրջ ուշադրություն դարձնելու բժշկությանս վրա և նույն տարվա ամառը… ուղևորվեցի Եվրոպա» (Լեո 1925, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ. Հայոց հարց. – Հայ հեղափոխական դաշնակցություն. – Համաշխարհային պատրազմ, Հեղափոխություն, Թիֆլիս, 215): Լինում է Վիեննայում, Վենետիկում, Ս. Ղազարում, Փարիզում ու Ժնևում: Ժնևում դոկտոր Ռուի հիվանդանոցում ենթարկվում է ծանր, բայց բարեհաջող վիրահատության: Դեկտեմբերին վերադառնում է Թիֆլիս:

1909 թ. աշնան վերջերին՝ «Ավ. Իսահակյանի նշանադրության գիշերը», տեղի տալով համառ խնդրանքների՝ հանձն է առնում «Հորիզոն» թերթի խմբագրի պաշտոնը: Իր մտերիմների՝ Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի հետ որոշում են թերթը դարձնել հայ գրողների օրգան: Դեկտեմբերի սկզբին լույս է տեսնում «Հորիզոն»-ի համարը՝ Լեոյի խմբագրականով, որում հայտարարվում էր, որ թերթը ոչ մի կուսակցության չի պատկանում:

1914 թ. սկզբին՝ շուրջ 5 ամիս, Լեոն ապրում է Երևանում, ավարտում է տեղի թեմական դպրոցի մասին շարադրած պատմությունը, ապա վերադառնում Թիֆլիս, աշխատանքը հանձնում տպարան և ընտանիքով հանգստի մեկնում Դիլիջան:

1918 թ. փետրվարին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը Լեոյին նշանակում է Անդրկովկասյան կոմիսարիատի ու Թուրքիայի միջև Տրապիզոնում կայանալիք բանակցություններում հայ պատվիրակների խորհրդական՝ Հայկական հարցի վերաբերյալ տեղեկություններ տալու համար: Իր հուշերում նա հետաքրքիր դիտարկումներ ունի բանակցությունների ընթացքի, պատվիրակությունների անդամների հետ հանդիպումների մասին: Հատկապես հիշատակելի են «Մուսավաթի» հիմնադիր ու հայտնի պանթյուրքիստ Ռասուլ Զադեի և Խալիլ-բեկ Խասմամեդովի հետ ունեցած զրույցները պանթյուրքիզմի նպատակների ու հայ-թուրքական հարաբերությունների մասին (Լեո 1925, 375–376):

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Թիֆլիսում կազմակերպվում են մի շարք հայրենակցական միություններ, այդ թվում՝ 1918 թ. սկզբին Ղարաբաղի և Զանգեզուրի: Վերջինիս նախագահ է ընտրվում Լեոն. լայնածավալ աշխատանք է տարվում Ղարաբաղի հարցը «ժողովուրդների կամքով և ցանկությամբ» լուծելու համար (Լեո 1925, 423, 425): Հայտնի իրողություն է, որ Լեոն մշտապես գտնվել է նյութական ծանր վիճակում: 1920 թ. սկզբին նրա դրությունը «հուսահատեցնելու չափ վատացավ»: Այդ շրջանում Դավիթ Անանունին գրած նամակներից մեկում կարդում ենք. «Ծախելով ինչ որ կարելի էր ծախել՝ մի կտոր հացի դառն ու կրակ հարցից գոնե մասամբ թեթևանալու համար… աշխատում եմ գրաստի չափ և դարձյալ քաղց հագեցնել չեմ կարողանում» (Գրիգորյան Հ., Մխոյան Հ. 2020, Դավիթ Անանունի և Լեոյի նամակագրությունից, Պատմություն և մշակույթ, N 1, 271–272): Տեսնելով, որ «առանց որևէ կուսակցության անդամ լինելու չէ կարելի, ինչպես ասում են, երթ ցույց տալ որևէ տեղ»՝ դառնում է Հայ ժողովրդական կուսակցության անդամ (նկատենք, որ ընդունված է, թե Լեոն չի եղել որևէ կուսակցության անդամ) և ստանձնում «Մշակ» լրագրի խմբագրի պաշտոնը (Լեո 1925, 435):

Ի դեպ, հաշվի առնելով Լեոյի հիվանդ վիճակն ու սոցիալական ծանր դրությունը՝ Հայաստանի հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը դիմում է Նախարարների խորհրդին՝ 1919 թ. օգոստոսից նրան պետական թոշակ նշանակելու համար, իսկ կառավարությունը գնում է նրա «Հայոց պատմություն» աշխատության առաջին հատորի 500 օրինակ, որը պետք է բաժանվեր դպրոցներին (Վարդանյան Գ. 2003, Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1920 թթ.), Երևան, 133):

1919 թ. ապրիլի 19-ին լրանում է Լեոյի ծննդյան 60-ամյակը: Այդ առթիվ Դ. Անանունը հարգանքի խոսք է գրել՝ «Վարից վեր» վերնագրով, որում հակիրճ, սեղմ տողերով, բայց բովանդակալից բնութագրում է վաստակաշատ հայագետի անձն ու գործը: Մեջբերենք գիտական շրջանառության մեջ դրվող այդ հոդվածն ամբողջությամբ.

«Ապրիլի 19-ին լրացաւ Լէօի ծննդեան 60-ամեակը:

Այդ անունը պայծառ մղումներ է հաղորդում բոլոր նրանց, որոնք հաւատում են աշխատանքի ստեղծագործող ու յաղթանակող ոյժին և միաժամանակ անվերապահօրէն սիրում են հայ լեզուն ու գիրքը:

Աշխատանքը ընտրելով իրան նեցուկ և առաջնորդ՝ Լէօն վարից բարձրացաւ վեր: Լինելով հասարակ ծնողների զաւակ, ստանալով անբաւարար կրթութիւն՝ նա բնատուր ձիրքի և աշխատանքի շնորհիւ նաճեց գրական մեծութեան համբաւ, հաւասարապէս տաղանդ ցուցահանելով վիպասանութեան, հրապարակախօսութեան

ու պատմագրութեան մէջ: Հայ գրականութեան ասպարէզում նա մի գլուխ է, որի առջև չի կարելի չխոնարհուել և որին անգիտանալ՝ կնշանակէ բաց-ճակատ թշնամի լինել այդ գրականութեան: Լէօն բեղուն գրիչ է, զարմանալիօրէն զբաղեցնող և բազմերանգ: Նա զինաբաղխութիւնից խուսափող չէ և շնորհիւ իր մարտական խառնուածքի վաստակել է բազմաթիւ ընթերցող-մտերիմներ, բայց և ընթերցող-թշնամիներ: Պայքարի մէջ չամիչ չեն բաժանում: Պայքարող Լէօն յաճախ մեղանչել է հակառակորդների արժանիքների հանդէպ և փոխադարձաբար հարուածներ ստացել: Այսօր, նրա 60-ամեակին իսկ, չեն լռել դեռևս հին օրերին յարուցուած կիրքն ու աղմուկը: Սակայն Լէօն կարող է չթեքել իր գլուխը քինախնդիր լեզուների առաջ: Թող նա յիշէ այն երևոյթը, որ միայն պտղատու ծառի վրայ են նետում քար ու փայտ:

Լէօի գործերի վրայ մենք կանգ չենք առնում: Դա դժւարին աշխատանք է և այս էջերը նեղ են դրա համար: Կամենում ենք միայն նկատել, որ մեր պատմաբանը իր փոքր ու ստւար գործերի մէջ ձեռքին պահել է մի ջահ - *ինքնաճանաչութեան ջահը:* Մենք, որ զուրկ էինք պետական-քաղաքական անկախութեան բարեմասնութիւնից՝ հոգևոր գանձերով պիտի ապահովէինք մեր նկարագրի ինքնութիւնը: Ինքնաճանաչ լինել – ասել է ոտնահարել դիմազրկութիւնը և առնականօրէն կարգ ու պատիւ պահանջել ազգերի շարքում: Ինքնաճանաչութեան ջահակիր՝ Լէօն այն մարտիկներից մէկն է, որ նւաճել է յարգանք ու հայրենիք հայ ժողովրդի համար:

Ուրախ ծերութիւն ենք մաղթում Լէօին և նոր եռանդ նրա բեղուն գրչին:

Ողջ լե՛ր, սիրելի պատմաբան» (տե՛ս Հայաստանի կոոպերացիա 1920, Երևան, N 8, ապրիլի 30, 261–262, Մշակ (Թիֆլիս), 09.V.1920):

Հավելենք նաև, որ Հայաստանի գրական ընկերությունն էլ մեծ շուքով նշել է այդ հոբելյանը (տե՛ս Հառաջ, Երևան, 22.IV.1920):

Վրաստանի խորհրդայնացումից հետո Լեոն ակտիվ մասնակցություն է ունենում Հովի. Թումանյանի նախագահությամբ Թիֆլիսում վերակենդանացող «Հայ գրողների ընկերության», ապա՝ «Հայարտան» աշխատանքներին:

Նշանավոր հայագետը կյանքի ընթացքում՝ չնայած նյութական դժվարություններին, ժողովել է հայերեն և օտար լեզուներով մեծարժեք գրականություն, և հարկ է անդրադառնալ այդ հավաքածոյի ճակատագրին:

1921 թ. հոկտեմբերի 1-ին ՀՍԽՀ Լուսժողկոմատի Հայկոոպի՝ Թիֆլիսի բաժանմունքի միջոցով Երևանում գործող Հանրային գրադարանի համար ուղարկվել են «Լեոյից գնված գրքերը՝ 246–258» միավոր: Նաև՝ «1933 թ.-ի օգոստոսի 1-ին Հանրային գրադարանի դիրեկտոր Ա. Մարտիկյանը ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից գործուղվում է Թիֆլիս և տեղում կազմակերպում Լեոյի գրադարանի ցուցակագրումը (աշխատանքները կատարում են Լեոյի տղան՝ Գրիշա Բաբախանյանը և գրադարանավարուհի Մակեդոնսկայան): Գրադարանի գրքերը, ըստ լեզուների, եղել են՝ 2422 միավոր հայերեն, 7422 միավոր ռուսերեն, 525 միավոր ֆրանսերեն և եվրոպական այլ լեզուներով, 348 միավոր պարբերականներ (ամսագրեր՝ 42 համալիր, մյուսները՝ թերթեր):

Լեոյի գրադարանը Երևան է փոխադրվել 1940 թ. սեպտեմբերին» (Աղայան Թ., Եգանյան Ժ. 1979, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի գրքային ունեցվածքի զարգացման հեռանկարները, Երևան, 21–22):

Սովետական Հայաստանի կառավարության հրավերով Լեոն 1924 թ. մշտական բնակություն է հաստատում Երևանում և մինչև կյանքի վերջը հայագիտական տարբեր առարկաներ դասավանդում Պետական համալսարանում: 1925 թվականից պրոֆեսոր էր, նաև՝ ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ:

Լեոն մահացել է Երևանում 1932 թ. նոյեմբերի 14-ին:

Չծավալվելով նկատենք՝ ավելի քան կես դար տաղանդավոր գիտնականը աշխատակցել է հայ պարբերական մամուլին, տպագրել է մի քանի հարյուր քննադատական հոդվածներ, վիպակներ, գրականագիտական ու պատմագիտական կոթողային աշխատություններ: Իր կյանքի առաջին շրջանում՝ 1880–1900 թթ., հանդես է եկել իբրև հրապարակախոս, գրող ու գրականագետ, իսկ 1900–1930 թթ. զբաղվել է հիմնականում պատմության հարցերով: Պատահական չէ, որ ժամանակակիցները նրա մասին ասում էին. «Լեոն ոչ թե գրող է, այլ գրական հիմնարկություն» (Լեո 1959, Գեղարվեստական երկեր, Երևան, 3: Ի դեպ, Լեոյի երկերի ժողովածուն սկզբնապես նախատեսված է եղել հրատարակել 10 հատորով, սակայն տպագրվել է 9 հատոր՝ 1966–1989 թվականներին):

Ապրելով պատմական տարբեր դարաշրջաններում՝ Լեոն ունեցել է բարդ ու հակասական աշխարհայացք, որը դրսևորվել է հատկապես նրա գործունեության վերջին փուլում (Լեոյի կյանքի ու ստեղծագործական վիթխարի ժառանգության մասին մանրամասն տե՛ս Օհանյան Ա.Կ. 1969, Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, Հայ նոր գրականության պատմություն 1972, հ. 4, Երևան, 345–373, Սարուխանյան Ն.Բ. 1998, Լեոն և Հայկական հարցը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 43–54, Սարուխանյան Ն.Բ. 2010, Հայ պատմագիտության ուրույն դեմքը (Լեոյի ծննդյան 150-ամյակի առթիվ), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, 377–391, Խառատյան Ա. 2011, Լեոն՝ հայ մամուլի պատմաբան, Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, N 12, 162–178, Վարդանյան Վ.Մ. 2012, Լեոյի պատմահայեցողության շուրջ (հին և միջնադարյան ժամանակաշրջանների), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2–3, 3–13, Հայոց պատմություն 2015, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գք. II (1901–1918 թթ., Հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX և XX դ. սկզբին), Երևան, 175–176, Սարուխանյան Ն. 2017, Լեոյի գրական ժառանգությունը (1880–1890–ական թթ.), Բանբեր հայագիտության, N 3, 111–125 և այլն):

Անուշավան Զաքարյան
Anushavan Zakaryan
Анушаван Закарян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

anushavan.zakaryan@arts.sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-310

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
ROBERT SARINYAN
РОБЕРТ САРИНЯН

Անվանի տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ներսեսի Սարինյանը ծնվել է 1940 թ. հունվարի 20-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սեյտիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղում: Տեղի թերի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1957-ին: 1963-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Խորհրդային բանակում ծառայելուց հետո 1965–68-ին աշխատել է ԽՍՀՄ շինարարական բանկի հայկական գրասենյակում՝ որպես ավագ տնտեսագետ: 1968-ից աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) քաղաքատնտեսության (այժմ՝ տնտեսագիտության) ամբիոնում՝ որպես կաբինետի վարիչ, ասիստենտ, ավագ դասախոս, իսկ 1979-2014 թթ՝ նույն ամբիոնում՝ որպես ամբիոնի վարիչ (2007-ից՝ համատեղությամբ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ բաժնի վարիչ), 2015-ից ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող: 1976-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ավետիք Արասխանյանի տնտեսագիտական հայացքները» թեմայով, իսկ 1985-ին՝ Մոսկվայի Գ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում դոկտորական ատենախոսություն՝ «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները XIX դարի 70–90-ական թվականներին» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսոր է 1987-ից:

Պրոֆ. Ռ. Սարինյանը երեք տասնյակից ավելի մենագրությունների, երեք ուսումնական ձեռնարկների և հարյուր քառասունից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Նրա հետազոտական ոլորտները վերաբերում են հայ տնտեսագիտական մտքի պատմության, տնտեսագիտական ուսմունքների պատմության, տնտեսագիտության տեսության և ազգային տնտեսության հիմնահարցերին: Հայալեզու և օտարալեզու հրապարակումներով հանդես է եկել ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային բազմաթիվ գիտաժողովներում:

Ռ. Սարինյանը XX դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի պատմության վերաբերյալ՝ «XX դարի սկզբի հայ տնտեսագիտական մտքի ուղեգծերում», «Հայ միտքը և տնտեսական զարգացումը», «Ալեքսեյ Ջիվելեգովի տնտեսագիտությունը», «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» (համահեղինակ՝ Լ. Հարությունյան), «Բախշի Իշխանյան (տնտեսագիտական հայացքները)» (համահեղինակ՝ Ա. Թադևոսյան) ուսումնասիրություններում, օգտագործելով փաստական նոր տվյալներ և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով նոր նյութեր,

անդրադարձ է կատարում տնտեսական ճգնաժամերի տեսության ու պատմության մեծագույն տնտեսագետներից մեկի՝ Մենտոր Բունիաթյանի հայեցությանը, Վահան Տոտոմյանցի՝ կոոպերացիայի վերաբերյալ աշխատություններին, Ալեքսեյ Ջիվելեգովի՝ Եվրոպայի տնտեսական էվոլյուցիային և մարդու նոր պահվածքին առնչվող դիտարկումներին, Դավիթ Անանունի՝ ռուսահայերի հասարակական զարգացման հետագծի և հավաքական հայության գաղափարներին, հայ «ազգային ոգու հայտնությունն» ակնկալող սերնդի՝ Բախշի Իշխանյանի սոցիոլոգիական մեթոդի սկզբունքներով հասարակության էվոլյուցիայի, Ռուսաստանի ու Կովկասի առանձնահատկությունների մասին Միքայել Վարանդյանի քննադատական մտորումներին, Սիմոն Զավարյանի ուսումնասիրություններին և այլն, որոնք ընդլայնեցին հայ տնտեսագիտական արծարծումների տեսական ու պատմական ոլորտները, տնտեսական կյանքի ճանաչողական սահմանների վերաբերյալ իմացությունն ու պատկերացումները:

XX դարի 90-ական թվականները շրջադարձային էին հանրապետության համար: Հայաստանը դիմորոշվեց դեպի շուկայական տնտեսաձևը, որին պիտի ուղեկցեր որոնումների ու շեղումների տրամաբանությունը: Ինչպիսին է արժեքների նոր համակարգի լինելությունը, ինչ լուծումներ է առաջադրում հայ տնտեսագիտական միտքը: Այդ ժամանակահատվածը Ռ. Սարինյանը բնութագրում է որպես արևմտյան տնտեսական գիտության սկզբունքների ու հասկացությունների յուրացման լուսավորչական տասնամյակ: Կատարվում էր տնտեսագիտական մտքի սահմանազատում: Վերջին տասնամյակների ընթացքում պրոֆեսորը պարբերաբար անդրադարձել է արդի հայ տնտեսագիտական մտքի կացությանը, փորձել «տեսություն» կոչված հրապարակումների ձևով ուրվագծել կատարվող տեղաշարժերը: Բնականաբար, ժամանակի հոսքի մեջ փոփոխվել են նրանում կատարվող արծարծումների շրջանակները: Հազիվ թե գիտության որևէ այլ բնագավառում կարելի է այդքան հրապարակումներ արձանագրել, որքան տնտեսագիտության, որի մատենագիտական ցանկը կարող է հասնել հազարավոր անունների: Դրանք մենագրական ու կոլեկտիվ ուսումնասիրություններ են, գիտական ժողովածուներում, ամսագրերում, պարբերական մամուլի այլևայլ հրապարակումների էջերում տպագրված հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, որոնք արժեքավոր են երևույթների ճանաչողական ընդհանուր հոսքի մեջ: Ռ. Սարինյանի «Ազգային տնտեսությունը և տնտեսագիտական միտքը», «Արդի հայ տնտեսագիտության տեսություն» (երեք գիրք), «Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության» (երկհատորյակ), «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006–2016» (Վ. Հարությունյան, Ռ. Սարինյան) աշխատություններում, լինելով նորույթ հայ տնտեսագիտության մեջ, նյութը ենթարկվել է որոշակի համակարգման և պատկերացում է տալիս նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի՝ այդ ոլորտի դիտակետերի, նոր որոնումների, սահմանազատումների ու շարժման ընթացքի վերաբերյալ՝ գրված ոչ թե սոսկ գրանցումների սկզբունքով, այլ քննական հայացքով: Նրա աշխատություններում երևույթները հաճախ հայտնվում են նոր կապերի մեջ, նոր տարածքներում տնտեսագիտական միտքը հաղորդակից դարձնում գիտության այլ ոլորտներին: Այս իմաստով, երևույթների վերլուծության ներհյուսումների մեջ նա դրսևորել է իր ուրույն ոճը:

Ռ. Սարինյանը նաև «Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր» մենագրության հեղինակներից է. այդտեղ ներկայացնում է նոր շրջանի հայ կառա-

վարչական մտքին առնչվող բաժինը: Նա կարևոր ներդրում ունի տնտեսագիտության և տնտեսագիտական ուսմունքների պատմության ուսումնական ու գիտական գրականության ստեղծման բնագավառում: Ուշագրավ է «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան» (հեղինակներ՝ Ռ. Սարինյան, Վ. Հարությունյան) աշխատությունը: Հայտնի է, որ հայ տնտեսագիտական միտքը ստեղծագործել է ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս՝ տարբեր երկրներում: Աշխատությունը, դրանում ընդգրկված տնտեսագետների գիտակենսագրական ուրվագծերի ձևով, որպես առաջին փորձ, ամբողջական կերպով ընդգրկում է հայ տնտեսագիտական մտքի թեմատիկ քարտեզը, տնտեսական երևույթների պարագծերը՝ ճանաչողական մոտեցումներով ու չափումներով և արտահայտում է շարժման ընթացքը ինչպես որ կա՝ սկսած XIX դարի կեսերից:

Պրոֆեսոր Սարինյանն ունի գիտամանկավարժական բազում տարիների փորձ: Աչքի է ընկնում որպես բարեխիղճ, պատասխանատու աշխատող: Տարիներ շարունակ հանդիսանում է «ՀՀ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածուի գլխավոր խմբագիրը: Մեծ են նրա դերն ու վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Վայելում է կոլեկտիվի սերն ու հարգանքը:

Ռոբերտ Ներսեսի Սարինյանը պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով (1983), «Մովսես Խորենացի» մեդալով (2003), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) ոսկե հուշամեդալով (2008), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հուշամեդալով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80–ամյակին (2023):

Սիրով շնորհավորում ենք ականավոր գիտնականին՝ ծննդյան հոբելյանի առիթով: Ցանկանում ենք երկար տարիների անհոգ կյանք, քաջառողջություն, անսպառ եռանդ, գիտական նորանոր ձեռքբերումներ:

Յուրի Սուվարյան, Մերի Մանուչարյան
Yuri Suvaryan, Mary Manucharyan
Юрий Суварян, Мэри Манучарян

Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Economics after M. Kotanyan, National Academy of Sciences, Armenia
Институт экономики имени М. Котаняна, Национальная академия наук, Армения

humdep@sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-315

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ
ANAHIT BEKARYAN
АНАИТ БЕКАРЯН

Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Արայի Բեքարյանի ծննդյան հոբելյանական տարեդարձը:

Անահիտ Բեքարյանը ծնվել է 1950 թ. հունվարի 28-ին Երևանում, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Արա Բեքարյանի ընտանիքում:

Արա Բեքարյանը (1913–1986) ծնվել է Աֆիոն-Կարահիսարում (Թուրքիա), մանկավարժների ընտանիքում: 1925-ին ծնողների հետ եկել է Հայաստան, 1932-ին՝ ավարտել Երևանի գեղարվեստական ուսումնարանը, իսկ 1939-ին՝ Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան: Այնուհետև, 1939–1945 թվականներին, մասնակցել է Խորհրդա-ֆինական և Հայրենական մեծ պատերազմներին: 1945-ից մինչև իր կյանքի վերջը տաղանդավոր գեղանկարիչը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Երևանի պետական գեղարվեստաթատերական ինստիտուտում: Արա Բեքարյանի կտավները ցուցադրվել են հանրապետական, համամիութենական և միջազգային բազմաթիվ ցուցահանդեսներում:

Աշխարհի տարբեր հայաշատ վայրերում հետաքրքիր, հայրենասիրական և ազգանպաստ տարաբնույթ գործունեություն է ծավալել Անահիտ Բեքարյանի պապը՝ մանկավարժ, բանաստեղծ և արձակագիր Վաղինակ Բեքարյանը (1891–1977): Ավարտելով Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը՝ 1908-ին նա տեղափոխվել է Աֆիոն-Կարահիսար, որտեղ դասավանդել է ազգային կենտրոնական միջնակարգ դպրոցում: 1915-ին Վ. Բեքարյանին հրավիրում են Երուսաղեմ՝ դասավանդելու Ժառանգավորաց վարժարանում: Եղեռնից հետո Վ. Բեքարյանը մեկնում է Պորտ-Սաիդ (Եգիպտոս)՝ փախստական մուսալեռցիներին հայերեն սովորեցնելու, իսկ 1916-ին Եթովպիայի հայկական գաղթօջախի հրավերով գնում է Ադիս-Աբեբա և այնտեղ հիմնում հայկական դպրոց: 1922-ին ընտանիքով տեղափոխվում են Փարիզ (այստեղ Վ. Բեքարյանը սովորել է Սորբոնի համալսարանում, հետաքրքրվել ճշգրիտ գիտություններով), իսկ 1925-ին՝ Խորհրդային Հայաստան, որտեղ Վ. Բեքարյանն ավարտում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը՝ ուսմանը զուգընթաց դասավանդելով (մաթեմատիկա և ֆիզիկա) Էջմիածնի, Երևանի դպրոցներում և Երևանի պետական մանկավարժական ինստիտուտում:

Բնական է և օրինաչափ, որ նման ընտանիքում մեծացած ու դաստիարակված Անահիտը պետք է հետաքրքրվեր և զբաղվեր գիտությամբ ու արվեստով:

1968-ին Ա. Բեքարյանն ավարտել է Ն.Կ. Կրուպսկայայի անվան N 19 միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1973-ին՝ «ռոմանո-գերմանական լեզուներ և գրականություն» մասնագիտությամբ և ստացել «բանասերի, անգլերեն լեզվի ուսուցչի» որակավորում: Դեռևս ուսանողական տարիներին, լսելով արտասահմանյան գրականության լավագույն մասնագետ Լևոն Ներսիսյանի բովանդակալից և անզուգական դասախոսությունները, Ա. Բեքարյանը գերվում է Բայրոնի քնարերգությամբ, որոշում դիպլոմային աշխատանքի համար ընտրել անմիջականորեն Բայրոնին և նրա ժամանակակիցներին առնչվող որևէ թեմա: Ի՞նչ իմանար, որ հանճարեղ անգլիացու ստեղծագործությունն ուղեկցելու էր իրեն իր կյանքի ընթացքում, իսկ ինքն էլ իր ուսումնասիրություններով դառնալու էր հայ բայրոնագիտության դրոշակակիրը:

Այդ ամենը՝ հետագայում:

Իսկ մինչ այդ՝ 1973-ից սկսվում է Ա. Բեքարյանի աշխատանքային գործունեությունը ՀՍՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում՝ որպես մատենագետ, իսկ 1974-ի փետրվարին աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ: 1976–1981 թթ. Ա. Բեքարյանն աշխատել է ՍՍՀՄ պետշինի՝ Շինարարության մեջ ավտոմատացված համակարգերի գիտահետազոտական և նախագծային-փորձարարական ինստիտուտի Երևանի կոմպլեքսային բաժնում՝ որպես ինժեներ՝ ղեկավարելով բաժնի անգլերեն լեզվի խմբակը, կատարել թարգմանություններ արտասահմանյան գիտատեխնիկական ամսագրերից:

1981-ին Ա. Բեքարյանը աշխատում է Շինարարության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտում, իսկ 1982–1983-ին՝ ՀՍՍՀ պետպլանի հաշվողական կենտրոնում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

1982 թ. մայիսի 3-ից Ա. Բեքարյանն աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ որպես Շեքսպիրագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Այդ օրվանից ի վեր՝ ավելի քան չորս տասնամյակ, Ա. Բեքարյանի գիտաստեղծագործական գործունեությունն անխզելիորեն կապվում է հարազատ ինստիտուտի հետ: Կանցնեն տարիներ, և 2008-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ Անահիտ Բեքարյանը կպարգևատրվի ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

Կարճ ժամանակահատվածում նա հայերեն և ռուսերեն է թարգմանում հայերին և հայ մշակույթին վերաբերող Բայրոնի նամակները, և արդեն 1983-ին «Հայագիտությունը արտասահմանում» մատենաշարով հրատարակվում է երիտասարդ հետազոտողի անդրանիկ հայագիտական աշխատությունը՝ «Բայրոնը Հայաստանի և հայերի մասին» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքույկը (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ, մատենաշար. «Հայագիտությունը արտասահմանում», Երևան, N 1, 1983)՝ հայ բայրոնագիտության մեջ առաջին վստահ քայլերը կատարող Ա. Բեքարյանի առաջաբանով ու ծանոթագրություններով:

Շուտով ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրինության երաշխավորությամբ Ա. Բեքարյանին ձևակերպում են որպես հայցորդ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Թեկնածուական ատենախոսության թեման էր «Բայրոնը և հայ գրականությունը»: ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Շեքսպիրագիտության բաժնի վարիչ, ակադեմիկոս Ռուբեն Զարյանի առաջարկությամբ Ա. Բեքարյանը

պատրաստում է Երևանում կայացած շեքսպիրյան կոնֆերանսին նվիրված աշխատանքների մատենագիտությունը, որը տեղ է գտել «Շեքսպիրական» ժողովածուի 7-րդ հատորում: Ակտիվորեն մասնակցում է նաև «Շեքսպիրական» ժողովածուի 8-րդ հատորի պատրաստման աշխատանքներին:

1993-ին Ա. Բեքարյանը հաստատվում է ավագ գիտաշխատողի պաշտոնում, իսկ 2009-ի մարտի 1-ից (ստեղծման օրից) նա Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող է:

Ա. Բեքարյանն ակտիվորեն մասնակցել է նաև Արվեստի ինստիտուտի հասարակական կյանքին՝ երկար տարիներ եղել է Արհմիության տեղկոմի անդամ, Արվեստի ինստիտուտի պատվիրակության կազմում դասախոսություններով հանդես է եկել ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպած «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի շրջանակում և «զինծառայողներին իրազեկման գործընթացում, ինչպես նաև բանակաշինության գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար» 2010-ին արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարության 68617 զորամասի պատվոգրի:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ գիտական աստիճանաշնորհման «Գրականագիտության» 003 մասնագիտական խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 19-ի նիստում Ա. Բեքարյանը պաշտպանել է «Բայրոնը և հայ իրականությունը» թեմայով թեկնածուական ատենախոսություն (Ժ.01.01 – «Հայ միջնադարյան և նոր գրականություն», գիտական ղեկավար՝ Ելենա Ալեքսանյան) և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ա. Բեքարյանը երկու անգամ (2009 և 2012) ճանաչվել է Հայ օգնության ֆոնդի (ԱՄՆ) հովանու ներքո գործող «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի» դրամաշնորհային մրցույթի հաղթող, ինչը հազվադեպ երևույթ է հումանիտար գիտությունների ոլորտում աշխատողների համար:

Անահիտ Բեքարյանի գիտական ուսումնասիրություններն ընթացել են 2 ուղղությամբ՝ բայրոնագիտություն և սփյուռքագիտություն (2009-ից), մասնավորապես սփյուռքահայ թատրոնի պատմություն:

Նա հեղինակ է ութ գրքի, ինչպես նաև Հայաստանում և արտասահմանում՝ Իտալիայում (Վենետիկ), ԱՄՆ-ում (Դելավեր), Ճապոնիայում (Կիոտո), Ֆրանսիայում (Փարիզ), Մեծ Բրիտանիայում (Լոնդոն), Հունաստանում (Աթենք-Միսոլոնգի), Իսպանիայում (Վալադոլիդ) և Լիբանանում (Բեյրութ) հրատարակվող գիտական հեղինակավոր պարբերականներում ու ժողովածուներում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված ավելի քան վաթսուն գիտական աշխատությունների: Նա գիտական զեկուցումներով հանդես է եկել Հայաստանում և արտասահմանում (այդ թվում՝ ԱՄՆ (2001), Ճապոնիա (2002), Ֆրանսիա (2006), Հունաստան (2009), Իսպանիա (2011), Լիբանան (2012), Իտալիա (2023) և այլ երկրներ) կազմակերպված միջազգային գիտաժողովներում: Հատկապես ծանրակշիռ է Ա. Բեքարյանի ներդրումը հայկական բայրոնագիտության ասպարեզում: Այստեղ ուզում ենք հատուկ անդրադառնալ Անահիտ Բեքարյանի կարևոր աշխատություններից երկուսին, որոնք, մեր կարծիքով, մեծ նվաճում են հայագիտության և բայրոնագիտության բնագավառներում:

2004-ին Լոնդոնում հրատարակվում է «Բայրոնի ընդունումը Եվրոպայում» հեղինակավոր երկհատոր գիտական ժողովածուն, որի 20-րդ գլուխը՝ «Բայրոնը և

Հայաստանը. նմանությունների արտացոլման մի դրվագ» (տե՛ս "The Reception of Byron in Europe", vol. II: Northern, Central and Eastern Europe, edited by Richard A. Cardwell, Thoemmes Continuum, A Continuum imprint, London • New York, 2004, Chapter 20: "Byron and Armenia: A Case of Mirrored Affinities" and "Bibliography", 386–405, 471–473) հեղինակել է Ա. Բեքարյանը: Այս երկհատորյակը «Բրիտանական գրողների ընդունումը Եվրոպայում» մատենաշարի (այն հրատարակվում է Լոնդոնի համալսարանի նախաձեռնությամբ և Բրիտանական ակադեմիայի հովանավորությամբ) վեցերորդն է, որի կազմակերպիչն ու խմբագիրը՝ Նոթինգհեմի համալսարանի արվեստի ֆակուլտետի պրոֆեսոր Ռիչարդ Ա. Կարդվելը դեռևս 2000-ի հոկտեմբերի 19-ին նամակով դիմել է Ա. Բեքարյանին՝ խնդրելով շարադրել վերոհիշյալ գրքի «Բայրոնը և Հայաստանը» գլուխը: Իսկ ինչո՞ւ է Ռ. Կարդվելը որոշում դիմել Բեքարյանին: Նա իր որոշումը հիմնավորում է հետևյալ կերպ. «...ես Ձեզ եմ դիմում որպես բայրոնյան ուսումնասիրությունների ոլորտում գիտակի: Հույս ունեմ՝ կընդունեք իմ առաջարկը և կնպաստեք բայրոնյան ուսումնասիրությունների ոլորտում նշանակալից ներդրում կատարելու գործին»: Իսկ բավական երկարատև հեռավար, համատեղ աշխատանքի ավարտից հետո Ռ. Կարդվելը նշել է, որ իր «խմբագրած հատորում» ընդգրկված հոդվածի հեղինակ «Բեքարյանը մտնում է միջազգային գիտական ոլորտի ընտրյալ մասնագետների մեջ» (այդ աշխատանքի հետ կապված Ռ. Կարդվելի նամակները պահվում են Ա. Բեքարյանի անձնական արխիվում):

Սույն հետազոտության մեջ Ա. Բեքարյանն առաջին անգամ անգլիախոս ընթերցողին մանրամասնորեն ներկայացնում է Բայրոնի և Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերի առնչությունները, նրանց գիտական համագործակցությունը, Բայրոնի հայերեն սովորելը, հայ ժողովրդի պատմության և մշակույթի հանդեպ բանաստեղծի հետաքրքրությունը, նրա հայագիտական ուսումնասիրությունները, ինչպես նաև Բայրոնի քնարերգության ազդեցությունը հայ բանաստեղծների վրա:

Բայրոնագիտության մեջ Ա. Բեքարյանի հաջորդ լուրջ նվաճումը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկութեան հայկական մատենաշարով, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից հրատարակված «Բայրոնը և հայ իրականությունը» (հայերեն և անգլերեն) մենագրությունն է (տե՛ս Բեքարյան Ա. 2013, Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն), Երևան, ԵՊՀ հրատ.)՝ հայ բայրոնագետի շուրջ երեսուն տարվա գիտական հետազոտությունների հանրագումարը (աշխատության մասին տե՛ս Բայրոնը և հայ իրականությունը. Ուշագրավ ուսումնասիրություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» ամսաթերթ, 2014, N 4 /269/, Ասատրյան Ա. 2014, Անահիտ Բեքարյան. Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն), Բանբեր հայագիտության, N 1, 200–204, Սեֆերյան Ս. 2014, Անահիտ Բեքարյան. Բայրոնը և հայ իրականությունը, Բանբեր Երևանի համալսարանի, N 2, 67–71, Տեր-Գաբրիելյան Ա. 2014, Անահիտ Բեքարյան. Բայրոնը և հայ իրականությունը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 215–216, Арутюнян Г. 2014, Бессмертие гения, Вестник общественных наук, N 2, 330–334):

Բայրոնի և հայերի կապերի մասին համապարփակ և հիմնարար ուսումնասիրության մեջ մանրամասն քննվում են Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների առանձին դրվագներ՝ ներառյալ Մխիթարյանների տպագրած Բայրոնի երկե-

րը, վերլուծության են ենթարկվում օտարազգի հեղինակների՝ Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող աշխատությունները: Մենագրության մեջ նաև դիտարկվում է Բայրոնի «հայկական նամականին», որի հիման վրա բացահայտվում են XVIII–XIX դդ. Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում) հայագիտության ձևավորման ու զարգացման առանձին դրվագներ, լուսաբանվում են հայագիտության ասպարեզում Բայրոնի ուսումնասիրությունները, ինչպես նաև անգլիացի բանաստեղծի և նրա ստեղծագործությունների մասին հայ մամուլում տեղ գտած հոդվածները, ներբողները և հետազոտությունները: Աշխատության մեջ նաև զուգահեռներ են տարվել Բայրոնի և հայ բանաստեղծների որոշ ստեղծագործությունների միջև, բացահայտվել և շտկվել են Բայրոնի մասին հայ մամուլում տպագրված նյութերում բազմիցս կրկնվող թերությունները, անճշտություններն ու սխալները:

Մենագրության հավելվածներում բերվում են հատվածներ Բայրոնի նամականուց և Թոմաս Մուրի «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» (տե՛ս Th. Moore, The Life, Letters and Journals of Lord Byron, John Murray, London, 1908) գրքից, ինչպես նաև Բայրոնի թարգմանությունները հայերենից:

Ինչպես իր գրախոսականում նկատել է Գայանե Հարությունյանը, «...Книга интересна и ценна как по широте охвата материалов, касающихся творческих и жизненных исканий поэта, так и по своему композиционному построению: в ней представлены материалы о сотрудничестве Байрона с членами конгрегации мхитаристов, армянские эпистолы поэта, его арменоведческие исследования, а также армянская литературно-общественная мысль о нем. В сущности это мини-энциклопедия, содержащая огромный массив информации о том отрезке жизни поэта, который был связан с армянской действительностью и оставил немеркнущий след в его мыслях и сердце» (Арутюнян Г. 2014, Бессмертие гения, Вестник общественных наук, N 2, 330):

Ուշագրավ է այն փաստը, որ Բայրոնյան միջազգային ընկերության նախագահ Ջոն Կլաբը, ծանոթանալով Ա. Բեքարյանի մենագրությանը, իր և իր տիկնոջ անունից նամակով (Ջ. Կլաբի նամակը պահվում է Ա. Բեքարյանի անձնական արխիվում) շնորհավորում է նրան, շնորհակալություն հայտնում կատարած աշխատանքի համար և ընդգծում. «Հիանում եմ Ձեր հետազոտությամբ և այն բոլոր նոր տեղեկություններով, որոնց հաղորդակից դարձրիք մեզ: Որքան ինձ հայտնի է, բայրոնյան ուսումնասիրություններում դա շատ կարևոր, բայց այդ անտեսված շրջանի անգլերենով ներկայացված առաջին ամբողջական ուսումնասիրությունն է... Շնորհակալություն Ձեր հրաշալի և անհրաժեշտ ուսումնասիրության համար»:

Բայրոնին է նվիրված Ա. Բեքարյանի հրատարակած դեռևս վերջին աշխատությունը, որ լույս է ընծայվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2023-ին (հմմտ. Бекарян А. 2023, Армения в судьбе Джорджа Байрона, Ереван, «Гитутюн»: Աշխատության մասին տե՛ս Հարությունյան Գ. 2023, Փոքրիկ հանրագիտարան մեծ բանաստեղծի մասին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» ամսաթերթ, N 5, 8: Харатян А. 2023, Анаит Бекарян. Армения в судьбе Джорджа Байрона, Ереван, «Гитутюн»; Խառատյան Ա. 2023, Анаит Бекарян. Армения в судьбе Джорджа Байрона, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 297–304): Ինչպես «Լրաբե-

րում» հրապարակած իր գրախոսականում նկատել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր Ալբերտ Խառատյանը, «Թեմատիկ ընդգրկումներով, հետազոտական ծավալներով և մանրակրկիտ աշխատանքի տպավորիչ արդյունքներով Ա. Բեքարյանի աշխատությունը հանդես է գալիս որպես եզակի մի գործ հայկական բայրոնագիտության մեջ և այն հանրագումարի բերելու իր համոզիչ ապացույցներով» (էջ 297):

Եվ միանգամայն տրամաբանական է, որ Բայրոնի մահվան 200-ամյա տարելիցին նվիրված հոդվածը «Լրաբերում» հեղինակեց հենց Անահիտ Բեքարյանը (Бекарян A. 2024, Памяти борца за свободу – Джорджа Гордона Байрона, Вестник общественных наук, N 1, 350–363):

2009-ից Ա. Բեքարյանի գիտական հետաքրքրությունների առանցքում է սփյուռքահայ, մասնավորապես կանադահայ թատրոնի ուսումնասիրությունը: Այսպես, կանադահայ թատրոնի հետազոտության շրջանակում հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ նա ուսումնասիրել է սփյուռքահայ բանաստեղծ Ժակ Հակոբյանի՝ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում բազմիցս բեմադրված և սփյուռքահայության ջերմ ու խանդավառ ընդունելությանն արժանացած «Կռունկը կը կանչէ» թատերախաղի՝ Մոնրեալի «Պետրոս Ադամյան» թատերախմբի աշխատանքը, որը լիբանանահայ դերասան, բեմադրիչ և թարգմանիչ Ժորժ Սարգիսյանի ղեկավարությամբ 1981-ին Կանադայում ներկայացվել է վեց անգամ: Տորոնտոյի բազմամշակութային փառատոնի մրցույթում «Պետրոս Ադամյանն» արժանացել է լավագույն թատերախմբի մրցանակին, իսկ լավագույն բեմադրիչի մրցանակը շնորհվել է Ժորժ Սարգիսյանին:

Ժամանակի կանադահայ («Ապագա»), ստամբուլահայ («Քուլիս») և ամերիկահայ («Պայքար») պարբերականների արձագանքների, ինչպես նաև Պերճ Ֆազլյանի հուշագրության հիման վրա Ա. Բեքարյանը ներկայացրել է կանադահայ թատրոնի պատմության կարևոր դրվագներից մեկը՝ «Հայ բեմ» թատերախմբի՝ 1984 թ. փետրվարին կայացած՝ Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության Պերճ Ֆազլյանի բեմադրությունը (հայերեն)՝ հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ քննության առնելով նշանավոր թատերական գործիչ, ռեժիսոր Պերճ Ֆազլյանի բեղմնավոր գործունեության այդ էջը՝ Շեքսպիրի «Օթելլոյի»՝ «Հայ բեմ» թատերախմբի բեմադրությունը, որը նոր փուլ նշանավորեց սփյուռքահայ թատրոնի պատմության մեջ:

Առաջին անգամ ներկայացնելով կանադահայ թատրոնի երկու երևելի գործիչների՝ Սելմա Քեքլիկյանի և Խորեն Տետեյանի ստեղծագործական դիմանկարները՝ Ա. Բեքարյանը կարևոր բացահայտումներ է արել նաև կանադահայ երաժշտության ուսումնասիրության ասպարեզում, քանի որ ներկայացված է Սելմա Քեքլիկյանի՝ երաժշտագետներիս անհայտ երաժշտական-կատարողական գործունեությունը ևս:

Ի դեպ, Կանադայի տարբեր քաղաքներում թատերական ներկայացումներով հանդես եկած առանձին թատերախմբերի, ռեժիսորների ու դերասանների գործունեության ուսումնասիրության շնորհիվ Ա. Բեքարյանն առաջիկայում ընթերցողի սեղանին կդնի կանադահայ թատրոնի լիակատար պատմությունը:

Թատերագիտության ասպարեզում կարևոր նվաճում է «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում» ստվարածավալ ժողովածուն, որը ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշում-

ներով, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 2020 թ. հրատարակեց ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը (Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում, կազմող՝ Ա. Բեքարյան, Երևան, «Գիտություն», 2020): Ժողովածուն առաջին անգամ ամփոփ ներկայացնում է ժամանակակիցների հուշերը հայ հանճարեղ դերասան Պետրոս Ադամյանի մասին՝ պարփակելով հայկական և ռուսական պարբերական մամուլում ու ժողովածուներում Պետրոս Ադամյանի մասին տեղ գտած հուշագրությունները՝ համալրված հարուստ ծանոթագրություններով: Ժողովածուի հավելվածներում զետեղված են Պետրոս Ադամյանին նվիրված բանաստեղծություններ, լուսանկարներ, ռուսերեն տեքստերի բնագրեր, Ադամյանի դերացանկերը (հմմտ.՝ Ա. Ասատրյան, Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում (կազմողներ՝ Ռ. Զարյան, Ա. Բեքարյան), Լրաբեր հասարակական գիտությունների, 2021, N 2, 358-364: Asatryan A. 2021, Memories of the contemporaries about Bedros Adamian, Historical-Philological Journal, N 3, 262–266):

Վերստին շնորհավորելով մեր եռանդուն ու հմայիչ գործընկերոջը հոբելյանի կապակցությամբ՝ նրան մաղթում ենք քաջառողջություն, կենսական անսպառ կորով, գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ, լավատեսություն և անձնական երջանկություն՝ ի շահ սփյուռքագիտության և բայրոնագիտության զարգացման, հանուն հայագիտության առաջընթացի:

Աննա Ասատրյան
Anna Asatryan
Анна Асатрян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Arts, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

anna.asatryan@arts.sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-318

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ARMENAK MANUKYAN
АРМЕНАК МАНУКЯН

Վաստակաշատ պատմաբան, քաղաքագետ, գրող, հրապարակախոս Արմենակ Սարիբեկի Մանուկյանը բոլորեց իր ծննդյան 75-րդ տարին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մանուկյանը ծնվել է 1950 թ. ապրիլի 28-ին Երևանում, ճանաչված գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Սարիբեկ Մանուկյանի ընտանիքում: 1966 թ. ավարտել է Երևանի թիվ 118 միջնակարգ դպրոցը, 1972 թ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Ուսանելու տարիներին ընտրվել է ֆակուլտետի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար: 1972 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը, անդամ է եղել մինչև 1991 թ.: 1972–1974 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունում (1974–2003 թթ.), վերջին 10 տարում ղեկավարել է ՀՀ ԱԱԾ հասարակության և մամուլի հետ կապերի կենտրոնը, ունի գնդապետի կոչում, ՀՀ ԱԱԾ պատվավոր աշխատակից է (2000 թ.):

1997 թվականից Ա. Մանուկյանը դասախոսական աշխատանք է կատարում ԵՊՀ-ում, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում, Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում (2003–2004 թթ. ղեկավարել է Հասարակական գիտությունների ամբիոնը): 2004–2005 թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ: 2008 թվականից ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի դոցենտ է, 2016-ից՝ պրոֆեսոր, ֆակուլտետի գիտխորհրդի անդամ: 2008–2009 թթ. եղել է Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ: Նրա «Ժամանակակից քաղաքական գործընթացներ» (2011) և «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» (2015) աշխատությունները ՀՀ ԿԳՆ-ն երաշխավորել է որպես ուսումնական ձեռնարկներ ՀՀ բուհերի համար:

Հայաստանի անկախացումով նոր հեռանկարներ բացվեցին պատմական գիտության զարգացման համար: Խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում տասնամյակներ շարունակ անմատչելի համարվող արխիվային ֆոնդերի բացումը հնարավորություն տվեց առանց գաղափարական կապանքների ուսումնասիրել Հայաստանի՝ XX դարի պատմությանն առնչվող բազմաթիվ կնճռոտ հիմնախնդիրներ: ՀՀ ազգային անվտանգության մարմիններում աշխատանքը Ա. Մա-

նուկյանին հնարավորություն ընձեռեց դյուրին կերպով հետազոտել այդտեղ պահվող խորհրդային ժամանակաշրջանի փաստաթղթերը, որոնք մինչ այդ ուսումնասիրողների համար հասանելի չէին: Արդեն 1997 թ. պրոֆ. Վլադիմիր Ղազախեցյանի գիտական ղեկավարությամբ նա պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Խորհրդային իշխանությունը և եկեղեցին Հայաստանում 1920–1940 թթ.» թեմայով, իսկ 2002 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Քաղաքական հետապնդումները Հայաստանում և դրանց հետևանքները (1920–1950-ական թթ.)»: 2016 թ. ՀՀ ԲՈՀ-ի որոշմամբ ստացել է պրոֆեսորի գիտական կոչում՝ «քաղաքագիտություն» մասնագիտությամբ:

Ա. Մանուկյանը մեծ ավանդ ունի Հայաստանի XX դարի պատմության ուսումնասիրության բնագավառում: 1990–ականների երկրորդ կեսից մեկը մյուսի հետևից լույս աշխարհ եկան նրա արժեքավոր ուսումնասիրությունները՝ «Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները (1930–1938 թթ.)» (1997), «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ.» (1999), «Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.» (2002), «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1953–1988 թթ.» (2005), «Հայաստանի հատուկ ծառայությունները (1918–2010)» (2018) մենագրությունները և տասնյակ գիտական հոդվածները: Պատմագիտության մեջ միանգամայն նոր խոսք էին այս աշխատությունները, որոնց հիմքը կազմում են հեղինակի կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված պետական (ազգային) անվտանգության մարմիններում պահվող «գաղտնի», «հույժ գաղտնի» նշագրումներով արխիվային փաստաթղթերը: Միայն տարիներ անց այս փաստաթղթերի որոշ մասը հանգրվանեց Հայաստանի ազգային արխիվում և գիտական հանրության համար հասանելի դարձավ:

Պրոֆեսոր Ա. Մանուկյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, բազմիցս հրավիրվել է Իտալիա, Գերմանիա, Իրան, Ռուսաստան և այլ երկրներ: Հայաստանյան մամուլում նրա տպագրած մեծաթիվ հոդվածներ վերատպվել են Սփյուռքի պարբերականներում («Հառաջ» (Ֆրանսիա), «Պայքար» (Կանադա), «Ալիք» (Իրան), «Առագաստ» (ԱՄՆ), «Նոր Կյանք» (ԱՄՆ) և այլն): Որպես հեղինակ կամ խորհրդատու՝ նա անմիջական մասնակցություն է ունեցել շատ հեռուստաֆիլմերի, հեռուստահաղորդումների ու ռադիոհաղորդումների պատրաստման գործում:

Ա. Մանուկյանը նաև ճանաչված գրող ու հրապարակախոս է: Հանդես է գալիս Արման Ամրիկյան կեղծանունով (Արմանը նրա անվան և ազգանվան առաջին տառերն են, իսկ Ամրիկյանը՝ տոհմական ազգանունը): 1994 թվականից նա Հայաստանի ժուռնալիստների միության, Ժուռնալիստների միջազգային ասոցացիայի անդամ է: 1996-ից Ռազմածովագիր գրողների միջազգային միության (ք. Մոսկվա), 2002-ից Հայաստանի գրողների միության անդամ է: 11 գեղարվեստական գրքերի, շուրջ 400 լրագրային հոդվածների և հեռուստահաղորդումների, մամուլում տպագրված բազմաթիվ պատմվածքների ու վիպակների հեղինակ է, ինչպես՝ «Կենտրոն. հույժ գաղտնի» (1996), «Անմեկնելի են Աստծո ճանապարհները» (1998), «Դոկտոր դուք հետախու՞յզ եք» (2000), «Սպիտակ արծիվը» (2002), «Հատուկ հանձնարարություն» (2003), «Պողպատե ձեռնոցներ» (2005), «Рассекреченное прошлое» (2006), «Встреча в раю» (2006, ուկրաիներեն), «Հավերժական գոյը» (2009) և այլն: 2000 թ.

արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակի: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, իտալերեն, քրդերեն լեզուներով: Գրական գործերը հիմնականում ռազմահայրենասիրական բնույթի են. Ա. Մանուկյանը գերադասում է հիմնականում պատմափաստավավերագրական ժանրը, որոշ ստեղծագործություններ էլ գրված են մանուկների և պատանիների համար:

Նա արժանացել է բազմաթիվ մեդալների ու պարգևների՝ Խորհրդային Միության սահմանապահ ուժերի 80–ամյակին նվիրված հուշամեդալ (1998 թ.), հայ-վրացական կապերին նպաստելու համար «Հայոս-Քարթլոս» ամսագրի հուշամեդալ (1999 թ.), Ֆրիտյոֆ Նանսենի անվան հուշամեդալ (2002 թ.), ՀՀ ազգային անվտանգության ծառայության 100–ամյակին նվիրված հուշամեդալ (2018 թ.), Երևանի պետական համալսարանի արծաթե մեդալ (2019 թ.) և այլն: Նրա գիտական, ուսումնական և գրական աշխատանքները բարձր են գնահատել գիտնական, գրող-հրապարակախոս և լրագրող գործընկերները:

75–ամյակը բոլորած մեր հոբելյարը երիտասարդական եռանդով շարունակում է իր գիտական ու կրթական արդյունաշատ գործունեությունը: Նրան մաղթում ենք քաջառողջություն, ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ, արժեքավոր գիտական ուսումնասիրություններ ու գեղարվեստական գործեր, որոնք կհամալրեն հայաստանյան պատմագիտության և գրականության մեծարժեք հրատարակությունների շարքերը:

Համո Սուքիասյան
Hamo Sukiasyan
Амо Сукиасян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

hamo.sukiasyan@academhistory.am

DOI: 10.53548/0320-8117-2025.1-325

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ Մելանիա Միքայելյան
Սեդա Քուպելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ Գայանե Հարությունյան

Editors of Armenian section – Melania Mikaelyan
Seda Kupelyan
Editor of Russian section – Gayane Harutyunyan

Редакторы армянского отдела – Меланья Микаелян
Седа Купелян
Редактор русского отдела – Гаянэ Арутюнян

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Պետրոսյանի
Computer design and pagination – Armine Petrosyan
Компьютерный дизайн и пагинация – Армине Петросян

Հրատ. պատվեր N 1373
Ստորագրված է տպագրության 22.04.2025 թ.:
Տպագրական 20.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Signed for printing 22.04.2025
20.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Подписано к печати 22.04.2025 г.
20.5 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://lraber.sci.am
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Official site of the Journal: http://lraber.sci.am
E.mail of the Journal: lraber@sci.am
Официальный сайт журнала: http://lraber.sci.am
Электронная почта журнала: lraber@sci.am

© Հանդեսի տեխնիկական ֆորմատը հաստատված է հեղինակային իրավունքով
© The technical format of the journal is confirmed by copyright
© Технический формат журнала подтвержден авторским правом